ՊԼՈՒՏԱՐԿՈՒՄԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՀԱՏՈՐ Բ.

9(37)
Գ70

ՊԼՈՒՏԱՐՔԻՆԱՅ

ՔԵՐՈՎՆԱՑՒՈՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԲՆԱԳԻՐԷՆ
Հ. ԵՂԻԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՈՄԱՃԱՆ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԱՐԴԵԱՄԲՔ ՔԱՀԱՆԱՅԼ ԱՅՊԵՏԻ
ՊԱՐՈՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՌԱՖԱՅԷԼԻ
ՂԱՐԱՄԵԱՆ

42



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՌՄԶԲ.



ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՊԵՐԻԿԼԵԱՆ

ԵՒ

ՓԱԲԻՈՍԻ ՄԱՔՍԻՄՈՍԻ

ՊԵՐԻԿԼԷՍ

ՕՆԿՍ ոմանս բազմահարուստս 'ի Հռոմ քաղաքի տեսեալ Երբեմն Կեսար, զի սկուռնդս և կորիւնս կապկաց 'ի գիրկս իւրեանց բարձեալ բերէին և փայփայեալ գգուէին, 'ի ՃԱՀ արդեօք հարցանէր՝ Եթէ մանկունս արդեօք ո՞չ ծնանիցին առ նոսա կանայքն։ Կարի խմաստութեամբ իբրև իշխան խրատէր հրահանգէր, որք զանկակից բնաւորեալն 'ի մեզ զսէր և ըզգութ և զգորով առեալ յանբանս ծախեսցեն՝ զոր պարտէին առ մարդիկ։ Արդ՝ թէպէտ և ազգդ շանց և կապկաց ուսումնասէրք հանդիպեցան լինել և զննասէր, այլ հոգիս մեր այս անդատին 'ի բնութենէն վիճակեալ այնմ՝ պատճառս ունիցի արդեօք եպերել զորս միանգամ չարաչար վարեսցին նովաւ լսել և զննել

զումպէտան և զվայրավատինան, անփոյթ ըզ-
գեղեցիկն առնելով և զպիտանին։ Քանզի
զգայարանացս մերոց այսոցիկ՝ այն որ առ-
ձեռն յինքեանս ձգել բնաւորեցան զա-
ռարկայիցն տպաւորութիւն՝ որ զինչ և ի-
ցէ, թերևս հարկ 'ի վերայ կայցէ՝ զամե-
նայնն միանգամայն որ երևինս՝ եթէ 'ի ալ-
տանեաց ի՛ցէ և եթէ յանպիտանեաց՝ դի-
տել զննել։ Սակայն զմիտան և զբանն՝ այր
այր իւրաքանչիւր իշխան է՝ որպէս և կամի՝
վարել 'ի պէտս. և բնաւորեալ իսկ է ցանգ
ճոխաբար իշխանութեամբն առնուլ և շըր-
ջել զանձն՝ որպէս և զիարդ հաճոյ ի՛ցէ
նմա։ Ուստի և պարտ և արժան է նմա լա-
ւագունիցն պատկառ կալ, զի մի միայն
տեսցէ և զննեսցէ, այլ և 'ի զննութենէն
ճարակեալ սնանիցի։ Քանզի զորօրինակ
աչաց մեր այս՝ փարելի յոյժ է երանդ գու-
նոցն ծաղկափթիթ և բերկրական՝ զուար-
թագին գործեալ զտեսանելիսն և ճարա-
կեալ, սապէս և զիսորհուրդ մտաց մերոց
արժան է առնուլ ածել 'ի տեսութիւնս
և 'ի զննութիւնս, որք հանդերձ բերկրու-
թեամբն առ տնկակից բարին զնա առեալ
հրաւիրեսցեն։ Իսկ այս տեսութիւնք համ
բարեալ կան 'ի գործսն՝ որ յառաքինու-
թենէն անտի ի՛ցեն. որք 'ի պատմութեան
իւրեանց նախանձ գեղեցիկ և յօժարու-
թիւն ոգւոյ 'ի նեղքս բերեն բորբոքեն նը-
մանող լինել այնոցիկ։ Այլ է ուրեք՝ զի
թէպէտ և հիացեալ սքանչանայցեմք ևս
ընդ գործն, ո՛չ անդէն զհետ գալ բնաւո-

բեցաւ և եռանդն ցանկութեան 'ի գործել զնոյն. է բազում անգամ և զհակառակն տեսանել, զի խնդամբ ուրախացեալ ընդ գործն և անարգեալ արհամարհեմբ զգործաւորն, ըստ որում յանուշունս իւղոց և յերանգս ծիրանեաց. քանզի հեշտացեալ բերկրիմբ 'ի նոսա, այլ զներկարարսն և զիւղագործսն 'ի ծառայականաց կարգի գնեմբ և 'ի տաժանելեաց։

Վասն որոյ և գեղեցիկս ուրեմն Անոխութենէս՝ լուեալ եթէ քաջ քնարահար է Խամենիաս, ասէր. "Այլ սակայն և այր տաժանակիր է նա. զի թէ այնպէս չէր, քաջ քնարահար չլինէր արդեօք"։ Իսկ Փիլիպպոս առ որդին իւր՝ որ 'ի կոչունս ինչ ուրեք բերկրեալ նուագս դայլայլիկս երգէր և արուեստականս, ասէ. "Ձա՛ճաչէս դու այդպէս գեղեցիկս երգել"։ Քանզի շատ է առն թագաւորի պարապել ունկնդիր լինել նուագածուաց. և շատ արդեօք շուք ընծայեսցէ Մուսայիցն, եթէ ինքնին 'ի զնին կայցէ՝ յորժամ այլք մերցեսցին յայնպիսեաց անտի։ Ապա եթէ և ինքնին պարապեսցի 'ի փանաքիսն յայնոսիկ, վկայ այնուհետև զիւրոյ խօթասրտութեան 'ի գեղեցիկսն՝ ինքնին 'ի նեղքս ընծայէ տքնեալ յանպիտանսն յայնոսիկ։ Եւ արդեօք ոչ ոք 'ի քաջամոյն երիտասարդաց՝ եթէ երբէք հասեալ 'ի Պիզա յակն արկանիցէ զԱրամազդն, ցանկասցի լինել Փիւդիաս. կամ թէ զՀերայն տեսեալ յԱրգոս՝ փափաքեսցի լինել Պոլիւկղետոս. և

ոչ դարձեալ բաղձասցի լինել Անակրէոն, կամ Փիլիմոն, կամ Արքիղոքոս, Թէպէտ և բերկրեալ հեշտասցի նա ընդ քերթուածս նոցա։ Քանզի Թէպէտ և գործն ինքնին իբրու գեղեցիկ զուարճացուսցէ, սակայն ո՛չ վասն այնորիկ և հարկ 'ի վերայ դնէ՝ գործողին փութալ լինել նմանող։ Ուստի օգտեն և ոչինչ այսոքիկ տեսանելեացն. քանզի ոչ ձգեն 'ի գեղեցիկ նախանձ նմանողութեան, և ոչ յեռանդն շարժեն դիմագրաւ բուռն հարկանել 'ի նմանօրինակ գործս։ Սակայն առաքինութիւնն ինքնին 'ի գործս իւր արագ արագ բնաւորեցաւ վառել. որպէս զի միանգամայն և զարմանալ հիանալ ընդ գործսն, և նմանող նախանձաւոր լինել գործելեացն։ Քանզի 'ի բարիս բախտին սիրեմք ժառանգել և վայելել. իսկ յառաքինութեանն՝ սիրեմք գործել. զառաջինդ կամիմք յայլոց ունել, իսկ զվերջինդ՝ զի այլք առ 'ի մէնջ կալցեն։ Քանզի գեղեցիկն առ ինքն հզօրապէս ձգեալ յանգուցանէ, և եռանդն գործունեայ անդէն ծնանի 'ի նեղքս. և այլ յայլմէ գործէ զտեսողն ոչ նմանողութիւն, այլ նովին իսկ պատմութեամբ գործոյն յօժարամիտ ընծայեցուցանելով զկամն։

Ապա և մեզ ինքնին բարուք թուեցաւ պարապել յարձանագրութիւնս վարուց. և զայս աւադիկ տասնեւորդ Գիրս կարգեցաք, զվարսն Պերիկղէայ և զՓաբիոսի Մաքսիմոսի, այն որ մարտ եղեալ կռուեցաւ ընդ Աննիբաղայ. և ունի այս զարանցն՝

որ միմեանց հանգունաւոխպք գոան յայլ
ինչ առաքինութիւնս, իսկ մեծապէս 'ի
հեզութեան և յարդարութեան և 'ի գի-
տել տանել համբերութեամբ զապաշնորհ
զկիրսն զիւրեանց ժողովրդոց և զիշխանակ-
ցաց, մեծապէս օգտակարք լինելով իւ-
րեանց աշխարհին։ Այլ թէ մեք ուղղա-
պէս արդեօք եկաք 'ի կշռութիւնս յայս,
'ի դէպ ելցէ դատել 'ի գրելոցս աւադիկ։

Քանզի էր Պերիկլէս յԱկամանտեան
ցեղէ, և 'ի Քողարգեան ժողովրդենէ, ազ-
գաւ և զարմիւ ըստ երկաքանչիւր կս մա-
սին՝ առաջին և բարձերէց։ Քանզի Քսան-
թիպպոս՝ որ 'ի Միւկալէ վանեաց եհար
զզօրավարս արքային, ած 'ի կին զԱգարիս-
տէ զթոռն Կլիսթենոսին, այն որ վանեալ
հալածեաց զՊիսիսարատեանսն, և քաջա-
ցեալ բնաջինջ արար զբռնաւորութիւնն.
և օրէնս կարգեաց եդ, և քաղաքականու-
թեան կարգ հաստեաց քաջավայելուչ 'ի
մի միաբանութիւն և 'ի փրկութիւն քաղա-
քին։ Արդ Ագարիստեայ մեր նորա թուէր
ինն 'ի քուն՝ ծնանել առիւծ. և յետ ա-
ւուրց սակաւուց ծնաւ նա զՊերիկլէս՝
ողջ և անվթար յամենայն գիտակս մարմ-
նոյն, այլ 'ի գլուխն կարի երկայնաձիգ և
անչափակից։ Եւ սորին աղագաւ գոգցես
ամենայն պատկերք արձանաց Պերիկլէսայ
'ի սաղաւարտս պարուրեալ պահեն ըզ-
գլուխն. քանզի ոչինչ կամեցան ճարտարք
արուեստին՝ որպէս հաւանեալս եմ՝ նշա-
ւակել զայրն։ Իսկ Ատտիկեցի քերթողք

կոչեցին զնա Սոֆոօֆէֆաբօ, այն է՝ Մկրն սոխագլուխ. Քանզի զՍէիւլայն, այն է՝ Մկնսոխ, է ուրեք՝ զի կոչեն նոքա և Սոֆոօ։ Իսկ կատակերգակ քերթողն Կրատինոս 'ի Քերոնեան քերթուածին այսպէս ասէ.

Այլ անդ Հերձուածն, անդ և Կռոնոս
հինաւուրցն այր,
Գիրկ տան միմեանց, եկեալ զուգին
սիրապատար.
Իսկ 'ի խառնիցն ըզբրռնաւոր
Վէհրն ծրնան,
Որում և դիք՝ Գրլխահաւաք 1
անուն կարդան։

Եւ դարձեալ միւսանգամ 'ի Նեմեսեան քերթուածին, այսպէս կատակէ.

"Արի՛ եկ, ո՞ Արամազդդ, վանատուր և երանելի"։

Զնոյն և Տիղեկղիդէս է զի ասէ, եթէ Պերիկղէս 'ի բազմագէմ զբաղմանց գործոցն 'ի վարանս մտեալ, այնպէս բազմեալ կայ 'ի քաղաքին՝ Ծանրագլխեալ. և է զի ասէ, եթէ 'ի Մէպասանանիոնէան գլխոյ անտի աղմուկ անհնարին միայն 'ի դուրս յարձակի։ Իսկ Եւպողէս 'ի Դեմեան քերթուածին հարցումն արարեալ վասն միոյ միոյ յատենաբանից անտի՝ որ 'ի գժոխոց 'ի վեր ելեալ գայրն, յորժամ 'ի վերջէ ամենեցուն լուաւ զանունն Պերիկղեայ, ասէ։ "Դու մեզ աւադիկ զնախագլխաւորն Անդընդականաց ածեալ բերեր"։

Բայց վարժապետ Պերիկղեայ յերաժըշտականին բաղմագոյնք 'ի մատենագրաց ասեն կացեալ զԴամոնն. զորոյ զանունն արտասանեալ պարտ է՝ ասեն՝ սղելով զառաջին վանկն: Իսկ Արիստոտէլ ասէ, եթէ առ Պիւթոկղիդէսի վարժեցաւ Պերիկղէս յերաժշտականն: Այլ թուի թէ Դամոնն՝ որ խմաստակ էր յոյժ գերազանցեալ, ընդ անուամբ երաժշտութեանն առեալ պատրուակէր 'ի ռամկէն զքաջաբուեստութիւն անձինն. և զօրհանապաղ մերձ կացեալ առ Պերիկղէս իբրու առ մի ոք յըմբշաց՝ օծէր իւղեր զնա 'ի քաղաքական և մարզէր հրահանգէր: Այլ սակայն ոչինչ կարաց Դամոնն ընդ քողով քնարին իւրոյ ողջոյն ծածկել զանձն, այլ իբրև այր կարի ձեռնեարէց և բռնաւորասէր՝ խեցեկոյտ վՃռով տարագիր եղև, և առ կատակերգակ քերթողն գտաւ նա զբօսանք խաղուց: Ըստ որում և Պղատոն կատակերգակ 'ի քերթուածին իւրում զայր ոմն 'ի մէջ առեալ ածէ՝ հարցանել զԴամոնն՝ օրինակ զայս. "Այլ դու առաջին ինձ զայն ասա, աղաչեմ զքեզ. Դո՞ւ ինքնդ՝ որպէս համբաւեն՝ ո՞վ Կիրոնն 2, անուցեալ մարզեցեր զՊերիկղէս":

Աշակերտ եկաց Պերիկղէս և Զենոնի Եղեացւոյ, որ խմաստասիրեալ բնախօսէր իբրու զՊարմենիդէս. և 'ի պայքարս բանից այնպիսի բնաւորեցաւ նա վարել օրինակ հերքման, որպէս զի և 'ի վարանս անելս առեալ պաշարէր զհակառակորդն.

ըստ որում և Տիմոթէ Փղիասիոս ասաց վասն այսոցիկ այսպէս. "Յերկաքանչիւր ևս լեզուն 3 մեծազօր Զէնոն և ոչ խաբեբայ, հնարագէտ հնարիմաց յամենայնի": Իսկ որ բազումն կենակից կենցաղակից եղև Պերիկղէայ, և մեծապէս պերճ և արգոյ յարդարեաց զնա, և խորհուրդս կորովամիտս հանճարոյ ուսոյց նմա ասենաբանել առաջի ժողովրդեան, և դլխովին 'ի վեր առեալ 'ի ծայր անդր հասոյց զբուք և ըզփառս վարուց նորա, էր ինքնին Անաքսագորաս Կղազոմենացի: Զսա մարդիկ ժամանակին անուանեալ կարդային Մէպ. զի ոչ միայն պքանչացեալ էր մեծիմաստ և առաւելահրաշ հանճար առն 'ի բնախօսել նորա, այլ զի և նախ քան զամենեսեան՝ սա այս Անաքսագորաս ոչ զդիպուածն և ոչ դարձեալ զհարկն եդ սկիզբն և պատճառք կարգի տիեզերացս, այլ Մէպ. իմն սուրբ և յատակ և անխառն, որ զատուցեալ և որոշեալ ի՛ցէ զհամամասունն 'ի խառնել շփոթել նոցա ընդ այլոցն ամենայնի: Ընդ սա մեծապէս զարմացեալ էր ինքնին և Պերիկղէս, որ և լի և պատարուն վարժեալ 'ի սմանէ 'ի վարժս երկնայնոցն բնաքննութեանց և 'ի տիպս բանից վեհագոյնս, արդեօք ոչ միայն միտս կորովիս ժառանգեաց անձին, և ատենաբանութիւն բարձր և սուրբ 'ի բանդագուշեալ բեմբասացութենէ ռամկին, այլ և պերճութիւն գիտակի երեսացն անխորտակելի 'ի ծաղր. և հեղաբայլ ընթացքն,

և յարդարուն պատմուճանն, և պարկեշտութիւնն 'ի խօսս՝ անվրդով յամենայն 'ի կիրս, և հաստատուած ձայնին հեշտ և անշառաչ, և որ ինչ միանգամ 'ի սոցին սակի, առհասարակ զամենեսեան պքանչելապէս յափշտութիւն կրթէր։

Եւ երբեմն՝ զի թշնամանս և յիշոցս ընդդէմ արձակէր Պերիկղէսայ այր ոմն 'ի պրիկայից և 'ի սահակաց զտիւն ողջոյն. լսէր Պերիկղէս և համբերութեամբ տանէր լռիկ և կայր մնայր անդէն 'ի հրապարակին՝ պարապեալ միանգամայն 'ի գործ ինչ իւր կարևոր։ Իսկ ապա յերեկոյանալ աւուրն դէմ եղեալ գնայր 'ի տուն իւր մեծապէս պարկեշտութեամբ. զհետ իւր ունէր և զնսեռն զայն այր՝ որ 'ի թիկանց կուսէ հայհոյութիւն զամենայն թափէր 'ի Պերիկղէս։ Իբրև հանդերձեալ էր մտանել 'ի նեղքս 'ի տունն, քանզի խաւար էր՝ հրամայեաց միում ումեք 'ի ծառայից՝ լոյս առնուլ 'ի ձեռս, և յուղարկաւոր մինչև 'ի տուն անդր առն ածել տանել զնա։ Այլ քերթողն Յոնն ասէ՝ եթէ գոռոզ և փքուռոյց էր Պերիկղէսայ կենակցութիւնն. և ընդ մեծապանծ պարծանաց անձինն՝ խառն էր և արհամարհել և անդոնել զայլսովք. իսկ զԿիմոնն 'ի գովութիւն առնու զքաջավայելչութիւնն և զքաղցրութիւնն և ըզշնորհաշուք զտիպն 'ի քաղաքավարութեան նորա։ Այլ թողցուք մեք զՅոնն, այն՝ որ իբրու զՈղբերգականին վարժ՝ խնդրէ զի և առաքինութիւնն ինքնին կալցէ ինչ մի

յերգիծաբանական մասնէն։ Իսկ ոչք ըզ-
պերճութիւնն Պերիկղէայ փառախնդրու-
թիւն կոչէին և գոռոզութիւն, խրատէր
զնոսա Զենոն՝ զի և նոքա յայնպիսեաց փա-
ռախնդրութեանց 'ի դէմս բերցեն. որպէս
զի և այդ կեղծաւորել՝ տակաւ գաղտաբար
'ի ներքս սպրդեցուցէ զգեղեցիկ նախանձ
զբարեացն և զսովորոյթն։ Այլ ո՛չ զայսո-
փիկ միայն պողաբերեաց Պերիկղէս 'ի կե-
նակցութենէն Անաքսագորայ, այլ թուի
թէ և սնապաշտութեանն գլխովին գեր 'ի
վերոյ գտաւ. որ 'ի միջոգէից աստի երևու-
թիւց արհաւիրս գործէ 'ի նոսա՝ որ միան-
գամ տգէտքն լցեն նոցուն պատճառաց,
և յաստուածակոչին անդր զարհուրեալք
'ի վեր հանիցեն զբանն և տագնապեսցին
վասն անփորձութեան իւրեանց. զոր բնա-
խօսական բանն 'ի բաց մերժելով փոխա-
նակ ահաբեկ և ոգետանջ սնապաշտու-
թեանն՝ զանդորրաւէտ բարեպաշտութիւն
'ի ներքս առեալ ընծայէ հանդերձ գեղե-
ցիկ յուսոյն։

Այլ պատմեն՝ եթէ ածաւ երբեմն առ
Պերիկղէս 'ի դաշտէն միեղջիւր դլուխ
խոյի։ Իսկ անդանօր գուշակն Լամպոն ա-
նուն՝ ելբև յակն արկանէր զեղջիւրն զյաղթ
և զհզօր բուսեալ 'ի միջակէ անտի ճակա-
տուն, ասէր՝ եթէ քանզի կրկին են 'ի քա-
ղաքին պետութիւնք հերձեալք՝ Թուկի-
դիդէայն և Պերիկղէայն, 'ի միում ումեք
եկեալ ամփոփեսցի տէրութիւնն՝ առ ո-
րում գտաւ նշանդ այդ։ Իսկ յայնժամ

Անաքսագորաս ընդ մէջ կորեալ զկառափն՝ ցուցանէր յայտնի, զի ուղիղ գլխոյն բովանդակ չէր լցեալ զիսելապատակն. այլ արաձև իբրև ձու յամենայն կողմանց ամանոյն 'ի մի գրդեալ ժողովեալ կայր 'ի վայրն՝ ուստի արմատք արձակեալ էին եղջերն։ Եւ ոչանչացաւ յայնժամ Անաքսագորաս՝ յորոց մերձն կային. իսկ յետ սակաւուց և Լամպոն ինքնին գլխովին, յորժամ անկաւ բեկաւ Թուկիդիդէս՝ և առհասարակ զտէրութիւն քաղաքին զբռամբ կալաւ Պերիկլէս։ Այլ ոչինչ արդելու՝ որպէս էաս կարծեմ՝ եթէ և երկոքին էաս քաջապէս ընթացան՝ բնախօսն և գուշակն. մին պատճառի իրացն ճշգրիտ 'ի վերայ եկաց, և միւսն՝ վախճանին։ Քանզի բնախօսին պաշտօն այն էր, զինեալ՝ եթէ յինչ պատճառաց ծագեալ իցէ, և զիարդ արդեօք բուսեալ իցէ. իսկ գուշակին՝ նախապատուում լինել, առ ինչ այնպէս բուսեալ իցէ, և ինչ իմաստ արդեօք նշանակ իցէ։ Իսկ որք ասեն՝ եթէ գիւտ պատճառին բարձումն է նշանին, այնպիսիքն ոչինչ խելամուտ լինին՝ եթէ 'ի միասին ընդ աստուածայնոցն նոքա և զարուեստականն 'ի նշանակաց 'ի միջոյ 'ի բաց բառնան. ըստ որում զզօրանջիւն ափսէից և զլոյս լապտերաց և յարեգակնային ժամացոյցս զստուերարկութիւս սլաքաց. քանզի մէն մի 'ի սոցանէն ունի իւր պատճառս և ճարտարութիւն արուեստի, սակայն և կարդեալ կայ լինել 'ի նշանակ։ Այլ այդ պայքարք թերևս այլում



տեղւոյ և ժամանակի թողլի իցեն 'ի ճառել ճշդրտագոյնս։

Բայց Պերիկլէս մինչդեռ տակաւին երիտասարդ էր, մեծապէս յոյժ պատկառ կայր ժողովրդեան։ Քանզի թուէր իմն զՊիսիստրատեայ բռնաւորի զկերպարանն յանձին բերել. և քանզի և ձայնն քաղցր էր Պերիկլէայ, և լեզու նորա դիւրահոլով յոյժ 'ի խօսելն և արագաթև, վասն այսոցիկ նմանութեանց ապա՝ որ կարի ծերագոյնքն էին 'ի քաղաքին, զարհուրեալք իմն էին։ Եւ զի ընչաւէտութեամբն և զարմիւն յոյժ ականաւոր էր Պերիկլէս, նաև բազմագոյնք 'ի բարեկամացն զօրաւորք և յաղթք էին, երկուցեալ զանդիտէր 'ի խեցեկոյտ վճռոյ անտի տարագրութեանն. ուստի և 'ի քաղաքական իրս ոչինչ լինէր միջամուխ, սակայն 'ի մարտս պատերազմի այր քաջ էր նա և արի և դիմադրաւ 'ի վտանգս։ Իսկ իբրև մեռաւ Արիստիդէս և վտարանդի եղև Թէմիստոկլէս, և Կիմոն ինքնին բազում ժամանակ զբաղեալ կայր 'ի մարտս արտաքոյ Եղլադայ, այնուհետև Պերիկլէս չոքաւ առ ժողովուրդն, և փոխանակ մեծատանց և սակաւուց ընտրեաց առ յինքն զբաղմութիւն խուժանին և զաղքատացն՝ հակառակ բուսոյ բարուց անձինն՝ որ ռամկասէր ամենևին չէր։ Այլ որպէս հաւանեալս եմ՝ երկուցեալ զանդիտէր զի մի բռնաւորութեան ինչ կարծիս 'ի ներքս տացեն վասն նորա։ Եւ զի տեսանէր ևս զԿիմոն կուսակից աւագացն,

և մեծապէս սիրելի արանց լաւաց և առաքինեաց, միտեցաւ ինքն 'ի կողմն ռամկին՝ անդորրութիւն անքոյթ հանդերձել անձին, և բազուկ բուռն ընդդէմ Կիմոնի. և անդէն վաղվաղակի՝ և այլ իմն կարգ քաղաքավարութեան կենաց սահմանեաց եդ անձին իւրում: Քանզի տեսանէին ցանգ զՊերիկլէս 'ի քաղաքին ընթացեալ 'ի միում անգ պողոտային՝ որ հանէր 'ի հրապարակն և յատեան խորհրդոյն: Դարձեալ և զհրաւիրանս կոչնոց և ընթրեաց՝ և որ ինչ յայսպիսեաց աստի զամենայն հիւրամեծարութիւն և զկենակից քաղաքավարութիւն միանգամայն կարձեաց: Որպէս զի և զհարուստ ժամանակն զայն զիւրոյ իշխանութեանն 'ի քաղաքին՝ և ոչ առ մի ոք 'ի բարեկամաց անտի իւրոց երբէք չոքաւ նա 'ի կոչումս և յընթրիս, բայց միայն 'ի հարսանիս եղբօրորդւոյն իւրոյ Եպիսպտողոմեայ. և եկաց ևս անդանօր մինչև 'ի ճաշակ նուիրացն, ապա եալ վաղվաղակի և գնաց: Քանզի սաստիկ հիւրամեծարութիւնք բնաւորեցան նկուն առնել զամենայն սերձութիւն. և 'ի կենակից քաղաքավարութիւնս դժուարին էր արդեօք պահել զծանրաբարոյութիւն՝ որ արդոյ բնաւորեցաւ ընծայել զունողն իւր:

Արդ՝ թէպէտ և 'ի ճշմարիտ և 'ի ստոյգ առաքինութեան՝ առաւել տեսեալն ասուաւել ևս գեղեցիկ երևի, ուստի և արք բարիք և առաքինիք ոչ ինչ այնպէս զարմանալիք են օտարացն, որպէս որոց միանգամ

զօրհանապազ կենակից՝ կենցաղակից՝ են նոցա. այլ նա յանդուլ կենակցութենէ ռամկին խոյս տուեալ փախչէր, զի մի թերևս յագեալք յափրացին. առ այս՝ և ո՛չ վասն ամենայն ինչ իրաց խօսէր ընդ նոսա, և ո՛չ դարձեալ ցանգ երևէր նա 'ի մէջ բազմութեան ժողովոյ. այլ (իբրու զեռաթի նաւն Սաղամինոյ՝ ասէ Կրիտոզայոս) վասն մեծամեծ պիտոյից 'ի նեբքս ընծայէր զանձն. իսկ զայլ ինչ իրս՝ 'ի բարեկամացն ձեռս և 'ի հռետորացն սենդակցաց իւրոց 'ի գլուխ տանէր։ 'Ի սոցանէն զմին ասեն լեալ և զԵփիաղտէս, այն որ եղոյծ քակեաց զտէրութիւնն Արիստագիին խորհրդոյ, առատ և անապակ՝ ըստ առաստացութեանն Պղատոնի՝ մատուռակելով ազատութիւն քաղաքացեացն. որով որպէս Կատակերդակքն ասեն քերթողք՝ իբրու զերիվար սեգ ստամբակեալ այնուհետև խուժանն, չառնոյր յանձն հպատակ կալ իշխանութեանց. նա՝ և զԵբիաս խածատէր, և 'ի կղզիս անդր վազս առեալ ճախրէր։

Արդ կամեցեալ Պերիկղէս՝ ընդ քաղաքավարութեան կենացն և ընդ մեծութեանն հանճարոյ մտացն ներդաշնակել՝ իբրու նուագարան՝ և զյեղանակ ճարտարախօսութեանն, բազում անգամ 'ի մէջ առեալ մեկնէր զԱնաքսագորայ վարդապետութիւնն. և իբրու հռետորական շուրջ արկեալ երանգ՝ այնպէս առեալ գունէր զբնախօսութիւնն։ Քանզի այն բարձրա-

խորհուրդ հանձար նորա՝ զամենայնն միան-
գամայն 'ի գլուխ տանող, որպէս աստուա-
ծայինն ասաց Պղատոն, 'ի միասին ընդ քա-
ջամոյն բուսոյ բարուցն՝ մեծապէս օժան-
դակեալ 'ի բնախօսութեանն վարժից, և
անդուստ զդէպն և զգեղեցիկն ածեալ
յարուեստ ճարտարախօսութեանն, յոյժ
գերազանցեաց զամենեքումբք. վասն այսո-
րիկ և մականունէին զնա Ոլիմպիոս, որպէս
ասեն: Թէպէտ և կէս-ք համարին՝ եթէ 'ի
պատճառս շինութեանցն՝ որովք զարդա-
րեաց զքաղաքն. և կէս-ք դարձեալ եթէ 'ի
պատճառս զօրութեան կարողութեանն 'ի
քաղաքին և 'ի բանակի զօրուն, անուն կար-
դային նմա Ոլիմպիոս: Այլ ոչինչ արգե-
լու՝ եթէ շատ ինչ իրք գոան զուգընթացք
զնոյն փառս անուան կարդալ աւադ առնն:

Բայց Կատակերգակ տեսարանք քեր-
թողաց ժամանակին, որ յանկատակս՝ դարձ-
եալ և ընդ կատակս՝ ձայնս շատ արձա-
կէին 'ի Պերիկլէս, յայտ առնեն եթէ յա-
ւէտ 'ի պատճառս ճարտարախօսութեանն՝
այս մականուն եդաւ նմա. քանզի ասեն
այսպէս՝ եթէ յատենաբանել իւրում Պե-
րիկլէս որոտայր և փայլատակէր, և ահա-
գին շանթ կայծական բարձեալ բերէր 'ի
լեզուի իւրում: Եւ առ այս 'ի յիշատակ
բերեն և զխօսս զԹուկիդիդեայ որդւոյն Մե-
նեսեայ, զոր ասաց նա ընդ խաղ յաղագս
հզօր ճարտարախօսութեանն Պերիկլեայ:
Քանզի այս Թուկիդիդէս էր 'ի քաջաց և
յառաջնեաց արանց, և շատ ժամանակ

հակառակ ընդդէմ ամբաստնայր Պերիկ-
ղէայ 'ի քաղաքականութեան մասին. իբրև
յաւուր միում հարցանէր զսա Ադիմանդա-
մոս Թագաւոր Լակեդեմոնացւոց, արդեօք
ո՞ ոք 'ի նոցանէն ելցէ քաջ գօտէմարտիկ,
Պերիկղէս, եթէ ինքն, եւ պատասխանի
և ասէ. "Մինչ ես ինքն գօտէկռուէալ ընդ
նմա և յաղթեալ՝ զգեստեմ զնա, նա դի-
մախօսեալ պայքարի՝ եթէ չեմ անկեալ,
և յաղթէ. և 'ի նոյն ածեալ հաւանեցու-
ցանէ զտեսողսն": Այլ սակայն և ինքնին
Պերիկղէս յոյժ պարկեշտացեալ և զգոյշ
էր 'ի բանս. որպէս զի և ցանգ յելանել
իւրում յատեան հրապարակախօսութեան,
յաղօթս կայր առ դիս՝ զի մի ինչ թերևս
յակամայ կամն բան և զրոյց ելցէ 'ի բերա-
նոյն անյարմարագիր յառաջիկայ պէտսն:
Բայց արձանագրութիւնս բանից ոչինչ ե-
թող մեզ Պերիկղէս՝ բաց 'ի վճռոց հրա-
վարտակաց իւրոց. և յիշատակին նորա ինչ
ինչ բանք նուազունք յոյժ, ըստ որում
այն՝ զի խրատ տայր նա, Զեգինէ 'ի Բաց
առնուլ 'ի Պիրէոսէ՝ Իբրև ելիցի ասէն. և այն
դարձեալ զոր ասէր, եթէ՝ Ասպասին Ռոմ
ինչ նշմարել զմարդն, զի յառաջագոյն խաղայ 'ի
Պելոպոնէսոյ: Եւ էր երբեմն՝ զի Սոփոկ-
ղէս չորավար գոլով ընդ Պերիկղէայ նա-
էր 'ի միասին, և սկսաւ Սոփոկղէս 'ի գո-
վութիւն առնուլ մանուկ մի գեղեցիկ.
առ որ ասէր Պերիկղէս. Զօրավարին պարտ
է՝ գեղեցիկն մեծն անարատ ունել զձեռս,
այլ ոչ զաչսն: Իսկ Ստեսիմբրոտոս պատ-

մէ՝ եթէ յորժամ Պերիկլէս 'ի բեմէ ան-
տի ներբողիւ դրուատէր զմեռեալսն 'ի Սա-
մոս, ասաց՝ եթէ անմահացան նոքա իբրև
զաստուածս. քանզի մեք ինքնին՝ ասէ՝
զաստուածսն ոչինչ տեսանեմք, այլ սա-
կայն 'ի շքոյն զոր ունին և 'ի բարեաց ան-
տի զոր ժառանգեն՝ խելամուտ լինիմք ե-
թէ անմահք են նոքա. արդ զայդ ամե-
նայն մեք 'ի նեղքս ընծայեմք ասէ՝ ամենե-
ցուն նոցա, որ միանգամ վասն հայրենի
աշխարհին եդին զանձինս իւրեանց։

Այլ քանզի Թուկիդիդէս հաստատու-
թեամբ գրէ, եթէ աղնուապետական էր
քաղաքականութեան կարգն Պերիկլեայ,
և անուամբ չափ միայն էր ռամկապետու-
թիւն, իսկ արդեամբք՝ միոյ առն իշխա-
նութիւն՝ որ նախաթոռ էր 'ի քաղաքին.
իսկ և այլք բազումք ասեն՝ եթէ առաջին
'ի նորա ձեռս խուժան ռամկին ժառան-
գեալ կալաւ անձին զվիճակս գեմոնոյն և
զհասս տեսարանացն և զբաշխս վարձուցն,
և չարաչար ապա սովորեցաւ՝ և վասն օրի-
նադրութեանցս այսոցիկ դարձաւ նա 'ի
շռայլութիւն և 'ի զեղխութիւն, այն որ
պարկեշտացեալ յառաջագոյն՝ և ձեռաք
իւրովք պաշտէր զօրապահիկն. մեք յար-
գեանց անտի գործոցն խելամուտ լինցուք
պատճառի փոփոխութեան Պերիկլեայ։
Քանզի անդատին 'ի սկզբանէն՝ ըստ որում
և կանխեցաք ասացաք՝ հեռամուտ 'ի վեգ
եկեալ Պերիկլէս ընդդէմ փառացն Կի-
մոնի, խնդրեաց յինքն զժողովուրդն յան-

կուցանել։ Այլ սակայն նկուն եղեալ յընչաւէտութենէն կիմոնի և 'ի ճոխութենէն, որով նա խնամ ածեալ ափոփէր զաղքատս, և ընթրիս հանապազորդեայս պատրաստէր Աթենացւոցն կարօտելոց, դարձեալ և զծերս հանդերձէր զդեցուցանէր. առ այս՝ և յանդոց իւրոց և յաղարակաց 'ի բաց բարձեալ էր զցանգս պատուարացն, զի ում միանգամ կամք իցեն՝ քաղեսցեն առցեն զպտուղս նոցա։ Յայսոսիկ ապա անձեռնհաս Պերիկղէս հաճոյանալ ռամկին, դարձաւ բուռն եհար նա զբաշխից դրամոցն հասարակաց, որպէս և զիարդ խորհուրդ ետ նմա Դեմոնիդէս Յովացի՝ որպէս պատմէ Արիստոտէլ. և վաղվաղակի 'ի տուրս դրամոցն տեսարանաց և դատաստանարանաց և այլովք ևս պարգևաբաշխութեամբք և ձրիւք կաշառեաց զխուժան ամբոխին, և 'ի նոցա ձեռս ամբարձաւ ընդդէմ Արիսպագին խորհրդոյ, յորում և ոչ մասն և բաժին ունէր նա. քանզի չէր նմա վնճակեալ լինել ոչ իշխան ոք և ոչ յօրինապահաց անտի ոք, ոչ աղքայ էր 'ի վերայ զոհիցն, և ոչ դարձեալ առաջնորդ պատերազմի. քանզի յայս աւագութեանց վնճակաւ տային 'ի ձեռս ըստ վաղնջուց սովորութեանն, և որք միանգամ յայնոսիկ ընտիրք գտանէին, յետ այնորիկ ամբառնային յաւագութիւն Արիսպագին։ Վասն որոյ և մեծապէս զօրացեալ Պերիկղէս 'ի ժողովրդեան, նկուն արար նուաճեաց զԱրիս-

պագն. որպէս զի և շատ ինչ յատենից դա-
տաստանաց 'ի բաց կապտեալ 'ի նմանէ 'ի
ձեռն Եփիալտեայ, զԿիմոն ինքնին գլխո-
վին իբրև Լակոնասէր և ժողովրդատեաց
խեցեկոյտ վՃռով եւ վտարանդի առնել.
այն՝ որ ընչաւէտ Ճոխութեամբն և զարմին
քաջութեամբն բնաւից վեհագոյն, և յաղ-
թութիւնս գեղեցիկս ընդդէմ բարբարո-
սացն տարեալ էր, և բազմահամբաւ ըն-
չիւք կապուտ կողոպուտ աւարօք զքա-
ղաքն լցեալ էր. ըստ որում 'ի վարս անդ
նորա գրեալ կայ։ Այսչափ էր աւագու-
թիւն տէրութեանն Պերիկղեայ 'ի մէջ ժո-
ղովրդեան։ Իսկ խեցեկոյտ վՃիռն տասնա-
մեայ վտարանդութիւն սահմանէր ըստ օ-
րինացն կարգի։

Բայց 'ի հոլովել ժամանակիս այսորիկ՝
զօրու ծանու Լակեդեմոնացիք էլեալք
յարձակէին յերկիր Տանագրեայ. և Ա-
թենացիք անդէն վաղվաղակի չու արարեալ
խաղացին 'ի վերայ նոցա. յայնժամ և Կի-
մոն ինքնին 'ի վտարանդութենէն եկեալ
հասանէր 'ի վայր անդր, 'ի զէն զարդ վա-
ռեալ 'ի բանակին հանդերձ իւրովք համ-
հարզիւքն՝ խնդրէր յարդեանց անտի դոր-
ծոյն քերել յանձնէն զԼակոնասիրութին,
և նիզակակցութեամբն 'ի նոյն վտանգ իւ-
րոց քաղաքացեացն արկանել զանձն։ Այլ
բարեկամք Պերիկղեայ ընդդէմ դարձեալ
Կիմոնի, ընդ կրունկն դարձուցին զնա իբրև
վտարանդի։ Վասն այսորիկ ապա թուի
թէ Պերիկղէս յոյժ կորովի քաջութեամբ

մրցեալ խառնեցաւ 'ի մարտ պատերազմին այնորիկ՝ բնաւից գերազանց և յոյժ ակա-նաւոր, ոչինչ ամենևին խնայեալ յանձն։ Անդանօր 'ի մարտին տապաստ անկան առ-հասարակ ամենայն բարեկամքն Կիմոնի, զորոց և զնոցանէն ամբաստանեալ իսկ էր Պերիկղէս իբրև զկուսակցաց ոմանց Լակե-դեմոնացւոց։ Այլ յորժամ 'ի սահմանս Աստիկոյ 'ի պարտութիւն մատնեցան Ա-թենացիք, յայնժամ ապաշաւ սաստիկ և տենչն Կիմոնի մեծապէս գրաւեալ կալաւ զնոսա. նա՛ զի և մեծի պատերազմի նոքա սպասեալ ճնային 'ի գալ գարնայնոյն։ Իրազգած Պերիկղէս եղեալ՝ ոչինչ դան-դաղեցաւ առնել զկամս ամբոխին. անդէն հրովարտակ գրեաց էտ, և ինքնին հրաւի-րեալ կոչէր զայրն։ Դարձաւ եկն Կիմոն և անդէն առնէր խաղաղութիւն քաղաքին այնորիկ, քանզի մտերմութեամբ էին Լա-կեդեմոնացիք ընդ Կիմոնի. իսկ ընդ Պե-րիկղէս խեթիւ հայէին և ընդ այլս ոմանս՝ որ միանգամ կուսակիցքն էին ռամկին։ Իսկ կէսք ասեն՝ եթէ զհրովարտակ դարձին Կիմոնի ոչ գրեաց Պերիկղէս, մինչև յա-ռաջագոյն պայմանք դաշանց գաղտնի ոչ կռեցան ընդ մէջ նոցա 'ի ձեռն Եղպինի-կեայ քեռն Կիմոնի. իբրև այն՝ զի Կիմոն նաւս երկերիւր առեալ ընդ իւր՝ եղեալ ծովագնաց լինիցի 'ի քաղաքէն. և անդ ար-տաքոյ զանձամբ զզօրավարութիւնն ա-ռեալ բանակին՝ յաւարի առցէ զսահմանս Թագաւորին. իսկ Պերիկղեայ 'ի ձեռս

կացցէ մնացէ իշխանութիւն քաղաքին։ Ա՛յլ թուի թէ և յառաջ քան զայս՝ սա ինքն Եւպինիկէ հեղագոյնս յարդարեաց զՊերիկլէս առ Կիմոն, յորժամ անդ 'ի մահուն վճռոյ ճողոպրեալ զերծաւ Կիմոն։ Քանզի յորժամ և զՊերիկլէս ինքնին իբրև զմի 'ի դատախազիցն Կիմոնի յառաջ ընծայեաց ժողովուրդն, յայնժամ Եւպինիկէ եկեալ առ Պերիկլէս յողբ անկեալ պաղատէր. ասէ Պերիկլէս ժպտելով. "Ո՞վ Եւպինիկէ, պառաւեալ յոյժ է քո՝ առ 'ի դլուխս տանել գործս իմն մեծամեծս"։

Բայց յայսր ամենայնի վերայ՝ միանգամ միայն յարեաւ յատենի Պերիկլէս առեւնաբանել. և հարևանցի արարեալ զինքեան Կիմոնի, և պակաս քան զայլս 'ի դատախազիցն ամբաստանեալ զնմանէ, էլ և գընաց։ Եւ զիարդ ապա հաւատս ոք երբէք ընծայեսցէ Իդոմենեայ, որ ամբաստան կայ զՊերիկլէայ՝ եթէ զԵփիաղդէս ինքնին զատենաբանն բարեկամ իւր և զհաղորդ բաժանորդ խորհրդոցն Պերիկլէայ 'ի քաղաքականութեան կարդս, նենգաւ սպանեալ ելցէ Պերիկլէս. իբրու այն՝ որ 'ի նախանձ վառեալ խանդասցի զփառս նորա։ Ո՛չ դիտեմ, ո՞ւստի արդեօք Իդոմենէսդ այդ զայդոսիկ կուռեաց մթերեաց, և իբրև մաղձ դառնութեան առեալ ժայթքեաց ընդդէմ առնն, որ թերևս և ո՛չ անսագիւտ յամենայնի գլխովին եկաց արդեօք, սակայն և խորհուրդս ունէր նա աղ-

նուաստանս, և ոգի մոլեալ գեղեցիկ զհետ պատուոյ, յորս երբէք ոչինչ բնաւորեաց ին արդեօք այդչափ անագորոյն կիրք և գաղանամիտ։ Այլ որ ճշմարիտն է, քան զի Եփիալտէս ահարկու յոյժ էր աւագ պետական կողմանն, և որք միանգամ հարստահարէին զժողովուրդն՝ սաստիկ և անողոքելի էր յամբաստանել զնոցանէն և հալածել, դարան գործեցին նմա թշնամիք նորա, և 'ի ձեռն Արիստոդիկեայ Տանագրացւոյ գաղտ 'ի ծածուկ սպանին զնա, որպէս պատմէ Արիստոտէլ։ Իսկ Կիմոն վախճանեաց զկեանս անդանօր 'ի Կիպրոս 'ի զօրավարութեան իւրում։

Բայց Աւագպետականքն իբրև տեսին եթէ մեծացաւ 'ի բարձրութիւն Պերիկղէս՝ և նախաթոռ բարձերէց եղև 'ի քաղաքացիսն, իբրև կամեցան զի 'ի ճակատամարտ ընդդէմ նորա կայցէ ոք 'ի քաղաքին, և զզօրութիւն նորա հարեալ վատեսցէ՝ զի մի 'ի միապետութիւն գլխովին կրթեսցի բանն, առեալ զԹուկիդիդէս Աղոպեկացի զայր զդաստ և աղգակից Կիմոնի՝ հակառակ ընդդէմ արձանացուցին Պերիկղեայ։ Սա այս Թուկիդիդէս թէպէտ և 'ի պատերազմական մասին նուազեալ էր քան զԿիմոն, սակայն առաւելեալ յատենականին և 'ի քաղաքականին՝ զտեղն առեալ և բնակեալ 'ի քաղաքին, և յատեանս ժողովոց 'ի վեդ 'ի պայքար եկեալ ընդ Պերիկղեայ, անդէն զքաղաքականութիւն կարգն 'ի հաւասարակշռութիւն ածեալ կացուցա-

նէր։ Քանզի ոչինչ թոյլ էտ՝ զի որ լաւ և առաքինի որեարն էին այնպէս ցանեալ խառնեալ կայցեն 'ի խուժան ամբոխին իբրու զառաջինն, և 'ի յոգնաթիւ բազմութենէն այնպէս նսեմացեալ կայցէ շուք փառաց նոցա. այլ ուրոյն զատուցեալ զնոսա և 'ի մի վայր ժողովեալ զամենեցուն զզօրութիւնն, այնուհետև յաղթ և բուռն գործեաց՝ իբրու մէտ 'ի լուծս կըշռոց։ Քանզի այն՝ որ անդատին 'ի սկզբանէն ընդ ռամիկն և ընդ աւագանին խարդախեալ ծալք և կրկնեալ՝ զորօրինակ բնաւորեցաւ 'ի մարմին երկաթոյ, գաղտաբար 'ի դէմս բերէր զտարբերութիւն կամաց և զխորհրդոյ երկաքանչիւր կողմանն. իսկ յայնժամ այս եալ և եալք զմիմեամբք և պայքարեալք երկոցուն սոցա՝ Պերիկղեայ և Թուկիդիդեայ՝ խորագոյնս 'ի նեղեալս կորեաց երկփեղկեաց զհատուած քաղաքին, զմի կողմն անուանեալ կոչեաց ԺՈՂՈՎՐԴ. իսկ զմիւս կողմն ՆՈՍՈՂՆԻ։ Վասն որոյ և յայնժամ մեծապէս թողացուցեալ Պերիկղէս խուժանի ռամկին զերասանակն, նկրտէր ցանգ 'ի շնորհս նոցա հնարիմաց խորհրդով Է զի մենքենայէր տեսարան աշխարհաժողով հանդիսի, Է զի կոչունս խնձոյից, դարձեալ և տօնախմբութիւնս հասարակաց 'ի քաղաքին. և սթափեցուցանէր զքաղաքն 'ի զբօսանս ոչինչ անպատկանաւորս։ Իսկ վաթսուն թուով նաւս եռաթիոց ամի ամի հանէր արձակէր արտաքս, յորս բազումք 'ի քաղաքացեացն

ամբարձեալք ծովագնացք ամիսս ութ առ-
նուին թոշակս, միանգամայն և վարձեալք
մարդէին 'ի վարձս նաւականս։ Առ այսո-
սիկ դարձեալ և հազարս 'ի քաղաքացոց
գաղթականս առեալ արձակեաց 'ի Քեր-
բոնիս. և հինգ հարիւր դարձեալ 'ի Նաք-
սոս, և կիսով չափ յԱնդրոս, և հազար մի
'ի Թրակիա բնակակից Բիսաղտեանց. և
զայլս ոմանս յԻտալիա՝ բնակեցուցանել
զՍիպարիս, որ և ապա անուանեալ կոչե-
ցան Թուրիացիք։ Եւ զայս ամենայն գոր-
ծեաց նա 'ի թեթևացուցանել զքաղաքն
յանգործ և 'ի դատարկ խուժանէն՝ որ
պարապորդ ամբոխս յուղէր. առ այս՝ և
'ի թիկունս հասանել պիտոյից և կարօ-
տութեան ժողովրդեանն. միանգամայն և
գաղթականացն բնակութեամբ առ նիզա-
կակից ժողովուրդս՝ ահ երկիւղն և պա-
հանգ արկանել 'ի նոսա՝ մի ինչ առնել 'ի
նորութեանց։

Իսկ որ առաւել իմն հեշտութիւն Ա-
թենացւոց 'ի նեղքս եբեր և զարդ դեղե-
ցիկ, և որ զամենայն մարդիկ առհասարակ
մեծապէս յափշտութիւն կրթեաց, մի միայն
վկայ Ճշմարիտ Եկեղեցւոյ՝ թէ ո՛չ սուտ ինչ
է արդեաք՝ որպէս զհամբաւն հարեալ է՝
մեծութիւն զօրութեն Եկեղեցւոյ և վաղն-
ջուց Ճոխութիւն ընչաւէտութեան նորա,
այն ինքն էր կանգնել հոյակապ շինու-
թեանց նորա։ Ոչ այլ աղագաւ առաւել քան
զամենայն նահատակութիւնսն Պերիկղէսի
խանդային թշնամիք նորա, և 'ի ժողովս և

յատեանս դատափետ առնէին զնա, բո-
ղոք բարձեալ՝ եթէ անփառութիւն մեծ է
ամբոխին և նշաւակութեան ամօթ, զհա-
սարակաց զայն դրամս զՀելլենացւոցն փո-
խեալ 'ի Դեղոսէ՝ ուր մթերեալն կայր՝
առ ինքն ամփոփել կուտել. և թէ՝ զոր
միանգամ գեղեցիկ պատրուակ ունէին
նոքա ասել առ դատախազն՝ եթէ զան-
գիտեալ 'ի բարբարոսացն բարձին անտի
զմթերս դրամոցն՝ առ 'ի պահել յանդոր-
րու զհասարակաց զինչսն, զնոյն պատճա-
ռանս կարձեաց այնուհետև 'ի նոցանէն
Պերիկղէս: Եւ թէ՝ թուի թէ բանիւդ
այդուիկ մեծապէս թշնամանեցաւ Եղլա-
գա առհասարակ. և յայտնի ևս հարստա-
հարեցաւ նա՝ տեսեալ զի զբաժ դրամոցն
հարկեալ 'ի նմանէ 'ի պէտս պիտոյից մար-
տից պատերազմաց, մեք Աթենացիք վա-
րեմք յոսկի համակել և օծանել և զարդա-
րել պաճուճել զքաղաք մեր զայս, օրի-
նակ իմն՝ իբրև բամբիշն դոռոզն՝ զորովք
շուրջ հեղեալ կախեալ կայցեն ականք
պատուականք. առ այս՝ և դրօշեալս և
ձօնս կռել ձուլել և տաճարս կանգնել
հաղարատաղանդեանս: Բայց անդուստ և
Պերիկղէս յայտ առնէր ժողովրդեան, է-
թէ զդրամոցն զայնոցիկ ոչինչ պարտական
է նիզակակից ժողովրդոցն տալ զհամար,
քանզի մարտ եղեալ նոքա պաշտպան կան
նոցա, և զիւրաքանչիւրն վանեալ սանձա-
կոծեն. և այն զի նոքա ոչ երիվարս հար-
կեն նոցա, ոչ նաւս, և ոչ դարձեալ սպա-

ռազէնս, այլ զինչս միայն՝ որ չէնն այնու-
հետև տուողացն, այլ առողացն՝ յորժամ
'ի գլուխ տարեալ կատարեն առողքն զայն
ինչ՝ ոյր աղագաւ առին զդրամն։ Եւ թէ՝
պարտ և արժան է՝ ասէր՝ յետ շատ ինչ
հանդերձելոյ քաղաքին 'ի կարևորսն 'ի
մարտ պատերազմի, այնուհետև ինչք և
մեծութիւնք նորա ծախեսցին՝ յորոց միան-
գամ փառս յաւերժական հանդերձի նմա
յետ կատարելոյ իրացն. իսկ մինչև՛ կատա-
րեալ՝ շահավաճառութիւն պատրաստա-
կան առ դուրս կայ նորա։ Քանզի գունակ
գունակ գործք և ձեռակերտք 'ի վեր երևին
յայնժամ, և աղդ ազդ պիտոյից առ տե-
ղեաւն զամենայն ճարտարութիւն արուեստ-
ից զարթուցանեն, և զամենայն ձեռս ա-
ռեալ շարժեն, և դոգցես ողջոյն զքաղաքն
իբրև վարձուոր յարդարեն գործեն. որ
անձամբ զանձն յայնժամ միանգամայն և
պճնէ զարդարէ և կերակրեալ բուծանէ։
Քանզի որք միանգամ յարբունս հասակի
հասեալք էին և կորովք զէն շարժել, նո-
քա 'ի զինուորութեան իւրեանց վայելէին
'ի հասարակացն դրամոց. իսկ խուժան
մարդկանն՝ որ 'ի զինուորութիւն գրեալք
չէին և արուեստաւորք էին, կամեցեալ
Պերիկղէս զի մի և նոքա անմասն 'ի բաժ-
նէն մնասցեն, և զի մի անգործք և պարա-
պորդք առ 'ի նոյն վայելեսցեն, գօտէպինդա
արար նա զնոսա 'ի շինութիւն մեծամեծ
կերտուածոցն, և 'ի բազմաժամանակեայ
դեղերանս գործոց բազմարուեստ ճարտա-

բաց. որպէս զի ոչինչ պակաս քան զնա-
ւաստիան և քան զպահական և քան զզին-
ուորսն՝ ունիցին և առ տնին մնացեալքն
պատճառս՝ օգտիլ շահել և հասարակացն
դրամոց բաժանորդ լինել։

Քանզի էին էին անդանօր նիւթք պատ-
բաստականք, քար, պղինձ, փղոսկր, ոսկի,
ոպնիաղ, նոճի. դարձեալ և որ յայդոսիկ
վաստակին և գործեն՝ արուեստք, ատաղ-
ձագործ հիւսունք, բրուտք, պղնձագործք,
անդրիագործք, ներկարարք, ոսկերիչք,
ճարտարք փղոսկրեցոյ, կենդանագիրք, ասղ-
նեգործք, ճախարակագործք։ Առ այսո-
սիկ՝ էին և որք բարձեալ բերէին զայնոսիկ
ընդ ծով, վաճառականք, և նաւաղք, և
ղեկավարք։ Դարձեալ և որք ընդ ցամաքն՝
սայլորդք, ջորեվարք, կառավարք, ջուա-
նագործք, գաղատոպք, և խաղախորդք, և
ուղեհորդք, և մետաղագործք։ Առ այս՝ և
մէն մի յարուեստից աստի՝ իբրու զզօրա-
վար ոք զզօրն՝ հպատակեալ ունէր ընդ ձե-
ռամբ զամբոխ գործաւոր և զշինական
մարդկանն, որովք իբրև գործեաւ ոմամբ
և մարմնով պաշտէր զգործն։ Եւ որպէս
բանիս կարդ է ասել, միանգամայն այս
պէտք և ձեռակերտք ըստ հասակաց հա-
սակաց և վիճակաց մարդկանն առեալ բաշ-
խէին իւրաքանչիւր զշահավաճառութիւն։
Արդ իբրև կանգնեցան ամբարձան շինու-
թիւնք դաստակերտացն հոյակապք և ըս-
քանչելիք մեծութեամբ, և ձևով և գեղով
աննմանք, այն ինչ ճարտարք և արուես-

տագէտք մի զմիով Էլևէլս առնէին գէրա-
զանցել 'ի ձեռակերտսն գեղեցկութեամբ
արուեստին, մեծապէս պանչացաւ յայն-
ժամ և արագութիւն Ճարտարացն։ Քան-
զի ուր կարծէր իմն՝ եթէ մէն մի 'ի շինու-
թեացն յետ բազմաժամանակեայ հոլով-
մանց և հասակաց հազիւ ուրեմն յամբոկ
գործոյն ժամանեսցէ, այն ամենայն ընդ
գեղեցիկ առաջնորդութեամբ միոյն Պե-
րիկղեայ բոլորեալք պսակեցան։ Ըստ ո-
րում և յայնժամ, ասեն՝ եթէ Ագաթար-
քոս կենդանագիր Ճարտարն մեծապէս
պանծայր յարագութեան ձեռին և 'ի յա-
ջողութեան 'ի նկարս կենդանեաց. և զայն
լուեալ Ջեւքսայ Ճարտարն, ասէ. Իսկ ես
պանծամ 'ի բազում ժամանակն։ Քանզի յա-
ջողաձեռնութիւն և արագութիւնն 'ի գոր-
ծել՝ սնդակազմութիւն անվանելի ջնա-
ւորէ 'ի գործն և ոչ ճշգրտութիւն գեղե-
ցիկ. իսկ ժամանակին երկարութիւն 'ի
միասին ընդ վաստակոց ձեռինն 'ի գործել,
կորովութիւն 'ի նեղքս բնաւորեցաւ ըն-
ծայել 'ի պահպանութիւն գործոյն։ Ուս-
ոմ և մեծապէս պանչացան գործքն Պե-
րիկղեայ, որ 'ի սուղ ժամանակի գործե-
ցան և ժամանակս ձիգս կացին մնացին։
Քանզի մէն մի 'ի գործոց անսխ անգամն
'ի շինութենէն յայնժամ իբրև վաղնջուց
գործ երևէր 'ի գեղեցկութեանն. իսկ մին-
չև ցայսօր ժամանակի իբրև այն ինչ ծնեալ
և նորագործ յառոյգութեանն. այնպէս
'ի դէմս բարձեալ բերեն նոքա կերպարան

անվթար իբրև նորակերտք անդրժելիք 'ի ժամանակէն, իբրու թէ շունչ անթարշամ և ոգի անծերանալի խառնեալ կայցէ 'ի գործսն անդր։

Եւ էր Պերիկլեայ առաջնորդ Ճարտարապետ յամենայնին և ոստիկան տեսուչ ամենեցուն՝ Փիդիաս. թէպէտ և գործ իւրաքանչիւր ունէր իւր Ճարտարապետս մեծամեծս և բազմարուեստս։ Քանզի զՀարիւրոտանեան ՊԱՐԹԵՆՈՆ՝ այս է՝ զԿուսանոցն 4, կանգնեաց Կալլիկրատէս և Իկտինոս. իսկ զԼեռներդարանն նուիրական յԵլևսինէ՝ սկսաւ շինել Կորիբոս, և ինքն կանգնեաց զսիւնսն 'ի վերայ յատակացն, և յօդեաց ընդ վերնասեանցն. իսկ 'ի մեռանել նորա Մետագենէս Քսիպետիոս եդ 'ի վերայ զգօտին և զվերին կարգ սեանցն, իսկ զլուսանցոյցն 'ի վերայ դաբիրին կառոյց 'ի դադաթանն Քսենոկղէս Քողարգացի։ Բայց զերկայնաձիգն զայն պատուար յանձին կալաւ շինել Կալլիկրատէս. յոյր սակս և ինքնին Սոկրատէս ասէ լուեալ՝ մինչդեռ զիւր կարծիսն 'ի նեղքս բերէր Պերիկլէս վասն շինութեանն այնորիկ։ Զշինութիւն զայս պատուարին՝ իբրև գործ յոյժ դանդաղագործ Կրատինոս կատակերգակ խաղ առնէ օրինակ զայս. "Քանզի 'ի վաղնջուց իսկ հետէ Պերիկլէս զնոյն գործ յառաջադէմ վարէ բանիւք, իսկ արդեամբք անշարժ գլխովին կայ գործն"։ Իսկ Ոնֆիոնն, այն է՝ վայր Երգեցողացն, որ 'ի նեղքին կողմն իւր բազմանստարան է

և բազմասիւն, և յարկ իւր խորանայարկ շուրջ իջեալ պարուրեալ՝ մի միայն ունելով ծայր գագաթան. և ասեն՝ եթէ 'ի նմանութիւն շինեցաւ այն վրանի պարսից արքային, և գործոյս ևս այսմիկ վերակացու եղև ինքնին Պերիկլէս։ Վասն որոյ և Կրատինոս դարձեալ 'ի Թրատեան քերթուածին խաղ առնէ զՊերիկլէս, այսպէս. "Մկնասխագլուխն Արամազդ աւագիկ հասեալ գայ առ մեզ Պերիկլէս՝ զՈվտիոնն 'ի վերայ գլխոյն ունելով, յորմէհետէ զերծ է նա 'ի խեցեկոյտ վՃռոյն"։ Բայց յայնժամ առաջին պատուասիրեալ Պերիկլէս, ետ վՃիռ տալ՝ զի 'ի Պանաթենեան տօնսն երաժշտական մրցանք մրցեսցին. և ապա ինքն կարգեալ հանդիսադիր մրցանացն, կարգս և սահմանս դնէր՝ եթէ զիարդ արժան լցէ մրցանաւորացն քնար հարկանել կամ նուագս առնուլ կամ թէ կիթառս բաղխել։ Եւ կատարեցաւ այս հանդէս երաժշտական մրցանաց յայնժամ և առյապայ՝ ՅՈվտիոնին յայնմիկ։

Իսկ նախադրունք գաւթաց դղեկին կատարեցան զամս հինգ. և էր Ճարտարապետն Մնիսիկղէոս։ Այլ դէպք ինչ հրաշալիք պատահեալ 'ի շինութեանն յայնմիկ, յայտ արար եթէ ոչ մեկուսի կայր անտի և գիցուհին, այլ և ինքնին նա միջամուխ գործակից էր 'ի կատարումն. քանզի այրն անդանօր ժիրաժիր յարուեստաւորսն և մեծապէս յօժարեալն՝ գթեալ անկանէր 'ի բարձանց անտի, և խօթանայր

ջարաչար, որպէս զի և 'ի բժշկացն հնարից գտաւ ապաստամբ։ Իբրև 'ի Թաղծութիւն մեծ ըմբռնեցաւ Պերիկղէս, դիցուհին յերբազի երևեալ նմա՝ ցուցանէր նմա զդարմանն, զոր և 'ի գործ վարեալ՝ վաղվաղակի և հեշտեաւ ապաքինեաց զայրն։ Վասն այսորիկ ապա և դրօշեալ պղնձի Ա-ՌՂՈ-ՐԷՆ՝ Աթենասայ կանգնեաց Պերիկղէս 'ի դղեկի քաղաքին մերձ առ բագինն, որ և յառաջնմէ իսկ կայր՝ որպէս ասեն։ Իսկ Փիդիաս գործեաց դիցուհւոյն և այլ պատկեր ոսկի. և արձանագրեաց ևս 'ի խարբսխին՝ ԵԹԷ ԻՆՔՆԻՆ ՆԱ Է ՆՈՐԱ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ։ Եւ գոգցեա ամենայնն 'ի խնամս Փիդիայ էր ապաստան. և 'ի վերայ ամենեցուն առհասարակ՝ որպէս ասացաք՝ ոսոկիկան և վերակացու նա էր Ճարտարացն 'ի պատճառս մոեբմուԹեանն ընդ Պերիկղեայ։ Եւ եղև այս կիսոցն պատճառք նախանձուն, և կիսոցն՝ հայհոյուԹեան և բամբասանաց. իբրու որ զաղատ տիկնայսն եկեալս 'ի զնին ձեռակերտացն 'ի տուն իւր առեալ ժողովեցէ Փիդիաս վասն Պերիկղեայ։ Անդուստ ապա զդոյն համբաւ առեալք յիւրեանս Կատակերգակ քերԹողքդ, դատափետ նշաւակէին զբազում անժուժկալուԹիւն նորա, բամբասեալ զնա և 'ի կին անդր Մենիպպէայ՝ որ բարեկամն էր Պերիկղեայ և երկրորդ 'ի զօրավարուԹեան նորա։ Բամբասեցին զնա և 'ի ԹուշնագործՄան պէտսն Պիւրիղամպոսի ուրումն՝ որ մոեբմն էր Պերիկղեայ. իբրու

հրաման գալ նմա՝ սիրամարգս առնուլ ա-
ռաքել կանանուցն՝ առ որս մոանէր Պե-
րիկղէս։ Իսկ զի՞նչ ասպա զարմացի զք ընդ-
որեարն՝ որ Երգիծաբանք բնաւորեցան 'ի
կեանս իւրեանց, և յիշոցս և հայհոյու-
թիւնս ընդդէմ քաջաց և առաքինեաց՝
ցանգ և անգուլ յազէն՝ իբրև դից ումեքն՝
մախանաց խուժանին. ուր և ինքնին Սո-
սիմբրոտոս թասոսացի մեծ իմն ամբարշտու-
թիւն և ստայօդ յանդգնեցաւ բանդադու-
շել ընդդէմ Պերիկղեայ և 'ի կին անդր
որդւոյն իւրոյ։ Եւ այսպէս ասպա կարի
դժնդակ է և դժուարաձեռնարկելի 'ի վե-
րայ կալ ճշմարտութեան պատմութեանն.
քանզի զկնի էկեալ պատմագիրքդ առ 'ի
հարատութենէ ժամանակացն անցելոց խա-
փանեալ են 'ի ճշգրիտ ծանօթութենէ ի-
րացն։ Իսկ որ ժամանակակից պատմու-
թիւնն է գործոց և կենաց մարդկան, է՞ զի
առ նախանձուն և թշնամութեանն՝ և է՞
զի առ շնթելոյն՝ խաթարէ և վերս 'ի վայր
զճշմարտութիւնն շրջէ։

Բայց յայնժամ իբրև առեռնաբանք թու-
կիդիդեան կողմանն բողոք բարձեալ աղա-
ղակէին ընդդէմ Պերիկղեայ, եթէ վատ-
նեալ ծախէ դա աւադիկ զգանձն և ասա-
ռէ զհասարակաց զմուտս և զհաս, ժողով
արարեալ Պերիկղէս՝ հարցանէր զժողո-
վուրդն. "Ոչ՞ խորդ թուի ձեզ՝ թէ բաղում
ինչք ծախեցան արդեօք". Եւ նոքա պատաս-
խանի և ասեն. "Կա՝ և բազմագոյն յոյժ".
կրկնեաց ասպա Պերիկղէս. "Մի՞ ձեզ ինչ

ուրեմն գրեացին ծախքդ, այլ ինձ գլխո-
վին. և զիմոյ անձին առանձին տաց ես ար-
ձանագրել զվերտառութիւնն 'ի վերայ
դատաստակերտացդ": Իբրև զայս ասաց Պե-
րիկլէս, նոքա միանգամայն և ընդ մեծ-
անձնութիւնն հիացեալ զքանչացեալ, և
փառաց դատաստակերտացն այր զարամբ հե-
տամուտք, ձայն բարձեալ ազաղակէին՝ հրա-
ման առեալ 'ի հատարակաց դանձէ անտի
առնուլ և տալ և խնայել և յոչինչ: Իսկ
'ի վերջէ 'ի վեգ ընդ Թուկիդիդեայ եկեալ՝
մինչև խեցեկոյտ վՃռով հարկ լինել վտա-
րանգութեան միոյ ուրուք 'ի նոցանէն, եւ
Պերիկլէս տարագիր առնել զԹուկիդի-
դէս. և այնպէս բարձաւ 'ի միջոյ յայնժամ
երկպառակութիւն կողմանցն:

Իբրև այսպէս ամենայն հակառակու-
թիւն բնաջինջ բարձաւ, և քաղաքն գլխո-
վին անդորրացեալ 'ի մի միաբանութիւն
դարձաւ, այնուհետև առհատարակ զԱ-
թէնս յանձն իւր առեալ գրաւեաց Պե-
րիկլէս, միանգամայն և որ ինչ Ա.թենաց-
ւոցն էր անկ հոդաբարձութեան, հարկ
և բաժք, և զենուորութիւնք և մարտք,
և եռաթիոց նաւք, և կղզիք, և ծով. և
մեծ էզև զօրութիւն իշխանութեան նո-
րա առ Հելլենացիս, մեծ և առ բարբա-
րոսս ինքնին. և հատատարուստ ամրաձա-
ծուկ լինէր 'ի հնաղանդելոց անտի ազգաց,
և 'ի բարեկամութենէ թագաւորաց, և 'ի
նիզակակցութենէ քաջաց: Եւ այնուհետև
Իբրու զառաջինն չէր Պերիկլէս, և ոչ

հեշտընկալ ինչ խուժանի ռամկին, և ոչ դիւրաւ զնչանէր նոցա, և կամ անձնատուր երբեք տեղի տայր ըղձից ամբոխին՝ իբրու բազմահնչակ հողմոցն շնչմանց. այլ զմեղին զայն և զլոյծ իշխանութեան ռամկին զերբասանակն՝ իբրու զթուլակի և զկակուղ ներդաշնակութիւն գործոյն՝ ձգտեալ ընդեաց յաշնուապետականն և յարքայական քաղաքականութեան կարգ. և ցանդուղիղ և անսոգիւտ քաղաքավարութեամբ 'ի լաւագոյնն թեւակոխեալ, այնպէս ապա բազում անգամ զամբոխն անբռնադատ մտադիւրագոյնս հնազանդեցուցանէր գեղեցիկ յորդորակօքն և խրատուն: Ա՛յլ էր զի և յակամայ կամն նուաճեալ՝ բուռն առնէր նմա հպատակել և պատկառ կալ օգտակարացն և պիտանեաց, զնմանութիւն բերելով յանձին ճշգրիտ զճարտար բժշկի, որ 'ի բազմօրինակ խօթութիւնս և 'ի բազմաժամանակեայս՝ է զի ըստ ժամուն պիտոյից զհեշտալին և զդիւրընկալն վարէ դեղ. և է դարձեալ 'ի դէպ ժամուն՝ ըզբարկն և զսաստիկն, որ զփրկութիւն նաւթձէ հիւանդին: Եւ քանզի՝ որպէս 'ի դէպ է կարծել՝ բազմադէմ կիրք և ախտք բնաւորեալ էին յամբոխ ժողովրդեանն այնորիկ՝ որ զայնչափ լայնասահման տէրութիւնն զբռամբ ունէին, միայն սա այս Պերիկղէս գիտաց ճշգրիտ և գեղեցիկ տանել բերել զմէն մի 'ի նոցանէն. և առաւել՝ յուսով և երկիւղիւ՝ իբրու կրկին ղեկօք՝ է զի սանձակոծելով զժպիրհ խեռութիւնն

'ի նոսա, և է զի արձակերասան խրախոյս քաջալերը կարդալով անարի վատասրտու-թեան նոցա. և եցոյց յայտնապէս յանձին իւրում եթէ Հռետորականն՝ ըստ Պղատոնին՝ իշխան է 'ի վերայ ոգւոց տանել բերել զնոսա. և մեծապէս գործ պաշտաման նորա՝ գեղեցիկ կարգաւ հասանել ունել 'ի բուռն զբազմադէմ զբարս և ըզկիրս մարդկանն՝ իբրու ձայնս և ոլորակս և աւաչս հոգւոյն, որոց յոյժ ճարտար մատանցն պէտք ելցեն շարժել հարկանել և հնչեցուցանել զնոսա:

Իսկ էր պատճառք՝ այսորիկ ոչ լոկ մեծի ճարտարախօսութեանն Պերիկղէայ ոյժ, այլ որպէս Թուկիդիդէս ասէ՝ շուք փառաց և հաւատք առն 'ի քաղաքավարութենէ անտի կենաց նորա, որ ակն յայտնի անկաշառաբեկ էր այրն, և ամենայն պարգևաց և զօշաքաղութեանց գեր 'ի վերոյ: Եւ որ զքաղաքն գլխովին զմեծն՝ ամենամեծ կարգեաց էդ և ամենահարուստ, և որ զօրութեամբ աւագութեանն 'ի վերոյ գտաւ քան զԹադաւորս բազումս և զբրունաւորս, յորոց կէսք և վասն որդւոց արդեօք Թողին ինչ 'ի գոյից իւրեանց. սա այս Պերիկղէս և ոչ միով դիդրաքմայիւ չափ աձեցոյց զդոյս ընչից՝ զոր եթող նմա հայրն իւր: Եւ այն զի զզօրութիւն աւագութեան նորա քաջ իսկ 'ի դէմս բերէ մեզ Թուկիդիդէս. իսկ անդուստ և Կատակերգակ քերթողք ըստ լեզուագար բարոյից զնոյն հռչակ հարկանեն. քանզի

զընտանիսն և զմոեբիսն Պերիկղեայ ա-
նուանեալ կոչէն նորա ոմանս Պէ՞ՒՒՈԷՐՐ-
ԳԷՍ՝. իսկ նմին Պերիկղեայ տան երդումն
կուեալ՝ զի երբէք զբռնաւորութեան ինչ
թեկն մի ածցէ. յայտ արարեալ՝ եթէ ա-
ւագութիւն իշխանութեանն Պերիկղեայ
անչափակից ուրեմն էր ռամկապետու-
թեանն կարգի և անկշիռ։ Իսկ Տեղեկղի-
դէս պատմէ՝ եթէ ապատման 'ի ձեռս ե-
տուն Պերիկղեայ Ա՛թենացիք զքաղաքացն
զՀարկս և զբաժս, դարձեալ և զնոյն իսկ
զքաղաքն գլխովին. ըստ հաճոյից կա-
մացն զկէսս կապել, և զկէսս արձակել.
'ի քարանց պատուարս՝ է՛ զի շինել կանդ-
նել, և է՛ զի զկանգնեալսն՝ հիմն 'ի վեր
առնել. առ այս՝ և զդաշինս պայմանաց,
և զզօրութիւն աւագութեան, և զտէրու-
թիւն իշխանութեան, զխաղաղութիւն,
զմթերս ընչից, և գլխովին իսկ զերջանկու-
թիւն անձանց։ Այն զի՝ և ո՛չ ժամանա-
կին ինչ քաջադիպութիւն գոյր 'ի միջի
վասն այդոցիկ. և ո՛չ դարձեալ ընդ սուղ
ինչ ժամանակ այդոքիկ՝ այ՛ն ինչ առոյդ և
հեշտընկալ բարգաւաճէր նորածաղիկ իշ-
խանութիւն առն. այլ գլխովին ընդ ժա-
մանակս ամաց քառասնից նախաթոռ իշ-
խան բազմեցաւ Պերիկղէս, Թէպէտ և Ե-
փիաղտէսք էին յայնժամ և Ղէոկրատէսք
և Միւրոնիդէսք և Կիմոնք և Տողմիդէսք և
Թուկիդիդէսք։ Առ այս՝ և յետ նուաճու-
թեանն Թուկիդիդեայ և վտարանդու-
թեանն, ոչինչ պակաս քան զամս հնգե-

տասան վարեաց նա զնշխանութիւնն. և յանձն իւր ժողովեալ միանգամայն զամենայն զօրութիւն և զպետութիւն՝ որ 'ի տարեւոր ոստիկանսն բաժանեալ կայր, անընդունելի պահեաց զանձն և անվանելի յընչաքաղցն կրից։

Այլ սակայն և ոչ գլխովին անգործ պարապորդ կայր 'ի տնտեսութեան գոյիցն, այլ զի մի թերևս հայրենի ժառանգութիւնն և արդար մեծութիւնն յանփոյթութենէն նուազեալ վատնեսցի. և մի գարձեալ շատ ինչ զբօսանս և դեգերանս նորա անպարապութեանցն 'ի նեղքս բերցէ, գեղեցիկ տնտեսութեամբ առեալ հանդերձեաց զայն, որչափ ինչ միանգամ հեշտին թուեցաւ նմա և ճշգրտագոյնս։ Քանզի միանգամայն զամենայն պտուղս և զհասս իւր տարեւորս անդէն վաճառէր, և ապա աւուր աւուր որ ինչ միանգամ կարևորն էր՝ գնէր 'ի հրապարակէն. և սահման կենաց և զպիտոյից զայս կարգեաց տան իւրում։ Այսորիկ աղագաւ ոչ ինչ հաճոյ գտանէր Պերիկղէս առաջի որդւոց իւրոց՝ որ 'ի չափն հասեալ էին, և ոչ կանանցն, զի ոչ առատապէս էր տնտեսութիւնն. այլ քրթմնջիւն էր՝ զի օր ըստ օրէայ ծախքն այնչափ ինն ճշդութեամբ տնտեսէին. և զի և ոչ մի ինչ առատութիւն գտանէր անդ 'ի նեղքս, ըստ որում և վայել էր այնպիսում մեծի տան, և որ այնչափ հասից ամբաւից ժառանգորդ էր. այլ ամենայն եղք և ամենայն մուտք անդանօր՝

թուով էին և չափով և կշռով։ Եւ որ զայս ամենայն զմեծապէս ճշդութիւնն 'ի գլուխս տարեալ կատարէր, էր մի ոմն 'ի պաշտօնէից անտի նորա Եւանգեղոս անուն. որպէս զի և ոչ ոք այլ այնպէս քաջապէս անդատին բնաւորեալ էր յայն գործ. և կամ թէ 'ի նմին իսկ 'ի Պերիկղէայ վարժեալ հրահանգեալ էր նա 'ի անտեսութիւն անդր։

Այլ այս ամենայն ընդդէմ ելանէր իմաստութեանն Անաքսագորայ, այն՝ որ և զտուն բնակութեան իւրոյ ինքն ըքեալ, և զագարակս իւր թողեալ էր 'ի բացի անգործ անմշակ՝ կարգեալ յարօտ խաշանց՝ առ գեղեցիկ մոլութեանն իմաստասիրականին և բարձրագունիցն խորհրդոց։ Սակայն որպէս ինձ թուի՝ ոչ նոյն և մի է սահման կենաց տեսական իմաստասիրին և առն քաղաքականի. առաջինդ անբաժ 'ի գործեաց և անկարօտ արտաքնոցն նիւթոց՝ շարժէ և տանի բերէ զխորհուրդ մտացն 'ի գեղեցիկսն. այլ վերջինդ՝ քանզի 'ի պէտս կենցաղոգուտս մարդկանն առեալ միջամուխ խառնէ զառաքինութիւն անձինն, է ուրեք զի ոչ կարևոր միայն հանդիպեսցի նմա ընչաւէտութիւնն, այլ և գեղեցիկ և վայելուչ, ըստ որում և նմին իսկ Պերիկղէայ. այն՝ որ 'ի թիկունս օգնականութեան հասանէր բազմաց ջքաւորաց, և նմին իսկ Անաքսագորայ։ Քանզի պատմեն՝ եթէ 'ի պատճառս մեծի անպարապութեանն Պերիկղէայ, էր երբէք զի անփոյթ

լքեալ եկաց Անաքսագորաս 'ի ծերացեալ հասակին իւրում, վասն որոյ և զգլուխն իւր առեալ ծածկեաց նա ձորձոնէն. կամէր այնպէս անսուաղութեամբն վճարել զկեանս։ Ա՛յն ինչ իրաղգած բանին եղեալ Պերիկղէս և խռովեալ 'ի հոգին, դիմեաց չոքաւ առ Անաքսագորաս, և անդ զամենայն պաղատանս պաղատէր առ նա. մեծապէս ցաւէր նմա ոչ վասն նորա ինչ այնչափ, որչափ վասն անձինն՝ եթէ երբէք զերկ մնասցէ յայնպիսի առնէն, որ խորհրդական քաջ էր 'ի քաղաքականութեան կարգս։ Յայնժամ 'ի բաց զձորձն առեալ Անաքսագորաս, ասէր առ նա. Ո՞Հ ՊԵՐԻԿԼԷ, ՆԱ՛ Ե ՈՐ ԼԱՊԻԵՐԻՆ ՊԷՏՍ ՈՒՆԷՆ, ԻՆՉ ԱՐԻԱՆԷՆ 'Ի ՆՄԱ։

Բայց իբրև Լակեդեմոնացիք սկսան խեթիւ հայել ընդ բարգաւաճ փառսն Աթենացւոց, Պերիկղէս յաւէտ 'ի վեր առեալ ոանէր զնոսա խորհել մեծամեծս ևս քան զնոցնս, և մեծամեծ ևս ուղղութեանց նահատակութեանց արժանի առնել զանձինս. վասն որոյ և վճիռ մի եռ տալ գրել, զի ամենայն Հելլենացւոց՝ ուր և միանգամ բնակութիւն կալեալ ի ցեղն Եւրոպա կամ Ասիա 'ի մեծամեծ քաղաքս և 'ի փոքունս՝ հրաւէր կարգասցեն առնուլ առաքել յատեան ժողովոյ Աթենացւոց պատուիրակս, խորհուրդ խորհել վասն հելլենական մեհենից՝ զոր հին 'ի վեր տապալեալ էին բարբարոսք. և յաղագս զոհից նուիրացն՝ զոր պարտէին 'ի դնել նոցա

ուխտս առ գիս վասն Եկեղեայ, յորժամ մարտ եղեալ կռուէին ընդ բարբարոսս. և յաղագս ծովուն՝ որպէս զի առ հասարակ ամենեքեան յանդորրուն նաւարկեալ վայելեսցեն 'ի խաղաղութեան։ Եւ յաղագս այսորիկ արք քսան թուով որ զքինանմենիւք անցեալ էին՝ արձակեալ առաքեցան ՅԱԹԵՆԱՅ։ Հինգն 'ի նոցանէ հրաւիրակք ջոքան Յոնիացւոց և Տորիացւոց՝ որք ՅԱՍԻԱ, և Կղզեցւոցն մինչև 'ի Լէսբոս և 'ի Ռոդոս։ Հինգ դիմեալ գնացին առ որս 'ի Հելլեսպոնտոս և 'ի Թրակիա՝ մինչև 'ի վայրն Բիւզանդիոյ։ Եւ հինգ դարձեալ 'ի նոցանէն 'ի Բիսվոիա և 'ի Փոկէա և 'ի Պեղոպոննիսոս, և անտի անցեալ՝ ընդ Լոկրացիս 'ի սահմանակից վայրն մինչև ՅԱԿարնանիա և ՅԱՄբրակիա արձակեցան։ Իսկ մնացեալքն յուղի անկան ընդ Եւբիա առ Եստացիս և 'ի ծոցն Մելէայ, առ Փթիոտացիս և առ Աքայեցիս և առ Թեսսաղացիս, ածել հաւանեցուցանել առ հասարակ զամենեսեան՝ գալ և հաղորդ բաժանորդ լինել խորհրդոյն, վասն խաղաղութեան և հասարակաց շինութեանն Եկեղեայ։ Սակայն կատարեցաւ և ոչինչ, և ոչ 'ի մի վայր եկեալ ժողովեցան քաղաքք. քանզի Լակեդեմոնացիք հակառակեալք ընդդէմ դարձան՝ որպէս ասեն, և զառաջինն 'ի Պեղոպոննիսոս խոռեալ հերքեցաւ առաջարկութիւն խորհրդոյն։ Այլ ես զայս 'ի պատմութեանդ կարդեցի, 'ի գէմս բերել ընթերցանելեացն զՊերիկղէայ զգե-

զեցիկ հանճարն՝ նոյն և զմեծութիւն ոգ-
ւոյ առն աւագի։

Իսկ 'ի զինուորական արշաւանսն՝ առա-
ւելապէս զհամբաւի հարեալ էր նա 'ի
պատճառս անձնապահ զգուշաւորութեն.
քանզի մարտ պատերազմի՝ որ անյայտու-
թիւն բազում յինքեան բարձեալ բերէ և
վտանգ, նա մտադիւր կամաք չառնոյր
յանձն երբէք. դարձեալ և ոչ նախանձա-
ւոր և հեռւոզ կամէր լինել զօրավարացն
այնոցիկ՝ որ յանդուգն ձեռներէց եղեալք
'ի վտանգս՝ ապա ըստ բախտին բերման
քաջացեալք տարան զմրցանակն և պան-
ջացան իբրու մեծամեծք ոմանք։ Եւ ասէր
նա առ քաղաքացիսն ցանգ զայս ինչ, ե-
թէ իւրովսանն նոքա միշտ և հանապազ
անմահք կացցեն մնասցեն։ Այլ տեսեալ
Պերիկղէայ՝ զի Տողմիդէս որդի Տողմեայ
յաղագս առաջին իւրոց յաջողակ եղեցն,
դարձեալ և 'ի պատճառս մեծապէս շքոյ
պատուոյն 'ի զինուորական մրցանացն 'ի վեր
վազեալ, 'ի դժպատեհ ժամանակի ձեռնե-
րէց խնդրէր արշաւել 'ի Բիովտիա, և 'ի
նոյն ածեալ հաւանեցուցեալ երիտա-
սարդս քաջս և կորովիս և պատուասէրս
ինքնակամ նահատակել 'ի զինուորութեան,
որ էին նոքա թուով հազարք, թո՛ղ զայլ
զօրն զբանակին. ապա գուն գործէր ջա-
նալոյր Պերիկղէս սանձել զայրն 'ի խորհրդ-
դոցն և իրատեր յորդորէր ևս զնա 'ի հրա-
պարակի, և ասէր առ նա զդէրահամբա-
ւեալն զայն զբան. "Եթէ Պերիկղէայ՝ դա

ոչ անսայ, գոնեա ակնկալեալ սպասեսցէ ամենիմաստ խորհրդականին՝ ժամանակի, և մի մեղիցէ"։ Արդ յայնժամ զբան զայս Պերիկղեայ չափով 'ի գովութիւն առին. իսկ ապա յետ սակաւ աւուրց իբրև գոյժ եհաս, եթէ և Տողմիդէս ինքնին անկաւ 'ի մարտին, և մօտ 'ի Կորոնէիա 'ի պարտութիւն մատնեալ տապաստ անկան ազգ բազումք և քաջք և առաքինիք 'ի քաղաքացեաց անտի, մեծապէս փառաւք այնուհետև և սիրով յաղագս բանին այնորիկ յարդեցին զՊերիկղէս իբրև հանճարեղ այր և զգօն և քաղաքասէր։

Այլ 'ի մարտից արշաւանն առաւելապէս 'ի գովութիւն առեալ է մարտ պատերազմին նորա վասն Քէրրոնիսեայ, որով յանդգնութեամբ եհան զՅոյնս զբնակեալսն 'ի նմա։ Քանզի ոչ միայն ամրութիւն մեծապէս հանդերձեաց քաղաքացն այնոցիկ, գաղթական մի քաջորերոյն Աթենացւոց հազար թուով ածեալ 'ի նմա, այլ զի և զկիրճն զայն ողջոյն 'ի ծովէ մինչև 'ի ծով պատեալ յամուրս աշտարակաց և մահարձանաց, արգելանձեաց զասպատակս հինգից թրակացւոց՝ որ շուրջ հեղեալ կան զՔէրրոնիսեաւ, և փրկեաց զգաւառն 'ի սաստիկ և 'ի հանապազօրեայ մարտից, յորոց տագնապէր նա զամենայն ժամանակն. քանզի խառն բնակեալ էին 'ի նմա և մերձաւոր բարբարոսք. և լցեալ ևս էր յաւազակաց անտի սահմանակցաց և 'ի բնակակցաց։ Ա՛ռ այսոսիկ՝ և յոյժ հիացեալ

սքանչացան և հռչակ հարին զնա աղգք օ-
տարք. քանզի 'ի Պեգէայ Մեգարացւոց
հարիւր եռաթիւռվք դիմեաց նա 'ի Պեղ-
պոննիսոս. և ոչ միայն յաւարի էառ նա
զքաղաքս ծովեզերեայս, ըստ որում և յա-
ռաջագոյն Տողմիդէս, այլ և 'ի խորս անդր
խաղաց նա 'ի ծով հանդերձ զօրուն նաւացն,
և արհաւիրս արկեալ՝ որպէս զի և առհա-
սարակ 'ի գալատենէն նորա յամուրս պա-
տուարաց իւրեանց մոռեալք զօղեցին. իսկ 'ի
Նեմէա Սիկիոնէացիք ընդդէմ դարձեալ
նմա մարտիւ, նա բուռն զօրութեամբ վա-
նեալ զնոսա՝ նշան յաղթութեան կանգ-
նէր: Յետ այսորիկ զօրաժողով յեռաթիսն
արարեալ ՅԱՔայիոյ՝ որ Նիզակակիցն էր
նորա, դիմեաց 'ի հանդիպակաց ցամաք
անդր, և նաւեալ շուրջ զԱքէղովեաւ՝
ասպատակաւ յաւարի առնոյր զԱկարնա-
նիա, և եկեալ շուրջ փակեաց արդէ զԵ-
նէացիս 'ի պատուարս իւրեանց. ապա յա-
ղարտ վարեալ զանդս և զագարակս նոցա,
եկն դարձաւ 'ի տուն. ահաբեկ ցուցեալ
զանձն առհասարակ թշնամեացն, և աչա-
լուրջ այր և քաջ իւրոց քաղաքացեացն.
քանզի և ոչ ըստ դիպաց ձախողակի ինչ
եղեալ յայնժամ պատահեցան զօրականին:

Յետ այսորիկ և 'ի Պոնտոս ծովագնաց
բերեալ նա 'ի հանդէս նաւաց՝ մեծ և շքեղ
և բազմահանդերձ, արար կատարեաց զա-
մենայն կամս քաղաքացն Յունաց, մարդա-
սիրութիւն մեծապէս ցուցեալ առ նոսա.
դարձեալ և շրջակայ բարբարոս ազգաց և

նոցուն արքայից և նախարարաց Ճոխաբար պանծանօք ցուցանէր զզօրութիւնն, իբրու այն՝ որ մեծապէս արութեամբ այնպէս ծովագնաց լինին նոքա՝ ուր և միանգամ հաճոյ է նոցա, և 'ի բոլոր առհասարակ ունին զծուխն։ Ապա եթող առ Սինոպացիս յիւրոց անուի նաւս երեքտասան, և զԱմակոս իշխան 'ի վերայ, և զօրս ևս ըզդէմ ունել բռնաւորին Տիմեսիկլէսի, այն՝ որ վտարանդի իսկ էր հանդերձ խուժանիւն իւրով. առ այս՝ և ետ վՃիռ զի Ամենացիք վեցհարիւր թուով ինքնակամ նահատակեալք չու արասցեն 'ի Սինոպ, և բնակակից լիցին Սինոպացւոց, և բաշխեալ բաժանեսցեն յիւրեանս զտունս և զկալուածս, զոր գրաւեալ իսկ էին բռնաւորքն յառաջագոյն։

Ա՛յլ սակայն և ո՛չ գլխովին զկնէր Պերիկլէս 'ի թափ ըղձից քաղաքացեացն, և ոչ նպաստ ինչ լինէր նոցա՝ որ 'ի բարեբաստիկ եղիցն և 'ի զօրութենէն բարձրապարանոց գնային. որպէս զի և կրկին նոքա հետամուտք խնդրէին ընդ բռամբ ունել զԵգիպտոս, և զծովեզերեայ սահմանսն զարքային. նա և բազումք 'ի նոցանէ ձախողակի ցանկութեամբ ըղձակալեալք էին առ Սիկիլիա. և յայն ցանկութիւն առաւել բորբոքեցին զնոսա հռետորք Աղկիպիագեայ կողմանն. իսկ և կէսք 'ի նոցանէ զՏիւրրենիա յերաղանային և զԿարքեդոնն, մեծապէս յուսով վստահացեալք 'ի լայնասահման տէրութիւն իւրեանց և 'ի յա-

ջողութիւնն հաստատութեանն։ Այլ Պերիկլէս կարձէր զյանկութիւն և սանձէր զբռնութիւն կրիցն յեռանդն մեծազբօս գործոց, և զոյժ զօրութեանն շրջէր 'ի պահել և յանգորրու կացուցանել՝ զոր միանգամ ստացեալ իսկ էին նոքա. եգ 'ի մեծ գործ մեծ կատարել, եթէ երբէք յաջողեսցի նոցա վանել զԼակեդեմոնացիսն՝ որոց և գլխովին հակառակորդ ամբարձեալ իսկ էր, ըստ որում 'ի բազում ինչ դէպս յայտ արար նա. և առաւել ևս՝ 'ի նուիրական անդ մարտին։ Քանզի յորժամ զօրաժողով գիմեցին Լակեդեմոնացիք 'ի Դեղփիս, և զտաճարն անդրէն դարձուցին առ Դեղփացիս՝ զոր ունէին յայնժամ Փոկէացիք, անդէն 'ի մեկնել նոցա՝ խաղաց անդր Պերիկլէս և միւսանգամ դարձոյց զՓոկէացիսն։ Առ այս դարձեալ՝ քանզի Լակեդեմոնացիք 'ի Ճակատ գայլոյն պղնձի՝ առեալ արձանացուցին զնախահարցուկ զիշխանութիւնն 5, զոր եառն նոցա Դեղփացիք. զնոյն՝ և Պերիկլէս զիշխանութիւն զայն առեալ և ինքնին վասն Աթենացւոց, քանզի ակեաց զայն յաջոյ կողմն գայլոյն։

Բայց յայնժամ յելից իրացն հաւատարիմ եղև, եթէ ուղղապէս խորհրդով առ կայացուցեալ ունէր Պերիկլէս յԵլլադա զզօրն Աթենացւոց. քանզի առաջին Եւբիայիք յապստամբութիւն դրդեցան, ուստի նա զբանակ զօրուն խաղացոյց 'ի վերայ նոցա. և ապա անդէն գուժկան ևս հասանէր պատրաստութեան Մեգարացիս

ւոց 'ի մարտս պատերազմի. և թէ՝ 'ի սահ-
մանս Աստիկոյ զոր մեծ թշնամեաց հա-
սեալ կայ, և զօրավար նոցա Պղիստոնակ-
տէս արքայ Լակեդեմոնացւոց։ Հապա
Պերիկղէս 'ի շտապ տագնապի խաղաց յԵՒ-
բիոյ 'ի մարտս պատերազմի յԱստիկէ. սա-
կայն 'ի մարտն ոչ միսեցաւ ընդ բազմութիւն
և քաջամարտիկ զօրականին՝ որ ձայն ևս
տային նմա։ Իբրև ծանեաւ Պերիկղէս՝ զի
Պղիստոնակտէս պատանեակ՝ խորհրդո

վտարանդի եղև 'ի Սպարտիոյ. բայց զայսոսիկ մեր 'ի վերն Լիւսանդրեայ մեկին արձանագրեալ է։

Իսկ յորժամ զծախուց մարտին զայնորիկ ետ Պերիկղէս զհամարն իբրև տաղանդաց տասնից, և վկայեաց ևս եթէ 'ի կարևորն ծախեցան և 'ի վայելուչն, հաւանեցան ժողովուրդք, և ոչ ևս խնդրեցին հետախուզել զդաղտնիս նորա։ Այլ կէսք պատմեն՝ յորոց մի է և Թէոփրաստոս իմաստասէր, եթէ առաքէր Պերիկղէս ամի ամի տաղանդս տասն 'ի Սպարտիա և յինքն յանգուցանէր յաւագանւոյն և աղաստանայր 'ի մարտէն. և ապա օրինակ զայս գնոյ առնոյր նա ոչ զխաղաղութիւնն, այլ զժամանակն. զի պարապ գտեալ կազմածոյ պատրաստութեանն՝ քաջ ևս ապա միսեացի 'ի մարտն։ Ըստ որում և միւսանգամ դիմեալ 'ի վերայ ապստամբացն, և անցեալ յԵւբիա յիսուն նաւուք և հինգ հազար զօրականօք, նկուն արար զքաղաքն։ Առ այս՝ և 'ի Քաղկիդացիս վանեալ վտարեաց զայնոսիկ՝ որ անուանեալ կոչէին Իպոբոտեանք. և էին նոքա բազմահարուստք և ականաւորք. և առհասարակ զԵստացիս եհան 'ի դաւառէն Իւրեանց, և բնակեցոյց ընդ նոցա զԱթենացիս միայն. խնայեաց և ոչինչ 'ի նոսա՝ քանզի կալեալ նոցա նաև մի ատտիկեցի՝ ընդ սուր հանեալ էին զամենայն մարդիկն։

Բայց իբրև ընդ ամս երեսուն խաղաղութիւն հաստեցաւ ընդ Աթենացիս և

ընդ Սպարտացիս, եւ Պերիկլէս տալ վճիռ
արշաւանաց ծովու ընդդէմ Սամոսացւոց.
իբրու որ ոչ հնազանդեցան նոքա դադա-
րել 'ի մարտէն ընդդէմ Միլէսացւոց։ Այլ
քանզի համբաւ հռչակ հարեալ էր վասն
արշաւանին այնորիկ Պերիկլէայ իբրու 'ի
շնորհս Ասպասիայ, ոչինչ ապա դժպատեհ
ելցէ քննել 'ի ժամուս՝ եթէ զիարդ արդ-
եօք հնարիմաց խորհրդով և մեծապէս զօ-
րութեամբ յաջողեցաւ կինդ այդ նկուն
իւր առնել զՀոնիս քաղաքին. առ այս
դարձեալ՝ եւ և իմաստասիրաց դասուն ոչ
ինչ անկած և ոչինչ անպատճոյճ խօսել
զնմանէ բանս։ Արդ՝ միաբանին առհասա-
րակ, եթէ Միլէսացի էր Ասպասիա՝
դուստր Ա.քսիոկոսի։ Եւ ասեն՝ եթէ
զնմանութիւն բերելով սա յանձին զԹար-
գէղեայ ուրուճն 'ի վաղնջուց անուն կա-
նանցն Յադացւոց՝ ընչաւէտ արանց ցանդ
զհետ մոռեալ էր. քանզի Թարգէղիա հրա-
շագէղ 'ի գիտակ պատկերին և շնորհաշուք
և հանճարեղ՝ բնակակից էղև բազմաց Յու-
նաց, և հաւանեցուցանէր զորս միանգամ
մերձենայինն առ նա՝ թիկունս տալ ար-
քային Պարսից. և 'ի ձեռս աւագացն այ-
նոցիկ և Հոնիոց նա գաղտաբար ցանեաց 'ի
քաղաքս հրապոյրս՝ զկուսակցութիւն Մա-
դայց։ Իսկ կէսք ասեն՝ եթէ Պերիկլէս մե-
ծապէս խնամով շուք դնէր Ասպասիայ.
զի էր նա կին լի իմաստութեամբ և վարժ
'ի քաղաքականին. ուստի և Սոկրատէս
ինքնին ասէպ յայց էլանէր առ նա հան-

դերձ ծանօթիւք. և ոչք մտերիմքն էին նմա՝ ածէին առ նա և զկանայս իւրեանց լսել Ասպասիայ. Թէպէտ և ինքն ոստիկան 'ի վերայ կայր անփառունակ և դժպատեհ ապաստաւորութեաբ՝ 'ի անուցանել աղջկունս լկոխս։ Եւ Եպքինէս ինքնին ասէ, եթէ և Լիսիկղէս խաշնավաճառ այր անաւագ և անկած 'ի բնութենէն՝ գտաւ նախաթոռ ՅԱԹԵՆացիս 'ի պատճառս մերձաւորութեան իւրոյ ընդ Ասպասիայ յետ մահուանն Պերիկղեայ։ Իսկ 'ի Մենեքսենոս մատենին Պղատոնի, Թէպէտ և ընդ խաղ գրեալ իցէ սկիզբն մատենին, սակայն և պատմութիւն գտանեմք մեք 'ի նմա՝ եթէ բաղումք ՅԱԹԵՆացւոց կենցաղակից լինէին Ասպասիայ՝ զի քաջավարժ էր 'ի հռետորականին։ Այլ յայսր ամենայնի վերայ՝ թուի թէ մտերմութիւնն Պերիկղեայ ընդ Ասպասիայ՝ տուփանաց կիրք էին։ Քանզի Պերիկղէս ունէր կին համաղարմ՝ որ կին լեալ էր Իպպոնիկոսի, որում և ծնաւ ըզ Կաղլիաս զընչաւէտն. և ծնաւ ապա Պերիկղեայ զՔսանթիպպոս և զՊարալոս. իբրև ոչ ևս կամեցան բնակակից լինել՝ ետ զնա Պերիկղէս 'ի կին այլոց ումեմն՝ զոր և կինն ինքնին խնդրէր. և ածեալ իւր 'ի կին զԱսպասիա՝ սիրեաց զնա յոյժ. քանզի և յելանել իւրում՝ որպէս ասեն՝ և 'ի մտանել 'ի հրապարակէ, ցանդ ողջոյն տայր նմա և համբուրէր. ուստի և 'ի Կատակերդակ տեսարանս անուն կարդային Ասպասիայ՝ է զի Նոր ոճ Ոմֆոռէ, է զի՝ Դէյանէ-

ըէ, և է զի՝ Հէրա։ Իսկ Կրատինոս ինքնին յայտնապէս կոչէ զնա բոզ՝ այսպէս. «Ծնանի ասէ՝ զՀերա զԱսպասիա՝ զկաթոտն զայն բոզ շանագէմ»։ Այլ Թերևս և այլ պոռնկորդի 'ի նմանէ ծնեալ ի՞ցէ Պերիկղէս. որ աղագաւ Եւպողէս 'ի Դեմոսեան քերթուածին տայ Պերիկղեայ հարցանել այսպէս. «Իսկ այն իմ աղջկորդի կեցցէ՞ տակաւին». և տայ պատասխանի Պիւրով նիդէս. «Նա և 'ի վաղուց հետէ արդեօք այր եղեալ էր, եԹէ չէր նա զանգիտեալ 'ի կրից պոռնիկ մօրն»։ Եւ պատմեն ևս՝ եԹէ այնչափ ի՞մն ականաւոր և զհամբաւի հարաւ սա այս Ասպասիա. որպէս զի և Կիւրոս ինքնին՝ որ կռուեցաւ ընդ արքային գրաւեալ զտէրութիւնն Պարսից, Ասպասիա անուն կարդայր հարճին՝ զոր առաւէլն սիրէր. և անուն էր յառաջն Միղտէ՝ փոկէացի աղգաւ դուստր Երմոտիմոսի. իսկ իբրև Կիւրոս անկաւ 'ի մարտին, ածաւ Միղտէ առ արքայ, և յառաջադէմ էր առ նմա։ Արդ որ ինչ միանգամ աստանօր յարձանագրութեանս ինձ 'ի միտս եկն, արդեօք տմարդութիւն էր՝ եԹէ երբէք ընդ լռութեամբ անցանէի։

Այլ յաղագս մարտի պատերազմին ընդդէմ Սամոսացւոց՝ մեծապէս մեղադիր լինին Պերիկղեայ, զի 'ի Թախանձանաց անտի Ասպասիայ 'ի շնորհս Միղեսացւոցն եկն 'ի նոյն։ Քանզի այս երկու քաղաքք մարտ եդեալ կռուէին ընդ միմեանս վասն Պրիենեայ. իբրև յաղԹական էին Սամոսա-

ցեք՝ հրաման տային նոցա Ա.թենացիք դա-
դարել 'ի մարտէն և 'ի նոսա առնել ապաս-
տան. իբրև ոչինչ անսացին Սամոսացիք, և
Պերիկղէս խաղաց 'ի վերայ. անդ զաւագ-
պետութիւնն նոցա լուծանէր 'ի Սամոս,
և 'ի պատանդի առեալ արս յիսուն 'ի
գլխաւորաց և մանկունս նոյնչափ, արձա-
կեաց զնոսա 'ի Լեմնոս՝ թէպէտ և այր այր
'ի պատանդիցն՝ որպէս ասեն՝ յօժարեալ
էր տալ իւրաքանչիւր տաղանդ մի 'ի փրկան.
և շատ ևս այլք խոստացեալ էին
նմա՝ որք ոչն կամէին ռամկապետութիւն
'ի քաղաքի. առ այս դարձեալ և Պիսսու-
թնէս այր Պարսիկ բարեկամ Սամոսաց-
ւոցն՝ առաքեաց առ նա ոսկիս բիւր և ա-
ղերսէր վասն քաղաքին։ Բայց Պերիկղէս
պարգևաց ինչ յայնժամ երեսս ոչ արար,
և գնացեալ ընդ Սամոսացիս ըստ խորհրդ-
ոց կամաց իւրոց, և կարգեալ անդանօր
ընկերհաշտութիւն, նաւեաց դարձաւ յԱ-
թէնս։ Իբրև այս եղև, անդէն Սամոսացիք
լծընկէցք յապստամբութիւն դարձան.
քանզի Պիսսութնէս գողացեալ գաղտ 'ի
Պերիկղեայ զպատանդսն՝ դարձոյց առ Սա-
մոսացիս, և ապա նոքա ամենայն կաղմու-
թեամբ 'ի կռիւ պատրաստեցան։

Հապա անդրէն միւսանգամ ծովագնաց
լինէր խաղայր 'ի վերայ նոցա Պերիկղէս.
նոքա յայնժամ երբէք ոչ տեղի ինչ էտուն,
և ոչ զահի ինչ հարան. արձանացան կա-
ցին վառեալք՝ կռուել ընդ նմա և տիրա-
նալ ծովուն։ Իբրև նաւամարտութիւն սաս-

տիկ գրգռեցաւ 'ի նոսա մօտ 'ի Տրադիաս կղզի, քաջաբար զյաղթութիւնն տանէր Պերիկղէս. և նաւուք քառասուն և չորիւք էհար խորտակեաց զեօթանասունսն զՍամոսացւոց՝ յորոց քսանքն էին զօրականին։ Ապա զհետ մտեալ՝ տիրեաց և նաւահանգըստին նոցա, և եկեալ պաշարեաց զքաղաքն նոցա. նոքա և 'ի քաղաքէն իւրեանց արտաքս ելեալ քաջութեամբ՝ ժամ ընդ ժամ 'ի կռիւ կաքաւէին ընդ Պերիկղեայ 'ի ներքոյ պարսպացն։ Իսկ յետ այսորիկ իբրև բազում այլ նաւք հասանէին անդր յԱթենայ, և ամենայն ուստեք 'ի նեղն լծեալ փակեցան Սամոսացիք, առեալ յայնժամ Պերիկղէս ընդ իւր Եռաթիս վաթսուն՝ խաղայր 'ի խորս անդր 'ի բացուստ զդէմ ունել՝ որպէս բազումք ասեն՝ նաւացն Փիւնիկեցւոց որ գիմեալ գային 'ի Թիկուանս Սամոսացւոցն. կամ թէ՝ ըստ որում Ստեսիմբրոտոս ասէ՝ գիմել խաղալ 'ի վերայ Կիպրոսի, որ թուի ոչինչ հաւանելի։ Այլ զիարդ և իցէ նորա խորհուրդ մտացն, քաջ իսկ սխալեաց Պերիկղէս. քանզի անդէն 'ի մեկնել նորա, Մեղիսոս որդի Իթագենեայ այր իմաստասէր՝ զօրավար յայնժամ 'ի Սամոս, յընչաց քերեալ զսակաւութիւն նաւուց Աթենացւոցն և զանհմուտ զզօրավարսն՝ որ կացեալ ճնացեալ էին անդէն, ածէր հաւանեցուցանէր զՍամոսացիսն խուռն հորդսն 'ի վերայ տալ նոցա։ Իբրև մարսն խառնեցաւ, յաղթեալ էին Սամոսացիք, և զբաղում

յԱԹԵՆացւոցն 'ի գերութիւն վարեալ և շատ 'ի նաւացն խորտակեալ՝ տիրացան 'ի վերայ ծովուն, և ժողովեցին ամբարս վասն մարմնոյն՝ զոր ոչն ունէին յառաջագոյն։ Այլ Արիստոտէլ պատմէ՝ եթէ և Պերիկղէս ինքնին յառաջագոյն 'ի պարտութիւն մատնեալ էր 'ի Մեղիսոսէ 'ի նաւամարտութեանն։ Իսկ ապա Սամոսացիք փոխարինեալ զնշանակութիւնն, յառակ գերեալն ԱԹԵՆացւոց՝ առեալ Բ-ս խարանեցին 'ի Ճակատս նոցա. քանզի և ԱԹԵՆացւոցն խարանեալ իսկ էր 'ի Ճակատ Սամոսացւոցն՝ Սամէնա։ Եւ է այս Սամէնա ազգ նաւու զինչագոյն յառաջակողմին, գոգաւոր մեծ և լայնորովայն՝ քաջադէպ 'ի խորս ծովուն և արագընթաց. և անուն զայս կարդացին նմա, զի առաջին 'ի Սամոս տեսին զնա գործեալ 'ի Պողիկրատեայ բռնաւորէ։ Եւ ասեն եթէ զխարանդ զայդ ակնարկէ Արիստոփանէս, այսպէս. Սամոսացւոց ծողովուրդ՝ բաղմագէպ է։

Իսկ անդուստ Պերիկղէս լուր առեալ աղէտից զօրուն, դիմեաց վաղվաղակի 'ի Թիկունս. և 'ի պարտութիւն մատնեալ զՄեղիսոս 'ի Ճակատամարտի և 'ի փախուստ դարձուցեալ զՍամոսացիս՝ պաշարեալ փակեաց զնոսա 'ի պատուարս իւրեանց. խնդրէր մանաւանդ՝ քան 'ի վերս և 'ի վտանգս քաղաքացեացն՝ մեծապէս ծախու և բազմաժամանակեայ պաշարմամբ տիրել քաղաքին։ Այլ իբրև տաղտկացան նոքա դեգերել անդէն, և բորբոքեալք 'ի

կռիւ՝ գժուարէին ընդ իրան, առեալ 'ի գունդս ութ բաժանեաց զամենայն զբաղմութիւնն վիճակաւ։ Անդ որոց միանգամ ելանէր վիճակաւ Բակլա սպիտակ, զտեղի կալեալ նոքա պարապէին 'ի խրախուն՝ մինչդեռ այլք զմարտն մղէին։ Եւ յայսմանէ ապա՝ որպէս ասեն՝ ոքք 'ի գրգանս անցուցանեն զօրն, անուն կարդալ այնմ՝ Օր «ԿԻՔՈՍ»՝ 'ի սպիտակ բակլայէն։ Բայց Եփորոս պատմէ՝ եթէ 'ի մարտին յայնմիկ 'ի գործ վարեաց Պերիկղէս և մենքեենայս իմն որոց ընդ նորութիւնն և Պերիկղէս ինքնին հիացեալ էր. և էր նոցա ճարտարապետ Արտեմոն մենքեենայագործ. և քանզի 'ի պատճառս կաղութեան առն բարձեալ բերէին զնա 'ի վերայ ութոռակի 'ի պէտս գործոցն, անուն կարդացին նմա ՓԷՐԻՓՕՐԻՏՈՍ, այն է՝ Պարայածեալ։ Այլ յանդիմանէ զայս Հերակղիդէս Պոնտացի, քանզի 'ի քերթուածի ուրեք Անակրէոնին գտանէ նա անուն Արտեմոնի ՓԷՐԻՓՕՐԻԴԵԱՅ՝ բազում դարուք յառաջ քան զմարտս պատերազմին Սամոսի, և որ անդանօր նա հատակութիւնք։ Առ այս դարձեալ և ասէ, եթէ էր սա այս Արտեմոն այր փափկակեաց և գիրգ և անարի վատասիրտ. և կայր նա դադարեալ 'ի տան, ուր երկուք ոմանք 'ի ծառայիցն առեալ վահան պղնձի հովանացեալ ունէին 'ի վերայ գլխոյն, զի մի ինչ թերևս 'ի բարձանց հոսեալ անկցի 'ի նա. և թէ երբէք հարկաւորէր ելանել նա արտաքս, առկախեալ շալակաւ քեր-

րեալ առ երկրաւ՝ այնպէս բարձեալ շրջե-
ցուցանէին զնա, յորմէ և անուն կալաւ նա
Փէրիքօ՛ռէտօս։

Բայց յամենայն ինն երորդի յանհնարս
մոռեալ Սամոսացիք՝ անձնատուր լինէին.
յայնժամ Պերիկլէս առեալ հիմն 'ի վեր
քանդեաց զպարիսպս նոցա. առ եբարձ
զնաւսն, և դատակնիք 'ի վերայ կապեաց
տուգանս սաստիկ դրամոց. նոքա կէս մի
հատուցին 'ի ժամուն, և զկէսն ուխտ եդին
ընուլ 'ի ժամանակակէտն, և ետուն նմա
պատանդս։ Սակայն Դուրիս Սամոսացի
շատ ինչ եղերերգականս բարդէ 'ի պատ-
մութեանն, բողոք բարձեալ զՊերիկլէսայ
և զԱթենացւոց՝ իբրև զանագորունից ո-
մանց. զորմէ ոչ Թուկիդիդէս և ոչ Եփո-
րոս և ոչ դարձեալ Արիստոտէլ յիշատակ
երբէք չարարին. այլ թուի թէ Դուրիս
ոչինչ ճշմարտախօսէ։ Քանզի պատմէ՝ ե-
թէ իբրև 'ի հրապարակ անդր Միղեսացւոց
ած Պերիկլէս զզօրավարս եռաթիոցն և
զնաւամարտիկսն Սամոսացւոց, և պրկեաց
գառացոյց զնոսա ընդ ատաղձս տախտա-
կաց աւուրս տասն, մինչդեռ նոքա անդ
այնպէս յոգւոց պարզել ապաստան եղեն,
եւ հրաման՝ զի գաւազանեալ զնոսա ընդ
կառափունսն՝ այնպէս սպանցեն, և զդիա-
կունսն քարշեալ 'ի բաց ձգեսցեն անթաղ։
Այլ եթէ Դուրիս՝ թէպէտ և ոչ 'ի կրից
անձին ձգեալ ինչ՝ բնաւորեցաւ 'ի պատ-
մութեանն ելանել ըստ ճշմարտութիւնն,
քաջ իսկ հաւանեալ եմ՝ եթէ ատանօր

կամեցաւ նա աձեցուցանել զաղէտս զիւ-
րոյ աշխարհին՝ առ 'ի բանաստեղծութեամբ
աղաղակել զԱթենացիսն ։

Յետ հինգեայատակ առնելոյն զՍամոս,
դարձաւ Պերիկլէս յԱթէնս. և անդ դիւ-
հանս գեղեցիկս առնէր վասն անկելոցն 'ի
մարսին, և դամբանական էր՝ որպէս և
ցայսօր սովորութիւն է՝ կարդայր 'ի վերայ
անկելոցն նոցա, որ աղագաւ և սքանչացաւ
նա ։ Իսկ իբրև 'ի բեմէն իջանէր Պերիկլէս,
անդանօր կանայք առհասարակ բազում
հիւրամեծարութեամբ ժողովէին զնա՝ կա-
լեալ զաջոյ նորա, և առեալ պսակս պսակս
բոլորէին 'ի գլուխս նորա և վարսակալս՝ ի-
րու յաղթանակաբեր ախոյենի ։ Իսկ յայն-
ժամ Եղպինիկէ մօտ եղեալ առ նա՝ ասէր.
"Աքանչելիք են այդոքիկ՝ ով Պերիկլէ՝ և
պսակաց արժանիք, որ մեզ բազումս և ա-
ռաքինիս և քաջս 'ի կորուստ մատնեցեր
քաղաքացիս. ոչ ընդ Փիւնիկեցւոց 'ի մարտ
մատուցեալ և ոչ ընդ Մարաց, որպէս իմ
եղբայր Հարազատ Կիմոնն, այլ զմեր նիզա-
կակիցն և զաղգակից հինն 'ի վեր տապալե-
ցեր քաղաք" ։ Իբրև զայս ասաց Եղպինիկէ,
պատմեն՝ եթէ ժպտեալ Պերիկլէս՝ ասաց
նմա հեզաբար զԱրքիղոքոսինն զայն, "Ո՛չ
արդեօք քեզ՝ պառաւ գոլով քո՝ 'ի դէպ էր
օժանիլ խղովք" ։ Բայց յետ վանելոյն ըզ-
Սամոսացիսն, 'ի վեր վաղեալ Պերիկլէս
և սքանչելի զանձն համարէր՝ որպէս ասէ
Յոնն, իբրու այն որ ընդ ամիսս լինն նկուն
արար զաւադան և զզօրաւորսն Յոնիացւոց.

ուր Ագամեմնոն ամն տասն ծախէր 'ի նը-
սաձել զքաղաք մի բարբարոսաց։ Եւ ար-
դեօք ոչ անկրաւ ինչ էին պարծանք Պե-
րիկղէայ. քանզի էլք մարտին Սամոսա-
ցւոց անյայտութեամբ լի էր և վտանգաւոր,
նա զի՝ և ըստ Թուկիդիդէայ բանին՝ վայ-
րիկ մի ևս Սամոսացւոց քաղաքն զծովուն
տէրութիւն հանէր 'ի ձեռաց Աթենացւոց։

Իսկ յետ այսորիկ երբեմն մարտ պատե-
րազմին յուզէր Պէղոպոննիսեան, հաճեաց
Պերիկղէս զմիտս ժողովրդեան առաքել 'ի
Թիկունս Կերկիւրացւոցն՝ ընդ որոց մարտ
եղեալ կռուէին Կորնթացիք, և յինքեանս
յանգուցանել զկղզին զայն հզօր յոյժ 'ի
նաւականան. նա զի և մօտալուտ առ դուրս
կայր նոցա մարտն Պէղոպոննիսեան։ Իբրև
զքուէայն արկին ժողովուրդք տալ ձեռն
օգնականութեան, յայնժամ արձակէր Պե-
րիկղէս անդր զԼակեդեմոնիոս զԿիմոնի որ-
դին տասն միայն նաւուք 'ի թշնամանս.
քանզի զարմին Կիմոնի մեծապէս մտերմու-
թեամբ էր ընդ Լակեդեմոնացիս։ Արդ
նաւս նուազունս տուեալ 'ի նորա ձեռս
արձակէր յակամայս նորա, զի առաւել
խէթ զԼակոնասիրութեանն կալցեն վասն
Լակեդեմոնիոսի, եթէ երբէք ինչ մի 'ի
մեծաց նահատակութեանց և 'ի հոյակա-
պից ոչ առաքինասցի նա 'ի նոյն արշա-
ւանսն. քանզի և ցանդ գուն գործէր Պե-
րիկղէս խափանել զբարգաւաճել որդւոցն
Կիմոնի, իբրու այն որ չէին հարազատք՝ և
ոչ անուամբք չափ, այլ խորթք և օտարք.

քանզի մին կոչէր Լակեդեմոնիոս, և միւսն Թեսսաղոս, և միւս այլ՝ Եղէոս. և համբաւ հարեալ էր առհասարակ՝ որդիս լինել նոցա կնոջ ուրումն Արկադացւոյ։ Այլ ի-բազդաց եղեալ Պերիկլէս՝ զի ունչս առ-նէին նմա վասն տասանց եռաթիոցն. և ըստ սակաւաձեռն օգնականութեանն՝ զոր ետ կարօտելոցն՝ մեծապէս յուզեցաւ զնը-մանէ ամբաստանութիւն թշնամեացն նո-ցա, առեալ անդրէն արձակէր 'ի Կերկիւ-րոս նաւս բազմադոյն ևս քան զառաջինսն. և հասին նոքա անդր յետ մղելոյ մարտի պատերազմին։ Ապա 'ի սրտմտութիւն բար-կութեան բրդեալ Կորնթացւոցն և ամ-բաստան զԱթենացւոցն եղեալ 'ի Լակե-դեմոն, 'ի նոյն յաւելան և Մեգարացիք գանգատ կալեալ զԱթենացւոցն, զի ար-գելուին նոցա միջամուխ լինել 'ի վաճառս իւրեանց, և առկայանալ 'ի նաւահան-գիստս իւրեանց, և 'ի բաց ևս մերժէին ըզ-նոսա անտի ընդդէմ հասարակ իրաւանց և երդմնակուռ դաշանցն Հելլենացւոց։ Առ այս և Եգինացիք չարչարեալք և հարստա-հարեալք յԱթենացւոցն, բոլոր բարձին և նոքա 'ի ծածուկ առ Լակեդեմոնացիսն. քանզի ոչինչ համարձակէին յայտնապէս ամբաստան լինել զնոցանէն։ Զայսու ժա-մանակաւ և քաղաքն Պոտիդիա դաղթա-կան Կորնթացւոց ընդ ձեռամբ Աթենա-ցւոց՝ ընդվզեալ պաշարեցաւ 'ի նոցանէ. և սոքա ևս մեծապէս փութացուցանէին զմարտ պատերազմին։

ԱՅԼ յայսր ամենայնի վերայ՝ Թէպէտ և արձակեցան դեսպանք ՅԱԹԷՆս, և Ար-քիդամոս արքայ Լակեդեմոնացւոց դուն դործէր բազում մասամբք լուծանել զամ-բաստանութիւնն և ամոքէր զնիզակակիցսն, Թուի Թէ և երբէք ոչ դրդռէր մարտ ընդ Աթենացւոցն, եԹէ յետս նահանջեալ էր նոցա զվՃիռն որ ընդդէմ Մեգարացւոց և'ի հաշտութիւն բերեալ ընդ նոսա։ Այլ քանզի յաւէտ ինն Պերիկլէս ընդդէմ դար-ձաւ այնմ, և'ի նոյն յուզեաց զամբոխն, և պնդեալ կայր ընդդէմ Մեգարացւոցն, ուստի և Պերիկլէս միայնակ համարեցաւ պատՃառք մարտին այնորիկ։ Իբրև հասին դեսպանք 'ի Լակեդեմոնիոյ ՅԱԹԷՆս, պատմեն՝ եԹէ յորժամ Պերիկլէս օրէնս 'ի դէմս եբեր նոցա՝ որ արգելոյր բառնալ 'ի միջոյ զսահմանակն արձանագրութեան նո-րուն վՃռոյ, անդ Պողիւարկէս մի 'ի դես-պանացն, ասէր առ Պերիկլէս, "Եւ դու ինքնին մի երբէք բարձցես 'ի միջոյ, այլ ջրջեսցես 'ի նեղքս զսահմանակդ. քանզի չեք օրէնք 'ի միջի՝ որ արգելուցու քեզ զայդ"։ Այս բանք՝ Թէպէտ և հեշտ և բաղձալի, ոչինչ այնպէս շարժեցին զՊերիկլէս 'ի խոր-հրդոց անտի իւրոց. ուստի և Թուի Թէ ոխերիմ ուրեմն էր նա ընդ Մեգարացիս։ Ապա աշխարհաւ և յայտնի փուրշիշ յա-րուցեալ 'ի վերայ նոցա, իբրու այն՝ որ ա-կօսաբեկ արարին նոքա զնուիրական գե-տինն, արձանագրեաց վՃիռ՝ արձակել առ Մեգարացիս Քարոզ, և զնոյն դարձեալ

առ Լակեդեմոնացիս ամբաստան զՄեգա-
բացւոց։ Եւ է այս վճիռ նորուն իսկ Պե-
րիկղեայ դրեալ բարեհամբոյր և մարդասէր
իրաւաբանութեամբ։ Բայց իբրև արձա-
կեալն Քարոզ Անթեմոկրիտոս անուն մե-
ռանէր, և թուէր եթէ 'ի գաւէլոյ անտի
Մեգարացւոցն, ապա Քարինոս արձանա-
գրէր այլ վճիռ ընդդէմ նոցա՝ եթէ ան-
պայման է այնուհետև թշնամութիւնն և
անողոքելի. և զի՝ որ միանգամ 'ի Մեգա-
բացւոց անտի հասցէ յԱտտիկէ, անդէն
մահու մեռանիցի. և զի՝ և զօրավարք 'ի
կռել անդ զհայրենի զերդումն՝ երդնու-
ցուն ևս երթալ երկիցս 'ի տարւոջն ասպա-
տակել զՄեգարացիս. և զի՝ և Անթեմո-
կրիտոս առցէ թաղումն մօտ 'ի դրունսն
Թրիասեան, և կոչի այժմ տեղին Դի-
պիւղոս։

Բայց Մեգարացիք 'ի չքմեղս եղեալ
վասն վնասուն սպանութեանն Անթեմո-
կրիտեայ, միանգամայն զամենայն զվնասն
ազգին 'ի վերայ Աստասիայ և Պերիկղեայ,
առ այս և 'ի նեղքս ընծայեցին զհռչակե-
լին զայն և զհամբաւեալ տողն քերթուա-
ծոյն Ակարնեան 6, "Իսկ զպոռնիկն զՍի-
մեթա գնացեալ 'ի Մեգարա պատանիք
գինեհարեալք գողանան։ Ապա ընդդէմ
և Մեգարացիք ցաւով սատիկ ըմբռնեալք՝
երթան գողանան յԱսպասիոյ պոռնիկս
երկուս"։ Եւ այսպէս ոչ հեշտին ինչ է ի-
մանալ, եթէ յինչ պատճառաց արդեօք
դրդռեցաւ պատերազմդ. սակայն և առ-

հասարակ ասեն՝ եթէ ինքնին Պերիկղէս է-
ղև պատճառք՝ զի մի յեռս նահանջեսցեն
զվճիռն զայն։ Իսկ կէսք ասեն՝ եթէ զդէմ
եկաց այդմ Պերիկղէս՝ քաջախորհուրդ մե-
ծանձնութեամբ լուսադունին զհետ կրթե-
լով. քանզի համարէր՝ եթէ խնդիր հրա-
մանին այնորիկ Լակեդեմոնացւոց առ 'ի
փորձ ինչ լցէ. զի թէ երբէք տեղի տացեն
Աթենացիք, զտկարութիւն անձանց խոս-
տովանեսցին։ Եւ կէսք դարձեալ ասեն՝ է-
թէ յանձնապաստան 'ի վէգ եկեալ այն-
պէս արհամարհեաց Պերիկղէս զԼակեդե-
մոնացւովք։ Այլ սակայն որ առաւել դրժ-
պատեհ պատճառք մարսին այնորիկ՝ որ-
պէս վկայեն բազմագոյնք՝ այսպիսի ինչ էր։

Փիդիաս Ճարտար յանձին կալեալ էր
գործել զդրօշեալն Աթենասայ, որպէս
կանխեցաք ասացաք. և քանզի մեծապէս
'ի շնորհս էր նա Պերիկղեայ, վասն այնո-
րիկ և խեռային ընդ նա, և 'ի թշնամութիւն
ևս դարձան ընդ նմա։ Արդ՝ թշնամիք նո-
րա փորձ կամեցեալ փորձել 'ի նմա՝ զի-
արդ խուժանն ինքնին հակամիտեալ լցէ
'ի Պերիկղէս, և ճշգրիտ 'ի վերայ կալ մտաց
ամբոխին, առեալ հրապուրեցին զՄենոն
զգործակիցն Փիդիայ գնալ 'ի հրապարակ
անդր և խնդրել յամբոխէն՝ յապահովի ամ-
բաստան զՓիդիասայ լինել։ Իբրև հա-
ճեալ հաւանեցան ժողովուրդք ընդ այրն,
և յատենի քննեցին զՓիւդիաս՝ ոչինչ կա-
րացին ըմբռնել զնա 'ի վնաս գողութեանն.
քանզի նա անդատին զամենայն ոսկին 'ի

գործ անդր վարեալ, ըստ նախագէտ խոր-
հրդոյն Պերիկղէայ այնպէս իմն ագու-
ցեալ էր 'ի դրօշեալն, որպէս զի և հեշմն
բառնալ զամենայն և ցուցանել զկշիռն,
ըստ որում և յայնժամ հրաման տայր էա-
րախօսացն Պերիկղէս առնել զայն։ Յայսր
ամենայնի վերայ՝ շուք համբաւոյ հրաշա-
կերտութեանցն Փիւդիայ՝ ընդ նախանձուն
կրեալ առեալ գրաւեաց զայրն. և առա-
էել ևս դատափետ առնէին զնա, զի 'ի մար-
տին Ամազոնաց քանդակեալ գեղեցիկ յաս-
պարի դրօշելոյն, և զանձինն ևս կերպարան
'ի նեղքս եբեր Փիւդիաս՝ իբրև զծերունւոյ
առն կնտակի՝ վէմ կալեալ երկոքումբք
ձեռօքն. և զի՝ և զՊերիկղէայ դէմն քան-
դակեաց չքնաղագեղ, այն ինչ 'ի մարտ
մատուցեալ էր նա ընդ Ամազոնին. և ըզ-
տիպ բազկին Պերիկղէայ յամբառնալ ըզ-
տէգ նիզակին այնպէս ճարտարարուեստ
կենդանագրեալ՝ որպէս զի և ձգել զերե-
սօքն, իբրու կամեցեալ Փիւդիաս ծածկել
զնմանութիւնն՝ յերկաքանչիւր ևս կողմանց
երևելի։ Ապա 'ի բանտ արկեալ Փիւդիաս՝
անդանօր մեռանի հիւանդացեալ. կամ թէ
որպէս կէաք ասեն՝ դեղեալ 'ի թշնամեաց.
զի պատճառս ապա կալցեն ամբաստանու-
թեանն զՊերիկղէայ։ Իսկ յայնժամ ժողո-
վուրդն ըստ առաջարկութեանն Գղիւկո-
նեայ՝ ապահարկ առնէր զամբաստանն Մե-
նոն. առ այս և պատուիրեր զօրավարացն
խնամ ունել աներկեանութեան առնն։

Զայնու ժամանակաւ և Ասպասիա ինք-

նին ամբաստանեցաւ յառէնի իբրև ամբա-
րիշտ յԵրմիպոլոսէ կատակերգակ քերթո-
ղէ. առ այս՝ զի և զազատ կանայս որ Էլա-
նէին առ նա՝ ունէր առ իւր ըստ կամացն
Պերիկղէայ։ Իսկ և Դիոպիթէս վճիռ մի
գրեաց յայնժամ, եթէ պարտ է մատն և
գուշակ լինել զնոցանէն՝ որ միանգամ ոչ
համարեսցեն ինչ զաստուածակոլմն, կամ
թէ ճառս 'ի մէջ առցեն վասն երկնաւո-
րացն. որով գուն գործէր Դիոպիթէս կե-
ղակարծելի յարդարել զՊերիկղէս 'ի պատ-
ճառս Անաքսագորայ։ Իբրև ժողովուրդք
մոռադիւր ընկալան զամբաստանութիւնն,
եռուն և այլ ևս վճիռ՝ զոր գրեաց Դրա-
կոնդիդէս, զի զառաջեաւ Պրիւտանեայց 8
համարս ասացէ Պերիկղէս զդրամոցն՝ զոր
ծախեաց. և զի՝ դատաւորք ինքնին 'ի բե-
մէ անտի առեալ զքուեայս՝ 'ի քաղաքի
անդ արասցեն դատաստան։ Այլ Ադոն ե-
բարձ զայս 'ի վճռոյ անտի, և գրեաց ևս՝
զի դատաւորք թուով հազար և հինգ հա-
րիւր դատեսցեն զդատն. որ զինչ և կամեա-
ցի ոք կոչել զվնասն՝ եթէ գողութիւն և
կաշառ, և եթէ դարձեալ անկրաւութիւն։
Բայց յայնժամ յաջողեցաւ Պերիկղէս յան-
դորր հանել զԱսպասիա. քանզի՝ որպէս
ասէ Եպքինէս՝ 'ի ժամու դատաստանին նո-
րա շատ գերարտօսրալից եղեալ Պերիկղէս
աղերսեաց վասն նորա զդատաւորսն։ Այլ
վասն Անաքսագորայ զանգիտեալ՝ ետ նմա
մեկնիլ 'ի քաղաքէն և ինքնին յուղարկէր
զնա։ Այլ քանզի դժկամակք եղեն ընդ

նա ժողովուրդք 'ի պատճառս փիւդիայ՝ երկեաւ 'ի դատաստանէ անձինն, ուստի և զհանդերձեալ մարտ պատերազմին՝ որ ծուխ 'ի ներքոյ արձակէր՝ արծարծեալ բորբոքեաց. ակն կալեալ յուսայր՝ 'ի բաց յանձնէն քերել զամբաստանութիւնսն և նկուն առնել զկիրս նախանձուն, եթէ 'ի շահատակութիւնս յայն 'ի մեծամեծս և 'ի վտանգս՝ առ ինքն միայն դիմեալ ապաւինեսցի քաղաքն առ մեծի աւագութեանն և զօրութեանն։

Արդ պատճառք զայսոսիկ ասեն՝ որ աղագաւ ոչինչ թոյլ ետ Պերիկղէս Աթենացւոց տեղի տալ Լակեդեմոնացւոցն. այլ տակաւին անյայտ է Ճշմարիտն։ Սակայն Լակեդեմոնացիք խելամուտ եղեալ, զի թէ Պերիկղէս միայնակ նկուն լինի, Աթենացիք յամենայնի հեշտալուրք լինին, հրաման ետուն Աթենացւոցն քաւութիւն արբութեան 'ի նզովիցն, որում և ինքնին Պերիկղէս պարտաւոր էր ըստ մայրենի զարմին, որպէս ասէ Թուկիդիդէս 9։ Այլ ելք իրացն ընդ հակառակն պատահեաց ոստիացն. քանզի փոխանակ ընդ խեթին և ընդ բանսարկութեանն՝ մեծ ևս շուք պատուոյ կալաւ Պերիկղէս առ իւրսն՝ իբրու այն որ մեծապէս ատելի և ահաբեկ էր նա Լակեդեմոնացւոց։ Վասն որոյ և Պերիկղէս՝ մինչև Ալքիդամոս ընդ Պեղոպոննիսացւոց ապատակեալ յԱտիկէ, ասէր կանուխ առ Աթենացիս. զի թէ երբէք Ալքիդամոս յաղարտ վարեալ զայլոցն կալուածս

զիւրն անդրժելի թողեալ հիւրամեծարու-
թեամբ, կամ թէ առ 'ի պատճառս տալ
թշնամեացն ամբաստանութեան զնմանէ,
ինքն մտադիւրագոյնս ընծայեսցէ քաղաքին
ողջոյն զիւր գեղին և զդաստակերտսն։

Յետ այսորիկ խաղացին գնացին Լակե-
դեմոնացիք զօրու ծանու հանդերձ նիզա-
կակցօք ասպատակել յԱտտիկէ. և էր նո-
ցա զօրավար Աղքիդամոս արքայ. և յաւա-
րի առեալ զգաւառն՝ մխեցան 'ի նեբրս
մինչև յԱկարնա. անդ բանակեալ նստէին
ապասեալք Աթենացւոցն, զի սրտմտեալք
նահատակեսցին 'ի վերայ աշխարհին իւ-
րեանց և փառաց։ Սակայն դժնդակ էր
Պերիկղեայ ընդդէմ վեցից բիւրուց վա-
ռելոց Պելոպոննիսացւոց և Բիովտացւոց
(քանզի այսչափ էր բազմութիւնն՝ որ ա-
ռաջին արշաւեցին յԱտտիկէ), մարտ դնել
կռուել 'ի վերայ քաղաքին։ Ապա Պերիկ-
ղէս առեալ սանձէր զԱթենացիսն՝ որ ոչ-
ինչ հանդուրժեալք ասպատակին խնդրէին
զմարտ. դուն դործէր ամոքել զնոսա գե-
ղեցիկ, և ասէր այսպէս. Ծառք ոստա-
քանցք և յօտեալք՝ վերատին արագ բու-
սանին. ոչ նոյնպէս են մարդիկ 'ի մահ տա-
րածեալք, զորս ոչինչ հեշտին է փոխա-
նակել զնոսա։ Ուստի և ոչ կամեցաւ նա
յատեան խմբել զժողովուրդն, զանդի-
տեալ թերևս ընդդէմ խորհրդոց իւրոց
հարկաւորեսցի գործել ինչ. այլ զոր օրի-
նակ քաջ ղեկավար նաւու՝ այն ինչ հողմ
ուժգնակի անկեալ 'ի ծովՔ ինքն գեղեցկա-

պէս զամենայնն յարդարեալ և զզէնսն կաղ-
մեալ Ճգնի յարուեստս զեկավարութեանն,
ոչ արուեստացն երեսս ինչ առնէ և ոչ
պաղատանաց նաւաստիցն՝ որ մեծապէս
յահ և 'ի տագնապ ըմբռնեալք լցեն. սա-
պէս յայնժամ Պերիկղէս փակեալ ամրա-
պինդ զոստանն, և ընդ ամենայն կարգեալ
պարեկս և պահապանս յապահովի, վա-
րէր Ճոխաբար 'ի խորհրդեան, ոչ ձայնից
միտ եդեալ աղաղակին և քրթմնջանաց.
թէպէտ էին էին և 'ի բարեկամաց բազումք՝
որք աղաչաւորք մատչէին, և 'ի թշնամեաց
դարձեալ՝ որ սպառնալիս 'ի վերայ կապէ-
ին և չարախօս ևս կային. առ այս և շատք
յերգ 'ի քնար և յառակ առնուին զայրն,
իբրու որ անարի վատասիրտ 'ի զօրավա-
րութեանն՝ յառ և յապուր թշնամեացն
լքեալ թողեալ էին զամենայն։ Այլ և
Կղէոնն ինքնին զօրհանապազ թշնամանօք
յարձակեալ 'ի նա՝ խնդրէր հաճոյանալ
ռամկին, քանզի տեսանէր զսրտմտութիւն
բարկութեան զԱթենացւոցն. ըստ որում
և Երմիպպոս յայտ առնէր 'ի Վերջատանջս
իւր՝ այսպէս.

Դու Ակքայ քաղից Պարկաց,
Եւ որ Շահապք են վայրաց,
Ան ինչ դու երբէք չառնուս
'Ի բուռն ըզտէգ նիզակաց։
Այլ մարտից և մրրցանաց,
Մեզ վերբերես բան Ճարտար,
Եւ զոդին ըզՏեղետեայ 10

Յանձին բերես հիքաբար։
Եւ ապա թէ ակնարկես
Սուր սուսերի սասոիկ սայր,
Դու դողաս՝ թէպէտ խածեալ
'Ի կղէոմենէն այն հրաւառ։

Այլ ոչինչ յայսպիսեաց ասոի ոչ շարժեաց զՊերիկղէս. տանէր անարգանացն հեզաբար և անշշունչ, և ապա առեալ արձակէր 'ի Պելոպոննիսոս հանդէս մի Նաւաց հարիւրոց. ինքն չէմուտ անդր՝ այլ կայր մնայր առ տնին և առաջնորդէր քաղաքին, մինչև ապա 'ի վերջէ ելեալ 'ի բաց մեկնեցան Լակեդեմոնացիք։

Այլ զդառնութիւն զԱթենացւոցն յասպատակէ անսի՝ ամոքեալ Պերիկղէս, տայր բաշխէր նոցա դրամս և ժառանգութիւնս սահմանէր նոցա։ Քանզի վանեալ զամենայն Եգենացիսն՝ առեալ զկղզին նոցա բաժանէր յԱթենացիսն վիճակաւ։ Առ այս և սփոփանս մեծապէս 'ի նեղութս բերէր նոցա արկած աղէտից թշնամեացն. քանզի անդ նաւամարտիկքն հարիւր նաւաց 'ի Պելոպոննիսոս շատ ինչ 'ի գաւառէ անտի գիւղս և աւանս յաղարտ վարեալ քանդեցին. դարձեալ և ինքնին Պերիկղէս ընդ ցամաք խաղացեալ 'ի Մեգարա՝ յամայի անապատ կացուցանէր առհասարակ։ Եւ անշուշտ այս՝ եթէ Լակեդեմոնացիք չարիս բազում հասուցեալ Աթենացւոց և 'ի նոցանէն դարձեալ բազումս կրեալ 'ի ծովու, ոչինչ այնպէս յերկարադոյնս մղէին

զմարտն, նա և արագ նկուն լինէին՝ ըստ ո-
րում նախապատուամ էղև Պերիկղէս, է-
թէ երբէք աստուածակոչմնն չկայր ընդ-
դէմ խորհրդոյ մարդկան։ Քանզի նախ
քան զամենայն՝ սրածութիւն Ճարակեցաւ
'ի քաղաքին. և միանգամայն զառոյգս և
զկորովիս երիտասարդաց նորա յապակա-
նութիւն դարձուցանէր. և առհասարակ
յոգի և 'ի մարմին հարան այնուհետև Ա-
թենացիք, 'ի սրտմտութիւն բերեալք ընդ
Պերիկղեայ. որպէս որք ընդդէմ բժշկի
կամ հօր առ ցաւոցն մոլեգինք լուտանս
արձակեսցեն, այսպիսի ինչ էին նոքա՝ հրա-
պուրեալ 'ի թշնամեաց անտի նորա. հա-
մարեցան եթէ 'ի բաղմութենէ դուռ հիկ և
գիւղական մարդկանն՝ որ հորդան 'ի քա-
ղաքն ետուն՝ Ճարակեցաւ ախտն. առ այս՝
զի և յեղանակ ամարայնոյն խառնակոյս
ամբոխն 'ի բնակութիւնս անձուկս և 'ի
վրանահարութիւնս տապախարշս խռնեալ
ամփոփեցաւ. և փոխանակ ընդ սուրբ և
ընդ բացօթեայ կենացն՝ ստիպեցան նո-
քա կենաս վարել ընդասուն և անգործ։
Ուստի և զպատճառս ախտին 'ի Պերիկղէս
'ի վեր հանէին, որ վասն մարտին 'ի դաշ-
տէն ած եբեր զխուժանն զայն հորդան 'ի
Նեղոս 'ի պատուարան. ոչ 'ի գործ ինչ վա-
րեալ զնոսա, այլ իբրև զհօտս անդէոց փա-
կեալ զնոսա՝ 'ի չարաչար Ճարակումն ախ-
տին. առ այս և ոչ այլ ուրեք փոխադրեաց
զնոսա, և ոչ դարձեալ դիւր յախտէն 'ի
Նեղոս եբեր նոցա։

Ապա 'ի դէզ դարմանոյ որերոյն և 'ի տագնապ եւ երկիւղի թշնամեաց՝ հանդերձեաց յայնժամ Պերիկղէս նաւս հարիւր և յիսուն, և 'ի նոսա հետևակ բազում և այրուձի 'ի քաջաց և 'ի կորովեաց. և այնպէս կազմ և պատրաստ հրաման տայր ծովագնաց ուղղոյ՝ յոյս գէղեցիկ ազդեալ 'ի սիրտս քաղաքացեաց ահեղ պատրաստութեամբն, և արհաւիրս մեծամեծս 'ի սիրտս թշնամեացն: Իբրև այնպէս պատրաստեցան և լցին առհասարակ զնաւսն, և ինքնին Պերիկղէս եկ յԵռաթին իւր շքեղ վառեալ, դէպ եղև 'ի ժամուն քօղարկեալ արևուն, և խաւար առ հասարակ պատեաց կալաւ. և անդ ողջոյն մարդիկն զահի հարեալք դողային իբրև 'ի մեծաց նշանաց: Իսկ անդանօր զղեկավարն տեսեալ Պերիկղէս համբուն ահաբեկ և 'ի տագնապի, առեալ զքղամիդ իւր տարածէր 'ի հանդիպոյ աչաց նորա և քօղարկեալ հարցանէր զայրն, եթէ արդեօք ինքնին ահաբեկ ինչ ելցէ բանն, կամ թէ ճախողակի ինչ դիպաց նշանն ելցէ արդեօք. իբրև ասաց՝ եթէ ոչ. կրկնեաց Պերիկղէս. "Եւ ի՞նչ իւիք ապա տարբերեալ ելցէ այդ 'ի սմանէ. բայց զի քան զնմ քղամիդ մեծ ևս է դա՝ որ 'ի ժամուս մեզ ազդեաց զմեզ խաւարիդ": Այլ յաղագս այդոցիկ բանք'ի վարժարանս Ճառին խմաստասիրաց: Բայց յարշաւանին յայնմիկ՝ ըստ մեծապէս պատրաստութեն ոչինչ նահատակութի նահատակեցաւ Պերիկղէս. և անդ իբրև պատեալ պաշարէր

զնուիրականն Եպիտաւրոս և ակն ունէր արագ արագ ըմբռնել զնա, 'ի դէրև ելանէր 'ի յուսոյն վասն ախտին՝ որ ճարակէր ոչ 'ի նոսա միայն, այլ և առ հասարակ յապականութիւն կարգէր՝ զորս միանգամ մերձենային 'ի զօրականն։ Եւ քանզի մեծապէս սրտնեցան ընդ նա Աթենացիք, գուն գործէր ամոքել և քաջալերել. սակայն և կարաց ինչ ոչ շինչուցանել զտապ բարկութեանն կամ փոխել ինչ զնոսա 'ի խորհրդոց, մինչև արկեալք քուեայս և տիրացեալք կապտեցին 'ի նմանէ զզօրավարութիւնն, և տուգանօք ևս արծաթոյ տուգանեցին զնա. կէսք նուազեն զթիւն՝ իբրև հնգետասան տալանդաց, և կէսք գարձեալ առաւելուն՝ իբրև յինանից։ Եւ եկաց դատախազ Կղէոն յատենի՝ որպէս ասէ Իդոմենէւս. կամ թէ Սիմմիաս՝ որպէս ասէ Թէոփրաստոս. այլ Հերակղիտոս Պոնտացի գրէ՝ եթէ Լակրատիդէսն էր։

Արդ հասարակաց իբք արագ արագ այնուհետև հանդարտէին. քանզի իբրև ըզխայթոց ընդ հարուածոյն՝ եթող ելիք 'ի խուժանն Պերիկղէս զսրտմտութիւն բարկութեանն. սակայն առ ինքն իբք Պերիկղէայ հիգացեալ էր. քանզի ոչ սակաւք 'ի սրածութեանն տապաստ անկան յազգականաց անտի նորա. առ այս՝ և 'ի հարուստ ժամանակաց 'ի հերձուած և 'ի խռով ծփայր տուն նորա։ Քանզի Քսանթիպպոս երիցագոյն հարազատ զաւակաց նորա՝ վատնիչ գոյից անդատին 'ի բնութենէն՝ ունէր

և կին երիտասարդուհի զդուստր Խանդրոսի Եպիղիկեան՝ շուայլ և բազմահանդերձ. վասն որոյ և ոչինչ հանդուրժէր Քանթիպպոս տնտեսութեան հօրն, որ դուշնաքեայ տայր նմա ինչս և տակաւ: Ուստի և յանուն Պերիկղեայ առաքեաց էառ նա արծաթ 'ի բարեկամէն նորա, և իբրև խընդրեաց նա զդրամն 'ի Պերիկղեայ՝ ոչ հատոյց Պերիկղէս, այլ և 'ի դատաստան ևս ձգեաց զփոխատուն. ապա 'ի ցասումն բերեցեալ պատանին Քանթիպպոս և չարախօս կայր զհօրէն. մեծապէս ծիծաղեալ նշաւակէր զառ տնին դեգերանն Պերիկղեայ և զխօսակից քաղաքավարութիւնն ընդդասս իմաստակաց: Քանզի առակեալ պատմէր այսպէս Քանթիպպոս, եթէ յորժամ հնգամրցեանն 11 Եպիտիմիոս Փարսալիոս ըստ դիպաց հարեալ 'ի սայր նեռին սպանանէր երիվար մի, Պերիկղէս օր մի ողջոյն ծախէր 'ի հետախուզել ընդ Պրոտագորայ, եթէ արդեօք ուղղապէս խորհրդով զո՞ ոք պատճառ արժան իցէ ասել վնասուն. զնեռին արդեօք սա՞յր, եթէ զնեռաձիգն այր, կամ թէ զհանդիսադիրս մրցանացն: Առ այս դարձեալ՝ ասէ Սոսիմբրոտոս՝ եթէ սա այս Քանթիպպոս հռչակ էհար զբրպարտութեամբ, իբրու որ առնու իւր մըտանիցէ հայրն. և կաց գժտութեան պատանւոյն ընդ հօրն եկաց անհաշտ մինչև ցօր մահուն. քանզի և 'ի սրածութենէ անտի յայնժամ հարաւ Քանթիպպոս և մեռաւ: Զիրկ և 'ի քեռէն իւրմէ յայնժամ

մնայր Պերիկղէս, նաև յաղգականաց իւրոց և 'ի բարեկամաց բազմաց՝ որ մեծապէս նպաստք էին նմա յառաջնորդութիւն քաղաքին։ Այլ յայսր ամենայնի վերայ ոչինչ բեկաւ անկաւ Պերիկղէս, և ոչ աղէտք արկածից՝ մոռացն նորա և մեծութեան ոգւոյն ստնանեցին ինչ. այլև ոչ արտասուեաց, և ոչ դիահանս առնէր, և ոչ 'ի Թաղումն ուրուք 'ի կարևոր ազգականացն չոքաւ նա երբէք, մինչև 'ի մահ անդր Պարաղոսի՝ որ էր նորա մնացեալ նշխար 'ի հարազատ զաւակացն։ Քանզի յայնժամ նկուն այնուհետև գտաւ յաղէտից զաւակին. Թէպէտ և արտասնդէր ևս զանձն խբրու զառաջինն անսասան 'ի մեծանձնութեան իւրում, ոչ կարաց. այլ յորժամ զպսակն բոլորէր 'ի գլուխ որդւոյն՝ անկաւ բեկաւ յաղէկէզ գորովոյն 'ի տեսիլն, հեծեաց դառնապէս և յոգւոց հանէր և զգերարաւսարն բղխեաց յայնժամ յաչաց իւրոց, զոր երբէք չէր նորա արարեալ յամենայն 'ի կեանս իւր։

Այլ յետ այնորիկ փորձ փորձեալ քաղաքին զայլոց զօրավարաց և զառեղնաբանից, գտանէր և ոչ զոք զուգակշիռ Պերիկղեայ և հանգիստապասիւ, ապաստան 'ի ձեռս առնել զմեծ տէրութիւնն. ուստի և միւսանգամ ըղձանային Պերիկղեայ, և կոչէին ևս զնա 'ի բեմն և 'ի զօրավարութիւն բանակին. առ այս՝ և Աղկիպիադէս ինքնին և այլք ևս 'ի բարեկամացն եկեալ, հաւանեցուցանէին զնա ելանել արտաքս 'ի տանէն՝ ուր Թաղծեալ նստէր նա 'ի սուգ։

Իսկ Իբրև և Ժողովուրդն ինքնին զիրՔ 'ի
Նեղքս եբեր ընդ ապաշնորհ կիրսն առ Պե-
րիկղէս, միանգամ նա յանձին կալաւ ա-
ռաջնորդել քաղաքին. և կարգեալ 'ի ը-
րասվար՝ էտ անդէն լուծանել զօրէնսն զոր
նա ինքն արձանագրեալ իսկ էր վասն ան-
հարազատ զաւակաց. որպէս զի 'ի նուա-
զել խսպառ պայազատութեանն, մի պա-
կասեսցի անուն տան նորա և ՃՇտն նորա։
Իսկ օրէնքն՝ զոր եդ նա և Էլոյծ, այսպիսի
ինչ էր։ Իբրև 'ի հարուստ ժամանակաց ան-
տի բարգաւաճէր Պերիկղէս 'ի քաղաքակա-
նութեանն, և որպէս կանխեցաք ասացաք՝
էին իսկ նորա որդիք հարազատք, կարգեաց
եդ նա օրէնս՝ զի նոքա միայն իցեն Ա թենա-
ցիք, որք միանգամ ծնունդք իցեն յերկուց
Ա թենացւոց։ Իսկ ապա Իբրև արքայ Եգիպ-
տացւոց առաքէր 'ի պարգև Ա թենացւոց
գրիւս ցորենոյ բիւրս չորս՝ զի բաշխեսցեն
'ի քաղաքացիս անդր, ամբաստանութիւնք
ապա շատ յուզեցան ընդդէմ անհարազա-
տիցն 'ի պատճառս օրինացն այնոցիկ՝ որ
ցայն վայր ծածկեալք էին և անհոգա-
ցեալք. առ այս և բարուքք ևս շարժեցան
ընդդէմ շատից։ Ուստի և որ միանգամ
առակեցան յայնժամ՝ վաճառեցան ոգիք
Իբրև հինգ հազարք. իսկ բիւր մի և չորք
հազար և քառասունք մնացին քաղաքացիք
և համարեցան Ա թենացիք։ Եւ արդ՝ թէ-
պէտ և դժնդակ էր՝ եթէ օրէնք որ այնչափ
ինչ զօրացաւ յայնժամ ընդդէմ այնչափ
որերոյն, զնոյն դարձեալ լուծցէ՝ որ կար-

գեացն զնա. յայսր ամենայնի վերայ՝ առ անին արկածք Պերիկղեայ 'ի մեծապէս ախտակցութիւն շարժեցին զԱթենացիս, իբրու եթէ զպերճութեանն և զդողոզութեն պատուհաս այնուհետև լուծեալ ի՞նչ Պերիկղէս. և թուէր իմն այնպէս Աթենացւոցն՝ եթէ 'ի վրիժառու քաջաց անտի ոք սաստկապէս ընդհարեալ խոշտանգեաց զնա, և արժան այնուհետև ի՞նչ ափոփանս առնուլ նմա առ 'ի մարդկանէ. և այնպէս ապա շնորհեցին նմա գրել 'ի զարմն իւր զանհարազատ զիւր որդին, և զիւրականն ևս անուն տալ նմա: Եւ էր սա այս որդի Պերիկղեայ, որ 'ի դիմի հարեալ նաւամարտութեամբ ի հար զԱկեդեմոնացիսն մերձ յԱրգինուսեան կղզիսն. բայց ապա դատակնիք մահու ընդունէր յԱթենացւոց հանդերձ նիզակակից զօրավարաքն 12:

Այլ թուի թէ 'ի ժամանակին յայնմիկ և Պերիկղէս ինքնին հարաւ սրածութեամբն, թէպէտ և ոչինչ այնպէս սաստիկ և բուռն՝ իբրու այլքն. սակայն խօթութիւն տակաւ վարակեաց զնա, և այնպէս յերկարաձգեալ բազմադէմ ախտին՝ հիւծէր մաշէր մեղմով զմարմին նորա, և վատէր զիսորհուրդ մտացն նորա: Արդ թէոփրաստոս 'ի բարոյականն՝ 'ի պայքար մնեալ եթէ արդեաք ընդ բախտին փոփոխեացի՞ն և բարք. և թէ արդեաք բոյս բարուցն 'ի ծուփս ախտից մարմնոյն թողացի՞ն յառաքինութենէ, զայս ինչ անդանօր արձանագրեաց մեզ՝ եթէ Պերիկղէս 'ի խո-

թուլթեան իւրում, միում ումեք 'ի բարե-
կամացն՝ որ յայց էլ՝ առեալ ցուցանէր ըզ-
գրիչն, զոր կանայք ինքնին կախեալ էին
նորա զպարանոցէն, իբրու եթէ սաստիկ
ևս տանջել նմա 'ի խօթուլթենէն՝ յորժամ
'ի վերայ իւր բարձեալ բերէր զանմտու-
թեան զայն բժժանն։ Իսկ իբրև 'ի վերջինս
վտանգեալ կայր Պերիկղէս, շուրջ զնովաւ
եկեալ նստան աւագորեար Աթենացւոց
և բարեկամք. ճառ արկեալ խօսէին նոքա
ընդ միմեանս վասն առաքինութեանն Պե-
րիկղեայ և աւագութեանն, և համարէին
զքաջութիս նահատակութեանց և զյաղ-
թանակացն թիւ. քանզի թուով ինն կանգ-
նեաց նա վասն քաղաքին 'ի զօրավարու-
թեան և 'ի յաղթութեան իւրում։ Զայ-
սոսիկ բարբառէին նոքա առ միմեանս, իբ-
րու ոչինչ լսիցէ Պերիկղէս զդայազիրկ 'ի
գժար գոլով։ Այլ նա իմանայր քաջիկ զա-
մենայն զիսօսան և ընդ միջեալ զբանսն ասէր
նոցա, եթէ հիացեալ զարմանայ՝ զի գո-
վեն և յիշատակ առնեն նորայոցն՝ որ հա-
սարակք են և բաղդին, և զոր բազումք ևս
այլք 'ի զօրավարացն նահատակեցան. իսկ
զգեղեցիկն առաւել և զմեծապէս պար-
ծանսն ոչինչ յիշատակեն նոքա. "Իբրու
այն՝ զի (յաւել նա ասել) յԱթենացւոց
անտի և ոչ մի ոք յիմ պատճառս՝ 'ի թուխս
երթէք համակեցաւ"։

Եւ արդեօք մեծապէս պանչացաւ Պե-
րիկղէս ոչ միայն մարդասիրութեամբն և
հեզութեամբ ոգւոյն՝ զոր առաքինացաւ

նա բաղում անգամ, և 'ի սաստիկ ևս թըշ-
նամութիւնն յաւերժացաւ առ 'ի նոյն.
այլ և գեղեցիկ մտածութեամբն՝ զի յա-
ռաքինի նահատակութիւնն վեհագոյն հա-
մարեցաւ գործ՝ տեղի երբէք ոչ տալ 'ի մե-
ծի աւագութեանն՝ ոչ նախանձուն և ոչ
բարկութեանն. և զի՝ և առ իւր թշնա-
միս երբէք նա ոչ գտաւ ոխերիմ անհաշտ։
Վասն որոյ ինձ թուի, եթէ միայն վասն
հեզութեան ոգւոյն և քաղաքավարութե-
կենացն՝ զոր յայնչափ աւագութեանն սըր-
բութեամբ և անարատութեամբ վարեաց,
աննախանձաբար մտաք և 'ի ճահ զանունդ
զայդ նոր և չքնաղ կարդացին նմա՝ Ոգի-մ-
պի։։։։ Զոր օրինակ և զզարմ աստուածոցդ՝
որ անդատին 'ի բնէն պատճառք գոն բա-
րեաց և ոչ երբէք չարեաց, իբրև արդարև
արժանիս համարիմք՝ իշխանութիւն ունել
և զարքայութիւն զեկոց, այլ ոչ արդեաք
ըստ օրինակին՝ զոր քերթողքդ վկայասա-
նեն. այն որ խռովս և ամբոխս հարկանեն
'ի մեր միտս՝ անյարմարագիր իւրեանց կար-
ծեաքն. միանգամայն և նշաւակեալք ըմ-
բռնին նոքա 'ի քերթածս իւրեանց։ Քան-
զի անուանեալ կոչեն նոքա աթոռ և ան-
քոյթ կայան և անդողրդելի՝ զվայրն, զոր
ասեն տուն բնակութեան աստուածոցն.
իբրև 'ի հողմոց բռնութենէ երբէք ոչ ծփայ
վայրն, և ոչ դարձեալ յամբոցն գումարե-
ալ երբէք նսեմանայ, այլ եթերքդ անդա-
նոր անսար են. և զի՝ անդ զամենայն ժա-
մանակն առհասարակ անդուլ և անայլայ-

լակ լոյս փայլատակեալ ճաճանչէ սուրբ և անխառն, որ զի և կայան այդպիսի՝ քաջալայելուչ արդեաք ի՞նչ անմահական և երանելի նոցուն բնութեանն։ Բայց ապա յետ այսոցիկ նոյն քերթողք մեզ զնոսին զաստուածսն 'ի դէմս բերեն լցեալս ամենայն գժտութեամբք և կռգիւք և նախանձու և բարկութեամբ, և այլ ևս բազմադիմակ կրիւք, որ և ոչ մոռաւոր մարդկանդ երբէք 'ի ճահ բնաւորեցաւ։ Ա՛յլ այսոքիկ թերևս այլում՝ 'ի դէպ կարծեսցին մատենագրութեան։

Բայց առյապայ յիրաց անտի խելամուտ եղեն Ա՛թենացիք իմանալ ճշգրիտ զՊերիկղէս, և մեծապէս ըղձիւ փափաքել նմա։ Քանզի և ոչք միանգամ՝ առ կենդանութեամբ նորա ընդ ակամբ հայէին ընդ զօրութիւն աւագութեան նորա՝ իբրու այն որ ստուերածս ածիցէ նոցա, անդէն վաղվաղակի իբրև 'ի միջոց բարձաւ նա՝ և նոքա զայլոց ոմանց զհռետորաց զփորձն առին և զառաջնորդաց ժողովրդեանն, խոստովան եղեալ վկայէին եթէ չէր ոք 'ի մարդկանէ իբրու զՊերիկղէս՝ չափաւոր 'ի պերճութեան աւագութեանն, և պերճ և արգոյ 'ի հեզութեանն։ Եւ որ նախանձաբեկն առնէր մեծութիւն զօրութեան նորա՝ զոր միապետութիւն յառաջն կոչէին և բռնաւորութիւն, արագ արագ տեսին յայնժամ՝ իբրու որ պատուար անդրժելի էր նա փրկութեան քաղաքին։ Այնչափ իմն ապականութիւն և խուռն չարիք հորդան տը-

ուէալ յետ այնորիկ վարակեցին զքաղաքն, զորս ինքնին Պերիկղէս առ կենդանու-թեամբն հարեալ վատթարէր և արդելոյր սանձէր, զուցէ Ճոխաբար Ճարակեալք՝ անբուժելիք այնուհետև լինիցին։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Անուն ստեղծեալ ընդ կատակս՝ իբրու Գլուխ հաւաքիչ բազում գլխոց, 'ի նշանակել զմեծութիւն գլխոյն Պերիկղեայ. որպէս և 'ի ստորև այլ ոմն՝ իբրև մետասան անկողնոց բաւական՝ կատակէ զգլուխն զայն զմեծ։

2. Քանզի յն. Χειρων, նշանակէ՝ Ձաքրագոյն։ Դարձեալ՝ և անուն է մարդոյ։

3. Այսինքն՝ և 'ի հելլէնն զբան, և 'ի հաստատելն։

4. Այս է՝ զՑաճար Աթենասայ. և յայտ է՝ եթէ կոյս ասելով, զդիցուհին զայն իմանան Աթենացիք։

5. Այս իշխանութիւն՝ էր իրաւունք հարցանելոյ պատգամ 'ի դիցն Դեղփեայ՝ նախ քան զայլս ամենեսին, զոր Յոյնք կոչեն՝ Προμαντεία։

6. Են այս տողք Արիստոփանեայ Կատակերգակ քերթողի։

7. Իբրու եթէ գողացեալ ի՞ցէ Փիւդիաս յոսկւոյ անտի դրոշելոյն Աթենասայ։

8. Պրիապոնէայ, էր անուն ծերակուտի Աթենացւոց։

9. Եւ էին այս նզովք վասն յանցաւորութեանն առ Կիւղլո

մէն Մեդակղեայ որդւոյն Աղկմէոնի, որ
եղև առաջնորդ յանցաւորութեանն։

10. Ասեն զՏեղես զոմն՝ այր համբաւեալ
անարի վատասիրտ։

11. Հինգ աղդ էր մրցանաց առ Հելլէնս. Բռնամարտութիւն, Վազք, Ոստումն, Ձիգ բոլորակաց, և Գոտեկռուութիւն։

12. Էր ամբաստանութիւնն մահուչափ, զի անփոյթք եղեն 'ի թաղումն մեռելոցն. և դէպք եղեն բանիս՝ քսան և չորս ամաք յետ մահուն Պերիկղեայ։

ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ

ԱՅՍՊԻՍԻ ոք գոլով Պերիկղէս 'ի յիշատակաց արժանիսն՝ որպէս աւանդէցին մեզ, այսուհետև 'ի Փաբիոս առեալ դարձուցուք մեք զպատմութիւնս։ Ասեն՝ եթէ 'ի Յաւերժահարսանց մի ոմն, իսկ կէսք՝ եթէ 'ի գաւառացի կանանց անտի առ Տիբերիս գետոյն եկեալ խառնեալ ընդ Հերակլեայ՝ ծնեալ ելցէ զՓաբիոս, այն՝ որ բազմաթիւ և հռչակելի զարմին Փաբեանց նախածնող եկաց 'ի Հռոմ քաղաքի։ Իսկ կէսք պատմեն՝ եթէ 'ի զարմէ աստի սերեալքն՝ 'ի նախնումն անուանեալ կոչէին Ֆօպէի. քանզի նախնիք նոցա յորս էրէոց պարապեալք էին 'ի փոսս. քանզի այսպէս իսկ մինչև ցայսօր ժամանակի զփոսս Հռովմայեցիք կոչեն Ֆօսսէ. և զփորելն՝ կոչեն Ֆօպէոէ։ Իսկ յետ ժամանակաց կրկին տառից փոփոխմամբ անուանեալ կոչեցան Ֆաբէի։

Աբդ մի ոմն 'ի բազմաց անսի և 'ի մեծամեծ արանց 'ի սերնդոց սորա՝ զկնի Ռիլաոսի մեծի՝ որում անուն կարդային Հռովմայեցիք Մաքսիմոս այն է՝ Եռամեծ, էր չորրորդ այս Փաբիոս Մաքսիմոս, զորմէ առեալս եմք աւադիկ 'ի պատմել։ Զսա 'ի մարմնոյն նշանէն մակաձայնէին Վերրոս. քանզի գորտնուկ 1 (զոր նոքա կոչէն Վերրուս) ելեալ էր 'ի շուրթն նորա։ Բայց նորա և միւս անունն Օվիդիա՝ նշանակէ Ոչխարակ, վասն մեծապէս հեզութեան նորա և հանդարտութեանն՝ մինչդեռ տակաւին մանուկ էր։ Քանզի այնչափ անդորրացեալ էր նա 'ի հոգին և լուռ մնջիկ, և չափաւորութեամբ ևս պարապեալ 'ի տղայոց խաղն, և յուշիկ և տաժանեալ վարժէր 'ի վարժս, և հեշտալուր և հլու յոյժ էր առ ընկերսն, որպէս զի և ոչք արտաքինքն էին՝ կարծէին զՓաբիոս ապուշ և անարի վատասիրտ. և նուազունք խելամուտ էին՝ զի խորախորհուրդ մտաց ծնունդ էր մեծապէս հանդարտութիւն նորա. և նշմարէին ևս 'ի բոյս բարուց նորա զմեծանձնութիւն զաւիւծուն և զարիութիւն միանգամայն։

Այլ անդէն իբրև յարբունս հասանէր Փաբիոս՝ և մեր ևս յիրս քաղաքին, խելամուտ ինքնին առնէր և զամենեսեան առհասարակ՝ եթէ կարծեալն 'ի նմա անարի վատասրտութիւն էր գլխովին անվրդովութիւն սրտի. և մեծապէս զդուշաւորութիւնն՝ ողջմտութիւն խորհրդոց նորա. և անդոր-

բաւէտ խաղաղութիւնն՝ անսասանելի հաստատութիւն նորա յամենայնին։ Ապա այնուհետև զմտաւ ածեալ Փաբիոս զմեծութիւն տէրութեան քաղաքին, և զանդուլ զմարտսն, և ինքնին 'ի մրցմունս մարտից առեալ կրթէր զմարմինն՝ իբրու զէն տնկակից 'ի մեզ. առ այս՝ և 'ի Ճարտարաբանութիւն հրահանգէր զանձն՝ իբրու գործեաւ ումամբ համոզակեր յանդուցանել զխուժանն, և 'ի դէպ քաղաքավարութեան կենացն յարմարէր զնա։ Քանզի Ճարտարաբանութիւն Փաբիոսի անբաժ էր 'ի գեղաղարդ ենգուրից և 'ի ենոտիապատուաստ հրապարակագոյժ սեթևեթից. այլ ողջամիտ և լի և պատարուն պերճ իմաստաբանութեամբք, յորում և հանգունատիպ յոյժ զնա ասէն լինել Թուկիդիդեայ. քանզի և է իսկ՝ բան մի նորա Արձանական հրապարակիսս 'ի ներբող որդւոյն՝ որ մեռաւ յետ հիւպատոսութեանն։ Եւ ընտրեալ կարգեցաւ Փաբիոս հիւպատոս հրնդեցս անգամ. յառաջնումն յաղթանակեաց նա 'ի վերայ Լիգիւրացւոց, էհար զնոսա 'ի հարուածս մեծամեծս, և 'ի նեղն լծեալ փակեաց զնոսա 'ի ներքս անդ ՅԱԼպեանն. և ապա դադարեցին նոքա ասպատակել 'ի սահմանակցութիւնս Իտալիոյ։

Իսկ իբրև հորդան եւ խաղաց Ննիբաղ[2], և եկն եմուտ Յիտալիա, առաջին նշան յաղթութեան կանգնէր մօտ 'ի գետն Տրեբիա, և առեալ խաղացուցանէր զզօրն ընդ Տիւրրենիա յաւարի առնուլ զգաւառն, և

յարհաւիրս մեծամեծս արկանէր նա յայն-
ժամ զՀռոմ քաղաք։ Նա և նշանք տեսա-
նէին յայնժամ, կէս մի՝ որ սովորականք
իսկ էին Հռովմայեցւոց՝ երբու շանթք կայ-
ծականց. և կէս մի՝ օտարոտիք և անսո-
վորք. քանզի ասէին՝ եթէ վահանք և աս-
պարք ինքնին արիւնաշաղախք լինէին. և
թէ՝ մօտ յԱնտիոն գտան 'ի հունձս հասակ
արիւներանգք. և թէ՝ յօդոց անտի վէմք
կայծակնաբորբոք և հրաշէկ 'ի վայր անկա-
նէին. և թուէր ինն այնպէս՝ եթէ և 'ի վե-
րոյ Փաղերեանց պատառեալ ցեղան եր-
կինք, և ատտ անդ 'ի վայր օցտեալ ցանե-
ցան պնակք բազումք դրաւորք, և 'ի միում
անդ արձանագրեալ երևէր ըստ բառին այս-
պէս. Շարժէ ա-ոդէկ Արէս զզէնսն։ Այլ
ոչինչ յայսպիսեաց ատտի ահաբեկ եղև
Գայիոս Փլամինիոս հիւպատոս, այր սըր-
տեայ անդատին 'ի բնութենէն և պատուա-
սէր. առ այս՝ և պերճացեալ ևս էր նա 'ի
գեղեցիկ նահատակութեանցն՝ զոր նահա-
տակեցաւ նա յառաջագոյն արտաքոյ յու-
սոյ ակնկալութեանն. քանզի յակամայս
ծերակուտին և իւրոյ իշխանակցին՝ որ քար-
ընդոտն լինէր նմա, ինքն դիմագրաւ մարտ
եդեալ կռուեցաւ ընդ Գաղատացւոց և 'ի
պարտութիւն մատնեաց զնոսա։ Իսկ և Փա-
բիոս ինքնին 'ի հրեշից անտի ահաբեկ խու-
ժանին՝ ոչինչ խռովեցաւ, և յումպէտից
կարգի դնէր զնոսա։ Սակայն իրաղգած է-
ղեալ Փաբիոս՝ զի սակաւաթիւ են թշնա-
միք և անպաշարք, խրատ տայր Հռովմայե-

ցուց զտեղի ունել, և մի՛ 'ի մարտ կաքաւել ընդդէմ առն՝ որ զօրաւոր կացեալ ելցէ զօրականին փորձ և հմուտ 'ի բազում պատերազմունս. առ այս՝ և ձեռն օգնական նուիթեան առաքել նիզակակցացն, և այնպէս ապա զիւրեանց քաղաքն 'ի բռին ունելով, կալ մնալ զի ինքնին տակաւ ապառեալ վատնեսցի ոյժն Աննիբաղայ, իբրու բոց՝ որ 'ի նիւթս ճարակեսցի 'ի դուշնանաքեայս և 'ի փոքրոգիս։

Ա՛ՅԼ յայսր ամենայնի վերայ՝ ոչինչ կարոց նա ածել 'ի նոյն զՓլամինիոս. զի և հանդուրժէր իսկ ոչ նա՝ զկռիւ մարտին առնուլ ածել մինչև 'ի դրունս անդր Հռովմայ, և ապա 'ի քաղաքին մարտ եղեալ կռուել 'ի վերայ քաղաքին՝ որպէս անդ ուրեմն Կամիլլոս։ Հապա հրաման տայր հաղարապետացն արտաքս զզօրն խաղացուցանել, և ինքն յարուցեալ յերիվար աշտանակէր. իբրև անդ յեղակարծումն յոչինչ պատճառաց զարհուրեալ շրջեաւ երիվարն, և ինքն կործան 'ի վերայ գլխոյն անկանէր, ոչինչ այնպէս յետս կացեալ՝ ըստ առաջին խորհրդոյն անդրէն խաղայր գնայր 'ի գիմի հարկանել Աննիբաղայ։ Եկն և ճակատեցոյց զզօրն մօտ 'ի լիճ անդր Տիբրենեան, որ անուանեալ կոչի Թրասիմենիա։ Իբրև խաղմն խառնեցաւ, դէպ եղև ահագին ինն գետնաշարժի, որպէս զի և շէնք տապալեալ քանդեցան, և գետոց հոսանք շրջեալ փոխեցին զգնացս, և լերանց արտևանք դլորդեալք հոսեցին. սակայն և ոչ

ոք 'ի կռուին խմացաւ ինչ, Թէպէտ և այն-
պէս բուռն և ահագին էր շարժումն։ Իսկ
անդանօր Փլամինիոս նախձիրս բազում
գործեալ և նահատակութիւնս, անկանէր
'ի մարտին՝ և առ նովաւ դարձեալ քաջք և
առաքինիք 'ի զօրականէն։ Բայց որք միան-
գամ 'ի փախուստ խուճապեցան՝ հարան
սատակապէս. քանզի բիւր մի և հինգ հա-
զար յայնժամ տասպասս անկանէր 'ի Հռով-
մայեցւոց, և նոյնչափ դարձեալ 'ի գերու-
թիւն վարեցան։ Այլ Աննիբալ պատուա-
սիրեաց գիտհանս տալ Փլամինեայ և շուք
պատուոյ վասն առաքինի նահատակութե-
նորա. խնդրեաց յուզեաց, այլ 'ի բազմա-
կոյտ գիականցն ոչինչ կարաց գտանել զնա,
և ո՛չ ևս գիտացին՝ զիարդ անհետացաւ նա
'ի միջոյ։

Արդ յաղագս հարուածոյն որ առ Տրե-
բեաւ, ո՛չ զօրավարն 'ի գրին առ ծերա-
կոյսն՝ և ոչ գուժկանն ուղղապէս պատ-
մեալ, սուտ յօդեաց եթէ տակաւին ան-
վնաս և կեղակարծ է յաղթութիւնն. սա-
կայն երբեմն ճշգրիտ լուր էառ Պոմպոնիոս
զօրավար, անդէն 'ի մի վայր խմբեալ զժո-
ղովուրդն՝ յառաջ մատեաւ և անպատրուակ
և պարզախօս բարբառեցաւ մեկին, և ա-
սէր. " 'Ի պարտութիւն մատնեցաք ո՞ արք
Հռովմայեցիք 'ի մեծի պատերազմին. բա-
նակ զօրուն հարաւ սատակապէս, և Փլա-
մինիոս հիւպատոս գիտապատ անկաւ։
Արդ դուք ինքնին խորհուրդ առէք այսու-
հետև վասն փրկութեան և աներկեանու-

թեան անձանց»։ Զբան զայս Պոմպոնիոս յայնժամ իբրև զհողմ բռնութեան արկեալ 'ի ծով մեծ յոքնաթիւ խուժանին այնորիկ՝ յուզեաց և խռովեալ ամբոխեաց զքաղաքն, և արհաւրոք ելից և յափշութեան կրթեաց առհասարակ. սակայն և 'ի մի խորհուրդ եկեալ հաստատեցին միաբան, եթէ իշխանապետութեան այնուհետև պէտք են իրացն, զոր նոքա Տիտանոս կոչեն. և իշխանապետի առն՝ անվկանդ պէտք են լինել և անպարտուրելի, և է նա ինքնին միայն Փաբիոս Մաքսիմոս՝ որ հանճար և պերճութիւն ոգւոյ յանձին բարձեալ բերէ զուգակշիռ մեծի բարձիդ այդորիկ. ունի և զտիս հասակին քաջավայելուչ՝ յորում մարմին առոյգ և կորովի գեղեցիկս արդիւնացուցէ զիսորհուրդս հոգւոյն, և աշխոյժք սրտին ուղղեցին առ 'ի հանճարոյ անտի առն։

Իբրև հաճոյ թուեցաւ առհասարակ, առին կարգեցին զՓաբիոս իշխանապետ։ Սա կարգեալ զԼեվկիոս Մինուկիոս 'ի զօրավար այրուձիոյն, առաջին խնդրեաց 'ի Սինկղիտոսէն յերիվար աշտանակեալ 'ի բանակի զօրուն. քանզի չէր օրէն բանն և խափանեալ ևս էր 'ի վաղնջուց օրինաց. կամ զի այնպէս կամէին հինքն Հռովմայեցւոց՝ զի մեծապէս ոյժ բանակին կացեալ 'ի հեռաւակ զօրուն, և զօրավարն ինքնին անմեկնելի արձանացի առ փաղանգին. կամ թէ վասն ինքնիշխան տէրութեանն և մեծի աւագութեանն կամեցան նոքա՝ զի գոնեա

'ի բանիդ յայդմիկ կարօտ ժողովրդեանն ի ցէ իշխանապետն։ Այլ կամեցեալ Փաբիոսի անդէն 'ի հանդէս բերել զաւագութիւն բարձին 'ի մեծապէս հլութիւն խուժանին, եւ ինքնին արտաքս 'ի հրապարակ անդր յառաջոյ իւր տանելով գաւազանակիրս քսան և չորս թուով. և այն ինչ անդուստ 'ի հանդիպոյ մի ոմն 'ի հիւպատոսացն դայր ընդառաջել նմա, նա անդէն արձակեաց զմի 'ի պաշտօնէիցն ասել նմա՝ զի 'ի բաց զվարոցաւորսն արձակեսցէ յիւրմէ. և զհիւպատոսութեան զնշանակսն 'ի բաց եդեալ՝ այնպէս իբրև զմի 'ի սոսկականացս ընդառաջեսցէ նմա։ Իսկ յետ այնորիկ գեղեցիկ կարգաւ սկիզբն արարեալ յաստուածայնոց անտի՝ ազգ զայս ինչ առնէր ժողովրդեան, եթէ ոչ արդեօք 'ի պատճառս ինչ անարի վատասրտութեան զօրականին՝ այն հարուածք եկին հասին 'ի վերայ նոցա, այլ յարհամարհութենէ զօրավարին յաստուածակոյս կողմն անդր. ապա խրախոյս քաջալերս տայր նոցա մի ինչ 'ի թշնամեացն զարհուրել, այլ մեծարել զաստուածսն և հաշտս և մարդասէրս առաջրել զնոսա. սակայն և ոչ բանիւն սնապաշտութիւն 'ի նեղքս խառնէր նոցա, այլ և մեծապէս ևս զօրացուցանէր զառաքինութիւնն 'ի ձեռն բարեպաշտութեանն, և մերժէր 'ի նոցանէն զահ և զերկիւղ թշնամեացն, և քաջալերութիւն 'ի նեղքս բերեր ապաստան 'ի խնամս աստուածոցն։ Յայնժամ շարժեցան նոքա և շատ ինչ հարցա-

նել 'ի մատենից անտի՝ որ պիտանիք յոյժ են նոցա և 'ի գաղտնեաց սակի, որոց անուն կարդային ՍԻԲԻԼԼԵՆԻ։ Եւ ասեն՝ եթէ ինչ ինչ 'ի պատգամաց ամբարելոց 'ի նոսա յոյժ ճահոդակի գային պատահարաց և գործոց ժամանակին այնորիկ. սակայն և չէր օրէն զայսոնեալն 'ի նոսա լսելի ումեք առնել։

Ապա հանդիսացեալ իշխանապետին, մինչ գեռ ժողովուրդք առհասարակ 'ի մի խմբեալ կային, ուխտս դնէր աստուածոց՝ յազգել նոցա միանգամայն զամենայն ծը-նունդ տարւոյ՝ զայծեաց և զխոզից և զխա-շանց և զարջառոց, որ ծնունդս արձա-կեսցեն 'ի գալ գարնայնոյն, որչափ ինչ բուծանեն յարօտս լերինք Խոալիոյ և դաշ-տագետինք և գետք և մարդք։ Ա՛ռ այս գարձեալ՝ և ուխտս դնէր ծախել 'ի հան-դէս երաժշտական և թատերական տեսա-րանաց՝ սէստերտիոնս երեքհարիւր երե-սուն և երեք, և դենարս երեքհարիւր և ե-րեսուն և երիս և երրորդ մի. և գլխաւորի այս 'ի դրամակշիռս ութ բիւր, և դրամա-կշիռք դարձեալ երեք հազար հինգհարիւր և ութսուն և երեք և դանկ երկու։ Արդ՝ գժուարին արդեօք ասել տալ պատճառս այնչափ իմն ճշգրիտ սահմանելոյ թուոյ ծախուցն այնոցիկ, եթէ ոչ կամեցի զք թերևս զզօրութիւնն յարգել զերրակի թը-ուոյդ. քանզի անդատին 'ի բնութենէն այգ թիւ կատարեալ է, և առաջինն է 'ի կո-ճատից և սկիզբն է բազմաւորութեան, և ունի զառաջին տարբերութիւնսն և զառ-

հասարակ թուոց զտարերան խառնեալ և յօդեալ յինքն։

Իբրև այսպէս 'ի վեր առեալ հաստատեաց Փաբիոս զմիտս Ժողովրդեան յաստուածայինն անդր, սկսաւ քաջալերը բանիւք 'ի լաւագոյնն յուսացուցանել զնա վասն հանդերձելոցն. և ինքն մեծապէս քաջալերեցաւ յանձն իւր՝ 'ի յոյս յաղթութեանն. հաստատեցաւ 'ի միտս եթէ առաքինութեամբ և հանճարով հանդերձեսցի առ յաստուծոյ յաջողութիւն 'ի գործս։ Հապա յարուցեալ խաղայր ընդդէմ Աննիբաղայ, ոչ եթէ 'ի մոի եդեալ մարտիւ պատահել նմա և պարտել, այլ ժամանակաւ տակաւ վատնել սպառել զզօրութիւն նորա, և ընչաւէտութեամբն՝ զչքաւորութիւն նորա վատթարել, և բազմամարդութեամբն՝ զսակաւութիւն նորա հարկանել վանել։ Վասն այնորիկ և ցանգ 'ի վերայ բարձանց կալեալ Փաբիոսի զզօրն, բանակ հարեալ նստէր 'ի լեռնուտ վայրս, զի մի թերևս 'ի վերայ նորա դիմեալ անկանիցի այրուձի թշնամւոյն. զտեղի կալեալ մնայր, եթէ առկայանայր Աննիբաղ. իսկ եթէ շարժէր, խաղայր և ինքն և յածեալ շրջէր 'ի վերայ բլրոցն. և ցանգ զթշնամեաքն ինքն պար առնոյր անդուստ 'ի բացեայ, զի մի ինչ ամենևին սոխպեսցի 'ի վեդ գալ ընդ նոսա. միանգամայն և 'ի դեդերել իւրում այնպէս ահ արկանէր 'ի նոսա՝ գուցէ յանկարծակի յեղակարծումն անկցի մարտիւ 'ի վերայ նոցա։

Իբրև հարուստ ժամանակ օրինակ զայս ժամավաճառ լինէր Փաբիոս, սկսան այնուհետև առհասարակ յընչաց քերել զնա՝ որպէս զի և յիւրմէ զօրականէն Թշնամանք ձգէցան 'ի նա. և Թշնամիք ինքնին իբրև անարի վատասիրտ ունէին զնա, բայց ՅԱՆՆԻԲԱՂԱՅ. միայն նա ճշգրիտ 'ի վերայ եկաց հնարիմաց խորհրդոց նորա՝ որով կռուէր ընդ նմա. գուն գործէր Աննիբաղ խորագիտութեամբ և բռնութեամբ ևս ածել զայրն 'ի կռիւ մարտի. քանզի և վճարեալ իսկ էր այնուհետև վասն Կարքեդոնացւոցն. քանզի յորս վէհագոյնք էին նոքա քան զՀռովմայեցիսն՝ 'ի զէնսն, ոչինչ կարէին յայնժամ վարել զնոսա. իսկ յոր ինչ խոնարհագոյնք էին՝ 'ի զօրս և յինչս, նոքին օր ըստ օրէ սպառեալք վատնէին 'ի նանիր: Ապա զամենայն հնարս զգինուորութեանն հնարէր Աննիբաղ, և փորձ զամենայն զմրցանացն փորձէր, Թեակոխէր իբրև ըմբիշ քաջ՝ առնուլ որսալ զՓաբիոս. յարձակէր 'ի դիմաց, խռովս հարկանէր 'ի նա, ասպատակ կապէր, և յայսկոյս յայն կոյս առեալ տարուբերէր զնա. խնդրէր յետս զնա 'ի խորհրդոյն նհանջել յանքոյթ և յաներկեան: Բայց Փաբիոս կայր մնայր հաստատուն և անշարժելի 'ի խորհուրդն, զի և զայն համարէր լաւ 'ի ժամուն. իսկ որ վիշտ մեծապէս հասուցանէր նմա, էր ինքնին Մինուկիոս զօրավար այրուձիոյն: Սա այս Մինուկիոս գժպատեհս յօժարեալ 'ի կռիւ անդր, շուրջ գայր և խրա-

խոյս զօրականին կարգայր որ ունկն դնէին նմա, և յանդգնագոյնս և պատիր յուսոյն առեալ վառէր զնոսա. ուստի և նոքա՝ հեգնեալ զՓաբիոս, և ձաղանօք անուն կարգային նմա՝ Մանկածո Աննիբաղայ. և զՄինուկիոս ինքնին ունէին իբրև զմի 'ի հոյակապ որերոյն, և քաջ իսկ 'ի գէպ Հռովմայեցւոց՝ զօրավար առաքինի։ Յայսմանէ ապա Մինուկիոս 'ի վեր վազեալ՝ յայրատագոյնս ունչս արարեալ ծիծաղէր՝ զի այնպէս բանակ հարեալ նա շրջէր 'ի վերոյ բարձանց, իբրու որ 'ի խնդիր ելեալ ելոյ իշխանապետն 'ի բարձունսն գեղեցիկ գիտարանաց՝ անդուստ 'ի զնին կալ տեսանել զաւերած և զհրայրեացս Խաղիոյ. և խնդրէր հարցանէր Մինուկիոս զբարեկամն Փաբիոսի, զի՞նչ միտք զի՞նչ կամք ելցեն Փաբեայ. առնո՞ւլ Թերևս զբանակ զօրուն ամբառնալ մինչև յերկինս 'ի վեր, իբրու յուսահատ այնուհետև յերկրէ ելեալ, կամ Թէ զամպս և զամպրոպս և զմէգ մառախուղ առեալ դումարեսցէ դա ընդդէմ, և ինքն փախուցեալ սրասցի յերեսաց Թշնամեացն։

Իբրև զայս բանս բարեկամք Փաբեայ պատմեցին յունկն Նորա, և խրատ ևս տային նմա զանփառութիւնն սրբել յանձնէն՝ միջամուխ 'ի մարտն, ետ պատասխանի Փաբիոս և ասէ. "Քա՛ջ իսկ արդեաք էի անարի վատասիրտ՝ քան զոր երևիմն աւադիկ, եԹէ երբէք երեսս այպանացդ և ձաղանացդ արարեալ՝ յետս նահանջէի յիմոց

խորհրդոց։ Եւ արդեօք զանգիտել վասն հայրենեաց՝ գեղեցիկ է. այլ զարհուրել 'ի կարծեաց և 'ի բամբասանաց մարդկան և 'ի նախատանաց, չէ գործ առն՝ որ զբարձ զայս զանձամբ առեալ ելցէ, այլ որ ծառայութիւն հարցէ՝ յորոց վերայ տիրանալն պարտ ելցէ, և զնորհուրդսն նոցա զձախողական սանձել արժան ելցէ"։

Բայց յետ այսորիկ մեծապէս յանցեաւ Աննիբաղ. քանզի կամեցեալ 'ի բացեայ 'ի Փաբիոսէ առնուլ տանել զզօրն, և հասանել ունել զդաշտագեղինսն 'ի համբարս պաշարոյ, հրաման տայր ուղեցոյց պարեկացն վաղվաղակի յետ ընթրեացն խաղացուցանել զբանակն 'ի Կասինատոն. այլ արքն ոչ ուղիղ իմացեալ զբանն առ խեցբեկ բարբառոյն Աննիբաղայ, ածեալ բերին զբանակն 'ի սահմանս Կամպանիայ 'ի քաղաքն Կասիլինոն, զոր յերկուս բաժանէ Լոթրոնոս գետ անցեալ ընդ մէջ՝ զոր Հռովմայեցիք կոչեն Վատուրանոս։ Անդանօր ողջոյն գաւառն շուրջ պատեալ կայ 'ի լերանց. միայն ձոր մի ձգեալ տարածի 'ի ծով անդր, յորում և ճահիճք ըճացեալ կան 'ի հոսանաց անտի գետոյն. են անդանօր և աւազակոյտք մեծախոտք, և ձգեալ սահմանի 'ի ծովափն ալէտանջ և գժուարամատոյց։ Իբրև յայս վայր եկեալ էջ Աննիբաղ, անդուստ Փաբիոս հրամուտ վայրացն՝ շուրջ եկեալ փակեաց զելս ճանապարհին և կարգեաց եդ անդէն հետևակս չորս հազար. և յարդարեալ գեղե-

ցիկ զբանակ զօրուն 'ի վերայ բարձանցն, առեալ յինքն խումբ մի թեթևազէն և յառաջամարտիկ զօրուն, անկաւ 'ի վերջ բանակին Աննիբաղայ. և անդ առհասարակ 'ի զօրն խռովս բազում հարեալ՝ ուրթ հարիւրովք չափ 'ի նոցանէն տապաստ արկանէր: Իսկ Աննիբաղ կամեցեալ յետս զզօրն իւր ընկրկել, խելամուտ եղեալ զի սխալ մեծապէս և վատանգ գործեցաւ 'ի վայրացն՝ Եսո հրաման 'ի խաչ հանել զուղեցոյց պարեկան. սակայն և անհնարին գոլով Աննիբաղայ մարտիւ վանել յայնժամ զՀռովմայեցին տիրացեալ 'ի վերայ բարձանց, և տեսանէր ևս զի անկաւ բեկաւ զօրն, զի և առհասարակ լի էին նոքա արհաւրոք՝ շուրջանակի պատեալք, և 'ի վարանս մեծամեծս տագնապէին նոքա ելից փախստեան, ապա նենգ մենքենայեաց Աննիբաղ դաւել զթշնամին, և էր այսպիսի:

Եսո հրաման առնուլ յեզանց գերելոց երբև երկուց հազարաց, և յեղջիւրս նոցա իւրաքանչիւր կապել ջահս և տրցակ 'ի յօտոց կամ 'ի խռուոցն չորացելոց. և ապա գիշերի՝ 'ի տալ նշանին՝ հուր հարկանել 'ի նոսա, և զնոսկ զայն անդէոց առնուլ վանել 'ի բարձունս անդր լերանցն 'ի կիրճն և 'ի դարանս պահպանուիթ թշնամեացն: Երբև ոչք զհրամանն առին՝ կատարեցին, ինքն ժողովեալ զբանակն, այն ինչ նսեմացաւ՝ տակաւ անշշունչ շարժէր խաղացուցանէր: Իսկ ապա հորդան տուեալ անդէոցն, և զջահսն վառեալ 'ի նոսա, մինչ-

դեռ տակաւին բոց դուշնաքեայ այրէր շուրջ միայն զորցակսն, դաս դաս նոքա հեղաքայլ վարեալք խաղային 'ի վեր ընդ լերինսն. և անդ բոցք բորբոքեալք ցոլացեալք 'ի ծայրից անտի եղջերացն՝ զարմանս յոյժ բերէին հովուաց և անդէորդացն 'ի զնին տեսլեանն 'ի բարձանց անտի. որպէս՝ եթէ բանակ զօրու այնպէս միաբան կարգաւ խումբ առեալ խաղայցէ բազմախուռն ջահիւք: Այն ինչ յարմատան եղջերացն ընթացաւ բոցն, և ճարակեալ հուրն կիզոյր զմարմին նոցա, և 'ի կրից անտի 'ի վեր դրդեալ անդէոց՝ շարժէին տանէին սաստկապէս զգլուխս իւրեանց, և ընդհարեալք հրձիգ 'ի միմեանս լինէին, ոչինչ այնուհետև կարգ 'ի կարգ՝ այլ շրջտուցեալք և յանհնարին ցաւոցն խուճապեալք՝ այնպէս խառն 'ի խուռն անդ վազս առեալք մոլեգինս դիմէին ընդ լերինս, հրավառեալք ողջոյն մինչև յագիս 'ի ծայրսն և 'ի ճակատսն իւրեանց, առհասարակ հուր հարեալք 'ի նիւթս վայրացն՝ ընդ որ միանգամ խուճապէին նոքա 'ի փախուստ: Ցայն տեսիլ ահաբեկ զահի հարան հռովմայեցիք՝ որ անդ նստեալ պահէին զանձուկս լերանցն. համարեցան՝ եթէ մարդիկ գլխովին յայս կոյս յայն կոյս ընթացեալք՝ ջահս բազումս հրձիգս բարձեալ բերիցեն. և անդ շուրջանդն հարեալ ամբոխից՝ լքան լուծան կարծեալք եթէ ուստեք թշնամիք հորդան տուեալք առհասարակ փակեսցեն զնոսա շուրջանակի. ոչ

հանդարտեցին՝ թողին լքին զանձուկս պահպանութեանն, զոտս արձակեալ փախչէին 'ի բուն բանակ անդր։ Իսկ թեթևաշէն զօր Աննիբաղայ յառաջ խաղացեալ հասին կալան զանձուկն. ապա և բանակ զօրուն խաղայր անդր համարձակ հանդերձ բազմահամբար աւարաւ։

Մինչդեռ տակաւին գիշեր էր՝ եկաց Փաբիոս համբրէն 'ի վերայ դաւանացն Աննիբաղայ. քանզի 'ի խուճապելոց անտի եզանց և օգտելոց անկան 'ի ձեռս նորա. սակայն 'ի գիշերախառն դարանացն զանգիտեալ՝ զտեղի կալաւ անդէն վառեալ 'ի զէն և 'ի զարդ. իսկ ապա 'ի գալ աւուրն խաղաց յառաջ՝ մարտ եղեալ կռուէր ընդ վերջապահ գնդին Աննիբաղայ։ Անդ խառնեցաւ մարտն սաստկապէս 'ի դժուարս և յառապարս, և 'ի տագնապ ամբաւ տարակուսանաց անկանէր Աննիբաղ. մինչև 'ի ճակատէ անտի իւրմէ գունդ մի հատեալ Իսպերացւոց, արք թեթևազէնք և արագոտինք՝ քաջընթացք լեռնագնացք, արձակէր 'ի վերայ սպառազինացն Հռոմայեցւոց. և այնպէս ապա իբրև ոչ սակաւք տապաստ անկանէին 'ի Փաբեանց, շտապեցաւ Փաբիոս դառնալ ընդ կրունկն։ Անդ ապա առաւել անդոանէին զնա և այպանէին. քանզի որ ցանգ խոյս տայր զինու մարտ դնել, իբրու որ քաջութեան խորհրդո

ռաւել ևս կամեցեալ վառել զՀռովմայեցիսն ընդդէմ Փաբիոսի, իբրև եկեալ էհաս մինչև ցաղարական Փաբեայ, ետ հրաման՝ զայլոցն առհասարակ յաղարտ վարել և յաճիւն դարձուցանել. միայն 'ի Փաբիոսինն՝ ասէ՝ հուպ ինչ ոք ամենևին մի եղիցի. այլ և զգուշութիւն ևս պահպանութեան կարգէր 'ի վերայ, զի անդրժելի և ամբողջ կալուածքն կացցեն։

Իբրև այսմ իրազգած եղեն 'ի Հռոմ, պատճառս առին ամբաստանութեամբ զՓաբիոսէ. անգանօր և տրիբունք ժողովրդապետք բողոք բառնային վասն նորա առաջի խուժանին՝ սադրեալք 'ի Մետիղլոսէ. այլ Մետիղլոս ոչ թշնամութեամբ ինչ էր ընդ Փաբեայ. բայց քանզի ազգական էր Մինուկիոսի իշխանին այրուձիոյ, եդ 'ի մտի ամբաստանութիւն զՓաբեայ՝ շուք յաւելուլ Մինուկեայ։ Առ այս դարձեալ և Սինկղիտոսն ինքնին ցասուցեալ էր ընդ Փաբիոս, և սաստիկ խեռայր՝ զի դաշն կռեաց նա ընդ Աննիբաղայ վասն գերեալոյն, մարդ ընդ մարդոյ արձակել զգերին. և ըստ մէն մի մնացորդացն յերկոցունց կողմանց՝ փրկանաւորել երկերիւր և յիսուն դրամակշռոց։ Արդ 'ի փոխանակութեան գերեալոյն, մնացորդք 'ի Հռովմայեցւոց գտան առ Աննիբաղայ երկերիւր և քառասուն. այլ Սինկղիտոսին չէին կամք տալ նոցա զփրկանսն, և մեղադիր ևս լինէին Փաբիոսի՝ այնպէս անձահ և յանօգուտս փրկանաւորել ըզմարդիկ՝ ոչք անարի վատութեամբ որս 'ի

ձեռս անկան թշնամեաց։ Իբրև զայս լուաւ Փաբիոս, թէպէտ և մեծապէս հեզութեամբ տարաւ բարկութեան քաղաքացեացն, այլ զի դրամս չունէր առ ձեռն և ոչ հանդարտէր ևս ուխտադրուժ առ Աննիբաղ եղեալ՝ լքանել զգերին հռովմայեցի, առեալ զորդին իւր արձակէր 'ի Հռոմ. պատուէր տուեալ 'ի վաճառ զդարական իւր հանել և զարծաթն անդէն առ ինքն հասուցանել 'ի բանակ անդր։ Իբրև չոքաւ պատանին և վաճառեաց զգեստինսն՝ դարձաւ փութանակի առ հայրն. և առեալ Փաբիոս զփրկանսն առաքէր առ Աննիբաղ, և ասպրեցուցանէր զգերին. բազումք 'ի նոցանէն ապա խնդրէին հասուցանել նմա զփրկանսն, այլ նա յանձին ոչ կալեալ՝ եթող առհասարակ զպարտսն։

Իբրև յետ այսորիկ կոչեցաւ Փաբիոս 'ի Հռոմ 'ի քահանայից 'ի նուէրս ինչ զոհից, նա զբանակն յանձն 'ի Մինուկիոս արարեալ՝ պատուէր տայր ոչ միայն իբրև իշխանապետ, մի 'ի վեգ և 'ի խառնուրդ գալ ընդ Աննիբաղայ, այլ և յորդորէր ևս և շատ ևս աղաչէր։ Բայց Մինուկիոս ոչինչ փոյթ տարեալ բանից Փաբիոսի, անդէն արագ կազմէր պատրաստէր անկանել 'ի վերայ Աննիբաղայ։ Իբրև անդ ուրեք գունդ մեծ հատեալ 'ի բանակէն՝ արձակէր Աննիբաղ ժողովել ամբարս, դէտ ակն կալեալ Մինուկիոս անկանէր 'ի վերայ ճնացեալցն. ոչ սակաւս 'ի նոցանէ 'ի սուր սուսերի մաշէր, և զայլսն անդրէն 'ի զակիշն արկանէր,

և առհասարակ արհարբք ընոյր զնոսա՝ ե-
թէ յանկարծ պատեալ պաշարեսցին 'ի
նմանէ. իսկ իբրև միւսանգամ գումարեաց
Ընիբալ զզօրն 'ի բանակին, տեղի եւ
Մինուկիոս մեկնեցաւ յապահովի. և ընոյր
զեղոյր այնուհետև անպայման պանծա-
նօքն, և զզօրն առհասարակ ընոյր քաջալե-
րութեամբ։ Իսկ անդէն փութանակի համ
բաւն 'ի Հռոմ հասեալ մեծ ևս քան զար-
դիւնս գործոցն, ասէր Փաբիոս՝ եթէ 'ի
գեղեցիկ յայն ելից իրացն Մինուկեայ
ինքն զգողանի հարեալ է։ Բայց խուժանն
հրճուալից ընթանայր 'ի հրապարակ անդր.
իսկ և անդուստ Մեսիղիոս ժողովրդապետ
ելեալ 'ի բեմն հրապարակախօս լինէր. 'ի
վերս առեալ բարձրացուցանէր զՄինուկիոս,
և զՓաբիոս զզուէր այնուհետև ոչ իբրև
վատասիրտ՝ ոչ իբրև անարի, այլ իբրև մատ-
նիչ. առ այս՝ ամբաստան կայր նա և զայ-
լոց ևս աւագաց քաղաքին և զՃոխից, իբրու
որք անդստին զմարտ զայն յուզեցին ընդ-
դէմ Հռոմայ՝ նկուն առնել զխուժանն,
և անդէն առեալ զքաղաքն ապաստան 'ի
ձեռս արարին միապետութեան՝ զի հա-
րուստ մի ժամավաճառ լինելով՝ տեղի տա-
ցէ Ընիբալայ տիրանալ, մինչև անդրէն
այլ խուժան 'ի Լիբիոյ հասցէ առ նա՝
իբրու որ թագ կապեալ իսկ ելցէ Իտալիոյ։
Ապա Փաբիոս յառաջ մատուցեալ՝ ոչինչ
առնէր պատասխանի ամբաստանութեանց
ժողովրդապետին, այլ պատուէր 'ի վերայ
տայր՝ փութոյ պնդութեամբ զզրհան և զզ-

նուիրագործութիւնն կատարել, զի դարձ այնուհետեւ ինքն 'ի բանակն արարեալ՝ պատուհաս 'ի վերայ կապեցէ Մինուկեայ՝ զի անսասանեալ պատուիրանին կուռեցաւ ընդ Աննիբաղայ։

Անդ անհնարին շտապեալ տագնապեցաւ խուժանն, զի տեսանէին վտանգեալ զՄինուկիոս. և քանզի Ճոխաբար իշխանութեամբն էր իսկ 'ի ձեռս իշխանապետին տալ զնա 'ի տուն բանտի, և դատակնիք ևս մահու 'ի վերայ կապել նորա՝ մինչև եղեալ քննութեան վնասուն։ Եդին 'ի մտի՝ եթէ ցասումն Փաբեայ 'ի տնկակից իւրում հեզութեանն դժնդակ յոյժ է և անողոքելի. ոյր աղագաւ առհասարակ զահի հարեալք լռեցին։ Այլ Մետիղլոս յանձնապատան 'ի ժողովրդապետութեանն բարձին, (քանզի այս աւագութիւն անփոփոխ կայ և 'ի կարգել իշխանապետի, որ զայլն ամենայն միանգամայն բառնայ 'ի միջոյ), ապա Մետիղլոս յողոք անկանէր առ ժողովուրդն մի այնպէս թողուլ ամայի զՄինուկիոս. զի մի թերևս կրեսցէ նա՝ զոր Մանղիոսն Տուրկուատոս էտ կրել իւրում զաւակին՝ տապարաւ հատեալ ըզգլուխն այն ինչ բոլորեալ պսակեալ 'ի գեղեցիկ նահատակութենէն։ Ա՛ռ այս՝ և յորդոր 'ի նեղքս խառնէր հանել 'ի փաբիոսէ զբռնաւորութիւնն, և 'ի ձեռս տալ գլխովին առն՝ որ բաւեսցէ և կամեսցի վրկել զքաղաքն։ Իսկ ժողովուրդք թէպէտ և շարժեցան ևս 'ի բանն Մետիղեայ,

ոչինչ ժառեցին բուռն առնել Փաբեայ՝ թէ պէտ և դատափետեալ 'ի ժամուն՝ տեղի տալ 'ի միապետութենէն. այլ վՃիռ զայս ետուն, զի Մինուկիոս զուգապատիւ զօրավարի և հռոմիշեան իշխանապետի կացցէ 'ի մարտին։ Եւ այս բան անդ 'ի նախնումն երբէք ոչ տեսաւ 'ի Հռոմ. այլ վայր մի զկնի դէպք եղեն բանիս և յետ հարուածոյն Կաննայ։ Քանզի Մարկոս Յունիոս իշխանապետ յայնժամ էր 'ի բանակին. և քանզի պէտք եղեն 'ի Հռոմ կարգել փոխանակ բազմաց պատրկացն՝ որ տապաստանկան 'ի մարտին, միւս ոմն իշխանապետ եդին նոքա զՓաբիոս Բուտէոն. այլ սա այս Բուտէոս առեալ զանձամբ զբարձն և ընտրեալ զաւագորեարն և լցեալ զՄինուկ զնոսան՝ 'ի նմին խակ աւուր 'ի բաց զգաւազանակիրսն արձակէր, և գաղտաբար խոյս տուեալ 'ի խուան ամբոխին ծածկէր զանձն. և ապա 'ի հրապարակ եկեալ իբրև զմի 'ի սոսկականաց՝ անդ զբաղեալ պարապէր 'ի գործ ինչ իւր։

Ալդ իբրև զնոյն զայն իշխանութիւն զիշխանապետին ետուն և Մինուկեայ, կարծէին ինն այնպէս նուազ առնել զՓաբիոս և նկուն յարդարել զնա. այլ ոչ համարէն 'ի վերայ կացին նոքա աւագութեան առն։ Քանզի նա զնոցայն անգիտութիւն ոչինչ նուազութիւն համարէր անձին. այլ զորօրինակ Դիոգինէս իմաստուն լուեալ յումեմնէ ասել, եթէ Դ՝ոՓ՝ ՝ա՝ՈՒԲԻ ԺՈՂՐ ՈՒՆԷՆ ԿՓԷԿ, ետ պատասխանի. Ան է՝

ծաղր լինիմ։ Գիտէր իսկ քաջ, եթէ ծաղրեալք նոքա միայն էն՝ որք սրտաբեկք խուռվին յայնպիսեաց անտի. այսպէս և Փաբիոս յայնժամ անխուռվ և մեծապէս հեզութեամբ տարաւ անիրաւութեանն, և այնպէս ապա ճշգրտեաց յանձին զառածն իմաստասիրաց որ կնքէն, եթէ՝ "Այր լաւ և առաքինի երբէք ոչ անիրաւի և ոչ անպատուի"։ Այլ վասն քաղաքին ցաւէր Փաբ'ոսի յանհանձարաբար գնացից խուժանին, որ պատճառս 'ի ձեռս տայր Մինուկեայ ընուլ զանմտութեան զաշխոյժան 'ի կռիւ մարտին։ Ապա զանգիտեալ Փաբիոս՝ գուցէ գլխովին խելայեղեալ Մինուկիոս 'ի սնափառութենէն՝ յանդգնագոյնս անդէն միջամուխ լինիցի 'ի գործ ձախողակ, եւ զանխուլ արտաքս 'ի քաղաքէն։ Իբրև եկն եհաս 'ի բանակն, անդ գտանէր նա զՄինուկիոս անընդեալ վայրենացեալ և փքուռոյց, որ և փոխանակաւ ասէր 'ի սահմանեալ ժամանակի առն առն վարել զզօրավարութիւն բանակին։ Բայց Փաբիոս ոչինչ հաւանեցաւ. լաւ համարեցաւ յայր այր իւրաքանչիւր բաժանել առհասարակ զզօրն, և միայնակ կիսոյ բանակին զօրավար կալ, քան բոլորին՝ փոխանակաւ։ Ապա յանձն իւր առնոյր զատանէր զառաջին և զչորրորդ գունդն, և Մինուկեայ 'ի ձեռս տայր զերկրորդն և զերրորդն. նոյնպէս և նիզակակից նոցա բաժանեցան յայնժամ։ Իբրև այս եղև, յանձն իւր զուարճանայր

Մինուկիոս, զի յիւր սակս նուազեալ գը-
տաւ աւագութիւն վեհագոյն բարձին. այլ
Փաբիոս խրատ տայր նմա զմնաւ ածել՝ ե-
թէ արդեօք մնացի կցէ, զի ոչ ընդ Փա-
բիոսի՝ այլ ընդ Աննիբաղայ հասանէ նմա
'ի վեդ գալ. եթէ երբէք նախանձ ընդդէմ
մաքառեսցի ընդ իւրում իշխանակցին, մե-
ծապէս զգոյշ լիցի, մի՛ քան զնկուն եղեալն
և զանաւադն առ՝ քաղաքացիսն, յեռանեալ
դատանիցի 'ի փրկութիւն նոցա և յանդոր-
րութիւն՝ մեծարեալն և աւագացեալն առ
նոսա։ Այլ Մինուկիոս զբան զայս Փա-
բիոսի հենգնութիւն համարեալ ծերու-
նեաց, առեալ զբաժին իւր առանձին՝ բա-
նակ հարեալ նստէր։ Սակայն և ոչ Աննի-
բաղ անգէտ ինչ էր անցեցս այսոցիկ, այլ
կայր մնայր դէտ ակն կալեալ անդէն դէպ
ժամանակին։

Արդ էր անգանոր ընդ մէջ նոցա բլուր՝
ոչինչ անառիկ. բայց առեալ միանգամ՝
վայր քաջամուր էր այն բանակի զօրուն
և բաւական յամենայնի։ Իսկ որ շուրջ
զբլրովն դաշտ՝ 'ի բացուստ հարթ հաւա-
սար երևէր և դիւր և արձակ, այլ էին 'ի
նմա խրամք ոչինչ մեծամեծք և փապարք
և անձաւք. վասն որոյ և Աննիբաղ թէպէտ
և հեշտեաւ հասանէր ունէր զբլուրն զան-
խուլ 'ի Հռոմայեցւոց, ոչ կամեցաւ. այլ
եթող զնա այնպէս ազատ 'ի միջոցին 'ի
գրգիռ մարտի։ Իսկ իբրև ետես զՄինու-
կիոս զատուցեալ 'ի Փաբիոսէ, առեալ դի-
շերի 'ի զօրականէն՝ ցանեաց սփռեաց 'ի

գարան ընդ իրամն դաշտին և ընդ փա-
պարան. և ապա յայգանալ աւուրն գունդ-
մի 'ի զօրացն հատանէր ոչինչ ստուար՝ եր-
թալ ունել յայտնապէս զբլուրն, և այն-
պէս ապա զՄինուկիոս դրդել 'ի կռիւ-
վան վայրացն. որ և եղև իսկ։ Քանզի
Մինուկիոս խաղացուցեալ անդէն զթե-
թևաղէնսն՝ ապա և զայրուձին, և տեսեալ
ևս՝ զի Աննիբաղ ձեռն տայ որոց 'ի բլրի
անդ զօրականին, խաղայր այնուհետև ող-
ջոյն բանակաւն 'ի վայր անդր՝ վանել զնո-
սա 'ի բլրոյ անտի ուստի մարտ եղեալ
կռուէին. անդ խառնեցաւ դժնդակ մարտ
պատերազմի, և քաջք քաջաց պատահե-
ցին. մինչև տեսեալ Աննիբաղայ՝ եթէ ա-
մենևին իսկ թակարթեցաւ Մինուկիոս, և
թիկունս ևս դարձուցին այնուհետև Մի-
նուկեանք յառաջոյ դարանամտիցն, ետ
նոցա նշան. նոքա միանգամայն յամենայն
կողմանց խուժեալք 'ի դարանացն և ան-
կեալ մեծ աղաղակաւ 'ի վերայ Հռովմայեց-
ւոցն, զվերջոտնեալսն տապաստ առնէին,
և առհասարակ ամբոխ անհնարին շփոթից
և արհավիրս անպայմանս զնոքօք արկա-
նէին։ Ընդ էր տեսանել, զի և ինքնին Մի-
նուկիոս անկանէր բեկանէր 'ի մեծ բարձ-
րութենէն. զակն յայսկոյս յայնկոյս յա-
ծեալ հայէր յայր այր 'ի զօրապետացն.
այլ 'ի նոցանէն և ոչ ոք հանդուրժեաց
զտեղի ունել, զոտս արձակեալք միախուռն
'ի փախուստ խուճապէին, որ և փրկեաց
իսկ ոչ զնոսա։ Քանզի Նոմադացիք յաղ-

թականք արագ արագ առպատակ սփռեալ փակեցին զդաշտադէտին, և զերամակարձակ զզօրն առհասարակ 'ի սուր մաշէին։

Իբրև յայս տագնապ տարակուսի պաշարեցան Հռոմայեցիք, արդէօք ո՞չ 'ի ծածուկ լինէր 'ի Փաբիոսէ վտանգ կորըստեան նոցա. այլ անդատին՝ որպէս հաւանեալս էր՝ նախազգաց հանդերձելոցն եղեալ, 'ի զէն և 'ի զարդ կազմ ունէր նա վառեալ զբանակ զօրուն. և փութոյ պընդութեամբ կայր զնէր զելս իրացն՝ ո՞չ 'ի լրտեսաց լինէ, այլ ինքնին Փաբիոս ելեալ դիտէր 'ի բարձրաւանդակ դիտարանէ տրտաքոյ իւրոյ շերտափակին։ Իբրև զայն լինէ յանկն արկանէր, զի 'ի միջոցի փակեցան նոքա յԱննիբաղայ ամբաւ տարակուսանք, լսէր ևս զձայն խառնագոչ աղաղակի նոցա ո՞չ 'ի մարտ լինէ զարթուցեալ, այլ զահաբեկ մարդկանն և զխուճապելոց ոմանց, զբարձն հարկանէր Փաբիոս և խո՛ր յոգւոց հանեալ ասէր առ Նիզակակիցն. "Բա՛ռնէ Հերակլէս, զիա՞րդ կանուխ քան զիմ ակնկալութիւն, և անագան քան զիղձն իւր՝ այնպէս անձամբ զանձն առեալ 'ի կորուստ մատնեաց Մինուկիոս"։ Զայս ասաց, և անդէն հրաման տայր ածել արտաքս զդրօշակսն, և զբանակն զկնի իւր փողեալ, 'ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. "Հա՛ստա ա՛ռաքինեք, որ ուրուք 'ի ձէնջ յիշատակ երբէք կայցէ վասն Մարկիոսի Մինուկիոսի, աճապարեսցէ. զի այր հոյակապ է դա և հայրենասէր. իսկ

թէ զարդիս դա առաւէլաղանց ջանիւն 'ի վանէլ զթշնամին մեղաւ, գոյ մեզ ապա 'ի ժամանակին դատել զնա "։

Այն ինչ յերևան եկեալ Փաբիոս, անդէն արագ արագ 'ի փախուստ ցիրուցան զՀռոմադացւոց ասպատակն դարձուցանէր 'ի դաշտին. ապա խաղաց դիմեաց 'ի վերայ՝ և ոչք 'ի Թիկանց անտի մարտ եղեալ կռուէին ընդ Հռոմայեցւոց. և տապաստ արկեալ զախոյեանսն՝ այլք առհասարակ 'ի փախուստ դարձան, մինչև նոցա 'ի նեբքս փակեալ և զնոյն կիրսն Իրեալ զՀռոմայեցւոցն։ Զփոփոխել զկրացն տեսեալ Աննիբաղայ, և զի՝ և Փաբիոս 'ի վեր քան զտիս հասակին նահատակեալ և միջամուխ դիմադրաւ խնդրէր միանալ ընդ Մինուկեայ 'ի բլուր անդր, սանձեաց զդոռն. փող եհար և 'ի զակիշ անդր առեալ փակէր զԿարքեդոնացիսն. ապա և Հռոմայեցիք մոադիւրագոյնս տեղի եառուն 'ի մարտէն։ Այլ պատմեն՝ եթէ Աննիբաղ յընկրկել զօրուն, այսպիսի ինչ ժպտեալ ասէր առ բարեկամսն վասն Փաբիոսի. " Ո՞չ իսկ և ասէպ նախապատուում ձեզ լինէի, եթէ ամպրոպքդ այդ գումարեալ 'ի վերայ բարձանցդ՝ երբէք մրրկեալ և փոթորկեալ սեղատարափ անձրևոյ թափեսցէ "։ Իսկ Փաբիոս յետ կռուոյն կապուտ կողոպուտ արարեալ զդիակունս, տեղի եառ. ոչ պերճութեամբ ոտնհար ինչ եղև իշխանակցին, և ոչ 'ի ցասումն ինչ բրդեցաւ ընդ նմա։

Այլ Մինուկիոս 'ի մի վայր խմբեալ

զզբրս իւր, ասէր այսպէս. "Քա՛ջ նիզակակիցք իմ, յանցանս երբէք չյանցանէլ 'ի նահատակութիւնս մեծամեծս՝ այդ 'ի վերբ է քան զսահման վիճակի մարդկան. սակայն զմիանգամ յանցանսն 'ի խրատ առնուլ զգուշութեան հանդերձէլոցն, գործ է առաքինւոյ առն և մտաւորի։ Արդ ես ինձէն խոստովան լինիմ, եթէ գուշնաքեայ արդեաք հասանէ ինձ մեղ գնեալ բախտին, և մեծապէս գովել զնա։ Քանզի զոր ընդ այսչափ ժամանակ չէր իմ ուսեալ, 'ի գուշնաքեայ ժամ աւուրս այսորիկ ուսայ. իբրև չեմ ես բաւական իշխեալ այլոց, այլ պէտք են ինձ այլոսմ իշխանի. և չէ ինձ պատուասիրեալ 'ի վերոյ կալ, որոց գեղեցիկ ևս իցէ ինձ 'ի ներքոյ լինել։ Եւ արդ ունիք դուք աւադիկ զձեր իշխանապետս առաջնորդ յամենայնի. բայց այժմիկ ես ինքնին եմ առաջնորդ ձեզ՝ գնալ շնորհս ունել նմա. և ինքնին առաջին զանձն իմ ընծայեցից նմա 'ի հնազանդութիւն հրամանի նորա"։ Ասաց, և հրաման տայր բառնալ բերել զարծուիսն, և առհասարակ զհետ իւր փողել։ Ապա դէմ եդեալ գնայր Մինուկիոս 'ի շերտապակ Փաբիոսին. իբրև 'ի ներքս եմուտ, և դէպ ուղիղ 'ի խորան երթայր զօրավարին, առհասարակ յափշութիւն կրթեցան։ Ա՛յն ինչ արտաքս 'ի խորանէն ելանէր Փաբիոս, Մինուկիոս 'ի խոնարհ առաջի զնշանական եդեալ, 'ի ձայն բարձր անուն կարդաց նմա՝ Հա՛յր. զնոյն և զօրականք նորա՝ զՓաբիո-

սինն կարդային իւրեանց Տէրոս, որպէս բնաւորեցան ապրեալքն կոչել զապրեցուցիչն։ Իսկ իբրև լուաւ Թիւն լինելը, սկսաւ բարբառել Մինուկիոս և ասէ.

"Յաղթութիւնս կրկին ո՞ իշխանապէտ տարար դու այսօր։ Թշնամեաց յաղթեցեր քաջութեամբ. իշխանակցին՝ հանճարով և հեզութեամբ. միոքն ապրեցուցեր զմեզ, միւսովդ՝ վարժեալ կրթեցեր զմեզ։ Պարտութիւն մեր ՅԱՆՆԻԲԱՂԱՅ՝ այպանելի է պարտեցելոցս, իսկ որ առ 'ի քէն՝ գեղեցիկ և փրկական։ Վասն որոյ և անուն կարգամ քեզ Հ՞այր Տաղոյ. իբրև չէք լինէ այլ անուն պատուականագոյն։ Նա՛ և քան ի խմուտ ծնողն՝ մեծ ևս ունիմ քեզ շնորհս։ Քանզի՝ որ 'ի նմանէն կեանք, լինէ են միայնոյ. 'ի քէն կեամ աւադիկ հանդերձ ամբոխիւդ"։ Զայս ասաց Մինուկիոս, և գիրկս արկեալ համբուրէր զՓաբիոս. ընդնոյն և զօրականքն առնէին ընդ միմեանս գիրկ ընդ խառն համբուրիւ. զի և առհասարակ անդ զօրն լի էին խնդութեամբ և քաղցր արտասուօք։

Բայց յետ այսորիկ Փաբիոս 'ի բաց եդեալ զնշխանութիւնն, անդրէն միւսանգամ դարձան յընտրութիւն Հիւպատոսաց։ Ոչք առաջին կարգեցան յայնժամ 'ի հիւպատոս, զնոյն շաւիղ զՓաբիոսայ կալան նոքա ընդ ԱՆՆԻԲԱՂԱՅ. քանզի խոյս 'ի ճակատամարտ կռուոյն տային, և նիզակակցացն ձեռն տուեալ՝ սանձէին զապստամբութիւնսն։ Ա՛յլ իբրև Տերենտիոս Վար-

բոն ամբառնայր 'ի հիւպատոսութիւն, այր անենչան զարմիւ, այլ ականաւոր 'ի յանդգնութենէ և սուտակասպասութեամբ առ խուժանն. ակն յայտնի այնուհետև առ անփորձ ժողովրդեան առն 'ի հասարակաց վստանգ արկանէր քուէայն: Քանզի սա այս Վարրոն խրոխտագոյնս բողոք բարձեալ յատենի, եթէ ցորվայր Փաբիանք առաջնորդ կացցեն քաղաքին՝ յաւերժասցի մարտ պատերազմին. և թէ՝ ինքնին նմա օր մի շատ արդեօք եցէ միանգամայն և յակն արկանել զԱննիբաղ և 'ի պարտութիւն մատնել: Իբրև զայս այսպէս անդուլ բանդագուշէր, առ խմբեաց նա զօրաժողովն սաստիկ որեար, որչափ ինչ երբէք չէր գումարեալ Հռոմայեցւոց ընդդէմ թշնամեաց. քանզի կազմեցան վառեցան յայնժամ 'ի մարտ պատերազմի ութ բիւրք և ութ հազար այր: Զահի մեծի հարեալ էր Փաբիոս և ընդ նմա մտաւոր մարդիկն. զի թէ երբէք այնչափ բիւրաւորք երիտասարդաց 'ի մահ տարածեսցին, վճարեալ եցէ այնուհետև վասն քաղաքին:

Ապա յարեաւ Փաբիոս՝ ել չոքաւ ինքնին խօսել յունկն միւսոյ հիւպատոսին Հռոմիշնան Տերենտեայ, այն էր Պաւղոս Եմիլիոս՝ քաջափորձ այր 'ի մրցմունս մարտից, այլ ոչինչ այնպէս ընդունելի ժողովրդեան. նաև ահաբեկ 'ի խուժանէն էր այրն, դատակնիք երբեմն յատենի ընկալեալ առ 'ի նոցանէ: Յորդոր 'ի ներքս մատուցանէր նմա Փաբիոս զդէմ ունել կար-

ՀԵԼ զանմտութիւնն Տերենտեայ. խելամուտ ևս առնէր զնա՝ եթէ կռուել հասանէ նմա այնուհետև 'ի փրկութիւն քաղաքին ոչ ընդ Աննիբաղայ՝ այլ ընդ Տերենտեայ, իբրև նոքա երկոքեան միապէս յօժարեալ էին 'ի կռիւ. Տերենտիոս՝ անգէտ ուժոյ զօրութեանն, իսկ Աննիբաղ՝ ծանօթ իւրոյ տկարութեանն. և յաւելեալ 'ի բանս իւր ասէր Փաբիոս. "Վասն Աննիբաղայ իրացն ով Պաւղէ՝ ինձ առաւել հաւատալ արժան է, քան Տերենտեայ: Որպէս զի եթէ զայս ամ անմարտս կացցէ Աննիբաղ, դա կամ ինքնին հարեալ վատթարեսցի ասուէն դեղերեալ, կամ թէ շտապեսցի այրն 'ի փախուստ. զի թէպէտ և յաղթութեամբ այժմիկ տիրացեալ ելցէ այրն, սակայն և տեսաւ և ոչ ոք տակաւին յիւրոց թշնամեացն դաշնաւոր ընդ դմա. նա՛ զի և հազիւ մասն 'ի զօրուէն երրորդ ասս ողջ կացեալ ելցէ, զոր խաղացոյց նա 'ի տանէն իւրմէ": Եւ ասէն՝ զայս պատասխանի արարեալ Պաւղոսի. "Արդարև ով Փաբիէ՝ հայեցեալ յիմաս, լաւ ևս ելցէ ինձ խոց վերաւոր անկանել 'ի նիզակաց թշնամւոյն, քան դատակնիք միւսանգամ առնուլ 'ի խուժանէն: Այլ սակայն եթէ այդ սահման վիճակի իրացդ հասարակաց հասեալ ելցէ, գուն գործեմ ոգւով չափ զօրավար քաջ՝ քեզ միայնում երևել, քան այլոցդ ամենեցուն՝ որ 'ի հակառակն զիս դրդիցեն": Յայս խորհուրդ հաստատեալ Եմիլիոս՝ էլ խաղաց 'ի մարտ պատերազմին:

Ա՛յլ Տերենտիոս առեալ իշխանութիւն փոխանակաւ ընդ իշխանակցին՝ օր մի ըստ այր տանել բերել զզօրն, հարեալ բանակ մօտ Աննիբաղայ մերձ առ Աւփիդիոն գետ 'ի վայրն՝ որ անուանեալ կոչէր Կանն, անդէն 'ի ծագել առաւօտուն զնշանակ մարտին 'ի դուրս հանէր. և էր այս նշանակ պատմուճան ծիրանի՝ տարածեալ 'ի վերայ խորանին մեծի սպարապետին։ Յայն նշան ապա Կարքեդոնացիք սրտաբեկ լուծան, զի դիմադրաւ այնպէս յանձնապատան ցուցաւ Տերենտիոս. տեսանէին ևս զամբաւ բազմութիւն զօրականին նորա, և ինքեանք կիսով չափ չէին նորա։ Իսկ Աննիբաղ հրաման տուեալ վառել 'ի զէն և 'ի զարդ, ինքն ձիաւորեալ խաղաց 'ի վեր ընդ սակաւուց ոմանց 'ի բլուր մի դիւրին, անդուստ կայր զննէր զթշնամին և զկարգ դասաւորութեան նոցա։ Անդանօր իբրև մի ոմն 'ի բարձակից աւագացն Աննիբաղայ՝ Գիսկոն անուն՝ հիացեալ էր ընդ մեծ ամբոխն, զերեսան կնճռեաց Աննիբաղ և ասէ. "Քա՛ջ իսկ՝ ո՞վ Գիսկոն՝ այլ ինչ ևս զարմանալի քան զայդ՝ ծածկեալ է 'ի քէն"։ Իբրև հարցանէր Գիսկոն՝ զի՞նչ այն ասէ. կրկնեաց Աննիբաղ և ասէ. "Ա՛յն է, զի յայդչափ ամբոխիդ չիք և ո՛չ մի ոք 'ի դոսա՝ որ անուանեալ կոչեսցի Գիսկոն"։ Եւ ապա այս կատակ արտաքոյ ակնկալութեան՝ առհասարակ 'ի ծաղր շարժեաց. իբրև 'ի բլրոյ անտի ելանէին, որոց միանգամ պատահէին՝ պատ-

մէին զզրոյցն, զի և շատք յայնժամ 'ի քրքինջ լուծան. իսկ ոչք ընդ Անիբաղայ էին՝ երբէք չկարէին լռել 'ի ծաղուէն։ Զայն տեսեալ Կարքեդոնացւոց՝ քաջալերութիւն զգեցան, իբրու այն՝ որ ծաղրն նոցա մեծապէս վստահութեան նշանակ իցէ, և զօրավարն ինքնին զԹշնամեաքն ունչս արասցէ, և առ դուրս հասեալ մօտալուտ մարտին, նմա կատուակս զրուցել սիրելի իցէ։

Բայց յայն կռիւ մարտի հնարիմացութիւնս հայթայթեաց Անիբաղ։ Առաջին՝ զգեղեցիկ ընտրութիւն վայրացն. զի առեալ Ճակատեցոյց զզօրն՝ 'ի Թիկանց ըզհողմն ունելով. քանզի և շնչէր իսկ բուռն և սաստիկ 'ի ժամուն և բոցակէզ. և յաւուրս զակոյտ յարձակավայր դաշտէն ամբ փոշւոյ փոթորկեալ կուռ և Թխպայորդ՝ ամբարձեալ 'ի վերոյ փաղանգին Կարքեդոնացւոց՝ վարեալ շէշտ հարկանէր Թափէր յերեսս Հռոմայեցւոց, յորմէ և տագնապեալք յեսս զգէմն դարձուցանէին։ Իսկ երկրորդ հնարիմացութիւն նորա. զի գեղեցիկ կարգեաց եդ նա 'ի Թեւս երկուս Ճակատուն զկորովիս և զքաջամարտիկս զօրականին. իսկ զմիջոցն ելից նա վատ և անպիտան որերով, այնպէս սեպաձև դասեալ հարուստ մի յառաջադէմ քան զԹեւս փաղանգին։ Եւ ապա կորովեացն պատուէր տայր, եթէ յորժամ վանեալ Հռոմայեցւոց զոկարան և միջամուխ ընդ մէջ երկուց Թեւոցն եղեալ, և ասպարէզ ևս բացցի նոցա 'ի վերջոտնելոց անտի, նոքա հապճեպ

'ի թեւոց անոմ շրջան առեալք՝ անկանիցին 'ի վերայ 'ի կողմանէ, և շուրջ փակեալ 'ի թիկանց ևս կուսէն պատեսցեն զթշնամիսն։ Եւ այս ապա թուի թէ մեծապէս յաջողեաց զանհնարին հարուած կոտորածին այնորիկ։ Քանզի 'ի վերջոտնեալ՝ ոչք 'ի միջոցին կային, և միջամուխ մարտիւ 'ի նեղքս հռոմայեցւոցն լինել, փաղանգ Աննիբաղայ անդէն փոփոխեալ զառաջին զձևն՝ եկաց լուանաձև. և գնդապետք այրընտիր զօրականին զկէսն 'ի կողմն անդր ճեպեցին ասպարին, և զկէսն 'ի նիզակին, և այնպէս անկան 'ի վերայ զէնընկէց մարդկանն. և զորս միանգամ ոչ խուճապեցան 'ի փախուստ՝ մինչև Կարքեդոնացւոցն պատեալ՝ 'ի նեղքս փակեալ առհասարակ կոտորեցին։ Ասէն՝ և այրուձիոյն հռոմայեցւոց յայնժամ յանցանել նոր և օտար։ Քանզի անդանօր Պաւղոս Եմիլիոս անկեալ յերկիր՝ որպէս թուի՝ խոցեալ երիվարին, իբրև նիզակակիցքն ևս իջին այր ըստ առնէ յերիվարացն՝ այնպէս հեծի ձեռն տալ հիւպատոսին, ոչ սեալ այրուձիոյն և հրաման զայն կարծեալ զօրավարին՝ 'ի վայր յերիվարացն վազեցին առհասարակ, և այնպէս հեծի մարտ եղեալ կռուէին։ Անդ դէտակն կալեալ Աննիբաղ ասէր. "Սիրելի ևս է ինձ բանդ, քան եթէ կապեալս զդոսա ձերբակալ առնէի"։ Զայսոսիկ աւանդեն մեզ՝ որ ճոխաբար գրեցին զպատմութիւնն։

Բայց 'ի հիւպատոսաց Վարրոն ընդ սակաւուց ձի 'ի վեր առեալ՝ անկանէր 'ի քա-

ղաքն Վենուսիա։ Այլ Պաւղոս յայն շտապ տագնապի 'ի յորդել փախստէիցն, քանզի էր իսկ նորա մարմինն 'ի սլաքս նետից վարսեալ, և հոգին յանհնարին անձկութեան, եկն նստաւ 'ի վերայ վիմին՝ ակնկալեալ մահու 'ի թշնամեաց։ Եւ քանզի յարիւն ապաժոյժ ողջոյն շաղախեալ գլուխ նորա և դիտակ պատկերին, ոչինչ ծանեան զնա բարեկամք և ընտանիք, և զանց զնովաւ առնէին 'ի խուճապ փախստեանն։ Միայն Կուռնելիոս Լենտիղոս պատանի 'ի պատրիկաց ետես և ծանեաւ զնա. անդէն վազեալ յերիվարէն և զառաջեաւ զձին աձեալ՝ յողոք անկանէր առ Պաւղոս աշտանակել յերիվար և ապրեցուցանել զանձն 'ի փրկութիւն քաղաքին, որում քաջի իշխանի պէտք էին 'ի ժամուն։ Յանձին ոչ կալեալ Պաւղոս, ասիպէր ևս զպատանին՝ մինչդեռ յարտասուս հարեալ կայր՝ ձիաւորել միւսանգամ. և ինքն յարուցեալ կալաւ զաջոյ պատանւոյն և ասէր. "Պատմեա՛ դու զայս Փաբիոսի Մաքսիմոսի ո՛վ Լենտիղէ, և ինքնին տո՛ւր վկայութիւն, եթէ Պաւղոս Եմիլիոս մինչև խսպառ եկաց 'ի խորհուրդս նորա և անդրժելի 'ի դաշն պայմանին առ նա. բայց առաջին 'ի Վարրոնէ պարտեցաւ Պաւղոս, և երկրորդ անգամ յԱննիբաղայ"։ Զայս պատուէր ետ և արձակեաց զԼենտիղոս. և ինքն եկեալ արկանէր զանձն 'ի խուան կոտորածին, և անդ վախճանէր։ Աստ՝ եթէ բիւրք հինգ 'ի մարտին տապաստ անկան 'ի Հռո-

մայեցւոց, և զորք հազարք 'ի գերութիւն վարեցան. իսկ որք ապա յետ կռուոյն յերկուց բանակաց ձերբակալ եղեն՝ ոչինչ նուազ քան զբիւր մի։

Ալ յետ մեծի նահատակութեանն Թախանէ բարեկամքն արկանէին Աննիբաղայ, նահատակել և 'ի գերեցիկ բախտին, և հեռամուտ ևս փախստէիցն եղեալ 'ի միասին միջամուխ 'ի քաղաքն լինել. խելամուտ ևս առնէին զնա՝ յետ աւուրց հնգից անշուշտ նմա ընթրիս ընթրել 'ի Կապետոլինի։ Եւ ապա ոչ հեշտին լինէ ասել, եթէ զի՞նչ արդեօք խորհեալ Աննիբաղ, անփոյթ լինէր յորդորակին. Թուի իմն եթէ զդանդաղել նորա և զվատութիւնն 'ի ժամուն՝ գործեաց 'ի նա մանաւանդ 'ի փաջաց ոմն կամ յաստուածոց՝ խոչընդոտն նմա։ Վասն որոյ և պատմեն, եթէ Բարկաս անուն Կարքեդոնացի 'ի բարկութիւն բրդեալ, ասէր առ նա. "Դիտես իսկ դու յաղթել, այլ ոչ 'ի գործ զյաղթութիւնն վարել"։

Բայց յայսմանէ մեծապէս փոխեցան իրքն Աննիբաղայ. զի որ յառաջ քան ըզմարտն քաղաք մի չունէր յԻտալիա, ոչ նաւահանգիստ, և ոչ դարձեալ վաճառատեղի. և հալիւ ուրեմն մեծաւ աշխատութեամբ աւարառութեամբ պատրաստէր զկարևոր պաշար բանակին, իբրու որ անհամբար ձեռն 'ի մարտ միսեալ խաղացուցանէր զզօրն՝ իբրև հէն սաստիկ և ասպատակաւորք յառ և յապուր. իսկ յայնժամ

և վայրիկ մի ևս զԽոտալիա ողջոյն ընդ ձեռամբ նուաճէր Աննիբաղ։ Քանզի յայնժամ ժողովուրդք շատք և մեծամեծք կամակար անճնաւորք լինէին նմա. առ այս՝ և զԿապուա ինքնին՝ քաղաք առաւել համբաւատենչ քան զքաղաքս յետ Հռովմայ՝ հատեալ կալաւ։

Արդ այսպէս աղէտք մեծամեծք ոչ զբարեկամացն միայն զփորձն տան, որպէս ասաց Եվրիպիդէս, այլ և զքաջաց զօրավարաց և զառաքինեաց։ Քանզի ոչք յառաջ քան զկռիւ մարտին՝ անարի վատութիւն զխորհուրդն կոչէին զՓաբիոսի, իսկ յետ այնորիկ ոչ 'ի մարդկայնոց ասի համարէին զայն, քան եթէ 'ի գերաշխարհիկ մտաց ազդումն և ասուածային. այն՝ որ անդուստ 'ի վերուստ նախաքարոզ ամբաւ աղէտիցն լինէր, որոց և ոչ՝ ոչք զփորձն առին՝ հաւատային արդեօք։ Ուստի և զամենայն յոյս 'ի նա ինքն այնուհետև հաստատեալ քաղաքին, եկեալ ապաւինեցան 'ի խորհուրդս առնն՝ իբրու 'ի տաճար և 'ի բագին պատգամաց. համօրէն կացին 'ի վերայ հանճարոյն Փաբեայ, իբրու որ պատճառք մեծապէս և առաջին եղև փրկութեան քաղաքին, զի ոչ քանդեալ աւերեցաւ՝ որպէս անդ ուրեմն 'ի Կեղտաց կիրան։ Քանզի սա այս Փաբիոս՝ որ 'ի գեղեցիկ յանդորրութեան քաղաքին՝ Երկիւղ 'ի նեղեալս խառնէր և խիթայր, իսկ յայնժամ՝ որ յանձկութիւնս ամբաւս պաշարեալ կային և 'ի տագնապ տարակուսանաց, զի

և գործ մի գործել բաւական չէին նոքա, ինքն միայնակ հանդարտաքայլ յարուցեալ ընթանայր 'ի քաղաքին. և մեծապէս պարկեշտացեալ 'ի դէմն՝ բանս բարբառէր առհասարակ շնորհօք լի և մարդասէր գթով, խաղաղէր կարձէր զվայ զձիչ կանանցն, և արգելոյր սանձէր զժողովս ժողովս, որ 'ի հրապարակ անդր ելեալ դասդաս գերարտօսրալից կոծ դնէին և աշխարհասարակաց: Ապա 'ի մի վայր զՍինկղետոն խմբեալ՝ իրախոյս քաջալերէր կարգայր իշխանացն, որ առհասարակ 'ի նա յակձիուս կային՝ իբրև որ զօրութիւն էր նոցա և ամուր ապաստանի: Կարգէր դնէր պահապանս առ դրունս քաղաքին, արգելուլ սանձել զխուժանն՝ որ ամայի խընդրէին թողուլ զքաղաքն: Կարգեաց սահմանեաց և տեղի և ժամանակ կոծոյն. եաւ հրաման առ տնին միայն աշխարել զաւուրս երեսուն, ապա կատարած առնել սգոյն, և մաքրել սրբել զքաղաքն յայնպիսեաց անտի: Եւ քանզի դէպք եղեն յաւուրսն յայնոսիկ տօնախմբութեանն Դեմետրեայ, հաճոյ թուեցաւ Փաբիոսի բնաւ իսկ զանց զզոհիւքն առնել և զտօնիւն, քան եթէ 'ի գոյզն ամբոխէ և 'ի թաղծագին կրից տոնելեացն նշաւակել զաղէտս ամբաւ կոտորածին: Եւ քանզի և աստուածակողմնն ինքնին հեշտանայ պատիւ առնուլ 'ի բարեբաստիկ և 'ի զուարթամիտ որերոյն: Եւ ապա 'ի գլուխ հանեալ կատարէին՝ և զոր ինչ իրաւք և գուշակք հրամայեցին՝

հաշտ առնել զաստուածն և 'ի բաց զնշանս հրէշին դարձուցանել։ Քանզի առեալ արձակեցին և 'ի Դեղփիս զՊիկտովը՝ աղգական Փաբիոսի հարցանել յաստուծոյն. և յերկուց անտի կուսիցն Վեստեանց՝ որ 'ի պղծութեան առակեցան, զմին կենդանւոյն թաղեցին ըստ օրինացն, և միւսն՝ անձին արար։

Բայց գեղեցիկ յոյժ յայնժամ սքանչացաւ հանճար և մարդասիրութիւն քաղաքին. քանզի 'ի կոտորածէ անտի դարձ արարեալ ջուառականն Վարրոն ակնկորեալ և լի թաղծութեամբ, ըստ որում և 'ի դէպ՝ որում զնոյն կիրան կրեալ էր, ընդառաջ նորա ելանէր Սինկլիտոսն մինչև 'ի դուրս քաղաքին հանդերձ ամբոխիւ՝ ժողովեալ զնա շքով. նաև որ աւագքն էին և բարձերեցք 'ի ծերակուտին՝ յորոց մի էր և ինքնին Փաբիոս, իբրև լուութիւն լինէր՝ սկսան գովել զՎարրոն. որ յետ ամբաւ աղէտիցն ոչինչ միջաբեկ վասն քաղաքին՝ անդրէն դարձ արար 'ի ձեռս առնուլ զիշխանութիւնն, և ոտիկան 'ի վերայ կալ օրինացն և քաղաքացեացն, իբրու որոց միւսանգամ յոտին կալ մարթ էր։

Յետ այսորիկ լուր առեալք՝ զի ընդ կողմանս այլ Իտալիոյ չու արար խաղաց գնաց Աննիբալ, քաջալերեալք զօրս 'ի դուրս տային հանդերձ զօրավարօք։ Եւ էին 'ի նոսա յայնժամ ականաւորք յոյժ՝ Փաբիոս Մաքսիմոս և Կղոդիոս Մարկելղոս. այս աւագ ալք թէպէտ և տարբեր

րեալք 'ի խորհուրդս, սակայն և միապէս
սքանչելիք առ ամենեսեան։ Քանզի Մար-
կեղոս՝ որպէս 'ի վարս Նորա գրեալ է մեր՝
ժիրաժիր այր և աշխոյժ առաւել և հաս-
տաբազուկ այր, և անդատին 'ի բնութենէն
յայնպիսեաց ոմանց, զորս Հոմերոս ինք-
նին կոչեաց՝ Պոլիերոպմոնէրս և Յանիս-
պոսոն։ և յառաջագէմ և գիմադրաւ
զնոյն օրինակ արիութեան արիանայր ընդ-
դէմ արուոյն Աննիբաղայ՝ նահատակեալ
յառաջին մրցմունս մարտին։ Իսկ Փաբիոս
անսասանելի յառաջին խորհրդոցն՝ դէտ
ակն ունէր՝ եթէ յորժամ անմարտանելի
կացցէ Աննիբաղ, և նմա ձայն ոք ոչ տացէ,
ինքն անձամբ զանձն հարեալ վատնեսցէ
'ի մարտին։ Իբրու ըմբշին մարտին՝ որ 'ի
սաստիկ ձգտեալ ուժոյն և 'ի խոնջեալ իւ-
րում, արագ արագ անբաժ 'ի կորովութենէն մնասցէ։ Վասն այնորիկ և Պոսի-
դոնիոս ասէ, զՓաբիոս՝ Վահան կոչեալ
Հռոմայեցւոց, և զՄարկեղոս՝ Սուսեր։ և
զի՝ անդողդեալի հաստատութիւն Փաբեայ
և անդորրաւէտ՝ գեղեցիկս խառնեալ ընդ
բուսոյ բարուցն Մարկեղեայ՝ փրկութիւն
առթեայց Հռոմայեցւոց։ Բայց Աննիբաղ
բազում անգամ 'ի դիմի հարեալ Մարկե-
ղեայ իբրև ահագին սրընթաց հոսանաց,
այնպէս յետս ընկրկէր առ 'ի նմանէ, և
հարեալ վատթարէր մաշէր զզօրութիւն
իւր։ Իսկ 'ի Փաբիոսէ՝ որ տակաւ գնայր
հոսէր առ 'ի նեղքոյ լուռ և անշառաչ և
սպրդէր մտանէր անդուլ, նկուն եղեալ

պարտէր և ծախէր և ոչ իմանայր։ Եւ այսպէս ապա 'ի տագնապ մեծ տարակուսի վարանեցաւ Աննիբաղ. քանզի վատնեալ սպառէր 'ի Մարկեղեայ՝ եթէ մարտ եդեալ կռուէր. դարձեալ և զահի մեծի հարեալ էր 'ի Փաբիոսէ՝ եթէ չմարտնչէր։ Քանզի հարուստ ժամանակ յայնժամ՝ որպէս բանիս կարգ է ասել՝ կռուեցաւ Աննիբաղ ընդ քաջացս ընդ այսոցիկ, որ կարգեցան կացին միանգամայն և զօրավարք և փոխանակ հիւպատոսի և հիւպատոսք. քանզի և այր այր 'ի նոցանէն հընգիւցս անգամ կացեալ էր հիւպատոս։ Սակայն հուակ ուրեմն զՄարկեղոս՝ որ այս հնգիւցս անգամ եկաց հիւպատոս, դարանամուտ եղեալ Աննիբաղ՝ տիրեաց և սպան։ Այլ և վասն Փաբիոսի նենգ զամենայն և զդաւ և զթակարթ լարեաց բազում անգամ, սակայն և ոչինչ կարաց գամագիւտ լինել։ Բայց 'ի միում անգ նուագի և վայրիկ մի ևս դաւեալ էր զայրն և գլեալ։ Քանզի սուտ յօդեաց նա նամականի իբրև 'ի գիմաց Ճոխից և աւագաց քաղաքին Մեսապոնտիոյ և առեալ յղէր առ Փաբիոս, իբրու անձնատուր նմա քաղաքն էղիցի՝ եթէ եկեալ հասցէ անդր. առ այս և սպասեալ ևս մնան նոքա՝ զի ինքնին Փաբիոս մօտ հասեալ երևեցուսցէ զանձն։ Շարժեցաւ Փաբիոս 'ի նամականուէն, և գունդ մի առեալ 'ի զօրացն հանդերձեցաւ գէմ եդեալ գնալ անդր գիշերի։ Իսկ իբրև հաւանմայք չեղեն բարեգուշակք, զտեղի

առեալ դադարէր. ապա յետ սակաւուց
իրազգած լինէր Փաբիոս և կցկցելոյ նամա-
կանուոյն յԱնիբաղայ. և զի՝ ինքնին Անի-
բաղ 'ի դարան մտեալ նստէր մնայր նմա 'ի
նեղբոյ քաղաքին։ Այլ զայսոսիկ մարդասէր
խնամոցն ասուածոց գրեսցէ ոք արդեօք։

Այլ զվտարանչէլ քաղաքաց և զաղ-
մուկս նիզակակցաց լաւ համարեցաւ Փա-
բիոս հեզ և հանդարտ քաղաքավարութիւն
նուազ առնել և խաղաղել. առ այս՝ և ոչ
միանգամայն զամենայն կասկած դատել
կշտամբել, և դժոխրմբէր առհասարակ լի-
նել առ ամենայն կեղակարծելի մարդիկն։
Քանզի պատմեն՝ եթէ 'ի զօրականէն Մար-
սոս անուն ոմն՝ արութեամբ քաջութեամբ
և զարմիւն բարձերեց 'ի նիզակակիցսն՝ զո-
մանս 'ի բանակէն յապատամբութիւն դեր-
գեալ, լուաւ Փաբիոս և ոչ կշտամբեալ պա-
տուհասեաց զայրն. այլ ինքնին վկայեալ
և կնքեալ՝ եթէ արտաքոյ ուրեմն արժա-
նեաց անփոյթ արարեալ էն զառնէն. բայց
յայսմհետէ՝ ասէր՝ կշտամբեալ դատեսցէ
զզօրապետսն ինքնին գլխովքն՝ որ 'ի շնորհս
ինչ՝ քան յառաքինութեան սակս զպա-
տիւսն բաժանեսցեն։ Սակայն և զնա ինքն
զՄարսոս՝ ասէր Փաբիոս՝ պատուհասել,
եթէ ոչ առ նա եկեալ դիմեսցէ 'ի պէտս
ինչ իւր։ Զայս ասաց, և երիվար մի վա-
ռեալ մարտիկ առաջի ընծայէր Մարսեայ,
և պարգևս ևս տուեալ մեծարէր զայրն. և
այնպէս ապա հաւատարիմ և նահատակ
դիմագրաւ յարդարեաց զնա։ Քանզի և

գԺնդակ համարեցաւ Փաբիոս, եթէ աս-
պականիք և բարակաւորք զանընդհատ ըղ-
կիրան ամրքեսցեն զգազանացն և զվայրա-
գութիւն և զբմբոստութիւնն՝ մեծապէս
խնամով և սովորութեամբ և բուծմամբ, և
ոչ հարուածովք գանից և կապանօք շըղ-
թայից. և ապա այր ոք հրամանաւոր
մարդկան՝ ոչ քաղցրութեամբ և հեզու-
թեամբ մարզեսցէ զնոսա. և անհամբոյր և
գԺոխիրմբեր առաւել ընծայեցուսցէ նոցա
զանձն, քան եթէ մշակք հողագործք առ
ժանտաթզենիս և առ մոլատանձիս և առ
մոլաձիթենիս, զորս և այնպէս իմն գգուեալ
և մշակեալ նա խնամովք, 'ի ձիթենիս փո-
խեսցէ զնոսա և 'ի տանձիս և 'ի թզենիս:

Առ այս դարձեալ և 'ի գնդապետաց
լուր էառ Փաբիոս, եթէ 'ի զօրականէն ոմն
ազգաւ Լեվացի լքեալ զկարգն՝ բազում
անգամ հեռանայր 'ի բաց. և հարցեալ
զդուշական վասն առնն՝ իբրև առհասարակ
վկայեցին՝ եթէ ոչ հեշտին արդեօք լցէ
գտանել այնպիսի այր 'ի զօրուն, և պատ-
մէին ևս Փաբեայ 'ի գեղեցիկ նահատակու-
թեանց նորա: Ապա Փաբիոս հետախոյզ
եղեալ գասալիք պատճառին, գտանէ զսէր
զօրականին առ աղջիկ մի. որ աղագաւ նա
զօր ամենայն 'ի բանակէն ճանապարհս ձիգս
հատանէր և բազմավտանգս: Առաքեաց
Փաբիոս և էառ զկինն՝ ոչ գիտելով զօրա-
կանին, և ունէր 'ի Թաքստեան 'ի խորա-
նին: Ապա առանձին կոչեալ զԼեվացին,
ասէր այսպէս. "Գիտակ իսկ եմ՝ օթա-

գայել քեզ ստէպ ըստ բանակս՝ հակառակ կարգաց և օրինաց Հռոմայեցւոց. և զի՝ յառաջին ժամանակն արուեստիս 'ի նեղքս բերեալ է քո, գիտեմ։ Եւ արդ՝ ըստ գեղեցիկ նահատակութեանցդ թողեալ լիցին քեզ այժմիկ յանցանքդ. այլ յայսմհետէ պահպանութիւն կարգեցից ես 'ի վերայ քո"։ Իբրև հիացեալ կայր այրն ընդ բանսն, ետ Փաբիոս արտաքս զաղջիկն ածել, և տրուեալ զօրականին՝ ասէ. "Աղջիկդ աւադիկ երաշխաւորեսցէ՝ ցանգ ընդ մեզ մնալ քեզ 'ի բանակիդ. և դու գործովք ցուցցես, զի ոչ յանդգամութեան ինչ սակս և 'ի խեռութեան տարագնաց լինէիր, պատճառս զսէրն առնելով և զաղջիկդ"։ Արդ վասն այդոցիկ զայս պատմաբանեն։

Զայսու ժամանակաւ զՏարանտացւոց քաղաքն որ մասնութեամբ առաւ, հասեալ ունէր Փաբիոս՝ օրինակ զայս։ Պատանի ոմն Տարանտացի 'ի զօրականին Փաբեայ՝ ունէր քոյր 'ի Տարանտոն հաւատարիմ եղբօրն և ըղձակալթ։ Իսկ 'ի սէր քեռն հարեալ էր այր ոմն Բրեատացի 'ի զօրապետաց անտի պահապան գնդին՝ զոր ետթող Աննիբաղ 'ի վերայ քաղաքին։ Յայսմանէ պատանին մեծապէս յուսայր ելս գեղեցիկս գտանել իրացն, զոր և 'ի վեր Փաբիոսի հանեալ՝ դէմ եդեալ չոքաւ 'ի Տարանտոն իբրև փախստեայ՝ գալ բնակել առ քեռն իւրում։ Արդ յառաջին աւուրսն ոչ գայր Բրեատացին առ քոյրն պատանւոյն, և քոյրն յեղբօրէն զանխուլ կարծէր

զբանն. ուստի և Եղբայրն ասէր առ քոյրն զայս ինչ. "Լուր առհասարակ զհամբաւի հարեալ էր առ Հռոմայեցիս, եթէ յաւագաց ոք և 'ի Ճոխից մնանէ ասա առ քեզ։ Ո՞ոք արդեօք ի՞նչ դա. եթէ արդարև՝ որպէս ասեն՝ առաքինութեամբ ակնաւոր ի՞նչ այրդ և հոյակապ, որ զամենայնն խառնակեալ չփոթէ՝ մարտ պատերազմին՝ երբէք չհայի 'ի զարմն. և ակամայացեալն գործ՝ ամօթ 'ի նեղքս ածել ոչ ունի. սակայն յանպատապար մնալ արդարութեանն՝ գեղեցիկ արդեօք բախտ ի՞նչ մարդասիրութիւն գտանել 'ի հարստահարիչ անդր"։ Ապա առաքեաց քոյրն և կոչէր զԲրեատոսացին, և ծանօթս նմա տայր զեղբօրէն. և անդ Եղբայրն գործակից զինքն ընծայեալ ըղձին նորա, և 'ի վերին երեսս ասէր՝ իւրոմէն խրատու քաջամոյն քան զառաջինն և հեշտալուր ևս զքոյրն յարդարել բարբարոսին. և այնպէս ինն յինքն առեալ յանգուցանէր զայրն, զի և հեշտեաւ զգերեալն 'ի տուփանաց զայրն վարձկան ուծացոյց յԱննիբալայ, և սադրեաց հայեցոյց զնա 'ի յոյս մեծամեծ պարգևաց 'ի գիմաց Փաբիոսի։ Արդ զբանն՝ օրինակ զայս պատմեն բազումք։ Բայց կէսք ասեն ոչ Տարանտացի, այլ Բրեատացի աղգաւ և հարձ Փաբիոսի զկինն՝ որ յանկոյց զԲրեատացին. և լուեալ կնոջն՝ եթէ իշխան Բրեատացւոց զօրականին է իսկ իւր քաղաքացի և ծանօթ, զգացոյց Փաբիոսի և եկ չղքաւ 'ի նեղքոյ պարապացն բերան 'ի բերան խօսել

ընդ նմա, և յիւր կողմն առեալ յանգոյց յայնժամ զայրն։

Յետ այսորիկ ապա դուն դործէր Փաբիոս հնարիմաց խորհրդով 'ի բաց զԱննիբաղ հեռացուցանել 'ի վայրաց անտի. առաքեաց առ զօրականն պահապան 'ի Ռեգիոս՝ ելանել ասպատակ սփռել 'ի Բրեատիա, և մարտ դնել կռուել ընդ Կաւղոնիայ։ Եւ էին նոքա թուով ութ հազար, 'ի դասալիք զինուորաց անտի բազումք 'ի նոցանէն անշուքք և սինլքորք որերոյն՝ զոր խաղացոյց Մարկեղոս 'ի Սիկիլիոյ. զի և կորուստ մարդկանն այնորիկ ոչինչ այնպէս ցաւ և տուգանս 'ի վերայ ածէր քաղաքին. զորս և առաջի արկանելով ակն ունէր Փաբիոս խայծել զԱննիբաղ և 'ի բաց տանել 'ի Տարենտեայ, որ և եղև իսկ. քանզի աճապարեաց Աննիբաղ և խաղաց դիմեաց անդր հանդերձ զօրու։ Եւ ապա որ օր վեցերորդ էր պաշարմանն Տարանտեայ 'ի Փաբիոսէ, պատանին այն որ 'ի ձեռն քեռն բանագնաց լեալ իսկ էր ընդ Բրեատացւոյն՝ ջղքաւ առ նա գիշերի և զնեաց ճշդիւսիւ զվայր պահպանութեան նորա՝ որ մասնաւոր հանդերձեալ էր լինել։ Ապ Փաբիոս ոչինչ կամեցեալ զելս իրացն առ 'ի մասնութենէն ևեթ, ածեալ բերէր ընդ իւր լուիկ գունդ մի 'ի վայր անդր. իսկ այլք առհասարակ 'ի կողմանց կողմանց դիմեալք յարձակեցան 'ի վերայ պարսպացն ընդ ծով և ընդ ցամաք ձայնիւ մեծաւ և աղաղակաւ և խռովս հարկանէին մեծամեծս, մինչև ամ

բոխ սասաիկ Տարանտացւոցն եկին խռնեցան, մարտ եղեալ կռուէին ընդ պատուաբամարտսն. ապա Բրեատացին նշան տըուեալ Փաբիոսի զքաջագէպ ժամուն, և այնպէս խուժեալք ընդ սանդուղսն 'ի վեր հասին կալան զքաղաքն։

Այլ թուի թէ յայնժամ 'ի պատուասիրութեանն նկուն գտաւ Փաբիոս։ Քանզի հրաման ետ առաջին խոզնոզել զԲրեատացիս. զի մատնութեամբ առնուլ քաղաքին մի 'ի վեր ելցէ. սակայն վրէպ գտաւ 'ի խորհրդոյն. զի և կեղտ անուն 'ի վերայ այնր ժառանգեաց՝ իբրև այր ուխտադրուժ և այր անագորոյն։ Ընդ տասպատ անկանէին բազումք 'ի Տարանտացւոց, և բիւրք երեք 'ի նոցանէ յայնժամ վաճառեցան։ Իսկ քաղաքն յառ և յապուր մատնեցաւ զօրականին, և առեալ ածին 'ի հասարակաց գանձարանն տաղանդս երեքհազար։ Բայց 'ի կողոպտել զամենեսեան, ասեն՝ դպրապետին յայնժամ հարցանել զՓաբիոս վասն աստուածոյն. այսպէս կոչէր նա զնկարս պատկերացն և զանդրիս նոցա. ետ պատասխանի Փաբիոս, Թողցո՛ք մեք Տարանտացւոցդ զուրպմէալ աստուածսն։ Սակայն առ և տարաւ 'ի Տարանտեայ զանդրին անարի զՀերակլեայ, և արձանացոյց 'ի Կապետոլիոն. կանգնեաց առ նմին և զիւրական պատկերն ձիաւորեալ 'ի պղնձոյ։ Այլ յայսոսիկ անտեղի ևս քան զՄարկեղոս երևեցաւ Փաբիոս. կամ թէ զՄարկեղեայ հեզութիւնն և զմարդասիրութիւնն

առաւէլ ևս պքանչացոյց, ըստ որում 'ի վարսն նորա գրեալ կայ։

Այլ պատմեն՝ եթէ Աննիբալ 'ի շտապ տագնապի զհետս սնդեալ, այն ինչ հեռի քառասուն ասպարիսաւ՝ լուեալ զառումն քաղաքին, ասաց յայտնապէս զայս ինչ. "Գոյ ուրեմն և Հռոմայեցւոց այլ ոմն Աննիբալ. քանզի կորուսաք զՏարանտացւոց քաղաքն այնպէս՝ որպէս և առաք"։ Եւ առանձինն ապա առ բարեկամն խոստովան եղև այս առաջին, եթէ որ անդուստ 'ի վերուստ դժնդակ գիտէր գրաւէլ զԻտալիա առ ձեռն բանակաւոր, արդ այժմիկ և անհնար ասէ։

Իսկ Փաբիոս յաղթանակի հանդէս յետ այնորիկ հրամայէր այս երկրորդ անգամ՝ մեծաշուք քան զառաջինն. իբրու այն որ ախոյեան քաջ յարեաւ մրցեցաւ ընդ Աննիբալայ, և հեշտին հարեալ վատթարեաց զամենայն արարս նորա, զի և ամենայն կապք և հանգոյցք և լամբք Աննիբալայ վատեալ լուծան այնուհետև 'ի կորուստն։ Քանզի զօրք Աննիբալայ էին իսկ յայնժամ կէս մի 'ի դրդանաց և 'ի մեծութենէն մեղկեալք, և կէս մի՝ յանդուլ մարտիցն խոնջեալք և վատեալք։

Բայց անդանօր յառնուլ Տարանտոնի յԱննիբալայ, Մարկոս Լեւկիոս քաղաքապահ յայնժամ տեղի տուեալ ապաւինեցաւ 'ի դղեակ բերդին, և քաջութեամբ կալաւ զնա մինչև յանդրէն դարձ Հռոմայեցւոցն։ Արդ սա այս Լեւկիոս խեթիւ

հայեցեալ ընդ փառան Փաբիոսի՝ իբրև յա-
ւուր միում 'ի ծերակուտին խեռացեալ 'ի
նախանձուէ և 'ի պատուոյն՝ ասէր, եթէ ոչ
Փաբիոս արդեօք պատճառք եկաց միւսան-
գամ առմանն Տարանտեայ՝ այլ ինքն գլխո-
վին, Փաբիոս ծիծաղեալ էտ պատասխա-
նի. "Ճշմարիտ ասէս զայդ. զի թէ քո չէր
կորուսեալ զքաղաքն, իմ չէր միւսանգամ
գտեալ զնա":

Այլ հռովմայեցիք 'ի մեծապէս շուքն
Փաբեայ յաւելեալ՝ կարգեցին և զորդի նո-
րա զՓաբիոս 'ի հիւպատոս: Արդ առեալ
որդւոյն զիշխանութիւնն՝ մինչդեռ պարա-
պեալ կայր 'ի մարտս, հայր նորա յերիվար
աշտանակեալ կամ առ ծերացեալ հասա-
կին և տկարութեանն՝ կամ առ 'ի փորձ
ինչ որդւոյն, դէմ եդեալ այնպէս գնայր
դէպ ուղիղ առ որդին 'ի խռան բազմու-
թեանն. տեսեալ զնա 'ի բացուստ պատա-
նին՝ ոչինչ հանդուրժեաց. զմի ոք 'ի պաշ-
տօնէիցն առեալ արձակէր, պատուէր տայր
'ի վայր յերիվարէն իջանել հօրն, և այնպէս
հետի գալ եթէ իրք ինչ իցեն նմա ընդ հիւ-
պատոսին: Ընդ այս մեծապէս դառնա-
ցեալ առհասարակ՝ լուռ և անշշունջ կայ-
ին անբթիթ զակն 'ի ծերունին յառեալ
Փաբիոս, զիսիրդ բերցէ նա անփառունակ
կրկին: Իսկ ծերունին յայնժամ փութա-
նակի իջեալ 'ի վայր, մեծաքայլ ընթացաւ
առ որդին. եկն և գիրկս արկեալ համբու-
րեաց զնա և ասէ. "Քաջ իսկ խորհիս դու
և գործես՝ ո՞վ որդեակ. գիտես ճշդիւ՝

յոյց վերայ իշխան կացեալ է քո, և քանիսն է իշխանութիւնդ՝ զոր առեր։ Սապէս աւադիկ և մեք և մերն նախահարք բարգաւաճ կացուցաք զՀռոմ քաղաք. ըզմեր ծնողս և զորդիս՝ ցանդ երկրորդ դասեալ փառաց հայրենեացն"։ Եւ պատմեն՝ եթէ և նախահաւն Փաբիոսի՝ մեծափառ և մեծազօր 'ի Հռոմայեցիս, հնդիցս անգամ կացեալ հիւպատոս և յաղթանակս տարեալ գեղեցիկս 'ի մարտս մեծամեծս, և ապա 'ի կարգել որդւոյն հիւպատոս, ինքն իբրև պատուիրակ հետեւէր ընդ նմա 'ի մարտ պատերազմին. և 'ի յաղթանակել որդւոյն ամբարձեալ 'ի քառաձիս, հայրն զհետ երթայր երիվարաւ 'ի միասին ընդ այլոց. և թէպէտ և տէր 'ի վերայ որդւոյն, և անուն ևս կարդային նմա՝ կարի իսկ քաջ, Քաղաքացէոյն Բնաւէց Վեհագոյն, համայն և այնպէս՝ ինդամիտ հպատակէր նա օրինացն և իշխանին։ Սակայն և ոչ յայդոսիկ միայն այս աւադ այր գոսաւ պանչելի։

Զայնու ժամանակաւ դէպ եղև մեռանել որդւոյս այս Փաբիոսի, և տարաւ նա աղէտիցս մեծապէս չափաւորութեամբ իբրև այր մտաւոր և հայր որդեսէր. քանզի և զԱրձանական զնեերբող որդւոյն՝ զոր և աղգականք սովորեցան առնել 'ի յուշարկաւորութիւնս հոյակապ մարդկանն, ինքնին նա հրապարակեաց եղեալ՝ ապա և 'ի գիր ևս արձանացոյց զՃառն։

Բայց Սկիպիոն Կուռնելիոս արձակեաւն Յիբերիա, այն՝ որ 'ի սահմանաց անտի վա-

նեաց հալածեաց զԿարքեդոնացիս և 'ի մարտս բազում պատերազմաց 'ի պարտու-թիւն մատնեաց զնոսա, և ազգս բազումս և քաղաքս ընդ ձեռամբ նուաճեաց Հռոմայեցւոց և նահատակութիւնս գեղեցիկս 'ի ներքս եբեր, սա իբրև դարձ արար 'ի Հռոմ քաղաք՝ փառս մեծապէս և ասպնջականութիւն այնչափ ժառանգեր անձին՝ որպէս և ոչ զք այլ երբէք. ապա և 'ի հիւպատոս կարգեալ, խելամուտ ևս լինէր՝ զի մեծաց ևս նահատակութեանց առ 'ի նմանէն ակնկալեալ մնային ժողովուրդք։ Արդ թուէր իմն այնպէս Սկիպիոնի, եթէ անդէն յԻտալիա միւսանգամ 'ի մարտ ընդ Աննիբաղայ կռաւէլ՝ 'ի վաղնջուց իրաց ինչ իցէ և 'ի յոյժ հնացելոց. և կայր և մըտախորհ լինէր խաղալ ըստ աշխարհն, և առհասարակ զԿարքեդոն և զԼիբիա ընուլ զեղուլ զինու զարդու և զօրու և աւերել քանդել զդաւառան զայնոսիկ, անդանօր առեալ տարեալ զմարտ պատերազմին. և ապա ոգւով չափ գուն գործէր Թեւակոխէր 'ի նոյն դրդեալ սադրեալ և զամբոխ քաղաքին։ Իսկ անդուստ Փաբիոս արհաւիրս մեծամեծս արկանէր զքաղաքաւն. կայր և ցուցանէր՝ զիւրդ այր մի երիտասարդ անհանձարաբար առեալ խարդաւանէ զնա 'ի մեծն յայն և 'ի վերջին վտանգ։ Ապա Թեւակոխէր և ինքն, ոչ բանից խնայէր՝ ոչ գործոց՝ ասել և առնել զամենայնն, և խոչ և խուԹ արկանէր խորհրդոյն. և Թէպէտ և ցծերակոյսն հաւանեցոյց, այլ ոչ և զնու-

ժանն. Թուէր իմն նոցա՝ եթէ 'ի յաչաղա-
նաց Փաբիոս հակառակ ամբարձաւ Սկի-
պիոնի՝ այն որ յաջողեալ իսկ էր յամենայն
'ի գործս իւր. և զի՝ հոյակապ նահատա-
կութիւնս 'ի նեղքս բերեալ նորա, և համ-
բաւն կատարած մարտին ածեալ, կամ թէ
գոնեա յԻտալիոյ 'ի բաց տարեալ, ապա 'ի
վատաց սակի զՓաբիոս գրեսցեն՝ որ այն-
չափ յերկարագոյնս թարթափեցոյց ըզ-
մարտն։ Այլ թուի թէ զառաջինն առ 'ի
բազում հանճարոյն և 'ի տնկակից աներ-
կևանութենէն շարժեցաւ Փաբիոս զդէմ
ունել նորա, զահի հարեալ 'ի մեծապէս
վտանգէն. բայց ապա՝ զիարդ արդեօք ծայ-
րայեղ թեւակոխեալ նա 'ի բանն՝ 'ի նախան-
ձաւորն կրից և 'ի պատուոյն, քար ընդ ոտն
եկաց բարգաւաճութեն Սկիպիոնի։ Վասն
որոյ և զԿրասոս զՀոմիշխան հիւպատոս
ածէր հաւանեցուցանէր, մի 'ի ձեռս թո-
ղուլ Սկիպիոնի զառաջնորդութիւն բանա-
կին, և մի տեղի երբէք տալ նմա. այլ ե-
թէ այնպէս լաւ իցէ, ինքն ընդ նորա ան-
ցեալ խաղասցէ 'ի Կարքեդոն։ Առ այս
դարձեալ և թոյլ չէտ Փաբիոս պաշտել
նմա զպէտս արծաթոյ արշաւանին, և ստի-
պեցաւ Սկիպիոն և չոքաւ և կազմէր անձին
զպէտսն 'ի քաղաքաց անտի Տիւրրենիոյ՝ որ
և մտերմութեամբ իսկ էին ընդ նմա և կա-
մակատարք նորա։ Այլ Կրասոս մնաց առ
տնին, զի անդատին հեզ և անկռիւ վիճա-
կեալ էր բարոյից, և զի՝ և յաստուածային
օրէնսն քահանայապետ մեծ էր նա։

Բայց Փաբիոս միանգամ զդէմ կա-
լեալ Սկիպիոնի ընդ այլ ճանապարհ, խոչ
ընդ ոտն լինէր արանց երիտասարդաց՝ որ
կամակարութեամբ խաղային ընդ նմա 'ի
մարտ պատերազմի. կայր և բողոք բառ-
նայր յատեանս և 'ի ժողովուրդս, զի ոչ
շատ համարի ինքնին Սկիպիոն միայն փա-
խստեայ գնալ յերեսաց Աննիբաղայ, այլ
և ընդ իւր ձգեալ վարէ յԻտալիոյ ծովա-
գնացութեամբ և զնշխարեալ զօրականն.
պատիր յուսով յինքն զերիտասարդան յան-
գուցեալ՝ թողուլ լքանել միանգամայն և
զծնողս և զկանայս և զքաղաքն ինքնին դըլ-
խովին, որոյ առ դուրս նորա արձանացեալ
աւադիկ կայ թշնամին հաստահարուստ և
անպարտելի։ Իբրև զայս բանս կրկնէր և ե-
րեքկնէր Փաբիոս, արհաւիրս այնչափ ար-
կանէր Հռոմայեցւոց, որպէս զի և վճիռ
տուեալ կնքեցին՝ Սիկիլեան գնդին միայն
խաղալ ընդ Սկիպիոնի. դարձեալ և երեք-
հարիւրոց Իբերեան զօրականին՝ որոց 'ի վե-
րայ հատեալ իսկ էր նա հաւատարմութեանն
նոցա։ Եւ ապա թուի թէ՝ ըստ անկակից
բարուցն վարեցաւ յայսոսիկ Փաբիոս։

Այլ իբրև էանց խաղաց Սկիպիոն 'ի
Լիբիա, անդէն համբաւ գեղեցիկ նահա-
տակութեանցն նորա և արութեանցն հա-
սեալ 'ի Հռոմ քաղաք, ապա և 'ի հաստա-
տութիւն բանին և աւար մեծ կապուտ կո-
ղոպուտ թշնամեացն ժամանէր անդր. և
լուր ևս առին՝ եթէ և զթագաւորն ինքնին
զՆումադացւոց ձերբակալ 'ի գերութիւն

վարեցին. 'ի նմին ժամանակի և բանակք կրկին թշնամւոյն հրդեհեալք յաճիւն դարձան, 'ի միասին յայնժամ և ամբաւութիւն մորդկան և զինուց և երիվարաց. և զի՝ հրեշտակութեամբ ևս զԱննիբաղ յեռս կոչէին Կարքեդոնացիք, և աղերսէին ևս թողուլ լքանել զանվախճան զյոյն զայն, և դառնալ ձեռն տալ հայրենի աշխարհին: Մինչդեռ այնպէս 'ի Հռոմ քաղաքի ամենեցուն 'ի բերանի էր Սկիպիոն վասն մեծամեծ ուղղութեանցն, անդուստ Փաբիոս անդուլ ստիպէր՝ առնուլ զոք արձակել փոխանակ Սկիպիոնի. և յայն ապատան հաստատէր պնդէր՝ զոր հասարակաց զոյցդ ասէ, եթէ՝ Զ իարդ բազմավտանգ է 'ի բաղդառն միոյ թողուլ զմեծամեծ նահատակութիւնն. իբրև դժուարին յոյժ է ցանգ բարեբաստել միոյն: Եւ այսպէս դառնացոյց Փաբիոս զժողովուրդն և յաչաց ևս ելանէր նորա. զի իբրև դեգ և դժխեմ և յաչաղկոտ համարեցան զնա. կամ թէ ծերութիւն ինքնին հարեալ զնա՝ անարի համբուն և յուսաբեկ յարդարեաց զայրն, զի յանչափն դա զահի հարեալ կայ յերեսաց Աննիբաղայ: Քանզի և ոչ յայնժամ յորժամ տեղի տուեալ չուեաց Աննիբաղ Լիտալիոյ հանդերձ բանակաւն, թոյլ ապար Փաբիոս քաղաքին մնալ յանքոյթ և յանդորրու 'ի խնդին իւրեանց, այլ շուրջ գայր և բարբառէր և ասէր՝ եթէ անշուշտ յայնժամ 'ի մեծ ևս վտանգ պաշարեալ կան իրք քաղաքին. քանզի զԱննիբաղ յայն

ժամ նոքա՝ ևս վայրենացեալ անդանօր 'ի Լիբիա առ Կարքեդոնիս, զոցեն 'ի դիմի հարեալ Սկիպիոնի հանդերձ զօրականօքն՝ յորս այն ինչ ջերաջերմ ցայտեցան աբեանց ապաժոյժք բազմաց ինքնակալաց և իշխանապետաց և հիւպատոսաց։

Իբրև զայս բանս ասէր Փաբիոս, անդրէն միւսանգամ միջաբեկ յուսակտուր առնէր ողջոյն զքաղաքն. զի և 'ի բացարձակն Լիբիա մարտ մղեալ պատերազմին՝ նոքա 'ի Հռոմ քաղաքի իբրև 'ի մօտալուտ արհաւրաց դողային։ Այլ ոչ և հարուստ ժամանակք անցին 'ի վերայ, ինքնին Սկիպիոն հարեալ խորտակեալ զԱննիբաղ՝ և զգոռոզութիւն ամբարտաւանութեանն զԿարքեդոնի նկուն արարեալ, յոյժ խնդացոյց զքաղաքացիսն իւր'ի վեր քան զյոյս ակնկալութեան նոցա՝ և անդրէն յոտին կանգնէր զՀռոմայեցւոց տէրութիւնն, իբրև արդարև դղորդեալ սասանեցաւ նա յուժգին մրրկաց։ Սակայն Փաբիոս Մաքսիմոս ոչ կեցեալ մինչև 'ի վախճան մարտին, ո՛չ ըզպարտութիւնն լուաւ զԱննիբաղայ և ոչ զմեծ և զանեբիկեան ցնծութիւնն եռեալ ըզհայրենի աշխարհին. քանզի 'ի ժամանակին՝ յորում Աննիբաղ տեղի էտ յԻտալիոյ՝ հիւանդացաւ նա, որով և մեռաւ իսկ։ Արդ պատմեն, եթէ զԵպամինոնդաս 'ի հասարակաց դրամոցն թաղեցին թեբացիք. քանզի չքաւոր յոյժ մեռաւ այրն, զի և ոչ մի ինչ յետ մահուն գտաւ 'ի տան նորա՝ բայց դանկ մի երկաթի. իսկ Հռոմայեցիք

ոչ 'ի հասարակաց դրամոց եւ տուն յուլսը-
կաւորութիւն Փաբիոսի, այլ այր այր իւ-
րաքանչիւր տայր զմի 'ի դրամոց անտի 'ի կա-
րի մանուանցն՝ ոչ առ կարօտութեանն ինչ,
այլ զի Թաղեսցեն զնա իբրև հայր ժողո-
վրդեանն, արդոյ և պատուական զմահն
նորա կարդելով՝ ըստ արժանի կենաց քա-
ղաքավարութեան նորա։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՊԵՐԻԿԼԵԱՅ
ԵՒ
ՓԱԲԻՈՍԻ ՄԱՔՍԻՄՈՍԻ

ԱՐԴ կենաց քաղաքավարութեան ա-
ռանցդ այդոցիկ՝ այսպիսի ինչ է պատմու-
թիւնն։ Բայց քանզի միանգամայն և 'ի քա-
ղաքական առաքինութեան և 'ի զինուորա-
կան՝ շատ ինչ և գեղեցիկ նահատակութիւն
'ի ներքս բերին երկաքանչիւր սոքա, բէր
այսուհետև առաջին մեք զզինուորականէն
բուռն հարցուք, ասել. Եթէ Պերիկղէս 'ի
ժամանակին՝ յորում Ժողովուրդ Ա թենա-
ցւոց քաջապէս նահատակեալ էր 'ի գործս
և ինքնին 'ի մեծ աւագութիւն հասեալ և
յաւէտ հաստահարուստ եղեալ էր, կա-
ցեալ նոցա առաջնորդ՝ այնուհետև հա-
սարակաց բարեբաստութեամբ քաղաքին և
կորովութեամբն ցանգ յանդորրու եկաց և
անսասանելի։ Իսկ Փաբիոս՝ քանզի 'ի դժնի-
դակ և 'ի բաղմալէտ ժամանակին էառ նա

զանձամբ զնշխանութիւն քաղաքին, ոչ արդեօք 'ի գեղեցիկ ինչ կայս նորա առեալ պահեաց զնա, այլ 'ի չարեացն 'ի լուսագոյնսն վերառեալ փոխադրեաց զնա։

Եւ արդեօք Պերիկղեայ, Կիմոնին նահատակութիւնք քաջութեան և Միլտոնիդեայ և Լէոկրատեայ յաղթանակքն և բազում և մեծամեծ ուղղութիւնք առաքինութեանն Տոզմիդեայ, տեղի եառուն սօնախմբութիւնս կատարել և աշխարհաժողով հանդէսս կարգել 'ի զօրավարութեանէ իւրում 'ի վերայ քաղաքին, քան եթէ մարտիւ պատերազմի գրաւել առնուլ սահմանս և պահել։ Իսկ անդանօր Փաբիոս ակն յանդիման շատ ինչ փախուստս տեսեալ զզօրաց և պարտութիւնս, բազում և մահունս և հարուածս և կոտորածս զինքնապետաց և զզօրավարաց. առ այս՝ և զլինձս և զդաշտագետինս և զանտառս մայրեաց լցեալս դիակամբք զօրականին. դարձեալ և զհոսանս գետոց մինչև 'ի ծով անդր յարիւն ապաժոյժ գնացեալ և 'ի մեռելութիւնս ամբաւս, համայն և այնպէս փութոյ սնդութեամբ և հաստատութեամբ սրտին զանձամբ զքաղաքն առեալ և մեծապէս խնամ ածեալ, ոչ ինչ թոյլ եա՝ զի 'ի նոցունց գլորմանէն գթեալն՝ խապառխարդաւանեալ տապալեսցի քաղաք։

Թէպէտ և կարծեսցէ ոք արդեօք, եթէ ոչինչ այնպէս դժնդակ լցէ առաջնորդել քաղաքի՝ որ յայնչափ աղէտս հիւծացեալ լցէ, և 'ի հարկէ առն քաջի և առաքինւոյ

հպատակ կացցէ. ըստ որում և դժնդակ յոյժ է սանձ և երասան արկանել խեռու թեան և ստամբակութեան ժողովրդեանն՝ որ 'ի բարեբաղդ և 'ի գեղեցիկ ելից 'ի վեր վազեալ և 'ի զեղխութիւնս անառակեալ լցէ. զոր օրինակ Պերիկղէս ինքնին՝ Թուկիդէ՝ մեծապէս զԱթենացիսն 'ի ժամանակին սանձեաց և նկուն արար։ Այլ քանզի յայնժամ Հռոմայեցւոց մեծամեծք յոյժ և բազմադէմ պատահեցան արկածք աղէտից, յայսմանպէս ապա 'ի նեղքս ընծայեցուցին մեզ զՓաբիոս արդարև այր մեծ և քաջահանձար և արի, այն՝ որ ոչ սասանեցաւ ինչ և ոչ փոխեցաւ երբէք 'ի խորհրդոց անտի իւրոց։

Իսկ Սամոսին՝ զոր առ կալաւ Պերիկղէս՝ հանդէպ 'ի կշիռ դիցուք մեք զՏարանտեայ առումն 'ի Փաբիոսէ 3։ Իսկ Եւբիայ առմանն 'ի Պերիկղեայ՝ զքաղաքացն Կամպանիոյ գրաւէլ 'ի Փաբիոսէ. քանզի զԿապուա քաղաք Փուրիոս և Ապպիոս հիւպատոսք գրաւեալ առին։

Բայց 'ի ճակատամարտի՝ Թուկիդէ յաղթութիւնս ոչ տարաւ Փաբիոս, բաց յայնմանէն՝ յորում առաջին կարգեաց նա յաղթանակ. իսկ Պերիկղէս յաղթանակս ինն Թուով ընդ ծով և ընդ ցամաք կանգնեաց 'ի վերայ թշնամեաց։ Այլ սակայն և ոչ պատմեն այնպիսի ինչ նահատակեալ Պերիկղեայ՝ զոր միանգամ նահատակեցաւ Փաբիոս, յորժամ զՄինուկիոս ինքնին յափշտակեաց Եհան 'ի ձեռաց Աննիբաղայ,

և փրկեաց ապրեցոյց առհասարակ զզօրս Հռոմայեցւոց. և արդեօք գեղեցիկ յոյժ էր նահատակութիւնն, և միանգամայն 'ի դէմս եբեր զփաբեայ զարութիւնն և զհանճարն և զբարութիւնն։ Եւ ներհակաբար՝ ոչ պատմեն՝ եթէ և այնպիսի ինչ յանցեաւ Պերիկղէս, որպէս գթեացն Փաբիոս 'ի հնարիմաց դաւանան արքառոցն Աննիբաղայ. քանզի 'ի ձեռս բերեալ զթշնամին՝ որ ինքնին և ըստ դիպաց եկեալ թակարթեալ կայր յանձուկն անդր՝ թոյլ ետ 'ի գիշերի գաղտաբար ելանել. և ապա 'ի գալ աւուրն զփորձ էառ զբռնութեան նորա. և մինչ գեգերէր՝ նա կանխեաց. և յորժամ 'ի մարտ մխեցաւ՝ նա յաղթեաց։

Այլ եթէ պարտ և արժան ելէ քաջի զօրավարի ոչ միայն յորս կանն՝ հայել, այլ և որոց յառաջոյ կանն՝ ուղղապէս խելամուտ լինել, Աթենացիք այնպէս 'ի գլուխ հանեալ կատարեցին զմարտն, ըստ որում ինքնին Պերիկղէս նախազգած եղև և նախապաքարոզ. քանզի 'ի խնդիր ելեալ բազմին՝ կորուսին զզօրութիւն իւրեանց։ Իսկ Հռոմայեցիք՝ ներհակաբար խորհրդոցն Փաբիոսի առեալ արձակեցին զՍկիպիոն 'ի վերայ Կարթեգոնացւոցն. տիրացան գրաւեցին զամենայն՝ ոչ ըստ դիպաց ինչ, այլ խմաստութեամբ և արութեամբ զօրավարին՝ որ 'ի պարտութիւն մատնեաց զթշնամին. որպէս զի և դէպք ձախողակք հայրենի աշխարհին վկայեն Պերիկղէսայ, եթէ գեղեցիկս ուրեմն խորհեցաւ նա. իսկ նահատակու-

թիւնք Սկիպիոնի նշաւակեն զՓաբիոս՝ է-
թէ գլխովին յանցեաւ նա։ Ա՛ռ այս՝ և հա-
ւասարապէս յանցանք են զօրավարին՝ ան-
կանել յաղէտս ոչ գոլով նախատես, դար-
ձեալ և զդէպ ժամանակ գեղեցիկ նահա-
տակութեանցն երկմտութեամբն հանել՝ի
ձեռաց։ Քանզի՝ որպէս հաւանեալս եմ՝
անփորձութիւնն միայն է՝ որ զյանդգնու-
թիւնն ծնանի և զարիութիւնն բառնայ։
Այսոքիկ աւադիկ առ՝ի մէնջ յաղագս
զինուորականին։

Իսկ՝ի քաղաքականութեանն՝ մեծապէս
մեղադրութիւն է Պերիկղէայ մարտ պա-
տերազմին, զոր ասեն առ՝ի նմանէն դըր-
դեալ ոգւով չափ՝ի հակառակել նորա՝ մի
խոնարհել տեղի տալ Լակեդեմոնացւոցն։
Այլ ինձ թուի, եթէ և ոչ Փաբիոս Մաք-
սիմոս ինքնին՝ խոնարհէր տեղի տայր Կար-
քեդոնացւոցն, այլ քաջապէս արութեամբ
վտանգ յանձն առնոյր նա առհասարակ՝ի
վերայ տէրութեանն։

Այլ քաղցրութիւն Փաբիոսի առ Մի-
նուկիոս և հեզութիւնն՝ յանդիմանեալ կըշ-
տամբէ զաղմուկն հարեալ՝ի Պերիկղէայ
ընդդէմ Կիմոնի և Թուկիդիդէայ, որ ամբ
գոլով նոքա բարիք և լաւք և ազնուապե-
տականք՝ ՝ի ձեռն նորա վտարանգի տարա-
գրեցան խեցեկոյտ վճռով։ Սակայն մեծ
ևս էր զօրութիւն Պերիկղէայ և իշխանու-
թիւն աւագութեանն, ուստի և ոչ ումեք
՝ի զօրավարաց անսի անփորձից թոյլ եա
աղէտս ինչ հասուցանել՝ի վերայ քաղա-

քին. միայն Տողմիդէս զերծաւ 'ի ձեռացն՝ որ զօրացաւ խաղալ դիմել ընդդէմ Բիով տացւոց. իսկ այլք առհասարակ նմա կուսակիցք էին և համամիտք 'ի պատճառս աւագութեան զօրութեան նորա։ Իսկ Փաբիոս՝ որ առանձինն յանքոյթ կայր և անյանց՝ անբաւական գոլով առ 'ի զայլս սանձակոծել, խոնարհագոյն թուի քան զՊերիկղէս։ Քանզի ոչինչ արդեօք յայնչափ աղէտս անբաւս պաշարէին հռովմայեցիք, եթէ Փաբիոս ինքնին այնչափ ինչ զօրէր առ նոսա, որչափ առ Ա՛թենացիսն՝ Պերիկղէս։

Բայց 'ի մեծանձնութեան մասին յարհամարհութիւն ընչից, մին զանձն 'ի նեղքս ընծայեցոյց ոչինչ առնլով 'ի տուողացն. և միւսն շատ ինչ ընձեռելով կարօտելոցն՝ իւրովք դրամովք փրկանաւորեաց զգերին. թէպէտ և ոչինչ այնպէս մեծ էր թիւ համարոյն, այլ որչափ տաղանդաց վեցից 4։ Իսկ վասն Պերիկղէսայ ոչ ոք թերևս բաւական ևս ասել, քանզի 'ի զօրութեան իւրում էր նորա 'ի ձեռս՝ ամբաւս կուտել և պաշտել 'ի նիզակակցաց անտի և 'ի թագաւորաց. 'ի վերայ այսր՝ պարգևաց ինչ երբէք երեսս ոչ արար և անկաշառաբեկ գլխովին պահեաց զանձն։

Բայց դաստակերտացն այնոցիկ հոյակապ մեծութեանն և տաճարացն և շինութեանց կերտուածոցն՝ որովք զարդարեալ պճնեաց Պերիկղէս զԱ՛թէնս, ոչինչ արդեօք արժանի՝ միանգամայն 'ի միասին ամենայն արարոցն պատուասիրութիւնք 'ի

Հռոմմ որ նախ քան զԿԵսարսն՝ երբէք 'ի կշիռ համեմատութեան գայցեն. այլ յոյժ գերիվերոյ քան զայնոսիկ և անբաղդատ արդեաք՝ մեծագործութեամբն իւրեանց և մեծվայելչութեամբն Ա.թենայքն նախապատիւք և բարձերէցք են։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յն. բառն Ἀχροχορδών, (այն է՝ Լտ. Verruca), ըստ նմանաձայնութեանն՝ և նոյնանիշ հանդիպի գաւառական հայ բառիս՝ Գոբպոնոկ, զոր ռամկ. ասեմք՝ Կոյնյ:

2. Ջանուն գերահռչակ Կարքեդոնացւոյս Յոյնք ոչ Annibal կոչեն՝ որպէս հռովմայեցիք, այլ Ἀννίβας: Ա՛յլ առ մեզ միանգամ սովորեալն՝ է Աննիբաղ:

3. Բայց սակայն Տարանտեայ առումն բազմագոյն մասամբ 'ի մատնութենէն յաջողեցաւ:

4. Թիւ տաղանդաց վեցից աստանօր՝ է վրիպակ գրչաց 'ի Բնագրին. քանզի և ըստ նորուն Պլուտարքեայ 'ի վարսն Փաբիոսի 'ի վերոյ, է հաշիւն տաղանդաց տասնից:

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ԱՂԿԻԲԻԱԴԵԱՅ

ԵՒ

Կ. ՄԱՐԿԻՈՍԻ ԿՈՐԻՈՂԱՆՈՍԻ

ԱՂԿԻԲԻԱԴԷՍ

ԱՂԿԻԲԻԱԴԵԱՅ զարմն անդուստ 'ի վերուստ՝ Թուի թէ՝ սկզբնահայր իւր ունի զԵւրիսակէս զԱյասայ որդի. իսկ մայրենեաք էր նա Աղկմէոնիեան՝ ծնեալ 'ի Դիոնոմաքեայ 'ի դստերէն Մեղակլէսի։ Իսկ հայրն նորա Կղինիաս՝ սեպհական իւր եռաթիռն յԱրտեմիսիոն մեծապէս փառաք նաւամարտիկ կռուեցաւ. և ապա ընդ Բիովոտացւոց մարտ եղեալ մերձ 'ի Կորովնիա՝ անդ անկեալ մեռանէր։ Բայց զԱղկիբիադէս՝ Պերիկղէս և Արիփրոն Քսանթիպպոսի որդիք՝ ազգակիցք նորա դաստիարակեալ վարժէին։ Այլ ասեն ոչ յանիրաւի, եթէ Սոկրատայ մտերմութիւն սիրոյն և բարեկամութիւնն առ Աղկիբիադէս՝ ոչ դուշնաքեայ ինչ փառս նմա 'ի ներքս եբեր։ Եւ եթէ զՆիկիասայն և զԴեմոթենեայ և զԼամաքոսին և զՓորմիոնին և

զԹէոսեբուղոսին և զԹերամենէսին, որք աւագք և հոյակապք առ իւրեանց ժամանակաքն, ոչ գիտեմք մեք ուրեք երբէք անուանեալ զմարս նոցա. իսկ զԱղկիբիադեայ և զդայեակն գլխովին գիտեմք ազգաւ Լակոնացի, Ամիկղա անուն. և գիտեմք դարձեալ՝ եթէ Զովսիրոս եկաց նորա դաստիարակ. զառաջինդ՝ յիշատակէ Անտիսթենէս, և զվերջինդ՝ Պղատոն:

Իսկ յաղագս գեղոյն Աղկիբիադեայ՝ թերևս և ոչ պէտք ինչ իցէն ասել. զի առոյգ մնաց գեղն 'ի մարմնի նորա յամենայն հասակին և յամենայն ժամանակի. և կայտառ և սիրուն ընծայեցաւ նա միանգամայն և 'ի տիս տղայութեանն և 'ի պատանեկութեանն և 'ի տիսն այրական: Քանզի ըստ Եպիկիդեայ առասացութեանն, չէք հնար՝ եթէ ամենայն գեղաւորացն գեղեցիկ իցէ և աշնայնոյն եղանակ. այլ այս Աղկիբիադեայ վիճակեցաւ, և այլոց ևս սակաւուց, առ քաջաբոյս արարածոյն և առոգութեան մարմնոյն: Առ այս և ասեն, եթէ և թլուատութիւնն՝ նազելի յարդարեր զձայնն, և հեշտալուր զբարբառն նորա և լի շնորհօք: Զթոթովել լեզուին յիշատակէ և ինքնին Արիստոփանէս 'ի կատակերգել անդ իւրում՝ զԹէորոս զոմն՝ օրինակ զայս. "Ապա յետ այնորիկ Աղկիբիադէս ասէ առիս թոթովելով: Տեսէ՞լ զԹէոլոս, դլուխ ունի դա զադլաւու: Այլ ուղղապէս զայս թոթովեաց Աղկիբիադէս" 1: Եւ Արքիպպոս դարձեալ կատա-

կելով զորդին Աղկիբիադէայ, ասէ այս-
պէս. "Քայլէ դա սամնարելով և զհան-
դերձն քարշելով, զի հանգունատիպ հօրն
յաւէտ կարծեսցի լինել. և բեկբեկէ դա
զպարանոցն, և թոթովէ":

Ա՛յլ բարքն Աղկիբիադէայ յետ ժա-
մանակաց անհաւասարք երևեցան՝ որպէս
հաւանեալս եմ՝ ըստ չափոյ մեծամեծ նա-
հատակութեանցն նորա և ըստ բազմադի-
մակ անցիցն՝ որ անցին ընդ նա: Եւ քանզի
անդատլն 'ի բնութենէն բազմադէմ կրից
'ի նեղբոյ գրաւեալ էր, և պատուասիրու-
թիւն նախաթոռ՝ մեծապէս զօրացեալ էր
'ի նմա, ըստ որում է տեսանել և 'ի դէպս
տղայական հասակին նորա: Քանզի էր եր-
բեմն՝ զի նկուն եղեալ յախոյեանէն 'ի դօ-
տէկռուվ, զի մի՛ յորսայս անկցի՝ առեալ
'ի բերան զմատունս ախոյենին, իբրու ե-
թէ խածատել ուտել զձեռան, աղատ
զնա թողեալ յաղթականն՝ ասէ. "Խա-
ծատես դու ո՞վ Աղկիբիադէ՝ իբրև զկա-
նայս". անդէն կրկնեաց Աղկիբիադէս,
"Ո՛չ այդպէս, այլ իբրև զառիւծունս":
Իսկ մինչդեռ տակաւին տղայ՝ յանձուկ
փողոցի 'ի խաղալ զվէգ, իբրև նմա անկա-
նէր ձիգն, դէպ եղև 'ի ժամուն անցանել
բեռնաբարձ սայլի. իսկ Աղկիբիադէս հրա-
մայէր սայլորդին՝ զտեղն ունել, զի 'ի փո-
ղոց անդր ունէր արկանել զվէգն ընդ որ
սայլին պարտ էր անցանել. իբրև դեղջուկ
գոլով սայլորդն՝ անսատեալ յառաջէր
զընթացսն, և մանկտին խաղակից զատեան

'ի միմեանց, յայնժամ Աղկիբիադէս յոր-
սայս անկեալ առաջի սայլին տարածէր
զանձն, ստիպէր զսայլորդն այնպէս խա-
ղալ յառաջ. զահի հարեալ սայլորդին ըն-
կրկեաց զսայլն, և որք տեսին՝ ահաբեկք
ձայն բարձեալ դիմէին առ նա:

Իբրև յարբունս վարժից եհաս Աղկի-
բիադէս, անսայր հեզաբար ամենայն վար-
ժապետացն. և միայն 'ի սրնգահարութե-
նէն գլխովին հրաժարէր՝ իբրև յանփա-
ռունակ գործոյ և անարժան ազա-անոյն:
Քանզի ասէր՝ եթէ կնդնդոց բաղխել և
քնար հարկանել՝ ոչ զկերպարանն խաթա-
րեալ աղարտէ զազատ առնն և ոչ զդէմն.
այլ սրինգ հնչեցուցանել՝ այնպէս իմն թռա-
ցիր և փքուռոյց գործէ զմարդ, զի և կա-
րևոր կենակիցքն հազիւ ուրեմն ծանիցեն
զերեսս նորա: Հանդերձ այսու քնարա-
հարն բաւական է միանգամայն և ձայն ար-
ձակել և նուագ ևս յարմարել. իսկ սրինգն
համայն խնու զբերանն և արգելու զձայնն
և զբարբառն: Եւ յաւելեալ 'ի բանս իւր՝
ասէր "Թո՛ղ սրինգ հնչեցուցեն Թեբայե-
ցւոց մանկունքդ. քանզի խօսել նոքա ոչ
գիտեն. այլ մեք Աթենացիք, որպէս ա-
սեն մերն հարք, առաջնորդ մեզ ունիմք
զԱթենաս և սկզբնահայր զԱպողոն. յո-
րոց մին 'ի բաց ընկէց զսրինգն, և միւսն՝
մորթեզերծ արար զսրինգահարն": Իբրև
զայս կրկնէր և երեքկնէր Աղկիբիադէս ընդ
խաղ միանգամայն և լրջութեամբ, և այլք
գարձեալ 'ի բաց կացին 'ի վարժից անտի:

Քանզի անդէն զհամբաւի հարաւ այս 'ի տղայն ժամանակին, իբրու իրաւամբք ընդ վայր հարեալ յԱղկիբիադեայ սրնդահար արուեստին և սրնդահարն. ուստի և խափանեալ մնաց արուեստն և տարագիր յազատական կրթանացն, և յումեկէտից սակի գրեցաւ սրինդն։

Այլ 'ի թշնամանան Անտիփոնտեայ գրեալ կայ, եթէ Աղկիբիադէս 'ի տղայութեանն փախուցեալ 'ի տանէն՝ չոքաւ առ Դեմոկրատէս ոմն տարփածու իւր. և կամեցեալ Արիփրոն քարոզ կարդալ զնմանէ, արգել զնա Պերիկղէս և ասէր. եթէ նա մեռեալ է՝ աւուրբ կանուխ 'ի ձեռն քարոզիդ յերեան գայցէ դա. ապա եթէ կենդանի է՝ ողջոյն կեանքն անկենդան ելցի դմա։ Սա այս Անտիփոնտէս գրէ դարձեալ, եթէ զմի ոմն յարբանեկացն սպան Աղկիբիադէս 'ի հարուած գաւազանի յըմբշամարտին Սիբիրտեան։ Այլ այսոքիկ ոչինչ թերևս իցեն արժանահաւատք. քանզի այր ոխերիմ թշնամանագիր Աղկիբիադեայ արձանագրէ զայդ։

Արդ քանզի բազում աւագորեար և տոհմիկք եկեալ խառնեալ՝ շուք մեծապէս դնէին Աղկիբիադեայ, յայտնի էր ամենայն տեսանելեացն՝ եթէ ակնկառոյցք ընդգէղն նորա՝ այնպէս սպաս հարկանէին նմա. սակայն մտերմութիւն սիրոյն Սոկրատայ՝ վկայութիւն մեծ 'ի նեղքս բերէր առաքինութեան և գեղեցիկ բուսոյ բարուց մանկանն, զոր ինքնին Սոկրատէս յայտնա-

պէս նշմարէր 'ի դէմս կերպարանաց նորա. և զանգիտեալ յընչաւէտութենէ և 'ի փառաց պատանեաց, զի և ամբոխս բազում 'ի բնակաց և յեկաց և 'ի նիզակակցաց շուրջ գայր զնովաւ շնթել և 'ի հրապոյրս համազակերս կանխել գրաւել զմիտս նորա, ուստի և ցանգ Սոկրատէս հակէր 'ի վերայ նորա, և ամայի թողուլ չկամէր զնա՝ իբրև տունկ մատաղատունկ՝ որ 'ի ծաղկին անդէն խամրեալ պտղակորոյս եղիցի։ Քանզի և ոչ ոք արդեօք 'ի մարդկանէ այնպէս պաշարեցաւ 'ի բախտին բարեաց, և արդելաւ անխոցելի մնալ յիմաստասիրութեանն նետից, կամ յոգի հարկանիլ յանաչառն բանից, որպէս Աղկիբիադէս անդատին 'ի տղայ տիոցն փափկացեալ լուծեալ 'ի դրդանս և պաշարեալ 'ի բարեմարդիկ որերոյն՝ որ արդելուին զնա 'ի գեղեցիկ հրահանգաց վարժապետի։ Այլ սակայն նա ըստ քաջամոյն բարուցն ինքնին եկեալ ծանօթացաւ ընդ Սոկրատայ. և առ իւր ժողովեալ զնա՝ 'ի բացեայ յայլոց կացուցանէր զանձն իւր և յընչաւէտ և 'ի տոհմիկ տարփածուաց. և սերտեալ ընդ նմա և լուեալ 'ի նմանէ բանս ոչ զտարփաւորի՝ որ կնամարդին դրդանաց զհետ կրթեալ ելցէ և համբուրից և հրապուրից, այլ որ բանիւ զապականութիւն հոգւոյն նշաւակեսցէ, և զտարապարսն և զծանծաղամիտն գոռոզութեն ընդոստնեալ կոխեսցէ, "Նկուն եղեալ յայնժամ իբրև զաքաղաղ պարտեալ՝ թողոյր այնուհետև վայրանկեալ զթևսն"։

Եւ ապա յայն հաստատեցաւ Աղկիբիա-
դէս, եթէ ամենայն գործք Սոկրատայ՝ ան-
շուշտ սպասաւորութիւն է աստուածոց 'ի
խնամս և 'ի փրկութիւն արանց պատա-
նեաց։ Ուստի և անձամբ զանձն արհամար-
հեալ, և առ Սոկրատէս յակձիռս եղեալ,
և զնորա զիմաստասիրութիւն սիրեալ և ա-
ռաքինութեանն պատկառ կացեալ, ժա-
ռանգեաց և ինքն դրոշեալ իմն սիրոյ, կամ
թէ՝ որպէս Պղատոն ասաց, սէր փոխա-
գարձ. որպէս զի և առ հասարակ զարմա-
նային, տեսեալ զԱղկիբիադէս Ճաշակից
Սոկրատայ և գօտէմարտակից և վրանակից.
գարձեալ և անընդել առ այլս 'ի տարփա-
ծուաց, և կիսոցն Ճոխաբար իշխանութիւ-
ոնհար. ըստ որում և առ Անիտոսն Ան-
թեմիոնեան գործեաց նա։

Քանզի դէպ եղև՝ զի այս Անիտոս տար-
փածու Աղկիբիադեայ ընթրիս տուեալ
օտարաց՝ հրաւիրեաց և զԱղկիբիադէս.
այլ նա չառեալ յանձն երթալ և կացեալ
'ի տան և գինեհարեալ ընդ ընկերացն, էլ
ապա չոքաւ յայրատագոյնս իմն առ Անի-
տոս. և անդ առ սեամն սենեկին ընթրեաց
արձանացեալ, տեսեալ զտրապիզսն լի 'ի
նուագս ոսկւոյ և արծաթոյ՝ հրաման տայր
ծառայիցն երթալ բառնալ զկէսն 'ի նոցա-
նէ և բերել առ նա 'ի տուն. զայս ասաց և
չմոռեալ 'ի ներքս՝ տեղի էտ և դարձաւ։ Իբ-
րև գԺկամակք ընդ բանն լինէին կոչնա-
կանք՝ զի զրկեաց Աղկիբիադէս և տուահա-
կեցաւ առ Անիտոս, էտ պատասխանի Անի-

տոս և ասէ։ "Նա՛ հեզաբար մարդասիրեաց Աղկիբիադէս. քանզի որ զբոլորն տանել բաւական էր, զկէսն աւադիկ եթող մեզ"։ Օրինակ զայս վարեցաւ նա և առ այլս 'ի տարփածուաց. բայց մի ոմն 'ի բնակաց անտի ոչինչ այնպէս ընչաւէտ՝ որպէս ասեն՝ վաճառեաց զամենայն զոր ունէր, և զգինն հարիւր սատերաց առեալ եբեր առ Աղկիբիադէս և աղաչէր ընդունել. նորա ժըպտեալ և բերկրեալ և յընթրիս ևս հրաւիրեալ զայրն, իբրև մեծապէս հիւրասիրուեթեամբ կատարեաց զընթրիան, առեալ դարձոյց 'ի նա զոսկին. և պատուիրեաց ևս նմա 'ի գալ աւուրն յառնել երթալ առ կապալաւորսն քաղաքին և բարդեալ ածեցուցեալ զգինն՝ յինքն առնուլ զկապալն։ Իբրև պատճառէր այրն, եթէ բազում տալանդաց է վաճառն, սպառնալիս 'ի վերայ կապեաց Աղկիբիադէս տալ զնա խարազանել, թէ ո՛չ արասցէ։ Եւ էկն յայս Աղկիբիադէս 'ի սակս գժտութեան ինչ իւր ընդ մաքսաւորսն ընդ այնոսիկ։

Ելդ 'ի գալ աւուրն յարուցեալ այրն էկն 'ի հրապարակ անդր, և բարդեաց ածեցոյց զգին կապալին՝ տաղանդ մի։ Անդ մաքսաւորքն առհասարակ 'ի բարկութիւն բրդեալք՝ ստիպէին զայրն տալ երաշխաւոր. կարծէին՝ եթէ գտանէ և ո՛չ զոք այրն։ Մինչդեռ նա միջոցեակ կորանոք սեղի տայր 'ի վայրացն, անդուստ 'ի բացուստ ձայն բարձեալ Աղկիբիադէս առ Լչխանան՝ ասէր. "Զխա ինքնին գրեցէք.

դա՛ բարեկամ է իմ. ես կամ դմա երաշ-
խաւոր"։ Զայս լուեալ մոքսաւորացն 'ի
մեծ վարանս ընկեցան. քանզի և ցանդ
սովորեալ էին նոքա յերկրորդ վաճառաց
անտի վճարել զառաջինն. ուստի և յա-
նել տարակոյս պաշարեցան նոքա։ Սկսան
ողոքել զայրն և արծաթ մատուցանէին
նմա. իսկ Աղկիբիադէս թոյլ չէտ նմա առ-
նուլ 'ի նոցանէ պակաս քան զտաղանդ մի.
իբրև զայն առաջի մատուցին մոքսաւորքն,
հրաման տայր առնուլ զայն և գնալ 'ի
բաց։ Եւ օրինակ զայս շահեցոյց զայրն։

Բայց Սոկրատէս՝ որ 'ի մոերմութեան
իւրում առ նա նախանձորդս ունէր բա-
զումս և մեծամեծս, էր՝ զի տիրանայր 'ի
վերայ Աղկիբիադեայ բարեմոյն բարուցն՝
բարեզգեաց և ազդու բանիւքն, որպէս զի
և յարտասուս ևս ցնդել զնա. այլ էր զի և
մարդելուզացն երեսս արարեալ Աղկի-
բիադէս 'ի նոցա հրապոյրսն, խոյս տայր
'ի Սոկրատայ։ Այլ Սոկրատէս զհետ մը-
տեալ նորա իբրև արդարև բարակ որսա-
կան, ունէր զԱղկիբիադէս. այն՝ որ իրա-
ւապէս 'ի նմանէն միայն ակն ածեալ պատ-
կառէր, զայլովքն ամենեքումբք ունչս ա-
րարեալ։ Բայց Կղէանթէս ասէ, եթէ նա
զսիրեցեալն՝ զականջացն ունէր. բայց այ-
լոց նախանձորդացն էին և ունկունք այլ՝
անհուպք 'ի նմանէն, իբրու պարանոց՝
այլովքն հանդերձ։ Եւ արդեօք յոյժ էր
հակամիտեալ Աղկիբիադէս 'ի հեշտու-
թիւն. և անչափութիւն նորա 'ի կեանս

մարմնոյն՝ ըստ Թուկիդիդէսայ՝ յայս կարծիս ձգէ զմեզ։ Սակայն խանդարիչք վարուց նորա՝ յաւէտ 'ի փառասիրութենէն և 'ի պատուասիրութենէն ըմբռնէին զնա, և դրդէին զնա 'ի տարաժամու ձեռնամուխ 'ի մեծամեծս լինել. և սադրէին ևս նմա՝ ստուերածս բաւել ածել 'ի հասարակաց գործսն՝ ոչ այլոց միայն զօրավարաց և հռետորաց, այլև քան զաւագութիւն ևս զՊերիկղէայ և զփառան՝ 'ի վեր անցանել 'ի մէջ Հելլենացւոց։ Եւ արդ՝ զորօրինակ երկաթ 'ի հուր ամոքեալ, միւսանգամ առ 'ի ցրտոյն սնդեալ և զիւրական մասունսն ժողովեալ սերտեսցի. սապէս և զԱղկիբիադէս զլոյծ և զմեղկ՝ առեալ Սոկրատէս ջանահնար բանիւքն անդրէն սնդէր և սերտէր. և խոնարհ և հլու յարդարեալ զնա՝ խելամուտ ևս առնէր, զիաղդ նուազեալ ելցէ, և քանի՞ ինչ իրաց նմա պէտք ելցեն յառաքինութիւն անդր։

Ա՛յլ ըստ տիս մանկութեանն էլեալ Աղկիբիադէս, չոքաւ երբեմն առ վարժապետ ոմն քերականի. և գիրս զՀոմերոսին խնդրեալ 'ի նմանէ, իբրև լուաւ՝ զՀոմերոսին ինչ ոչ ունել, եհար բռնցի զվարժապետն և անց գնաց. իսկ իբրև անդուստ այլ ոմն ասէր ցնա՝ ունել իւր զՀոմերոս ուղղագրեալ, ետ պատասխանի Աղկիբիադէս. "Եւ առ իմ՞ դու տառս ուսուցանես, բաւական քո գոլով զՀոմերոսն ուղղագրել. հիմ դու ոչ գնաս զպատանին դասատիարակես"։ Է՛ր զի կամեցեալ բե-

բան 'ի բերան խօսել ընդ Պերիկղէայ, եբ-
րև չոքաւ առ դուռն և լուաւ՝ եթէ պա-
բասէաւ 'ի ժամուն մոսխոհ լինի զիարդ
զհամար տալ Աթենացւոց, 'ի մեկնել ի-
բում ասէր Աղկիբիադէս. "Եւ զի՞նչ,
ո՞չ լաւ ևս էր նմա մոսխոհ լինել, զիարդ
ո՞չ տալ նոցա զհամար զայն": Իսկ պա-
տանեակ տակաւին գոլով նա՝ զինուորե-
ցաւ 'ի մարտ ընդդէմ Պոտիդեայ. ունէր
և զՍոկրատէս առ իւր նիզակակից յի-
բում վրանի: Եւ 'ի դժնդակ յայս մարտ
պատերազմի երկոքեան նոքա արուԹիւնս
դեղեցիկս 'ի դէմս բերին. իսկ իբրև ան-
դանօր խոցեաւ Աղկիբիադէս՝ յերկիր ան-
կանէր, Սոկրատէս արձանացեալ պաշտ-
պանէր նմա. և տեսին ևս առհասարակ՝ զի
նա փրկեաւ ապրեցոյց ո՛չ զանձն նորա ևԹ,
այլ և զզէնսն: Արդ մրցանակ քաջուԹեանն
ԹէպԷս և իրաւապէս անկանէր Սոկրատայ,
այլ զօրավարացն յօժարամտեաւ՝ զփառսն
զայն տալ Աղկիբիադեայ 'ի պատճառս
աւագուԹեանն, կամեցեալ Սոկրատէս
յորդորագոյն ևս առնել զնա 'ի նահատա-
կուԹիւնսն՝ առաջին ինքն վկայեաց վասն
նորա, և այլոց ևս յորդոր լինէր պակաւ
պակէաւ զնա, և ողջ ապառաջինուԹիւն մի
ընձեռեալ նմա: Յետ այսորիկ և 'ի մարտի
պատերազմին Դեղեայ՝ ուր 'ի փախուստ
խուճապեցան Աթենացիք, յերիվար աշ-
տանակեալ Աղկիբիադէս՝ անդուստ յակն
արկանէր զՍոկրատէս հետի ընդ կրունկն
դարձեալ ընդ սակաւուց արանց. ո՛չ զանց

արար՝ այլ ցանգ առ Սոկրատաւ քէրեալ երիվարաւն, պաշտպանէր նմա 'ի թշնամեացն՝ որք հետամուտք հարուածս մեծամեծս գործէին։ Այլ այսոքիկ յետոյ ուրեմն գործեցան։

Իսկ էր երրեմն՝ զի Իպպոնիկեայ հօրն Կաղղիասայ՝ այր աւագ և հարուստ ընչաւէտութեամբ և զարմիւն ականաւոր, էտ Աղկիբիադէս հարուածս բռնցի. ոչ 'ի սրտմտութիւն ինչ բրդեալ և ոչ 'ի կագմատուցեալ, այլ զի ընդ խաղ գրաւադիր լեալ էր ընդ ընկերացն։ Իբրև ընդ քաղաքն հռչակ հարաւ ստահակութեանն, և քաջ սրտմտեալ էին առհասարակ ընդ բանն, յարեաւ Աղկիբիադէս վաղ քաջ ընդ առաւօտն՝ դէմ եդեալ գնայր 'ի տուն Իպպոնիկեայ. բախեաց զդուրսն, մուտ 'ի ներքս, եդ 'ի բացէ զհանդերձն և մերկ զմարմին իւր առեալ տայր 'ի ձեռս Իպպոնիկեայ, ժողէր գանիւ հարուածել զնա և պատուհասել։ Այլ Իպպոնիկոս շնորհեալ զիշեսան և զիջեալ 'ի բարկութենէն, նա և զդուստրն իւր զԻպպարիտէ առեալ տայր նմա կնութեան։ Իսկ կէսք ասեն, եթէ ոչ Իպպոնիկոս՝ այլ Կաղղիաս որդի նորա էտ նմա զԻպպարիտէ հանդերձ տաղանդիւք տասն. և Աղկիբիադէս յետ ծնանելոյն Իպպարիտեայ, այլ ևս տաղանդս տասն պահանջէր 'ի Կաղղիասայ ըստ պայմանեալ դաշինն՝ եթէ ունիցի զաւակ. և թէ՝ Կաղղիաս զանգիտեալ 'ի դաւանաց՝ յանդիման ժողովրդեանն ժառանգ զԱղկիբիա-

դէս առնէր և ամենայն գոյիցն և տանն՝ Է-
թէ անզաւակ էլցէ ինքն յաշխարհէ։ Բայց
Իպպարիտէ կին պարկեշտ և այրասէր ոչինչ
հանդուրժեալ, զի և առ այլս 'ի կանանց 'ի
բնակաց և յեկաց մտանէր Աղկիբիադէս,
էլ 'ի տանէն և չդքաւ 'ի տուն էղբօրն։ Իսկ
Աղկիբիադէս ոչ փոյթ ինչ արարեալ՝ պա-
րապէր 'ի գրգանան։ Բայց պարտ և արժան
էր ինքնին կնոջն՝ և ոչ 'ի ձեռն այլոց ու-
րուք յանդիման էղեալ իշխանին ցուցա-
նել զգիր արձակմանն։ Արդ իբրև չդքաւ
կինն յանդիման լինել ըստ օրինացն, անդ
'ի վերայ հասեալ Աղկիբիադէս և առեալ
զնա յինքն՝ բերէր 'ի տուն 'ի միջոյ հրապա-
րակին, և իշխեաց և ոչ ոք հանել 'ի ձեռաց
զկինն։ Եւ ապա եկաց մնաց առ նմա կինն
մինչև ցօր մահուն իւրոյ. և մեռաւ ոչ յետ
բազում ինչ ժամանակաց՝ զկնի նաւելոյն
Աղկիբիադեայ յԵփեսոս։ Այլ այս բըռ-
նութիւն Աղկիբիադեայ՝ ոչ անիրաւութիւն
ինչ կարծեցաւ և ոչ դարձեալ վայ-
րենաբարոյ կիրք. քանզի և օրէնքն իսկ
թուի թէ վասն այնորիկ պատուիրէր կնոջն
արձակելոյ յանդիման գալ հրապարակին,
որպէս զի յաջողութիւն տացէ առն գտա-
նել զնա և ունել։

Եւ էր Աղկիբիադեայ շուն մի սքանչէ-
լի մեծութեամբ և գեղով, զոր Եօթանա-
սուն մնասից ստացեալ էր. և առեալ
կտրեաց զձեռ շանն թաւամազ և գեղեցիկ.
իսկ իբրև մեղադիր լինէին ընտանիքն՝ զի
առհասարակ դառնապէս այպանեն զնա

վասն շանն, նա ժպտեալ ասէ. «Ըստ կամացս ուրեմն յաջողին իրքդ. քանզի կամիմ Ալթենացւոցդ զբուցել զայդ, զի մի 'ի յոռեգունից ինչ խօսեսցին վասն իմ»: Այլ առաջին պատճառք միջամուխ լինելոյն Աղկիբիադէայ 'ի ժողովուրդն, ասեն զդրամաբաշխութիւնն, ոչ կամակարութեամբ՝ այլ ըստ դիպաց. քանզի անցեալ նորա երբեմն ընդ վայր ինչ լի խառնադոչ աղաղակաւ Ալթենացւոց, հարցանէր՝ զինչ պատճառք իցեն աղաղակին. իբրև լուաւ եթէ դրամս բաշխեն, անց յառաջ և ինքն ևս զնոյն բաշխէր: Իսկ անդանօր կայթս և ծափս հարեալ Ալթենացւոց և ձայն բարձեալ, պատմեն՝ եթէ Աղկիբիադէայ առ խնդին մոռացօնք եղև լորամարգին՝ զոր պարուրեալ ունէր 'ի հանդերձան. ուստի և թռչունն վազեալ յայսկոյս յայնկոյս թռիչս արձակեալ փախչէր. յայն տեսիլ առաւել ևս բարձրացեալ աղաղակին՝ բազումք ևս զհետ պնդէին ունել զթռչունն. և կալաւ զնա Անտիոքոս ոմն ղեկավար, և առեալ բերէր առ Աղկիբիադէս, և սիրեաց զնա յոյժ վասն այնորիկ:

Արդ թէպէտ 'ի քաղաքականին դրունք լայնատարը բաց էին նմա 'ի քաջութենէ տոհմին և յընչաւէտութենէն և 'ի նահատակութենէ մրցանացն, առ այս՝ և 'ի բազմութենէ բարեկամացն և ընտանեացն. այլ և ոչ զմի ինչ յայսցանէ 'ի ձեռս ոչ էառ նա ճոխանալ իշխանութեամբ 'ի ժողովրդեան, բայց զքաղցրութիւն բանից և

ղչնորհն. իսկ թէ 'ի Ճարտարախօսութեան հզօր էր նա, վկայեն մեզ ինքնին և կատակերգակ քերթողքդ և Ճարտասանից վեհագոյնն յատենախօսութեան իւրում ընդդէմ Մեդէայ, ուր ասէ՝ գերազանցել Աղկիբիադէայ Ճարտարաբանութիւն զամենեքումբք: Եւ եթէ թէոփրաստոսի ընծայեմք հաւատս, այն՝ որ գեր 'ի վերոյ ամենայն իմաստասիրաց հետաքնին է և բազմավէպ, կորովի էր Աղկիբիադէս առաւել քան զամենայն մարդ 'ի գտանել զարժանն խօսելոյ և 'ի խորհել իւրում: Իսկ 'ի խնդրելն ասել, ո՛չ միայն զարժանն՝ այլ և զիւրդ արժան ելցէ ըստ անուանցն և ըստ բառիցն, իբրև վարանէր՝ բազում անգամ զկայ առնոյր. և 'ի խօսել իւրում՝ 'ի սրանալ բառին՝ լուէր և հանդարտէր, և յուշ ածեալ միւսանգամ որոնայր զբանն:

Զհամբաւի յոյժ հարաւ նա և 'ի ձիադարմանս երամակաց, և 'ի բազմութեան կառաց. քանզի և չեկաց ոք արդեօք 'ի սոսկականաց կամ 'ի թագաւորաց, որ կառս եօթն թուով ընթացոյց Յողիմպիական 'ի մրցանսն, բայց միայն Աղկիբիադէս: Իսկ անդանօր տանել նորա զառաջին յաղթութիւնն և զերկրորդն, և զչորրորդն ըստ Թուկիդիդէայ, և զերրորդն ըստ Եւրիպիդէայ, այս ապա գեր 'ի վերոյ գտաւ 'ի շուքն և 'ի փառսն առհասարակ քան զամենայն պատուասիրուն 'ի մրցանսն յայնոսիկ: Եւ զայսոսիկ Եւրիպիդէսն ինքնին երգէաց 'ի Նուագի անդ իւրում, այսպէս.

"Քեզ Ներսադ հարկանեմ
Ո՞վ որդի դու կլինեան։
Գեղեցիկ է արդեօք
Մարտ տանել յաղթական.
Նո՛ր ջքնաղ, զոր Հելլէն
Այր չեռեռ կառընթաց,
Յառաջին և յերկրորդ
Եւ յերրորդ մրցանաց։
Իսկ 'ի վազս երագունս
Դու անքիրտն անվաստակ,
Ըզդիզլուխդ 'ի բոլորս
Ձիթենւոյն 'ի պըսակ,
Զարդարեալ քեզ երկիցս
Հար Քարոզն ըզհրաչակ։

Այլ զայս փառս Նորա շքեղ ևս յարդարեցին ախոյեանքն ինքնին 'ի պատուասիրել զնա։ Քանզի Եփեսացիք խորան մի հոյակապ և ջքնաղ հարին նմա. իսկ Քիոցւոց քաղաքն դարմանս պատրաստեաց վասն երիվարաց Նորա, և սպանդս բազում յողջակէզ։ Իսկ Լեսբացիք գինի և զայլն ամենայն ասպնջականութիւն առաքեցին նմա 'ի կոչունսն՝ զոր առատապէս ետ նա բազմաթիւ որերոյն։

Այլ սակայն կամ յայլոցն բանասարկութեանց կամ թէ 'ի խեղաբարոյ ինչ բարոյից անձինն՝ պատճառս առին ապա շատ ինչ բամբասել զպատուասիրել Նորա յայսոսիկ։ Քանզի պատմեն՝ եթէ ՅԱԹԷՆՍ այր ոմն Դիոմիդէս անուն՝ բարեզգեաց այր և բարեկամ Աղկիբիադեայ՝ ցանկա-

ցեալ յաղթութիւն տանել Յողիմպիա-
կանսն, լուր էառ զհոյակապ կառաց ար-
քունի Յարդոս. աղաչէաց զԱղկիբիադէս
գնել զայն կառսն վասն իւր՝ իբրու որ
ձեռնհաս էր առ Արդոսացիս և ունէր ևս
անդ բազումս 'ի բարեկամաց։ Աղկիբիա-
դէս գնեալ զկառսն և փոյթ ոչ տարեալ
Դիոմիդեայ՝ կալաւ զայն վասն իւր. դառ-
նացաւ Դիոմիդէս ընդ արհամարհութիւնն,
և բոլոր բարձեալ վկայ կոչէր առհասա-
րակ զաստուածս և զմարդիկ։ Այլ թուի
թէ և յատենի հետաքննեցաւ բանն. քան-
զի դոյ մեզ և ատենաբանութիւն մի ար-
ձանագրեալ Յիսոկրատեայ վասն կառաց
ինչ 'ի պաշտպանութիւն պատանեկին Աղ-
կիբիադեայ. այլ անդ ոչ Դիոմիդէս, այլ
Տիսիաս անուն կարդայ դատախազին։

Իսկ իբրև եհաս նմա միջամուխ 'ի գործս
լինել քաղաքին, թէպէտև պատանի՝ յաղ-
թահարէր զամենայն Ճարտասանսն. իսկ
որք և այնպէս 'ի դիմի հարկանէին նմա, էր
Փէակէս միայն Երասխատրատեան և Նի-
կիաս Նիկերատեան. վերջինդ՝ հին աւուրց
և 'ի քաջաց զօրավարաց. իսկ Փէակէս՝
այն ինչ թեւակոխեալ իբրու զԱղկիբիա-
դէս, 'ի հոյակապ հարանց՝ այլ 'ի խոնարհ
քան զնա 'ի Ճարտարաբանութեան և յայլ
ինչ ևս. քանզի 'ի զրոյցս բազմականին ա-
ռանձինն և 'ի համոզակեր՝ առաւել յաջո-
ղեալ էր նա, քան 'ի պայքարս ատենից.
քանզի և էր իսկ՝ ըստ որում Եւպոլէան
ասաց. "Քաջ 'ի ընդոյել, անբաւական յոյժ

'ի Խօսէ։։։ Այլ է մեզ 'ի ձեռին և առե-
նախօսութիւն այլ ընդդէմ Աղկիբիադեայ
և Փէակեայ. յորում հանդերձ այլովք է
և այս, զի Աղկիբիադէս զսպասս ոսկւոյ և
զարծաթոյ զհանդիսից քաղաքին՝ վարէր
զօրհանապազ 'ի պէտս իբրև զիւրսն։

Բայց էր 'ի ժամանակին յայնմիկ այր
ոմն Խպերբոլոս Պերիթիդէս անուն, զոր
և Թուկիդիդէս յիշատակէ իբրև 'ի սինը-
քորայ ոմանց, որ և պատճառս 'ի նեբքս
ընծայէր զբօսանաց առհասարակ Կատա-
կերգակ քերթողացն. քանզի ցանդ 'ի Թա-
տերս ձաղէաչ կատակէին զայրն, իսկ ինքն
անխռով և անցաւ 'ի լուսանս անձինն,
առ ոչինչ ամենևին զվիառսն գրելով. Թէ-
պէտ և լրբութիւն և ամչութիւն ի ցէ բանդ,
համայն և այնպէս գեղեցիկ յանդգնու-
թիւն և արիութիւն կարդան ոմանք։ Սա
այս այր Թէպէտ և ոչ ումեք ընդունելի,
սակայն և բազում անգամ գործի 'ի ձեռս
լինէր խուժանին ընդ վայր հարկանել և
բամբասել զոք յաւագաց քաղաքին։ Արդ
'ի սորա համոզակեր զրուցացն դրդեալ
յայնժամ 'ի վճիռ խեցեկոյտ, վտարանդի
հանել զյոյժ փառաւորսն քաղաքին՝ առ
'ի դիւր նախանձուն կրից՝ քան եթէ եր-
կիւղին, յայտնի էր ապա ամենայն տեսա-
նելեացն խեցեկոյտ վտարանդութիւն միոյ
ուրուք յերեցունց աւագացդ։ Ապա չո-
քաւ Աղկիբիադէս և բերան 'ի բերան խօ-
սեալ ընդ Նիկիասայ և միաբանեալ զհեր-
ձուածսն, զխեցեկոյտ վճիռն կուտէր 'ի

գլուխն Խաերբողեայ. իսկ կէսք ասեն՝ ոչ ընդ Նիկէասայ խօսել՝ այլ ընդ Փէակեայ. ընդ որում միաբանեալ տարագիր վտարէր զԽաերբողէս՝ որ ոչինչ ակնկալեալ մնայր պատուհասին այնմիկ. իբրև ոչ ոք այր սինլըքոր և ոչ անվատուռնակ ոք այր երբէք անկաւ ընդ դատաստանաւդ ընդ այդուիկ, ըստ որում և Պղատոն ասաց կատակերգակն՝ յիշատակ առնելով զԽաերբողեայ այսպէս. "Թէպէտ և զարժանին զվարուցն առ զդատակնիք, այլ անարժան բուսոյ բարուց անձինն։ Քանզի ոչ այսպիսեաց ոմանց աղագաւ հնարեցաւ երբէք խեցեկոյտդ այդ"։ Այլ յաղագս այսոցիկ այլուր ոճով պատմեալ է մեր։

Սակայն Աղկիբիադէայ գժոխըմբերելի էր Նիկիաս՝ որ ոչինչ պակաս 'ի Թշնամեաց անտի հրաշացեալ էր, քան Թէ յիւրոց իսկ քաղաքացեացն պատուեալ այրն։ Քանզի Թէպէտ և հիւր առհասարակ Լակեդեմոնացւոցն եղեալ Աղկիբիադէս՝ խնամած գերեւոյն նոցա 'ի Պիւղոս, սակայն և հաշտութիւն արարեալ նոքա 'ի ձեռն Նիկիասայ և զգերին առեալ յիւրեանս, առաւել քան զամենեսեան սիրէին նոքա զՆիկիաս. առ այս դարձեալ՝ և յընդհանուրս զայս ասէին Հելլենացիք. Պերիկղէս մղեաց զմարտն, և Նիկիաս՝ ելոյծ զմարտն. և զհաշտութիւնն զայն անուանեալ կարդային բազումք՝ Նիկիասայ։ Վասն որոյ և 'ի նախանձուն կրից և յանձկութենէն մտախորհ լինէր Աղկիբիադէս լուծանել զերդ-

ՀՆԱԿՈՒՌ զդաշինն։ Ապա լուր առեալ առաջին զԱրդոսացւոց՝ վտարանջել'ի Լակեդեմոնացւոցն առ ատելութեանն և երկիւղին, գաղտաբար յուսացուցանէր զԱրգոսացիսն ունել իւրեանց Նիզակակից և զԱթենացիսն. և սրտասնդէր զնոսա 'ի ձեռն պատուիրակաց, և ինքնին դարձեալ երեսեալ ընդ աւագս նոցա, մի ինչ՝ ասէր՝ զարհուրել և մի երբէք տեղի տալ Լակեդեմոնացւոցն, այլ յանկչել յԱթենացիսն և դեգերել առ ժամն, քանզի և Աթենացիք՝ ասէր՝ փոյթ ապաշաւեալք լուծցեն զհաշտութիւնն։

Իսկ յետ այնորիկ Լակեդեմոնացւոց միաբանեալ ընդ Բիովտացիս, և դարձուցեալ անդրէն առ Աթենացիս զՊանակտոն ոչ կանգուն որպէս պարտէին՝ այլ քանդեալ, զայն դէպ ժամանակ որսացեալ Աղկիբիադէս զսրտմտութեան Աթենացւոցն, առաւել ևս վառեաց և դառնացոյց զնոսա։ Եւ ապա աղմուկս շփոթից յուզէր ընդդէմ Նիկիասայ և ամբաստան կայր, և առնոյր խառնէր յամբաստանութիւնսն և բանս իմն կարծեալ բանաւորս. քանզի մեղադիր լինէր Նիկիասայ՝ զի 'ի զօրավարութեանն ոչ հասեալ կալաւ զթշնամիսն Լքեալս 'ի Սփակտերիա. նա և 'ի շնորհս Լակեդեմոնացւոց ազատ արձակեաց զձերբակալեալսն յայլոց։ Առ այս դարձեալ՝ զի բարեկամ գոլով նոցա՝ ոչ հաւանեցոյց զնոսա մի առնել միաբանութիւն ընդ Բիովտացիս և ընդ Կորնթացիս. և արդեալ առն

Հելլենացւոյ՝ Թէպէտ և կամեսցի՝ լինել բարեկամ և նիզակակից Աթենացւոց, Եթէ այնպէս ոչ հաճոյ թուեսցի Լակեդեմոնացւոցն։ Յայսմանէ իբրև ձախողակի գնային իրքն Նիկիասայ, դէպ եղև ըստ գերեցիկ բախտին յայնժամ գալ հասանել յԱթէնս հրեշտակացն 'ի Լակեդեմոնէ. անդուստ զոյցս բերեալ հեզս և հեշտալուրս, ասէին՝ Եթէ ինքնահրաման հրեշտակութեամբ հասեալ գան՝ զամենայն վէճ և զպայքար հանդարտեալ արդար և իրաւ։ Իբրև մտադիւրագոյնս ժողովեաց զնոսա ծերակոյտն, և ժողովուրդն հանդերձեալ էր եկեղեցանալ յաւուրն երկրորդի, զանգիտեալ Աղկիբիադէս յելից իրացն՝ հնարս հնարեցաւ և յաջողէր, զի առաջին ընդ նմա եկեալ խօսեսցին հրեշտակքն։ Իբրև եկին առ նա, խօսել սկսաւ ընդ նոսա և ասէ. "Զի՞նչ գործէք ա՛ռք Սպարտացիք։ Ո՞չ իսկ գիտէք՝ Եթէ ծերակոյտդ հանապազ 'ի չափու ունելով զանձն, մարդասիրութեամբ ժողովէ զմերձեցեալսն. այլ խուժանն գոռոզութեամբ կայ և ցանգ զմեծաց թեկն ածէ։ Արդ Եթէ դուք իբրև ինքնատէրս ոմանս ասէք զձեզ հասեալ այսր, խուժանն խառորնակս գնասցէ՝ հրամայել և բուռն ևս առնել ձեզ։ Այլ սո՛ղէ դուք՝ 'ի բաց զպարզմտութիւնդ եդեալ, Թէ կամիք 'ի չափու զԱթենացիսդ տեսանել և մի՛ ինչ բռնադատիլ ընդդէմ խորհրդոցն, վարեցէ՛ք 'ի բանս իրաւանցդ՝ իբրու ոչ ինքնահրամանք ոմանք։ Եւ մեք

գործակից ձեզ եղեցուք՝ շնորհս Լակեդեմոնացւոցն արարեալ»։ Զայս ասաց Աղկիբիադէս, և երդմամբ չափ հաւատարմացուցեալ՝ ուծացոյց զնոսա 'ի Նիկիասայ. և յինքն յանդուցեալ մեծապէս ազնիւրկեանութեամբ՝ պքանչացոյց զնոսա ընդ ուշիմութիւն մտացն և ընդ հանճարն, որով և ոչ 'ի դուշնաքէից ոք ընծայեցոյց նա յայնժամ զանձն։

Իբրև յաւուրն երկրորդի խմբեցաւ ժողովուրդն, և եկին մտին հրեշտակքն յատեան, մարդասիրագոյնս յայնժամ հարցումն առնէր առ նոսա Աղկիբիադէս, եթէ որով իշխանութեամբ հասեալ իցեն անդր. իբրև ոչ ևս ասացին նոքա՝ եթէ ինքնատէր իշխանութեամբ հասեալ իցեն 'ի վայրն, յայնժամ Աղկիբիադէս հապճեպով յարուցեալ մեծաւ ձայնիւ և աղաղակաւ յարձակէր 'ի նոսա, իբրու ոչ անիրաւեալ առ նոսա՝ այլ անիրաւեալ առ 'ի նոցանէ. բողոք բարձեալ կարդայր զնոսա ուխտադրուժս և յեղյեղուկս՝ ոչք եկեալ հասեալ իցեն ինչ մի 'ի բարեաց ոչ ասել և ոչ առնել։ Ցասեաւ անդ և ծերակոյտն ինքնին գլխովին և 'ի արտմտութիւն բրդեցան ժողովուրդք. իսկ անդուստ Նիկիաս քամակաբեկ լի եղև թաղծութեամբ՝ տեսեալ զայնչափ փոփոխութիւն զարանցն զայնոցիկ զաւագաց. քանզի անտեղեակ էր դաւաճանութեանն և խաբանացն Աղկիբիադեայ։ Եւ այսպէս իբրև հերքեալ մերժեցան Լակեդեմոնացիք,

անդէն 'ի զօրավար բանակին կարգեալ Աղ-
կիբիադէս՝ նիզակակից առնէր Աթենաց-
ւոց զԱրգոսացին և զՄանտինացիս և զԵ-
ղեացիս միանգամայն։

Այլ զգործ զայս նորա գովեաց և ոչ
ոք. սակայն և գործ մեծ գործեաց, զի
այնպէս յանկարծակի առեալ երկիրեղ-
կեաց և դղրդեալ սասանեցոյց գոգ ողջ-
ոյն զՊեղոպոննիսոս. և 'ի միում անդ ա-
ւուր ասպարս այնչափ ճակատեցոյց ընդ-
դէմ Լակեդեմոնացւոց առ սահմանաքն
Մանտինեայ, և յԱթենացւոց 'ի բացեայ՝
'ի մարտ պատերազմին և 'ի վտանգն առեալ
թակարթեաց զԼակեդեմոնացիսն. որք
թէպէտև յաղթականք, սակայն և ոչ մեծ
ինչ շահեցան. ապա եթէ յանկարծ 'ի
պարտութիւն մատնեալ էր նոցա, հաղիւ
արդեաք ապրեցուցեալ էր և զնոյն զիւ-
րեանցն Լակեդեմոնիա։

Բայց վաղվաղակի յետ մարտի պատե-
րազմին միաբանեցան յԱրգոս հազարա-
պետք քակել զիշխանութիւն ռամկին, և
հպատակ կացուցանել զքաղաքն. և այն-
պէս ապա Լակեդեմոնացւոցն ձեռնտուու-
թեամբ՝ որ հասին անդր՝ իսպառ 'ի միջոց
բարձին նոքա զընկերհաշտութիւնն։ Իսկ
իբրև միւսանգամ զինուորեալ զօրացաւ
խուժանն, հասեալ 'ի վերայ Աղկիբիա-
դէս հաստահարուստ գործէր զնա. և սադ-
րէր ևս նոցա՝ պարիսպ հարուստ միջոցաւ
ածել մինչև 'ի ծով անդր, և այնպէս կա-
պել զքաղաքն ընդ զօրութեանն Աթենաց

ւոց. առ այս՝ և Ճարտարս հիւսանց և գա-
զատոսս յԱթենայ առեալ առաքէր առ
նոսա. և այսպէս զամենայն փոյթ 'ի մէջ
առեալ՝ շնորհս և զօրութիւն ժառանգեաց
անձին իւրում և քաղաքին։ Ած հաւանե-
ցոյց նա՝ և զՊատրասացիս առնուլ կցել և
զիւրեանց քաղաքն ընդ ծովուն երկայնա-
ձիգ պարսպաւ։ Իսկ իբրև այր ոմն ասէր
առ բնակիչսն Պատրասայ զայս ինչ, եթէ
"Աթենացիքդ լափլիզեսցեն զձեզ", էտ
պատասխանի Աղկիբիադէս և ասէ. "թե-
րևս տակաւ և յանոտից անոտի. այլ Լակե-
դեմոնացիքդ 'ի անարիցն առհասարակ և
միահաղոյն"։ Առ այս դարձեալ՝ խորհուրդ
տայր նա իւրոցն Աթենացւոց սահանալ գե-
տին, և արդեամբք հաստատել զերդումն՝
զոր 'ի հանգրուանս կռէին երիտասարդք։
Քանզի երդմնի լինէին նոքա ունել 'ի սահ-
մանս Ատտիկոյ ցորեան և դարի և այգիս և
ձիթենիս, զի ուսցին նոքա տիրանալ 'ի վե-
րայ անգոց մշակելոց և պտղաբերաց։

Այլ Աղկիբիադէս միանգամայն ընդ
քաղաքական կարգացս և ընդ հանճարեղ
խորհրդոցն և գեղեցիկ ուշիմութեանն՝
կեանս վարէր լոյծ և գրգանոք լի. շուայ-
տէր և անկշիտանայր 'ի տուփանս, գնայր
գոռոզութեամբ և արհամարհանոք, քար-
շէր իգաբար զատորոտ ծիրանեացն 'ի հրա-
պարակս, էր բազմահանդերձ յոյժ 'ի ծախս,
տայր յեռաթիսն 'ի բաց զտախտակամած
զանկողինսն կտրել, զի գրգագոյնս ևս ըն-
կողմանեսցի. յորժամ ոչ 'ի տախտակացն

վերայ անկողնարկ լինիցին նմա, այլ'ի վերայ ապաւանդակացն պարզելոց։ Առ այս դարձեալ՝ և վահան մի ոսկեսապատ էտ կռել, և նշան ոչ այլ ինչ 'ի հայրենական նացն տայր քանդակել'ի նմա, բայց Աստղիկ մի շանթակիր։ Այլ ապա զայսոսիկ տեսեալ լաւ որերոյն, ոչ եպերէին միայն և սրտնէին, այլ և զանդիտեալ ևս խիթային ընդ ցուի և ընդ օրինազանց գնացն՝ իբրև ընդ բռնաւորական վայրենութիւնս։ Այլ թէ առ նա զինարդ էր խուժանն, ոչինչ անտպաւորս նկարեաց Արիստոփանէս, յորժամ ասաց. "Ցանկայ արդեօք նմա, այլ ատեայ զնա, սակայն և կամի զնա"։ Իսկ այլուր դարձեալ յաւէտ ինն ոտնհար լինի յարացուցիւն, այսպէս. "Քաջ չէ արժան ամենևին առուծ բուծանել'ի քաղաքի։ Ապա եթէ իցէ ոք՝ որ բուծանէ, պարտ է այնուհետև սպաս ունել բարոյից նորա"։

Քանզի առատաձիր պարգևքն նորա, և տեսարանացն առ 'ի նմանէն հանդէսք, և պատուասիրութիւնք առ քաղաքն գերազանցեալք յոյժ, և փառք նախնեացն նորա, և պերճութիւն ճարտարաբանութեան նորա, և անձնագէղ կերպարան նորա, և 'ի մրցանսն ձեռնընդել ոյժ և կորովութիւն նորա, այս ամենայն այլովքն հանդերձ տայր Աթենացւոցն գեղեցիկ չափով բերել յանցաւորութեանց նորա. որոց և անուանս ինն կարդային նոցա հեշտալուրս, իբրու խաղս և զբօսանս և մարդասիրու-

թիւն։ Ըստ որում և յորժամ փակեալ արգել առ իւր զԱգաթարքոս կենդանագիր, և չեթող նմա ելանել մինչև ոչ նկարեաց նա զտուն իւր. և ապա պարգևատու եղեալ արձակէր զնա։ Եւ յորժամ Տաւրէասայ ուրուն՝ որ 'ի տեսարանաց հանդերձանս էլ և էլս զնովաւ առնէր՝ ապտակ ած նմա։ Եւ յորժամ 'ի գերեզմանի մարտին առեալ կին մի Մեղիա անուն, զաւակ ունոյց 'ի նմանէ. և զայս խուժանն՝ մարդասիրութիւն կարդայր։ Բայց Աղկիբիադէս պատճառք մեծապէս եկաց խողխողելոյ երիտասարդացն Մեղոսի՝ ձեռն տուեալ վճռոյն այնորիկ։ Իսկ անդ և Արիստոփանէսի նկարեալ զՆեմէաս և 'ի գիրկս տուեալ նմա զԱղկիբիադէս, խուռնէր յայնժամ խուժանն 'ի զնին անձկանօք նկարուն այնմիկ։ Այլ սակայն հինաւուրց որեարն յոյժ գժկամակութեամբ բերէին զերդ, իբրև բռնաւորական ոմանս և օրինազանցութիւնս. և կարի յիրաւունս ասէր Արքեստրատոս. ԵՒԼՈՂԱ ԷՔ ԲԱՒԱԿԱՆ ԲԷՐԷԼ ԱՂԻԲԻԱԴԷՍ ԷՐԻՈՍ։ Իսկ իբրև յաւուր միում ելանէր նա յատենէն իրաւամիտ յաջողեալ և ամբոխ բազում շուրջ զիւրև, պատահէր 'ի ճանապարհին Տիմոնն մարդատեաց. ոչ զանց արար կամ խոյս եառ, ըստ որում բնաւորեցաւ Տիմոնդ այդ առ մարդիկ, նա՛ դէպ ուղիղ երեսեալ Աղկիպիադեայ, և կալեալ զաջոյն՝ ասէր. "Ա՛ղէ դու ո՞վ որդեակ, աճեա՛ց լե՛ր բարդաւաճ. քանզի 'ի բարգաւաճութենէդ

չարիք մեծամեծք հասցէն ամենեցուն դո-
ցա "։ Անդանօր կէսք ծիծաղեցան 'ի բանն,
և կէսք հայհոյէին, իսկ և կէսք՝ յոյժ խռո-
վեցան 'ի միտս իւրեանց։ Եւ այսպէս ապա
գայթ 'ի գայթն և անսահման էր կարծիք
վասն Աղկիբիադէսայ 'ի պատճառս յեղյե-
ղուկ բարոյից նորա։

Այլ մինչդեռ տակաւին կենդանի էր
Պերիկղէս, իղձ լինէին Աթենացիք ունել
զՍիկիլիա. իբրև մեռաւ՝ նոքա դօտէպինդ
'ի գործ առեալ մերթ ընդ մերթ զօրականս
իբրու 'ի Թիկունս և 'ի նիզակակցութիւն
արձակէին՝ առ որս անդանօր հարստահա-
րեալքն էին 'ի Սիրակուսացւոց. և օրինակ
զայս՝ ուղղ անդր հորդէին բազմաձեռն ևս
արշաւանին։ Իսկ որ խսպառ վառեաց զիղձն
նոցա, և սադրեաց հաւանեցոյց մի տակաւ՝
այլ միախուռն ստուար նաւատորմիղ առ-
նուլ՝ խաղալ և ունել զկղզին, էր ինքնին
Աղկիբիադէս. յուսացուցանէր քաջ զնու-
ժանն 'ի մեծամեծս, և ինքն զևս մեծամե-
ծացն թեկն ածէր։ Քանզի մտախորհ լի-
նէր, եթէ առուսն Սիկիլիոյ սկիզբն նա-
հատակութեանցն եղիցի՝ զոր 'ի մտի ունէր
կատարել, և ոչ կատարած՝ ըստ որում
այլքն կարծէին։ Բայց Նիկիաս գժնդակ
յոյժ գիտելով զառուսին Սիրակուսայ,
գուն գործէր խափանել զժողովուրդն։
Իսկ Աղկիբիադէս՝ որ զԿարքէդոն յերա-
զեր և զԼիբիա, և յետ գրաւելոյ գաւա-
ռացն այնոցիկ՝ շուրջ առեալ փակէր և
զԻտալիա և զՊեղոպոննիսոս, գոդ իբրև

համբարանոց մարտի պատերազմին համա-
րեր իւր զՍիկիլիա։ Ապա խումբ երիտա-
սարդաց անձնատուրք 'ի նա, իրախու-
սեալք յանձինս՝ բազմեալ ունկն դնէին
ծերունեացն՝ որ հրաշալիս ճառ արկեալ
խօսէին վասն արշաւանին այնմիկ, և հա-
ւատարմացուցանէին նա՝ որպէս զի բազուկք
այնուհետև նստեալք յասպարէզս ըմբշաց
և 'ի կիսակրկէս դեգերեալք՝ պարապէին 'ի
հովանագրեալ զձև զտարազ կղզւոյն և ըզ-
դիրս կայից զԼիբիոյ և զԿարքեդոնին։ Այլ
ասեն՝ եթէ ոչ Սոկրատէս իմաստասէր և
ոչ Մետոնն աստեղաբան՝ օգտի ակն չու-
նէին քաղաքին յարշաւանաց անտի։ Սո-
կրատէս ինքնին խելամուտ լինէր բանին
թերևս 'ի ձեռն կենակից իւր Քաջին՝ որ
մերձ կացեալ նմա նախապատուում լինէր։
Իսկ Մետոնն զանգիտեալ վասն հանդէր-
ձելոյն եթէ 'ի խելամուտ հանճարոյն, ե-
թէ 'ի գուշակական վարժիցն, կեղծաւորե-
ցաւ խելագարութիւն. առեալ ջահ բոր-
բոքեալ՝ հուր հարկանէր զտանէն։ Բայց
կէսք ասեն՝ եթէ ոչ խելագարեալ առ 'ի
կեղծ, այլ գիշերի հրձիգ 'ի տունն եղեալ՝
ընդ այդն ելեալ յողոք անկանէր՝ վասն ա-
ղէսից տանն՝ ազատ զորդին իւր առնել
յարշաւանաց անտի, և այնպէս յաջողէր
այրն՝ խաբեալ զքաղաքացիսն։

Յայնժամ Նիկիաս կարգեցաւ 'ի զօրա-
վար, Թէպէտ և կամէր իսկ ոչ ամենևին,
և տեղի տայր մտադիւրագոյնս յիշխա-
նութենէն միանգամայն և յիշխանակցէն։

Այլ Աթենացւոցն՝ այնպէս հաճոյ թուեցաւ 'ի գեղեցիկ եղս իրացն՝ մի միայն 'ի խելն Աղկիբիադեայ ապաստան զմարտն առնել, այլ զնորա զարութիւնն խառնել ընդ զգօնութեան Նիկիասայ։ Քանզի Լաւ մաքոս՝ որ երրորդն էր 'ի զօրավարս, թէպէտ և լի հասակաւն՝ սակայն 'ի մրցմունս ոչ ինչ պակաս քան զԱղկիբիադէսն հրաբորբոք էր և գիմագրաւ։ Իբրև 'ի խորհուրդ մտին Աթենացիք յապագս համարոյ զօրականին և յապագս հանդերձանաց մարտին, միւսանգամ Նիկիաս գուն գործէր խափանել 'ի խորհրդոյն. զդէմ կալաւ Աղկիբիադէս՝ խօսեցաւ և յաղթահարեաց. ապա և Դեմոստրատոս հռետոր՝ սահման առաջի առնէր, եթէ պարտ և արժան է զօրավարացն ինքնիշխան լինել 'ի հանդերձանս մարտին և 'ի մարտն գլխովին։ Իբրև քուէայս արկեալ հաւանեցան ժողովուրդք և առհասարակ կազմեցան պատրաստեցան ծովագնաց լինել, անդ էր տեսանել իրս ոչինչ բարեգուշակս, և առաւել՝ 'ի տօնն յայնժամ։ Քանզի և յաւուրսն յայնոսիկ դէպ լինէր տօնախմբութեանցն Ադոնիսի. և յայնժամ բազում ուրեք 'ի տեղիս տեղիս դրօշեալս իմն տեսանէին առաջի արկեալ կանանուցն, յորս երևութանային դիահանք ոմանք. և կանայք կոծ և ջայլ եղեալ զթաղմանն՝ ողբս և աշխարս երգէին։ Առ այս դարձեալ՝ և 'ի միում գիշերի յանկարծ ծայրատեալք կրճատեալք լինէին արձանքն Հերմեայ, և բազ-

մաց 'ի նոցանէ գիտակ երեսացն փչրեալ և խաթարեալ։ Եւ այս ապա միջաբեկ ահաբեկ առնէր շատ զոք և 'ի մարդկանէն՝ որ այսոցիկ ունչս առնէին։ Այլ սակայն և լուր հնչէր, Կորնթացւոցն Թերևս ինքնին առնել յայսպիսեաց ասոի 'ի շնորհս Սիրակուսացւոցն՝ գոլով նոցա գաղթականք. զի զգեղեցիկ էլս մարմին խանգարեսցեն 'ի նշանաց անոի, կամ թէ խապառ խաղեսցեն արդեօք։

Բայց ժողովուրդք ոչ համբաւոյն անսային, և ոչ որոց դժնդակ ինչ չերևէր նշանն. այլ թէ երիտասարդք անառակք է զի բնաւորեալք են յայսոսիկ, յորժամ անապակաւ զմրեալք՝ անկղնտանան և 'ի թշնամանդ անգամ՝ իբրու ընդ խաղս։ Սակայն և 'ի ցասումն բերեալք, և զանդիտեալք ևս գուցէ երդմնակուռ դաշնաւորաց ինչ լցէ յանդգնութիւնդ վասն մեծաց իրաց, դառնապէս այնուհետև 'ի քնին մատուցանէին զամենայն կասկած. ուստի և 'ի սակաւ աւուրս բազում անգամ խրմ բեցաւ ծերակոյտն, և ժողովք բազումք գումարեցան ռամկին։ Ապա յայնժամ Անդրոկղէս հռետոր յառաջ մատուցանէր զոմանս 'ի ծառայից և 'ի բնակաց անոի Աթենայ վկայել յատենի, եթէ և այլք ևս 'ի դրօշելոց դուան այնպէս ծայրատեալք. և թէ ուրեք 'ի գինեբրուս՝ նմանութեան հանդէս գործեցաւ նուիրական խորհրդոց. և ամբաստան կային զԱղկիբիադեայ և զբարեկամացն, եթէ թէոդո-

բոս ումն անուն անդանօր զկերպարանս բերէր զՔարոզի, և Պողիսիոնէս ումն՝ զՋաղնկալի, և Աղկիբիադէս ինքնին զՔահանայի. իսկ այլք յընկերացն մերձ կացեալ անդ վարժէին 'ի նմանէ 'ի նոյն խորհուրդս՝ իբրև արդարև իւղագլխեալս ումանս։ Քանզի այս բանք արձանագրեցան յամբաստանութեան անդ Թէսսաղոսի Կիմոնեան ընդդէմ Աղկիբիադեայ՝ իբրև ամբարշտելոյ ուրումն յաստուածակողմն անդր։

Այնուհետև 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ ժողովուրդք ընդդէմ Աղկիբիադեայ, և գրգռեալ ևս յԱնդրոկղեայ (զի էր սա ոխերիմ Թշնամի Աղկիբիադեայ), զառաջինն զդողանի հարեալ կայր Աղկիբիադէս. այլ ապա լուր առեալ զնաւազաց առհասարակ 'ի չուն Սիկիլեան՝ զի մեծապէս մոռրմութեամբ էին ընդ նմա. և զի զօրականք՝ յԱրգոսացւոց դարձեալ և 'ի Մանտինացւոց՝ հազարք ողջ սպառազէնք, յայտնապէս ասէին 'ի շնորհս Աղկիբիադեայ չու առնել 'ի տարադէմ յայն զինուորութիւն և յայնկոյս ծովուն. և զի՝ տեղի տան եթէ ուստեք երբէք հարստահարութիւն հասցէ Աղկիբիադեայ, քաջալերեցաւ և 'ի ժամուն յանդիման լինէր առենին պատասխանի առնել վասն անձին։ Զանգիտեալ Թշնամեացն՝ եթէ խուժանն դատակնիք հեզագոյն 'ի նեղքս բերցէ վասն ժամանակին՝ յորում Աղկիբիադեայ պէտք էին նոցա, 'ի հնարս հայթայթանաց 'ի մէջ մատուցին 'ի հռետորաց

անսի՝ որք 'ի վերին երեսս ոչինչ թշնամիք Աղկիբիադէայ, այլ 'ի սրտի առելիք նորա ոչինչ պակաս քան զբուն թշնամին. հրապուրեցին զնոսա խօսել առ ժողովուրդն՝ իբրև ո՛չ պարտ ո՛չ արժան եթէ աւագ այրդ ինքնիշխան զօրավար՝ այն ինչ խմբեալ զօրականին և նիզակակցացն, նա դեգերեալ զդէպ ժամանակն հանցէ 'ի ձեռաց, մինչև վիճակընտիր դատաւորք ջուր չափեսցեն նմա. այլ թէ պարտ և արժան է նմա յառնել նաւել յաջողակի, և 'ի վախճանել մարտին նովին օրինաք յանդիման լեցի դա պատասխանի առնել վասն անձին:

Բայց Աղկիբիադէս խելամուտ եղեալ դաւաճանութեան դեգերանացն՝ յառաջ մատուցեալ ասէր, եթէ դժնդակ է՝ անվաճար թողեալ զամբաստանութիւնս և զզրպարտութիւնս՝ այնպէս առնուլ արձակել զնա խէթ 'ի մոի հանդերձ մեծաւ բանակաւն. քանզի և մահ ևս արդեաք առ դուրս կայցէ նորա՝ իբրու որ ո՛չ եւոյծ զամբաստանութիւնսն. իսկ պատասխանի արարեալ և սրբեալ զանձն՝ չու արասցէ այնուհետև ընդդէմ թշնամեացն անդորը 'ի դատախաղիցն: Այլ իբրև ոչինչ կարաց հաւանեցուցանել զժողովուրդն, և պատուէր ևս եռուն խաղալ գնալ, անկաւ նա յուղի ընդ նիզակակից զօրավարացն՝ առեալ ընդ իւր եռաթիս հարիւր քառասուն, զօրականս ողջ սպառազէնս հինգ հազար և հարիւր, և այլ ևս իբրև հազար մի և երեք հարիւր յաղեղնաւորաց, 'ի պար-

տաւորաց և 'ի Թեթևազէն զինուորաց, և զայլն ամենայն կազմած հանդիսի մեծահան դերձ և շքեղ։

Իբրև եկեալ Եհաս յԻտալիա, և մերձ եղեալ 'ի Ռեգիոս՝ մերկացաւ զիսորհուրդ մտացն վասն մարտի պատերազմին, ընդ-դէմ դարձաւ Նիկիաս. իսկ համաշունչ գտեալ նմա Լամաքոս՝ դէմ եդեալ այ-նուհետև նաւեաց 'ի Սիկիլիա, և անդէն զկատանէ ածէր զբռամբ. սակայն և նա-հատակութիւն այլ ոչ նահատակեցաւ. քանզի փութանակի յատեան անդր յեռս կոչէին զնա Աթենացիք։ Քանզի անդ զա-ռաջինն՝ որպէս ասացաք՝ ցուրտ էին կար-ծիք ամբաստանութեանն ընդդէմ նորա 'ի ծառայից անտի և 'ի բնակացն Աթենայ. բայց ապա 'ի չուէլ նորա, սաստիկ և բուռն յարձակեցան 'ի նա թշնամիք. և 'ի միասին ընդ մեսաուն դրօշելոցն Հերմեայ բար-դեալ և զսեղանակապտութիւնն, իբրու գործք սադրեալք 'ի նոյն և 'ի մի երդմնա-կուռ դաշնաւորութենէ՝ նորութիւս խըն-դրել 'ի կարգ քաղաքին, ուստի և ձերբա-կալ արարեալ 'ի բանտ արկանէին առհա-սարակ զամբաստանեալն՝ անքնին դատաս-տանաւ. և ցաւէր յոյժ նոցա՝ զի յայնժամ զԱղկիբիադէս ոչ քարշէցին 'ի դատաս-տան, և ոչ փուրշիշ 'ի վերայ կապեցին զմեծաց ամբաստանութեանցն։ Եւ այս-պէս ապա՝ որ միանգամ ընտանեակ նո-րա, և կամ բարեկամ ոք և կամ ընկեր կենակից ոք, սրտմտութեանն այնմիկ հան-

դիպեալ Ալթենացւոց՝ անողոքելիս ոմանս և գժոխըմբերս գտանէր զնոսա։ Իսկ զդաստախաղն՝ Թուկիդիդէս զանց արար ասնուանել մեզ, սակայն այլք ոմանք ասնուանեալ կոչեն զնոսա Դիոկղիդէս և Տեւկրոս. ըստ որում և Փրիւնիքոս կատակերգակ քերթէ այսպէս.

"Դու՛ Հերմէս յոյժ տենչալիդ,
Պահ կա՛լ անքուն դու Հերմէս.
Պատրաստ կա՛ց, մի՛ վայր անկեալ
Ըզքեզ ինքնին խաթարես։
Գուցէ ոք այլ բանսարկու՝
Մեզ յարիցէ Դոկղիդէս,
Եւ զեան մեծ՝ չարիս տուգանս
Ածեալ բերցէ նայապէս։
Զգուշացեալ կամ ես պահեմ,
Զի ո՛չ կամիմ Տեւկրոսին
Մատնութեան վարձ տալ ձեռին՝
Արենախանձ օտարին"։

Թէպէտ և դատախաղքն ինքնին ոչինչ հաստատուն և ո՛չ զօրաւոր ինչ դարձեալ բաւական եղեն 'ի բերել յատենին։ Նա զի՝ և մի ոմն 'ի նոցանէն հարցեալ, եթէ զիարդ նա ծանեաւ 'ի դիմաց զարան՝ որ զՀերմէս ծայրատեալ ի՛ցեն, իբրև պատասխանի ետ այրն՝ եթէ 'ի լոյս լուանին, համբուն նշաւակեցաւ. քանզի 'ի նորեալ լուանին գործեցան իրքն։

Եւ յայսմանէ աղմուկ շփոթիչ յուզեցին մնաւոր մարդիկն, այլ խուժան ժո-

զովզդեանն ոչինչ հանդարտեալ զիջանէր
'ի վերայ զբաղարտութեանցն. այլ որպէս
'ի սկզբանն վառեցաւ բորբոքեցաւ միան-
գամ, զնոյն և ոչ դադարեաց առնուլ վա-
րել 'ի բանս առհասարակ՝ զորոց միանգամ
ոք դատախազէր։ Արդ՝ 'ի կապեալսն անդ և
'ի բանտարկեալսն 'ի դատաստան՝ էր յայն-
ժամ և Անդոկիդէս հռետոր՝ զոր Եղանի-
կոս պատմաբան 'ի սերնդոց անտի Ոդիս-
սեայ աւանդէ զնա լինել։ Եւ էր կարծեալ
Անդոկիդէս իբրև ռամկատեաց և աւադ-
պետական։ Բայց ոչ նուազ ինչ կասկա-
ծելի արար զնա վասն ծայրատութեան
դրօշելոցն՝ անդրին այն մեծ նորուն չէր-
մեայ, որ մօտ 'ի տուն նորա առ 'ի ձօն
կանգնեալ կայր յԵգեանց ցեղէն։ Քան-
զի 'ի սակաւաթիւ յայն արձանս յոյժ ա-
կանաւորս՝ գոգցեաւ այս միայն անվթար
պահեցաւ. վասն որոյ և մինչև ցայսօր ժա-
մանակի անուանեալ կոչի՝ Անդոկիդէայ. և
այսպէս կոչէն առհասարակ՝ թէպէտ և
մակագիրն ընդդէմ վկայէ։ Արդ դէպ
եղև՝ զի 'ի բանտարկեալսն էր և յընտա-
նեացն և 'ի կարևոր բարեկամացն Անդոկի-
դեայ Տիմէոս անուն ումն, թէպէտ և ոչ
զուգափառ նմա, սակայն էր նա այր ա-
ռաւել ուշիմ և խիզախ։ Սա այս Տիմէոս
խօսէր և հաւանեցուցանէր զԱնդոկիդէս՝
ինքնին դատախազ լինել վասն անձին և
վասն այլոց սակաւուց. և խելամուտ առ-
նէր զնա՝ եթէ ըստ վճռոյ ժողովրդեանն
անպատուհաս արձակի այր՝ որ ինքնին խոս-

տովան լինիցի. և թէ՝ էլք դատաստանիդ անյայտ է ամենեցուն, իսկ ճոխիցն և ա-ւագաց արանց՝ յոյժ ահաբեկ է. և թէ՝ լաւ է ստել ինչ և ապրեցուցանել զանձն, քան այլոցն ստելով անարդաբար զմահ ընդունել. և զի՝ որ 'ի հասարակացն շահ դէտ ակն ունիցի, արժան է 'ի կորուստ զնուազունս ոմանս անփոյթ առնել և զկեղակարծելիս՝ առ 'ի փրկել 'ի մահահոտ կրից զբազումս 'ի քաջաց և յառաքինեաց: 'Ի բանից ասի Տիմէոսին և 'ի խրատուէն ա-ծեալ Անդոկիդէս՝ և ամբաստան կացեալ վասն անձին և վասն այլոց, ինքն անպա-տուհաս արձակեցաւ 'ի վճռոյն. սակայն առհասարակ՝ զորոց միանգամ գուշակեաց նա՝ 'ի մահ վարեցան, բաց 'ի փախստէիցն. քանզի Անդոկիդէս առ 'ի հաւատարմա-գոյնս գործել՝ նա և յիւրոց անտի ծառայից առեալ անուանեաց ընդ վնասակարսն:

Ալ յայսր ամենայնի վերայ՝ ոչ զի-ջանէր խուժանն 'ի մոլեգին բարկութէն. այլ զերան վճարեալ զսեղանակապտիցն Հերմեայ, այնուհետև բովանդակ զմթե-ռեալ սրտմտութիւնն հեղոյր ընդդէմ Ալ-կիբիադեայ: Ապա 'ի վերջէ զԱղամինեան նաւն առեալ արձակեն առ նա՝ պատուէր տուեալ իմաստութեամբ պատուիրակացն՝ մի ձեռն մխել 'ի նա և մի ինչ բուռն առ-նել նմա, այլ հեզաբար բանիւք ազգ առ-նել՝ դալ մտադիր զկնի նոցա և յանդի-մանն եղեալ առենին՝ հաճել զժողովուրդն: Քանզի երկեան՝ գուցէ ամբոխ յուզեսցի

'ի զօրուն յերկրին Թշնամեաց. և ինքնին Աղկիբիադէս հեշտեաւ ձեռնհաս էր 'ի բանն՝ եԹէ կամէր. քանզի և 'ի մեկնել նորա 'ի բանակէն՝ սրտաբեկ լուծան զօրականք, և 'ի Նիկիասայ զօրավարութեանն ժամավաճառք ԹարԹափէին 'ի մարտին պարապորդք. իբրու որք 'ի մորակէ նահատակութեան գործոցն զերկք մնացեալ էին. զի Թէպէտ և Լամաքոս այր մարտիկ և քաջ էր, այլ 'ի պատճառս չքաւորութեանն՝ յաւագութենէն անբաժ էր այրն և 'ի պերճութենէն։

Արդ փութանակի Աղկիբիադէս մուտեալ 'ի նաւն և մեկնեալ 'ի բանակէն, զրկեաց զԱԹենացիսն ունել զՄեսինա. քանզի անդ մատնտուք՝ 'ի ձեռս նորա հանդերձեալ էին տալ զքաղաքն. և ապա նա՝ որ ճշդիւտ ճանաչէր զմատնտուսն՝ 'ի վեր հանէր զնոսա առաջի բարեկամացն Սիրակուսացւոց, և այնպէս խայտառակէր ըզհաղքն։ Իբրև եկն եհաս 'ի Թուրիս, էջ 'ի նաւէն և չոքաւ Թաքեաւ և անձնապուր լինէր 'ի խնդրակացն։ Իսկ անդանօր այր ոմն ծանուցեալ զնա, ասէր այսպէս։ "Ձէ՞ս դու ինչ վտահ 'ի քոյին հայրենի քաղաքդ ո՞վ Աղկիբիադէ". եւ պատասխանի և ասէ. "Եւ կարի իսկ քաջ յայնն ամենայն. իսկ վասն անձին իմոյ և ո՛չ 'ի մայրն իմ արդեօք. մի Թերևս զսեաւն քուեայ փոխան սպիտակին արկցէ անխորհրդաբար"։ Իսկ իբրև լուր էառ՝ եԹէ մահու դատակնիք 'ի վերայ կապեաց նորա քաղաքն, ա-

սէ. Այլ էս ինչնին ցուցից նոցա՝ երբէ կէնդանի էմ։ Բայց դատախազութիւնն Աղկիբիադեայ օրինակ զայս արձանագրեցաւ. "Թեսսաղոս Կիմոնեան Ղակիադէս՝ վասն Աղկիբիադեայ Կղինեան Սկամբոնիդեայ դատախազեաց, եթէ անկրաւեցաւ առ դիցուհիսն՝ առ Դեմետր և առ Օրիորդն (Պերսեփոնէ). նմանութեան հանդէս գործելով նուիրական խորհրդոցն, և ցուցանելով զայնոսիկ իւրոցն ընկերաց յիւրում իսկ տան. պատմուճան արկեալ զանձամբ՝ զորօրինակ Քահանայն արկեալ զիւրեաւ ցուցանէ զսրբութեան նուիրականն. և անուանեալ կարդաց զանձն իւր Քահանայ. իսկ զՊողիւտիոնն՝ Ջահընկալ, և զԹէոդորոս Փիւդէացի՝ Քարոզ. իսկ զայլս ոմանս յընկերացն՝ Իւղադրնեալս և Վերատեսուչս յորջորջեաց, հակառակ օրինաց և սահմանադրութեանցն Եւմոլպիդեանց և Քարոզից և Երիցանցն Եղեւսինեայ"։ Եւ այսպէս ապա դատապարտեալ զԱղկիբիադէս, զդոյս նորա հրապարակեցին. և սահմանեցին ևս՝ ամենայն քրմաց և քրմանուշից անէծս կարդալ 'ի վերայ նորա. յորոց մի ոմն միայն Թէանէ անուն քրմանոյշ դուստր Մենոնի Ագրաւլացի՝ պատմեն՝ եթէ զդէմ դարձեալ սահմանին, ասէր. Ջաղօթից՝ և ո՛չ զանիծից փաղանայուրեան պաշտեմ։

Այլ մինչ նոքա զդատակնիքն էտուն, նա դեգերեալ կայր յԱրգոս. քանզի աւաջին փախստեայ գնացեալ 'ի Թուրիոյ՝

եկն Եհաս 'ի Պեղուսոննիսոս։ Բայց Երկուցեալ 'ի Թշնամեաց և խապառ յուսահատ 'ի դարձ քաղաքին, առաքեաց 'ի Սպարտիա՝ աղաչէր անդանօր բնականալ յանդորրու. քաջիկ ևս հաւատարմացուցանէր՝ մեծապէս շահ 'ի նեղքս բերել այնուհետև Սպարտացւոց՝ քան զառաջին տուգանսն վրիժուն զոր հասոյց նոցա։ Իբրև զինդրուածն ընկալան Սպարտացիք, յոյժ զուարթացեալ Աղկիբիադէս՝ յաբեաւ չոքաւ առ նոսա, որք և մոադիւրագոյնս ժողովեցին զնա։ Ապա անդէն վաղվաղակի առաջին դրդեաց նա զՍպարտացիս անդանդաղ ձեռն օգնականութեան առաքել առ Սիրակուսացիս, և յորդորէր արձակել անդր զօրավար զԳիւլիպպոս և աղաղտել վանել անդանօր զզօրութիւն Աթենացւոց։ Իսկ երկրորդ անգամ՝ յուզեաց մարտ պատերազմի և անդուստ 'ի Սպարտիոյ ընդդէմ Աթենացւոց։ Իսկ երրորդ՝ որ մեծապէս էր, ետ ամրութիւն ածել Դեկելեայ. և այս առաւել քան զամենայն վատթարեաց և նկուն արար զԱթէնս։ Եւ սքանչացաւ Աղկիբիադէս 'ի հրապարակի և առանձինն, և յինքն առհասարակ յանդուցանէր. զի և յասպնութիւն հարեալ այլ յայլմէ լինէին ընդ լակոնացի քաղաքավարութիւն կենաց նորա. տեսեալ զնա՝ զի այնպէս կարճնովին գերծոյր, և ցուրտ ջրով լուանայր, և նստեալ ուտէր զՄաղայն 2 նոցա, և ճաշակէր 'ի սեաւ արգանակէ Սպարտացւոցն. յոյժ

հիացեալք ոչինչ կարէին հաւատալ՝ եթէ այն աւագ այր երբէք 'ի տան խախտմամբ կալեալ լցէ, կամ թէ յիւղեփեցաց զոք տեսեալ լցէ, կամ թէ 'ի Միլէտեան ինչ պատմուճան երբէք հպեալ լցէ։

Քանզի սա այս Աղկիբիադէս՝ որպէս պատմեն՝ հանդերձ այլովք՝ և խաբանս ճարտարէր և հնարիմացութիւնս՝ յանգուցանել զմարդիկ, նմանելով ճշգրիտ այլոցն ըղձից և յարմարելով սովորութեանց. քանզի և արագ ևս յաջողեալ իսկ էր 'ի փոխել զբարսն, քան եթէ գետնաւիծունք ինքնին 'ի փոխել զգոյնն. զի որպէս ասեն անձեռնհաս է կենդանին այն 'ի գոյն սպիտակ միայն, իսկ Աղկիբիադէս կենակից կենցաղակից անխտրաբար լինելով չարաց և բարեաց, չէր ինչ՝ որում չնմանէր, չէր ինչ՝ որում չյարմարէր։ Քանզի 'ի Լակեդեմոնիա էր ըմբիշ մարտիկ՝ սակաւապէտ և խստամբեր։ Իսկ 'ի Յոնիա գրգասէր, զբօսասէր և դատարկասուն։ Իսկ 'ի Թրակիա գինեճան, և ասպականի։ Եւ ապա 'ի բնակակցութեանէ իւրում ընդ Տիսափերնեայ նախարարի՝ 'ի պերճութեան և 'ի բազմահանդերձ սպասուն զանցանէր և զշքեղութեամբն Պարսից։

Այլ յայսոսիկ ոչ եթէ փոփոխէր ինչ և այլ յայլմէ լինէր, և այնպէս հեշտեաւ բարուց 'ի բարս անցանէր, այլ զտնկակից բոյս բարուցն տեսեալ թերևս տաղտկալի կենակից մարդկանն, ցանգ կերպարանէր և ըստ նոցայցն ձևանայր։ Ուստի և 'ի Լա-

կեդեմոնիա քաղաքավարեալ նորա, որ միանգամ զարտաքինն յակն արկանէր՝ ասէր արդեօք զնմանէ, եթէ "Ո՛չ որդի Ա-քիլլեայ է դա, այլ Ա-քիլլէս ինքնին գլխովին՝ զոր Լիւկուրգոս ինքնին դաստիարակեալ ելցէ". բայց 'ի նեղբինն նորա յառեալ, և կրկին և արդեանցն համօրէն 'ի վերայ կացեալ, ասացէ ոք, եթէ "Այն վաղնջուց կինն է դա": Քանզի մոռեալ պղծեաց նա զՑէմէա զկին արքային Ագիսայ՝ որ յայնժամ արտաքոյ աշխարհին մարտ մղէր, մինչև յղացաւ կինն յԱղկիբիադեայ և ոչ ժխտեաց. իսկ մանկանն՝ որ ծնաւ արու, արտաքոյ տանն անուն կարդային Լէոտիքիդէս. իսկ զոր առ տնին անուն կարդայր նմա մայրն հծծելով ընդ տիրուհեացն և ընտանեկաց, էր Աղկիբիադէս: Այսչափ դրաւեաց կալաւ զկինն սէրն Աղկիբիադեայ. որ և պանծանօք ասէր՝ ոչ անիրաւութեան ինչ մտօք գործեալ զբանն, և ոչ 'ի ցանկութենէն ձըգեալ և պարտեալ, այլ զի ՃԵտ Թագաւորաց տայցէ Լակեդեմոնացւոց սերեալ առ 'ի նմանէ: Բայց զգործ զայս զԱղկիբիադեայ շատք յայնժամ չոքան պատմեցին Ագիսայ. և հաւատայր նա՝ առաւել ևս վասն ժամանակին՝ յորում զահի հարեալ Ագիս 'ի գեոնաշարժէ իմեմնէ վազեաց յառագաստէն ուր կայր ընդ կնոջն, և ապա չեմուտ առ նա ամիսս տասն՝ մինչև ծնաւ Լէոտիքիդէս, և ոչ ծանեաւ զնա. և նորին աղագաւ և Լէոտիքիդէս յետ այնորիկ

ապա մերժեալ 'ի բաց վարեցաւ 'ի Թագաւորութենէն։

Այլ յետ արկածիցն Աթենացւոց 'ի Սիկիլիա, Քիացիք և Լեսբացիք և Կիզիկեցիք՝ միանգամայն առաքէին հրեշտակս 'ի Սպարտիա խնդրել ձեռն օգնականութեան. քանզի կամէին վտարանջել յԱթենացւոց։ Անդ Բիովոտացիք աղերս մատուցեալ վասն Լեսբացւոցն, և Փարնաբազ վասն Կիզիկեցւոցն, Սպարտացիք սադրեալք յԱղկիբիադէայ՝ առաջին առ Քիացիսն ապաքէին օգնութիւն. անդանօր ինքնին և Աղկիբիադէս հասեալ՝ վայրիկ մի ևս զՅոնիա ողջոյն յապստամբութիւն դրդէր, և կացեալ անդ ընդ զօրավարս Լակեդեմոնացւոց՝ զեան բազում հասուցանէր Աթենացւոցն։ Եւ յայսմանէ Ագիս ոխերիմ նմա վասն անարգանաց անկողնոյն, 'ի սրտնութիւն դառնայր և ընդ փառն նորա. զի և զհամբաւի հարկանէր այսպէս՝ իբրև գեղեցիկս ունել էլս իրացն 'ի ձեռն նորա։ Առ այս՝ և այլոց ևս աւագացն Սպարտացւոց և Ճոխից դժոխամբերելի էր Աղկիբիադէս, և խեռային ընդ նա. ուստի և սաստիկ և բուռն սիպեցին զնշխանն, որպէս զի և 'ի Յոնիա գրել նոցա՝ զի սպանցեն զԱղկիբիադէս։ Ազդ նմա 'ի ծածուկ եղեալ բանին՝ զահի հարեալ կայր. Թէպէտ և յամենայն 'ի գործս ձեռնամուխ էր ընդ Լակեդեմոնացւոցն, սակայն և մեծապէս զդուշացեալ անձնապահ լինէր։

Ապա յանդորրու կացուցեալ զանձն՝

ջոքաւ առ Տիսափէրնէս նախարար արքային, և անդէն առաջին բարձի և աւագութեան հասանէր առ նմա։ Քանզի և բարբարոսն ինքնին՝ ոչ պարզ գոլով մտօք այլ ջարաբարոյ և ջարասէր, հիացեալ իսկ էր ընդ բազմահնար և ընդ սասիկ խորագիտութիւն նորա. զի և 'ի հանապազօրեայ կենակից և 'ի մարդասէր քաղաքավարութեանն՝ միանգամայն զամենայն բարս և զամենայն բնութիւն՝ շնորհիւն յինքն որսայր և յանգուցանէր. նա և որոց միանգամ զանգիտէին 'ի նմանէ և խեռային ընդ նա, նոցուն դարձեալ հեշտ և բաղձալի էր կալ ընդ նմա և տեսանել զնա։ Եւ Տիսափերնէս ինքնին անագորոյն այր և հելլենատեաց առաւել քան զամենայն Պարսիկ՝ այնպէս իմն յանգուցեալ էր 'ի շնթեղոյն Աղկիբիադեայ, որպէս զի և փոխադարձ մարդահաճութեամբն ինքն զանցանէր զնովաւ։ Քանզի և դրախտին՝ որ գեղեցիկ ևս գոյր յամենայն գարաստանս նորա վասն ջուրցն վտակաց և առողջ և զուարթարար մարգաց, և վասն ձեմելեաց և հովանաւոր վայրաց, գործ արքունի և յոյժ քաջարուեստ, դրախտին այնմիկ ինքն անուն կարդայր՝ ԱՂԻԲԻԱԴԷՍ. ապա և այլքն նոյնպէս անուանեալ կարդային։

Իբրև այնուհետև յուսահատ 'ի Սպարտացւոցն լինէր Աղկիբիադէս, և զանգիտեալ ևս էր յերեսաց Ագիսայ, ինդրեաց տուգանս 'ի վերայ ածել նոցա. կայր և բամբասէր զնոսա առաջի Տիսափերնեայ,

և չտայր նմա թոյլ արագ յօգնութիւն հասանել նոցա, զի մի խսպառ խորտակեսցին Աթենացիք. խորհուրդ տայր նմա՝ դեգերել դանդաղել, զի այնպէս տակաւ անկեալ նոքա յուժոյ և առ 'ի միմեանց մարտէն վատեալք, երկոքին կողմանքն միանգամայն ընդ ձեռամբ նկուն լիցին աղքային։ Իսկ Տիսափերնէս հեշտեաւ յանկչէր 'ի բանսն. քանզի և ակն յայտնի յոյժ սիրելի էր նմա Աղկիբիադէս և պանչելի, որպէս զի և 'ի նա ինքն ակնկառոյց էին առ հասարակ Հելլենացիք. իսկ Աթենացիք ձախողակի հանդիպեալք էլից՝ սորչանային ընդ խորհուրդն զոր խորհեցան նոքա ընդդէմ նորա. և ինքնին դարձեալ Աղկիբիադէս վչտացեալ յոյժ էր և զանգիտէր, գուցէ հիմն 'ի վեր տապալեալ Աթենայ՝ ընդ ձեռամբ գրաւեալ կացցէ Լակեդեմոնացւոցն ատելեաց նորա։

Զայնու ժամանակաւ Աթենացւոցն զօրութիւն ամենայն առկայացեալ էր 'ի Սամոս. և անդուստ նոքա յարձակեալ նաւաց հանդիսիւ՝ միւսանգամ 'ի բուռն արկանէին զվտարանչեալսն, և պահ ևս զգուշութեան կարգեալ 'ի վերայ այլոց՝ զի մի յապստամբութիւն մտաբերեսցեն. քանզի և տակաւին էր նոցա գոգ հաւասար ծովամարտիկ ընդ Թշնամեացն լինել։ Սակայն և զահի հարեալ էին նոքա 'ի Տիսափերնեայ և յեռաթիոց անտի Փիւնիկեցւոց հարիւր և յիսուն, որոց և ըստ համբաւոյն ժամ 'ի ժամ ակնկալեալ մնային, յու-

սաբէկ այնուհետև եղեալ 'ի փրկութենէ քաղաքին 'ի գալուստ նոցա։ Որում իրաղ-գած Աղկիբիադէս եղեալ՝ գաղտ առաքէր 'ի Սամոս առ աւագորեարն Աթենացւոց՝ յոյս առաջի դնէր նոցա հաշտ և բարեկամ ընդ նոսա զՏիսափերնէս յարդարել. ոչ եթէ զխուժանն կամեցեալ ինչ հաճել, կամ թէ այնուհետև վստահ ինչ 'ի նոսա լինել, քան եթէ 'ի շնորհս աւագորեբոյն. եթէ երբէք գոտէպինդք նոքա ապրեցու-ցեալ զհասարակացն և զքաղաքն, քաջու-թեամբ սանձակոծեսցեն զդոռոզացեալ խեռութիւն ռամկին։

Ապա անդէն աւագորեար Աթենաց-ւոց սերտիւ միաբանեալ ընդ Աղկիբիա-դեայ, մի ոմն 'ի զօրավարացն Փրինիքոս Դի-ոգիոտէս ընդէմ դարձաւ. կասկած 'ի մտի եդ (որպէս և էր իսկ), եթէ Աղկիբիա-դեայ ոչ փոյթ ինչ է՝ խուժանին կամ թէ աւագորեբոյն առաջնորդել քաղա-քին. այլ թէ այպանօք խուժանին խնդրէ դա զմիւսանգամ հրաւէր 'ի քաղաք անդր՝ յինքն զաւագորեարն յանգուցանելով։ Այլ յալթեալ 'ի խորհրդոյն Փրինիքոս, և յայտնի ևս թշնամի եղեալ Աղկիբիա-դեայ, առաքեաց գաղտ առ Ատիոքոս նաւապետ թշնամեացն. ազդ առնէր ըզ-գուշանալ յԱղկիբիադեայ և ձերբակալ ևս առնել զնա, իբրու այր սուտակասպաս երկկողմանի։ Այլ մատնիչն քաջ իսկ սիա-լեաց բանագնաց լինել ընդ մատնչի։ Քան-զի Ատիոքոս մեծապէս պատուադիր Տի-

սափերնեայ տեսեալ զԱղկիբիադէս 'ի շուք պատուոյ առաջի նորա, 'ի վեր հանէր նմա զբանն Փրինիքեայ։ Նա անդէն վաղվաղակի առաքեալ 'ի Սամոս ամբաստան լինէր զՓրինիքոսէ. տեսեալ Փրինիքոս զի առհասարակ 'ի սրտմտութիւն բարկութեան բրդեցան ընդդէմ նորա, ելս չգըտեալ անձնապուր լինել 'ի մօտալուտ վըտանգէն, դարման տանէր նա յայնժամ չարին՝ մեծ ևս չարեաւ։

Քանզի միւսանգամ յղեալ առ Ասիոքոս դանգատէր դառնապէս վասն մատնութեանն, և խոստանայր ևս նմա 'ի ձեռս տալ նորա զԱթենացւոց նաւսն և զզօրն։ Այլ զեան և ոչ մի լինէր Աթենացւոցն յայնմանէ. քանզի անդրէն մատնտու դաւանացն լինէր Ասիոքոս առ Աղկիբադէս։ Իսկ Փրինիքոս նախազգաած ակնկալեալ երկրորդ ամբաստանութեանն Աղկիբիադեայ, կանխեաց ազդ առնէր Աթենացւոց զմօտալուտ ժամանել նաւաց թշնամեացն, և խրատ տայր զգուշութեան նաւաց և ամրութեան բանակին։ Մինչդեռ 'ի նոյն պարապեցան Աթենացիք, անդուստ գայր հասանէր դարձեալ նամակ յԱղկիբիադեայ ազդարար վասն Փրինիքեայ, իբրու որ մատնտու հանդերձեալ է լինել նաւաց 'ի ձեռս թշնամւոյն. այլ նոքա ոչ հաւատացին՝ իբրու այն որ քաջիկ գիտելով Աղկիբիադէս զկազմած և զնորհուրդս թշնամեաց, պատճառի իմն յանիրաւի ամբաստանել զՓրինիքոս։ Այլ ապա յետ

ժամանակաց Իբրև մի ոմն 'ի պահակաց քա-
ղաքին Երմոն անուն՝ սպան զՓրինիքոս 'ի
հրապարակի հարեալ դաշնակաւ, յայն-
ժամ 'ի քնին առեալ զբանն՝ զմահն Փրի-
նիքեայ կնքեցին Իբրև զմատնչի առն, և բո-
լորեալ պսակեցին զԵրմոն և զընկերս նորա։

Ա՛յլ որ 'ի Սամոս աւագորեալն՝ բարե-
կամք Աղկիբիադեայ՝ առեալ արձակեցին
յԱթէնս զՊիսանարոս երթալ փոխեալ զ-
կարգ քաղաքին, և խրախոյս տալ աւա-
գացն առնուլ զառաջնորդութիւնն և լու-
ծանել զընկերհաշտութիւնն՝ ըստ պայմա-
նին Աղկիբիադեայ յարդարեալ զՑիսափեր-
նէս նոցա բարեկամ և նիզակակից. քանզի
զայս պատրուակ և դիմակ առին յայնժամ
Աւագպետականքն։ Ա՛յլ Իբրև զօրացեալ
յինքեանս զքաղաքն յանգուցին՝ որ ա-
նուանեալն կոչէին Հինգ հարիւր, Թէպէտ
և չորեքհարիւրք էին թուով, ոչինչ այնու-
հետև պատկառ կացին Աղկիբիադեայ. և
դանդաղէին ևս 'ի մարտս՝ զանգիտեալք 'ի
նոցանէ որ դժկամակն եղեն ընդ փոփոխել
իրացն. և զի՝ և զԼակեդեմոնացիսն զաւագ-
պետականսն նովաւ հաշտ առնէին։ Իսկ
խուժանն Աթենայ առ ահին նստէր հան-
դարտեալ. քանզի և ո՛չ նուազունք ոմանք
յայնժամ որ ընդդէմ դարձան չորեքհա-
րիւրոցն, 'ի մահ վարեցան։

Բայց որք 'ի Սամոսն էին լուր առեալ
զնիրացն և 'ի բարկութիւն բրդեալ՝ հաս-
տատեցին անդէն խաղալ նաւէլ 'ի Պիրէա,
և կոչ յղեալ առ Աղկիբիադէս և զօրավար

կարգեալ՝ 'ի ձեռս եւտուն նորա զնչխանու-
թիւնն խաղալ նկուն առնել զբռնաւորսն.
այլ ոչ հաճոյ թուեցաւ Աղկիբիադեայ
յայնժամ։ Բայց անշուշտ ոք յանձն ա-
ռեալ էր զբանդ՝ այնպէս յանկարծ յայն
աւագոյնթ բարձրութեան հասեալ 'ի ժո-
ղովրդոց. իբրու եթէ արժան ւցէ արդեօք
հաճել զպատուադիր որեարն, և մի զդէմ
դառնալ այնոցիկ՝ որ զվտարանդի զոմն և
զփախստեայ՝ առաջնորդ և զօրավար կար-
գեալ ւցեն յոքնաթիւ նաւացն և բանա-
կին և ատուար գնդին։ Այլ որպէս աւագ
իշխանի վայել էր, այնպէս ելդէմ դարձաւ
յայնժամ Աղկիբիադէս՝ որոց 'ի սրտմտու-
թիւն բերեալ էին, և արդեալ սանձեաց մի
ինչ յանցանեալ. որով և քաջ իսկ Աղկի-
բիադէս 'ի ժամուն փրկեալ ապրեցոյց ըզ-
քաղաքն։ Քանզի եթէ յայնժամ չու ա-
ռարեալ 'ի Սամոսայ դիմեալ էր Աթենաց-
ւոցն 'ի տուն իւրեանց, անդուստ թշնամ-
ւոյն փութապէս տիրացեալ էր անզէն
անկռիւ առհասարակ 'ի վերայ Յոնիոյ և
Հելլեսպոնտոսի և Կղզեացն, մինչդեռ
մարտ Աթենացիքընդ Աթենացիսն եղեալ
կռուէին 'ի քաղաքին. զոր և ինքնին Աղ-
կիբիադէս յայնժամ արդեալ կնքեաց՝ ոչ
համոզակեր բանիւքն միայն և հրապարա-
կախօս խրատուն, այլ և յաղերս ևս ան-
կեալ և կշտամբանս ևս 'ի վերայ կապեալ
միոյ միոյ 'ի նոցանէն առանձինն։ Նմա
գործակից 'ի նոյն նահատակեցաւ յայն-
ժամ և Թրասիբուղոս Ստիրէոս՝ արձանա-

ցեալ 'ի միասին, և աղաղակ մեծապէս բարձեալ. քանզի և էր իսկ այս թրասիբուղոս՝ որպէս ասեն՝ յոյժ բարձրագոչ և աւադաձայն 'ի մէջ ամենայն Ա֊թենացւոց։

Իսկ երկրորդ գեղեցիկ նահատակութիւն նահատակեցաւ նա, յորժամ զՓիլնիկեան նաւն զարքային՝ որոց ճնային Լակեդեմոնացիք՝ խոստացեալ դարձուցանել առ Ա֊թենացիսն, կամ թէ և զԼակեդեմոնացիսն վրիպեցուցանել, ինքն փութապէս նաւեաց ընդ առաջ. և Փիլնիկեանցն հասեալք յԱսպենասն՝ ոչ եւ Տիսափերնեայ ածել զայնոսիկ առ Լակեդեմոնացիսն, և 'ի գերեւ հանէր զնոսա։ Բայց զԱղկիբիադէս ինքնին պատճառս կալան, զի անբաժ յօգնականութենէն եղեն միանգամայն և Ա֊թենացիք և Լակեդեմոնացիք, և վերջինքդ առաւել քան զառաջինսն. մեղ եղեալ զի սադրեաց նա այնպէս բարբարոսին, զի առ 'ի միմեանց հարեալ վատթարեսցին հելլենք։ Քանզի և յայտնի իսկ՝ որ ոք յերկոցուն կողմանց զնաւախուռմէն զմեծ յինքն արկանէր, նա զծովուն տէրութիւն հանէր իսպառ 'ի ձեռաց ընկերին։ Եւ յայսմանէ նկուն եղեալ նուաստեցան չորեքհարիւրքն. քանզի բարեկամք Աղկիբիադէայ մտադիւրագոյնս նիզակակից եղեն մարդկանն՝ որ կուսակիցքն էին ռամկին։ Ուստի և քաղաքացիքն հրաման տուեալ դարձին Աղկիբիադէայ, խորհեցաւ ոչ դատարկաձեռն դառնալ 'ի շնորհս ժողովրդեանն, այլ փառօք մեծաւ։

Ապա զառաջինն սակաւ նաւուք ելեալ 'ի Սամոսայ, ջրաւ շուրջ յածէր 'ի Կնիդիոն և 'ի Կով. և անդ լուր առեալ՝ զի Մինդարոս Սպարտացի հանդերձ ամենայն բանակաւն ծովագնաց խաղայ 'ի Հելլեսպոնտոս, և Աթենացիք հետամուտք են նորա, 'ի շտապ տագնապի խաղայր գնայր Աղկիբիադէս ձեռն տալ զօրավարացն Աթենացւոց։ Հասեալ ուրթ և տասն նաւուք 'ի ժամուն՝ յորում երկոքին կողմանք միջամուխք նաւամարտիկ լինէին առ սահմանօքն Աբիւդոնի, և երկոքին միանգամայն 'ի միում թևի անդ յաղթողք և 'ի միւսումն յաղթեալք՝ սաստկապէս մղէին զդոռ մարտին մինչև 'ի տարաժամել աւուրն. իբրև երևեցաւ նա, անդ կողմանք երկոքին ներհակաբար կալեալ զկարծիս, թշնամիք խրախուսեցին, և Աթենացիք սրտաբեկ լինէին։ Իսկ անդէն յաւագ նաւէն նշան բարեկամութեան ամբարձեալ Աղկիբիադէս զԱթենացւոցն, 'ի նոյն և աճապարեալ անկանէր սասակութեամբ 'ի վերայ Պեղոպոննիսացւոցն յայնմ կողմանէն՝ ուստի նոքա յաղթականք զհետ մտեալ էին Աթենացւոց։ Անդանօր Լակեդեմոնացիք ընդ կըլունկն 'ի փախուստ խուճապեալք յերեսաց նորա, դայլն անկանէին 'ի ցամաքն. նա զհետ մտեալ վանէր հարկանէր զնաւս նոցա, և խոցէր վերաւորէր որք 'ի լիւղ անկեալ փախստեայ գնային, մինչդեռ անդուստ յափանցն շտապաւ Փարնաբազ ձեռն տայր նոցա, և անդ առ ծովափամբքն

մարտ եղեալ կռուէր փրկել զնաւան։ Ապա Աթենացիք նաւս երեսուն կալեալ 'ի թշնամեաց, և զիւրեանցն ևս 'ի բուռն արկեալ, նշան յաղթութեան կանգնէին։

Իսկ Աղկիբիադէս յետ գեղեցիկ նահատակութեանն պատուասիրեալ շքով յանդիման լինել Տիսափերնէայ, 'ի պարգևս և 'ի տուրս հիւրամեծարս ջոքաւ առ նա հանդերձ արամբքն ըստ արժանի աւագութեան։ Սակայն վրիպեցաւ 'ի յուսոյն. և քանզի գիտէր իսկ քաջ Տիսափերնէս զբասրել իւր 'ի Լակեդեմոնացւոց 'ի հարուստ ժամանակաց, և զանգիտեալ՝ եթէ երբէք առ ալքայի ամբաստան զնմանէ լինիցին, դէպ ժամանակ գտեալ զդալստեանն Աղկիբիադէայ՝ ետ անդէն ձերբակալ առնել զնա, և 'ի զգուշութիւն բանտի տայր 'ի Սարդիս. զմուաւ ածէր՝ եթէ անիրաւութեամբն ապրեսցի յամբաստանութենէն Սպարտացւոց։ Իբրև աւուրք երեսուն 'ի վերայ անցանէին, երիվար մի ուստեք գըտեալ Աղկիբիադէս և անձնապուր եղեալ 'ի պահապանացն, փախուցեալ գայր 'ի Կղազոմենէ. քսութիւն մատուցանէր ըզՏիսափերնէայ՝ եթէ ինքնին նա թոյլ ետ նմա փախչել։ Անց ապա նաւէաց և էկն 'ի բանակն Աթենացւոց. լուր առեալ եթէ Մինդարոս և Փարնաբազ էն 'ի Կիւզիկոն, դրդէր զզօրականն և հարկ ևս ցուցանէր այնուհետև մարտ պատերազմի կարգել ծովամարտ և ցամաքամարտ. առ այս՝ և խաղալ և պատուարամարտ ևս կռուել ընդ

թշնամիսն. իբրև զի՝ եթէ ողջ զյաղթութիւնն ոչ տարցին, ոչ արծաթ և ոչ այլ ինչ այնուհետև գացեն նոքա։ Ապա 'ի նեղքս 'ի նաւսն հորդան տուեալ զօրականին, անկանէր յուղի. հասեալ 'ի Պրիկոնեսոս՝ հրաման տայր զմանուսն 'ի նաւաց 'ի միջոցին խառնել, մեծապէս զգուշացեալ անշքշունչ ամենևին զանխուլ 'ի թշնամւոյն չուառնել։ Արդ դէպ եղև յայնժամ՝ զի և յեղակարծ տեղատարափ անձրևոյ և բոմբիւն որոտման և մռայլ օդոցն այնպէս գործակիցք յաջողեցան խորհրդոյն և 'ի ծածուկ կալան զպատրաստութիւնն. զի և ոչ թշնամիք միայն չզգացին չուոյն, այլ և Աթենացիք ինքնին 'ի նաւսն՝ չիմացան զարձակեալ նաւացն։ Իսկ վայր մի ապա պարզեալ օդոցն, տեսանէին զՊեղոպոննիսացւոց նաւսն խարիսխ արկեալ հանդէպ նաւահանգստին Կիլիկեցւոց։

Խորհեցաւ Ալկիբիադէս, գուցէ թշնամիքն առ 'ի բազմութենէ նաւացն իւրոց 'ի փախուստ խուճապեսցեն 'ի ցամաք անդր, հրաման ետ զօրավարացն առկայանալ 'ի վերջէ և տակաւ խաղալ յուշիկ, և ինքն քառասուն նաւուք յերևան եկեալ՝ ձայն տայր յասպարէզ։ Նոքա 'ի խաբանաց անտի արհամարհեալ զսակաւութիւն նաւացն Աթենացւոց, ճակատ յարդարեալ՝ անդէն ձեռնամուխ նաւամարտիկ լինէին։ Իսկ իբրև 'ի ժամ կռուոյն և այլք 'ի նաւացն եկին երևեցան, առհասարակ ապա զահի հարեալք 'ի փախուստ դառ-

նային։ Յառաջ դիմեաց խաղաց Աղկիբիա-
դէս նաւընտիր քսան նաւուք և մօտեալ 'ի
ծովեզն և ելեալ 'ի ցամաք, անկանէր 'ի
վերայ՝ որ 'ի նաւաց անտի փախստէիցն՝ և
հարկանէր զբազումս 'ի նոցանէ։ Նկուն ա-
ղարեալ պարտէր և զՄինդարոս և զՓար-
նաբազ, որ ձեռն օգնականութեան տային
նոցա. հզօրաբար կռուեալ առ ետեղ դի-
տապատ զՄինդարոս արկանէր, և զՓար-
նաբազ վանեալ 'ի փախուստ դարձուցա-
նէր։ Եւ այսպէս ապա զբազմակոյտ դիա-
կանց զառ և զապուր ժողովեալ և զզի-
նուց, 'ի բուռն արկանէին և զամենայն իսկ
զնաւսն. և հասեալ կալեալ և զԿիւզիկոն
թափուր յօգնականութենէն Փարնաբա-
զայ և Պեղոպոննիսացւոցն որ տապատ ան-
կան, ոչ 'ի Հելլեսպոնտոս միայն տիրացան
այնուհետև յաղթանդամի, այլ և 'ի ծովէն
առհասարակ վանեալ հալածեցին զԼակե-
դեմոնացիսն բուռն զօրութեամբ։ Յայն-
ժամ և նամակ մի կալան նոքա Լակոնացի
ոճով գուժաբեր Պարեոսայ զձախողակ
բախտին. և էր պատճէնն այսպիսի. "Տե-
զի Եռուն գեղեցիկքն. Մինդարոս անկաւ.
Քաղցեալ կայ որեարն. Վարանիմք՝ զինչ
պարտ իցէ գործել"։

Իսկ որք յայնժամ ընդ Աղկիբիադեայ
ձեռամբն զինուորեցան, այնպէս 'ի վեր
վազեալ և դոռոզացան իբրև անպարտե-
լիք ոմանք, զի և արժան չհամարեցան գալ
խմբիլ ընդ այլ զօրականին՝ որ բազում
անգամ 'ի պարտութիւն մատնեալ էին։

Քանզի ոչ շատ ինչ յառաջ 'ի խորտակել Թրասիւղդոսի առ սահմանօքն Եփեսեայ, նշան յաղթութեան 'ի պղնձոյ յանարգութիւն Աթենացւոցն կանգնեցին Եփեսացիք։ Արդ զայս յերեսս Թրասիւղղեանցն հարեալ Աղկիբիադեանք և յօրացեալք յանձինս և յիւրեանցն զօրավար՝ ոչինչ կամէին հասարակաց զկրթանան ունել ընդ նոսա և բանակակից լինել նոցա։ Իսկ իբրև անդուստ փարնաբազ մեծաւ ամբոխիւ հեռևակաց և այրուձիոյն անկանէր 'ի վերայ ասպատակաւոր զօրականին Աղկիբիադեայ 'ի սահմանան Աբիւդինացւոց, յայնժամ 'ի միասին ընդ Թրասիւղղեայ գիմեաց Աղկիբիադէս ձեռն տալ նոցա. և առեալ զփարնաբազ հալածական տանէին մինչև 'ի ժամ գիշերոյն. և յայսմանէ եկին միացան նոքա, դարձ արարեալ միահաղոյն 'ի բանակ անդր և մարդասիրեալք ուրախանային առ միմեանս։ Բայց յաւուրն երկրորդի նշան յաղթութեան կանգնեալ, խաղայր գնայր Աղկիբիադէս յաւարի առնուլ զգաւառն փարնաբազայ, և 'ի գիմի հարկանէր նմա և ոչ ոք։ Կալաւ նա անդէն և քուրմն և քրմանոյշն, այլ անդրէն յազատութիւն արձակէր առանց փրկանաց։

Ապա չու արար գիմեաց 'ի մարտ ընդդէմ Քաղկեդոնացւոցն որ վտարանջեալ էին յԱթենացւոց, և ժողովեալ առ իւրեանս ըզպահակ զօրուն և զզօրավարն Լակեդեմոնացւոց։ Անդանօր լուր առեալ զապրստամբացն՝ զի զամենայն հասս երկրին ամ-

փոփեալ 'ի պահ եդին առ Բիւթինացիս բարեկամս, խաղաց զօրու 'ի սահմանս նոցա, և յառաջոյ քարոզ արձակեալ բողոք բառնայր ընդդէմ Բիւթինացւոց. նոքա զահի հարեալք թողին 'ի ձեռս նորա՝ զոր 'ի պահ կալեալ էին, և յուիստ բարեկամութեան մտին ընդ նմա։ Բայց իբրև պատնէշ մի 'ի ծովէ մինչև 'ի ծով զԲաղկեդոնիս պատէր Աղկիբիադէս, անդուստ գայր հասանէր փարնաբազ քակել զպաշարումն. 'ի նոյն և Հիպոկրատէս զօրապետ 'ի մի զզօրն խմբեալ՝ եկ 'ի քաղաքէն և անկաւ 'ի վերայ Աթենացւոցն։ Հապա Աղկիբիադէս ընդդէմ երկուց նոցա ճակատ յօրինեալ, անդէն զփարնաբազ անարգաբար 'ի փախուստ դարձուցանէր, և զՀիպոկրատէս ինքնին տապաստ արկանէր, հարուածս 'ի վերայ ածեալ նորա ստուար գնդին։

Անց ապա նաւեաց եկն 'ի Հելլեսպոնտոս ժողովել կուտել արծաթ. և հասեալ կալաւ զՍիլիւբրիա՝ ոչինչ զգուշացեալ անձին արտաքոյ ժամանակին։ Քանզի ոչք մասնատու քաղաքին հանդերձեալ էին լինել նմա, ժամանակեցին զհասարակ գիշերաւ ջահ մի ամբառնալ 'ի նշան. սակայն առ ահին՝ զի 'ի դաշնաւորաց մի ոմն փոխեցաւ յանկարծ 'ի խորհրդոյն, տոիսկեցան կանխել քան զժամանակակէտն։ Արդ զնշանն տեսեալ Աղկիբիադէս, մինչդեռ տակաւին կազմ չէին զօրականք, առեալ 'ի նոցանէ երեսնիւ չափ, դիմեաց փութապէս 'ի նեղքոյ պարսպին, հրաման տուեալ

այլոցն զհետ իւր խաղալ արագ արագ։ Իբրև դրունք բացան նմա, և յերեսունն ժամանեալք յաւելան և այլ ևս քսանք սապարաւորք, յարձակեալ 'ի նեղքս սաստկութեամբ՝ լուր էառ զՍիլիբրիացւոց զինու զարդու հասեալ 'ի դիմի հարկանել նմա։ Իբրև յոյս փրկութեան չերևէր՝ եթէ 'ի դիմի հարցի նոցա, դարձեալ ևս անպարտելի ցայն վայր յամենայն արշաւանսն՝ թիկնադարձոյց լինել չառնոյր յանձն, 'ի ձայն փողոց անդէն լռութիւն հրամայեալ՝ պատուէր տայր միում ումեք յիւրոց անտի բարձր գոչել. Մի Սիլիբրիացիք ժոեսցին լինչ զէն ընդդէմ Աթենացւոցն շարժել։ Յայս բարբառ ձայնի կէսք արգելեալք սանձեցան 'ի գոռէն, իբրու եթէ թշնամիք միահամուռ 'ի նեղքս խուժեալ լցեն. իսկ կէսք՝ հեզացեալք ակընկալեալ մնային յուսոյ հաշտութեան։ Մինչդեռ այնպէս երկաքանչիւր կողմանքն զբանիւք անկեալ էին, գայր ապա հասանէր զօրն Աղկիբիադէայ. անդանօր մոտաբերեալ՝ որպէս և էր իսկ, եթէ հաշտութիւն խնդրեսցեն Սիլիբրիացիք՝ զանդիտէր Աղկիբիադէս վասն թրակացւոց՝ թէ յաւարի զքաղաքն առցեն. քանզի էին իսկ նոքա բազումք, և 'ի սէրն Աղկիբիադէայ մտադիւրագոյնս զինուորեցան ընդ ձեռամբ նորա։ Ապա առեալ զնոսա առհասարակ արձակէր 'ի քաղաքէն, և Սիլիբրիացւոց ողոքաւորաց ինչս և ոչ մի ինչ հասուցեալ, առեալ 'ի նոցանէ արծաթ և կար-

գեալ անդէն պահապանս, ինքն յարու-
ցեալ այնուհետև յուղի անկանէր։

Իսկ որ զօրագլուխք պաշարմանն կային
Քաղկեդոնի՝ պայմանս եդին ընդ Փարնա-
բազայ զայս ինչ, զի չափ դրամոց հատուս-
ցէ նոցա, և Քաղկեդոնացիք միւսանգամ
լեցին Աթենացւոց, և Աթենացիք ինքնին
ոչինչ հատուցին զեան գաւառին Փարնա-
բազայ, և Փարնաբազ դեսպանացն Աթե-
նացւոց առ արքայն ուղեցոյց տացէ հան-
դերձ աներկևանութեամբ։ Իբրև Փարնա-
բազ խնդրեաց 'ի հաստատութիւն և զերդ-
ումն լինել Աղկիբիադեայ 'ի դարձին նորա,
ասէր Աղկիբիադէս ոչ երդնուլ՝ մինչև
հասարակ երդուեալ լցին նոքա։ Իբրև
կռեցան երդմունքն, ապա խաղաց դիմեաց
Աղկիբիադէս 'ի վերայ Բիւզանդացւոցն
ապստամբաց, և պատեաց պատնէշ զքա-
ղաքաւն։ Անդանօր Անաքսիղայոս և Ալ-
կուրգոս ընդ այլոց դաշնաւորք լինէին տալ
նորա 'ի ձեռս զքաղաքն՝ պայման եդեալ
'ի փրկութիւն անձանց։ Վասն որոյ և համ-
բաւ հարեալ յայնժամ Աղկիբիադէս, իբ-
րու աղմուկ շփոթից յուզեալ առ Յոնեաւ՝
անդանօր հարկ լցէ խաղալ նմա, եկ անտի
զցերեկ հանդերձ նաւուքն. այլ զցայդ
դարձ անդրէն արարեալ՝ էջ 'ի Ծովեզրն
առեալ ընդ իւր զսպառազէնսն. մերձ ե-
կեալ 'ի պարիսպն՝ անդէն հանդարտիկ
զտեղի առնոյր։

Իբրև և նաւքն հասեալք մոտանէին 'ի նա-
ւահանգիստն, և անդուստ սաստկապէս

գործէին զյարձակումն 'ի մեծ գոչիւն և 'ի շռինդն ամբաւ աղաղակին, առհասարակ զահի հարան Բիւզանդացիք ընդ անակնկալ պատահումն. յայնժամ դաշնաւորեալ ժամ գոռեալ՝ 'ի նեբրաս առին յանդորրու զԱղկիբիադէս, մինչդեռ առհասարակ ձեռն տալ՝ 'ի նաւահանգիստ անդր դիմեալ ընթանային և 'ի նաւն: Սակայն և ոչ անպատերազմ իրքն վճարեցան յայնժամ. քանզի Պեղոպոնեսացիք և Բիոտացիք և Մեգարացիք 'ի Բիւզանդիոն՝ յետս ընդդէմ վանեալ զորս 'ի նաւաց անտի, անդրէն 'ի նաւն տագնապէցին զնոսա. և լուեալք՝ եթէ և 'ի քաղաքն մի-ջամուխ եղեն յԱթենացւոց, կարգեցան կացին՝ մարտ եդեալ կռուէին ընդ նոսա և գրգռեցաւ խազմն սաստիկ և բուռն. այլ յաղթական ելանէր Աղկիբիադէս՝ զոբրավարեալ զաջոյ թևն, և թերամենէս՝ զձախոյն. և որ միանգամ ապրեցան 'ի թըշնամեաց իբրև երեքհարիւր՝ առհասարակ 'ի գերութիւն վարեցան: Իսկ յետ կռուոյն՝ 'ի Բիւզանդացւոց ոչ զոք 'ի մահ վարեցին, և ոչ վտարանդի արարին. քանզի և որք զքաղաքն 'ի ձեռս եառն՝ զայն պայման եդեալ էին մի ինչ ամենևին զրկել զնոսա 'ի սեպհական գոյից: Ուստի և իբրև մատնոտու ամբաստանեալ Անաքսիղայոս 'ի Լակեդեմոն, անատգիւտ եցոյց զգործն բանիւն. քանզի ասաց՝ եթէ ոչ Լակեդեմոնացի է, այլ Բիւզանդացի. և զի ոչ Սպարտիա տագնապեալ էր 'ի վտանգին,

այլ Բիւզանդիոն ամենայն ուստեք պաշա-
բեալ՝ որպէս զի և չէր հնար մուծանել
ինչ 'ի ներքս, և զամբար քաղաքին սպա-
ռեալ Պելոպոնեսացիք և Բիւոլոսացիք, ան-
դուստ սովալլուկ տանջէին Բիւզանդացիք
'ի միասին ընդ որդւոց և ընդ կանանց. ա-
պա ոչ մատնտու եկաց նա հայրենեացն՝
'ի ձեռս տալով թշնամեաց, այլ փրկիչ և
ազատիչ քաղաքին 'ի մարտէն և յարկա-
ծից աղէտից, զնմանութիւն բերելով զա-
ռաքինեացն Լակեդեմոնացւոց և զքա-
ջաց, որ գեղեցիկ մի միայն և արդար՝ զոգ-
տակարն դատին զհայրենեաց։ Զքան զայս
լուեալ Լակեդեմոնացւոց, պատկառեցան
և արձակեցին զարան։

Բայց Աղկիբիադէս իղձ սաստիկ բերեալ
սեսող հայրենեացն լինել, նա առաւել
սեսիլ քաղաքացեացն իւրոց՝ զի այնչափ
յաղթութիւնս տարաւ զթշնամեացն, յա-
ղուցեալ յուղի անկանէր։ Ար և զարդա-
բեաց շուրջ զեռաթիսն Աստիկեցւոց 'ի
բազմակոյտ ասպարաց և յանկած աւարացն.
զհետ իւր ձգէր քարշէր և շատ նաւս գե-
ղեալս, և բիւրաւորս նշանաց և դրօշուց
դրօշուց նաւացն՝ զորս եհար և վանեաց,
որ և առհասարակ ոչինչ պակաս էին քան
զերկերիւր։ Այլ Դուրիս Սամոսացի՝ որ
յԱղկիբիադեայ զարմէն ասէ զինքն, յա-
ւելու յայսոսիկ և ասել, եթէ անգանոր
Քրիսոգոնոս Պիւթեան մրցանակաւորն
արնգահար լիներ թիավարացն շարժման 'ի
շու անդր. իսկ հրամանատար շուոյն էր

ինքնին Կալիպպիդէս դերասան Ողբերգակացն՝ արկեալ զանձամբ ձորձ և զսպեալ պատմուճան և զայլն ևս զարդ զոսեսարանին. և թէ՝ ծիրանի պարզեալ առագաստ աւագ նաւն Ալկիբիադեայ՝ այնպէս մոանէր 'ի նաւահանգիստն, և էին որեարն իբրև խնծղալեցք ոմանք առհասարակ և կայթահարք 'ի գինարբուաց։

Այլ զայսոսիկ մեզ ոչ արձանագրեցին ոչ Թէոպոմպոս, ոչ Եփորոս, և ոչ Քսենոփոն։ Եւ ոչ 'ի դէպ ինչ արդեօք՝ եթէ նա այնպէս ոսնհար Աթենացւոցն լեալ էցէ 'ի դարձին՝ յետ վտարանդի տարագրութեանն և այնչափ աղէտիցն։ Նա՛ զի և ահիւ յառաջ խաղայր նա, և հասեալ 'ի ծովեզրն՝ ոչ իջանէր յեռաթիոյն. նախ արձանացեալ 'ի վերայ տախտակամածին՝ ետես զԵւրիպատոլեմոս զեղբօրորդին և ըզբազմութիւն բարեկամաց և զընտանեաց ընդ առաջ իւր ասպնջականս և հրաւիրակ 'ի քաղաք անդր։ Յետ այնորիկ ելեալ Ալկիբիադէս, առհասարակ մարդիկն ընդառաջ ընթացեալք՝ փոյթ ինչ ոչ տարեալ այլոցն զօրավարաց՝ 'ի նա միայն այր զարամբ ակնկառոյցք մեծագոչ կարդային, ողջոյն տային, և զհետ ընթացեալք պատկս բոլորէին. իսկ որք մերձենալ չկարէին՝ 'ի բացուստ անտի յոտնիմատն յակՃիռս կային. և պատանեաց ծերք հինաւուրց մատնանիշ ցուցանէին զնա։ Սակայն մեծապէս ոսն ցնծութեամբ քաղաքին յայնժամ՝ խառնեցաւ և 'ի գերարտօսրալից ականց. այն

ինչ նոքա յեկեալ հասեալ ինդուլթեանն յուշ եւ ածէին անձանց զամբաւ աղէտսն՝ որ անցին ընդ նոսա. և զայն եւ քա՛ջ տեսանէին՝ եթէ չէր արդեօք Ալթենացւոցն 'ի դերեւս ելեալ 'ի Սիկիլիոյ, և ո՛չ վրիպեալ ամենայն յոյս ակնկալութեան նոցա, եթէ Աղկիբիադէս զօրավար յայնժամ առաջնորդ կացեալ էր իրացն բանակին. քանզի և 'ի ժամանակին՝ յորում էառ նա զանձամբ զքաղաքն՝ որ վայրիկ մի և 'ի ծովակալ տէրութենէն կապտեալ էր և 'ի ցամաքին զարուարձանեայն միայն ունէր ընդ ձեռամբ, և 'ի ներքս յամբոխից ծփեալ և պատառեալ էր, նա ինքն զնա 'ի սին նշխարաց նորա և 'ի սինլըքորաց 'ի վեր կանգնեալ միւսանգամ, ո՛չ ծովակալ միայն՝ այլ և 'ի ցամաքին յաղթական 'ի վերայ թշնամեացն կացուցանէր: Իսկ առաջին յայնժամ զվՃիռ դարձին նորա արձանագրեաց և քարոզեաց Կրիտիաս Կալէսկրոսեան. ըստ որում և ինքնին քերթէ նա յՈղբսն իւր, յուշ ածեալ Աղկիբիադեայ զերախտիսն՝ այսպէս. "Իսկ զվՃիռն՝ որ զքեզ ասա մեզ ած եբեր, զնոյն ես առաջի հրապարակին կարդացի. և արձանագրեալ՝ զդոյն գործ 'ի գլուխ տարայ: Բայց կնիք մերոյն լեզուի 'ի գրաւ վասն իրացդ պահեսցի առ քեզ":

Յետ այսորիկ 'ի մի վայր խմբեալ առհասարակ զեկեղեցին, եկն էհաս անդր Աղկիբիադէս, յարտասուս հարեալ ընդ կիրս աղէտիցն, և վայրիկ մի և չափաւոր

մեղ ևս դնէր Ժողովրդեան, յիւրն ձախո-
ղակ զամենայնն 'ի վեր տանելով բախտ, և
Քաջի ումեմն ընծայելով խանդացողն։ Ա-
պա ճառ առեալ գեղեցիկ յուսոյ ընդդէմ
Թշնամեաց, իրախոյս քաջալեր կարդայր.
և այնպէս պատակ ոսկի առեալ բոլորէին
նմա Աթենացիք, և զօրավար ինքնիշխան
ընդ ծով ընդ ցամաք կարգեցին զնա։ Ա-
այս՝ և վճիռ եռուն դարձուցանել զամե-
նայն գոյս նորա. և զի՝ Եւմողպիդեանք և
Քարոզք զկարդացեալ նզովն յետս առ-
ցեն 'ի նմանէ. իբրև այլք լուծին զնզովն,
ետ պատասխանի Թէոդորոս քահանայն և
ասէ. "Այլ ես ինչ մի 'ի չարեաց ոչ մաղ
Թեցի նմա, եթէ ոչինչ անիրաւեցաւ նա
առ քաղաքն"։ Բայց Թէպէտ և այսպէս
մեծապէս յաջողեցաւ Աղկիբիադէս, հա-
մայն և այնպէս կէսք պատճառս առին
Թաղծութեան 'ի ժամանակէ դարձին նո-
րա։ Քանզի յաւուր մոի նորա 'ի նաւա-
հանգիստն՝ Պլինտերեան տօնք կատարէին
դիցուհւոյն. յորում 'ի քսաներորդի հին-
գերորդի Տարգելիոնին՝ Պրաքսիրդիդեան
քուրմք ծէս իմն կատարեն ծածուկս, և
'ի բաց զերծեալ զամենայն զզարդն, և ըզ-
դրոշեալն քօղաձիգ առնեն. ուստի և յոյժ
վատահատար և անյուշ զօրն զայն զանգործ
համարին Աթենացիք։ Արդ Թուէր իմն
նոցա, եթէ ոչ համբուրիւ և մարդասիրա-
պէս ժողովեաց յայնժամ դիցուհին զԱղ-
կիբիադէս այնպէս քօղաձիգ լինելոնն, և
մերժեաց զնա։ Այլ յայսր ամենայնի վե-

րայ ամենայնն յաջողեցաւ ըստ կամաց նո-
ցա. և 'ի կազմ կալ յայնժամ Եռաթիոցն
թուով հարիւր՝ խաղալ ընդ նմա, նա զտե-
ղի առնոյր 'ի գերեցիկ պատուասիրութէն
մինչև 'ի ժամանակ նուիրականացն:

Քանզի յորմէհետէ ամրութիւն ածաւ
Տեկեղեայ, և թշնամիք կալեալ էին զանցան
Եղեւսեայ, ոչ ևս հանդիսանայր տօնախմբմ
բութիւնն. քանզի պարտ էր անցանել ընդ
ծով, և 'ի հարկէն խափանեալ կային զոհք
և կայթք և կաքաւք, և այլ ինչ ևս շատ 'ի
նուիրականացն 'ի յուղղոջ՝ յորժամ ար-
տաքս առեալ բերեն զԵակեբոն 3: Արդ
գերեցիկ թուէր Աղկիբիադէայ և 'ի դէպ
աստուածակողմանն և փառաց ևս մարդ-
կանն՝ 'ի հայրենաւանդն կարգ դարձուցա-
նել զտօնն, ածելով զթափօրն հետևակ
զօրու և տիգաւոր գնդաւ ընդդէմ թշնա-
մեաց. Քանզի և այսպէս կամ մեծապէս
ստուերածս հասանէր ածել Ադիսայ և
նկուն առնել՝ եթէ չգայր 'ի վէգ ընդ նմա.
կամ եթէ խլրտէր ինչ, մարտ նուիրական և
աստուածասէր մարտնչէր այնուհետև ընդ
նմա Աղկիբիադէս վասն սրբագունիցն և
վեհագունիցն ակն յանդիման հայրենի քա-
ղաքին, առհասարակ զքաղաքացիսն վկայս
իւրոցն նահատակութեցն կալեալ: Զայս
այսպէս սահմանեալ՝ կանուխ ազդ արար
Եւմոզպիդեանցն և Քարոզից. կարդեաց
եդ դէտս 'ի կատարս բարձանց, ապա ընդ
այդն յառաջ արձակեաց կարապետս, և
ինքն առեալ զքահանայս և զիւղագլխեալսն

և զիւղագլխողն, և պահ եդեալ՝ 'ի զէն զարդ զօրականին ածէր զթափօրն անշշունչ և գեղեցիկ կարգաւ. և անդ էր տեսանել տեսիլ մեծափառ և աստուածավայելուչ զզօրավարութիւն զայն, զոր և յայնժամ աննախանձ մարդիկն քահանայութիւն ա-նուանէին և նուիրագործութիւն։ Իբրև յայնժամ 'ի թշնամեաց երևեցաւ և ոչ ոք, նա յանդորրու դարձոյց զթափօրն 'ի քաղաք անդր. և բարձրապարանոց առեալ մեծացուցանէր և զիւր զօրականն Իբրև անկռուելիս ոմանս և անպարտելիս։

Յետ այնորիկ քա՛ջ իսկ յաջողեցաւ նա յինքն յանգուցանել և զանաւադ որեարն և զաղքատ, զի և մեծաւ ցանկութեամբ վառեցան նոքա զնա ունել տէր. էին էին՝ և որք յայտնապէս ասէին զայն, և իրախոյս ևս տային նկուն առնել զյաչաղանն և լուծանել զվՃիռան և զօրէնսն և զշաղակրատ մարդիկն՝ պատՃառք աղէտից քաղաքին, և ինքնին յանդորրու 'ի յաչաղկոտաց ըստ հաՃոյս տանել բերել զամենայնն։ Իսկ թէ զինչ միտք էին նորա յաղագս ինքնիշխան տէրութեանն այնմիկ՝ անյայտ է։ Սակայն աւադք քաղաքին և Ճոխքն զահի հարեալք՝ արագ արագ տային նմա մեկնել անտի հանդերձ եռաթիռովքն, և շնորհեցին ևս նմա զամենայն խնդրուածսն և զնիզակակիցսն՝ զոր կամէր։

Արդ անկաւ նա յուղի հարիւր նաւուք, խաղաց գնաց և յարձակեցաւ ՅԱՆդրոս. և 'ի կռուին 'ի պարտութիւն մատ-

նէր զԱնդրոսացիս, և որ անդանօր՝ զԼակեդեմոնացիսն. սակայն ո՛չ կալաւ զքաղաքն նոցա. և այս ապա առաջին պատճառս էտ թշնամեացն ամբաստան լինել զնմանէ։ Այլ որպէս հաւանեալս եմ՝ եթէ արդեօք իցէ ոք այլ՝ 'ի փառաց անտի Աղկիբիադեայ տապալեալ, դա՛ ինքն է անշուշտ Աղկիբիադէս։ Եւ քանզի մեծապէս էր փառք նորա և իբրև քաջ և հանճարեղ ունէին զնա վասն գեղեցիկ նահատակութեանց. ուստի եթէ երբէք ցայլողէր նմա, խիթայլին ընդ յուլութիւն ջանիցն. ոչինչ կարէին հաւատալ՝ եթէ ձեռնհաս ո՛չ իցէ, և երբէք 'ի դերևս ելցեն ջանք նորա։ Իբրև այնպէս ակնկալեալ ճնային Աթենացիք լսել՝ եթէ գրաւեաց նա զՔիացիս և ողջոյն զՅոնիա, սրտմտեալք դժկամակս բերէին ընդ անագանել համբաւոյն իրացն. զմտաւ ինչ չածէին՝ եթէ արծաթ պակասեալ նմա 'ի կռուել իւրում ընդ մարդկանն՝ որոց ամբարապետն էր ինքնին Թագաւորն մեծ, նա 'ի հարկէն բազում անդամ լքեալ զբանակն՝ շուրջ յածէր պատրաստել ռոճիկ և պաշար զօրուն. և այս ապա եղև նմա վերջինն 'ի մեսաս ամբաստանութեանն։ Քանզի յայնժամ 'ի Սպարտացւոց առաքեալ Լիւսանդրոս 'ի զօրավար նաւացն, տայր նա միոյ միոյ 'ի նաւաստեացն քառադանկս յարծաթոյն Կիւրոսի փոխան եռադանկաց. իսկ Աղկիբիադէս հազիւ ուրեմն բաւական իւրոցն տալ եռադանկս՝ մեկնեցաւ 'ի Կարիա կու-

տել արծաթ, իսկ զՀոդ նաւացն Թողոյր յայնժամ Անտիոքոսի. էր սա զեկավար քաջ, այլ խորհրդակորոյս այր և խեռ։ Պատուէր տայր նմա մի կռուել՝ թէպէտ և ասպարէզ թշնամիքն կարդասցեն. այլ նա ունչս արարեալ հրամանին՝ ընոյր զօրականոք զեռաթին իւր և զայլ մի ևս 'ի նաւացն. խաղայր գնայր դէմ եդեալ յԵփեսոս, մերձ քերելով զառաջակողմամբք նաւաց թշնամեացն՝ մեծապէս խեռութեամբ 'ի գործ և 'ի բան և ապերասան խեղկատակեալ։ Անդ Լիւսանդրոս զառաջինն ելեալ սակաւ նաւուք հետամուտ նմա, տեսեալ զբանակ նաւաց Ռոդեանցն յօգնութիւն գալ Անտիոքեայ, խաղաց ամենայն նաւուքն և զյաղթութիւնն տարեալ սպանանէր զԱնտիոքոս, և նաւս բազում և մարդիկ 'ի գերութիւն վարեալ՝ նշան յաղթութեան կանգնէր։ Լուր առեալ Աղկիբիադէս դարձեալ 'ի Սամոս, հապճեպով խաղաց դիմեաց ամենայն նաւուքն, և հասեալ՝ ձայն կարդայր Լիւսանդրոսի. նա կայր մնայր լի և պատարուն յաղթութեամբն, և խլրտեցաւ ինչ ոչ։

Ապա յետ այնորիկ թրասիբուղոն թրասոնեան թշնամի մեծ Աղկիբիադեայ 'ի բանակին, չոքաւ յԱթէնս ամբաստան զնմանէ. և անդ դրդռեալ զթշնամին՝ հրապարակախօս լինէր, եթէ Աղկիբիադէս վեր 'ի վայր տապալեաց զամենայն և կորոյս զնաւսն. անհանձարաբար յիշնութեանն տայր զօրավարութիւն զնաւաց

'ի ձեռս մարդկանն՝ որ 'ի գինեբբուս շուայտեալք և 'ի նաւաստական բանդագուշանս մեծապէս զբաղեալ էին առ նմա. զի ապա ինքն պարապեալ նաւեցէ շուրջ յանդորրու կուտել արծաթ, և աղուանալ և արբենալ՝ բնակակից բոզիցն լինելով Աբիդինացւոց և Յոնիացւոց, մինչդեռ վայրիկ մի անդ 'ի բացեայ բանակեալ կայր Թշնամին։ Առ այս և 'ի յանցանս դրեցին նմա, զի անդ 'ի Թրակիա շինեաց դղեակ մօտ 'ի Բիւզանդիոն տեղի ապաստանի. իբրու որ ոչ կարասցէ կամ ոչ կամեսցի բնակել 'ի հայրենի քաղաքին։ Իսկ Աթենացիք հաւատս բերեալ՝ զայլս 'ի զօրավար կարդէն ընդ նորա, յայտնապէս ցուցեալ առ նա զբարկութիւնն և զդառնութիւն։ Աղդեղեալ նմա, զահի հարեալ թողոյր լքանէր խսպառ զբանակն. և ժողովեալ զօտարս, ինքնին մարտ եդեալ կռուէր ընդ անթագաւոր Թրակացիսն, և կուտեաց աւարեաց արծաթ բազում. անդ և զՀելլենացիսն սահմանակիցս յանդորր հանէր 'ի ձեռաց բարբարոսացն։

Իսկ զօրավարք Աթենացւոցն Տիւդեւս և Մենանդրոս և Ադիմանտոս հանդերձ ամենայն նաւուքն առկայացեալք 'ի գետան Եգեայ, յարուցեալ ընդ առաւօտս առաւօտս խաղային գնային և ձայն կարդային Լիւսանդրեայ՝ որ զԼամպսակաւնտէր բանակեալ. և ապա անտի դարձ արարեալ՝ զօրն 'ի բուն անցուցանէին այնպէս անկազմք և անհոգացեալք՝ իբրու արհամար-

հոգք ոմանք։ Բայց Աղկիբիադէս որ անդ մերձ կայր՝ ոչինչ անհոգացեալ զանց առնէր. Եղեալ յերիվար՝ եկն եգիտ զզօրավարսն, իրատէր ազդ առնէր եթէ ոչինչ բարեղք նոքա այնպէս առկայացեալ նստին 'ի վայրս՝ ուր ոչ նաւահանգիստ կայ և ոչ քաղաք. այլ 'ի բացարձակ վայրաց 'ի Սեստոսէ պատրաստեն նոքա անձանց զկարևոր պաշարն, և անհոգացեալ կան՝ զի նաւամարտիկքն այնպէս ցանեալք ցրուին 'ի ցամաքի թափառականք. մինչդեռ անդուստ 'ի հանդիպոյ նաւախումբ թշնամւոյն արձանացեալ՝ 'ի հրամանէ միապետ իշխանին անշշունչ կատարէ զամենայնն։ Այլ զօրավարք ոչինչ անսացին Աղկիբիադեայ խորհրդոյն՝ չու առնել 'ի Սեստոս. նա և Տիւդեւս արհամարհանօք հրամայէր նմա տեղի տալ 'ի վայրացն, իբրև որ յայլս՝ և ոչ 'ի նա իցէ ապատան զօրավարութենն։ Ապա Աղկիբիադէս տեղի տուեալ մեկնեցաւ, զանգիտեալ եթէ նենգ լարեսցեն նմա. և ընդ ծանօթան որ 'ի բանակէն զհետ չոգան նորա՝ ասէր, զի եթէ այնպէս ոտնհար նմա չէր լեալ զօրավարացն, քան սակաւ մի ժամանակ անցեալ՝ նա 'ի նեղ արկեալ էր զՍպարտացիսն ակամայ միջամուխ 'ի նաւամարտն լինել, կամ զնաւսն թողուլ լքանել։ Կիսոց՝ տարապարտ պարծանաց թուեցաւ բանն. և կիսոց՝ հաւանական, եթէ երբէք անդուստ 'ի ցամաք կուսէն ամբոխ ածեալ նա թրակացւոց դիպաղեղանց և քաջաձիոց, մարտ եդեալ կռուեսցի և վերս 'ի վայր

զԼակեդեմոնացւոց բանակն շարժեսցէ։ Բայց արագ արագ արդիւնքն վկայեցին, զի ուղղապէս խելամուտ եղև Աղկիբիադէս անփորձութեանէ զօրավարացն։ Քանզի յանկարծակի յեղակարծումն ժամու 'ի վերայ անկեալ նոցա Լիւսանդրոս, անդ ութիւ չափ միայն յեռաթիոցն մազապուր ճողոպրեցան ընդ Կոնոնէի. իսկ եռաթիս իբրև երկերիւր 'ի գերութիւն վարեաց հանդերձ երեքհազար արամբքք, զորս և խողխողեաց Լիւսանդրոս։ Յետ սակաւու դիմեալ կալաւ նա և զԱթէնս, և հրկէզ առնէր զնաւսն, և քակէր քանդէր զերկայնաձիգ զպարիսպսն։ Ապա յահի եղեալ Աղկիբիադէս 'ի Լակեդեմոնացւոց՝ զի տիրացան միանգամայն ընդ ծով ընդ ցամաք, անց 'ի Բիւթինիա. գանձ բազում տարաւ ընդ իւր, և շատ ևս թողեալ անդէն յամուրսն՝ յորս բնակէր։ Իսկ 'ի Բիւթինիա դարձեալ ոչ սակաւ կորուսեալ 'ի գոյիցն և կապտեալ 'ի թրակացւոցն՝ որ անդ, եդ 'ի մոի յառնել երթալ առ Արտաշէս. թերևս փորձ զնորա փորձեալ արքային՝ ոչինչ յոռեգոյն քան զԹեմիստոկղէս գոյէ զնա. իսկ լաւագոյն ևս՝ զպատճառ չուոյն։ Քանզի ոչ իբրև զնա զօրավիգն խնդրեալ յարքայէ ընդդէմ քաղաքացեացն, այլ թշնամեացն ընդդէմ՝ վասն հայրենի աշխարհին։ Ապա զմտաւ ածեալ՝ եթէ փարնաբազեայ 'ի ձեռն հեշտեաւ և յանդորրու յաջողեսցի ուղին, չոքաւ առ նա 'ի Փռիւգիա. եկաց առ նմա, մեծարանս

դնէր նմա, և ինքն դարձեալ շուք պատուոյ ընդունէր առ 'ի նմանէ։

Բայց Ալթենացւոցն ցաւեաց յոյժ՝ զի մերկացան 'ի տէրութենէն. իսկ իբրև և զազատութիւնն եբարձ 'ի նոցանէն Լիւսանդրոս, և արանց երեանից 'ի ձեռս էտ զքաղաքն, զայն զոր չխորհեցանն յորժամ առ ձեռն կայր փրկութիւնն՝ յայնժամ 'ի սպառսպուռ կորստեանն 'ի միտ առնուին. յուշ ածեալ լացին զմեղս իւրեանց և զանհանձար զխորհուրդն. և մեծապէս յանցաւորութիւն համարեցան զերկրորդ բարկութիւն իւրեանց ընդդէմ Աղկիբիադեայ. զի ոչ վասն անիրաւութեան ինչ իւր մերժեցաւ նա, այլ զի սրտմտեցան նոքա ընդ զօրապետն ընդ այն՝ որ անարգաբար կորոյս սակաւս 'ի նաւաց, և ինքեանք անարգագոյն ևս յառաքինի և 'ի գոռ զօրավարէն զրկեցին զքաղաքն։ Սակայն և յայն աղէտն յոյս ևս ընդ աղօտ ծագէր նոցա, թէ ոչ խսպառ տապալեսցին իբք Ալթենացւոց, մինչդեռ տակաւին կենդանի կայ Աղկիբիադէս։ Քանզի և ակն ունէին եթէ որ յառաջին վտարանդութենն ոչ անգործ և պարապորդ վարեաց կեանս, նոյն և յերկրորդումն՝ որչափ ինչ բաւական իցէ նա, ոչինչ լքեալ թողցէ այնպէս զհայրենի քաղաքն նշաւակեալ 'ի Լակեդեմոնացւոցն և նկուն յերեանից անտի արանցն։ Եւ արդեօք ոչինչ տարադէպ այնպէս յերազանային, այն ինչ և երեսունքն ինքնին առ ահին հեռախոյզ մանր քննէին

զգնացան Աղկիբիադէայ, և Ճշդրիտ 'ի վերայ կային նոքա ամենայն գործոց և խորհրդոցնորա։

Ապա 'ի վերջէ Կրիտիաս զայս ինչ ազդէր Լիւսանդրէայ, եթէ յապահովի յայնժամ տիրասցին Եղլադայ Լակեդեմոնացիք, յորժամ իսպառ բարձցի ընկերհաշտութիւնն Աթենացւոց. և Թէպէտ և Աթենացիքդ հպատակ կացցեն աւագպետութեանն, սակայն կենդանի տակաւին գոլով Աղկիբիադէս՝ թոյլ ոչ տացէ նոցա երբէք հանդարտել։ Այլ 'ի բանից ասի ոչ շարժեցաւ Լիւսանդրոս, մինչև գայր հասանէր նմա 'ի տանէն Սկիւտաղան և յիշխանաց անտի՝ բառնալ 'ի միջոց զԱղկիբիադէս. կամ զի երկուցեալ զանդիտէին նոքա յաշխուժից առն՝ բաւական 'ի նահատակութիւնս մեծամեծս. կամ զի ինչ մի հաճոյական կամեցան Ադիսայ։ Իբրև զպատուէր զայս Լիւսանդրոս 'ի փարնաբազ ասպաստան արար, նա զգործն յանձն առնէր Մադէոսի եղբօր իւրում և Սուսամիթրայ քեռւոյն։ Արդ էր յայնժամ Աղկիբիադէս 'ի գիւղ մի Փռիւգացւոց աշխարհին՝ ընդ նմա և Տիմանդրէ տարփաւոր իւր, և տեսանէր 'ի քուն երազ։ Թուէր նմա ունել զիւրև զձորձն Տիմանդրեայ. և Տիմանդրէ 'ի մէջ բազկացն կալեալ զդլուխն՝ պաճուճէր զերեսն 'ի անգոյրս և 'ի շպարս իբրև զկնոջ։ Իսկ կէսք ասեն՝ 'ի քուն տեսանել զՄադէոս ինքնին՝ որ հատանէր զդլուխն և զմարմինն մատ-

նէր 'ի հուր։ Եւ ասէն ոչ բազմաք յառաջ քան զմահն տեսանել նմա զերազն։ Իսկ որք առաքեցանն սպանանել զնա, ոչինչ համարձակեցան մտանել 'ի տունն, այլ շուրջ պատեալ հուր հարին։ Իբրև զդաց Աղկիբիադէս, առեալ 'ի մի պատատեաց շատ ինչ 'ի հանդերձից և յանկողնոց, և արկեալ 'ի հուրն՝ ապա և զահեկաւն պարուրեալ զքղամիդն և աջոմն ձգեալ զդաշոյնն, վազեաց 'ի դուրս անկէզ 'ի բոցոյն՝ մինչև այրեալ հանդերձիցն. և անդէն յերևեալ իւրում փարատեալ պուղէր ըզբարբարոսն. իշխեաց և ոչ ոք զտեղի ունել կամ 'ի վէգ ընդ նմա դալ, այլ այնպէս բացուստ 'ի բաց նետահարք և փքնահարք լինէին 'ի նա։ Իբրև այնպէս տապաստ անկաւ Աղկիբիադէս և բարբարոսքն տեղի տուեալ մեկնեցան, եկեալ Տիմանդրէ ժողովէ զդիակն և պատեալ և ծածկեալ իւրովք հանդերձիւքն՝ գեղեցիկ շքով յուղարկաւորութիւն տայր ըստ ժամու բաւականին։ Ասէն Տիմանդրեայ դուստր զԼայիդէն՝ որում անուն կարդային Կորինթիա, գերի վարեալ յԻկկարոնէ աւանէն Սիկիլիոյ։ Բայց կէսք թէպէտ և ընդ ամենայն պատմութիւն մահուն Աղկիբիադեայ հաւանեալ են, սակայն պատճառք մահուն ոչ զփարնաբազ ունին և ոչ զԼիւսանդրոս և ոչ զԱկեդեմոնացիս. և ասեն՝ եթէ զաղջիկ մի յականաւորաց պղծեալ Աղկիբիադէս և առ իւր կալեալ, ոչինչ հանդուրժեալք թշնամանացն եղբարք աղջը-

կանն, գիշերի հրձիգ 'ի տուն ելնէին՝ յո-
րում կայր Աղկիբիադէս. իսկ 'ի հրոյն
արտաքս վազեալ՝ անդ տապաստ արկանէն
զնա ըստ օրինակին՝ զոր ասացաք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Արիստոփանէս կատակերգակ Քէր-թող ունի զայս հատուած հնարիմաց յոյժ 'ի յունականն։ Քանզի ոչ կարէլով Աղկի-բիադէս արտասանել զտառդ — կամ ը. քերթողն առ 'ի կծանել զԹէորոս զոմն այր սուտակասպաս, տայ Աղկիբիադէայ թոթովել օրինակ զայս, զի փոխանակ ա-սելոյ χοραχος, որ է՝ ագռաւու, ասէ՝ χο-λαχος, որ է՝ մարդելուզի. քանզի Քο-ռակո, է Ագռաւ. և Քολակո, է Սուտակասպաս, մարդելոյզ։ Ըստ որում և զառաջինն թո-թովէ Աղկիբիադէս. փոխանակ Տէռէը, ա-սէ Տէռէլ. և փոխանակ ԶԹէռրռռ, ասէ ԶԹէռռռ։ Այսպա՝ զի արդեամբք մարդելոյզ էր Թէորոս, վասն այսորիկ 'ի վերայ բերէ, եթէ ուղղապէս թոթովեաց Աղկիբիադէս։

2. Մռայ Սպարտացւոց, էր զանգեալ յալերէ, 'ի ձիթոյ, 'ի ջրոյ, և 'ի կաթանէ։

3. Յն. Ἰαχχος. այն է Բաքոսն։ 'Ի թափօրական հանդիսին յայնմիկ խառնա-գոչ մարդիկն ցնծային և կայթէին. զի և Եակքոսն ունի արմատ զբային՝ Ἰάχω, որ է՝ գոչել, աղաղակ բառնալ։

4. Անուն Հրամանագրին Սպարտացւոց. տէս 'ի Լիւկուրգ. 'ի ծան։

ՄԱՐԿԻՈՍ ԳԱՅԻՈՍ ԿՈՐԻՈՂԱՆՈՍ

ՄԱՐԿԻՈՍԵԱՆՑ զարմն 'ի Հռոմ բազում արս փառաւորս ընծայեաց 'ի պատրկաց անտի. յորոց մի էր ինքնին և Մարկիոս Գայիոս 1 ծնեալ 'ի դատերէն Նումայի, և որ թագ կապեաց զկնի Տուլղիոսի Ոստիւղիոսի: Մարկիոսեանք էին և Պոպղիոս և Կուինտոս, որք զառատահոսն զայն ջուր և զյոյժ դեղեցիկն ածին բերին 'ի Հռովմ քաղաք. նոյն և Կենսորինոս՝ զոր երկիցս անգամ կարգեաց համարակալ ժողովուրդ Հռովմայեցւոց. և ապա նա ինքնին ածեալ հաւանեցոյց զնոսա տալ վճիռ և օրէնս՝ մի այնուհետև զայն աւագութիւն երկիցս տալ միում ումեք: Բայց Գայիոս Մարկիոս՝ զորմէ առեալս եմք 'ի պատմել՝ որք մնացեալ 'ի հօրէն և դաստիարակեալ յայրի մօրէն, քանզի իսկ եցոյց եթէ որբութիւնն է՝ զի չարիս բազում 'ի նեղքս ածէ,

սակայն և խոչընդոտն չէ 'ի լաւութիւն և յաւագութիւն անդր. և յոյլքն միայն մեղ դնեն որբութեանն՝ իբրու որ նոցուն ապա-կանութեանն պատճառք ի՛ցէ՝ անբաժք 'ի դաստիարակութենէն մնալով։

Սա այս Մարկիոս հաւատարմացոյց և զորս ասէն՝ եթէ բոյս բարուց գեղեցիկ և քաջամոյն՝ այլ 'ի դաստիարակութենէ անմնան, ընդ բարւոյն շատ ինչ և 'ի յոռեացն բնաւորեցաւ բուսուցանել, իբրու արգաւանդ երկիր անբաժ 'ի մշակութենէ։ Քանզի հաստատութիւն նորա քաջամուր յամենայն 'ի խորհուրդս՝ սատակապէս վառէր զնա 'ի նահատակութիւնս մեծամեծս. և ներհակաբար դարձեալ՝ յորժամ թափ բարկութեանն սանձակոտոր առեալ տանէր զնա, և 'ի պայքարս մեծասլէս պնդէր, յայնժամ ոչինչ հեշտին էր կենակից կենցաղակից լինել նմա. որպէս զի և որք միանգամ սքանչացեալ իսկ էին ընդ բարսն՝ աննկուն 'ի գրգանաց և 'ի քրտանց և 'ի զոչսաքաղութենէ, և յայսոսիկ պարկեշտութեան նորա՝ անուն կարդային ժուժկալութիւն և արդարութիւն և արիութի, նոքին դարձեալ դժկամակս կենցաղակից լինէին նմա 'ի քաղաքականս, իբրու դժուարաբաւնալի այր և անշնորհ և պերճ։ Ուստի և շահ ոչինչ այլ այնչափ կթեն մարդիկ 'ի պարգևաց Մուսայիցն, որչափ հեշտ և հեզ զոնկակից բարսն յարդարելով 'ի վարժից և 'ի կրթանաց անսի, 'ի չափուն ունել զանձն և 'ի ծայրայեղ խոտորմանցն

խոյս տալ։ Իսկ որ առաւէլ արգոյ յայն-
ժամ 'ի Հռոմ՝ էր ինքնին առաքինու-
թիւն մարմնոյ և զինուորութեաց. և վկայեն
և նոքա, զի յարիութեան անուանէն՝ զա-
ռաքինութիւնն յորջորջեցին. և զի՝ այդ
անուն հասարակ՝ կոչեցաւ և անձին ա-
րիութեանն 2։

Ապրդ Մարկիոս մեծապէս հակամի-
տեալ 'ի մրցմունս, անդստին 'ի տղայ
տիոցն մարզէր 'ի զէնս. այլ զմնաւ ածեալ
եթէ զէնք մուրացածոյք օգտեսցեն ինչ
ոչ՝ որոց կազմ և պատրաստ չիցեն ընդա-
բոյսքն և անկակիցքն, վասն որոյ և առեալ
զմարմինն կրթէր վարժէր յապդ ապդ մար-
տի. վազէր թեթևընթաց, ըմբռնէր բուռն
անկորզելի, և 'ի գոռին գօտէկռուէր ան-
պարտելի. զի և որք այր զարամբ 'ի վէգ
միանգամ գային ընդ նմա յարիութեան և
յառաքինութեան, 'ի պարտութիւն մատ-
նեալք՝ պատճառէին զանվանելին կորո-
վութիւն զմարմնոյն և զանխոնջելին։ Ապա
առաջին եալ չոքաւ նա 'ի մարտ պատերազ-
մի՝ մինչդեռ սակաւին պատանեակ էր. 'ի
ժամանակին՝ յորժամ ընդ Տարկուինիոսի
որ թագ կապեաց 'ի Հռոմ և ապա տա-
ղագիր վարեցաւ, և յետ բազում մարտից
և հարուածոց՝ զվերջինն՝ իբրու ասել՝ ար-
կանէր քուէայ, խաղացին եկին 'ի վերայ
քաղաքին բազումք և 'ի Լատինաց և յայլոց
ևս Խոռլացւոց մարտ գնել կռուէլ ոչ 'ի
շնորհս ինչ նորա, քան թէ նկուն զՀռո-
մայեցիսն առնել, զի խեռային զանգի-

տեալ ընդ բարգաւաճեալ նոցա։ Արդ 'ի նմին մարտի՝ յորում բաղմագէմ փոփոխեցան բախտք յերկոցունց կողմանց, Մարկիոս հզօրապէս կռուեալ յանդիման իշխանապետին, այն ինչ յակն արկանէր զայր հռոմայեցի զգեստնեալ մօտ իւր, ոչ զանց արար. եկաց արձանացաւ հանդէպ առն և պաշտպանեալ՝ զախոյեանն տապաստ արկանէր։ Իսկ զօրավարն զյաղթութիւնն տարեալ՝ ընդ նահատակսն զՄարկիոս պսակէր պսակաւ կաղնւոյ. քանզի պսակ այսպիսի սահմանեն օրէնք՝ որ զքաղաքացին 'ի մարտի ապրեցուցեալ ի՝ցէ։ Կամ առ 'ի շուք կաղնւոյ 'ի շնորհս Արկադացւոցն՝ որք 'ի պատգամաց աստուծոյն անուն կալան ԿաղնաՀէրք. կամ զի կաղնիդ յամենայն իսկ 'ի վայրս հեշտին առ ձեռն կայ զինուորացն. կամ՝ զի պսակ կաղնւոյ նուիրական է Արամազդայ քաղաքապահի, 'ի դէպ ապա տան զայն վասն փրկութեան քաղաքայնոյն։ Առ այս դարձեալ՝ տունկ կաղնւոյ 'ի վայրենիսն՝ բիւրաբերզուն է պտղովք, իսկ յընտանիսն՝ քաջամուր. և էր երբեմն 'ի նմանէն կերակուր՝ կաղինն, և ըմբելի՝ մեղրախառնն. և 'ի սպաս ևս կերակրոյ կաղնիդ այդ ընծայէր զբազում յարօտականաց և 'ի թռչնոց, զգործի որոյն յինքն բարձեալ բերելով զոստն։

Ասեն՝ եթէ 'ի մարտին յայնմիկ երևութացան և Դիոսկուրոսք 3. և փութապէս յետ մարտին ձիաւորեալք և սաստիկ ընդ քիրան մտեալ՝ 'ի հրապարակին աւետէին

զյաղթութիւնն, մերձ առ աղբիւրն ուր այժմ կայ մեհեան նոցա. ուստի և զօրն զայն յաղթական 'ի յուլիս ամսեանն՝ նուիրեցին Դիոսկուրեանցն։ Այլ սակայն շուք պատուոյ պատանեացն 'ի դէպ ժամու ընծայեալ՝ թուի թէ՝ շինչուցանել բնաւորեցաւ և արագ ընուլ զքաղցն և զծարաւ՝ որոց միանգամ 'ի վերին երեսս պատուասիրեսցեն. իսկ ողբ կորովամիտքն ելցեն և քաջախորհուրդք՝ առաւել ևս յայնժամ յորդորեսցին 'ի շուք պատուոյն՝ ելբև 'ի հողմոյ իմեմնէ շնչեալք՝ նահատակութիւնս ականաւորս 'ի ներքս բերել։ Քանզի ոչ ելբև զմրցանակ առնուն զվաստակոցն այնպիսիք, այլ ելբև գրաւական տուեալք՝ զամօթի հարկանին այնպէս լքեալ թողուլ զփառսն, և ոչ բարգաւաճ ևս առնել զնա գործովք իւրեանց։ 'Ի նոյն նահատակեալ և Մարկիոս, եդ 'ի մոի ա-ղուութեամբ քաջութեամբ՝ զիւրով իսկ զանձամբ ելևէլս առնել նորանոր արդեամբք. բարգեաց նահատակութիւնս 'ի վերայ նահատակութեանց, և տարաւ մրցանակս 'ի վերայ մրցանակաց. և զզօրավարս իւր ետես 'ի վէգ եկեալ զվերջինսն ընդ առաջնոցն՝ առ 'ի շուք դնել նմա և վկայս փառաց լինել նմա։ Քանզի և քաջ իսկ 'ի բազմադէմ մարտս պատերազմաց Հռովմայեցւոց 'ի ժամանակին յայնմիկ՝ առհասարակ յամենայնէն պսակաւոր դարձաւ Մարկիոս և մրցանակաւոր։ Իսկ եթէ այլք 'ի մարդկանէ զքաջութիւնսն վախճանեն

'ի փառս, նա զմօրն հրճուանս կէտ նպա-
տակի փառացն էդ առաջի. քանզի լսել
մօրն զգովութիւն նորա, և պսակաւոր
տեսանել զնա, և 'ի խնդութենէն ար-
տասուել դիրկ ընդ խառն ընդ նմա, այն
էր նմա մեծապէս շուք և երանութիւն:
Ասեն և զԵպամինոնդայ ունել զկիրս
զայս առ ծնողսն. զի և երջանկութիւն
մեծ համարէր՝ եթէ հայր նորա և մայր
կենդանիք՝ յաղթական տեսցեն զնա դար-
ձեալ 'ի մարտէն Լեւքտրեայ՝ յորում
զօրավարեաց: Այլ Եպամինոնդայ էհաս
տեսանել զերկոսին միանգամայն ցնծա-
լեցս և բաժանորդս գեղեցիկ բախտին. իսկ
Մարկիոս՝ նպաւ զոր առ հայրն զպարտիս
շնորհացն՝ 'ի ներքս բերելով մօրն, ուչինչ
յագէր շուք դնել Վոլումնիայ և ինծղանս
պատրաստել նմա. առ այս և 'ի թախան-
ձանացն նորա և 'ի խնդրոյն ած իւր կին, և
ծնեալ ևս որդիս՝ 'ի նմին տան բնակէր ընդ
մօրն 'ի միասին:

Արդ փառս մեծապէս և զօրութիւն
ժառանգեալ Մարկիոս 'ի քաղաքին առա-
քինութեամբն, զայնու ժամանակաւ ծե-
րակոյան 'ի կողմն եղեալ Ճոխից՝ հերձոյր
ընդ ժողովրդեան, որ դժկամակս բերէին
զվայրենի զկիրս զվաշխառուացն: Քանզի
զչափաւոր մեծատուն կապտէին վաշ-
խառուք միանգամայն յամենայն գոյից՝ 'ի
դրաւ եդեալ և 'ի վաճառ հանեալ. իսկ
զչքաւորսն բանտարգել առնէին, ասք՝ որ
և սակս բազումս ունէին 'ի մարմինս իւ-

ըեանց 'ի մարտից անտի պատերազմաց 'ի վերայ հայրենի քաղաքին. և 'ի վերջէ՝ 'ի մարտն Սաբինացւոց յորդորեցան նոքա խաղալ 'ի խոստմանէ Ճոխիցն՝ չափով վարել ընդ նոսա, և խոստմանն երաշխաւոր եկաց իշխան ժամանակին Մարկոս Վալերիոս 'ի հրամանէ ծերակուտին։ Բայց ապա 'ի մարտին քաջապէս կռուեալ նոցա և 'ի պարտութիւն զթշնամին մատնեալ, մարդասիրութիւն և ոչ մի տեսին նոքա 'ի վաշխառուսն, և ոչ ծերակոյտն ինքնին թուէր յուշ այնուհետև զպայմանսն ածել. նա և թոյլ ևս տայր միւսանգամ դրաւել և 'ի բանտ վարել, և այնպէս աղմուկ անհնարին ամբոխից յուզեցաւ 'ի քաղաքին։ Իսկ ան. դուստ ոչ 'ի ծածուկ ինչ դոլով 'ի թշնամեաց խռովութիւն ժողովրդեանն, դիմեցին խաղացին միանգամայն 'ի հուր դատել զգաւառն։ Յայնժամ յարուցեալ հիւպատոսք 'ի մարտ հրաւէր կարդային՝ որոց միանգամ յարբունս հասեալ էին, այլ պատասխանի ետ և ոչ ոք. և յայնժամ յայտնապէս պատառէր աւագանին։ Կէսք 'ի դէպ համարէին տեղի տալ աղքատաց ժողովրդեան և թոյլ առնել խստութեան օրինացն. իսկ կիսոց նեարհակաբար էղեն կարծելք, յորոց մի էր և Մարկիոս. որում և ոչ այնչափ ինչ փոյթ էր վասն ընչից, այլ յորդորէր զնոսա՝ իբրև զմտաւորս փութալ հանդարտել զաղմուկն, և կարձել զսկիզբն ստահակութեան խուժանին առ օրէնսն։ Իբրև վասն սոցին իրաց 'ի սուղ

աւուրս բազում անգամ խմբեցաւ ծերակոյտն և ելս իրացն ոչ գտանէր, անդ յանկարծակի աղքատք ժողովրդեանն միահաղոյն ձայն տուեալք միմեանց՝ Թողին լքին ելին 'ի քաղաքէն, հասեալ կալան զլեառն՝ որ այժմ անուանեալ կոչի Նուիրական. և անդ զտեղի կալան առ Անիէն գետոյն: Ոչ բռնութիւն արարին, ոչ աղմուկ յուզեցին, միայն ձայն բարձեալ աղաղակէին, եթէ Ճոխք քաղաքին անդուստ 'ի հարուստ ժամանակաց վտարանդի արարեալ իսկ էին զնոսա 'ի քաղաքէն. և թէ՝ Խտալիա՝ ուր և իցէ՝ բա՛ օդ և ջուր տացէ նոցա և տեղի գերեզմանի. իսկ 'ի Հռովմ բնակեալք չունէին այլ՝ բայց վերս և մահուանս, մարտ եղեալ և կռուեալ 'ի վերայ Ճոխին:

Զահի հարաւ ծերակոյտն, և առեալ արձակէր առ նոսա 'ի ծերոց անտի արս ազատս՝ հեզս և ռամկասէրս: Իսկ որ 'ի հրեշտակութեանն յայնմիկ յառաջագէմ գտաւ 'ի խօսել, էր ինքնին Մենենիոս Ագրիպպաս. սա շատ յողոք անկաւ առ ժողովուրդն, և շատ ևս բարբառեցաւ ապաստօրէն 'ի կողմն ծերակուտին. ապա կնքէր զբանն հռչակելի առակաւն. Է՛ր երբեմն՝ ասէ՝ զի անդամք առհասարակ մարդոյն ամբոխ ընդդէմ որովայնին յարուցեալ՝ բողոք բառնային, եթէ նա միայն պարապորդ անգործ և անհոգ նստեալ կայ 'ի մարմնի, մինչդեռ նոքա առհասարակ պարապեալք շատ ինչ վաստակեն և յոգնին լրումն տալ բաղձանաց նորա: Ծիծաղե-

ցաւ որովայնն ընդ անմտութիւն նոցա՝ զի թէպէտ և զամենայն կերակուրն յինքն առնու ամբարէ, այլ ապա առեալ արձակէ յիւրմէ և բաշխէ զնոյն 'ի մասունս մասունս մարմնոյն։ Ապա յաւելեալ 'ի բանն՝ ասէր Ագրիպպաս. "Զայս օրինակ ապա ոմ քաղաքացիք՝ է բան Սինկղիտոսիդ առձեզ. քանզի 'ի գեղեցիկ տնտեսութենէն նորա՝ խորհուրդք և գործք ամենեցուն տան և բաշխեն իւրաքանչիւր զպիտանին և զօգտակարն"։ 'Ի բանից ասոի զինչեալ նոքա և 'ի հաշտութիւն եկեալ խնդրեցին 'ի Սինկղիտոսէն, և առին իւրեանց արս ա-ւագս հինգ թուով պաշտպանք 'ի պիտոյս իւրեանց, որ անուանեալ կոչին այժմ ժո-ղովրդապետք, այն են՝ Տրիբունք։ Ապա առաջին ընտրեալ կարգեցան յայնժամ գլխաւորք հերձուածոյն այնմիկ՝ այսոքիկ, Բրուտոս Յունիոս և Սիկիննիոս Բէլլու-տոս։ Եւ այսպէս միաբանեալք՝ առհա-սարակ 'ի զէն ընթացան, և կացին զօրա-վարք 'ի գլուխ՝ կամակարութեամբ խաղալ գնալ վառեալք 'ի մարտ պատերազմի։ Իսկ անդանօր Մարկիոս՝ որ դժկամակն իսկ էր ընդ զօրանալ խուժանին և ընդ նուաղել աւադպետութեանն, տեսեալ՝ զի և բազումք այլք 'ի պատրկաց համա-շունչք են 'ի նոյն միտս, յորդորէր մի նկուն յարութեան երևել քան զխուժանն 'ի կռիւ մարտի հայրենեացն. այլ քաջ 'ի դէմն բերել՝ զի քան յընչաւէտութեան՝ առաւել վեհք լցեն յառաքինութեան։

Ա՛ՐԴ էր յայնժամ մարտ պատերազմի նոցա ընդդէմ Վոլուսկեանց ազգին, որոց քաղաք էր Երևելի և մեծ՝ Կորիողանոսն։ Իբրև զայս քաղաք նոցա պատեալ պաշարէր յայնժամ Կոմինիոս հիւպատոս, անդ նոքա առհասարակ 'ի մի վայր խմբեցան զահի հաբեալք. 'ի կողմանց կողմանց խաղային յօգնութիւն ընդդէմ Հռոմայեցւոց, մարտ պատերազմի սաստկապէս տալ ընդ նոսա 'ի հանդիպոյ քաղաքին, և աստի և անտի անկանել 'ի վերայ նոցա։ Հ՛ապա Կոմինիոս յերկուս զբանակն բաժանեալ, կիսոցն խաղայր դիմէր ինքն ընդդէմ որ արտաքոյ Վոլուսկեանց հրոսակին, Թողեալ զկէսն 'ի պաշարմանն 'ի ձեռս Լարկիոսի Տիտոսի Հռոմայեցւոյ՝ առն աւագի և քաջի։ Իսկ Կորիողանացիք արհամարհեալք զորս անդէն մնացին, ելին խուժեցան արտաքս 'ի քաղաքէն և անկեալք 'ի վերայ՝ 'ի ժամուն 'ի պարտութիւն մատնէին զնոսա, և զհետ ևս մոեալք հալածէին զՀռոմայեցիս մինչև 'ի պատնշափակ անդր նոցա։ Բայց անդանօր Մարկիոս դիմեալ սակաւաձեռն գնդաւ, տապաստ յերկիր արկանէր զախոյեանսն, և զյարձակումն սանձեալ՝ ձայն մեծագոչ բարձեալ կարգայր զՀռոմայեցիսն։ Քանզի և էր իսկ Մարկիոս՝ որպիսի արդեօք կամէր Կատոնն լինել զօրականին, ո՛չ 'ի բազուկն միայն և 'ի հարկանելն, այլ և 'ի գոչիւն ձայնին և 'ի դէմս երեսացն ահարկու թշնամւոյն և դժոխրմբերելի։ Իբրև շատք ոմանք եկին խուռնեցան զնովաւ, զա-

հի հարեալ Թշնամեացն ընդ կրունկն դառ-
նային, այլ Մարկիոս զհետ ևս մտեալ վա-
նէր զնոսա. մինչդեռ նոքա անկարգ հրո-
սակաւ 'ի փախուստ խուճապէին, նա վա-
նեաց հալածեաց զնոսա մինչև 'ի դրունսն։

Ընդ իբրև յետս նհանջեցան Հռոմայե-
ցիք 'ի տեղատարալի նեռից պարսպացն, և
ուրուք 'ի նոցանէն երբէք 'ի միտս անգամ
չանկանէր՝ 'ի միասին ընդ փախստականացն հոր-
դան 'ի ներքս տալ 'ի քաղաք անդր՝ լի և
խուռն 'ի սպառազէն Թշնամեաց, Մար-
կիոս անդէն արձանացեալ քաջաբար խրա-
խոյս 'ի ներքս կարդայր նոցա. իբրև զի 'ի
գեղեցիկ ժամուն՝ քան փախստականացն՝ հե-
տամտիցն առաւել քաղաքդ աւադիկ ա-
ռաջի բացեալ կայ։ Արդ Թէպէտ և նուա-
զունք յայնժամ քաջացան զհետ խաղալ
նորա, նա 'ի մէջն խոյացեալ Թշնամեացն
հորդէր ճանապարհ. սաստկապէս դիմեալ
մտանէր ընդ դրունսն 'ի ներքս ընդ նոսա,
ուր և ամենևին ոք ոչ իշխեաց 'ի դիմի հար-
կանել նմա կամ զտեղի ունել։ Անդուստ
դէտակն 'ի վերս ամբառնայր Մարկիոս,
տեսեալ զի նուազունք են կարի յոյժ 'ի
խռան անդ բարեկամացն և Թշնամեացն՝
օգնականք և նիզակակիցք նորա 'ի քաղա-
քին, պատմեն՝ նորաբանչ գործեալ նո-
րա 'ի ժամուն նախճիրս սաստկութեամբ
ուժոյ բազկացն և Թեթևընթաց վազիւք
ոտիցն և անվանելի արութեամբ սրտին,
որպէս զի և նկուն զախոյեանսն առհասա-
րակ առնելով զկէս 'ի նոցանէն վարէր

վանէր մինչև 'ի վերջին ծայրս քաղաքին, և զկէս դարձեալ վասասկաբեկ պարսա-սեցուցանէր զէնընկէց զէնընթափ լինել, մինչև ժամ պատեհ սայր Լարկիսսի 4, աներկեանութեամբ արտաքուստ 'ի նեղքս զՀռոմայեցին խաղացուցանել։

Իբրև այսպէս ոլորացան քաղաքին, և անդ բազմագոյնք 'ի զօրականէն կապուտ կողոպուտ ըղձանային առնել զքաղաքն, սրամտեալ ցասնոյր Մարկիոս՝ ձայն բարձեալ սասուէր. կարի անարժան և դժպատեհ իրք իցեն ասէր, մինչև անդանօր հիւպատոսն և քաղաքացիք նոցա մարտ եղեալ ընդ թշնամիսն կռուեսցին, նոքա պարապեալք զառ և զապուր ժողովեսցեն. կամ թէ պատճառս զայն առեալ՝ 'ի մարտէն խուսեսցեն։ Իբրև նուազունք անսացին նմա, նա ընդ իւր առեալ զորս զՀեռն չոքան, խաղաց դիմեաց ընդ նոյն ուղի հատուածի բանակին՝ որպէս զիարդ և լուր էառ. իսրախուսէր քաջալերէր զնահատակսն ընդ իւր, և ալաչէր սէպ ալերսէր զդիսն՝ մի ապաժամսն 'ի կռուոյն լինել, այլ 'ի դէպ ժամուն հասեալ նիզակակից և նահատակակից եղբարցն գտանել։ Արդ՝ զայնու ժամանակաւ սովորեցան Հռոմայեցիք, 'ի ճակատամարտին կարգեալք՝ մինչդեռ զասպարն 'ի բուռն առնուլ հանդերձեալ էին, և գօտէվինդք զսառատոկն հանդրկ ճէին, կտակ առնել անդիր և ժառանգս յանուանէ կարդալ լու 'ի լու երկց և չորկց արանց։ Իբրև յայն դորձ պարապէր

զօրականն՝ դէմ յանդիման Ճակատու թըշ-
նամեացն, հասեալ ժամանէր Մարկիոս.
զառաջինն կէսք 'ի նոցանէն սրտաբեկ լի-
նէին, զի այնպէս ընդ սակաւուց արանց ա-
Ճապարեաց անդր ողջ յարիւն ապաժոյժ
և սաստկապէս ընդ քիրսն մտեալ. իսկ իբ-
րև ընթացեալ Մարկիոս առ հիւպատոսն՝
ցնծագին զալ իւր կարկառէր նմա, և քա-
զաքին առման աւետաւոր լինէր, Կոմինիոս
գիրկս ածեալ համբուրէր զնա. և առհա-
սարակ լցեալ քաջալերութեամբ՝ որք զնա-
հատակութիւն զայն զնորա լուան, և որք
դարձեալ ընդ միտսն նկարէին, ձայն տու-
եալք խրախուսէին՝ փութապէս ձեռն 'ի
գործ առնել 'ի պատերազմ։ Ապա Մարկիոս
հարցուցն առնէր հիւպատոսին, զի՞նդ
կարդեալ յօրինեալք լցեն զինուորու-
թիւնք թշնամեացն, կամ թէ յորո՞ւմ կող-
ման քաջամարտիկքն Ճակատեալ կայցեն.
իբրև զայն ինչ պատասխանի առնէր Կոմի-
նիոս, եթէ վաշտք Անտիոցեոցդ քաջա-
մարտակաց կորովեաց և որք արութեամբ
քաջութեամբ նոքա զաշխարհ յաչս դնեն,
թուի թէ 'ի միջոցին յօրինեալք կայցեն,
ասէ Մարկիոս. "Աղաչեմ և խնդրեմ 'ի
քէն, ընդդէմ զմեզ Ճակատեցուցես ա-
րանցդ այդոցիկ"։ Զարմացաւ Կոմինիոս
ընդ անվեհեր յօժարութիւնն, և շնորհէր
նմա անդէն զինդիրն։

Իբրև ժամ նիզակացն լինէր արձակելոյ,
և արդնընկէցք տէգընկէցք խաղային նա-
հատակքն, յառաջ դիմադրաւ վազեաց

Մարկիոս, և որ 'ի Ճակատուն կարգեալ Վղուսկեանք՝ ոչինչ հանդարտեցին առաջի նորա. նա անդէն արագ արագ զկողմն փաղանգին՝ յորում սատակապէս խառնեցաւ՝ պուղէր և վարատէր։ Իսկ իբրև որք 'ի Թեան անդ կային, եկին շրջան առեալ 'ի ներքս զայրն փակեցին զինու զարդու, երկեաւ Կոմինիոս զի 'ի վտանգ պաշարեցաւ Մարկիոս՝ փութապէս զարս քաջս կորովիս 'ի զօրականէն հատեալ Ճեպեաց նմա 'ի Թիկունս։ Եւ էր անդ գոռ ահագին տեսանել և սաստիկ 'ի վերայ Մարկիոսի, որպէս զի և արագ յական Թօթափեալ բաղմակոյտ յոյժ գիսականց Թաւալգլոր յերկիր խաղային. և 'ի շտապ մեծի տագնապին քաջապէս կռուեալ՝ զԹշնամիսն յեաս ընդ կրունկն նահանջէին, մինչև հետամուտք հալածական տարեալ զնոսա, ապա սկսան աղաչել զՄարկիոս՝ զի այնպէս վաստակաբեկ այրն խոնջ և նուաղ 'ի սաստիկ հոսելոյ քրտանցն և 'ի բազում վիրացն՝ վայր մի տեղի տուեալ մեկնեսցի 'ի բանակ անդր։ Դա արժան չէ՝ ասէր՝ յաղԹականացն երբէք վաստակել, և անդէն հետամուտ զկնի փախստականցն ընդէր։ Եւ այնպէս հարեալ խորտակեալ և մնացորդաց բանակին նոցա, գիտապատ բազումք անկան, և բազումք ևս 'ի գերութիւն վարեցան յայնժամ։

Իսկ յաւուրն երկրորդի եկեալ արձանացեալ Մարկիոս յանդիման հիւպատոսին, էին անդ առ նմա և 'ի զօրականէն,

եւ եկաց Հիւպատոսն 'ի բեմն և բարեբանութիւն գեղեցիկ հատուցեալ դից 'ի մեծի նահատակութեանն, դարձեալ 'ի Մարկիոս կոյս՝ գովութիւն սքանչելապէս տայր նմա զմրցանացն՝ զոր ինքնին իւրովք իսկ աչօք եսեալ 'ի մեծի պատերազմին, և զոր դարձեալ ինքնին Մարկիոս ճառ արկեալ պատմէր և վկայէր։ Հրաման տայր Հիւպատոսն՝ զի զտաներորդն առցէ յինքն Մարկիոս զերիվարացն և զդերեւոյն, և միանգամայն իսկ զմեծի աւարին՝ մինչեւ բաշխեալ զօրականին. Թող զայս, և մրցանակ քաջութեանն երիվար նժոյգ վառեալ զարդարեալ 'ի ներքս մատուցանէր նմա։ Իբրև առհասարակ ուրախ եղեն ընդ բանն, յառաջ մատեաւ Մարկիոս. առնուլ առնոյր զնժոյգն, և շնորհս ունէր բարեբանութեանցն իշխանին. իսկ զայլ ինչ՝ վարձս համարեալ քան թէ շուք պատուոյ՝ չառնոյր յանձն, իբրև սիրելի ելցէ նմա զիւրականն առնուլ բաժին 'ի բաշխին՝ իբրև զմի 'ի զօրականէն։ Ապա յաւելեալ 'ի բանս իւր ասէր առ Հիւպատոսն. " Քանզի իսկ շնորհս իմն մեծ ինդրեմ ես 'ի քէն, այլ և աղաչեմ առնուլ։ Է 'ի Վոլուսկեանցդ այր ինձ հիւր և բարեկամ, այր լաւ և բարի. դա ձերբակալ եղեալ այժմ՝ ընչաւէտն և երջանիկն՝ արդ 'ի ծառայից կարդ անցեալ կայ։ Եւ արդ յաղէտս վշտաց դորա 'ի բաղմադէմն՝ զմին զայն դիւրեացես նմա. մի վաճառակուր լինիցի "։

Զայս ասաց, և ձայն աղաղակին բարձ-

բացաւ վասն Մարկիոսի. և քան որք ընդ քաջութիւն նահատակութեանն, բազումք այն էին՝ որ յոյժ սքանչացան ընդ մեծութիւն ոգւոյն՝ զոր ոչ պարտեաց արծաթ։ Քանզի և որք սակաւ մի յառաջ խեթիւ հայէին ընդ նա վասն մեծաշուք պատուոյն, նոքին դարձեալ վկայեցին՝ եթէ ստուգապէս արդեօք արժանի գտաւ դա առնուլ զմեծամեծսն, զի ոչ էառ. և քան զնահատակութիւն՝ որով արժանի գտաւ, մեծ ևս համարեցան զառաքինութիւնն՝ որով արհամարհեաց զմեծամեծ պարգևսն։ Եւ արդեօք՝ քան զքաջապէս վարել զինուցն, գեղեցիկ ևս իցէ բարիոք վարել զինչսն. իսկ քան զվարել ընչից՝ վեհագոյն ևս է ոչինչ ցանկալ ընչիցն։ Ապա իբրև ձայնք լռեցին ամբոխին, խօսեալ սկսաւ Կոմինիոս և ասէ. "Դուք ինքնին ո՞վ նիզակակիցք, ոչինչ կարէք արդ բուռն առնել առն 'ի պարգևաց յայդոսիկ՝ զոր չառնու և չկամի։ Օ՞ն մեք՝ զոր ոչն կարասցէ մերժել, պարգև զայն տացուք դմա. տացուք վՃիռ՝ զի անուն կարդասցեն դմա Կորիողանոս. եթէ արդեօք և նահատակութիւնդ ինքնին զայդ նախ քան զմեզ չէ՞ տուեալ դմա"։

Եւ յայսմանէ նա երրորդ անուամբ կոչեցաւ Կորիողանոս. ուստի և քաջայայտ է՝ եթէ յերից անտի անուանցն սեպհական նմա Գայիոսն է, երկրորդն՝ Մարկիոս, հասարակ տան կամ զարմին. իսկ երրորդն զոր կարդացին նմա 'ի վերջէ՝ յայնպիսեաց անտի է որ մակձայնին 'ի պատճառս նա-

հատակութեան ինչ կամ բաղդի, կամ կերպարանաց մարմնոյն կամ առաքինութեանն. ըստ որում Հելլենացիքդ բնաւորեցան՝ մականուանս իմն կոչել ըստ նա-հատակութեան արդեանցն, որպէս Սոփէր՝ Փրկիչ. և Կաւլինիոս՝ Բարեյաղթ: Ըստ կերպարանաց մարմնոյն՝ որպէս Փիսոն՝ Քաղցրթեղ. և Գրիպոս՝ Արծռունկն: Ըստ առաքինութեան ոգւոյն՝ որպէս Եւէրգէտէս՝ Բարեգործ. և Փիղոդեղէոս՝ Եղբայրասէր: Իսկ ըստ գեղեցիկ բաղդին, որպէս Եւդէմոն՝ Բարեբաստիկ, մականուն երկրորդին 'ի Բաստոացւոց (արքայից Կիւրենեայ): Իսկ և 'ի կատակաց մակձայնեցան թագաւորք. ըստ որում Անտիգոնոս անուանեցաւ Դոսոն, այն է՝ Տաց, (զի խոստանայր և ոչ տայր). և Պտղոմէոս՝ Լաթիրոս, այն է՝ Շաղակրատ: Զնոյն օրինակ վարեցին առաւել և Հռոմայեցիք. ըստ որում 'ի Մեռելեանց անտի զմի ոմն անուանեալ կարդացին Տիտոս Մանլիոս. քանզի բազում ժամանակ կեղս ունելով բոլորիւք ինչ պատեալ կապէր զՃակատն: Դարձեալ և զայլ ոմն անուանեցին Ընէաս, զարմացեալք ընդ ապրագութիւն հանդերձանաց առն. քանզի փութապէս յոյժ կարգեաց մրցանս դամբանական զՄենամարտիցն՝ յետ աւուրց սակաւուց վախճանի հօրն: Եւ մինչև ցայսօր ժամանակի նոքա անուն կարդան մարդոյ՝ և 'ի դիպաց ծննդեանն: Քանզի Փրոփոլոս կոչեն զմարդ՝ որ բացական գոլով հօրն ծնեալ ելցէ. և Փոսթոմիոս՝ որ զկնի

վախճանի հօրն։ Դարձեալ և Վ-ֆէ-ֆ-ռ-ս, որ յերկուորեկաց ծնելոց մին կենդանի մնացեալ էր 'ի մեռանել միւսոյն։ Դարձեալ և մականուանս ունին նոքա ըստ հանգամանաց մարմնոյն՝ ոչ միայն Սէլաս և Նէկրէ, այլ և Զէէ-ի և Քլա-ֆէի. այն է՝ Կոյրք և Կաղք. և խմաստութեամբ գործեն. մի առ անարգանս և առ թշնամանս ինչ ունել զկուրութիւն աչացն կամ զկեղծութիւն անդամոցն, այլ կարդալ ևս զնոսա այնպէս իբրու սեպհական իւրեանց անուամբքն։ Այլ այսոքիկ այլուստ մատենագրութեան արդեօք թողլի իցեն։

Բայց յայնժամ յետ վճարելոյ մարտին, խազմարարք խուժանին անդրէն միւսանգամ աղմուկ յարուցանէին, ոչ նոր ինչ ունելով պատճառս զդրդռութեան և սոգիւտ իրաւացի, այլ բարուրս ամբոխից ընդդէմ պատրկացն զկարևոր աղէտսն պատճառեցին՝ որ յառաջին հերձուածոյ անտի։ Քանզի բազումք այն էին յանդաստանաց՝ որ անմշակ և անսերմն խոպանացան. և 'ի մարտին սակս՝ այլուստեք ոչինչ հեշտեաւ պատրաստեցան ամբարք։ Ուստի և սով մեծ յաջորդեալ զկնի և վաճառք ցորենոյ նուազեալ, և թէ էր ևս՝ պակասեալ և արծաթ 'ի գնել, սկսան խազմարարք չարախօս զՃոխիցն լինել և բիծս կարկատել, իբրու որք քինախնդիրք առաջին թշնամութեանցն՝ կամաւ նոքա սովալլուկ զժողովուրդն առնիցեն։

Զայնու ժամանակաւ գայլն հասանէին

հրեշտակք 'ի Վէլիտրացւոց անձնատուրք 'ի Հռովմայեցիս. աղաչէին՝ գաղթական մի առնուլ արձակել 'ի քաղաք անդր նոցա. քանզի սրածութիւն սասոիկ ճարակեալ 'ի նոսա՝ հարուած և ապականութիւն գործեաց, զի և հաղիւ ուրեմն տասնեւրորդ մարդկանն նշխարեալ մնացին։ Յայնժամ մնաւոր մարդիկն ըստ պիտոյից քաղաքին և 'ի դէպ ժամու համարեցան զարկածն Վէլիտրացւոց. քանզի և Հռովմայ պէտք էին թեթեւութեան խուժանին յայնժամ 'ի մեծի կարօտութեանն. միանգամայն և ակն ունէին 'ի բաց զաղմուկն փարատել շփոթից՝ մաքրեալ զքաղաքն յաղմկայոյզ որերոյն՝ իբրև 'ի խոհերաց ապականչաց։ Ապա հիւպատոսք 'ի համար գաղթականին գրեալ զնոսա, արձակէին 'ի բաց. և այլոց դարձեալ հրաման կարգային զօրաժողով լինել ընդդէմ Վոլուսկեանց, զի այնպէս ապա հասցեն զպատճառս խռովութեանց. զմնաւ ածին՝ եթէ միանգամայն 'ի զէն զենուորեալ նիզակակիցք ճոխք և աղքատք, ժողովրդականք և պատրիկք, այնպէս հեղասբար և գէղեցիկս վարեսցին առ միմեանս։ Սակայն ամբարձաւ Սիկինիոս 'ի ժամուն, ամբարձաւ և Բրուտոս՝ խազմարարք ժողովրդեան, կայլին և բողոք բարձին՝ իբրև գործ անագորոյն 'ի նեղութս բերեն հիւպատոսք. անուն գաղթականի 'ի բերան առեալք հեշտ և բաղձալի՝ 'ի վիհ դոգցես ամբաւ աղէտից առեալ խարդաւանեն նոքա զաղքատս ժողովրդեան. 'ի

քաղաք մի առեալ արձակէն՝ որ օգոցն ժանտութեամբ մահահոտ վարակեալ ի-
ցէ, և'ի բազմակոյտ անթաղ դիականցն հիւ-
քացեալ իցէ, անդ երթալ բնակակից ու-
մեմն լինել օտարի և ոիսերիմ և մարդա-
խանձ Քաջի. և իբրու եթէ շատ ոչ իցէ
կիսոցն խուժանին սովամահ կորնչել, և
կիսոցն սրածութեանն մատնիլ, նոքա և
մարտ ըստ քմաց գրգռեն պատերազմի.
զի միանգամայն իսկ յամենայն աղէտս է-
կեալ պաշարեսցի քաղաքն, զի չէառ
յանձն ոպաս Ճոխիցն հարկանել: Իբրև
զայսօրինակ բողոք բարձեալ հեղին լցին 'ի
լուր խուժանին, անսասանեալ հեատեցին
նոքա զօրաժողով հրամանին հիւպատոսաց,
և ո՛չ ևս 'ի չու գաղթականին խլրտեցան ինչ:

Անդանօր Սինկղիտոսն 'ի վարանս տա-
բակուսի վասն բանիս այսորիկ, Մարկիոս
պերճութեամբ Ճոխացեալ՝ որ և խոր-
հուրդս յածէր բարձրագոյնս և մեծամեծս,
և պանչացեալ ևս էր յաւագանւոյն, յայտ-
նի ընդէմ դարձեալ խաղմարարացն, անդէն
տայր արձակել զգաղթականն 'ի սպառնա-
լիս սաստիկ պատուհասի՝ առհասարակ
զամենեսեան որոց միանգամ էլ վնճակն:
Սակայն 'ի մարտ պատերազմի գլխովին
լծընկէց անսասանեալ խուժանին, առեալ
ընդ իւր Մարկիոս զիւր արբանեակսն և
զորս հաւանեցոյցն, նոքօք հանդերձ աս-
պատակ ափուէր յերկիրն Անտիոքացւոց. անդ
ամբար գտեալ ցորենոյ և աւար յոյժ զա-
նազանոց և զդերեաց, ոչինչ պահեալ ան-

ձինն՝ դարձ արար 'ի քաղաքն հանդերձ զբ-
րականաւն՝ որ բարձեալ բերէին զաւարն
զայն զմեծ։ Տեսեալ այլոցն զլիութիւնն,
սարջանային՝ զի ոչ խաղացին ընդ նոսա,
և խեռային ևս. խանդացան և ընդ Մար-
կիոս, խանդացան ընդ փառս զօրութեան
նորա, իբրու որ բարգաւաճեալ առն՝ զեան
գործեսցէ խուժանին։

Ապա յետ սակաւուց իբրև հիւպատոս-
սական բարձին հետամուտ լինէր Մար-
կիոս, բազումք այն էին՝ որ կուսակիցք էին
նմա. և խուժանն ինքնին զամօթի հարկա-
նէր՝ եթէ աւագ այն այր զարմիւ և առա-
քինութեամբ բարձերէց ընդոտնեալ ան-
արդեսցի յետ մեծաց նահատակութեանն։
Քանզի և սովորութիւն էր որոց միանգամ
բարձին հետամուտքն էին, ինքեալք 'ի հրա-
պարակ անդր՝ մաղթել 'ի ժողովրդոց, պատ-
մուճան արկեալ զանձամբ անշապիկ. կամ
զի առաւել խոնարհ և նկուն կերպարա-
նաւն առաջի ժողովրդեանն 'ի դէմս բերել
զմաղթանան. կամ զի յաղաչաւորացն կէսք
սպիս վերաց 'ի մարմինն ունելով մերկա-
պարանոց արասցեն զայնոսիկ իբրու նշա-
նակս յայտնիս իւրեանց քաջութեանն։
Քանզի այնպէս գօտէլոյծ և անշապիկ հրա-
պարակեալ աղաչաւորին այնմիկ առաջի
քաղաքացեացն, չէր այնուհետև կասկա-
ծելի՝ կաշառաբեկ զոք առնել արծաթով
և ընծայիւք։ Զի և հարուստ ժամանա-
կաց զկնի՝ 'ի նեղքս սողեցին սպրդեցին վա-
ճառաշահութիւնքդ այդոքիկ. և դնաց

այնուհետև արծաթն և խառնեցաւ ընդ քուէայն յատեանս ժողովոց, և անդուստ յառաջագէմ խաղաց կաշառաբերկութիւնդ և 'ի տունս դատաստանաց և 'ի բանակս զօրաց, և բռնացաւ 'ի վերայ քաղաքին. քանզի զզէնսն նկուն արար պարտեաց արծաթն. ուստի և գեղեցիկ ասաց՝ որ ասացն, եթէ՝ Նա առաջին տապալեաց զժողովուրդն, որ առաջին կոչնատէր եղև նմա և պարդևատու։ Եւ ապա տակաւ և ուրն խնթի այս կիրք սպրդեցին, սակայն և ոչ անդէն նշաւակեցան 'ի Հռոմ. քանզի և գիտեմք իսկ ոչ՝ ո՞ առաջին 'ի նմա օրինակ զայս կաշառաբերկ արար զժողովուրդն կամ զատեան դատաստանին. ըստ որում որ առաջին ՅԱԹԷՆս արծաթ մատոյց դատաւորաց՝ ասեն զԱնիւդոս Անթեմիոնեան, այն՝ որ ամբաստանեցաւ իբրև մատնտու Պիւղոսի՝ 'ի կատարած մարտին Պեղոպոննիսեան, յորում ժամանակի տակաւին՝ Ազգոսկի և հրապարակ անշաղախ՝ էր տեսանել 'ի Հռոմ քաղաքի։

Արդ անդանօր սպիս բազումս 'ի մարմին իւր ցուցանէր Մարկիոս զբազում պատերազմաց, բնաւից վէհագոյն նահատակեալ զամս եօթնևտասն 'ի զինուորութեան. և Հռոմայեցիք մեծապէս երեսս առնէին առաքինութեան առն, բանս արկեալ իսօսէին ընդ միմեանս՝ իբրու որ պատրաստագոյնք իցեն շուք դնել առն և ընտրել զնա։ Այլ իբրև օր ընտրութեանն հասանէր, և ինքն 'ի հրապարակ իջանէր մեծաշուք փա-

ոչք յառաջոյ զդաս ունելով զՍինկղիտոսն՝ պարառեալ 'ի պատրկացն. և յայտնի էր ամենայն տեսանելեացն, զի յոյժ խնամոտք և ժիրաժիրք երևեցան նոքա վասն Մարկիոսի. իբրև զայն ինչ յակն արկանէր խուժանն, խորշեցաւ սարսեաւ՝ և միւսանգամ ուծանայր 'ի Մարկիոսէ, նա և խելթիւ ևս հայէր ընդ նա՝ գուցէ այնպիսի ոք այր աւագպետական և իշխանապանծ 'ի պատրիկս՝ յանկարծ բարձին այնմիկ տէր եղեալ, գլխովին այնուհետև յաղատուլթենէն անբաժ կացուցէ զժողովուրդն։ Ապա զայս զմտաւ ածեալ՝ հերքեալ մերժեցին զՄարկիոս. և իբրև 'ի տեղին զայլս անուանեցին, ծանրացաւումն լինէր Սինկղիտոսն, իբրու որ քան զՄարկիոս՝ ինքն առաւել թշնամանեցաւ։ Իսկ յայնժամ Մարկիոս ոչինչ գեղեցիկ և հեզաբար տաբաւ կրիցն. քանզի և էր իսկ բնաւորեալ առաւել սպասս տանել ցասումնականին և սանձակոտոր մասին ոգւոյն, զոր մեծանձնութեան մասն համարէր և արիութիւն. և ոչ ևս 'ի հանձարոյ բանին և 'ի դատաբակութեանն մարզից՝ զպերճութիւնն և զհեզութիւնն ամոքեաց, որ ընդ միմեանս խառնեալ և պատշաճեալ զքաղաքականն 'ի նեղքս բերեն զառաքինութիւն բազմագոյն մասամբ. և ոչ դարձեալ խելամուտ եղև նա՝ եթէ որում զհասարակաց գործոցն բուռն հարեալ ի՞նչ և կենակից կենցաղակից մարդկան լինել հանդերձեալ ի՞նչ, նախ քան զամենայն պէտք են նմա

փախչել յանձնապաշտութենէ, այն՝ որ Բնակակից միայնութեան է, որպէս Պղատոն ասաց։ Դարձեալ և պէտք են նմա՝ սիրող անյիշաչարութեան լինել և ժոյժ ունել 5, թէպէտ և շատք այսպն արարեալ ծիծաղեսցին։

Ա՛յլ նա ցանգ նոյն և մի կացեալ, և աննկուն և անողոքելի, կարծէր նմն այնպէս՝ եթէ բնաւիցն յաղթել և 'ի վերոյ կալ՝ գործ արութեան քաջութեան, և ոչ կիրք առաւել ելցեն մեղկաղէտ և տկար, որ 'ի խոնջ և 'ի վատեալ մասնէ անտի ոգւոյն՝ իբրև փուք և այտուտն 'ի վեր զհրաշունչ բարկութիւնն փորատեալ դիզացուցանիցէ. ուստի ապա և լի՛ անհնարին խռովութեամբ և բազմաւ խեթիւ ընդդէմ խուժանին՝ այնպէս տեղի էտ մեկնեցաւ 'ի վայրաց անտի։ Իսկ յայնժամ երիտասարդք 'ի պատրկաց՝ քաջութեամբ զարմին յառաջադէմք 'ի քաղաքին՝ բարձրապարանոցք և ամբարտաւանք, որ միշտն յօրանային 'ի Մարկիոս, և 'ի ժամուն առաւել ևս յանդուցեալք յարեցան 'ի նա. և ոչ 'ի լաւութեան ինչ տակս եկեալք առ նա դառնապէս ախտակիցք կարեկիցք, այնպէս սաստիկ ևս վառէին զհուր բարկութեան նոցա։ Քանզի և էր իսկ նոցա 'ի բանակի զոլոցաց Մարկիոս միանգամայն և զօրավար և վարժապետ 'ի մրցանսն, ձգէր ընդ միմեանս և այր զարամբ վառէր զնոսա 'ի նահատակութիւնս աննախանձաբար։

Զայսու ժամանակաւ գայր հասանէր 'ի

հռոմ քաղաք ամբար մեծ ցորենոյ դնեալ յԽոալիա. ոչինչ պակաս և 'ի Սիրակուսայ՝ յղեալ 'ի պարգև 'ի Գեղոնէ բռնաւորէ։ Ուստի և բազումք յայնժամ դեղեցիկ յուսով ակնկալեալ ճնային՝ եթէ 'ի միասին ընդ կարօտութեանն և աղմուկք շփոթիչ տեղի տային 'ի քաղաքէն։ Արդ 'ի մի վայր խմբեալ ծերակուտին, և անդ ամբոխն խռնեալ արտաքոյ՝ ակնկալեալ ելից խորհրդոյն՝ ճնային դիւրագնի այնուհետև պատրաստել իւրեանց ցորեան, իսկ զպարգևականն ձրի անշուշտ բաշխել ժողովրդեանն. քանզի և 'ի ներքս յաստենին՝ էին էին որ զայս թելադիր լինէին Սինկղիտոսին։ Ապա 'ի մէջ արձանացաւ Մարկիոս՝ սաստկութեամբ յարձակեալ կշտամբէր զժողովրդասէրսն, և մարդելոյզք խուժանին կարդայր զնոսա և մատնտուք աւադպետութեանն, իբրու որք հակառակ անձանց իւրեանց դարմանեալք անուցանիցեն նոքա սերմանս ի մեն մահահոտս զնսեռութեան խուժանին. որ զի լաւ էր անդէն 'ի բողբոջն փութալ խամրել զնոսա. ոչ յօրացուցանել ճոխութեամբ զնսուժանն՝ որ արդ աւադիկ գամագիտ յամենայնի ահ արկանէ, և բուռն առնել նմա երբէք չկիք հնար. և ոչ հիւպատոսացն անգամ լսէ դա, և յանիշխանութեան՝ զպետս իւր սեպհականս կարդայ իւր իշխանս։

Ապա յաւելեալ 'ի բանն ասէր Մարկիոս. "Եւ արդ տալ վճիռ ընծայաբերութեանցս այսոցիկ և բաշխիչ, զոր հնել

լենք սովորեցան գործել՝ առ որս լոկ ընկերհաշտութիւն է, խեռութեան խուժանին ճարակ է 'ի սպառասպուռ կործանումն հասարակաց։ Քանզի ոչ եթէ շնորհս համարեսցին նոքա զայն և յանցանացն նեղումն՝ որով անսասանեցին զոքա յարշաւանան, և վոտարանջեալք թողին լքին և մատն եղեն հայրենի քաղաքին, և զբամբասանան ընդդէմ ծերակուտին լուան և ընկալան. այլ թէ մեք առ ահի երկիւղի շնթեմք նոցա և ընձեռեմք զոցա յայսպիսեաց աստի, ակն ևս կալցեն զոքա ցանգ մերում քաղցրութեան, և ապերասան կրիցն վախճան երբէք չարասցեն և հերձուածոցն և ամբոխիցն։ Վասն որոյ և մեծի անմտութեան իրս կարծեմ ձեռն տալ բանիդ այդմիկ։ Իսկ արդ՝ եթէ խելս'ի մեզ խառնել կամք իցեն, բարձցուք զժողովրդապետութեան կարգ զոցա՝ որ տապալէ աւադիկ զհիւպատոսացն զաւադութիւն, և երկփեղկեալ հերձու զքաղաքդ 'ի գեղեցիկ միութենէն՝ որպէս էր երբեմն յառաջնմէ, և կրճիմն արկանէ 'ի մեզ՝ համաշնչութեանս մերոյ և միաբանութեանս մերոյ, անդուլ զաղէտագ և զխռովութիւնդ ունելով առ միմեանս"։ Իբրև շատ ինչ յայսպիսեաց աստի բարբառեցաւ Մարկիոս, և 'ի նոյն բորբոք սքանչելապէս յանգուցանէր առհասարակ զերիտասարդսն, և վայրիկ մի և զՀոիս քաղաքին առհասարակ, որք ձայն բարձեալ աւադ այր զՄարկիոս կարդային 'ի քաղաքին՝ ախոյեան

անպարտելի և անբաժ 'ի մարդահաճոյ կրիցն։ Սակայն 'ի ծերունեաց կէսք՝ կանխագէտք հանդերձելոցն ընդդէմ դարձան խորհրդոյն։ Եւ արդեօք ոչինչ 'ի լաւաց պատահեցան յետ այնորիկ։

Քանզի ժողովրդապետք՝ անդ մերձ կացեալք յատենին՝ տեսին եթէ յաղթեաց խորհուրդն Մարկիոսի, 'ի դուրս վազեալք խուճապեցան 'ի խուժան անդր, ձայն բարձեալ իրախոյս առհասարակ կարդային ձեռն տալ նոցա։ Իբրև բազմութիւն խրոնեալ շուրջ կացեալ պատեցին զնոսա, և նոքա զՄարկիոսինն՝ բան 'ի բան պատմեցին ոճով, վայրիկ մի ևս ամբոխ ժողովրդեանն 'ի սրտմտութիւն բարկութեան խուժէր անկանէր 'ի ներքս 'ի ծերակոյտ անդր, այլ հանդարտեցին ժողովրդապետք. միայն զՄարկիոսէ բողոք բարձեալ առաքէին կոչել զնա՝ գալ յանդիման պատասխանի առնել վասն անձին։ Իբրև նա թշնամանօք մերժեաց զպատուիրակսն, ինքնին նոքա չոքան հանդերձ համբարապետօքն բռնի առնուլ ածել զնա։ Ա՛յն ինչ ձեռն մխեալ 'ի նա, յարեան միաբան պատրիկք 'ի զօրավիգն նմա, յետս ընկրկեալ վանէին զժողովրդապետսն, և հարուածս ևս 'ի վերայ համբարապետացն դնէին։ Եւ ապա այս աղմուկ անհնարին լռեաց յայնժամ, քանզի երեկոյն 'ի վերայ հասեալ կայր։ Իսկ այն ինչ յաչալուրջս աւուրն տեսին հիւպատոսք՝ զի խուժան ժողովրդեան դառնապէս սրտմտեալ՝

'ի կողմանց կողմանց 'ի հրապարակ անդր ընթանայր խուռնէր, զահի հարեալք վասն քաղաքին՝ 'ի մի վայր զծերակոյտն խմբեցին. իրատ տային 'ի խորհուրդ մտանել ամբէել հանդարտել զժողովուրդն հեզութեան բանիւք և մարդասէր կարգօք. զի թէ երբէք զգօնք լցեն և առաքինիք՝ չէ ժամն ասեն վասն փառաց պայքարելոյ, այլ 'ի բազմավոանգ մահահամբոյր ժամանակին խորհուրդ 'ի նեբքս խառնել արժան է՝ նեբողութեամբ լի և մարդասիրութեամբ։ Իբրև բազմագոյնք հաւանեցան ընդ բանն, ինքնին նոքա եկեալք առ ժողովուրդն՝ բանս ամբոս 'ի մէջ արկեալ խօսեցան, և գեղեցիկ ևս զամբաստանութիան 'ի բաց քերեցին, և չափաւոր ևս իրատս և գանգատ 'ի նեբքս արկին նոցա։ Իսկ յաղագս ցորենոյն գնոյ և այլոց վաճառոցն, բան մի՝ ասեն՝ ամենևին և արժան չէ խօսել։

Իբրև շատք 'ի խուժանէն ամբէալք հանդարտեցին, քանզի և համեստ և լռիկ ունկնդրութեամբն 'ի դէմս բերին նոքա զհեզանալ սրտին և զյանկչէլ. յարեան ապա ժողովրդապետք և ասէին, եթէ՝ չափաւորութիւն գեղեցիկ զայդ ցուցեալ ծերակուտին, այնուհետև և ժողովուրդք տեղի տացեն նմա 'ի դէպն և յարժանն։ Սակայն խնդրեն՝ զի Մարկիոս ինքնին յանդիման լիցի պատասխանի առնել վասն անձին, և ասել՝ եթէ ոչ ինքնին սադրեալ ինչ լցէ ծերակուտին խռով հարկանել 'ի քաղաքին և ոանհար ժողովրդեանն լինել.

և թէ՝ ինքն անասասեալ ոչ լցէ 'ի կոչ ժողովրդեանն. և թէ՝ ապա 'ի հարուածոյ անտի և 'ի թշնամանաց համբարապետացն յատենին՝ ինքնին իւրովանն պատճառք լեալ լցէ խաղմին այնորիկ և զինուորութեան խուժանին: Զայս ինչ խնդրեցին նոքա 'ի նմանէ, կամ զի նկուն առաւել երևեսցի Մարկիոս՝ և զբուսոյ բարուցն հարեալ ընդոտնեսցէ զգոռոզութիւնն՝ սպաս հարեալ ժողովրդեանն. կամ թէ ինքն անկակից ապերասանութեամբն յողն կացեալ՝ անչէջ այնուհետև զհուր վառեսցէ զբարկութեան խուժանին. և վերջնոյն մանաւանդ ակն ունէին նոքա՝ ուղղապէս խելամուտ եղեալ բարոյից առնն:

Արդ եկն էլ Մարկիոս՝ իբրու պատասխանի վասն անձին առնել. իբրև առհասարակ 'ի լռութիւն դարձան ունկն դնել նմա, նա յանդիման որերոյն՝ որ բանս հեշտ և ողբաւոր մնային լսել 'ի նմանէ՝ խօսել սկսաւ խոշորս և սանձակոտորս, և բանս դատախազս. և քան պարզերես պատասխանատուութիւն՝ առաւել ևս որոտաձայն էր բարբառն, և գիտակ երեսացն անժպիտ և խոժոռադէմ՝ բարձրայօն և արհամարհոտ, մինչդեռ անդուստ դառնացեալ մղձկէին ժողովուրդք, և ամենայն բան բերանոյ նորա գժոխամբերելի էր նոցա, և ծանրացաւումն լինէին 'ի խօսել նորա: Յայնժամ Սիկիննիոս խրոխտ և խիզախ 'ի ժողովրդապետան՝ իբրև վայր մի խօսեալ ընդ բարձակցացն, եկն արձանա-

ցաւ՝ բարբառեցաւ 'ի ձայն բարձր, եթէ ժողովրդապետք ինքնին մահու դատակնիք եառուն Մարկիոսի. և անդէն հրաման տայր համբարապետացն, առնուլ ածել զնա 'ի ծայր բարձրաւանդակին, և անդուստ փութապէս 'ի վայր 'ի վիհ անդր հոսել զնա։ Իբրև համբարապետք գիմեալք ձեռն մեսեցին 'ի նա, անդանօր և շատից 'ի խուժանէն քաջմեալի երևեցաւ գործն և յայրատագոյն։ Իսկ պատրիկք յայնժամ համբուն յայլ խելս եղեալք և 'ի ցաւոցն մղձկեալք, մեծապէս սասակութեամբ և աղաղակաւ դառոյթ տուեալ գիմեցին ձեռն տալ նմա. կէսք բաղուկ 'ի գործ առեալ՝ վանէին մերժէին զորս 'ի բուռն ունէին զՄարկիոս, և առեալ թափէին զնա յիւրեանս. և կէսք մատուանս տատանեալ յողոք խուժանին անկանէին։ Եւ քանզի յանհնարին աղմուկ շփոթից ոչ բան բաւական էր և ոչ աղաղակ, ապա բարեկամք և կարևորք ժողովրդապետացն տեսեալ՝ եթէ զՄարկիոս 'ի վայր պատուհասին ածել չկարեն հնար առանց կոտորածի շատից պատրկաց, ածին հաւանեցուցին զնոսա բառնալ 'ի պատուհասէն զդժպհին և զդժոխրմերն. մի բուռն առնել նմա, և մինչև փուրշին 'ի գլուխ եղեալ՝ մի 'ի մահ վարել զայրն, այլ տպաստան զբանն 'ի քուեայս առնել խուժանին։

Յայնժամ հանդարտեալ Սիկիննիոս, 'ի մէջ եկեալ հարցանէր զպատրիկն, յոր դէմն նոքա զՄարկիոս 'ի ձեռաց հանեն

խուժանին՝ որ պատուհաս ածէ դմա։ Իսկ և պատրիկք ընդդէմ դարձեալ հարցանէին. "Եւ դուք ինքնին յոր դէմս 'ի պատուհաս անագորոյն և անիրաւ այնպէս վարէք զայր լաւ Հռոմայեցի և զքաջ, մինչև կընքեալ իրաւանց դատաստանին"։ Եւ պատասխանի Սիկիննիոս և ասէ. "Արդ ա՛ղէ, բարուր և ո՛չ մի կացցէ խռովութեան ձեզ առ ժողովուրդդ. զձեր խնդիր դա ձեզ շնորհէ աւադիկ, զի օրինօք դատ վարեսցի նորա։ Եւ քեզ ինքնին ո՞վ Մարկիէ, պատուէր տամք յանդիման լինել հրապարակին յաւուրն երրորդի. եթէ քո ինչ անիրաւեալ ո՛չ իցէ, քա՛ջ իսկ խելամուտ արասցես զքաղաքացիսդ, որ քուէայս արկեալ դատեն զքեզ"։ Հաւանեցան պատրիկք ընդ պայմանն, և առեալք զՄարկիոս յիւրեանս՝ մոտիւրագոյնս մեկնեցան 'ի վայրաց անտի։

Այլ 'ի ժամանակի անդ աւուրցն երից հանդիպեալ համախմբութեան, (և առնեն Հռոմայեցիք զհամախմբութիւնն զայն յամենայն ինն աւուրս, և կոչեն նոքա զայն Ն՚ոնդինոյս). արդ յայնժամ ակն ունէին պատրիկք զերծանել Մարկիոսի 'ի դատաստանէն 'ի պատճառս արշաւանին ընդդէմ Անտիոքացւոց, և թուէր ձգել երկայնել արշաւանին. որպէս զի և խուժանին հեղանալ և զհուր բարկութեն կարձել կամ թէ խապառ շինչուցանել վասն անպարապութեանն և մարտի պատերազմին։ Այլ երբև փութանակի 'ի հաշտու-

թիւն բերեալք ընդ Անտիոքացին՝ դարձան յետս, լի եղեն ահիւ պատրիկք, և ա-տեանք յաճախ խմբեցան. գուն գործէին՝ զնաղդ զՄարկիոս ապրեցուցանել, 'ի նոյն և 'ի խաղաղութեան զժողովրդապետան և զժողովուրդն պահել։ Յայնժամ Ապիոս Կղաւդիոս այր կարծեալ յոյժ ռամկա-ռեաց՝ բոլոք ըարձեալ վկայութիւն դնէր, եթէ անձամբ անձին նոքա տասալեալ քա-կեացեն զՍինկղիտոսն, և յայլէոս ամբաւս պաշարեացեն զքաղաքն, եթէ երբէք նոքա զնջեալ Լշխան զժողովուրդն գործեացեն տալ քուեայ ընդդէմ պատրկաց։ Իսկ ոք առաւել հինաւուրց էին 'ի պատրիկս և ռամկասէրք, ներհակաբար ունէին զկար-ծիան, եթէ ոչինչ արդեօք դժնդակ և ան-համբոյր, նա՛ հեզ և հանդարտ և մարդա-սէր յարդարեացի խուժանն յԼշխանու-թենէ անտի։ Քանզի ո՛չ եթէ արհամար-հեալ անարդէ դա զծերակոյտդ, այլ կար-ծէ ինն այնպէս արհամարհեալ առ 'ի նմա-նէ. վասն որոյ և 'ի շուք պատուոյ և 'ի միութարութիւն եղեցի դմա դատաս-տանդ այդ. որպէս զի և յառնուլ իւրում 'ի բուռն զքուեայն, անդէն և 'ի բարկու-թենէն զնջեալ հեզասցի։

Արդ տեսեալ Մարկիոսի՝ զի 'ի վա-րանս տարակուսի պաշարեալ կայ Սինկղի-տոսն, քանզի և մարդասիրեալ խնայէր 'ի նա. դարձեալ և երկուցեալ զանգիտէր 'ի խուժանէն, հարցանէր ցժողովրդապետն՝ զի՞նչ ամբաստանութիւն ունիցին նոքա ա-

սեալ զնմանէ, կամ վասն ինչ իրաց 'ի դատաստան ածէն զնա առ ժողովուրդն. իբրև նոքա պատասխանի եւտուն, եթէ բրնաւորութիւնն է ամբաստանութիւն ինաստուն, և անշուշտ նա բռնանալ հաստատեալ է 'ի միտս. անդէն վաղվաղակի յարուցեալ՝ մոադիւրադոյնս՝ ասէր՝ այնուհետև երևեալ ժողովրդեանն, պատասխանի առնել վասն անձին. քանզի և ոչինչ խոյս տայ յամենայն կարգէ դատաստանին և ո՛չ դարձեալ յամենայն պատուհասէ՝ եթէ երբէք ըմբռնեսցի 'ի յանցանս. "Բայց թէ՝ ասէր՝ զայդ միայն ամբաստանութիւն կալջիք դուք զինէն, և մի՛ տեսջիք ծերակուտիդ": Իբրև հաւանեցան ընդ պայմանն, ապա թոյլ եղև դատաստանին. իսկ իբրև 'ի մի վայր խմբեցաւ խուժանն, անդ նոքա առաջին բուռն արարին, զի ոչ ըստ խմբեցն. այլ ըստ ցեղեցն եղեցի քուարկութիւնն. և քան զընչեղն և զականաւորն և զզինուորեալն, ամբոխ աղքատացն և խաղմարարացն և որոց լաւութեան փոյթ ինչ չէ նոցա՝ նախապատիւք յառաջ արկցեն զքուեայն: Բայց նոքա զամբաստանութիւն բռնաւորութեան ինաստուն 'ի բաց թողեալ՝ զոր ոչն կարէին ցուցանել, դարձեալ մեւանգամ զնոյն բանն յուշ ածեալ յեղեղեցին՝ զոր յառաջագոյն յատենի խորհրդոյն ասացեալ իսկ էր Մարկիոս. և զի՝ արդեալ խափանեաց զդիւրագնի վաճառեալ ամբարոցն. և զի՝ խորհուրդ ևս տայր նա ինքնին լուծանել քակել միան-

գամայն զժողովրդապետութիւնն 'ի ռամ-
կէն Հռովմայ։

Դարձեալ և նոր ամբաստանութիւն
ամբաստանէին զնմանէ, այն՝ զի բաշխեաց
բաժանեաց զկապուտ կողոպուտն՝ զոր
հան նա 'ի սահմանաց Անտիոքացւոցն. չէբեր
մատոյց 'ի հասարակաց գանձարանն, այլ
բաշխեաց եւ զօրականին որ ընդ իւր։ Իսկ
'ի վերայ այսորիկ՝ ասէն, եթէ կարի յոյժ
'ի խոր խոցեցաւ Մարկիոս. քանզի ոչինչ
ակնկալեալ ապաստէր, և ոչ ևս անդէն առ
ձեռն գտան նմա բանք՝ խելամուտ առնել
զնուժանն. այլ եթէ 'ի դովութիւն էառ
նա զզօրականն՝ որ ընդ իւր չոքան, խոռ-
վեալք խեռային ընդ նա. քանզի բազմա-
գոյնք այն էին՝ որ ոչն չոքան ընդ նմա։
Այլ 'ի վախճանի՝ յորժամ զքուէայն
եառն ցեղքն, երիւք չափ աւելի՝ տեղի
եգիտ գաւառապարտութիւնն. և էր պա-
տուհաս գաւառակնքոյն նորա՝ վտարանդու-
թիւն 'ի քաղաքէն անդարձ։

Այդ 'ի հրապարակել գաւառակնքոյն,
երբէք 'ի յաղթութիւնս մարտից պատե-
րազմաց ոչինչ այնպէս հրճուեալ ցնծա-
ցաւ խուժանն, որպէս յայնժամ խնդա-
ցեալ և խայտալով 'ի բաց մեկնէր 'ի վայ-
րաց անտի։ Իսկ զդաս Սինկղիտոսին ցաւ
սաստիկ և սրտառուչ առեալ գրաւէր.
սորչացաւ ապաշաւեաց և թաղծէր, զի
ոչ յառաջագոյն զամենայնն միանգամայն
գործեաց և կրեաց, մինչև զթշնամանսն
զայն թշնամանեալ էր 'ի խուժանէն, որ

այնչափ իշխանութիւն 'ի ձեռս առեալ
ճոխացաւ։ Իբրև այս եղև, այնուհետև
ընտրել ճանաչել զոք 'ի քաղաքին՝ ոչ
պատուճանաց ինչ հանդերձից պէտք էին
կամ այլոց ինչ նշանակաց, այլ անդէն
արագ յայտնի էր ամենայն տեսանելեացն,
եթէ որ ինդայն՝ 'ի ռամկէն է. և որ թաղ-
ծեալն կայ՝ 'ի պատրկաց անտի է։ Բայց
ինքն Մարկիոս անզարհուրելի կայեալ
մնացեալ և աննկուն՝ միանգամայն և 'ի
կերպարան անձին և 'ի ճեման և 'ի քայլն
և 'ի դէմս երեսացն, առհասարակ 'ի նոսա՝
որ վշտահար լեալ էին՝ ինքն միայն իւրում
անձինն երևէր անկարեկից այր. ոչ եթէ
'ի հանճարոյ ինչ բանին կամ առ 'ի հե-
զութենէն. և ոչ դարձեալ՝ զի գեղեցիկ
չափով բերէր զկիրս աղէտիցն, այլ նկուն
'ի բարկութենէն եղեալ և 'ի ծանրացա-
ուսն գրաւեալ կրից, զոր՝ բազումք այն
են որ չգիտեն՝ եթէ ցաւոց կիրք են։ Քան-
զի յորժամ 'ի սրտմտութիւն փոխարկի
ցաւն իբրու հրավառեալ, յայնժամ զհի-
քութիւնն 'ի բաց յիւրմէն գնէ և զվա-
տութիւնն. և յայտանէ ժիր երևի բար-
կացեալն և արի, ըստ որում և ջերմին՝
տապացեալն տենդիւ. քանզի յեռանդան
լինի յայնժամ հոգին և կորովանայ և ուռ-
նու և փքանայ։ Եւ արդեամբք վաղվաղա-
կի էցոյց Մարկիոս զկիրսն զայն զհոգւոյն.
քանզի մտեալ 'ի տուն իւր՝ գիրկս ածէր
մօրն և կնոջն որ կոծէին և աշխարէին և
դառնապէս արտասուս հեղուին. նա խրա-

խուսէր զնոսա համբերութեամբ տանել վշտին, և փութապէս եկեալ 'ի տանէն յուզի անկանէր 'ի դուռն քաղաքին, և ցայն վայր ուղեկից նմա էին առհասարակ պատրիկք. անդանօր Մարկիոս ոչինչ առեալ 'ի նոցանէ և ոչ խնդրեալ ինչ՝ այնպէս եկ արտաքս 'ի քաղաքէն, առեալ ընդ իւր զերիս կամ զչորս յարբանեկաց իւրոց:

Ապա զտեղի առեալ աւուրս սակաւ 'ի կալուածս արարոց իւրոց՝ անդ յուզէր ծփայր 'ի խորհուրդս բազմագէմն, սադրեալ 'ի սրտմտութենէ բարկութեն, ոչ գեղեցիկ ինչ և կամ պիտանի ինչ ունելով զկէտ նպատակին. այլ քուքայր և հնարս հնարէր քինահան Հռոմայեցւոցն լինել: Ապա հաստատեցաւ 'ի միտս՝ ահագին գոռ պատերազմի և մարտ սահմանակից յուզել շարժել ընդդէմ նոցա: Եկ չոքաւ առաջին առ Վոլուսկեանսն, իբրու որք տակաւին հարուստք էին նոքա և յաղթք զօրութեամբ և ընչաւէտութեամբ. և զայն ևս զմտաւ ածէր՝ եթէ որ սակաւ մի յառաջ աղէտք հարուածոցն, քան վատել զնոսա՝ առաւել մոլեգինս և զայրագինս յարդարեցին զնոսա: Արդ էր յայնժամ 'ի քաղաքին Անտիոքացւոց Տիւղղոս անուն Ամփիդիոս՝ այր աւագ ընչաւէտութեամբ և քաջութեամբ և հոյակապ զարմիւն՝ իբրև թագաւոր կարծեալ 'ի մէջ ամենայն Վոլուսկեանց: Գիտէր իսկ քաջ Մարկիոս՝ զի առաւել քան զամենայն Հռովմայեցիս ատեայ նա զնա. քանզի թող զայն՝ զի բա-

զում անգամ նոքա այր ընկերի սպառնալիս ածեալ և ձայն տուեալ էին միմեանց մեծապանծ՝ ըստ որում քաջամարտիկքն յերիտասարդաց հետամուտք փառաց, 'ի վերայ այսր և թշնամութիւն առանձին էր նոցա ընդ միմեանս։ Յայսր ամենայնի վերայ՝ տեսեալ Մարկիոս զի այր մեծանձն է Տիւղղոս և մեծախորհուրդ, և առաւել քան զքաղաքակիցսն ինքն մեծապէս մնայր քաջադիպութեան ժամուն՝ հանել 'ի հռոմայեցւոց զվրէժ տուգանացն, ինքնին ետ վկայութիւն այնմ՝ որ ասացն. "Ընդդէմ բարկութեան մարտ եդեալ կռուել դժընդակ է. քանզի զոր և կամեսցի նա՝ և կենոք չափ դնեսցէ"։ Քանզի արկեալ զիւրև զդեստ և հանդերձանս իմն այնպիսի յանծանօթս 'ի տեսանելեաց, իբրու Ոդիսեւս "Ղոքաւ եմուտ 'ի քաղաք անդր ա-ռանց թշնամեաց" 6։

Էր ժամ երեկորին, և թէպէտ և բազումք հանդիպեցան՝ այլ ոչ ոք ծանեաւ զնա։ Ապա դէմ եդեալ գնայր Մարկիոս 'ի տուն անդր Տիւղղոսի. և անդէն մտեալ 'ի նեղքս՝ յառաջեաց նստաւ առ կրակարանին լուռ և անշշունչ, և անդէն կայր հանդարտիկ քօղաձիգ գլխով։ Զարմացան ընտանիք, այլ ոչինչ իշխեցին 'ի բաց մերժել զնա. զի և կերպարանն և անշշունչ լռութիւնն պատկառելի գործէին զնա. ապա չոքան պատմեցին Տիւղղոսի զբանն, մինչդեռ նա բազմեալ կայր յընթրիս։ Յարեաւ Տիւղղոս և մատուցեալ առ Մար-

կիոս՝ հարցանէր ո՞ ոք իցէ և զի՞նչ պէտք ի-
ցեն նմա։ Յայնժամ Մարկիոս քօղաղերծ
եղեալ, և վայր մի լուիկ կացեալ՝ բարբա-
ռեցաւ և ասէ. "Եթէ տակաւին և դու
ո՞վ Տիւղղէ չճանաչես զիս, և զոր տեսա-
նեսդ՝ չհաւատաս, հարկ է ապա անձամբ
անձին ծանօթս տալ։ Ես ինքնին իսկ եմ
Գայիոս Մարկիոս, որ տուգանս ածի ան-
հնարինս 'ի վերայ Վղուսկեանց. և մակա-
նունդ իմ զոր բարձեալ բերեմ՝ Կորիողա-
նոս, ոչ ինչ նեղկ ինձ յուրաստ լինել զայդ։
Բազմագէմ քրտանց և վտանգացն ոչինչ
այլ տարայ մրցանակ, բայց կնիք իմոյ առ
ձեզ թշնամութեանն զանունդ զայդ։
Այդ միայն կայ մնայ ինձ աւադիկ անդըր-
ժելի. այլն ամենայն բարձաւ յինէն 'ի
մախանաց և 'ի խեռութենէ խուժանին,
և 'ի վատութենէ և 'ի մատնութենէ աւա-
գանուոյն և իմոց բարձակցաց։ Արդ աւա-
դիկ վտարանդի եղեալ իմ՝ եկի առ քեզ
ողոքաւոր ընդ քոյին մարդակոք. ոչ աներ-
կևանութիւն գտանել անձին և կամ փըր-
կութիւն, (քանզի առ ի՞նչ ապա եկեալ
էր իմ այսր, եթէ երբէք երկուցեալ էր 'ի
մահուանէ), այլ 'ի ցանկութենէ ձգեալ
վրէժխնդրութեան տարագրողացն. և գա-
մագիտ լինիմ՝ զքեզ ինքնին տէր աւադիկ
իմոյ առնելով անձին։ Արդ եթէ մարտ
խնդրես պատերազմի ընդ քոյ թշնամիս,
գործի 'ի ձեռն՝ ո՞վ քաջդ՝ զաղէտս իմ
առցես դու. և յիմ ձախողակ բախտէն՝
քաղդ գեղեցիկ պատրաստեսցես առհա-

սարակ Վոլուսկեանց։ Մարտ եղեալ կռուեցայց 'ի վերայ ձեր այնչափ լաւ էս՝ քան ընդդէմ ձեր, որչափ ինչ քան զանտեղեական՝ լաւ էս մարտիցեն որ տեղեակքն իցեն իրաց Թշնամեացն։ Ապա եԹէ համայն և այսպէս ոչինչ քաջալերեացիս, չեն և ինձ կամք այլ զարև տեսանել. և ոչ քեզ ինչ դեղեցիկ իցէ ապրեցուցանել զայր մի՝ երբեմն քեզ Թշնամի և մարտադիր, և զարդիս՝ քեզ անշահ և անպիտան"։ Զայսոսիկ լուեալ Տիւղղոս՝ մեծապէս յանձն իւր զուարճանայր, և կալեալ զաջոյն նորա, ասէր. "Արի ով Մարկիէ, և քաջալերեաց դու. քանզի անձնատուր լինելով քո մեզ՝ մեծապէս բարի պատրաստեցեր մեզ. այլ ցնա դու ակնկալեալ մեծ էս բարեաց 'ի Վոլուսկեանց ասսի"։ Ապա առեալ մարդասիրապէս ժողովէր զնա. և յաւուրսն յայնոսիկ խորհուրդ 'ի մէջ առնուին նոքա ընդ միմեանս վասն մարտի պատերազմի։

Բայց անդանօր 'ի Հռոմ քաղաքի աղմուկ յուզէր պատրկացն ընդ խուժանին, առաւել էս 'ի պատճառս դատակնքոյն Մարկիոսի։ Առ այս դարձեալ և հրէշ ինն դիւցականս ահաբեկս զհամբաւի հարկանէին իղձք և դուշակք և քահանայք և սոսկականք. յորոց զմին ասէն՝ օրինակ զայս։ Էր յայնժամ Տիտոս Լատինոս անուն ոմն՝ ոչինչ ականաւոր 'ի միջակայնոց անտի որերոյն. հանդարտեալ առանձինն, և մեկնեալ 'ի սնապաշտութենէ և առա-

ւել ևս յամբարտաւանութենէ։ Սմա ե-
րևութացեալ Աբրամազդ, հրաման տայր
երթալ ասել Սինկղիտոսին, եթէ 'ի նուի-
րական հանդիսին յոռի զոմն կոչաւիչ
արձակեցին նմա յառաջոյ և անհամբոյր
յոյժ։ Իբրև տեսիլ զայն ետես, զառաջինն
ոչինչ փոյթ տարաւ Լատինոս՝ որպէս ա-
սէր. այլ իբրև կրկնեալ և երեքկնեալ տե-
սիլն՝ անփոյթ լինէր, մեռանէր որդի մի
նորա լաւ և ընտիր, և անդամք հօրն յան-
կարծակի լուծեալք հաշմէին։ Ապա բար-
ձեալ այրն 'ի վերայ շալակի և եկեալ առ
Սինկղիտոսն և պատմեալ զտեսիլն, ասէն՝
եթէ վաղվաղակի հաստատեցան անդամքն,
և յարուցեալ գնայր ինքնին և ընթանայր։
Լի եղեն սքանչելեօք աւագանին, և ճրշ-
դրիտ քննութիւն 'ի վերայ կարդեալ ի-
րացն հաստատութէ, զոմն օրինակ զայս։
Զծառայ իւր տուեալ ուրուն 'ի ձեռս
ծառայակցացն, հրաման տայր ածել զնա
'ի հրապարակ անդր 'ի հարուածս գանից,
և ապա սպանանել զնա։ Նոքա մինչդեռ
տանէին զնա դանեալ և խարազանեալ,
նա առ 'ի ցաւոցն ընդ ամենայն կողմն ծա-
մածռեալ գնայր և շարժէր, գեղոյր և
գալարէր անհեթեթս և անհամբոյրս. անդ
ըստ դիպաց զհետս նորա հանդիսացեալ
գայր թափօր, և բազումք 'ի հանդիսակա-
նացն մեծապէս դժկամակ լինէին ընդ ան-
նուէր տեսիլն և ընդ անհամբոյր շարժ-
մունսն. սակայն և ոչ ոք վրէժխնդիր լի-
նէր, միայն յիշոցս և նզովս արձակէին ընդ-

գէմ տանուտեառն վասն դառնապէս պա-
տուհասին։ Քանզի անդ ուրեմն հինգն
հռոմայեցւոց հեզութիւն բազում ցու-
ցանէին առ ծառայս, և ինքնագործք լի-
նէին, և մոերմագոյնս և համբոյրս վարէին
ընդ նոսա և կենակից կենցաղակիցք լի-
նէին ընդ նոսա։ Եւ յանցաւոր ծառային
մեծ ևս պատիժ պատուհասին յայնժամ
այն էր, տալ տանել նմա արտաքոյ ընդ
մերձակայ վայրսն զփայտն կառաց՝ որով
հաստատեալ պնդեն զքեղին։ Քանզի ծա-
ռայ 'ի պատուհասին յայնմիկ տեսեալ
յընտանեացն և 'ի մերձաւորաց, անբաժ
'ի հաւատոյն էր այնուհետև. և անուն
կարդային նմա Ֆո

էիֆէ, այն է՝ Երկ-
մտանաբեր. զի զոր Հելլենացիք Իբ՝ օդ-
դէս կոչեն և Սդէոիղմա, այն է՝ Մոլթ և
Նեցուկ, Հռոմայեցիք ասեն՝ Ֆոոտա
այն է՝ Երկմտանի։ Ապա 'ի պատմել Լա-
տինոսի նոցա զտեսիլն, և 'ի նոցա վարա-
նելն վասն անհամբոյր և յոռի կոչաւելին՝
յառաջոյ գնացեալ Թափիրին, կէսք յայն-
ժամ յուշ ածէին զդժոխըմբերն զայն պա-
տուհաս ծառային, զոր այնպէս խարազա-
նեալ վարեալ ընդ հրապարակն՝ ապա
սպանին զնա։ Իբրև յայս ինչ միաբանե-
ցան քահանայք, պատիժ պատուհասի 'ի
վերայ տանուտեառնն կապեցին. իսկ ըզ-
Թափիրն զայն և զհանդէսան անդրէն նորո-
գապէս կատարեցին աստուծոյ։

Այլ Թուի Թէ Նումաս՝ իբրև ամենի-
մաստ հելլինակ պաշտամանցն նուիրակա-

նաց, յոյժ գեղեցիկ օրինադրեաց նոցա 'ի բարեպաշտութիւն և զայն՝ զի 'ի կատարել անդ խշխանաց կամ քահանայից յաստուա-ծայնոցն տօնից, յառաջոյ քարոզն 'ի ձայն բարձր գոչեսցէ. Հօտ ՝ճՃէ, այս է՝ Զայդ արա՛: Որով և պատուիրէ նա՝ 'ի նուիրա-կան յայն պաշտօն միայն ուշ ունել, և ո՛չ այլ ինչ գործ 'ի նոյն խառնել, և ո՛չ դար-ձեալ յայլ ինչ պէտս անպարապանալ. իբրու որ շատք այն ելցեն 'ի գործոց մարդ-կան, որ 'ի հարկէ և բռնի յանգ ելեալ կատարեսցին: Բայց բնաւորեցան Հռո-մայեցիք միւսանգամ դառնալ կատարել զնոյն զոհսն և զհանդէսս նուիրականս՝ ո՛չ միայն 'ի մեծաց պատճառաց, այլ և 'ի դուշնաքէից: Քանզի եթէ երիվար մի 'ի ձգողաց անտի զնուիրական կառն՝ զոր նոքա կոչեն Թէոսա, խոնջ և պարտա-սեալ երևեսցի, սապէս եթէ և կառավարն ահեկաւն զերասանական կալեալ ելցէ, վճիռ տային միւսանգամ հանդիսին: Այլ և առ վերջնովքն՝ կրկնեցին և երեքկնեցին և չո-րեքկնեցին ևս զնոյն զոհ մինչև ցերեսուն անգամ, քանզի ցանգ թերութիւն կամ խոչընդոտն թուէր նոցա հանդիսեալ 'ի նմա: Ա՛յսչափ ինչ պատկառ կային Հռով-մայեցիք բարեպաշտութեանն յաստուա-ծակոչն անդր:

Իսկ անդուստ Մարկիոս և Տիւղղոս գաղ-տաբար բանս 'ի մէջ արկեալ խօսէին ընդ մեծի աւագորերոյն՝ մարտ պատերազմի յարդարել ընդդէմ Հռոմայեցւոց, մինչ-

գեռ նոքա զաղմկաւն գայլն ընդ միմեանս։ Այլ իբրև աւագորեարն ընդդէմ դառ-նայր՝ քանզի դուլ պատերազմի պայմա-նեալ էր երկամեայ, յայնժամ պատճառք կռուոյ 'ի վեր երևեցան 'ի Հռոմայեցւոց անտի. քանզի 'ի կասկածանաց կամ թէ 'ի բանսարկութենէ դրդեալ նոքա՝ եռուն քարոզ կարդալ 'ի Թատերս և 'ի մրցանս, զի առհասարակ Վղուսկեանք որ գտանի-ցին 'ի Հռոմ՝ ելցեն արտաքս մինչև ա-րևուն մտեալ ելցէ։ Կէսք ասեն՝ 'ի դաւա-նացն Մարկիոսի հանդիպեալ բանին, սուտ ամբաստանեալ վասն արանցն՝ իբրու ոչք 'ի ժամու անդ թատերացն միաբանեալ ելցեն անկանել 'ի վերայ Հռոմայեցւոց և 'ի հուր դատել զքաղաքն։ Արդ 'ի քարոզէ աստի սատոիկ դրդռեալ Վղուսկեանք, անդուստ և Տիւղղոս աձեցուցանէր զբանն և սատոիկ ևս դրդէր զնոսա. և 'ի վերջէ հաւանեցուցանէր ևս զնոսա՝ առաքել խընդրել 'ի Հռոմայեցւոց զսահմանն և զքա-ղաքն՝ զոր հատին նոքա 'ի Վալուսկեանց 'ի մարտի պատերազմի։ Իբրև զայն լուան Հռոմայեցիք 'ի հրեշտակաց անտի, 'ի ցա-սումն բրդեցան. եռուն պատասխանի՝ զի թէպէտև առաջինք 'ի զէնս դիմագրաւեա-ցին Վղուսկեանք, վերջինք եղիցին Հռո-մայեցիք 'ի բաց դնել զզէնսն։

Ապա ժողով մեծ 'ի մի վայր խմբեալ Տիւղղոս, և սահմանեալ մարտ պատերազ-մի, խորհուրդ տայր անդանօր կոչել և զՄարկիոս՝ 'ի մոռացօնս զչարիսն դարձու-

ցեալ որ 'ի նմանէ անցին ընդ նոսա. զի նիզակակից նոցա այնուհետև գոլով քան զառաջին տուգանսն՝ օգուտ առաւել գոր ծեսցէ նոցա։ Իբրև կոչեցաւ Մարկիոս, և 'ի մեծի հրապարակին յանդիմանեցաւ նա 'ի խօսել իւրում՝ կորովի 'ի բանս և 'ի զէնս, և զգօն միանգամայն և արտեայ, առեալ կարգեցին զնա 'ի միասին ընդ Տիւղղոսի 'ի զօրավար մարտին ինքնատէր իշխանութիւն։ Այլ Մարկիոս զանգիտեալ՝ եթէ երկարաձգել հանգերձանացն խոչ և խութ արդեօք խորհրդոցն եղիցի, ձեպէր առ ձեռն զաւագան քաղաքին և զիշխանս 'ի զօրաժողովն և 'ի հանգերձանսն, և ինքն խրախոյս տուեալ կորովեացն՝ համարաթիւ չառնելով կամակարութեամբ խաղալ ընդ նմա, չու արար անկաւ յեղակարծումն ժամու 'ի սահման երկրին Հռոմայեցւոց՝ մինչդեռ ակն չունէր և ո՛չ ոք. և գտանէ աւար բազում յոյժ, զի և հնար չէր զամենայնն միանգամայն բառնալ տանել, կամ թէ 'ի սէտս Վոլուսկեանց բանակին անդէն ծախել սպառել։ Բայց Մարկիոսի յասպատակին յայնմիկ փոյթ ինչ չէր բազմահամբար աւարոյն և մեծի աւերածոյն սահմանին Հռովմայեցւոց, այլ կէտ նպատակի էր նորա 'ի բանին յայնմիկ՝ ընդ պատրիկս ձգել զնուժանն դրդռութեամբ։ Քանզի 'ի կապտել կողոպտել զկալուածսն, մեծապէս խնամով պահէր անվթար և անդըրժելի զպատրիկացն արարս։ Վասն որոյ և յերկուց կողմանց սաստիկ յուզեցան

հեռք և գրգռութիւնք. այն ինչ պատրիկք բողոք բարձեալ առ խուժանն վասն անիրաւ վտարանգութեան առն քաջի, և խուժանն ընդդէմ բասրէր զպատրիկսն, եթէ ինքնին նոքա յիշաչարութեամբ առաքեցին կոչեցին 'ի գործ անդր զՄարկիոս, և յայլոցն կռուէլ՝ նոքա 'ի զնին կացեալ բազմին. զի զնոյն կռիւ ունին նոքա արտաքոյ պահապան մեծութեան և գոյից իւրեանց առհասարակ։

Զայս ինչ 'ի գլուխ տարեալ Մարկիոս, և առաւել ևս քաջալերեալ զՎրուանկեանն արհամարհել զթշնամին, դարձաւ եկն լի աներկեանութեամբ։ Իբրև արագ արագ զօրաժողով եղեն Վրուանկեանք կամակարութեամբ հանդերձ, և տակաւ յոյժ սոսուարացաւ բանակ նոցա, կարգեցին սահմանեցին զկէս բանակին թողուլ անդէն 'ի պահպանութիւն քաղաքացն, և զկէսն խաղացուցանել ընդդէմ թշնամեացն։ Յայնժամ Մարկիոս 'ի կամն Տիւղղոսի ապատոան առնէր զբանն. և Տիւղղոս ոչինչ պակաս 'ի քաջութեան քան զինքն տեսեալ զՄարկիոս և գէղեցիկս յաջողեալ յամենայն 'ի մարտս, արձակէր զնա 'ի կռիւն և ինքն ընտրէր անձին զտեղի ունել 'ի պահպանութիւն քաղաքացն, և անդուստ պատրաստել նմա զպէտս բանակին։ Ապա մեծաւ զօրութիւն Մարկիոս չու արար խաղաց գնաց՝ դիմեաց առաջին 'ի քաղաքն Կիրկէոն՝ գաղթական Հռոմայեցւոց. իբրև նոքա մտադիր անձ-

նատուրք լինէին, ոչինչ ինչասեաց նոցա։ Ինչ խաղաց յաւարի առնուլ զգաւառն Լատինաց. ակն ունէր՝ եթէ անդանօր ընդ նմա 'ի կռիւ կաքաւեսցեն Հռոմայեցիք 'ի վերայ Լատինաց նիզակակցացն՝ որք և ըստէպ 'ի զօրավիգն կոչէին զնոսա։ Այլ քանզի վատասրտեալ էր նոցա, և հիւսպատուսացն ինքնին ժամանակ սակաւ 'ի վերայ կայր 'ի բաց զիշխանութիւնն դնել, ոչինչ կամեցան նոքա վտանգել զանձինս, և պատուիրակք Լատինացն դատարկաձեռինք դարձան։ Ապա Մարկիոս հորդան տուեալ 'ի քաղաքս նոցա, և սատկապէս զօրութեամբ հասեալ կալեալ զՏոլերինացիս, և զՎիկանացիս, և զՊեդանացիս և զՊոզանացիս՝ որք ընդդէմ դարձան նորա, 'ի գերութիւն վարեաց զմարդիկն և զինչս նոցա յաւարի առնոյր։ Իսկ անձնատուր որերոյն խնամ մեծապէս ածէր, և բնաւ իսկ անդրժելի պահեալ զնոսա՝ 'ի բացեայ յոյժ 'ի նոցանէն բանակ հարկանէր և ըզգուշանայր գաւառին նոցա։ Իբրև յաւարի էառ նա և զՊոլլաս քաղաք՝ ոչինչ աւելի քան զհարիւր ասպարէզ հեռի 'ի Հռովմայ, և աւար բազում աւարեաց 'ի նմա և զամենայն զօրաւորս նորա գոգցեաս առեալ խողխողեաց, և Վոլուսկեանք 'ի քաղաքաց քաղաքաց խրախուսեալք զինու զարդու հասանէին առ Մարկիոս, իբրու որ միայնակ առաջնորդ զօրավար կայցէ նոցա, յոյժ ապա զհամբաւի հարկանէր Մարկիոս ողջոյն ընդ Իտալիա, և յոյժ պան-

չացաւ անուն քաջութեան նորա, որ 'ի փոխել տեղւոջէ 'ի տեղի միոյ միայնոյ առն՝ փոփոխութիւն նորաստանչ 'ի գործան 'ի ներքս արկանէր։

Բայց Հռոմայեցւոցն իրք յանկարգութեան կային, և երբէք խրախուսեցան ոչ՝ 'ի վէգ գալ ընդ նմա, հանապազօր 'ի համաշնչութիւնս ամբոխից թեւակոխեալք և 'ի պայքարս այր ընդ ընկերի. մինչև լուր առին եթէ զԱվիենիոն պաշարեալ պատեցին թշնամիք՝ վայր աւանդից հայրենի դիցն Հռոմայեցւոց, ուստի և զիւրեանց ծագումն գիտէին նոքա, առաջին քաղաք դատակերտ Էնէասայ։ Անդ էր ապա տեսանել սքանչելի և յեղակարծ փոփոխումն մտաց զնուժանին, և յոյժ օտարախորթ և անկարծ՝ զպատրկացն։ Խուժանն ըղձակաթ յայնժամ առ Մարկիոս, դարձ անդատապարտ խնդրէր զնորա կրկին 'ի քաղաք անդր. իսկ ծերակոյան 'ի խորհուրդ մտեալ՝ ըղէմ դարձան և արգելին։ Կամ զի պնդեալք էին նոքա ցանգ հակառակ ամբառնալ կամաց խուժանին. կամ զի ոչինչ կամեցան եթէ շնորհս նոցա կալցէ Մարկիոս վասն դարձին. կամ զի թերևս ատեցին ևս զնա, իբրու որ ոչ յամենեցուն հարստահարեալ՝ առհասարակ ամենեցուն չարիս հասուցանիցէ, թշնամի ամբարձեալ հայրենի քաղաքին՝ յորում լաւորեարն և աւագ ախտակից կարեկից են նմա և 'ի միասին թշնամանեալք ընդ նմա։ Այլ զխորհուրդ զայս զծերոցն կար-

դացեալ 'ի հրապարակին, ոչինչ այնու-
հետև բաւական եղև խուժանն քուէայս
արկանել և սահման կարգել՝ մինչև հրա-
մայեալ 'ի Սինկղիտոսէն։ Իբրև այս ամե-
նայն ազգումն հասանէր առ Մարկիոս,
դառնացաւ յոյժ և 'ի խոր խոցեցաւ. է-
թող ելիք զպաշարումն, 'ի սրտմտութիւն
մեծ բարկութեան չու արար խաղաց դէպ
ուղիղ գիմեաց 'ի Հռովմ. և անդ մերձ 'ի
խրամն Կլիլեան բանակ հարկանէր քա-
ռասուն ասպարիսաք 'ի բացեայ 'ի քաղա-
քէ անտի։

Իսկ յերևեալ անդ Մարկիոսի՝ արհաւիրք
մեծամեծք և ամբոխ շփոթիչ սրտաբեկեալ
դրաւէր զքաղաքն. սակայն և երկպառա-
կութիւն հերծուածոյն լուծաւ յայնժամ.
քանզի և ոչ յիշխանացն ոք և ոչ 'ի ծե-
րոցն ոք ոչ ժառեցաւ այնուհետև ընդդէմ
դառնալ 'ի դարձուցանել զՄարկիոս. այլ
անդ յակն արկեալ զկանանին յայսկոյս
յայնկոյս վազիւք ընթացեալ ընդ քաղաքն,
անդ և զծերունին դաս դաս գերարտոս-
բալից 'ի մաղթանս հետևեալ 'ի մեհեանս,
և զքաղաքայինսն առհասարակ բեկեալ
լուծեալ վարանեալ առ ելս փրկութեան
անձանց, քանզի իսկ ապա 'ի վերայ կացին՝
եթէ գեղեցիկ խորհրդով հակամիտեցաւ
խուժանն հաշտ առնել զՄարկիոս. իսկ
Սինկղիտոսն ինքնին խորհրդակորոյս գը-
տաւ. յորժամ հանդարտելն լաւ էր, յայն-
ժամ սրտմտութեան բարկութեանն ըս-
կիզբն առնէր և յիշաչար կրիցն։ Ապա հա-

ՀՈՅ Թուեցաւ առհասարակ հրեշտակու-
թիւն առնուլ առաքել առ Մարկիոս՝
հրաւիրակ դարձին 'ի քաղաքն և աղաչա-
ւոր՝ հանդարտել 'ի դուռոյն։ Եւ էին ա-
ռաքեալքն առ նա 'ի ծերակուտէն՝ մեծ-
րիմք նորա. ակնկալեալ մնային անդէն յե-
րևել նոցա մարդասէր ասպնջականութեան
և հիւրամեծարութեան առ 'ի Մարկիոսէ՝
որում և ընտանիք իսկ էին նմա և կարևորք։
Սակայն վրիպեալք 'ի յուսոյն, ածեալք
ընդ մէջ բանակի թշնամւոյն և հասեալք
առ նա, գտանէին զնա բազմեալ պերճ և
բարձրայօնս և աննուէր, շուրջ աւագո-
րեար Վոլուսկեանց պարառեալ զնովաւ։
Հրաման տայր անդէն հրեշտակացն յա-
ռաջ բերել զհրեշտակութիւնն։ Իբրև նո-
քա բանս լի հեզութեամբ ըստ ժամուն
պիտոյից և հեշտս և բաղձալիս առեալ խօ-
սեցան ընդ նմա և դադարեցին. տայր պա-
տասխանի Մարկիոս վասն անձին առան-
ձինն դառնութեամբ լի և սրտմտութեամբ՝
ցասեալ վասն աղէտից կրիցն զոր կրեաց.
իսկ վասն Վոլուսկեանցն՝ քանզի զօրավար
է նոցա՝ ինդրէր դարձուցանել միանգա-
մայն զամենայն քաղաքսն և զսահմանսն՝
զոր հռոմայեցիք հասին 'ի նոցանէ 'ի
պատերազմին. առ այս՝ և վճռով քա-
ղաքակիցս իբրև Լատինս գրել զՎոլուս-
կեանսն. և ապա յայս պայման՝ ասէ՝ ի-
րաւ և արդար, անդրդուելի հաստատեցի
խաղաղութիւն ընդ նոսա։ Ժամադիր լի-
նէր նոցա աւուրս երեսուն տալ պատաս-

խանի. և արձակեալ զնոսա, և ինքն փու-
թապէս չուոյ հրաման տայր բանակին 'ի
գաւառէ անտի։

Եւ յայսմանէ ապա առաջին ամբաս-
տան լինէին զնմանէ Վոլուսկեանք. այն՝
որք և անդատին ոչինչ կարացին հանդար-
տել փառաց զօրութեան նորա, և խան-
տային ևս ընդ նմա. այլ և Տիւղղոս ինք-
նին։ Ո՛չ զի խէթ առանձին պատրաս-
տեաց ինչ նմա Մարկիոս, այլ զի և ինքն
Տիւղղոս ընդ կրիւք գրաւեցաւ մարդկա-
պէս։ Քանզի և մեծապէս ցաւէր նմա, տե-
սեալ զի բնաւ նսեմացան փառք նորա, և
զանց զնովաւ առնէին Վոլուսկեանք, իբ-
րու որ ամենայն ինչ նոցա Մարկիոս ինք-
նին իցէ միայնակ, իսկ այլոց շատ իցէ ա-
ւագանալ՝ որչափ ինչ նա տացէ նոցա։
Ուստի և յուզեցան 'ի ծածուկ ամբաստա-
նութիւք զնմանէ, և ընդ միմեանս քրթմնի-
ջէին վասն նորա, և զչու զայն զբանակին՝
Մատնութիւն կարդային. ո՛չ զի դղեակս
զքաղաքաց կամ զէնս զզինուորաց 'ի ձեռս
մատնեաց թշնամւոյն, այլ զի մատն և
տուր եղև քաջադիպութեան ժամանա-
կին. որում որպէս զայլ ինչ, և զսոսին դար-
ձեալ բաւական իցէ ոք փրկել և դարձեալ
կորուսանել, դուլ տալով մարսին զա-
ւուրս երեսուն. ուր և յաւուրս նուա-
զունս՝ մեծաց ևս արդեօք մարթ իցէ պա-
տահել փոփոխութեանց։ Բայց և ո՛չ
յայնժամ պարապորդ ինչ կայր Մարկիոս,
այլ ասպատակ սփռեալ աւերէր զերկիր

դաշնաւորաց թշնամւոյն, և տարածէր ձգէր յառաջագէմ առ սահմանսքն, և քաղաքս եօթն մեծամեծս և բազմաժողովս հատանէր 'ի նոցանէ։ Իսկ անդուստ Հռոմայեցիք ոչինչ համարձակեցան ձեռն տալ նոցա, այլ ոգիք նոցա 'ի նոսա յոյժ էին վատեալք և նուազեալք 'ի կռուել, ոչինչ ընդհատք 'ի մարդկանէն՝ որ հաշիք իցեն և խելանդամք ընդարմացեալք։

Իսկ իբրև ժամադրութիւն աւուրցն կատարէր, և Մարկիոս յերեւան հասեալ կայր հանդերձ բանակաւն, առեալ միւսանգամ հրեշտակս արձակեցին Հռոմայեցիք. յողոք անկեալ ամոքել զսրտմտութիւն բարկութեանն նորա, և 'ի բաց զՎոլուսկեանն տանել 'ի գաւառէն, և առնել և ասել՝ զոր միանգամ ինքն լաւ համարեսցի երկոցունց կողմանցն. քանզի և առ ահի երկիւղին Հռոմայեցիք տեղի երբէք ոչ տացեն. այլ եթէ նմա այնպէս հաճոյ իցէ շնորհս առնել Վոլուսկեանցն, արասցեն՝ յորժամ զինաթափ լինիցին նոքա։ Այլ Մարկիոս լուեալ զայս, ասէր՝ ոչինչ ամենևին պատասխանի ոչ առնել նոցա իբրև զօրավար Վոլուսկեանց. այլ իբրև քաղաքքային Հռոմայեցի խրատ և խորհուրդ 'ի նեղքս մատուցանէ նոցա՝ ցածնուլ պարկեշտանալ 'ի խորհուրդս, և զկնի աւուրց երից դառնալ առ նա միւսանգամ և կամակատար խնդրոյն լինել՝ զոր յառաջագոյն ցուցեալ իսկ է նոցա. ապա եթէ այլազգագոյնս լինչ խորհեսցին՝ ոչինչ ան-

վրտանդ լինելոյն նոցա այնուհետև գալ անդրէն 'ի բանակ անդր՝ ժամանաճառ բանիւք շատխօսութեան։

Իբրև դարձան հրեշտակք և զբանսն Մարկիոսի պատմեցին, անդանօր ապա Սինկղիտոսն՝ իբրու որ յահագին մրրկաց և 'ի բազմակոհակն ալեաց քաղաքն ողջոյն ծփեալ ելցէ՝ առնոյր ձգէր այնուհետև զնուիրական խարիսխն։ Քանզի որչափ ինչ յայնժամ 'ի քաղաքին դասք քահանայիցն աստուծոյ կամ խորհրդակատարք կամ նուիրապահք կամ ոգք վարժապետք հայրենատուր և վաղնջուց հաւահմայ արուեստին, առ հասարակ զնոսա առեալ արձակէր առ Մարկիոս՝ հանդերձեալս զարդարեալս 'ի նոյն տարազ, որպէս նոքա այր այր օրինադրեցան 'ի նուիրագործութիւնն իւրեանց, աղաչէլ փարելի ասել՝ 'ի բաց 'ի նոցանէն տանել զկռիւ մարտին, և այնպէս ապա խաղաղաւէտ անդորրութեամբ վասն Վոլուակեանցն խօսել ընդ քաղաքացեացն։ Ապրդ Մարկիոս թէպէտ և ժողովել ժողովեաց զարս զաւադան զայնոսիկ 'ի բանակ անդր, ոչինչ հանդարտեալ ամոքեցաւ ոչ արդեամբք և ոչ բանիւք. կրկնէր երեքկներ՝ կամ զխաղաղութիւնն հաստել 'ի պայմանս դաշանցն՝ զոր խօսեցաւ, կամ 'ի կռիւ պատրաստել պատերազմի։

Իբրև այնպէս յետս դարձան նուիրական դեսպանք, լաւ համարեցան Հռոմայեցիք անդէն 'ի քաղաքին հաստատուն զտեղի ունել և պարապացն պահակս հանել և

ղդուոյթն վանել, ակնկալեալ բազմահո-
լով ժամանակին և յարափոխ նորատեղծ
բախտին. քանզի և կարէին իսկ ոչ յայն-
ժամ յաջողել՝ ի փրկութիւն անձանց, այլ
քաղաքն նոցա ողջոյն վեր՝ ի վայր յուզեր
ծփայր, արհաւրօք լի և անբարի համբա-
ւովք. մինչև դէպ լինէր ինչ մի և յայնպի-
սեաց անսի տեսանել յայնժամ՝ զոր ստէպ
վիպեաց ինքնին Հոմերոս. թէպէտ և խա-
ժամուժն ոչինչ այնպէս համարէն՝ ի վերայ
կայ ասացելոցն։ Քանզի յորժամ այն քեր-
թող՝ ի մեծամեծսն և՝ ի նորատեսիլսն քեր-
թեալ՝ այսպիսի ինչ ասէ, եթէ «Ընդ
յուշ դիցուհին առնէր խաժակն Ա-
նաս». և թէ՝ «Այլ շրջեաց զմիտսն յան-
մահից ոմն, որ յուշ զհամբաւն ածէր խու-
ժանին», և թէ. «Կամ ինքն խորհեցաւ
այնպէս, կամ թէ և Աստուած այնպէս
ազդեաց». Խառնաղանձն լուեալ յայս-
պիսեաց ասսի, եպերէ՝ իբրու որ անհնա-
րինս և անհաւատալիս՝ ի վէպ առեալ Հո-
մերոս, անհաւատալի իմն կարծեցուցէ
զանձնիշխանութիւն մարդոյն, զոր երբէք
չառնէ Հոմերոս. այլ որ ինչ միանգամ՝ ի
գործոց հասարակք և սովորականք բանա-
ւոր մարդկանն, զայն նա անձնիշխանու-
թեանս մերում տայ. ուստի և ստէպ ա-
սէ. «Այլ ես ըստ մեծանձնութեան սրբ-
տիս խորհեցայ». և թէ, «Զայս ասաց.
և յոյժ ցաւեաց Աքիլլէսին. և սիրտն նո-
րա՝ ի թաւամազ՝ ի լանջսն՝ ՝ի կրկին տա-
րակոյս երկփեղկէր», և դարձեալ, «Սա-

կայն և ոչինչ կարաց հաւանեցուցանել զքաջախորհուրդն զողջախոհն Բելլերոփոն "։ Իսկ որ ինչ 'ի գործս նոր և չքնաղ և օտար և խորհրդակորոյս, որոց գեղեցիկ ինն մոլութեան պէտք ի՛ցեն և այլ յայլմէ լինելոյ, առեալ նա յայնժամ մուծանէ զԱստուած՝ ոչ 'ի բառնալ զանձնիշխանութիւնն, այլ 'ի շարժել և 'ի խրախուսել. ոչ եթէ թինդս և թափս յուզելով 'ի մեզ, այլ երևակութիւնս ինն զթափոցն զայնոցիկ ծնանելով 'ի մեզ. որով և ոչ եթէ ըզգործն ակամայ յարդարեսցէ, այլ կամաւորին տայ ընձեռէ սկիզբն, և անեղկևանութիւն և յոյս ևս 'ի վերայ բարդէ։ Ապա թէ ոչ՝ կամ պարտ է դլխովին 'ի բաց զաստուածայինն օտարացուցանել միանգամայն յամենայն պատճառէ և 'ի սկզբնէ գործոց մերոց, կամ թէ՝ ո՞ր ապա այլ ինչ օրինակ ի՛ցէ արդեօք՝ որով սատար նոքա մարդկան լինիցին և գործակից։ Զի ոչ եթէ զմարմին մեր զայս յօրինեալ կազմեալ 'ի ձև յարմարեն, և ոչ դարձեալ զձեռս մեր և զոտս մեր նոքա ըստ պիտոյից գործոյն առնուն և շրջեն, այլ սկզբամբք ոմամբք և երևակութեամբք և խելամտութեամբք արծարծեն դրդեն զհոգւոյս մերոյ զգործնականն և զանձնիշխանականն, կամ թէ ներհակաբար՝ յետս 'ի գործոյն նահանջեալ կասեցուցանեն։

Ուրդ 'ի տագնապ տարակուսին այնորիկ 'ի Հռոմ քաղաքի՝ կէսք 'ի կանանց հետևեալք ընթանային 'ի մեհեանս մեհեանս,

այլ բազումք այն էին 'ի նոցանէն և ակա-
նաւորք՝ որք յողոք անկեալ պաղատէին ա-
ռաջի բազնին Կապէտոլեանն Արամազ-
դայ։ Էր 'ի նոսա անդ և Վաղերիա քոյր
մեծին Պոպղիկոսայ, այն որ շահ օգտի
հարստութեան 'ի նեղքս եբեր Հռոմայե-
ցւոց 'ի կռիւս մարտից և 'ի կարգս քաղա-
քաց։ Այլ Պոպղիկոսաս վախճանեալ իսկ
էր, (որպէս և յարձանագրութեան վա-
րուցն պատմեալ է)։ իսկ Վաղերիայ մե-
ծապէս էր շուքն 'ի քաղաքին։ իբրև քաջ
իսկ Թեւակոխեալ էր՝ մի Թերևս վատու-
Թեամբ ինչ յամօթ զզարմն առնել։ Արդ՝
սա այս Վաղերիա անդանօր կիրս ինն կրեալ՝
զոր կանխեցի ասացի՝ աստուածային դոդ-
ցեա ազդմամբ վառեալ յինչ մի պիտանի,
յարուցեալ յանկարծ և ընդ իւր իրախոյս
առհասարակ և կանանուոյն տուեալ, դէմ
եդեալ գնայր ընդ նոսա 'ի տուն Վոլուս-
նիայ մօրն Մարկիոսի։ Մտեալ 'ի նեղքս, և
անդ գտանէր զՎոլուսնիա նստեալ 'ի միա-
սին ընդ նուոյն՝ 'ի գիրկս զողայսն ունե-
լով Մարկիոսի։ ապա շուրջ զնուրև բոլո-
րեալ Վաղերիա զկանայսն, խօսեալ սկսաւ
և ասէ։ "Մեք կանայք առ ձեզ աւասիկ
ով Վոլուսնիէ և Վիրգիլիէ՝ հասեալ կամք
առ կանայսդ, ոչ 'ի Սինկղիտոսին պատգա-
մաց, և ոչ 'ի Հիւպատոսին հրամանէ։ այլ
քանզի Աստուած ինքնին՝ որպէս հաւա-
նեալս եմ՝ 'ի դուռ շարժեալ 'ի մերոց պա-
ղատանաց՝ դրդեաց զմեզ գիմել առ ձեզ,
աղերսել զձեզ 'ի գործ ինչ փրկութեան

մերոյ և առհասարակ քաղաքին. որ և ձեզ ինքնին՝ եթէ 'ի հաւան գայցէք՝ քան ըզ-գատերացդ Սաբինացւոց փառս առաւել 'ի ներքս ընծայեսցէ. յորժամ նոքա ըզ-հարս իւրեանց և զարս առեալ 'ի բաց 'ի կռուոյ մարտին լռեցուցին՝ առնել սէր և խաղաղութիւն: Ա՛ղէ դուք արիք ընդ մեզ՝ 'ի միասին գնասցո՛ւք առ Մարկիոս. յո-ղոք անկեալ վկայութիւն Ճշդիւտ 'ի ներքս լերէք, եթէ քաղաք մեր այս առ 'ի նման-նէն այսչափ չարչարեալ՝ ինչ մի 'ի դժնդա-կաց ընդ ձեզ առ զայրուց սրտին չանցոյց և ոչ խորհեցաւ երբէք. նա՛ զձեզ ողջիկ ա-ռեալ դարձուցանէ առ նա՝ թէպէտ և ակն չունիցի ինչ առ 'ի նմանէն մարդասիրու-թեան ,, :

Զայս ասաց Վալերիա, և առհասարակ գովեցին զնա: Իսկ Վոլումնիա ետ պատաս-խանի և ասէ. " Քաջ իսկ 'ի հասարակաց աղէտսն և մեք ինքնին ո՞վ կանայք՝ բաժա-նորդք եմք: Սակայն և կիրս ևս մեզ աեսա-նեմ առանձին, իբրև որբք մնացաք մեք ա-ւադիկ յառաքինութենէն և 'ի փառաց Մարկիոսի. և զարդիս զմարմնով դորա բակ կալեալ են թշնամիք, քան անձնա-պահապետ նմա լինել՝ առաւել ևս պահ զգուշութեան ունել: Այլ անհնարին ա-ղէտք այն են, զի քաղաքդ աւադիկ յո-գւոց պարզել կայ՝ որպէս զի և զայս իւր 'ի մեզ 'ի կանայս առնէ ապաստան: Քան-զի և գիտեմ իսկ ոչ արդեօք՝ եթէ փոյթ ինչ զմէնջ արասցէ Մարկիոս, որում փոյթ

չէ նմա վասն հայրենեացն՝ զոր քան ըզ-
մայրն ինքնին առաւել համարէր և քան
զամուսին և քան զորդեակս։ Այլ համայն
և այնպէս առէք դուք զմեզ գործի 'ի ձեռս
և տարսցք առ նա. անդանօր ապա՝ եթէ
և այլ ինչ ոչ, գոնեա 'ի պաղատանս վասն
հայրենեացն վայրիկ մի ոգի առցուք մեք "։
Ասաց, և զՎիրգիլիա յոտին կանգնեալ՝
և զմանկունսն առեալ հանդերձ այլովք
կանամբք, այնպէս դաս կապեալ առհա-
սարակ գնային նոքա 'ի բանակ անդր Վո-
լուսկեանց և մերձենային։

Յայն տեսիլ և թշնամիք ինքնին գորո-
վեալք՝ պատկառ կային լուռ և անշշունչ։
Իսկ 'ի ժամուն կայր բազմեալ Մարկիոս
յիւրում բեմի 'ի միասին ընդ զօրապե-
տացն. իբրև անդուստ յսկն արկանէր ըզ-
գալուստ կանանցն, յոյժ հիացեալ կայր.
իբրև և զամուսինն ետես և ծանեաւ՝ որ
յառաջոյ ընթանայր, ընդ անձին ոգորէր՝
անդրդուելի զսեղին ունել և անողոքելի
յիւրում խորհրդեան. սակայն 'ի կրկին
յաղթեալ խռովեալ ընդ տեսիլն՝ ոչինչ
հանդուրժեաց այնուհետև կալ մնալ այն-
պէս մինչև 'ի մօտել նոցա առ նա. արագ
արագ մեծաքայլ 'ի վայր վազեալ 'ի բազ-
մոցէն՝ ընթացաւ յառաջ, և առաջին մօրն
գիրկս ածեալ՝ այնպէս հարուստ մի ժա-
մանակ, ապա յետ այնորիկ և ամուսնոյն
և զաւակացն՝ գերարտօսր սաստիկ հեղոյր
Մարկիոս, և ոչ դադարէր սիրել գգուել
զնոսա, այլ իբրև յուղխից հոսանաց այն-

պէս ածեալ բերէր նա 'ի կրկնց ոգւոյն։ Իսկ իբրև զկնգ ցանկութեանն ընդոյր, և մայրն անդէն խօսել կամէր, եւ կոչէլ զաւադանին Վոլուսկեանց՝ և կայր 'ի լսել։

Յայնժամ Վոլումնիա բարբառեցաւ և ասէ. "Յո՞ր սահման առեալ կացոյց զմեզ 'ի մերում իսկ տան քոյին վտարանդութիւն, և առանց ինչ մեր խօսելոյ դու ինքնին ո՞վ որդեակ քաջ իսկ խելամուտ ես 'ի մերոց ասսի ձորձոց և 'ի վշտահար կերպարանէ մարմնոցս։ Եւ արդ մի՞ւս դիր, զնա՞ւդ հիւքացեալ յոյժ եմք մեք աւադիկ քան զամենայն կանայս. քանզի որ զուարթագին մեզ հասանէր լինել տեսիլն, նոյն աւադիկ ըստ ձախողակ բաղդին՝ ահաբեկ յոյժ է. իբրև ես զորդի տեսանեմ, և սա ինքն՝ զայր, որ զպարիսպս զիւրոյ հայրենի քաղաքին պաշարեալ նստի։ Եւ ապա յայլոցն միսիթարութենէ՝ 'ի ձախողական և յաղէտս վշտին յաղօթան իւրեանց առ աստուածն՝ բնաւ իսկ անբաժ եմք. զի և հնար չիք աղօթիւք խնդրել յաստուածոց միանգամայն յաղթութիւն վասն հայրենեաց և փրկութիւն վասն քո. այլ որչափ ինչ խէթք թշնամեաց ընդդէմ մեր, նոյն խառնեալ է և յաղօթս մեր. քանզի հարկ 'ի վերայ կայ կամ 'ի հայրենեացն և կամ 'ի քէն դլխովին որբանալ քոյին զաւակաց և քոյ ամուսնոյն. զի վասն իմ չինդրեմ կեանս՝ տեսանել զվախճան մարտիս։ Այլ եթէ 'ի հաւան չգայցես՝ 'ի բաց զնէթդ թողեալ և զկադդ՝ գալ 'ի մտերմութիւն

և 'ի միամտութիւն, և քան օրհասաբեր միութեան՝ առաւել ևս լինել բարեգործ երկոցունց ևս կողմանցն, դիտասցես քաջ՝ զի չլիք քեզ հնար անցանել աւարել զհայրենիսն՝ մինչև քո նախ առաթուր զմարմին կոխեալ զվախճանելոյ մօրդ. և աստէն իսկ դու 'ի դոյն պատրաստեաց։ Քանզի և ոչ աւուրն սպասեմ տեսանել՝ յորում նշան յաղթութեան կամ հայրենիք կանգնեսցեն յիմ որդւոյն վերայ, կամ որդին ինքնին՝ 'ի վերայ նորա։ Եթէ իմ՝ չարաւ Վրլուսկեանց խնդրեալ էր 'ի քէն ապրեցուցանել զհայրենիսն, ինչ մի 'ի դժնդակաց և դժուարինս խնդրէի արդեօք. քանզի չէ՞ արժան զհայրենիսն տապալել, չէ՞ իրաւ և մատն ապաւինելոցն լինել. այլ մեք զարդիս միայն յաղէտից ասուի աղերսեմք անձնապուր լինել, որ և փրկաւէտ արդեօք երկոցուն կողմանցն, այլ և՛ս գեղեցիկ և շքեղ վասն Վրլուսկեանցդ. իբրու որ յաղթականք՝ զվերհագոյնսն 'ի բարեաց շնորհեսցեն մեզ, զխաղաղութիւնն ասեմ և զբարեկամութիւնն. և դոքա ինքնին ոչինչ պակաս կալցեն քան զմեզ։ Եթէ այդ երբէք յաջողեսցի, դու ինքնին եղիցիս պատճառք բարեաց. ապա թէ այլազգագոյնս՝ դու ինքնին բամբասեսցիս յերկոցունց կողմանց։ Սակայն և անյայտ գոլով եղից պատերազմիդ այդորիկ, այս ինչ յայտնի կայցէ. զի թէ յաղթեսցես՝ այր անյուշ և աղաչուր լինիցիս քոյին հայրենեաց. ապա եթէ յաղթեսցիս՝ համարեսցիս այր բար-

կացայտ, մեծ աղիտաբեր արանց՝ քոց բարեգործաց և բարեկամաց"։

Մինչ յայսպիսեաց ասոր խօսէր Վոլուսնիա, լուռ անմռունչ լսէր Մարկիոս. իսկ իբրև և յետ դադարելոյն՝ այնպէս հարուատ մի ժամանակ 'ի լռութեան կայր, յաւել Վոլուսնիա և ասէ. "Ա՛ռ ինչ քո այդ լռութիւնդ ո՛վ որդեակ։ Թերևս բարկութեան և յիշաչարութեան գեղեցիկ ի ցէ տեղի տալ, և ո՞չ գեղեցիկ ի՞ցէ շնորհել մեր՝ որ աղաչաւոր մնանէ վասն մեծաց իրաց։ Կամ թէ աւագ առն և քաջի՝ ոխակալութիւն չարեացն 'ի դէպ ի՞ցէ. և երեսս և շուք երախտեաց ծնողին առնել որդւոյ՝ չի՞ցէ գործ առն աւագի և լաւի։ Քան ամենեցուն՝ քեզ ինքնին առաւել անկ է շնորհս ունել, իբրև որ դառնապէս ատելի է քեզ անշնորհակալու կիրք։ Այլ դու վրէժս մեծապէս հաներ 'ի քոց հայրենեաց, չև՛ քոյին մորդ հատուցեր փոխարէնս։ 'Նա զի և գեղեցիկ յոյժ է արդեաք՝ անբռնադատ 'ի հարկէ զերաւացին բան և զվայելուչն շնորհել իմոց պաղատանաց։ Ապա եթէ և այնպէս բաւական չեմ ամբեել զքեզ, զի՞նչ ևս խնայեմ զվերջին աւադիկ բուռն հարկանել յուսոյն"։ Զայս ասաց մայրն, և 'ի խոնարհ առ ոտս նորա անկանէր ինքն հանդերձ կնաւն և զաւակքն։ Ածապարեաց Մարկիոս և ձայն բարձեալ գոչէր. "Զի՞նչ դու ընդ իս գործես ո՛վ մայր". յարոյց զնա և պնդապէս զաջոյն կալեալ, ասէր. "Յաղթեցեր։ Այլ

.քոյ յաղթութիւնդ գեղեցիկ վասն հայրենեացն՝ օրհասաբեր է վասն իմ. բայց 'ի քէն միայն յաղթեցայց էս "։ Զայս ասաց, և առանձին ապա վայր մի խոսեալ ընդ մօրն և ընդ կնոջն, արձակեաց զնոսա 'ի Հռոմ՝ զոր և ինդրէին նոքա։

Իբրև այդն մերկացաւ, 'ի բաց 'ի վայրաց անտի առեալ խաղացուցանէր զբանակն. և անդ Վոլուսկեանք ոչինչ միապէս մոաբերէին 'ի ժամուն։ Կէսք այպանեալ էպերեցին զայրն և զգործն գլխովին. և կէսք դարձեալ որ 'ի հաշտութիւն անդր հակամիտեալքն էին՝ անբամբաս կալան առհասարակ զգործն և զգործօնն. և շատք ևս՝ որ թէպէտ և ընդ գործն չհաճեցան, այլ և ոչ արանեցան ինչ ընդ Մարկիոս, իբրու որ արժան 'ի մեծաց պատճառաց հարկաւորեցաւ 'ի ներել։ Բայց ընդդէմ դարձեալ և ոչ ոք՝ առհասարակ զհետ չոքան նորա, քան ընդ իշխանութիւնն՝ զարմացեալք ընդ առաքինութիւն առն։

Իսկ եթէ քանիօն էր ահ երկիւղին և վոտանդ Հռոմայեցւոց ժողովրդեանն 'ի մարտին յայնմիկ, քաջ իսկ ցուցին նոքա յաղաստանալն իւրեանց։ Քանզի անդէն որք 'ի վերայ պարսպացն կային՝ իբրև զչուն տեսին զբանակին, արագ արագ ընթացեալք՝ բացեալ միանգամայն զամենայն մեհեանսն՝ պատկաւ բոլորեցան և զոհս կատարէին, իբրու որք յաղթութիւն մեծապէս տարեալք իցեն։ Եւ անդ 'ի գրդեալ և 'ի դիգուեալ ծերակուտին և խառնաղանձ խու-

ժանին զկանանին զայն՝ անպատուամ ցին-
ծացաւ քաղաքն, և ձայն բարձեալ՝ պատ-
ճառք և առիթ վրկութեան առհասարակ
կարդային զնոսա։ Ապա իբրև և Սինկղի-
տոսն վճիռ տայր, զամենայն զենդիրս ըզ-
կանանուոյն շնորհել իշխանացն 'ի շուք նո-
ցա և 'ի տրիտուր վաստակոցն, ոչինչ այլ
խնդրեցին նոքա՝ բայց մեհեան մի կանգ-
նել Կանոցի Բաղդին, յանձանց իւրեանց
զծախսն տալով զշինութեանն. այլ զնուի-
րագործութեանցն ասեն և զքաջավայել-
լուչ պատուոյն ասուածոյն՝ Դիմոսականն
տեսցէ։ Բայց Սինկղիտոսին գովեալ զքա-
ջութիւն ոգւոյ կանանցն, 'ի հասարակաց
անտի գանձարանէն կանգնէր միանգամայն
և զուաճարն և զարձանն. սակայն և կա-
նայքն ինքնին հանգանակեալ գրամն՝ կանգ-
նեցին և այլ դրոշեալ երկրորդ։ Եւ զայս
դրոշեալ 'ի կանգնեալ անդ 'ի մեհենին՝ ա-
սեն Հռոմայեցիք բարբառեալ այսպիսի
ինչ. ԱՍՊՈՒԱԾՈՒԷՐ ԻՐՕՆԱՒՈՐՈՒԵՍՄԲ ԶԻՍ
ՌՇ ԿԱՆԱՅԻ ՆՈՒԻՐԵՑԷԻ. և զայս ձայն երկիցս
լսելի եղեալ կցկցեն նոքա. և կամին նոքա
զանդոյնց ոմանց նման իրս և զդժուարա-
հաւատալիս հաւանեցուցանել մեզ։

Քանզի դրոշելոցն քիրան երևել հոսել
և արտօսր թափել և կաթս ինն արիւնե-
բանգս սփռել՝ չէ ինչ անկարելի։ Քանզի
փայտք և քարինք բազում անգամ աղտս
յինքեանս ժողովեալ ձգեն՝ պատճառք
խոնաւուտ տամկութեն. շատ ինչ և գոյնս
արձակեն յիւրեանց, որք և ներկս և ե-

բանգս առնուն տպաւորեն 'ի շրջապատ օ-
գոյն. որովք և իրս ինչ նշանակել 'ի Քա-
ջէն՝ ոչինչ արդեօք արդելուցու կարծել։
Ա՛ւ այս դարձեալ՝ մարթի և ձայն մի նման
օրինակ Ճչալոյ և հեծութեան՝ արձակել
դրօշելոցն՝ 'ի խորտակելոյ անտի կամ 'ի
սաստիկ Ճեղքելոյ մասանցն՝ որ 'ի խորս
անդ նոցա։ Սակայն յօդաւոր ձայն և
բարբառ այդչափ յատակաձայն և անվթար
և պարզախօս հանդիպել յանանձնաւոր
նիւթն՝ բնաւ իսկ յանհնարիցն է։ Քան-
զի և ոչ հոգին և ոչ դարձեալ Աստուած՝
անբաժ 'ի գործարանաւոր մարմնոյ և որ
բարբառողական մասամբքն յարմարեալ
դաշնակեալ ոչ իցէ, ձայն արձակել բա-
ւական իցէ և խօսել բարբառել։ Իսկ ուր
ուրեք պատմութիւնն ասիպեալ՝ կարի նեղ
հասցէ մեզ 'ի բազմաց անտի և յարժանա-
ւոր վկայից, յայնժամ ապա աննման իմն
զգայութեանս մեր այսորիկ կերք նեղոր-
ծեալ յերևականն հոգւոյն՝ այնպէս տայ
մեզ կարծեցուցանել. ըստ որում և մեք
ինքնին յերազի կարծեմք լսել՝ զոր ոչն
լսեմք, և տեսանել՝ զոր չտեսանեմքն։ Հա-
մայն և այնպէս՝ որք միանգամ ջերմապէս
մտերմութեամբ և սիրով վառեալ են յԱ-
ստուած, չկարեն ինչ մի յայտպիսեաց աս-
ոի անհաւատանալ և կամ մերժել երբէք,
և հաւատոց իւրեանց առնուն զօրավիգն՝
զմեծն զայն և զքանչելին և զաննմանականն
մեզ զԱստուծոյ զօրութիւնն։ Քանզի եր-
բէք իմիք 'ի մարդկայնոց ասոի նա նման

չէ, ոչ 'ի բնութեանն, ոչ 'ի շարժման, ոչ յարութեստին, ոչ 'ի զօրութեան. ուստի եթէ և ինչ մի արասցէ յանգործիցն մերոց և զանհնարինսն հնարաւորեսցէ՝ չէ ինչ տա-ղադէպ։ Նա աւանիկ յամենայնի 'ի մէնջ ընդհատ՝ մեծապէս յոյժ նա 'ի գործս իւր աննման է մեզ և օտար գլխովին։ Սակայն և շատ ինչ իրք՝ ըստ Հերակլիտոսի՝ 'ի մէնջ անծանօթք արացեալ փախչին վասն ան-հաւատութեան մերոյ։

Իսկ իբրև դարձաւ եկն Մարկիոս յԱն-տիոն 'ի բանակէ անտի, Տիւզրոս՝ որ ա-տեայր զնա և գժոխըմբեր ևս էր նմա ահ երկիւղն առն, խորհեցաւ վաղվաղակի սպա-նանել զնա. իբրու որ զայն գէպ ժամա-նակ եթէ 'ի ձեռաց հանցէ, ոչ ևս այլ բա-ւական լցէ գտանել։ Ապա իբրև շատ զոք յուզեաց և յարոյց սատան Մարկիոսի, հրաման տայր նմա 'ի բաց զնչխանութիւնն դնել, և Վրուսկեանց յանդիման համար տալ զգործոյն։ Երկուցեալ Մարկիոս իբ-րև զմի 'ի սոսկականաց լինել 'ի ժամուն՝ յո-րում զօրավարութեամբ երևելի էր Տիւզ-ղոս 'ի մէջ քաղաքայնոցն, ետ պատասխա-նի՝ 'ի բաց զնչխանութիւնն դնել, յորժամ և Վրուսկեանք հրամայեսցեն. իբրու որ 'ի հրամանէն նոցա առհասարակ կալաւ զնչ-խանութիւնն։ Բայց 'ի համարոյն ոչինչ խուսափէր՝ անդէն իսկ տալ Անտիոցւոցն եթէ կամեսցին։ Իբրև առհասարակ 'ի մի վայր խմբեցան, յարեան առենաբանք խու-ժանին գրգռել ընդդէմ նորա. իսկ իբրև

յարեաւ և Մարկիոս, անդ 'ի շուք մեծա-
րանաց երեսաց առն՝ այնպէս 'ի լռութիւն
հեզութեան հատաւ խուժանն, որպէս
զի և համարձակ աներկեւանութեամբ խօ-
սել Մարկիոսի. անդուստ և Ընտիացիք որ
միանգամ քաջախորհուրդք 'ի նոսա և խա-
ղաղասէրք՝ յայտ առնէին մարդասիրապէս
լսել նմա և ուղղութեամբ դատել։ Բայց
երկուցեալ զանգիտէր Տիւղղոս 'ի պատաս-
խանատուութէ Մարկիոսի, քանզի ՃԾար-
տարախօս յոյժ էր այրն։ Առ այս դար-
ձեալ և առաջին նահատակութիւնք առն
մեծապէս սատար էին՝ քան զոտնհարու-
թիւն վերջին ամբաստանութեան ինասուն.
նա՝ և այն գլխովին վկայութիւն էր մեծու-
թեան արդասեաց առնն, քանզի և ոչինչ
արդեօք կարծէին զանձինս անիրաւեալք
վասն ոչ ընդ բռամբ զՀռոմ ունելոյ, է-
թէ 'ի Մարկիոսի ձեռն չէր նոցա առ դուրս
ունել զնա։ Ապա ոչինչ լաւ համարեալ
երկայնել ձգել և զխուժանն սադրել հրա-
պուրել, այլ որք առաւել յանդգունք 'ի
սատանան Մարկիոսի բողոք բարձեալ և ա-
ղաղակ, իբրև չէ արժան դմա ունկն դնել,
և ոչ մատնտու առնն թոյլ տալ բռնակա-
լել 'ի վերայ Վղուակեանց, և զի և յանձն
չառնու դա մերկանալ յիշխանութենէն,
խուռն և համուռ դիմեցին 'ի վերայ առն
և զնա անդէն խողխողեցին. և ձեռն տայր
նմա 'ի ժամուն և ոչ ոք։ Իսկ թէ բազմա-
գոյնք ոչինչ հաւանեցան ընդ գործն՝ յայտ
արարին, զի 'ի քաղաքաց քաղաքաց խուռն-

ընթացք հասեալք 'ի վերայ մարմնոյն՝ ա-
ռին և շքով թաղեցին զնա. և զչիրիմ նո-
րա իբրև զքաջամարտիկ առն և զզօրավարի՝
զինու զարդու և 'ի կապուտ կողոպուտ
յօրինեալ զարդարեցին։

Իսկ իբրև լուր 'ի Հռովմ հասանէր մա-
հուն Մարկիոսի, ոչ շքոյ կերպարան 'ի
դէմս բերին առ նա և ոչ զբարկութեանն,
այլ թոյլ ետուն տիկնայց քաղաքին՝ որ կա-
մեցան՝ սուգ առնուլ զամիսս տասն ըստ ո-
րում և սովորութիւն էր նոցա խրաքան-
չիւր առնել 'ի մահու հօր և զաւակի և եղ-
բօր. քանզի և այս սահման ժամանակի
կնքեցաւ երկայն սգոյն 'ի Նումայէ Պոմ-
պիլեայ, որպէս 'ի նորա պատմութեանն
յայտ արարեալ է։ Բայց յետ այնորիկ իրք
Վրուսկեանցն յոյժ հիքացեալ՝ Մարկիո-
սի իսկ լինէին. քանզի առաջին ընդ Սի-
կանացւոց 'ի վսեր եկեալ ընդ նիզակակ-
ցացն և բարեկամացն վասն զօրավարու-
թեան, մինչև վերս և մահուանս 'ի վերայ ե-
դին միմեանց. ապա և 'ի մարտի պատե-
րազմի նկուն 'ի Հռոմայեցւոց եղեալ՝ անդ
դիտապաստ անկանէր Տիւզղոս և առ նովաւ
այրընտիր զօրականին. մինչև 'ի պայմանս
անարդաբար հաշտեալք՝ նուաճեցան ընդ
ձեռամբ նոցա, և յանձն առին կատարել
զպայմանս հրամանին նոցա։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ԱՂԿԻԲԻԱԴԵԱՅ
ԵՒ
ԿՈՐԻՈՂԱՆՈՍԻ

ԼՍԻ արդ կարդեալ մեր աւադիկ ըզ-գործս նահատակութեան դոցա, զոր մի-անգամ պատմութեան և յիշատակաց արժանիս համարեցաք, է մեզ զարդիս տեսանել՝ զի պատերազմական մրցանք երկաքանչիւրոց դոցա ոչ շատ ինչ արդեօք 'ի միոյն կոլմն ձգէն զմէտ կշռոյն. քանզի հաւասարապէս երկոքեանն գործս բազում աւրութեան քաջութեան, բազում ինչ և աւրուէստից հանդէս և հմտութեան՝ 'ի զօրավարութեան 'ի դէմս բերին:

Բայց թէ թերևս ոք զԱղկիբիադէս ինքնին՝ որ ընդ ծով և ընդ ցամաք 'ի մրցմունս բազումս՝ յաղթութիւնս ստէպ 'ի գլուխս տարաւ և նահատակութիւնս, խնդրեսցէ վերհագոյն ընծայեցուցանել զօրավար: Սակայն և երկաքանչիւր դոքա յորժամ մերձն

կայլին և զօրավարէին, յայտնի ապա ցանգ գէղեցիկս նահատակեցան իրք ընտանեացն. և յայտնագոյն ևս՝ ՚ի նասեալք հարուածեցան՝ յորժամ նոքա ՚ի բացեայ էին։

Իսկ զքաղաքականութեան կարգ զԱղկիբիադէայ՝ իբրու կարի մեղկ և գիրդ և ոչինչ անարատ ՚ի ցովութենէ և ՚ի շողոքորթութենէ ՚ի շնորհս քաղաքավարեալ խուժանին, արք ողջախոհք այպանեալ խոտեցին։ Իսկ զՄարկիոսին զանհամբոյրն զայն և զսէգն և զպերճն և զվէսն՝ յոյժ առեաց ժողովուրդ Հռոմայեցւոց։ Ապա և ոչ մին ՚ի նոցանէ գովանի է։ Բայց որ միանգամ շնթէ և մարդահաճէ խուժանին, նուազ արդեօք բամբասելի լցէ քան զնոսա՝ որք առ չերևեալ մարդահաճոյք՝ ընդվայր հարեալ ոռնհար լեցին խուժանին։ Քանզի արդեօք անարդ լցէ մարդելուզութեամբ ամբոխին, խնդրեալ իշխեալ ՚ի վերայ նոցա. իսկ ահաբեկութեամբն բռնանալ ՚ի վերայ և հարստահարեալ և նկուն առնել, ոչ անարդ միայն լցէ՝ այլ և անիրաւ։

Այլ ՚ի քաղաքավարութեան կենացն՝ քաջ իսկ պարզ և անկեղծ էր Մարկիոս և անչար. իսկ Աղկիբիադէս ՚ի քաղաքականութեան իւրում խորամանկ և նենգաւոր։ Այլ մեծապէս ամբաստանեն զչարաբարութիւն նորա և զնենգն, յորժամ խորամանկեալ զԱկեդեմոնացւոց հրեշտակն՝ որպէս Թուկիդիդէս պատմէ՝ եղոյծ զնաղաղութիւնն։ Սակայն և այն քաղաքականութիւն սորա՝ թէպէտ և անդրէն

միւսանգամ 'ի կռիւ մարտի առեալ ձգեաց զքաղաքն, հզօր գործեաց և ահագին զնի-զակակցութիւն զայն զՄանտինացւոց և զԱրգոսացւոց՝ յաջողեալ 'ի ձեռն Աղկի-բիադեայ։ Իսկ թէ՝ և Մարկիոս ինքնին նեղգաւ գրգռեաց զմարտն ընդ Հռովմայ-եցիս և ընդ Վոլուսկեանս՝ ստութեամբ բանսարկելով զեկեալսն 'ի Թատերան տե-սարանաց, վկայէ պատմութեամբն Դիո-նեսիոս։ Բայց և պատճառքն ինքնին՝ յո-ռեգոյն ևս ընծայեցոյց զգործն։ Քանզի ո՛չ եթէ 'ի մրցանաց ինչ փառաց և ոչ 'ի քաղաքական ինչ մարտէ կամ 'ի պայքա-րաց՝ իբրու զԱղկիբիադէսն, այլ սրտմտու-թեան բարկութեանն սպաս տարեալ, յոր-մէ արդեօք 'ի շնորհս ոչ ոք վայելեալ բեր-կրեացի երբէք՝ որպէս Դիոնն ասէ, այն-պէս սահմանս բազումս զԽոալնոյ առեալ վերս 'ի վայր շարժեաց, և քաղաքս շատ՝ որ ոչինչ անիրաւեցան առ նա՝ ինքն առ սրտ-մտութեանն ընդդէմ հայրենի քաղաքին՝ գրաւեալ նկուն արար։

Եւ թէպէտ և Աղկիբիադէս ինքնին առ բարկութեանն մեծաց պատճառք եղև ա-ղէտից քաղաքայնոցն, այլ յորժամ և զա-պաշաւեալ նոցա գիտաց՝ փութապէս և ինքն նեղեալ մարդասիրեաց. և յորժամ ան-գրէն միւսանգամ 'ի նոցանէն վտարեցաւ, ոչ ինչ հանգուրժեաց ընդ սխալել զօրա-վարացն, և անփոյթ չարար զնոցանէն՝ յոր-ժամ անբարի խորհրդովք կային նոքա 'ի վտանգ արկեալ զանձինս իւրեանց. այլ

զոր օրինակ Աբիսոիդէս մեծապէս 'ի գո-
վութիւն առեալ է՝ յոր ինչ միանգամ գոր-
ծեաց նա ընդ Թեմիստոկղէս, զնոյն և Աղ-
կիբիադէս՝ ինքնին մերձ եկեալ առ զօրա-
վարն որ չէին իսկ նորա բարեկամք, և կա-
ցեալ խօսէր նոցա զարժանն և իրատէր ու-
սուցանէր : Իսկ Մարկիոս յառաջ զամե-
նայն զքաղաքն առեալ յաղէտս պաշա-
րէր, այն՝ որ ոչ յամենեցունց արդեօք կիրս
կրեաց. որպէս զի և լաւորեարն անդ և ա-
ւագ՝ իբրև զոյգ նմին անիրաւեալ այնպէս
կարեկից ախտակից լինէին առնն : Եւ առ
այս՝ և բազում հրեշտակութեամբք և խրն-
դրուածովք՝ որք ապաքինեալն ինդրէին զոխ
բարկութեան նորա, ոչինչ ամոքեալ հե-
զացաւ և տեղի եւտ. քաջ իսկ եցոյց՝ եթէ
առ ամայի զհայրենիսն կարդեալ և 'ի քան-
դեալ, և ոչ 'ի ժառանգեալ և 'ի դառնալ՝
զանհնարին զայն և զանհաշտելին յուզեաց
'ի վերայ զգոռն :

Բայց այսուիկ զք ասասցէ արդեօք տար-
բերեալ զնոսա : Քանզի Աղկիբիադէս խո-
րամանկեալ 'ի Սպարտացւոց, առ ահին
միանգամայն և առ ատելութեան առ նո-
սա՝ դարձեալ փոխեցաւ առ Աթենացիսն :
Իսկ Մարկիոսի՝ որում շնորհս զամենայն
ցուցին Վոլուսկեանք՝ չէր արդեօք գեղե-
ցիկ թողուլ լքանեալ զնոսա. քանզի և զ-
ըսավար ընտրեալ կարգեցին զնա և մեծա-
պէս վստահացան 'ի նա հանդերձ իշխա-
նութեամբն : Ոչ որպէս Աղկիբիադէս՝ զոր
չարաչար մանաւանդ վարեցին Լակեդեմո-

նացեալք՝ քան վարեցան նովաւ, 'ի քաղաքին շուրջ եկեալ յայսկոյս յայնկոյս, և անդրէն միւսանգամ 'ի վեր 'ի վայր յաձեալ 'ի բանակին, 'ի վերջէ ուրեմն 'ի Տիսափերնեայ ձեռս առեալ ձգէր զանձն։ Եթէ ոչ օն և օն՝ ցանկացեալ նորա միւսանգամ դարձին 'ի հայրենի աշխարհն, այնպէս սպաս հարկանէր Տիսափերնեայ, զի մի յանկարծ ողջոյն հիմն 'ի վեր տապալեսցին Ամէնք։

Այլ սակայն վասն Աղկիբիադեայ պատմեն՝ առնուլ նմա բազում անգամ անարգաբար արծաթ 'ի կաշառատուաց, զնոյն և անարգաբար ծախել վասնել 'ի գրգանս և յանժուժկալութեան։ Իսկ զՄարկիոս՝ յորժամ և շքով և պատուով տային ընձեռէին նմա զօրավարք՝ ոչինչ կարացին հաւանեցուցանել զայրն առնուլ։ Վասն որոյ և մեծապէս խուժանին ատելի գտաւ 'ի պայքարս կռուոյ պարտուցն ընդ ժողովրդեանն, իբրու որ ոչ 'ի շահ ինչ օգտի՝ այլ 'ի թշնամանս և յարհամարհութիւն աղքատացն նա թեւակոխեալ էր։

Արդ Անտիպատրոս 'ի թուղթ ինչ իւր արձանագրեալ յաղագս մահուանն Արիստոտէլի խմաստասիրի՝ ասէ, եթէ "Հանդերձ այլովք բազմաք՝ այս այր աւագ ունէր և գյանգուցանելոյն արուեստ"։ Այլ Մարկիոսին գործք և առաքինութիւնք՝ զարուեստ զայս մերձ ոչ ունելով, ատելի աբարին զնոսա և նոցուն իսկ բարեգործելոցն առ 'ի նմանէ, որք ոչն հանգուրժէին

բարձրայօն պերճութեան նորա և կրկնց յա-
մառութեանն՝ զոր բնակակից ընկեր միայ-
նութեան՝ ասաց Պղատոն։ Իսկ Ներհակա-
բար Աղկիբիադէս քաջագէտ 'ի մարդասի-
րասէս վարել ընդ կենակից մարդկանն,
զարմանք չեն՝ եթէ յորս միանգամ առա-
քինաբար նահատակեցաւ՝ բարեբաստիկ
ծաղկեցաւ 'ի փառս հանդերձ մտերմու-
թեան սիրով և պատուով. ուր և ինչ ինչ
'ի յանցաւորութեանց անսի առն բազում
անգամ շնորհաշուք երևեցան և գեղեցիկ։
Ուստի և ինքնին Թէպէտ և ոչ դուշնաքեայ
և ոչ սակաւ հասուցեալ քաղաքին զեան,
համայն և այնպէս բազում անգամ առաջ-
նորդ ընտրեցաւ քաղաքին և զօրավար։ Իսկ
Մարկիոս՝ յետ բազմագէմ առաքինու-
թեանցն և քաջարութեանցն հետամուտ
հիւպատոսական բարձին եղեալ որ քաջա-
վայելուչ իսկ էր նմա՝ մերժեցաւ։ Եւ այս-
պէս զԱղկիբիադէս՝ Թէպէտ և չարիս կը-
րեալք 'ի նմանէ՝ ոչ կարացին առեալ քա-
ղաքացիքն։ Իսկ զՄարկիոս՝ Թէպէտ և հիա-
ցեալ զարմացեալ էին ընդ նա՝ ոչ սիրեցին։

Քանզի Մարկիոս ոչինչ 'ի նեղքս եբեր
իւրոց հայրենեացն 'ի զօրավարութեան իւ-
րում, այլ թշնամեացն՝ ընդդէմ հայրե-
նեացն։ Իսկ Աղկիբիադէս միանգամայն և
'ի զինուորութեանն բազում անգամ ՀԵ 'ի
զօրավարութեանն դարձեալ, 'ի վայելս
խնդացողց զԱթենացիսն. և յորժամ մերձն
կայր՝ նկուն առնէր զթշնամին՝ որչափ և
կամէր. իսկ յորժամ 'ի բացեայ կայր՝ ամ-

բաստանութիւնք զօրացեալ էին զառնէն։ Իսկ Մարկիոս՝ յորժամ մերձն կայր՝ 'ի Հռովմայեցւոց իւրոց դատակնիք ընկալաւ. դարձեալ և յորժամ մերձն կայր՝ Վոլուսկեանքն զնա խոզխոզեցին, թէպէտ և անիրաւութեամբ և ամբարշտութեամբ։ Սակայն և ինքն պատճառս իմն նեբելի 'ի նեղքս ընծայեաց. քանզի աշխարհաւ 'ի ձեռն հրեշտակացն հաշտութիւն խաղաղութիւն յանձն չառեալ, ապա մասնաւոր և առանձին 'ի հաւան ածեալ 'ի կանանց անտի, ոչ եթէ զթշնամութիւն մարտին եղոյծ փակեաց, այլ զպատերազմին յակաստանի պահեալ՝ կորոյս զդէպ ժամանակն և խաթրեաց միանգամայն։

Քանզի պարտ և արժան էր նմա՝ հաւանութիւն նախ 'ի Վոլուսկեանցն առեալ յապաւինելոցն իւրոց, և այնպէս չու առնել տեղի տալ՝ եթէ մեծապէս փոյթ ինչ էր նմա արդարութեամբ գնալ ընդ նոսա։ Իսկ եթէ ոչինչ հոգայր նա զՎոլուսկեանց, այլ զցասումն բարկութեանն կամեցեալ ընուլ՝ շարժեաց յուզեաց զմարտ պատերազմին և ապա լռեալ դադարեցոյց, ոչ եթէ 'ի պատճառս մօրն գեղեցիկ էր նմա խնայել 'ի հայրենիսն, այլ ընդ հայրենեացն և 'ի մայրն իւր գլխովին. քանզի և մայրն ինքնին և կիներն մասն էր հայրենեացն՝ զոր պաշարեալ նստէր։ Բայց նա աշխարհի պաղատանաւքն և հրեշտակաց խնդրուածովքն և քահանայից մաղթանաւքն խստապարանոց կացեալ, և ապա յետ այնորիկ

մօրն շնորհս արարեալ՝ տեղի տալ մեկնել, այս ոչ մօրն ինչ էր պատիւ, այլ հայրենեացն անպատուութիւն. որ յանդորը եկ փրկութեան 'ի գութ և 'ի խնդրուածս կնոջ միոյ, իբրու որ արժանի չէր փրկութեան անձին առանձին: Քանզի աննուէր շնորհն և անագորոյն և արդարև անշնորհ, և ոչ դարձեալ երկուց կողմանցն գտաւ փարելի: Քանզի չու արար տեղի ետ ոչ 'ի թշնամեաց անտի հաւանեալ, և ոչ զնիզակակիցս իւր հաւանեցուցեալ: Եւ պատճառք ամենայնին անընդեալ քաղաքավարութիւն կենաց առն և բարձրայօն գոռոզութիւնն և յամառութեանն կիրք, որ և առանձինն արդեօք՝ ատելի է ժողովրդեան. ապա թէ և զպատուասիրութիւնն մերձ իւր ունիցի, բնաւ իսկ այնուհետև վայրենանայ և դժոխըմբերելի յոյժ է:

Քանզի որ այսպիսիքն են՝ սպաս ոչ հարկանեն խուժանին, իբրու անկարօտք ոմանք պատուոյ. իսկ յետ այնորիկ զչարին և զբանին՝ յորժամ ոչ հանդիպին պատուոյ: Եւ արդեօք և Մեռեղղոս ինքնին և Արիստիդէս և Եպամինոնդաս՝ ոչինչ գրգէին զխուժանն և երբէք պաշտօն չհարկանէին նոցա, այլև ստուգապէս խոտէին՝ զոր ինչ խուժանն սիրաբար տայր և կամ բառնայր, ուստի և խեցեկոյտ վճիռ առեալք յանձինս և 'ի բաց մերժեալք, և բազում անգամ դատակնիք ևս ընկալեալք, ոչ 'ի ցասումն բրգեցան ընդ անշնորհակալս քաղաքացիսն, այլ միւսանգամ սիրէին զնո-

սա՝ յորժամ ապաշաւէին, և 'ի հաշտ գայ-
էին՝ յորժամ ողբէալք խնդրէին։ Քանզի
որ սպաս չհարկանէ խուժանին, չէ նմա
արժան պատուհասակոծ առնել զնա. իբ-
րև զի մեծապէս զչարեալն և սրտնեղ-
ման պատուոյ չհանդիպելոյ առ 'ի նոցանէ, բնա-
ւորեցաւ 'ի կարի ըղձակամ լինելոյ առնա։

Արդ՝ Աղկիբիադէս ոչինչ արդեօք ժըխ-
տել բաւական էր, եթէ 'ի պատուի իւ-
րում չինդայր. և ոչ դարձեալ սրտնէր
թաղծնոյր՝ 'ի զանց առնել զնովաւ. ուս-
տի և նկրտէր թեւակոխէր մտերիմ զանձն
ընծայել և հեշտ և բաղձալի՝ ընդ որոց մի-
անգամ քաղաքավարէր։ Իսկ Մարկիոսի
ոչինչ թոյլ սայր գոռոզութիւնն պաշտօն
հարկանել նոցա՝ որ պատուէին զնա կա-
ղոն էին և ևս բարգաւաճ առնել զնա.
այլ պատուասիրութիւն նորա՝ յորժամ
զնովաւ զանց առնէին՝ ցասումն բարկու-
թեան և թաղծութի 'ի նեղքս բերէր նմա։
Արդ այսոքիկ են՝ որովք ստգիւտ արկցէ
ոք արդեօք աւագ առնն, սակայն և այլն
ամենայն նորա՝ գեղեցիկ է և հոյակապ։

Իսկ յողջախոհութեան նորա մասին և
'ի ժուժկալութեան արծաթոյն՝ զնա ընդ
քաջաց և առաքինեաց և ընդ անարատից
հելլենացւոց արժան է 'ի կշիռ ձգել, և
ոչ ընդ Աղկիբիադեայ, որ օն և օն Արա-
մազդ՝ յոյժ լրբութեամբ անկողնատացեալ էր,
և բարւոյն պատկառ կալ՝ բնաւ իսկ վեր-
ջացեալ 8։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Աստանօր զԳայիոս վերնակաւ սպրդեալ 'ի Յն, ըստ անշուշտ պատմ. Հռոմ. պարտ է ուղղագրել, Անիոս։

2. 'Ի Լատ. Virtus, է միանգամայն՝ Առաքինութիւն և Զօրութիւն, Արիութիւն, ևն. ծագեալ 'ի բառէն Vir, որ է՝ Այր. որպէս և 'ի Հայ՝ Այր և Արիութիւն։

3. Կաստոր և Պոլլուքս, երբարք Հեղինեայ երկուորեակք։

4. 'Ի Յն. Պլուտարք. Մարկիոսի՝ վերնակ է յայտնի, փոխանակ ասելոյ Լարկիոսի։

5. Գերեցիկ հրահանգ և յոյժ կարևոր առ Առաջնորդս. յորմէ 'ի հրաժեշտն տալ՝ հարկ է առաջնորդին այնուհետև կամ հրաժարել 'ի բարձէն, կամ անկանել։

6. Հոմերոս ունի զտողս. ՅՈդիսականն. Հագներդ. Դ։

7. Իսկ 'ի զինուորութեան իւրում ոչ նոր և չքնաղ նահատակեցաւ և ինքնին Մարկիոս ախոյեանն Հռոմայեցւոց՝ զանազնման նահատակութիւնն, վանեալ գոգցես միայնակ զԿորիողանոսն քաղաք։ Եւ զի՞պրդ Պլուտարք զԱղկիբիադեայն յուշ ածէ, և զՄարկիոսինն՝ ոչ ևս։

8. Բարւոք է։ Այլ զի՞պրդ Պլուտարք զանգռանելին զԱղկիբիադեայ՝ այսչափ 'ի համառօտն ամփոփեաց. իսկ զՄարկիոսինն՝ սակաւ մի յառաջ այնչափ ճոխաբար ճառեաց 'ի կարգին։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՆ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՏԻՄՈԹԵՈՆԴԵԱՅ

ԵՒ

ԵՄԻԼԻՈՍԻ ՊԱՒԼՈՍԻ

ՏԻՄՈՂԵՈՆԴ

ՍԻՐԱԿՈՒՍԱՑԻՈՑՆ բանք՝ մինչև Տիմողեւոնդեայ առաքեալ 'ի Սիկիլիա, օրինակ զայս էին։ Իբրև Դիոնն 'ի բաց վանեալ հալածեաց զԴիոնեսիոս բռնաւոր, անդէն արագ արագ և ինքն նենգաւ սպանաւ. և երկփեղկեալ հերձան յայնժամ՝ որք միանգամ ընդ Դիոնի զՍիրակուսացիսն յաղատութիւն փոխեցին։ Իսկ քաղաքն ցանգ ծփեալ և փոփոխեալ 'ի բռնաւորէ 'ի բռնաւոր՝ յամբաւաղէտիցն վայրիկ մի ևս յանապատ ամայի կարգեալ էր։ Եւ այլ ևս սահմանք Սիկիլիոյ՝ կէս մի վեր 'ի վայր եղեալ և անքաղաք հիքացեալ 'ի մարտից պատերազմաց, իսկ և շատք 'ի քաղաքացն գրաւեալ կային 'ի խաւնաղանձ բարբարոսաց և յանթոշակ զօրականէն, որ հեշտաբար հակամիտեալն էին փոփոխութիւնս առնել տէրութեանց։

Բայց Դիոնեսիոս յամին տասներորդի 'ի մի վայր խմբեալ զեկս օտարս, և զոր յայնժամ տիրացեալ կայր 'ի վերայ Սիրակուսացւոցն զՆէսէոսն 'ի բաց վանեալ՝ յինքն միւսանգամ տանի զտէրութիւնն, և նստի անդէն բռնաւոր։ Եւ որ նորանշան տարազու 'ի ձեռն փոքրու գնդի 'ի բաց 'ի բռնաւորութենէն անկաւ՝ որ մեծ ևս էր քան զամենայն բռնաւորութիւն, նոյն դարձեալ առաւել նորանշան՝ որ վտարանդին էր և նկուն և հիքացեալ՝ միւսանգամ հասեալ տիրացաւ 'ի վերայ հալածչացն իւրոց։ Արդ որ բնակաւորքն էին 'ի քաղաքին Սիրակուսացւոց՝ ծառայութիւն հարկանէին բռնաւորին, որ 'ի լաւագոյնս ինչ փոխեալ չէր. այլ և համբուն յարկածից անսի իւրոց վայրագացեալ ևս էր 'ի հոգին։ Իսկ լաւորեարն և ականաւորքն 'ի նոսա առ Իկետէս ակնկառոյց եղեալ՝ որ Իշխան կացեալ էր 'ի վերայ Ղէոնտինացւոց, անձնատուրք եղեն նմա և զօրավար ևս կարգեցին զնա պատերազմի. ոչ զի լաւագոյն ոք էր նա քան զայլոսն բռնաւորսն, այլ զի ապաստանարան այլ չունէին նոքա, և զի և Սիրակուսացի էր ազգաւ՝ վասն այնորիկ և վստահ 'ի նա լինէին. և զի բաւական էր նա զօրութեամբ ձնակատ ընդ բռնաւորին յարդարել։

Զայսու ժամանակաւ իբրև նաւատորմիղ մեծ Կարքեդոնացւոց եկեալ հասանէր 'ի Սիկիլիա և կամէր ունել գրաւել զնա, զահի հարեալ Սիկիլիացւոց՝ խոր-

հուրդ 'ի մէջ առին հրեշտակութիւն առաքէլ յԵլլադա, և 'ի Կորնթացւոց անուն խնդրել ձեռն օգնականութեան. ոչ 'ի պատճառս ազգակցութեանն միայն վըստահացեալք 'ի նոսա, և զի և բազում անգամ յառաջին ժամանակսն բարեգործեալ իսկ էին նոցա. այլ և զի առհասարակ զքաղաքն զայն զԿորնթացւոց գիտէին նոքա ցանգ ազատասէր կացեալ և բռնաւորատեաց. և շատ ինչ և մեծամեծ 'ի մարտից պատերազմաց մղեալ էր նոցա ոչ 'ի տիրապետութեանն սակս և յաւելաստացութեանն, այլ 'ի վերայ Հելլենացւոցն ազատութեան: Իսկ Իկետէս՝ որ զօրավարութեամբն զբռնաւորութեան թեկն ածէր և ոչ զՍիրակուսացւոցն ազատութիւն, գաղտաբար առ Կարքեդոնացիս բանագնաց լինէր. իսկ յայտնապէս զՍիրակուսացիսն գովէր, այլ և յիւրոց անուն ևս առեալ ընդ հրեշտակացն առաքէր 'ի Պեղոպոնէսոս. ոչ զի խնդրէր ինչ անդուստ նիզակակից մարտակից, այլ զի եթէ յանկարծ՝ որպէս հաւանեալ էր՝ Կորնթացիք 'ի պատճառս հելլենացի շփոթիցն և անպարապութեանց յեռս յօգնականութենէն կայցեն, հեշտին այնուհետև յուսայր առ Կարքեդոնացիս անդր փոխել շրջել զկրոն. և զնոսա նիզակակիցս և պատերազմակիցս 'ի ձեռն առնուլ ընդդէմ Սիրակուսացւոց, կամ թէ ընդդէմ բռնաւորին: Եւ այս ապա յեռ սակաւու 'ի վեր էլ:

Ապրդ իբրև հրեշտակք Սիրակուսացւոցն

յանդիման եղէն, յայնժամ Կորնթացիք՝ որ բնաւորեցան հանապազ խնամ ածել գաղթական իւրեանց քաղաքացն և առաջել ևս Սիրակուսացւոցն. և զի՝ յայնմ ժամանակի ըստ գեղեցիկ բաղդին պատաղեալ չէին նոքա յիրս ինչ Եկեղեցոյ, այլ՝ի խաղաղութեան կային և պարապորդք, վՀիռ եստուն մտադիւրագոյնս ձեռն տալ օգնականութեան։ Իբրև զօրավարի՝ի խնդիր ելանէին, և իշխանքն գիր ևս հանեալ՝ յառաջ ձգէին՝ի գործն զորս միանգամ թևակոխեցին ականաւոր լինել՝ի քաղաքին, անդանօր մի ոմն՝ի ժողովրդոց յարուցեալ անուանէր զՏիմոթէոնդ Տիմոթիմեան. այր՝ որ այնուհետև ձեռնամուխ ինչ չէր՝ի հասարակաց գործն, և ոչ դարձեալ յոյս ինչ ակնկալութեան այնպիսի կամ խորհուրդ երբէք անկեալ էր՝ի միտս նորա. այլ դից ուրուճն՝ որպէս հաւանեալս եմ՝ աղդելով՝ի միտս ժողովրդականին այնորիկ։ Եւ ապա անդէն վաղվաղակի և բախան ինքնին մեծապէս մարդասիրութեամբ հանդիսանայր յընտրութիւն նորա յայնժամ, և յապայս՝ յայլոց ևս նահատակութեան դրծոց առն անմեկնելի էր շնորհն՝՝՝ զարդ և՝՝՝ շուք առաքինութեան նորա։

Սա այս Տիմոթէոնդ էր՝՝՝ հոյակապ զարմէ՝՝՝ քաղաքի անդ՝ ծնունդ Տիմոթիմոսի և Դեմարիատեայ, հայրենասէր և հեզութեամբ հանդարտութեամբ գերազանցեալ, սակայն բուռն և սաստիկ բռնաւորատեաց էր այրն և չարատեաց։ Իսկ՝՝՝

մարտս պատերազմաց այնպէս իմն գեղեց-
կապէս և յարդարուն բնաւորեցաւ նա,
որպէս զի և հանճար բազում՝ մինչդեռ
տակաւին պատանին էր՝ 'ի դէմս բերէր 'ի
գործս նահատակութեան. ոչինչ պակաս
և արութիւն քաջութեան՝ մինչ ծերն էր:
Էր սորա եղբայր երէց Տիմոփանէս անուն՝
ոչինչ նմանեալ նմա, այլ ապուշ և խո-
թամիտ, և 'ի ցանկութիւն միապետութե-
սադրեալ հրապուրեալ 'ի խորհրդակորոյս
բարեկամացն և յեկամուտ զօրականէն՝ որ
ցանդ զնովաւ կային. սակայն և թուէր նա
խրոխտ և խիզախ 'ի զինուորութեան մըր-
ցանն և դիմադրաւ 'ի վտանգս. որով և
քաղաքացեացն առաջի շնորհս գտեալ էբ-
րու այր պատերազմի և ժիրաժիր՝ կարգե-
ցաւ 'ի զօրավարութիւն: Եւ յայսոսիկ Տի-
մողեւոնդ գործակից ձեռնտու էր նմա.
զվիպական յանցանաց եղբօրն քօղարկեալ
ծածկէր, կամ թէ 'ի դուշնաքէից սակի
տայր տեսանել. իսկ որչափ ինչ բնութիւն
'ի նեղքս բերէր նմա 'ի լաւութեան մասին
և 'ի քաջութեան՝ զայն առեալ զարդարէր
և մեծացուցանէր: Բայց 'ի մարտին Կորն-
թացւոց ընդդէմ Արգուացւոց և Կղէով-
նացւոց, էր կարդեալ Տիմողեւոնդ ընդ
սպառազէն հետևակաց. իսկ Տիմոփանէս
զօրավար կացեալ 'ի վերայ այրուձիոյն՝ 'ի
վտանգ անհնարին անկանէր 'ի ժամուն:
Քանզի վերս և հարուածս առեալ երիվա-
րին՝ անդանօր 'ի մէջ թշնամեացն ընկենոյր
զնա. և նիզակակիցք նորա զահի հարեալ

անդէն ցերեւցան լինէին։ Եւ որ առ տեղեաւն կացին մնացին՝ նուազունք ընդ բազմաց 'ի վէգ էլեալք դժուարամարսք լինէին։ Իբրեւ անդուստ զայն աղէտն յակն արկանէր Տիմողեոնդ, 'ի շտապ տագնապի դիմեալ 'ի վայրն ձեռն տալ օգնականութեան, զասպար իւր առեալ՝ այնպէս վահանափակ ամրածածուկ հովանանայր 'ի վերայ Տիմոփանեայ՝ որ տապաստ անկեալ կայր։ Շատ ինչ յայնժամ նեռից արձակմունս, շատ և վերս և հարուածս ձեռին՝ առեալ 'ի մարմին իւր և 'ի զէնսն, այնպէս հազիւ ուրեմն 'ի բաց զԹշնամին փարատէր և ապրեցուցանէր զեղբայրն։

Ա՛ՍԼ յետ այնորիկ երկուցեալ Կորնթացւոց, զի մի Թերեւս կրեսցեն ինչ մի յայնպիսեաց անտի, ըստ որում երբեմն 'ի նիզակակցացն կրեցին՝ հանեալք 'ի ձեռաց զքաղաքն, վՀիւռ տային՝ գունդ մի ջորից հարիւրոց եկամուտ զօրականին պահել 'ի քաղաքին, և 'ի նոցա վերայ զօրավար իշխան կարգեցին զՏիմոփանէս։ Իսկ նա լաւութեան ինչ և արդարութեան զհետ ջանկրթեալ ամենևին, վաղվաղակի ձեռնամուխ 'ի գործ՝ հնարէր նկուն ընդ ձեռամբ զքաղաքն առնել, և զբաղումս յաւագաց անտի քաղաքին առանց իրաւանց դատաստանի 'ի մահ վարեալ, հրապարակագոյժ անձամբ զանձն առնէր իբրև բռնաւոր։ Ապա սաստիկ իմն զչարեալ Տիմողեւոնդ, և աղէտս անձինն համարեալ զչարութիւն եղբօրն, ձեռն էարկ խօսել ընդ նմա և

խրատէր յորդորէր 'ի բաց թողուլ զանմը-
տութեան զիկձն զայն և զձախողակ, և
թեակոխել ինչ մի ուղղութիւն զյանցա-
նացն 'ի ներքս բերել առաջի քաղաքա-
ցեացն։ Իբրև 'ի նմանէն 'ի բաց մերժեալ
խոտեցաւ, յայնժամ ապա իւր առեալ
Տիմողեւոնդ յընտանեաց անտի զԵպքիւ-
ղոս տագր Տիմոփոնեայ, իսկ 'ի բարեկա-
մացն զայրն գուշակ՝ որում Սատիւրոս ա-
նուն կարդայ Թէոպոմպոս, և Որթագո-
բաս՝ Տիմէոս և Եփորոս, և աւուրս սակաւ
մի հանդարտեալ՝ անդրէն միւսանգամ յա-
ղուցեալ ելանէ առ եղբայրն։ Ապա շուրջ
զնովաւ կացեալ երեքին նոքա աղաչէին
գոնէ այնուհետև զգօնանալ միանգամ և
փոխել 'ի խորհրդոց անտի իւրոց։ Իսկ Տի-
մոփանէս զառաջինն ծաղը արարեալ ծիծա-
ղէր զնոքօք, և ապա 'ի բարկութիւն բըր-
դէր և սրտմտեալ ցասնոյր։ Յայնժամ Տի-
մողեւոնդ վայրիկ մի 'ի բացեայ 'ի նմանէն
գնացեալ, ծածկեաց զգլուխն՝ այնպէս
կայր և արտասուէր. իսկ նոքա մերկա-
ցեալ ձգեալ զսուսերսն՝ անդէն վաղվա-
ղակի դիտապատս յերկիր արկանէին զՏի-
մոփանէս անդանօր։

Իբրև զհամբաւի հարկանէր գործն, կէսք
յաւագացն Կորնթացւոց 'ի գովութի առ-
նուին զչարեատեաց բարն և զմեծանձնու-
թիւնն Տիմողեւոնդեայ. այն՝ որ հեղ և
քաղցր և տնասէր՝ զհայրենիսն քան զըն-
տանութիւնն նախապատիւ կարգեաց. և
զգեղեցիկն և զարդարն՝ քան զօգտակարն.

զնահատակեալն՝ի վերայ հայրենեաց զեղ-
բայրն իւր՝ փրկեալ ապրեցուցանէր. և ըզ-
նոյն ինքն դարձեալ՝ յորժամ խորտան-
կեալ զհայրենիսն ծառայեցուցանել կա-
մէր՝ եհար և սպան։ Բայց և կէսք դար-
ձեալ՝ որ ոչն կարէին կեալ յընկերհաշ-
տութեանն, և առ Ճոխս և առ աւադս
ակնկառոյց լինել բնաւորեալքն էին, ընդ
մահ բռնաւորին խնդացեալ ցուցանէին
զանձինս, այլ խոտեալ թշնամանէին զՏի-
մողեւոնդ, իբրու՝ի գործ ամբարշտութե
և ատելի մեսեալ զձեռն. և այնպէս՝ի տրա-
մութիւն թաղծութեան արկանէին զայրն։
Իսկ իբրև լուր էառ, եթէ և մայրն գլխո-
վին մեծապէս սրտնեալ է, և ձայնս գժո-
խըմբերս և անէծս՝ի վերայ նորա կարդայ,
զահի հարաւ. յարուցեալ ընթանայր առ
նա սփոփել մխիթարել զնա. իսկ մայրն
չհանդուրժեալ և ոչ զերեսս անգամ նո-
րա տեսանել, ելեալ փակէր ընդդէմ նո-
րա զտունն. անդ ապա համբուն՝ի թաղ-
ծութիւն անհնարին ընկղմէր Տիմողեւոնդ,
և յայլոց խելս եղեալ՝ սնդապէս հասատ-
տեաց՝ի միտս իւր՝ անձին մահ ածել ան-
սուաղութեամբ։ Բայց բարեկամք նորա
անտես չարարին զնա. այլ զամենայն խըն-
դրուածս և զամենայն հարկ առաջի ե-
դեալ նորա, ՝ի հաւան ածէին զնա կեալ
ինալ առանձինն հեռի՝ի բազմութենէն։

Յայնժամ բնաւ իսկ թողոյր լքանէր Տի-
մողեւոնդ զկենցաղակից զկեանսն, և յա-
ռաջին ժամանակն և ոչ՝ի քաղաքն եր-

բէք իջանէր. այլ թաղծեալ լի տրտմութեամբ թափառեալ շրջէր 'ի վայրս ամայիս։ Եւ այսպէս դատաստանք մնաց՝ եթէ երբէք հաստատութիւն և կորովութիւն ոչինչ առեալ ընկալցին 'ի բանէն և յիմաստասիրութենէն 'ի գործս մեր, շարժին և դեգևին հեշտեաւ 'ի գովութեանց անտի և 'ի բամբասանացն՝ որ հանդիպին, 'ի բաց եդեալ զսեպհական զիւր խորհուրդսն։ Քանզի ոչ գործոյն միայն պարտ և արժան է լինել գեղեցիկ և արդար, այլ և կարծեացն գլխովին՝ յորմէ շարժիմք 'ի գործել՝ պէտք են անդրդուելի լինել և անայլայլելի. որպէս զի իբրև մտաւորք գործիցեմք և ընտրողք, և ոչ իբրու զորկորեայսն և զպորտաբոյծսն, որ յոյր կերակրոցն անյագ ցանկութեամբն զհետ մոլեալք, անդէն յափրացեալք դարձին՝ իբրև յագենան. սապէս և մեք 'ի վերայ գործոցն՝ զոր 'ի գլուխ տարեալ կատարեցաք՝ սրտաբեկ սրտառուչ թաղծիմք առ տկարութեան մերոյ, յորժամ առաջին երևակութիւնն գեղեցկութեան գործոյն նուաղեալ թարշամեցի։ Քանզի ապաշաւելն՝ նա և զգեղեցկապէս գործեալ զգործն անարդ յարդարէ և յոռի. իսկ նախընտրութիւնն՝ որ 'ի Ճշդրիտ գիտութենէ անտի և 'ի բանէն թելադրեալ ելցէ՝ ոչ փոփոխի, թէպէտ և ձախողակի գնասցեն իրքն։ Վասն որոյ և Փոկիոնն Ադենացի՝ որ հակառակ ամբարձեալ կայր խորհրդոց և գործոցն Լէոսթենեայ, իբրև յետ այնորիկ քաջապէս նա-

հասակեալ կարծեցաւ նա, և այն ինչ տեսանէր Փոկիոնն զԱթենացիսն զոհս զոհել և բարձրապարանոցս դնալ վասն յաղթութեանն, ասէր՝ եթէ սիրելի է արդեօք նմա՝ յայսոսիկ նահատակել Լէոսթենեայ, այլ ինքն դարձեալ զառաջին զայն խորհուրդն տայ նմա։ Իսկ ուժգնակի ևս Արիստիդէս Լոկրացի մի 'ի մտերմացն Պղատոնի, յորժամ 'ի կին խնդրէր 'ի նմանէ Դիոնեսիոս երէց զմի 'ի դստերաց նորա, ետ պատասխանի և ասէ. Հեշտալի արդեօք է ինձ՝ տեսանել զօրիորդն իմ մեռեալ, քան բնակակից բռնաւորի եղեալ։ Եւ իբրև յետ սակաւ ժամանակի սպանանէր զորդիս նորա Դիոնեսիոս, և հարցանէր դարձեալ՝ ոանհար լինելով նմա՝ եթէ արդեօք տակաւին 'ի նոյն խորհուրդ կացցէ՞ վասն տուչութեան դստերն, ետ պատասխանի՝ եթէ թաղծեալ կայ ընդ պատահումն, այլ ընդ բանսն իւր չապաշաւէ։ Այլ այսոքիկ արդեօք կատարեալ առաքինութեան լցեն և վեհագունին արգասիք։

Իսկ Տիմողեւոնդեայ կիրք ընդ եղեալսն՝ եթէ գութ գորովոյ լցէ 'ի վերայ մեռելոյ եղբօրն, և եթէ շուք և պատկառանք վասն մօրն, այնպէս ինն գրաւեալ կալաւ և նը-կուն արար զխորհուրդս զառնն, որպէս զի և զամս քսան՝ դոգցեա ողջոյն ոչ 'ի գործ երևելի և ոչ 'ի քաղաքական՝ ձեռնամուխ նա ոչ եղև։ Արդ իբրև 'ի զօրավար հրապարակէին զնա, և ժողովուրդն ինքնին մրատադիւրագոյնս ընկալեալ ձեռն հաւանու-

թեան տայր, յարուցեալ յայնժամ 'ի մէջ Տիլէկլիդէս՝ զօրութեամբ և վառօք այր աւագամեծար 'ի քաղաքին, քաջալերէր 'ի ներքս մատուցանէր Տիմողեւոնդեայ՝ մեծապէս արութեամբ քաջանալ և նահատակել 'ի գործն. "Քանզի եթէ գերեցկապէս՝ ասէ՝ մրցեսցիս, համարեսցուք մեք եթէ զբռնաւոր սպաներ. ապա եթէ վատասցիս՝ զերբայր,, :

Բայց իբրև կազմէր պատրաստէր Տիմողեւոնդ 'ի նաւել և խմբէր ժողովէր զզօրականն, նամականի հասանէր առ Կորնթացիս յԱկեստոսէ, յորմէ և ազգումն լինէր նոցա փոփոխութեան առն և մատնութեանն: Քանզի անդէն վաղվաղակի իբրև գնացեալ մեկնեցան հրեշտակքն, նա յայտնի միաբանեալ ընդ Կարքեդոնացիսն, բան հաստատեաց ընդ նոսա՝ զի զԴիոնեսիոս 'ի բաց վանեալ 'ի Սիրակուսայ՝ ինքն կացցէ բռնաւոր: Եւ զանգիտեալ՝ թերևս կանուխ հասեալ անդր 'ի Կորնթոսէ զօր և զօրավար՝ քար ընդ ոտն եղիցին գործոց նորա, առեալ յղէր նամականի առ Կորնթացիս, ասել՝ եթէ չեն պէտք այնուհետև նոցա աշխատութեան և ծախուց՝ խաղալ նաւել 'ի Սիկիլիա և վտանգել զանձինս: Նա զի՝ և Կարքեդոնացիք ինքնին պահ արկեալ նաւուց բազմութեամբ՝ արգելցեն զնաւատորմիղ նոցա. և զի՝ ինքն 'ի գանդաղել Կորնթացւոցն՝ ստիպեցաւ ըզ-Կարքեդոնացիսն 'ի նիզակակիցս իւր կարդալ ընդդէմ բռնաւորին: Իբրև զգիր զայս

ընթերցան նոքա , յայնժամ՝ եթէ և ոք յառաջն հեղգացեալ դանդաղէր 'ի Կորն-թացւոցն 'ի զինուորութիւն անդր , առհասարակ ամենեքեան բարկութեամբ սրտմտեալք 'ի վերայ Իկեոսոսի , որպէս զի և մտադիւր ևս յօժարութեամբ եսուն միանգամայն զսկեսան Տիմողեւոնդեայ , և անդէն հանդերձեցին կազմեցին 'ի նաւարկել: Իբրև կազմ և պատրաստ կային նաւքն , և զօրականին՝ որ ինչ պիտոյն էր՝ բաշխեցաւ ոուաւ , անդուստ և քրմանոյշք Օրիորդին կարծէին տեսանել յերազի , իբրու այն թէ գիւցուհեացն 1 հանդերձել ուղղոյ լինել. և ասել՝ եթէ 'ի միասին ընդ Տիմողեւոնդեայ հասանէ նոցա նաւագնաց լինել 'ի Սիկիլիա : Վասն որոյ և Կորնթացիք եռաթի մի նուիրական պատրաստեցին գիւցուհեացն , և 'ի նոցանէն անուն կարդացին նմա:

Բայց ինքնին Տիմողեւոնդ յարեաւ շոքաւ 'ի Դեղփիս . անդ զոհս զոհէր աստուծոյն , և իջեալ ապա 'ի գուշակարան անդր նորա , նշան այսպիսի երևէր 'ի վերայ առն: Փանդի 'ի ձենից անտի կախեալոց վարսակալ մի զերծեալ 'ի վայր՝ ասղնեգործ նկարակերտ պսակաւք և յաղթութեամբք՝ գայր անկանէր 'ի վերայ գլխոյն Տիմողեւոնդեայ. իբրու այն թէ՝ 'ի նմին իսկ աստուծոյ պսակեալ այրն՝ այնպէս 'ի գործ նահատակութեանն առաքեսցի : Իսկ էին նաւք կորնթացիք ընդ նմա եօթն թուով , և երկու դարձեալ՝ կերկիւրացիք . իսկ զտասներորդն 'ի նեղբս մատուցին Լեւկադացիք .

զորս և միահամուռ առեալ Տիմողեւոնդ անկանէր յայնժամ յուղի։

Իբրև 'ի գիշերի խաղայր նա 'ի խորս և հողին ընչէր գեղեցիկ, թուէր ինն յանկարծակի ցելուլ երկնից 'ի վերոյ նաւուն իւրոյ, և հեղուլ թափել հուր մեծ և բոցաճաճանչ. յետ այնորիկ և զամբար վերամբարձ երևէր նմանօրինակ այնմ՝ որ 'ի խորհրդականն, և զայն ճանապարհ հատանէր ընթանայր առ նոքօք զամբարն՝ յիտալեոյ 'ի կոյս դէմ եդեալ, ուր և թեւակոխեալ գնային ղեկավարքք։ Յայնժամ դուշակքն և իղձքն քարոզ կարդային՝ եթէ այդոքիկ աւադիկ վկայութիւն 'ի նեբքս բերին երազոց քրմանուշիցն. և զի՝ և դիցուհիք ինքնին գլխովին նիզակակից վառեալք էն 'ի զինուորութիւնն, և նոքին դարձեալ երևեցուցին 'ի բարձանց զճաճանչն զայն։ Քանզի և Սիկիլիա ինքնին նուիրական էր Օրիորդին։ Եւ զի՝ և զյափշտակութիւն նորա կցկցեն անդանօր 'ի Սիկիլիա հանդիպեալ, և զկղզին զայն 'ի հարսանիսն պաշտաւոական տուեալ նմա։

Ահրդ այս նշանք յաստուծոյ անտի մեծապէս յայնժամ քաջալերէր տային բանակին. և այնպէս փութապէս հատեալք զանդունդս՝ եկին հասին յիտալիա։ Սակայն որ 'ի Սիկիլեոյ լուրք հասին առ նոսա, 'ի վարանս բազում արկին զՏիմողեւոնդ և 'ի մեծ սրտաբեկութիւն զզօրականն։ Քանզի Իկետէս 'ի մարտի պարտեալ զԴիոնեսիոս, և զբաղմագոյն մասն զՍիրակուսայ

կալեալ, և զնա 'ի դղեկի անդ և 'ի վայրն անուանեալ 'Նէոռս՝ այն է Կղզի՝ արգելեալ փակեալ, ինքնին շուրջ պատնշափակ արարեալ նասի։ Իսկ Կարքեդոնացւոց պատուէր տուեալ էր փոյթ և պահ ունել, զի մի 'ի Սիկիլիա զօրաթափ լիցի Տիմողեւոնդ. այլ 'ի բաց զնոսա վանեալ՝ ինքեանք ապա յանդգնիրու յիւրեանս բաժանեսցեն զկղզին։ Յայնժամ Կարքեդոնացիք առեալ արձակէին քսան եռաթիս նաւաց 'ի Հռեգիոն. 'ի նոյն նաւս ամբարձան և հրեշտակք Յիկետոսէ առ Տիմողեւոնդ պատգամաբերք բանից՝ որ նմանօրինակք էին գործոյն։ Քանզի վերին երեսաք բանքն գեղեցիկք էին, և նենգինք նորա՝ խորամանկութիւն չար։ Քանզի ապաչէլ հանդերձեալ էին նոքա զՏիմողեւոնդ, զի թէ կամք իցեն նմա՝ ինքն իբրև խորհրդակից Յիկետեայ յարուցեալ գնասցէ առ նա, և բաժանորդ լինիցի ամենայն գեղեցիկ նահատակութեանց նորա. իսկ զնաւսն և զզօրականն առեալ արձակեսցէ 'ի Կորնթոս, իբրև զի վայրիկ մի ևս մարտ պատերազմին 'ի վճար իցէ։ Առ այս՝ և Կարքեդոնացիք կազմեալ պատրաստեալ կան խափանել արգելուլ զանցս Կորնթացւոցդ, և մոտադիր ևս կռուել՝ եթէ երբէք բուռն արասցեն նոցա։

Ապրդ իբրև եկին հասին Կորնթացիք 'ի Հռեգիոն՝ և անդ հանդիպեցան հրեշտակացն, դարձեալ և զփիւնիկեցիսն տեսանէին անդանօր ոչինչ 'ի բացեայ արկեալ

խարիսխս նաւացն, ստրջացան յանձինս իբ-
րև այսինակաստակ եղեալք. և առհասա-
րակ 'ի բարկութիւն բրդէին ընդդէմ Իկե-
տեայ. առ այս՝ և ցաւէր նոցա վասն Սիկի-
լիացւոցն, իբրև որք ակն յայտնի 'ի ձեռս
Իկետեայ անխնամ թողան նոքա մրցա-
նակ և վարձ մասնութեան, իսկ Կարքե-
դոնացւոց՝ բռնաւորութեան: Եւ թուէր
նմն նոցա՝ եթէ չիք հնար յաղթել միան-
գամայն և նաւացն բարբարոսաց՝ որ կրկին
ևս զօրութեամբ 'ի վերայ հասեալ կային,
և բանակին Իկետեայ՝ որում զօրավար ե-
կեալ էին նոքա 'ի Կորնթոսէ: Սակայն
Տիմողեւոնդ բանս 'ի մէջ արկեալ ընդ հրեշ-
տակացն և ընդ իշխանս Կարքեդոնացւոցն,
ասէր հեզաբար՝ անսալ ամենայն հրամա-
նացն, (քանզի և զի՞նչ այլ բաւական ի՞նչ
առնել անսասանելոյն), բայց կամի ըզ-
բանդ զայդ խօսել նոցա յերկաքանչիւր
ևս կողմանց լսելով և ասելով յանդիման
հելլենացի քաղաքին Հռեգիոնի, որ հա-
սարակաց բարեկամն է: Քանզի և այսպէս
ոչ անձին միայն օգուտ մեծապէս ի՞նչ յա-
ներկևանութիւն, այլ և նոցուն դարձեալ՝
հաստատութիւն խոստմանցն առ Սիրա-
կուսացիսն, յորժամ ինքնին և ժողովուրդն
վկայ կացցէ ամենայն դաշանցն կռելոց:

Զայս ինչ առաջի արկանէր նոցա Տիմո-
ղեւոնդ՝ նենդ հնարիմաց արուեստակելով
վասն անցանելոյ 'ի Սիկիլիա: Անդանօր
ընդ նմա արուեստակիցք 'ի նոյն էին և
Հռեգիոնացւոց զօրավարք առհասարակ.

քանզի և ինդրէին իսկ՝ առ Կորնթացիս փոխեալ զկրս Սիկիլիացւոցն, և զահի հարեալ ևս էին 'ի մերձ կալոյ անտի բարբարոսացն։ Վասն որոյ և եկեղեցի խմբեալ և զդրունսն փակեալ՝ զի մի ամենևին 'ի գործ ինչ այլ ընթացցին քաղաքացիք, և եկեալ հասեալ յանդիման բազմութեան ժողովոյն, զբոյցս երկայնս 'ի մէջ առեալ բարբառէին. և այր այր մի զմիոյ զկնի զնոյն իրաց ճառարկեալ խօսէր, ո՛չ յայլ ինչ պատճառս՝ բայց զժամանակն երկայնել ձգեալ, մինչև մեկնեալ գնացցեն եռաթիք Կորնթացւոցն. և Կարքեդոնացիք յատեան ժողովոյն արգելեալք մնացցեն անկասկածք՝ անդ յանդիման իւրեանց տեսանելով զՏիմողեւոնդ. որ այնպէս կարծեցուցանէր նոցա՝ եթէ և ինքն հուպ ընդ հուպ յարուցեալ հրապարակախօս լինիցի։ Իբրև անդ դաղտաբար ոմն մերձեալ ազդ առնէր նմա՝ եթէ ամենայն եռաթիք Կորնթացւոցն ելեալ անկան յուղի, և միայն նորա եռաթին նմա ակնկալեալ սպասէ, յայնժամ Տիմողեւոնդ ոտնիթի կաղ 'ի կաղս սպրդեալ 'ի խռան ամբոխին, միանգամայն և ոչք շուրջ զբեմիւն Հռեգիոնացիք՝ հովանացեալ ծածկէին զնա, նա այնպէս զերծեալ արտաքս էջ 'ի ծովեզրն, և անդէն փութապէս անկանէր յուղի, և նաւեալք հասանէին 'ի Տաւրոմենիոն Սիկիլիոյ. ուր և մեծապէս հիւրընկալեալք յԱնդրոմաքոսէ՝ որ և 'ի վաղնջուց իսկ նոցա հրաւէր կարդացեալ էր, և ինքն տիրացեալ ունէր զքաղաքն։

Սա այս Անդրոմաքոս հայր էր Տիմէոսի պատմաբանի. սա լաւութեամբ գերազանցեալ քան զամենեսին՝ որ յայնժամ տիրացեալք էին 'ի Սիկիլիա, իւրոց քաղաքացեացն առաջնորդէր իրաւամբք և արդարութեամբ, և ընդդէմ բռնաւորացն ցանգ յայտնի հանդիսանայր թշնամի և ոսոխ։ Վասն որոյ և Տիմողեւոնդեայ յայնժամ զիւր քաղաքն 'ի նեղքս մատուցանէր ապաստանարան մարտի. և զքաղաքացիսն ածեալ հաւանեցուցանէր մարտակից նիզակակից Կորնթացւոցն լինել, և 'ի միասին ընդ նոսա յաղաւութիւն յանդորը հանել զՍիկիլիա առհասարակ։

Իսկ ոչք 'ի Հռեգիոն Կարքեդոնացիք, իբրև անտի էլ մեկնեցաւ Տիմողեւոնդ և արձակեցաւ եկեղեցին, սրտմտեալք ցասմամբ ընդ խաբանն՝ զբօսանս յայնժամ ծաղու ընծայէին նոցա Հռեգիոնացիք յասելիւրեանց, եթէ փիւնիկեցիք գոլովնոքա՝ չէ պարտ դժկամակ երբէք ընդ գործս խաբանաց լինել։ Յայնժամ նոքա հրեշտակ մի առեալ արձակեցին եռաթիով 'ի Տաւրոմենիոն, որ շատ ինչ խօսեալ առ Անդրոմաքոս յայրատագոյնս և խժգժագոյնս, ապառնալիս 'ի վերայ կապելով թէ ոչ վաղվաղակի 'ի բաց մերժեալ հանցէ զԿորնթացիսն. ապա 'ի վերջէ զափ ձեռին 'ի վեր կոյս ցուցեալ և անդէն 'ի վայր կոյս շրջեալ, կայր և ապառնայր ըստ օրինակին ըստ այնմիկ անցս ընդ քաղաքն նորա անցուցանել։ Իսկ Անդրոմաքոս ծիծաղեալ՝

այլ պատասխանի չէտ նմա, բայց զձեռն անդէն 'ի վեր կոյս առեալ՝ որպէս նայն ասրար՝ և անդրէն 'ի վայր կոյս, հրաման 'ի վերայ կապէր նորա՝ յառնել նաւել փու-թապէս, եթէ չկամի լինչ ըստ օրինակին ըստ այնմիկ անցս ընդ նաւն իւր տեսանել։

Բայց Իկետէս լուր առեալ զանցիցն Տի-մողեւոնդեայ 'ի Սիկիլիա և զահի հարեալ, ուռաքեաց կոչեաց Էռաթիս նաւաց բա-զումն 'ի Կարքեդոնացւոց։ Եւ յայնժամ ապա դէպ լինէր Սիրակուսացւոցն դլխո-վին սրտաբեկ յուսահատ լինել 'ի փրկու-թենէ իւրեանց, զի նաւահանգստաց իւ-րեանց տիրացան Կարքեդոնացիք, և զքա-ղաքն Իկետէս ինքնին դրաւեալ ունէր. զնոյն և գղեակն ընդ ձեռամբ նուաճեալ էր Դիոնեսիոսի։ Իսկ անդ Տիմողեւոնդ՝ խրրու ընդ դոյզն քաղանցս աւանին Տաւրո-մենացւոց՝ այնպէս հպեալ ծայրիւ ընդ Սի-կիլեայ, յոյս ակնկալութեան նորա նուա-զեալ էր և զօրութիւն նորա հատուռ-տեալ։ Քանզի քան զհազար զօրականս և քան զկարևոր պարէնան ոչինչ աւելի ու-նէր ընդ իւր Տիմողեւոնդ։ Ահա այս՝ և ոչ քաղաքքն վստահացեալք լինչ էին, պա-շարեալք առհասարակ յաղէտս վայրից, և վայրենացեալք ցասմամբ ընդդէմ ամե-նայն զօրավարաց բանակին, և առաւել ևս 'ի պատճառս ուխտադրուժ գնացիցն Կալ-լիպպոսի և Փարակոսի, յորոց մին էր Ա-թենացի, և միւսն՝ Լակեդեմոնացի. քան-զի երկոքանչիւր նոքա հռչակ հարեալ է-

թէ վասն ազատութեանն Սիկիլիոյ հաստեալ գան և լուծանել քակել զմիապետ բռնաւորսն, ապա յետ այնորիկ զվիշտս աղէտից քաղաքացեացն զառ 'ի բռնաւորութենէն՝ նոքա իբրև ոսկի պատուական ցուցին Սիկիլիոյ, և քան զդարձեալսն և զփոխեալսն յազատութիւն՝ երջանիկ ևս էտուն նոքա համարել զխոշտանգեալսն և զվախճանեալսն 'ի ծառայութեան անդ։ Ուստի և ոչինչ լաւագոյն քան զնոսա համարելով և զԿորնթացին, այլ թէ և նա ինքն եկեալ հասեալ կայ նովին հնարիմաց խորհրդովք և համոզակեր բանիւք և քաղցր յուսով ամոքել զնոսա 'ի փոփոխումն նորոյ տեառն, խորշէին խնթային և 'ի բաց տանէին զհրաւիրանս Կորնթացւոցն։

Բայց միայն Անդրանացիք որ 'ի քաղաք փոքրիկ բնակեալ էին՝ նուիրական դիցն Ադրանոսի՝ որում և շուք մեծապէս տային ողջոյն 'ի Սիկիլիա, երկպառակեալ և նոքա ընդ միմեանս, կէսք Յիկետէս հակամիտեալք և 'ի Կարթէդոնացիսն, և կէսք դարձեալ առաքեալ կոչէին զՏիմողեւոնդ։ Եւ դէպ եղև յայնժամ՝ զի յաճապարել անդր երկոցուն նոցա, 'ի միում անդ ժամանակի երկաքանչիւր նոքա մերձ եղէն 'ի քաղաքն։ Այլ Յիկետէս եկեալ հասեալ դայր հանդերձ հինգ հազար զօրականօք. իսկ Տիմողեւոնդեայ 'ի բուն ոչինչ աւելի էր քան զհազար և երկերիւր։ Զսոսա ապա առեալ ընդ իւր 'ի Տաւրոմենիոյ՝ որ հեռի էր յԱդրանոսէ երեքհարիւր և քառասուն

ասպարիսաք, յառաջնում աւուրն ոչ բաղում ինչ հատեալ ուղի՝ խորան հարեալ նստաւ։ Իսկ յերկրորդումն աւուր հապճեպ տուեալ ճանապարհին և հատեալ անցեալ ընդ դժուարս վայրաց, անդէն 'ի տարաժամել աւուրն լուր առնոյր՝ եթէ այն ինչ և Իկեաէս մերձ եկեալ հասեալ կայ ինքնին յաւան անդր, և բանակ հարեալ նստի անդանօր։

Արդ վաշտապետք և դասապետք ածեալք զնահատակսն՝ դադար տային նոցա, զի կերակուր առեալ և հանգուցեալ՝ ապա յօժարամիտք ևս եղիցին 'ի գործ։ Այլ Տիմողեւոնդ յառաջ անցեալ աղաչէր մի՛ առնել զայն բան, այլ 'ի շտապ տագնապի առնուլ խաղացուցանել զզօրականսն յայնժամ 'ի կռիւ ընդ Թշնամւոյն՝ որ այն ինչ հասեալ յուլլոյն Թերևս վարատեալ պատաղեալ 'ի խորանահարուԹի ելցէ և յընԹրեացն պատրաստուԹիւն. զայս ասաց՝ և զասպարն առեալ յառաջէր 'ի յաղԹուԹիւն անեղկեան առաջնորդել նոցա. և առհասարակ քաջալերեալք զհետ ընԹացան նորա՝ ասպարէսս իբրև երեսուն 'ի բացեայ 'ի Թշնամեացն։ Հատեալք զուղին փուԹապէս անկանէին 'ի վերայ. նոքա խռովեալք ամբոխեալք անդէն 'ի փախուստ խուճապեցան. և յայսմանէ նուազունք իբրև երեքհարիւր տապաստ անկանէին, և կրկին նոյնչափ 'ի գերուԹեան վարեցան. սակայն առհասարակ յայնժամ տիրայան բանակին նոցա։

Իսկ Անդրանացեալք յայնժամ բացեալք զդրունս՝ միաբանք 'ի կողմն լինէին Տիմողեւոնդեայ. և կացեալք պատմէին նմա ահիւ մեծաւ և զարմանալեօք, զի 'ի ժամու կռուոյն ինքնին դուրքն նուիրականք տաճարին բացեալք լինէին. և նիզակ աստուծոյն երևէր ճօճել 'ի սայրին, և դէմք երեսացն՝ քիրան սաստիկ հոսել: Եւ էին այս նշանք՝ թուի թէ՝ յայտարարեալք ոչ այնմ միայն յաղթութեանն, այլ և որ յառաջոյ նահատակութեանց առնն, սկիզբն գեղեցիկ զկռիւն զայն ունելով: Քանզի և քաղաքքն այնուհետև հրեշտակութիւնս արձակեալք՝ միամտեցան ընդ Տիմողեւոնդեայ. և Մամերկոս բռնաւորն Կատանեայ դաշնաւոր նիզակակից լինէր ընդ նմա, այր մարտիկ և բազմահարուստ. և որ առաւել ևս՝ ինքնին Դիոնեսիոս որ վայրիկ մի ևս նկուն 'ի պաշարմանն՝ յուսակտուր եղեալ էր, արհամարհեալ զԻկեսիս՝ որ այնպէս անարգաբար 'ի պարտութիւն մատնեցաւ, և հիացեալ ընդ Տիմողեւոնդ, հրեշտակս արձակեալ առ Կորնթացիս՝ անձնատուր լինէր հանդերձ գղեկաւն: Քաջալերեցաւ Տիմողեւոնդ ընդ անկարծ ընդ դէպսն, և առեալ արձակէր առ նա զԵւկղիդէս և զՏեղեմաքոս՝ զարս Կորնթացիս 'ի գղեակ անդր հանդերձ չորեքհարիւր զօրականաւք, ոչ միախուռն զամենեսեան և յայտնի, (զի և չէր հնար՝ գրաւեալ թշնամւոյն զնաւահանգիստն), այլ գաղտագողի և տակաւ: Որոց և հասեալ կալան զդղեակն և զամե-

նայն ինչ զբռնաւորին կահիւք և կարասեօք պատերազմին։ Զի և էին իսկ անդանօր երիվարք ոչ սակաւք, և ազգ ազգ մենքենայից, և բազմակոյտ նետից և պաքաց, և զէնք եօթն բիւր 'ի վաղ ժամանակաց. էին անդ Դիոնիսեայ և զօրականք երկու հազար. զոր և միանգամայն ժողովեալ տայր 'ի ձեռս Տիմողեւոնդեայ. և ինքն առեալ զինչս իւր և ոչ շատ ինչ զբարեկամացն՝ գաղտ յԻկետեայ նաւագնաց լինէր 'ի բանակ անդր Տիմողեւոնդեայ։

Բայց յայնժամ առաջին երևեցաւ Դիոնեսիոս իբրև զմի 'ի սոսկականաց և այր հիքացեալ, և արձակեցաւ միով միայն նաւու և սակաւ ընչիւք 'ի Կորնթոս. այն՝ որ ծնեալ և սնեալն էր 'ի բռնաւորութեանն՝ 'ի մեծ և 'ի հռչակաւորն քան զբնաւն, և կացեալ 'ի նոյն նախ զամս տասն, ապա և երկոտասան 'ի միւսանգամ բռնաւորութեանն յետ պարտելոյն 'ի Դիոնէսէ՝ ցանգ յուզեալ 'ի կռիւս։ Սա այս Դիոնեսիոս և աղէտս կրեաց սաստիկ ևս քան զոր ինքն անցոյց ընդ այլս. քանզի զորդիս իւր յարբունս հասեալ՝ եռեւս սպանեալս, և զկոյս գստերսն՝ լլկեալս, և զքոյրն՝ զլծակից իւր բռնաբարեալ 'ի թշնամեաց և սպականեալ յոյժ անառակութեամբ, ապա և բռնամահ եղեալ ընդ զաւակացն և ամացեալ 'ի ծով։ Այլ այսոքիկ ճշգրիտ արձանագրեցան 'ի վարսն Դիոնէսի։

Իսկ իբրև եկեալ հասանէր Դիոնեսիոս 'ի Կորնթոս, հելլենացի այր չէր՝ որ ոչն

խնդրեաց տեսանել զնա և խօսել ընդ նմա։
Կէսք խնդացեալք ընդ արկածս աղէտիցն
առ ատելութեանն, մտադիւրագոյնս ընթանային ոտնհար լինել առն, զոր բախտն
ինքնին գահավէժ կործանեաց զնա։ Իսկ
կէսք դարձեալ՝ փոփոխեալք առ նոր պատահումն և կարեկից եղեալք, մտախորհք
'ի զնին կային զօրութեամբ գալոնեացն այնոցիկ և աստուածայնոցն պատճառաց՝ յայտնեալ 'ի վերայ տկար և ապիկար մարդկանն։
Քանզի և զայնու ժամանակաւ չէր իսկ տեսեալ նոցա փոփոխումն այնպիսի՝ ոչ 'ի բնութենէն և ոչ յարուեստէն, որպիսի լինէ
յայնժամ առ 'ի բախտէն։ Զի որ սակաւ
մի յառաջ Սիկիլիոյ բռնաւորն էր, նա շուրջ
'ի Կորնթոս դեգերէր ընդ վաճառիկ կանանցն, և նստէր 'ի խանութ իւղեփեցացն,
և քամէր բաժակ խառնեալ 'ի պանդոկապետացն, և գժուէր կագէր 'ի հրապարակի
ընդ կանանց բոզից և պագշոտից, և կրթէր
վարժէր յերգս զվարճակս, և 'ի թատերական նուագան պայքարէր ընդ նոսա վասն
ներդաշնակութեան մեղեդեացն։ Կէսք կարծէին գործել այսպէս Դիոնիսեայ՝ իբրու
յոգի հարեալ և մեղկ անդատին գոլով 'ի
բնութենէն և անժուժկալասէր։ Իսկ կէսք
դարձեալ, զի այնպէս անարդեալ խոտեացի, և մի երկիցեն Կորնթացիք, և մի ինչ
խիթասցին՝ իբրու գժոիսմբեր նմա փոփոխումն կենացն լինելով, եթէ միւսանգամ
նա իշձ լինիցի բուռն զգործոց հարկանելուսոի և ներհակաբար բուսոյ բարուցն բա-

զում խօթամտութիւն 'ի դէմս բերիցէ 'ի քաղաքավարութեան իւրում։

Սակայն և են են նորա բանք, որ քաջ իսկ ցուցանեն՝ զի մեծապէս արութեամբ բերէր նա զաղէտս վշտին։ Քանզի գնացեալ նորա 'ի Լեւկադէ քաղաք գաղթական Կորնթացւոց՝ իբրու զՍիրակուսացւոցն, ասէր՝ եթէ գէպք պատահեն նմա ըստ մանկուոյն՝ որ յանցուցեալքն իցեն. քանզի զորօրինակ նոքա հրաման վարին ընդ եղբարց իւրեանց, իսկ 'ի հարցն պատկառեալք խորշին. սապէս և ինքն պատկառէ 'ի քաղաքամօրէն՝ և մոադիւրադոյնս դեգերի առ նոսա։ Իսկ 'ի Կորնթոս՝ իբրև ոմն յեկաց անտի 'ի սակս խնամոտ կենակցութեան նորա ընդ իմաստասէրս 'ի բրոնաւորութեան իւրում՝ գառնապէս խաղ արարեալ, ապա 'ի վերջէ հարցանէր՝ եթէ զի՞նչ օգուտ 'ի նեղքս եբեր նմա իմաստութիւնն Պղատոնի, եւ պատասխանի Դիոնեսիոս, "Եւ կարծիցի՞մք մեք քեզ թերևս, եթէ ոչինչ շահեցաք մեք 'ի Պղատոնէ՝ 'ի տանել մեզ այսպէս համբերութեամբ փոփոխութեան բախտին"։ Իսկ հարցեալ յԱրիստոքսենեայ երաժշտէ և յայլոց բազմաց, եթէ ուստի՞ արդեօք և զինչ նա դրժկամակեալ գժտեցաւ ընդ Պղատոնի, ասէր, եթէ՝ թէպէտ և զի՛ բազմապատիկ չարեօք բռնաւորութիւնդ ի՛ցէ, սակայն չար ևս քան զամենայն այն է՝ զի յանուանեալ բարեկամդ չի՛ք ոք ազատախօս. և զի 'ի սադրելոյ այնպիսեացն կորոյս նա զմտեր-

մուԹիւնն Պղատոնի։ Բայց և մի ոմն յայն-
ցանէ՝ որ հանճարիմացս խնդրէն լինել,
խաղ արարեալ 'ի մտանելն առ Դիոնե-
սիոս, առեալ ԹօԹափէր զձորձս իւր՝ իբ-
րու մտեալ առ ոք 'ի բռնաւորաց 3. փո-
խարէն և Դիոնեսիոս խաղ արարեալ զայրն՝
հրամայէր նմա զնոյն բան առնել յելա-
նելն արտաքս, զի մի ինչ Թերևս առեալ
տարցէ ընդ իւր 'ի տանէն։ Իսկ և առ Փի-
լիպպոս Մակեդոնացի, որ հեգնաբար 'ի
կոչունս ուրեք բանս արկեալ վասն տաղիցն
և ողբերգուԹեանցն Դիոնեսիոսի երիցու,
վարանէր յանձն եԹէ յորմէ ժամու ար-
դեօք պարապեցաւ նա գրել զայնոսիկ, ոչ-
ինչ տարադէպ եւ պատասխանի այս Դիո-
նեսիոս, եԹէ, "Յորում ժամու՝ դու և
ես և առհասարակ ամենայն կարծեալ եր-
ջանիկքս դեգերէաք 'ի բաժակս"։ Բայց
զԴիոնեսիոս չետես Պղատոն 'ի ԿորնԹոս,
քանզի մեռեալ էր։ Իսկ Դիոգինէս Սինո-
պացի, հանդիպեալ զառաջինն Դիոնիսեայ,
ասէր այսպէս. "Բա՜ԹԷ Դիոնեսիէ, զի-
նդ յանարժանս կեաս դու". իբրև նա
զտեղի կալեալ եւ պատասխանի, եԹէ
"Քաջ իսկ Դիոգինէ, ախտակից մերոցս
լինիս վաստաց"։ Կրկնեաց անդրէն Դիոգի-
նէս. "Եւ զի՞նչ ապա, համարիցի՞ս Թերևս
ախտակից լինել քեզ, և ոչ մանաւանդ զայ-
րանալ. զի դերի դոլով քո աւադիկ և ար-
ժանի ծերանալոյ և մեռանելոյ 'ի բռնա-
ւորուԹեանդ իբրև զհայր քո, կեաս դու
այժմիկ ընդ մեզ 'ի զբօսանս և 'ի գրգանս"։

Որպէս զի և 'ի կշիռ ձգեալ իմ զայսոսիկ ընդ բանիցն Փիղիստոսի՝ զոր ախտակցաբար ասէր ընդ դատերսն Ղէպտինոսի, որք 'ի վայելից բռնաւորութեանն անկեալ՝ կեանս վարէին հիքացեալս, թուի ինձ զձչալ և զկոծ լսել զկնոջ՝ որ շիշս խնդրեսցէ իւր կձեայս, և ծիրանիս, և ոսկիս։

Ա՛յլ այսոքիկ վասն Դիոնիսեայ բանք՝ թուին ինձ ոչինչ անտպաւորք յարձանագրութեանս վարուց, և ոչ յանօգուտս անխուճապ և անզբօս լսելեացն։ Եւ արդեօք նորասքանչ յոյժ ելցէ ձախողակի բախտն Դիոնիսեայ, բայց և ոչինչ պակաս սքանչելի բարեբաստութիւն Տիմողեւոնդեայ։ Քանզի ընդ աւուրս յիսուն հասեալ 'ի Սիւկիլիա, տիրացաւ գղեկին Սիրակուսացւոց, և առեալ արձակեաց զԴիոնեսիոս 'ի Պեղոպոննիսոս։ Վասն որոյ և առաւել ևս քաջալերեալ Կորնթացիք՝ երկուս ևս հազարս հետևակաց առաքեցին առ նա և երիվարս երկերիւր։ Իբրև հասին նոքա 'ի Թուրիոնէ, և քանզի զծոնէ գրաւեալ էր նաւաց բազմաց Կարքեդոնացւոց, ոչինչ յառաջ խաղացեալ անդէն զտեղի առնուին սպասեալք դէպ ժամանակին. և անդ 'ի պարապորդութենէն գործ գեղեցիկ 'ի նեղքս բերին նոքա։ Քանզի զպահպանութիւն քաղաքին յանձն առեալք, մինչդեռ Թուրիոնացիք եղեալ կռուեցան ընդ Բրեսացւոց, ողջ և հաւատարիմ պահեցին նոքա զաւանդն՝ իբրու զիւրեանց հայրենի քաղաք։

Իսկ անդուստ Իկետէս պաշարումն ա-

ծեալ գղեկին Սիրակուսայ. արգելոյր ըզ-
պաշար Կորնթացւոցն՝ որ փակեալ կային
անդանօր. առ այս՝ և զերկուս ոմանս յե-
կաց զօրականին հրապուրեալ նենգաւ ըս-
պանանել զՏիմողեւոնդ, առեալ գաղտա-
բար արձակէր զնոսա յԱդրանոն՝ ուրա-
նօր Տիմողեւոնդեայ չէին անձնապահա-
պետք, և 'ի ժամուն քաջալերեալ յաս-
տուած՝ անդորր և անկասկած բնակէր նա
'ի մէջ Ադրանացւոց։ Իսկ ոչք արձակե-
ցանն, լուր առեալք ըստ դիպաց զոհ կա-
տարել Տիմողեւոնդեայ, չդքան 'ի մեհեան
անդր և դաշոյնք նոցա ընդ ձորձովք. մը-
տեալք 'ի խուանն շուրջ զբագնաւ և տա-
կաւ յառաջեալք կամէին անդէն տալ ըզ-
հարուածն. մինչդեռ այնպէս նոքա մի-
մեանց նշան տային 'ի միասին մսել 'ի գործն,
անդուստ այր ոմն 'ի խուանէն շեշտ զվաղա-
կաւորն առեալ ելուցանէր 'ի գլուխ մեոյ
'ի նոցանէն. և տապաստ արկեալ զնա՝ ոչ
հարկանողն զտեղի առնոյր և ոչ ընկեր ըս-
պանելոյն. նա առեալ զվաղակաւորն իւր՝
փախուցեալ ապաւինէր 'ի վերայ բարձու
վիմի, և սա փութացեալ գիրկս ածեալ
բագնին՝ աներկեանութիւն անձինն խըն-
դրէր 'ի Տիմողեւոնդեայ՝ խոստացեալ պատ-
մել նմա զամենայն. իբրև զինդիրն էառ՝
կայր ապա պատմէր ոճով՝ եթէ զիարդ
ինքն և որ տապասան անկաւ՝ արձակեցան
անդր 'ի սպանանել զնա։ Յայնժամ գնա-
ցեալ ելուցանէին և զապաւինեալն 'ի վէմ
անդր. ձայն բարձեալ աղաղակէր այրն, է-

թէ ոչինչ անիրաւեցաւ, այլ իրաւամբք սպան զայրն զայն փոխանակ մահուն հօրն իւրոյ՝ զոր այն այր յառաջ ժամանակաւ 'ի Ղեւոնտինոն սպանեալ էր. անդ և որ շուրջն կային՝ վկայէին նմա զայն, յափշտակութիւն հարեալք ընդ գեղեցիկ հնարիմացութեն բախտին, եթէ զիարդ այլ ինչ իրօք զայլ ինչ 'ի շարժումն ածէ և 'ի մի ժողովեալ զամենայն զհեռաւորսն և յերիւրեալ ընդ աննմանս 'ի միմեանց և ընդ օտարս, զայնոսիկ առեալ վարէ իբրև վախճանս միմեանց և պատճառս։ Ապա զայրն զայն առեալ Կորնթացիք պսակեցին տասն ճնասիւք, զի զիրաւացին զիւր զկիրսն գործի 'ի ձեռս եւ Քաջին՝ որ պահապանն էր Տիմողեւոնդեայ. և զոր անդուստ 'ի վերուստ զսրտմտութիւն բարկութեան իւրոյ՝ ոչ թափեաց յառաջագոյն, այլ առանձին պատճառաւն պահեաց ցայնվայր ըստ գեղեցիկ բախտին և 'ի փրկութիւն Տիմողեւոնդեայ։ Այլ բարեբաստիկ ելք ժամուն իրախոյս մեծապէս 'ի ներքս տայր և վասն հանդերձելոցն. և այնուհետև իբրև զայր սուրբ տեսեալ նոցա զՏիմողեւոնդ, և հանդերձ աստուծով եկեալ հասեալ 'ի վրէժխնդրութիւն Սիկիլիոյ, շուք և պահպանութիւն հարկանէին նմա։

Այլ Իկեսեայ 'ի դերեւս եղեալ նեղգին, և տեսեալ եա՝ զի շատք գնացեալ միամտեցան ընդ Տիմողեւոնդեայ, ընդ անձին ոգորէր՝ զի բանակ մեծ այնպիսի կազմ 'ի ձեռին ունելով զԿարքեդոնացւոցն, իբ-

նայօրէն վարէր դաղտագողի 'ի նէրքս արքանել զօգնութիւն նիզակակցացն։ Ապա առաքէր կոչէր զՄադոն զօրավար նոցա հանդերձ ամենայն բանակաւն, հորդան տալ ահագին զօրութեամբ և 'ի նաւահանգիստ անդր մտանել հանդերձ հարիւր և յիսուն նաւուք. ուր և հանեալ 'ի ցամաք վեց բիւր հետեւակաց, բաշխէր նստուցանէր զնոսա 'ի քաղաքին Սիրակուսացւոց. յորմէ և առհասարակ թուէր իմն այնպէս՝ եթէ եկեալ հասեալ ուրեմն ելցէ անշուշտ նախապատուութիւն այն և սպասեալն նուաճութիւն Սիկիլիոյ 'ի բարբարոսաց։ Քանզի ցայնվայր 'ի մարտս բազումս ոչ ժամանեցին Կարքեդոնացիք տիրանալ Սիրակուսայ. իսկ յայնժամ 'ի մատնութենէն Իկետայ հորդան 'ի նէրքս՝ անդ էր տեսանել զքաղաքն իբրև բանակետղ բարբարոսաց։

Բայց որք 'ի նէրքս 'ի դղեկին փակեալ Կորնթացիք՝ 'ի մեծ վտանգ պաշարեալ կային նուազեալք յամբարոց. քանզի և նաւահանգստացն պահ թշնամիքն ունէին, և ինքեանք ցանդ 'ի կռուի էին շուրջ զպարսպօքն, բաշխեալք 'ի կողմն կողմն զդէմ ունել հնարիմացութեանց և ազգի ազգի յարձակմանց Կարքեդոնացւոցն։ Այլ Տիմողեւոնդ 'ի զօրավիգն առաքէր նոցա ցորեան 'ի Կատանեայ 'ի նաւակս ձկնորսաց և յակատս մանունս՝, որ 'ի յուզել ծովուն և 'ի մրրկել՝ սպրդեալք ընդ մէջ նաւաց բարբարոսացն՝ անցանէին դաղտագողի. յորժամ 'ի կոհակաց անտի և 'ի ծփանացն

վարեալք 'ի բաց լինէին նաւքն։ Իբրև ի-
րազգած եղեն Մագոն և Իկետէս, խոր-
հեցան հասանել ունել զԿատանիա զամ-
բարանոց պաշարելոցն. ապա այրընտիր զէն-
ընտիր արարեալ խաղացին նաւեցին 'ի Սի-
րակուսայ։ Իսկ անդուստ զօրավար պաշա-
րելոցն 'ի դղեկին՝ Ղեւոնդ անուն Կորն-
թացի՝ դէտակն կալեալ 'ի բարձանց, զի
որք մնացին անդանօր 'ի Թշնամեաց՝ յու-
լացեալք յանհոգս կան, յանկարծակի յե-
ղակարծումն ժամու անկանէր սասակու-
թեամբ 'ի վերայ ցերուցան զօրուն, զկէս
տապաստ արկեալ, և զկէս 'ի փախուստ
դարձուցեալ՝ հասեալ կալաւ զվայրն ան-
ուանեալ Աքրադինէ. և մասն է սա քա-
ղաքին Սիրակուսացւոց ամուր և անառիկ՝
վայր առկայացեալ և կապեալ 'ի բաղում
քաղաքաց։ Անդանօր լինացեալ Կորնթա-
ցւոցն ցորենովք և արծաթովք, ոչ զվայրն
լքեալ, և ոչ անդրէն 'ի դղեակն տեղի տը-
ւեալք, շուրջ ամրութիւն ածէին Աքրա-
դինայ և պատնէշք կապեալ ընդ դղեկին,
պահէին և զնա։ Իսկ անդ Մագոն և Իկե-
տէս մնա հասեալք 'ի Կատանա, գուժկան
ճիաւոր 'ի Սիրակուսայ բօթ բերէր նոցա
զառմանն Աքրադինայ։ Յորմէ առհասա-
րակ խռովեալք 'ի շտապ տագնապի դառ-
նային նոքա յետս, ոչ զքաղաքն առեալ՝
այլ ալագաւ խաղացին գնացին, և ոչ զայն
պահեալք՝ զոր 'ի բուին ունէին։

Աբդ՝ որ լինէ ցայս վայր դէպք, խմաս-
ութիւն և քաջութիւն 'ի պայքար մոցեն

ընդ բախտին. իսկ որ յետ այսորիկ՝ դեղեցիկ բախտին միայն համարեսցին արդեաք։ Քանզի որ անդ 'ի Թուրիոն Կորնեթացիք՝ զանգիտեալ 'ի նաւաց Կարքեդոնացւոցն՝ յորոց և արդելեալ մնացին 'ի զօրավարու Թեանն Անոնի, միանգամայն և 'ի վայրենացեալ հողմակոծ ծովէն աւուրս բազումս, ապա ուրեմն յարուցեալք խաղային ընդ ցամաք ընդ Բրետտացիս. և անցեալ է ուրեք խաղաղութեամբ, և է ուրեք բռնութեամբ, եկեալ հասանէին 'ի Հռեգիոն, մինչդեռ տակաւին մրրկեալ յուզէր ծովն։ Իսկ զօրավարն նաւաց Կարքեդոնացւոց Անոն ոչ ևս սպասեալ Կորնթացւոցն, և կարծեալ եթէ անդ տակաւին դեգերեալ կան, հնարս հնարեցաւ՝ որպէս կարծէր՝ խորամանկ դաւանաց։ Եւ հրաման նաւազին պակաքաքաքիլ, և զարդարեալ զեռաթիսն հելլենացի և փիւնիկեցի ասպարաքաքաք

ւակսն տարուբերս և 'ի ձկնորսացն՝ որ առ ձեռն կայր, Էլին 'ի Սիկիլիա աներկեան և մեծապէս խաղաղութեամբ՝ զի և զերա-սանակացն առեալ ձգէին 'ի նաւակացն զերիվարսն՝ որ 'ի լիւղ անկեալ էին։ Անդ ժողովէր զնոսա Տիմողեւոնդ, և անդէն տիրանայր 'ի վերայ Մեսսինայ. ապա կարգեալ չու առնէր դէպ ուղիղ 'ի Սիրակուսա, քան 'ի զօրութիւն չորեքհազար զօրականին իւրոյ՝ առաւել 'ի գեղեցիկ իւր բախտն ապաստան և 'ի յաջողութիւն նահատակութեանցն։

Իսկ Մագոն՝ որ զահի հարեալ խակ էր, լուր առեալ զգալստեան Տիմողեւոնդեայ, առաւել ևս վարանեցաւ։ Արդ՝ 'ի ճահիճսն՝ որ շուրջ կան զքաղաքաւ և ջուր շատ քաղցր առնուն նոքա յաղբերաց անտի և 'ի լճաց և 'ի գետոց որ ի ջանեն 'ի ծովն, բազմութիւն կայսուայ անգանօր օձաձկանց, և որոց կամիցին՝ որս առատ 'ի նեղբս մատուցանէ նոցա հանապազ։ Ապա 'ի վայր անդր զօրականք վարձկանք յերկուց ևս կողմանց՝ 'ի պարապութեան իւրեանց և յազատութեան գայլն միաբան որսալ 'ի ձկանց անսի. և առհասարակ նոքա հելլենացիք 'ի բնէ և առանձինն ոչինչ թշնամացեալք, թէպէտև 'ի ժամ կռուոյն սատիկ մարտուցեալք ընդ իրեարս, այլ 'ի պարապութեանն յաճախ կենակից խօսակիցք էին միմեանց։ Եւ յայնժամ ևս պարապեալ նոքա յորսն հասարակաց՝ խօսակիցք զարմացեալք ընդ գե-

ղեցիկ անդորրութիւն ծովուն և ընդ վայելչութիւն վայրացն, անդ ոմն 'ի կորնթացի զօրականէն ասէր այսպէս. "Եւ սակայն զքաղաք զայս մեծ և հոյակապ և գեղեցկագիր գուք ինքնին Հելլենացիք գոլով ինդրէք 'ի խուժադուժ կարգել, բնակակից մեզ ածելով այսր զվայրենի և զմարդախոշոշ Կարքեդոնացիսդ. ուր զի ցանկալի ևս էր՝ եթէ և Սիկիլիայք այլք բազումք էին 'ի միջի ընդդէմ դոցա կացեալք ապաւէնք Եղլադայ։ Կամ թէ համարիցիք թերևս՝ եթէ դոքա այսր զօրաժողով անդուստ յարձանացն Հերակլեանց և 'ի ծովէն Աղանտեան՝ հասեալ ելցեն կռուել 'ի վերայ տէրութեանն Իկեոտեայ. որ թէ 'ի քաջախորհուրդ զօրավարաց ոք էր՝ ոչ ինչ արդեօք զնախածնողս իւր վանէր հալածէր, և ոչ դարձեալ զթշնամին 'ի հայրենիսն առեալ մուծանէր. այլ շուք զամենայն և զգեղեցիկ աւագութիւնն զբըռամբ ածեալ էր՝ զհետ Կորնթացւոցն գնացեալ և զՏիմողեւոնդեայ"։ Իբրև զայս բանս վարձկան զօրականքն զվայրօք առեալ ածէին 'ի բանակին, յայնժամ Մագոն՝ որ 'ի վաղնջուց իսկ բարուրս ինդրէր դառնալ 'ի տուն, զանդիտեաց եթէ դաւ ուստեք լինիցի. բայց Իկեոտէս աղաչէր զնա կալ մնալ անդէն, ցուցանել քանիօն առաւել հզօր ելցեն նոքա քան զթշնամին. այլ նա քան 'ի բազմութեան զօրացն վեհագոյն՝ մեծապէս խոնարհագոյն յառաքինութեան և 'ի բախտին քան զՏիմո-

ղեւոնդ համարեալ զանձն, անդէն յարու-
ցեալ չու առնէր խաղայր նաւէր 'ի Լի-
բիա. այնպէս անարդաբար հանեալ յայն-
ժամ 'ի ձեռաց զԱնկիլիա՝ ոչինչ ունելով
այրն 'ի գեղեցիկ խորհրդոց։

Ապա յաւուրն երկրորդի յանդիման
երեւէր Տիմողեւոնդ Ճակատեցուցեալ ըղ-
ձրն 'ի կռիւ մարտի։ Բայց լուր առեալ
զփախստեան Կարքեդոնացւոցն և տե-
սեալ զամայութիւն գնաւականացն, սկսան
ունչս առնել անարի վատութեան Մագո-
նին. շուրջ եկեալ զվայրոք ածէին 'ի քա-
ղաքին, եթէ որ գուշակն երբէք լինիցի
տեղւոյ ապաստանի Կարքեդոնացւոց նա-
ւացն՝ մրցանակ տարցի։ Այլ Իկետէս վա-
ռեալ 'ի կռուէլ և 'ի պահել զոր 'ի բռին
ունէր՝ վայրս ամուրս զքաղաքին և զՊը-
ժուարակռուելիս, ապա և Տիմողեւոնդ
բաշխեաց բաժանեաց զզօրն. յինքն առեալ
զառաջին գունդն՝ դիմադրաւ յառաջ նա-
հատակեցաւ առ Անապոս գետոնին ընդ
վայր գԺուարուտ. հրաման տայր երկրորդի
գնդին անկանել 'ի կողմանէ անտի Աքրա-
գինայ, և էր զօրավար Խսիաս Կորնթացի.
իսկ Դինարկոս և Դեմարետոս՝ որ 'ի վեր-
ջէ զզօրականն ածին 'ի Կորնթոսէ, հան-
դերձ երրորդ գնդաւն խաղացին 'ի կողմն
Եպիպողեայ։ Արդ՝ եթէ այնպէս արագ
արագ ըմբռնեալ նուաճեցաւ ողջոյն քա-
ղաքն յանդիման դղեկին՝ 'ի կողմանց կող-
մանց դռոյթս տուեալ և 'ի փախուստ զԻ-
կետեսնան վանեալ, քաջութեան զօրա-

կանին իրաւամբք ոք զայդ ընծայեսցէ և առաքինութեան զօրավարին. այլ զի ոչ ոք անդ տապաստ անկաւ և կամ խոց մնաց 'ի Կորնթացւոց անտի, բախտն Տիմողեւոնդեայ եցէ այս արդեօք, և բախտն ինքնին բա՛ մրցեցաւ ընդ առաքինութեան առն. որպէս զի ոչք իրազեկն երբէք լինիցին բանին, քան ընդ քաջութիւն նորա՝ ընդ բարեբաստիկ նահատակութիւնն հիացեալք սքանչացին. քանզի և ոչ միայն ընդ Սիկիլիա ողջոյն և ընդ Իտալիա փութապէս զհամբաւի հարաւ գործն, այլ և հապճեպ ինքնին և Եղլադա հնչեաց յաւետալուր ձայնէն. զի և Կորնթոս քաղաք՝ որ և ոչ զհասանելոյ զօրականին գիտէր ինչ, միանգամայն լուր էառ և զհասանելոյն և զյաղթութենէն։ Այնպէս ինն բարեբաստիկ գոտան ամենայն նահատակութիւնք նոցա, և ընդ փառաց մրցանացն 'ի վերայ բարդեաց բախտն և զարագութիւն գործոյն։

Ապա տիրացեալ 'ի վերայ դղեկին Տիմողեւոնդ, ոչ զնոյն խորհուրդ կալաւ զԴիոնէի, և ոչ խնայեաց ինչ 'ի գեղեցիկ վայրն և 'ի հոյակապ արարան. զգուշացաւ յամբաստանութենէն զոր ամբաստանեցաւ Դիոնէ և հիքացաւ. քարոզ կարդաց՝ զի որ միանգամ 'ի Սիրակուսացւոց կամեցի՝ անդր հասցէ երկաթ 'ի ձեռին՝ քանդեալ տապալեալ զամուրս բռնաւորացն։ Անդանօր ապա առհասարակ եղեալք 'ի վեր, զքարոզ զայն և զօրն զայն սկիզբն անդրդուեալի ազատութեան համարեալ քաղաքին, հիմն

'ի վեր քանդեցին ոչ զդղեակն միայն, այլ և զապարանսն բռնաւորաց և զշէրիմն նոցա։ Իբրև նոքա այնպէս փութապէս հիմնայատակ արարին, անդ և Տիմողեւոնդ շինէր դատաստանարան 'ի շնորհս քաղաքացեացն՝ զռամկապետութիւնն յարգեալ քան զբռնաւորութիւնն։

Յետ այնորիկ ողջոյն ակրացեալ քաղաքին, և տեսեալ զի չէր մարդաշատ, քանզի բազումք տապաստ անկան 'ի պատերազմունս և 'ի կռիւս, և շատք ևս էին փախստեայք առ 'ի բռնաւորաց, ուստի և հրապարակն Ակրակուսայ կարգեալ յամայի՝ խարձ և խոտ բազում և թաւ բուսեալ աճեցեալ կայր 'ի նմա. և անդ երիվարք գնային յարօտ, և կոյտապանք անդանօր ընկողմանեալք 'ի թաւուտն հանգիստ առնուին. իսկ այլ քաղաքք՝ բաց 'ի սակաւուց՝ լի էին առհասարակ բուլիք եղջերուաց և երամակօք կնճիթց վայրենեաց. և պարապորդ մարդիկն ատէպ ելանէին յորս բարակօք 'ի բուրաստանս և շուրջ ըզ պատուարօքն. և 'ի նոցանէն դարձեալ՝ որ միանգամ յաշտարակս ուրեք և յամուրս բնակեալք էին, ոչ ոք անսայր և 'ի քաղաքն երբէք իջանէր. այնպէս առհասարակ գարշէին և ատեային զհրապարակն և զքաղաքականութիւնն և զատեանն, յորոց 'ի վեր երևեցան բռնաւորք նոցա բազմագոյն մասամբ։ Ապա հաճոյ թուեցաւ Տիմողեւոնդեայ և Ակրակուսացւոցն տալ գրել առ Կորնթացիս, առաքել նոցա գաղ

թական ՅԵԼԼԱԴայ և բնակեցուցանել զՍի-
րակուսա, զի մի յամայի անապատ կար-
գեսցի վայրն։ Այն զի և մեծի պատերազ-
մի սպասեալք մնային 'ի Լիբիոյ, լուր ա-
ռեալք զի զդիակն Մագոնի՝ որ անձին
արար՝ 'ի խաչ բևեռեցին Կարքեդոնացիք՝
սրտմտեալք ընդ այնպիսի զօրավարութիւն
առնն. և զի բանակ մեծ զօրաժողով 'ի
Կարքեդոնացւոց անցանէ միւսանգամ 'ի
Սիկիլիա 'ի մուտս գարնայնոյն։

Իբրև վասն այսոցիկ գիրն 'ի Տիմողեւոն-
դեայ հասանէր 'ի Կորնթոս, դարձեալ և
հրեշտակք Սիրակուսացւոցն անդանօր յո-
ղոք անկեալ աղաչէին զնոսա խնամ ածել
քաղաքին իւրեանց՝ և զայն երկրորդ ան-
գամ հիմնադիր լինել նմա, օգտածարաւք
ինչ յայնմանէն չլինէին Կորնթացիք, և
ոչ անձանց ինչ գրաւականէին զքաղաքն.
այլ առաջին արձակեալ առ ամենայն նուի-
րական մրցանսն խաղուց ՅԵԼԼԱԴա և առ
մեծամեծ աշխարհաժողովն, տային կար-
դալ Քարոզիցն, եթէ Կորնթացիք բնա-
ջինջ զբռնաւորութիւնն արարեալ 'ի Սի-
րակուսա և 'ի բաց զբռնաւորսն վանեալ,
հրաւէր յիւրեանց հայրենիսն կարդան Սի-
րակուսացւոց և ամենայն Սիկիլիացւոց. և
աղաստս համբաւեալ զնոսա՝ իշխանութիւն
զամենայն տան նոցա ինքնուրոյն օրինօքն
վարել, բաշխեալ 'ի նոսա զդեռինն արդա-
րապէս։ Իսկ երկրորդ անգամ՝ արձակե-
ցին պատուիրակս աստ և անդ ՅԱսիա և 'ի
Կղզիս, ուր երբէք օձտեալք և ցանեալք

կային շատք 'ի փախստէից անտի, յորդո-
րեալ հրաւիրեալ առհասարակ 'ի Կորնթոս.
զի անդանօր Կորնթացիք իւրեանց իսկ ծա-
խուք տացեն նոցա միանգամայն և պաշար
և նաւս և զօրավարս ածել զնոսա յանդոր-
րու 'ի Սիրակուսա։

Իբրև այս բանք զհամբաւի հարան, այ-
նուհետև զԿորնթացւոց քաղաքն գեղե-
ցիկս 'ի գովութիւն առեալ՝ սքանչանային
և սիրէին իբրև ազատիչ 'ի բռնաւորաց և
փրկիչ 'ի բարբարոսաց, և քաղաքայնոց ըն-
ծայաբեր հայրենեաց։ Իսկ որ յայնժամ
եկին հասին 'ի Կորնթոս՝ ոչինչ շատք,
սկսան աղաչել զի և 'ի Կորնթոսէ և յԵլ-
լադայ տացեն նոցա գաղթականս։ Ապա
Ժողովեալ թուով ոչինչ պակաս քան ըզ-
բիւր մի, ելեալք նաւէին 'ի Սիրակուսա։
Բայց և յԻտալիոյ և 'ի Սիկիլիոյ դարձեալ՝
բազումք ընթացան առ Տիմողեւոնդ. որ-
պէս զի և առհասարակ բաղմութեան մարդ-
կանն՝ որպէս Ա.թանիս ասէ՝ լինել իբրև
բիւրուց վեցից։ Արդ նա բաշխեաց 'ի նո-
սա զգետինն, այլ զտունս բնակութեան
գնոց տայր. և կուտեաց յայնմանէ տա-
ղանդս հազար. և շնորհէր նախնի բնակ-
չացն Սիրակուսացւոց զտունս նոցա. և
այսպէս ապա մթերս արծաթոյ պատրաս-
տեաց Ժողովրդեան, որ յաղքատութիւն
հասեալ էր՝ անձեռնհաս 'ի մարտս և յայլ
ինչ ևս. որպէս զի և զանդրիս վաճառել
նոցա, և միոյ միոյ յանդրեացն վճիռ 'ի
վերայ ածել և ամբաստանել՝ իբրև յան-

ցաւոր մարդոյ 'ի տալ զհամար։ Եւ ասէն եթէ զայս օրինակ ապա դատապարտեալ Սիրակուսացիք զամենայն անդրիսն, միայն զԳեղոնին պահեցին զվաղնջուց բռնաւորին, շուք և պատիւ հարեալ առն վասն հարուածոցն՝ զոր ած նա յԻմերա 'ի վերայ Կարքեդոնացւոցն։

Իսկ իբրև այսպէս միւսանգամ կանգնեցաւ քաղաքն և ընոյր բնակչաք՝ որ 'ի կողմանց կողմանց ընթացան անդր, խնդրէր Տիմողեւոնդ և զայլոց քաղաքացն զազատութիւն՝ արմատաքի զբռնաւորութիւնն հանելով 'ի Սիկիլիոյ։ Ապա խաղաց գնաց զօրու և բռնադատէր զԻկետէս 'ի բաց կալ 'ի Կարքեդոնացւոցն և պայմանս կռել, քանդել տապալել զդղեակն, և կեանս վարել զսոսկականի 'ի մէջ Լէոնտինացւոց։ Իբրև անձնատուր նմա լինէր Ղեպտինոս բռնաւորն Ապոլոնիոյ և այլոց շինից բազմաց, այն ինչ 'ի վտանգ պաշարեցաւ ձերբակալ լինել, նա 'ի մահուանէն փրկեալ զնա՝ առեալ արձակէր 'ի Կորնթոս. զմտաւ ածէր՝ եթէ գեղեցիկ արդեօք իցէ տալ տեսանել Հելլենացւոց զբռնաւորան Սիկիլիոյ 'ի բուն 'ի մայրաքաղաքին Իւրեանց տարագիր և վշտաւոր կենաք։ Ապա և զվարձկանս 'ի զօրականէն կամեցեալ օգտեցուցանել 'ի կալուածոց Թշնամեացն, և մի' պարապորդս Թողուլ զնոսա, իբրև դարձարար 'ի Սիրակուսա յօրինել զքաղաքն և կարգս և սահմանս գեղեցիկս տալ նմա 'ի միասին ընդ Կեփալեայ և ընդ Դիոնիսեայ՝

որ 'ի Կորնթոսէ հասին կրկին օրէնդիրք, արձակէր զԴեմարկոս և զԴեմարետոս հանդերձ զօրականաւքն 'ի սահմանս կալուածոց Կարքեդոնացւոցն։ Նոքա իբրև քաղաքս բազումս հատին 'ի բարբարոսաց, գտին անդանօր պաշար անբաւ ոչ վասն անձանց միայն, այլ և մթերս արծաթոյ պատրաստեցին վասն մարտի պատերազմի յաւարաց անտի։

Զայսու ժամանակաւ եկին հասին Կարքեդոնացիք 'ի Լիլիբէոն ածեալ բանակ զօրաց եօթանց բիւրուց, քաշտիս նաւաց երկերիւր, և նաւս այլ հազար բեռնաբարձ մենքենայիւց և քառաձիւց և ամբարոց ամբաւիւց և ազգի ազգի հանդերձանաց. ոչ եթէ մարտ դնել կռուել ընդ մասին ինչ առանձին, այլ միանգամայն իսկ զՀելլենացիսն 'ի բաց վանել հանել առհասարակ 'ի Սիկիլիոյ։ Եւ արդեաք շատ իսկ էր զօրութիւն նոցա նուաճել առհասարակ զՍիկիլիացիս, թէպէտև չէր իսկ յայն չափ ապիկարութեան հասեալ սոցա և առ 'ի միմեանց վատթարեալք։ Անդանօր լուր առեալ Կարքեդոնացիք զաւարելոյ կալուածոց իւրեանց, սրտմտութեամբ և բարկութեամբ լի եղեն. արագ արագ դիմեալք խաղային ընդդէմ Կորնթացւոց՝ զօրավար զԱդրուբա ունելով և զԱմիլկա։ Իբրև այս լուր հասանէր 'ի Սիրակուսա, սրտաբեկ լինէին յամբաւ խուժանէ թշնամեացն, զի և 'ի բիւրուց բազմաց քաղաքին՝ երեք հազարք հաղիւ խրախուսեցին 'ի զէն՝ խաղալ

ընդ Տիմողեւոնդեայ։ Իսկ 'ի վարձկան զօ-
րականէն էին չորեքհազարք, և 'ի նոցանէ
դարձեալ հազար մի վատասրտեալք 'ի
չուն՝ դարձան յետս. համարէին եթէ ողջ
զմիտսն առ իւր չունիցի Տիմողեւոնդ, և
այնպէս տարաժամ 'ի հասակէն զառան-
ցեալ ելցէ այրն, որ հինգ հազար հետեա-
կօք և հազար այրուձիով խաղայր 'ի դիմի
հարկանել բիւրուց եօթանց, և զսակաւա-
ձեռն զայն գունդ առեալ խաղացուցա-
նէր ութ աւուրքք 'ի բացեայ 'ի Սիրակու-
սայ, ուր ոչ փախստեայք արդեօք անձնա-
պուր երբէք լինիցին, և ո՛չ տապաստ ան-
կեալքն՝ թաղումն ընկալցին։ Ա՛յլ Տիմո-
ղեւոնդ մեծապէս խնդայր՝ զի յառաջ քան
զկռիւն նոքա ինքնին մեկնեալք որոշեցան.
ձայն տուեալ մնացեալոց զօրականին՝ խրա-
խոյս բառնայր և 'ի Ճեպ տագնապի խա-
ղացուցանէր զնոսա 'ի գետ անդր 'ի Կրի-
մեսոն, ուր լուր էառ զգալստեան թշնա-
մեացն բազմութեան։

Ա՛ՐԴ՝ յելանել նորա 'ի բլուր մի՝ ան-
դուստ հայել դիտել զբանակ թշնամւոյն,
պատահեցան նմա ջորիք որ բարձեալ բե-
րէին լախուր. խռովեցան զօրականք իբրև
'ի չարագուշակ նշանէ. քանզի սովորեցան
Հելլենացիք՝ 'ի լախուր պսակել զգերեզ-
մանս, յորմէ և առակն առ մեզ վասն օրհա-
սական հիւանդի ասել, եթէ՝ Լ՚խրոյ պէպ-
էն նմա։ Իսկ յայնժամ Տիմողեւոնդ զանա-
պաշտութիւնն վանեալ 'ի նոցանէ և զվա-
տասրտութիւն, զտեղի առեալ 'ի չուն՝

խօսէր բանս դիպաւորս ժամանակին, և ա-
սէր՝ եթէ քան զյաղթութիւնն կանուխ
բերաւ նոցա պսակն՝ ինքնին 'ի ձեռս նոցա
եկեալ հասեալ. և ակնարկէր բանիւն 'ի
սովորութիւն անդր Կորնթացւոցն, պսա-
կել զյաղթականն Իսթմեան մրցանաց. և
զայն բոլորս զլսիրոյ առ նուիրականս ու-
նին նոքա և առ հայրենաւանդս. քանզի և
յայնժամ տակաւին Իսթմեանցն, որպէս
և այսօր Նեմեան մրցանացն՝ լսխուր էր
պսակն. զոր ապա ո՛չ 'ի վաղնջուց ինչ յա-
ջորդեաց սարոյն։ Արդ Տիմողեոնդ՝ որպէս
ասացի՝ խօսեալ այնպէս ընդ զօրականին,
առեալ 'ի լսիրոց անսի ինքն առաջին
պսակէր զանձն. զնոյն առնէին և գնդա-
պետքն, զնոյն ապա և զօրականք առհա-
սարակ։ Իսկ անդանօր իղձք և գուշակք
դէտակն կալեալ յարծուխս երկուս դի-
մեալ 'ի հանդիպոյ, մին հարեալ 'ի մա-
գիլն՝ վիշապ մի բարձեալ բերէր, իսկ
միւսն կարկաչ մեծ բարձեալ և ձայն խրա-
խուսի, այնպէս Ճախրէր խոյանայր. և
զայն տեսիլ գուշակքն մատնանիշ առնէին
զօրականին. նոքա առհասարակ դարձան 'ի
մաղթանս առ դիս և կարդային զնոսա։

Էր յայնժամ սկիզբն ամարայնոյն, և 'ի
հոլովել Տարգեղեոն ամսոյն՝ 'ի վերայ հա-
սեալ կայր Արևադարձն. և անդ ապա
մառախուղ մեծ ամբարձեալ 'ի դեռոյն՝
միգապատ ծածկեաց զդաշտագեղեանն և
երևէր և ոչինչ 'ի բանակէ թշնամեացն.
միայն 'ի բլրին գոռիւն խառնաձայն և աղ-

խատրոյզ՝ լսելի լինէր ամբաւ խուժանին բարբարոսաց 'ի Հանդիպոյ։ Ապա 'ի ծայր բլրոյն եկեալ Կորնթացիք, և 'ի վայր զաս-պարսն առեալք նստէին. և անդ արե-գակն շրջան առեալ և զշրդիսն 'ի վեր շքթեցուցեալ ամբառնայր, և մառախլա-պատ օդն ժողովեալ հոծ և խիտ 'ի վերայ բլրոց բարձանց՝ հեռախաղաղ ծածկէր զկատարսն. և վայրք զնջագոյնք ապա յրս-տակեալք՝ երևեցաւ Կրիմեսոն, երևեցան և Թշնամիք՝ զի անցանէին յայսկոյս։ Յա-ռաջոյ գիմադրաւ գային քառաձիք ահա-ւորք վառեալք 'ի մարտ. զկնի խաղային սպառազէնք զօրականին բիւր մի՝ սպիտա-կասպարք. Թուէր իմն՝ բուն իսկ Կարքե-դոնացիքն իցեն 'ի փայլուն վառելոց զի-նուցն, որ այնպէս միագունդ կարգ ա-ռեալ տակաւ յառաջ խաղային. զհետ սոցա ապա գայր անցանէր ամբոխ մեծ անկարգ հրոսակին։ Հապա դէտ ակն 'ի վեր ամբառնայր Տիմողեւոնդ, տեսանէր զի գետն ինքնին՝ ընդ որ անցանէինն՝ ձեռն տայր նմա մարտ դնել կռուել ընդ գնդի գնդի առանձին. տայր տեսանել և իւրում զօրականին զհատուած փաղանգին Թշնա-մեաց, կիսոցն անցեալ ընդ հունն, և կի-սոցն պատրաստեալ յանցանել. ապա հրաման տայր Դեմարետեայ հանդերձ այրուձիովն անկանել 'ի վերայ նոցա, և խռով հարկանել վեր 'ի վայր, մինչև նոքա կարգեալ ճակատեալ իցեն։

Իսկ ինքն ինքեալ 'ի դիւր անդր, կարգէր

'ի Թեան 'ի Սիկիլիացւոց անտի՝ և ոչ շատ
զոք յեկաց զօրականին. բայց 'ի միջոցին
առեալ յինքն զՍիրակուսացիսն և զքաջա-
մարտիկսն 'ի վարձկանաց, այնպէս վայր մի
զոտոլի կալեալ՝ դէտ ակն ունէր յայրու-
ձին. իբրև տեսանէր զի 'ի քառաձիոցն դի-
մագրաւից կառեալ այրուձին, և զի մի
խառնակեալ շփոթեսցի՝ այնպէս տարա-
բերեալ ճախր առնոյր 'ի տեղւոջն, կա-
մէր գրգռել զխաղին. ապա զասպարն 'ի
վեր առեալ Տիմողեւոնդ՝ ձայն տայր հե-
տևակաց զօրուն խաղալ զկնի. իսկ բար-
բառ ձայնին նորա 'ի ժամուն մեծագոչ
հնչեաց յոյժ առաւելեալ քան զբնաւո-
րականն. կամ զի յիւրոց անտի աշխու-
ժիցն և 'ի գեղեցիկ մոլուութենէն բերեալ՝
այնպէս բարձրացոյց զձայնն. կամ թէ 'ի
քաջաց ոմն՝ (որպէս բազմաց կարծիք է-
ղեն յայնժամ) կիւց նմին ձայնակիւց գո-
չեաց: Իբրև անդ 'ի գոչիւն նորա կրկնե-
ցին և զօրականք խիզախեալ արագ արագ,
նա հրաման տայր այրուձիոյն թողուլ ըզ-
վայր ճակատուն քառաձիոցն, և 'ի կողմա-
նէ անկանել 'ի վերայ. և ինքն զհետևա-
կազօրն նահատակ՝ համբուն վահանափակ
ասպարածածուկ արարեալ, զփողն հնչե-
ցուցանէր և այնպէս սաստկապէս զօրու-
թեամբ յարձակէր 'ի վերայ Կարքեդո-
նացւոցն: Ղոքա 'ի դիմի հարեալ քաջու-
թեամբ առաջին յարձակմանն, և ամրա-
ծածուկք ողջ պատենազէնք 'ի զրահս
երկաթիս և 'ի գլխանոցս պղնձիս, ար-

կեալք 'ի հանդիպոյ ասպարս ահագինս՝ այնպէս 'ի բաց զԹափին տանէին զտիգաց և զգեղարդանց։ Այլ իբրև սուսերօք չափ նահատակեցան մրցանքն, և Ճարտարու-Թեան արուեստին պէտք էին 'ի տեղւոջն՝ ոչինչ պակաս քան զկորովուԹիւն բազկաց, դէպ եղև զի անդէն արագ արագ ձայնք ահեղք հնչէցին որոտմանց 'ի գա-գաԹանց լերանց, և փայլատակունք հա-տանէին հրատիպք։ Անգանօր և մառա-խուղն պատեալ 'ի բլուրս և 'ի կատարս բարձանց՝ եկեալ գումարեալ 'ի վերոյ դաշ-տի պատերազմին, տեղատարափք իջին անձ-րևաց մրրկաւ և կարկտիւ. յետուստ և 'ի ԹիկանՑ կուսէ Թափէր Հելլենացւոցն, և 'ի հանդիպոյ բաղխեալ հարկանէր զբար-բարոսացն զերեսս, որպէս զի և 'ի սաստիկ մրրկէ բքոյն և յամպրոպացն անդուլ հա-տելոյ բոցոյն՝ բլշակնեալ շլացան խուժա-դուժքն միանգամայն։

Անդ էր տեսանել զաղէտս ամբաւ տա-րակուսանաց բարբարոսացն և առաւել զվատաց զանփորձիցն. բայց որ 'ի շտապ մեծի տագնապի առեալ պաշարեաց զնո-սա, բոմբիւնք որոտմանցն և կոփիւնք վա-հանացն և շկահիւնք զինուցն՝ հարեալ բաղխեալ 'ի սաստիկ տարափոյն և 'ի կարկ-տէն, զի և զզօրավարացն անգամ զձայնսն ոչինչ կարէին լսել նոքա։ Առ այս և մօր վայրացն՝ անհնարին աղէտք այն էին Կար-քեդոնացւոցն. զի ոչ քաջագոտի էր զին-ուորութիւնն նոցա, այլ որպէս ասացի՝

սպառազէնք վառեալ, և տառատոկք նո-
ցա ջրաթաթաւք ծանրացեալք, յոյժ դը-
ժուարին մղէին զմարտն. և հեշտին տա-
պալ յերկիր 'ի Հելլենացւոցն դլեալ, ոչ
ինչ այնպէս բաւական էին յառնել առ 'ի
տղմոյն հանդերձ զինուքն: Քանզի և Կրի-
մեսոն յամբաւ խուժանին անցանելոյ հե-
զեալ, շատ ինչ և յառաջն յանձրևաց ան-
ոլ յորդեալ, շուրջանակի զհովիտն՝ յո-
ղում բազում էին խոխոմք և խրամք՝ ո-
ղողեալ 'ի հոսանացն վարելոյ բռնութիւն,
թաւալգլոր զկարքեդոնացիսն առնէին և
սաստիկ խուճապ տագնապի 'ի վերայ նո-
ցա հասուցանէին: Իբրև տակաւին զայրա-
ցեալ կայր մրրիկն, և Հելլենացիք զկարգն
առաջին դիտապատ արարին զչորեքհա-
րիւր նահատակացն, ապա և ամբաւ խու-
ժան նոցա 'ի փախուստ խուճապէր. բայց
անդէն 'ի դաշտին բազումք ըմբռնեալք 'ի
սուր մաշեցան, և բազումք ևս գետա-
վէժ տարեալք 'ի յորձանացն՝ 'ի պատա-
հել և յընդհարկանել այր ընդ ընկերի.
իսկ բազմագոյնք 'ի նոցանէ աճապարեալք
հասանել ունել զբլուրսն՝ անդանօր 'ի թե-
թևազէն զօրականէն սատակէին:

Եւ ասեն՝ եթէ 'ի բիւրուց անտի ան-
կելոց 'ի մարտին, երեքհազարեանն բնա-
կասնունդք էին Կարքեդոնի, կոծ մեծ և
աշխար վասն քաղաքին. քանզի և չէր իսկ
նոցա այլ իբրու զորեարն զայն յաշնուա-
կանաց և յընչաւէտից և 'ի փառաւորաց.
և երբէք յառաջ ժամանակաւ՝ ոչ լուան

նոքա եթէ 'ի միում մարտի որեար այն-
չափ 'ի մահ վարեցաւ 'ի քաղաքէն յայն-
մանէ. այլ բազում անգամ Կարքեդոնա-
ցիք՝ Լիբէացւովք և Իբերիացւովք և Նու-
միդացւովք վարեալք 'ի մարտս՝ այնպէս
յօտարացն տուգանս նկունք լինէին: Եւ
ինքնին Հելլենացիք յաւարաց անտի հա-
մօրէն 'ի վերայ կացին աւագութեան որե-
րոյն. քանզի աւարառուացն փոյթ գուշ-
նաքեայ էր յայնժամ վասն պղնձոյ և եր-
կաթոյ. այնպէս ինն ամբաւութեամբ էր
անդ արծաթն, ամբաւ և ոսկին. քանզի
անցեալք ըստ գեան տիրացան նոքա բուն
բանակին և ամենայն աղխին: Իսկ 'ի գե-
ղեցոց անտի թէպէտ և բազումք գալատա-
գողն փախեան, հինգ հազարաւ չափ ե-
կին 'ի մէջ անդր. կալան և քառաձիս եր-
կերիւր: Եւ 'ի վերանին Տիմողեւոնդեայ նոր
և չքնաղ էր տեսիլն, լի և զեղուն յանկա-
ծէ աղդի աղդի և գունակ գունակ կահուց
կարասեաց, յորս և հազար պատեանք
զրահից՝ գործ Ճարտարաց և գեղով ան-
նմանք, և բիւրք յասպարաց: Եւ իբրև այն-
պէս շատ էր աւարն, և սակաւք՝ աւարա-
ռուք, և կապուտ կողոպուտ ամբաւ, հա-
զիւ ուրեմն յաւուրն երրորդի յետ մար-
տին նշան յաղթութեան կանգնեցին:

Յայնժամ Տիմողեւոնդ 'ի միասին ընդ
աւետաբեր համբաւոյ յաղթութեանն՝ ա-
ռեալ առաքէր 'ի Կորնթոս և զգեղե-
ցիկսն 'ի զինուց զինուց աւարին. և այն-
պէս կամէր նա ըղձակերտս և համբաւա-

տենչ զՀայրենի քաղաքն յարդարել առ ամենայն մարդիկ. զի 'ի մէջ ամենայն քաղաքացն Եղլադայ անգանօր միայն յակն արկցեն նոքա մեհեանս հոյակապս՝ ոչ 'ի հելլենացի աւարացն զարդարեալ, և ոչ 'ի նզովեցն ձօնիցն կախեալոց՝ յուշարար դժոխրմբերն մահուանց ընտանեացն և համազարմիցն, այլ 'ի բարբարոսացն անկածէ. դեղեցիկ արձանագրութեամբքն 'ի դէմս բերելով միանգամայն ընդ արիութեան յաղթականացն և զարդարութիւնն, եթէ՝ զիարդ Կորնթացիք և նոցուն զօրավար Տիմողեւոնդ 'ի ձեռաց խժդժիցն զՀելլենացիսն փրկեալ բնակաւորս Սիկիլիոյ, զայն անկած առ 'ի ձօն կախեցին անգանօր 'ի շնորհս աստուածոց։

Այլ յետ այնորիկ թողեալ Տիմողեւոնդ յերկրի անդ թշնամւոյն զվարձկանսն զօրականին՝ յաւարի առնուլ քանդել աւերել զամենայն զԿարքեդոնացւոց, ինքն չուարար դարձաւ 'ի Սիրակուսա. և անդ վերտարանդի հանէր 'ի Սիկիլիոյ զՀաղարսն 'ի վարձկանացն՝ որ յառաջ քան զկռիւն զատեալք որոշեցան, և մինչև մոռեալ աւրուն՝ 'ի բաց մերժէր 'ի Սիրակուսայ։ Իսկ նոքա անցեալք յԻտալիա՝ սատակին դրժեալք 'ի Բրետացւոց, զնոյն պատուհաս զմատնութեանն իւրեանց առեալք յայնժամ 'ի Քաղէն։

Բայց յայնժամ Մամերկոս բռնաւոր Կատանիայ, և Իկետէս խանտացեալք ընդ նահատակութեան Տիմողեւոնդեայ, և զան-

գիտեալք ևս յառնէն, իբրու որ մտերիմ և դաշնաւոր երբէք չեկաց նա բռնաւորացն, յուխտ նիզակակցութեան մտին ընդ Կարքեդոնացւոցն. առաքեցին Թախանձ արկանէին արձակել զօրականս և զօրավար, եթէ չկամին նոքա խսպառ անբաժ մնալ 'ի Սիկիլիոյ։ Գայր ապա հասանէր առ նոսա Գեսկոն հանդերձ եօթանասուն նաւուք, կալաւ 'ի վարձու և 'ի Հելլենացւոց անտի, Թէպէտև յառաջ ժամանակաւ երբէք չարարին այնպէս Կարքեդոնացիք. այլ յայնժամ հիացեալ իմն էին ընդ նոսա՝ իբրու որ անվանելիք իցեն և քաջամարտիկ քան զամենայն մարդ։ Ապա 'ի մի վայր խմբեալ առհասարակ 'ի Մեսսենիա, նախ զչորեքհարիւր զօրականն զեկս կոտորեցին, զոր անդր 'ի զօրավիգն արձակեալ էր ինքնին Տիմողեւոնդ. յետ այնորիկ դարանամուտ եղեալ 'ի սահմանն Կարքեդոնացւոց մօտ վայրացն՝ զոր կարդան Երոս, ընդ սուր ըզվարձականն հանէին՝ որ էին ընդ Եւթիմոսի Լեվկադեան. յորմէ ապա մեծ ևս ըզհամբաւի հարկանէր բաղդն Տիմողեւոնդեայ։ Քանզի սոքա 'ի նոցանէ էին՝ որ 'ի միասին ընդ Փիլոդեմեայ Փոկէացւոյ և ընդ Ոնոմարքեայ հասեալ կալան զԴեղփիս և բաժանորդք կացին սեղանակապտուԹեանն. և ասեալք նոքա այնուհետև առ ամենեսեան և գարշեալք իբրև նզովեալս ոմանս, աստ անդ Թափառականք 'ի Պեղոպոննիսոս, եկեալ խմբեցան յայնժամ ընդ Տիմողեւոնդեայ, քանզի և այլ

զօրք էին 'ի միջի. և անցեալք 'ի Սիկիլիա, և յամենայն 'ի մարտս ընդ նմա տարան զյաղթութիւնն. բայց ապա 'ի մեծամեծ մարտից դադարել՝ արձակեցան նոքա 'ի պահարկութիւն տեղեաց տեղեաց, և անդ բնաջինջ լինէին ոչ միահամուռ, այլ տա-կաւ. ցայն վայր դանդաղեալ պատուհա-տին նոցա 'ի շնորհս բաղդին Տիմողեոն-դեայ, զի մի թերևս 'ի գանէ պարտաւո-րացն և անպարտականքն ինքեանցին ինչ։ Եւ աքանչացաւ մարդասիրութեն աստուա-ծոյն առ Տիմողեոնդ ոչ 'ի յաջողութեան և եթ, այլ և 'ի ձախողական։ Բայց ժողո-վուրդ Սիրակուսացւոց զչարեալ էր ընդ ոանհար արհամարհութիւնն 'ի բռնաւո-րացն. քանզի Մամերկոս՝ այն որ անձին շուք հարկանէր 'ի քերթածս իւր և յողբերգութիւնս, բարձրայօնս վիքայր՝ զի ե-հար կոտորեաց նա զվարձկանսն. և 'ի ձօն դից կախեալ զասպարս նոցա, թշնամանա-գիր ողբ քերթեալ վերտառեաց 'ի նոսա, այսպէս. "Ջ ծիրանեերանգ զասպարսն, և զորս յոսկւոյ և 'ի փղոսկրէ և 'ի սաթէ, դիւրագնի մեք ահաւադիկ և դուշնաքէիւք կալաք առպարօք"։

Ա յսոցիկ այսպէս եղելոց, և Տիմո-ղեոնդեայ դուցեալ տուեալ զօրուն 'ի վե-րայ Կաղաբրիոյ, անդուստ Իկետէս ան-կեալ 'ի վերայ սահմանին Սիրակուսայ, աւար մեծ աւարեաց. և զեան բազում գործեալ անդանօր, դարձաւ յետս քե-րեալ առ Կաղաբրիով յարհամարհութիւն

Տիմողեւոնդեայ՝ որ սակաւաձեռն գնդաւ հասեալ էր անդր։ Իսկ Տիմողեւոնդ վայր մի թողեալ զնա խաղալ յառաջ, ապա զհետ մտեալ վանէր այրուձիոնն և թեթեւազէն հետեւակքն։ Զայն տեսեալ Իկետէս, անցեալ զԴամիւր գետ՝ զտեղի կալաւ անդէն առ ափամբն՝ արգելուլ ըզհետամուտն. քանզի և 'ի դժուարանցանելի հունն վստահացեալ էր, և զի և թումբք գետոյն երկուստեք աւերեալք քանդեալ էին։ Բայց անդ զմիմեամբք եկ և եկք գնդապետացն Տիմողեւոնդեայ՝ յերկարէր զկռիւն. զի և չէր ոք յայնժամ որ հանդարտէր երկրորդ լինել՝ անցանել անկանել 'ի վերայ թշնամւոյն, այլ այր այր զառաջնութեան թեկն ածէր. և կարդ չէր անցկոյն, այլ խառնիխուռն այր զայրամբ եկանէին։ Ապա հրաման տայր Տիմողեւոնդ վիճակս արկանել. և զառն առն 'ի գնդապետացն առեալ զմատանիսն, և ժողովեալ 'ի քղամիդ իւր և թօթափեալ, առաջինն՝ զոր հանէր 'ի վիճակէն՝ դէպ եղև զի քանդակ զյաղթանակի ունէր 'ի վերայ կնիք մատանւոյն։ Իբրև զայն տեսին պատանիք՝ ձայն բարձեալ ցնծութեան և ոչ ևս հանդուրժեալ այլոցն վիճակաց, առհասարակ շտապաւ անցեալք ընդ գետն՝ խառնեցան 'ի կռիւն. իսկ թշնամիք ոչինչ հանդարտեալք կալ առաջի նոցա յանդուգն յարձակման՝ 'ի փախուստ դառնային, և զէնընկէցք զինաթափք՝ հազար մի անդանօր դիտապաստ անկանէին։ Այլ

յետ սակաւու՝ և 'ի քաղաք անդր Լէոն-
տացւոց յարձակեալ Տիմողեւոնդ, կեն-
դանւոյն զԻկետէս ձերբակալ առնէր. ընդ
նմա և զորդի նորա զԵւպողեմոս, և զԵւ-
թիմոս զօրավար այրուձիոյն, 'ի զօրականէ
անտի կապեալք և ածեալք առ Տիմո-
ղեւոնդ։ Անդ զԻկետէս և զպատանին մա-
հու դատեցին՝ իբրև զբռնաւորս և զմատ-
նիչս. ոչինչ խնայեցին և յԵւթիմոս՝ թէ-
պէտ և այր կորովի յոյժ և գոռ 'ի մարտի.
քանզի ամբաստան եղեն զառնէն հայ-
հոյութիւն խօսեալ ընդդէմ Կորնթացւոց.
քանզի պատմեն՝ եթէ 'ի խաղալ
Կորնթացւոց առ նոսա, սա այս Եւթիմոս
հրապարակախօս եղեալ 'ի մէջ Լէոնտաց-
ւոց, ասէր, եթէ չէ ինչ ահագին և չիք
զարհուրել, յորժամ "Կորնթացի կա-
նայքդ արտաքս ելանեն 'ի տանց"։ Եւ
յայս բնաւորեցան բաղումք, քան ընդ
գործս՝ առաւել ևս սրտնեալ ընդ հարուածս
բանից. և գժոխրմբեր ևս է նոցա թշնա-
մանքն՝ քան զվնասն. քանզի ներեն վնա-
սուց թշնամեացն՝ իբրև ոչք հարկաւորեալք
լցեն 'ի գործն. այլ լուտալ և հայհոյել՝
թուի թէ ծայրայեղ ատելութեամբ ծնունդ
լցէ և չարութեանն։

Այլ իբրև դարձ արար Տիմողեւոնդ, 'ի
դատաստան քարշեալ Սիրակուսացիք և
զկանայս և զդստերս զԻկետեայ՝ մահու
դատապարտեցին։ Եւ այս ապա գժպա-
տեհ իմն տեսաւ յամենայն գործսն Տիմո-
ղեւոնդեայ. զի թէ արդեօք ընդդէմ դար-

ձեալ էր նորա՝ ոչ զնոյն օրինակ պատու-
հասէին կանայքդ այդոքիկ. այլ ինձ թուի՝
թողուլ նորա զնոսա այնպէս 'ի ձեռս
պոռնոութեան քաղաքացեացն, զի նոցուն
սպանութեամբ վրէժինդիր Դիոնէսի լինի-
ցին՝ որ վանեացն զԴիոնեսիոս. քանզի սա
այս Իկետէս կենդանւոյն ամաց 'ի ծով
զԱրեսիս զկին Դիոնէսի և զԱրիստոմաքէ
զքոյր նորա և զտղայ մանուկ նորա: Եւ
զայս մեր պատմեալ է 'ի վարսն Դիոնէսի:

Յետ այսորիկ խաղայր գնայր Տիմո-
ղեւոնդ 'ի վերայ Մամերկոսի 'ի Կատանիա,
թէպէտ և ճակատեալ շատ ընդդէմ եկաց
նա առ Աբողոս գետոնէն. այլ 'ի պարտու-
թիւն մատնէր զնա, և 'ի փախուստ դար-
ձուցեալ առաւել քան զերկու հազար 'ի
զօրաց նորա տապաստ արկանէր անդէն 'ի
դաշտին, յորոց ոչ սակաւք էին Փիւնիկե-
ցիք՝ զոր արձակեաց Գեսկոն 'ի Թիկուանս
նմա: Եւ յայսմանէ խաղաղութիւն խնդ-
րէին Կարքեդոնացիք 'ի Տիմողեւոնդեայ,
պայման կռեալ՝ ունել նոցա միայն զսահ-
մանն յայնկոյս Լիւկոսի. և զի որք կամի-
ցին՝ եկեալ բնակեսցեն 'ի Սիրակուսա
հանդերձ ամենայն աղխիւն իւրեանց, և
յուխտ նիզակակցութեան մի՛ ևս մտցեն
նոքա ընդ բռնաւորաց:

Յայնժամ Մամերկոս յուսահատ է-
ղեալ նաւեաց յԻտալիա, անդուստ ածել
զԼեւկացիս ընդդէմ Տիմողեւոնդեայ և
Սիրակուսացւոց: Այլ երբեւ նիզակակիցք
նորա դարձեալք յետս հանդերձ եռա-

Թիովքն 'ի Սիկիլիա՝ մատնառու եղեն կա-
տանիոյ 'ի ձեռս Տիմողեւոնդեայ, խուճա-
պեալ նա ապաւինեցաւ 'ի Մեսսենիա առ
Իպպոմն բռնաւոր քաղաքին։ Զհետ մը-
տեալ Տիմողեւոնդ և պաշարումն սաստիկ
ածեալ քաղաքին ընդ ծով և ընդ ցամաք,
ձերբակալ լինէր Իպպոմն՝ մինչդեռ 'ի նաւ
ամբարձեալ փախչէր։ Զնա Մեսսենացիք
առեալ, և 'ի Թատրն ժողովեալ 'ի վար-
ժարանաց զմանկունսն հանդիսատեսս պա-
տուհասի բռնաւորին, հարուածս դանից
'ի վերայ եդին նորա՝ և այնպէս մահու դա-
տեցին զնա։ Ապա և Մամերկոս ինքնին
անձնատուր լինէր Տիմողեւոնդեայ, հպա-
տակել դատաստանի Սիրակուսացւոցն՝ ան-
դատախազ 'ի Տիմողեւոնդեայ։ Ածեալ 'ի
Սիրակուսա՝ բան մի հրապարակախօս լի-
նէր խուժանին՝ զոր 'ի վաղնջուց իսկ գրեալ
էր. իսկ անդանօր յուզեալ ռամկին՝ իբրև
անողոքելի այնուհետև տեսանէր զեկեղե-
ցին, 'ի բաց զհանդերձսն եդեալ և 'ի մէջ
տեսարանին ընթացեալ՝ դիմեաց սաստկու-
թեամբ խեթիկել գլխոմն ընդ սուրանն,
և այնպէս անձին առնել. այլ ոչ յաջո-
ղեալ նմա մահն, ածեալ անդուստ կէն-
դանի՝ զաւազակացն ելոյծ զպատուհաս։

Զայս օրինակ ապա արմատաքի խլեաց
Տիմողեւոնդ զբռնաւորութիւնն և վա-
նեաց զթշնամիսն. և կղզի մի զանձամբ ա-
ռեալ համբուն վայրագացեալ 'ի կրից չա-
րեաց և գժոխամբերելի խրոց բնակաց՝ 'ի
հեղութիւն ամոքեաց. և այնպէս փարելի

գործեաց առհասարակ, որպէս զի և էկք օտարք նաւեալ եկին բնակեցան 'ի նմա, ուստի բնիկքն յառաջագոյն 'ի բաց սարտուցեալ էին։ Քանզի Ակրագանտաս և Գեղաս քաղաքք մեծամեծք՝ քանդեալք 'ի Կարքեդոնացւոց յետ Աւոտիկեան մարտին, անդրէն միւսանգամ շինեցան յայնժամ՝ մին 'ի ձեռն Մեգեղոսի և Փերիստոսի՝ եկեալք յԵղեայ. և միւսն՝ 'ի ձեռն Գորգեայ՝ եկեալ 'ի Կէայ. ոչքա 'ի մի վայր ժողովեալ 'ի քաղաքն յայնոսիկ զՀին բնակիչսն, մեծապէս աներկեանութեամբ յետ այնչափ մարտից յուզելոյ՝ յանդորրու նստան 'ի ձեռն Տիմողեւոնդեայ. առ այս՝ և խնամ մեծ տարեալ 'ի հանդերձանս պիտոյից նոցա, ուստի և սիրեցին զնա երբեւ հիմնադիր քաղաքացն։ Բայց և այլք առհասարակ զնոյն սէր սիրէին զնա. զի և ոչ խաղաղութիւն պատերազմաց, ոչ օրինադրութեանց սահման, ոչ վայրաց ինչ բնակութիւն, ոչ քաղաքաց բարեկարգութիւն, թուէր յայնժամ գեղեցիկ ունել էլս, եթէ նա չմնէր զձեռնն և առեալ չօրինէր զնրան. զորօրինակ եթէ 'ի Ճարտարապետաց ոք՝ 'ի գործ ինչ որ արդէն 'ի գլուխ եղեալ լցէ, շնորհս և գեղ յոյժ ճահաւորակի և աստուածավայել 'ի նոյն առեալ բարդեցէ։

Էին էին զայնու ժամանակաւ և շատք 'ի Հելլենացւոց արք աւադք՝ որ նահատակութիւնս գործեցին մեծամեծս. յորս Տիմոթէոս և Ագեսիղայոս և Պուղոպիդէս

և Եպամինոնդէս՝ որում մեծապէս նա-
խանձաւոր դտաւ Տիմողեւոնդ. սակայն
նոցուն նահատակութիւնք խառն ընդ բըռ-
նութեան և ընդ քրտանց՝ զչուք պայծա-
ռութեանն 'ի դէմս բերին. զի և ինչ ինչ 'ի
գործոց անտի նոցա բամբասանս զհետ
ձգեցին և ապաշաւ : Իսկ 'ի նահատակու-
թիւնն Տիմողեւոնդեայ, (եթէ 'ի բաց
տարցես դու զհարկն զայն զնորա առ եղ-
բայրն) չիք ինչ ոյր աղագաւ 'ի դէպ ո՛չ
ելցէ զՍոփոկղեանն զայն գոչել բարբառ՝
որպէս ասաց Տիմէոս. "Բա՛ռնէ աստուածք,
ո՞ր այն արդեօք Կիլբիս, կամ ո՞ր այն
Ասողիկ ձեռն միեաց 'ի սա" : Քանզի
զորօրինակ քերթուածք Անտիմաքեայ և
կենդանագրութիւնք Դիոնիսեայ՝ արանց
Կողոփոնացւոց, 'ի նկրտել իւրեանց 'ի
գործն՝ քիրան տաժանակիր երևին թա-
փել. իսկ Նիկոմաքոսին նկարքն և Հոմերո-
սին տաղքն՝ հանդերձ այլ ինչ գեղուին և
շնորհիւն՝ աշխատասիրութիւն հեշտին 'ի
դէմս բերեն. նապէս և զՏիմողեւոնդեայ
մրցանն 'ի կշիռ ձգեալ ընդ Եպամինոն-
դեայն և ընդ Ագեսիղայոսինն, արդեօք ոչ
ջախոհիցն բազմավաստակ և դժուարա-
քիրան վերջինքդ երևեսցին. իսկ առա-
ջինքն 'ի միասին ընդ գեղոյն և դիւրութիւն
մեծապէս 'ի նեղքս բերցեն, իբրու ո՛չ բախ-
տին ձեռակերտք՝ այլ և բարեբախտ առա-
քինութեանն. Թէպէտ և ինքնին Տիմո-
ղեւոնդ զամենայն զնահատակութիւնն 'ի
բախտն 'ի վեր հանիցէ :

Քանզի 'ի գրել իւրում առ բարեկամն 'ի Կորնթոս, դարձեալ և 'ի հրապարակախօսելն իւրում առ Սիրակուսացիս, ստէպ երախտապարտ զանձն ունի գիցուհւոյն, որ զՍիկիլիա կամելով փրկել՝ յիւր անուն գրեալ, տարաւ 'ի գլուխ։ Վասն որոյ և 'ի տան իւրում կառուցեալ վայր նուիրական Քաջագիպուհեանն, զոհեր զոհս, և զտունն զայն առեալ որբեաց նուիրական Քաջին այնմիկ։ Զայս տուն ետուն նմա Սիրակուսացիք 'ի մրցանակ քաջութեան նորա 'ի զօրավարութեանն. առ այս՝ և ա-գարակ յոյժ գեղեցիկ և բերկրարար, ուրանօր նա զբազմագոյն ժամանակն պարապեալ նստէր, առաքեալ ածեալ առ իւր 'ի Կորնթոսէ զկին իւր և զորդիս. քանզի ոչ ևս դարձաւ նա 'ի Կորնթոս, և ոչ յաղմուկս Հելլենաց խառնեաց ինչ զանձն, և ոչ դարձեալ քաղաքականին այնմիկ մեխանաց մատն եղև անձին՝ (յոր բազմագոյնք արդեօք 'ի զօրավարաց՝ անյագ 'ի շուք պատուոյն լինելով և յաւագութիւն զօրութեան՝ գնացեալք ընդհարկանին). այլ անդէն եկաց և բնակեցաւ, վայելեալ 'ի բարիսն զոր անձամբ անձին գուն գործեալ 'ի ներքս երեր. յորս վերհագոյնն արդեօք՝ զի քաղաքս այնչափ և բիւրաւորս մարդկան յակն արկանէր նա երջանկացեալ 'ի ձեռն նորա։

Այլ քանզի պարտ է՝ զի ըստ Սիմոնիդեայ՝ ոչ միայն յամենայն արտուստս բուսցին կատարք 'ի գլուխս, այլ զի և յամե-

նայն ուամկապետութիւնս՝ զրպարտիչ ոմն բանսարկու, ուստի և ընդդէմ Տիմողեւոնդեայ յարեան կրկին դատախազք, Լաւիսատիոս և Դեմենետոս։ Արդ իբրև Լաւիսատիոս 'ի դատաստանի ուրեք խնդրէր երաշխաւորութիւն 'ի Տիմողեւոնդեայ, ոչինչ թոյլ ետ նա քաղաքացեացն աղմուկ յուզել և արգելուլ զբանն. քանզի ասէր՝ եթէ քիրտն այնչափ և մահուանս կամակարութեամբ սրտի յանձն էառ նա, զի Սիրակուսացիք ազատութեամբ վարեսցին օրինօքն իւրեանց։ Իսկ իբրև և Դեմենետոս բազում դատախազ կայր զնմանէ 'ի մեծի հրապարակին վասն իրաց զօրավարութեանն, նա ոչինչ ետ պատասխանի. այլ ասէր շնորհս ունել աստուածոց, որոց և մաղթեաց՝ զի Սիրակուսացիք 'ի վերջէ ուրեմն տիրացեալք գերեցիկ ազատութիւն կալցեն խօսելոյ։

Եւ այսպէս ապա նահատակութիւնս մեծամեծս ըստ հասարակաց խոստովանութեան և գերեցիկս, քան զամենեցուն որ առ իւրովքն ժամանակօք Հելլենացւոցն՝ նահատակեալ սորա, և սա այս միայն վերհագոյնս առաքինացեալ՝ յորս միանգամ իմաստակքդ առենախօս Ճամարտակութեամբքն ցանգ իրախուսեն զՀելլենացիսն, առ այսոսիկ՝ ըստ գերեցիկ բախտին ազատացեալ սա և 'ի վաղնջուց անտի աղէտիցն վշտամբեր նախնոյն Եկեղեայ, սուրբ և անշաղախ յարենէ ընտանեացն, ակներև ուսոյց բռնաւորացն և խուժա-

դուժ աղանցն զքաջութիւն կորովութեան իւրոյ և զահն և զհոյն. իսկ Հելլենացւոցն և բարեկամացն՝ զհեզութիւնն և զարդարութիւնն. և զի՝ և զբազումս 'ի յաղթանակաց մրցանացն կանգնեաց նա՝ ոչ յարտասուս լալեաց զքաղաքացիսն համակեալ և 'ի սուգ թաղծութեան, այլ սրբեալ մաքրեալ զՍիկիլիա՝ չև բոլորեալ ամացութիւց՝ յիւրոց անտի անդուլ և 'ի տնկակից աղէտիցն կարեաց, յանձն արար եւ 'ի ձեռս բնակասնունդ մարդկանն:

Բայց 'ի ծերութի յեցեալ Տիմողեւոնդ՝ վատեցան աչք նորա, ապա յետ սակաւուց և բնաւ կուրացան. ոչ ինքն ինչ պատճառս եղեալ կրիցն, կամ թէ 'ի բախտէն ոտնհար եղեալ, այլ՝ որպէս հաւանեալս եմ՝ էր այս ախտ զարմին նորա, միանգամայն և կարիք բազմաժամանակեայ կենացն. քանզի և պատմեն՝ ոչ սակաւուց 'ի նոյն զարմէն կուրանալ՝ վատեալ 'ի ծերութենէն: Իսկ Ա.թանիս պատմէ՝ եթէ և 'ի մարտի անդ ընդ Իպպոնեայ և Մամերկոսի 'ի Միղէս՝ ախտակրեաց 'ի բանակին աչքն Տիմողեւոնդեայ, և ամենեցուն յայտնի լինել կուրութեանն՝ նա տեղի չտուեալ 'ի պաշարմանէն մարտ եդեալ կռուեցաւ մինչև ձերբակալ զբռնաւորսն առնէր. և ապա դարձ արարեալ 'ի Սիրակուսա՝ հրաժեշտ տայր յիշխանութենէն, 'ի չքմեղս եղեալ աղերսիւ առաջի քաղաքացեացն, իբրև որ զբաւ դեղեցիկ լցէ այնուհետև ամենայն իրաց նոցա:

Եւ արդ ընդ համբերութիւն նորա անտրտում ընդ կիրս ալէտիցն վայր մի զարմացի ոք արդեօք. այլ որ առաւել պանչելին՝ զի ցանդ մեծարանս շնորհակալուս ցուցին առ այրն Սիրակուսացիք 'ի կուրութեան նորա. յաճախս յայց եղեալք 'ի դրունս նորա, և յարարս և 'ի տուն նորա ածեալ բերէին զեկս զօտարս դալ տեսանել զբարեգործն նոցա. և ցնծային 'ի բարձր պարանոց՝ զի առ նոսա ընտրեաց բնակել, և արհամարհեաց զփառաւոր դարձն յԵլլադա՝ հանդերձեալ նմա վասն առաքինի նահատակութեանցն նորա։ Բայց 'ի բազմադէմսն և 'ի մեծամեծսն՝ որ արձանագրեցան և արդիւնացան 'ի պատիւ երեսաց առն, ոչինչ գուշնաքեայ էր սահման վճռոյն Սիրակուսացւոց ժողովրդեանն, զի յամենայն 'ի մարտս ընդդէմ այլազգեաց՝ զօրավար մի ոք կացցէ նոցա 'ի Կորնթացւոց։ Գեղեցիկ էր տեսանել և զշուք նորա յատեանս խորհրդոց նոցա. քանզի յաղագս գուշնաքէից իրաց նոքա առանձինն վճարէին. իսկ յաղագս մեծաց առաքեալ կոչէին զՏիմողեւոնդ՝ բարձեալ 'ի կառս ընդ հրապարակն. գայր նա 'ի տեսարանն, և այնպէս բազմեալ 'ի կառան՝ ասպնջականութիւն մեծապէս ընդունէր առհասարակ միաձայն ողջունիւ. և ինքն դարձեալ ողջունիւ նոցա փոխարինեալ, վայրիկ մի այնպէս անսայր գովութեանց նոցա և բարեբանութեանցն. և 'ի վերայ հասեալ առաջարկութեան խորհրդոյն՝ ասէր և ինքն

զկարծիսն. որում և ձեռն տուեալք հաւանութեան, ապա պաշտօնեայքն 'ի բաց տարեալ զկառն ընդ մէջ տեսարանին, և քաղաքացիք յուղարկեալք 'ի կայթս և 'ի ծափս, այնպէս դարձեալք զհասարակաց իրաց զսէտան առանձին տեսանէին։

Յայսչափ շուք մարդասիրութեան իբրև հայր հասարակաց ծերացեալ Տիմողեւոնդ, գուզնաքեայ խօթութեամբ և բազմաժամանակեայ աւուրքն վախճանեաց զկեանսն։ Եւ ապա աւուրք սահմանաւորք շնորհեցան Սիրակուսացւոց հանդերձել զյուղարկաւորութիւն, դարձեալ և շրջակայ ևս այլոց ժողովրդոց գալ 'ի հանդէս անդր. և յարդարեալ յօրինեցաւ հոյակապ պատրաստութեամբ և շքեղ. և պատանիք վիճակաւ ընտրեալք՝ բարձեալ բերէին զդագաղն զարդարեալ գեղեցիկ՝ ածեալ ընդ մէջ աղքունեացն Դիոնիսեայ՝ որքանդեալն իսկ էին. և էին նմա յուղարկաւորք բիւրաւորք բազումք՝ արանց և կանանց, առհասարակ պսակեալք և պատմուճանս սուրբս արկեալ զանձամբք, զմեծի տօնախմբութեան 'ի դէմս բերէին ըզհանդէս. իսկ ձայնք աղաղակին և առուք արտասուաց խառն ընդ դրուատից և ընդ երանութեանց վախճանելոյն, ոչ զնուէր մեծարանացն և ոչ զաշխարհօրէն սպասարկութիւն 'ի նախահոգակ խորհրդոց յայտ առնէին, այլ զիրգ տենչանաց արդար և իրաւ, և շնորհս զճշմարիտ մտերմութեան։ Իսկ իբրև 'ի վերջէ 'ի վերայ խա-

րուկին զդագալան առեալ հանդուցին, անդանօր Դեմետրիոս՝ քան զամենայն Քաղաքաց առ իւրովքն ժամանակաւք՝ մեծագոյն եւ աւագաձայն, կարդայր բարձր զարձանագրութիւն վճռոյն, որ ունէր օրինակ զայս.

"Ժողովուրդ Սիրակուսացւոց՝ Տիմողեւոնդեայ Տիմոդիմեան Կորնթացւոյ՝ թաղուին ընծայէ երկերիւր մնասից։ Ա՛ռ այս՝ և շուք պատուոյ սահմանէ նմա յաւիտեանս ժամանակաց 'ի մրցանս երաժշտաց, և ասպետաց, և ըմբշաց. քանզի սա զբռնաւորս տապալեաց, և զխուժադուժան պարսեաց, և զմեծամեծսն շէն բնակեցուցեալ 'ի հիմնայատակ քաղաքաց, Սիկիլիացւոց միւսանգամ օրէնս աւանդեաց"։

Ապա և շիրիմ կանգնէին մարմնոյն 'ի հրապարակի անդ, և սրահս ևս շուրջ ածէին զնովաւ, և ասպարէզս ևս շինեալ անդանօր՝ տային պատանեաց ըմբշամարտից, և անուն կարդային տեղւոյն՝ Տիմողեւոնդեան։ Իսկ ինքեանք քաղաքավարեալ զկարգ և զօրէնսն՝ զոր նա ինքն սահմանեաց նոցա, հարուստ ժամանակ այնպէս երջանկացան նոքա 'ի կեանս իւրեանց։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Են գիցուհիքն, Դեմեար և Պերսեփոնէ։

2. Սովորութիւն էր 'ի մոանեալն առ թագաւորս՝ թօթափել զձորձս, յայտ արարեալ եթէ չիք զէն 'ի ծածուկ։

ԵՄԻԼԻՈՍ ՊԱՒՂՈՍ

ՅԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ վարուցդ բուռն հարկանել դէպ եղև ինձ 'ի շնորհս այլոց [1], այլ ապա 'ի նոյն յաւերժանալ և մեծապէս տենչմամբ թարթափել, և 'ի շնորհս անձինս արդեօք: Քանզի իբրու 'ի հայելւոջ, 'ի պատմութեան աստ գուն գործեալ եմ ես աւադիկ և զիմ վարան յարդարել և հանգուցատիպ նոցուն ա-ռաքինութեանցն գործել: Քանզի և ոչինչ այլ թուի արդեօք պատահել բանիւդ այ-դուիկ, քան եթէ կենցաղակից կենակից քաջացն այնոցիկ լինել և առաքինեացն, յորժամ զայր այր 'ի նոցանէն 'ի մասին պատմութեանս մերոյ՝ իբրև հիւր առ մեզ ժողովեալ, ասպնջական լինիմք նոցա. ա-պա և նստեալ զննեմք դիտեմք՝ ո՞ ոք այն ելցէ և քանիսն արդեօք ելցէ այլն. և այն-պէս զտիրագոյնսն և զգեղեցիկսն 'ի դի-

տել՝ ծաղկաքաղ առնեմք յառաքելի նա-
հատակութեանց նորա. "Բաբէ, բաբէ,
և զի՞նչ այլ վերհագոյն քան զայս բերկրու-
թիւն կայցէ քեզ երբէք", գեղեցիկ ևս
վերբերիչ յուղղութիւն վարուց:

Քանզի Դեմոկրիտոս ասաց, եթէ ա-
ղօթել պարտ է՝ զի պատկերք և նմանու-
թիւնք բարեգուշակք հանդիպեսցին մեզ.
և զի՝ քան թէ յոռիք ինչ և ձախողակք՝
մտերիմքն և լաւքն մանաւանդ պատահես-
ցին մերոց աչաց 'ի շրջապատ օդոց աստի:
Բան ոչինչ ճշմարիտ, և որ ամբաւից սնա-
պաշտութեանց պատճառք յիմաստասի-
րութեան: Այլ մեք 'ի դեղերել մեր 'ի
պատմութեանս և 'ի հանապազորդել յար-
ձանագրութիւնս յայսոսիկ, կազմ և պատ-
րաստ զգուշանամք անձանց, զի զքաջացն
զայնոցիկ և զառաքինեացն զյիշատակս
ցանդ առեալ ժողովեսցուք 'ի հոգիս մեր.
իսկ զյոռին և զվատթարն և զփանաքին՝
որ ճարակեսցի թերևս 'ի մեզ 'ի հարկէ
կենակցութեան մերոյ ընդ այնպիսեացն,
զայն ամենայն 'ի մէնջ 'ի բաց մերժեսցուք.
հեզ և հանդարտ և հեշտընկալ զմիտս մեր
դարձուցանելով յօրինակս անդր բարեացն
և առաքինեացն:

Յորոց սակի և յառաջիկայդ բուռն
հալցուք քեզ զՑիմոդեւոնդեայ Կորնթա-
ցւոյ և զԵմիլիոսի Պաւղոսի արձանագրել
զվարս. որք ոչ միայն խորհուրդս հանձա-
րեղս, այլ և էլս իմն գեղեցիկս՝ նմանատիպ
միմեանց վիճակեցան ունել 'ի նահատա-

կութիւնս իւրեանց։ Առ որ յերկուա-
ցեալ սարակուսեցեալ ոք թերևս, արդեօք
'ի գեղեցիկ բախտէն մանաւանդ՝ եթէ 'ի
հանճարոյ մտացն այնպէս 'ի մեծամեծ
գործսն նահատակեցան նոքա։

ԶԵմիղեանց զարմն 'ի Հռոմ քաղաքի 'ի
պատրկաց անտի լինել և 'ի վաղնջուցն զար-
մից՝ բազումք արձանագրեն միաբան։ Իսկ
թէ առաջին՝ որ զանուն զայս եթող ազ-
գատոհմին՝ եկաց Մամերկոս որդի Պիւթա-
գորայ խմաստնոյն, որում 'ի պատճառս
աղու բարբառոյն և շնորհացն՝ անուն կար-
դային Եռիւ 2, զայդ պատմեն ոմանք՝
որ զդաստիարակութիւն զնումասայ ար-
քայի՝ ընծայեն Պիւթագորայ։ Այլ բազ-
մագոյնք 'ի փառաւորացն զարմին յաջո-
ղեցան ըստ գեղեցիկ բախտին յառաքի-
նութիւնն՝ որում պատկառ կացին, և Լեւ-
կիոս Պաւղոսեան 'ի ձախողակ հարուածին
Կաննայ քաջ իսկ եցոյց հանճար և քա-
ջութիւն. քանզի ոչինչ կարացեալ 'ի բաց
'ի կռուոյ անտի քեցեալ զիշխանակիցն իւր,
բաժանորդ եղև և ինքն վտանգին՝ թէպէտ
և ընդդէմ իւրոց խորհրդոցն, այլ ոչ և
փախստեանն. զի 'ի տեղի տալ ընկերին 'ի
դիմագրաւեալ վտանգէն, նա հաստատուն
մարտ եդեալ կռուեցաւ մինչև տապաստ
անկաւ։ Որոյ դուստր եկաց Եմիլիա՝ հարս
նացեալ մեծին Սկիպիոնի, յորմէ ծնաւ
Պաւղոս Եմիլիոս՝ զորմէ առեալս եմք զար-
դիս յարձանագրել։

Սա այս Եմիլիոս յարբունս հասեալ 'ի

ժամանակի անդ ծաղկելոյ արանց առաքինեաց և հոյակապից, քաջ իսկ գիտաց ինքնին բարգաւաճ 'ի փառս լինել, ոչինչ զհետս կրթեալ մարզիցն՝ որոց յայնժամ պատկառ կային մանկունք ազատորերոյն, և ոչ զնոյն շաւղաց անդատին բուռն հարեալ։ Քանզի ոչ վարժեցաւ յատենական, և ոչ զաղջոյնսն զայն և զգգուանսն և զպչջրել զբազմաց յանձին երբէք կալաւ՝ որով շնթել բնաւորեցան նոքա խուժանին և մարդահաճել և սպասարկու լինել. Թէպէտ և բոյս բարուցն Եմիլեայ յերկոսին ևս չէր ինչ անյարմարաւոր. այլ նա լաւ ևս համարեցաւ՝ փառս անձին ժառանգել զարիութեան և զարդարութեան և զհաւատոց, յորս և անդէն գերազանցեալ գտաւ քան զամենեսեան՝ որ առ իւրովքն ժամանակաք։

Արդ առաջին գործ աւագութեան կալաւ զամբարապետի, յորում և նախապատիւ ընտրեցաւ նա քան զհետամուտսն երկոտասան Թուով. որք և ապա առհասարակ՝ որպէս ասեն՝ կացին նոքա հիւպատոսք։ Յետ այսորիկ կացեալ և քահանայ, մի 'ի նոցանէն՝ զոր կարդան՝ Ա-կ-ա-ռ, այն է՝ Հաւատմայ, ըստ կարգի Հռոմայեցւոցն դէտ և պահապան 'ի վերայ կալ որ 'ի հաւուց անտի և յԱրամազդեան նշանացն գուշակութեանց, այնպէս ջանիւ Թեւկոխէր 'ի սովորոյթս հայրենեաց, և քննէր զկարգս բարեպաշտութեան զծերունեացն յաստուածայինսն, որպէս զի և զկարգ

քահանայութեանն՝ զոր 'ի պատուոյ սակս և եթե տային և նմին իրի տարփային, նա արդեամբք 'ի նեղքս ընծայեաց զայն իբրև զմի 'ի վեհագոյն արուեստից. և ինքնին նա վկայեաց իմաստասիրացն, որ զբարեպաշտութիւն՝ սահմանեցին ասել, Սպասարիութիւն աստուածոյն գիտութիւն: Քանզի մեծապէս ինամով գործէր զամենայնն, 'ի բաց զամենայնն դնելով զհոգան 'ի սպասու պաշտաման. զանց առնէր և ոչինչ, կրկնէր և երեքկնէր և ոչինչ. ցանդ 'ի պայքար մոեալ ընդ երիցակցացն և վասն դուշնաքէից, ազդ առնէր՝ եթէ թէպէտ և ոք հեշտալուր արդեաք զաստուածակողմնն կարծեսցէ լինել և անդատախազ մեղաց մերոց, այլ սակայն վասն քաղաքին դժընդակ է անփոյթ և զանց զփոքրումբքն զայնոքիւք առնել. իբրև չէ՛ք ոք՝ որ անդէն 'ի սկզբանն ծայրայեղ յանցաւորութեամբ վեր 'ի վայր զքաղաքն արասցէ. այլ ոչք միանգամ 'ի փոքունսն ճշդիւոք ոչ իցեն, նոքա և 'ի փոյթ պահպանութեան մեծամեծացն յանցաւորք են:

Զնոյն ճշդութիւն 'ի նեղքս բերէր նա և 'ի պահել քաջիկ զամենայն զսովորոյթս զգինուորութեանն և զվաղնջուց զկուրոց հայրենեաց. ոչինչ մարդելուզէր 'ի զօրավարութեանն, և ոչ դարձեալ՝ ըստ որում բազմագոյնք յայնժամ 'ի զօրավարաց՝ յինքն յանգուցանէր և զերկրորդ գունդն, ներուզամիտ առ առաջինսն ցուցանելով. այլ իբրև վեհագունիցն քահանայ խորհրդոց՝

այնպէս և զքինուորական սովորոյթան ճշգրտէր. և անսասանեցն և յանցաւորացն զանձն ահաւոր 'ի նեղքս ընծայեալ, 'ի կարգ գեղեցիկ առեալ ամբառնայր զհայրենիսն. և զպարտութիւն թշնամեացն երկրորդ դնէր նա քաղաքայնոցն իւրոց քաջակրթութեան:

Իսկ 'ի ժամանակին իբրև մարտ եղեալ կռուէին հռոմայեցիք ընդ մեծին Անտիոքոսի, և 'ի զօրավարաց անտի քաջք և առաքինիք խաղացին ընդդէմ նորա, դէպ եղև և այլում մարտի դրդռեալ 'ի կողմանց անտի արևմտից, և յուզմունք մեծամեծք էին յԻսպանիա: Արդ 'ի մեծի պատերազմին յայնմիկ զօրավար կարգեալ Եմիլիոս, ոչ վեց միայն տապարաւորս՝ ըստ զօրավարացն սովորութեան առնոյր ընդ իւր, այլ կրկին նոյնչափ. որպէս զի և հիւպատոսական շուք ընծայել իշխանութեանն: Ապա երկիցս անգամ վանեալ 'ի պարտութիւն մատնէր զիսուժագուժսն 'ի ճակատամարտի. և յայտնի իսկ՝ եղք նահատակութեանն յաջողեցան 'ի գեղեցիկ զօրավարութենէն. քանզի վայրս ինն յարմարաւորս ընտրեալ, և յանցանելն ընդ գետ աճապարեալ անկեալ 'ի վերայ թշնամւոյն, այնպէս հեշտին սարսաւ զյաղթութիւնն: Առ այս՝ և քաղաքս երկերիւր և յիսուն նուաճէր անդ ընդ ձեռամբ՝ որ մտադիւրագոյնս ժողովեցին զնա. ապա խաղաղութիւն հաստեալ և ապահովեալ, թողեալ զգաւառն դարձաւ եկն 'ի Հռոմ. միով դրամակշռով

չափ շահեալ և ոչինչ 'ի զինուորութեանն յայնմիկ. քանզի և ո՛չ ուրեք այլ՝ օգտաշարաւ երբէք գտաւ նա, որ այնպէս առատ և ճոխաբար տայր յիւրոց անտի գոյիցն. թէպէտ և ո՛չ շատ ինչ էր նորա, այլ հաղիւ ուրեմն յետ վախճանին նորա բաւական եղեն 'ի հատուցանել զպարտս օժտի կնոջն։

Այս Եմիլիոս զՊապիրիա ածեալ էր 'ի կին զդուստր Մնասոնի 'ի հիւպատոսական կարգէն. այլ հարուստ մի ժամանակ կացեալ ընդ նմա՝ գիր ապահարզանի տայր նմա. թէպէտ և զաւակս գեղեցիկս ծնաւ նմա Պապիրիա, զգերահռչակեալն զայն զԱկիլիոն և զՊաքսիմոս Փաբիոս։ Իսկ պատճառք արձակման կնոջն ո՛չ հասին առ մեզ։ Այլ յաղագս քակելոյ ամուսնութեանցն թուի թէ ճշմարիտ է ասացեալն առն ուրումն Հռովմայեցւոյ, որ 'ի բաց զկինն արձակեալ և նորին աղագաւ աղարտեալ 'ի բարեկամացն, որ ասէին. "Մի թէ ո՛չ 'ի պարկեշտից ոք էր կինդ և 'ի գեղատրաց, և ո՛չ զաւակարար էր դա". Նա կարկառեալ ցուցեալ զիւր կօշիկն, զոր Հռովմայեցիք Քաւլէոն 3, կոչէն, ետ պատասխանի և ասէ. "Ո՞չ արդեօք և այս ճարտարագործ է, ո՛չ և նորագործ. այլ սակայն գիտէ և ո՛չ ոք 'ի ձէնջ՝ եթէ յորո՞մ մասին ինձ դա խոչ ընդ ոտն իցէ"։ Եւ արդեօք կէսք 'ի կանանց 'ի բաց արձակեցան վասն մեծաց ինչ և յայտնի յանցաւորութեանց. իսկ կէսք 'ի սակս անհա-

մութեան և անմիաբանութեան բարուցն. յորմէ և գժտութիւնք՝ թէպէտև դուշնաքեայք այլ յաճախակի. և թէպէտև անյայտք՝ սակայն բնակակցացն անհաշտելի 'ի ներքս բերեն օտարութիւնս։

Եւ այսպէս 'ի բաց զՊապիրիա հանեալ Եմիլիոս, էած այլ կին՝ յորմէ և ծնաւ որդիս երկու կալեալ առ իւր 'ի տան. իսկ զառաջինն տայր յորդեգրութիւն 'ի տունս աւագաց և քաջազարմից։ Զերէցն յորդեգիրս առնոյր որդին Մաքսիմոսի Փաբիոսի, այն՝ որ հնգիցս եկաց հիւպատոս. իսկ զկրսերն՝ որդի Ափրիկանոսի Սկիպիոնի՝ քեռի նորա, և անուն կարդաց նմա Սկիպիոն։ Իսկ 'ի դստերաց անտի Եմիլիոսի՝ մին հարսնացաւ որդւոյն Կատոնի, և միւսն Եղիոսի Դուբերոնի՝ այր լաւ և առաքինի, որ 'ի վերջ քան զամենայն Հռոմայեցիս յոյժ մեծանձնաբար տարաւ աղքատութեանն։ Քանզի առհասարակ Եղեանք թուով մեռասանք՝ աղդակիցք, 'ի փոքրիկ կալուածի բաւական նոցա, և 'ի դուշնաքեայ տան բաշխեալ նստէին ընդ միով մարդակաւ հանդերձ յոքնաթիւ զաւակօք և կանամբք. յորոց մին և այս դուստր Եմիլիոսի՝ որ երկիցս եկաց հիւպատոս և յաղթանակս կանգնեաց երկիցս. սակայն դուստրն զամենի ինչ չհարկանէր ընդ աղքատութիւն առնն, նա և հիացեալ իսկ էր ընդ առաքինութիւնն՝ որով և աղքատն էր։ Իսկ առ մեզք այսօր եղբարք և աղդակիցք՝ եթէ զկալուածս իւրեանց կլիմայիք

ոմանքք և գեռովք և պատուարքք ոչ որոշեալ սահմանեսցեն, և 'ի միջի չգուցէ լայնատահման բաղում անջրպետ ընդ միմեանս, երբեքք ոչ դադարեսցեն նոքա դժուել և կագել ընդ միմեանս։ Արդ զայսոսիկ խորհել և զննել 'ի նեղքս ընծայէ պատմութիւնն, որոց միանգամ զգեղեցիկ կենացն բուռն հարեալ լցեն։

Իսկ յետ այսորիկ Եմիլիոս կարգեալ 'ի հիւպատոս, խաղաց զօրու 'ի վերայ Լիգիւացւոցն Ալպիաբնակաց, զոր ոմանք Լիգիւատացիք կոչեն. աղգ մարտիկ և քաջ՝ 'ի նոցուն իսկ 'ի Հռոմայեցւոց հմտացեալք 'ի կռուել՝ սահմանակից գոլով նոցա։ Քանզի և բնակեն իսկ նոքա առ լեռնոտամբքն Ալպեանց 'ի վերջին սահմանս Իտալիոյ, և 'ի կողմ Ալպեանցն զոր Տիւրրենեանն Թանայ ծով և կայ 'ի հանդիպոյ Լիբիոյ. ժողովուրդ խառնեալ ընդ Գաղատացւոց և ընդ ծովեզերեայ Իբերացւոցն. և 'ի ժամանակին յայնմիկ յաճեալ դնային ընդ ծով նաւք հինից և խցեալ կուրացուցանէին զվաճառականութիւնն՝ յառաջեալք անդր տարադէմ մինչև յարձանսն Հերակլեանց։

Ապա 'ի վերայ յարձակեալ Եմիլիոս Լիգիւացւոցն չորից բիւրուց՝ ուրթ հաղար հեռակոք, խառնեցաւ 'ի մարտ ընդ այնչափ բազմութեանն և 'ի փախուստ դարձուցեալ՝ առեալ փակեաց զնոսա 'ի պատուարս իւրեանց. և յայնժամ լուր ինն հեշտ և բաղձալի զվայրոք ածէր առ նոսա

պայմանաց խաղաղութեան. քանզի և կամէին իսկ ոչ Հռոմայեցիք խոպառ եղծանել զԱլիգիւացւոց ազգն. զի պատուարք էին նոքա և թուամբ ընդդէմ հինի Գաղատացւոցն, որ ցանգ ակնկառոյցք էին յԻտալիա: Իբրև նոքա անսացին Եմիլիոսի և առեալ 'ի ձեռս ետուն նորա զնաւսն և զքաղաքսն իւրեանց, նա զքաղաքսն դարձոյց առ նոսա ողջ, միայն զպատուարսն քակեալ շուրջանակի. իսկ զնաւսն 'ի բաց տարաւ առհասարակ, և չեթող նոցա նաւակ մեծ քան զեռաթիակարգն. և աղատեաց զամենայն գերին՝ որ 'ի ծովէ որ 'ի ցամաքէ, յորս էին և բազումք յեկաց օտարաց և 'ի Հռոմայեցւոց: Եւ այսպէս ապա մեծապէս նահատակեցաւ նա 'ի հիւպատոսութեան իւրում:

Իսկ Իբրև յետ այնորիկ ստէպ ցանկայր նա միւսանգամ աւագութեանն այնմիկ, և յայտնի ևս միանգամ հետամուտ ընծայեցաւ և չեղև կամագիւտ, այնուհետև մեկուսացեալ յանդորրու՝ նուիրականացն պատկաւ կայր և զաւակացն դաստիարակութեան. մարդէր զնոսա 'ի վաղնջուց կարգս հայրենեացն՝ զի և ինքն տեղեակ և հմուտ էր, այլ և 'ի հելլենականն պատուասիրագոյնս: Քանզի առեալ դնէր նա առաջի պատանեկացն ոչ գրամատիկոսս միայն և խմաստակս և հռետորս, այլ և անդրիագործս և կենդանագիրս, և արս հմուտս 'ի վարժս երկրաչարաց և բարակաց և յորս էրէոց և դաշանաց. և ինքնին դար-

ձեալ՝ պարապեալ 'ի գործոցն ցանգ ա-
ռաջի կայր 'ի կրթանս նոցա, հայր յոյժ
ոլոգեսէր կալոգացեալ 'ի Հռոմայեցւոցն։

Զայնու ժամանակաւ ըստ հասարակաց
գործոցն մարտ եղեալ կռուէին հռոմայե-
ցիք ընդ Պերսէոսի արքային Մակեդոնաց-
ւոց. և էր նոցա առհասարակ տրտունջ
վասն զօրավարացն անհմտութեան և վա-
տութեան, զի այնպէս առակ նշաւակի
լինէին նոքա 'ի մարտին յայնմիկ, կրեալք
'ի թշնամեացն՝ քան թէ հարեալք զնոսա։
Եւ քանզի ոչ շատ լինէր ժամանակ յառաջ
'ի նեղն արկեալ հռոմայեցիք զԱնտիոքոս
զանուանեալն Մեծ՝ տեղի տալ յայլոց
սահմանացն Ասիոյ, և վանեալ անդր քան
զՏաւրոս փակեցին զնա յԱսորիս, ուրա-
նօր նա յանձն էառ բիւր մի և հինգհա-
զար տաղանդաց գնոց գնել զխաղաղու-
թիւնն։ Դարձեալ և վայր մի յառաջ նկուն
արարեալ էր նոցա 'ի Թեսաղիա զՓիլիպ-
պոս, և փրկեալ զՀելլենայիս 'ի Մակե-
դոնացւոց։ Դարձեալ՝ և որում զուգա-
կշիռ ոչ ոք 'ի թագաւորաց յարիութեան
և 'ի քաջութեան՝ զԱննիբաղ 'ի պարտու-
թիւն մատնեցին նոքա։ Վասն այսոցիկ ա-
պա գժոխամբարելի յոյժ էր Հռոմայեցւոց
յայնժամ 'ի մարտին հաւասարակշիռ կալ
ընդ Պերսէոսի, իբրու որ ոգորել ընդ
Հռովմայ միայնակ բաւական ելցէ. քանզի
և հարուստ ժամանակ այնպէս կայր և կը-
ռուէր նա ընդ նոսա հանդերձ զօրականօքն՝
որ մնացին 'ի կոտորածէ անտի հօրն։ Ա՛յլ

ոչինչ գիտացին նոքա՝ եթէ Մակեդոնացւոց զօրն յետ հարուածելոյն Փիլիպպեայ՝ հզօր առաւել և մարտիկ ևս յարդարեցաւ, զոր սղագունիւք պատմեացուք՝ անդուստ 'ի վերուստ առնելով զսկիզբն։

Անտիգոնոս հզօր առաւել 'ի զօրավարն և 'ի պայազատն Աղեքսանդրի, անուն Թագաւորի ժառանգեալ անձին և սերնդոցն, ծնաւ որդի Դեմետրիոս անուն, հայր միւսոյն Անտիգոնոսի՝ որ կոչեցաւն Գոնատաս. 'ի սմանէ ծնաւ որդի Դեմետրիոս, որ ոչ բազում ժամանակ Թագաւորեալ՝ մեռաւ, Թողեալ մանուկ փոքրիկ՝ Փիլիպպոս անուն։ Յայնժամ աւագորեար Մակեդոնացւոց զանգիտեալ յանիշխանութենէն, 'ի մէջ մատուցին զԱնտիգոնոս զքեռորդի արքային վախճանելոյ, և զուգեալ զնա ընդ մօր մանկանն Փիլիպպոսի, կարգեցին զնա առաջին խնամակալու և զօրավար. բայց ապա զփորձ առեալ զչափաւորութեան և զհաստատակաց շինութեան 'ի ձեռն նորա, Թագ կապեցին նմա և յորջորջեցաւ նա Տոնատաս, քանզի խոստանայր և ոչ կատարէր նա զխոստացեալն։ Յետ մահուն սորա Թագ կապեաց Փիլիպպոս. և մինչդեռ տակաւին պատանեակ էր, ականաւոր երևէր նա քան զԹագաւորս հոյակապս. և Թուէր իմն այնպէս՝ եթէ ինքնին նա առեալ 'ի վեր տարցի զՄակեդոնիա 'ի նախնին իւր շուք, և միայնակ բաւական իցէ նկուն առնել զՀռոմայեցւոց զզօրութիւն՝ որ 'ի վերայ ամենեցուն ամբառնայր։

Ա՛ՅԼ ապա իբրև 'ի մեծի պատերազմին առ Սկոտուսեաւ հարեալ խորտակեցաւ նա 'ի Տիտոսէ Փլամինիոսէ, անկաւ բեկաւ՝ որպէս զի և զամենայնն զիւր 'ի ձեռս տայր Հռոմայեցւոց, և տուգանս ևս չափաւոր յանձն էառ տուգանել։ Իսկ յետ ժամանակաց չհանդուրժեալ, և զմոռաւ ածեալ՝ եթէ թագ կապել 'ի շնորհէ Հռոմայեցւոցն, գրգռեալ գերուոյ ելեալ մանաւանդ՝ քան մեծախորհուրդ և աւագ առն, 'ի կռիւ մարտի հաստատեցաւ և պատրաստէր կազմէր 'ի ծածուկ հնարիմաց խորհրդով։ Քանզի անփոյթ արարեալ զքաղաքացն սահմանակցաց և զծովեզերեայց, և լքեալ զնոսա այնպէս անկազմ և ամայի, զի արհամարհ երևեսցին և անկասկածք, զոր բազում հատեալ գումարէր 'ի վերնագաւառսն, և զմիջերկրեայ զվայրսն և զբերդսն և զքաղաքսն պատրաստէր ընոյր բազում զենու և արծաթով և քաջառոյգ որերով, և անդ հանդերձէր կազմէր զպատերազմն զանխուլ և 'ի ծածուկ։ Քանզի որ անդանօր ամբարեալ զէնք անգործ՝ շատ էին 'ի պէտս երից բիւրուց զօրականին. և ցորեանն մթերեալ 'ի շտեմարանս՝ էր ութ հարիւր բիւրուց գրուաց. իսկ արծաթոյ մթերքն՝ բաւական զամս տասն թոշակաւորել բիւր մի վարձկան զօրականին 'ի պահպանութիւն Մակեդոնիոյ։

Ա՛ՅԼ ոչինչ կարաց մոցել զոր կամէր, և 'ի գլուխս տանել՝ զոր խորհէր։ Քանզի կանխեալ գրաւեալ յանձկութենէ սրտին՝

զրաւեցաւ 'ի կենացն. քանզի 'ի վերայ ե-
հաս Ճշդրիտ՝ զի յանկրաւի եւ սպանանել
զորդին իւր զԴեմետրիոս 'ի քսուԹենէ
միւսոյ զաւակին՝ որ վատԹարագոյն ևս էր
քան զնա։ Ապա Պերսէոս մնացեալ նմա
'ի զաւակացն՝ յաջորդեաց ընդ ալքայու-
Թեանն և զԹշնամուԹիւնն ընդդէմ Հռո-
մայեցւոց, Թէպէտ և ապիկար 'ի մրցանն
առ վատուԹեանն և առ վատԹարուԹեան
վարուցն. զի էր իսկ նա անկոլնոսացեալ
յախտս բազմադէմս, այլ արծաԹսիրու-
Թիւնն մեծապէս գրաւեալ կալաւ զնա։
Առ այս՝ և ասեն զնա ոչինչ հարազատ.
այլ կին Փիլիպպոսի զնորածին մանուկն
առեալ ելեալ 'ի ձեռաց կնոջ ուրուսի դեր-
ձակի Արգոսացւոյ՝ անուն ԳնաԹէնիէ, և
այնպէս անյայտաբար սնուցեալ. և Թուի
մանաւանդ վասն այնորիկ՝ նորա մահ նիւ-
Թել Դեմետրեայ, զանգիտեալ եԹէ առ
հարազատ պայազատուԹեամբն՝ նշաւա-
կեսցի անհարազատուԹիւն նորա։

Արդ Թէպէտ և այնչափ անարի սա և
վատ, 'ի վեր բերեալ առ 'ի յաջողուԹէն
յայնժամ՝ մեսեցաւ 'ի մարտ, և հարուստ
մի ժամանակ մարտ եղեալ կռուեցաւ ընդ
Հռոմայեցիս. եհար խորտակեաց 'ի նոցա-
նէ զօրավարս հիւպատեանս և զօրս և բա-
նակս զնաւաց մեծամեծս, և կուտեաց ժո-
ղովեաց ևս բազում դերի։ Քանզի 'ի մար-
տի այրուձիոյն 'ի փախուստ դարձոյց ըզ-
Պոպլիոս Լիկիննիոս, որ առաջին մեսեցաւ
ԹշնամուԹեամբ 'ի Մակեդոնիա, եհար

սպան զնորա զերկու հազար և զհինգ հա-
րիւր 'ի քաջ զօրականէն, և վեցհարիւր ևս
ձերբակալ արար։ Եւ յորժամ նաւատորմիղ
Հռոմայեցւոց հանգուցեալ կայր առ
Ովիէոնիւ, նա յեղակարծումն անկաւ 'ի
վերայ, և առ կալաւ նաւս քսան հանդերձ
բեռամբքն. իսկ զայլսն անդնդասոյզ առ-
նէր՝ բեռնաբարձս ցորենոյ, առնոյր և նա-
ւակս չորս՝ հնգաթիակս։ Կռուեցաւ և
երկրորդ մարտ պատերազմի, և վանէր նա
յայնժամ զԹոսիկլիոս զայր հիւպատոսեան՝
որ անցեալ ընդ Եղիմիա բռնի միջամուխ
կամէր լինել 'ի Մակեդոնիա. իսկ յորժամ
և դաղուսագողի խնդրեաց նա մտանել անդր
ընդ Թեսսաղիա, ձայն կարդաց նմա Պեր-
սէոս 'ի կռիւ կաքաւել, և զարհուրեցոյց
զնա։ Ապա արհամարհեալ նա զՀռոմայե-
ցւովք և պարապեալ 'ի նոցանէ, իբրև 'ի
դուլ մարտի արշաւէր ընդդէմ Դարդա-
նացւոց. բիւր մի 'ի բարբարոսացն 'ի սուր
սուսերի մաշէր և դառնայր գայր բազում
աւարաւ։ Առ այս՝ և 'ի ծածուկ հրապու-
րէր նա զԴաղատացիսն բնակեալս առ Խ-
տրեաւ՝ որ անուանեալ կոչէին Բաստար-
նացիք. զօր հեծելազօր էին նոքա և մար-
տիկ։ Ապա սադրէր և Լիւրիկեցւոց 'ի ձեռն
Գենեթիոսի նոցուն արքայի՝ յուխտ դաշին
մտանել ընդ իւր 'ի նոյն մարտ։ Եւ լուր
ևս զհամբաւի հարաւ՝ եթէ խուժադուժքն
վարձեալք առ 'ի նմանէն, պատրաստեալ
կային մինչ յիտալիա ընդ ստորին Գաղա-
տիա քերեալ առ Ատրիայիւ։

Իբրև այս ամենայն ազգումն հասանէր առ Հռոմայեցիս, հաճոյ թուեցաւ նոցա յընտրութեան զօրավարի՝ այնուհետև ոչ շնորհս ինչ առնել և ոչ երեսս, այլ զայր հանճարեղ և զքաջահմուտ 'ի մեծամեծս՝ յառաջ կոչէլ 'ի գործն։ Սա ինքն էր Պաւղոս Եմիլիոս լցեալ աւուրքք՝ ամաց իբրև վեցթանից, սակայն և առոյգ անձամբ և կորովի։ Շուրջ զնովաւ պատեցան մերձաւորք և որդիք պատանիք և բարեկամաց բազմութիւն և ազգակցաց՝ ճոխք և աւագք, առհասարակ ածէին հաւանեցուցանէին անսալ ժողովրդեան՝ որ յաւագութիւն անդր հրաւիրէին զնա. իսկ նա զառաջինն խուսափէր առաջի ժողովրդեանն՝ խոյս տուեալ 'ի հրաւիրմանէն, իբրու որ առաջնորդութեան անձուկ երբէք չունիցի։ Այլ իբրև այնպէս օր ըստ օրէ բազում որեար խռնէր առ դուրսն և 'ի հրապարակ անդր կարդային զնա և 'ի տրտունջ ևս հատանէին, ապա զիջանէր 'ի կամս նոցա։ Ա՛յն ինչ եկեալ երևեալ նոքա 'ի հետամուտսն 'ի հիւպատոսութիւն, թուեցաւ իմն այնպէս ոչ զզօրավարութիւնն առնուլ, այլ թէ 'ի հրապարակէն անդէն չու 'ի բանակ արարեալ՝ զյաղթութիւնն գլխովին 'ի գլուխ տանել. այնպէս անխաբ յուսով զուարթագին առհասարակ ընկալան զնա և կարդեցին 'ի հիւպատոս այս երկիցս անգամ. և թոյլ չետուն վիճակ հանել վասն գաւառացն ըստ սովորութեանն, այլ անդէն վճիռ ետուն նմա

զառաջնորդութեամբ 'ի Մակեդոնեան մարտին։ Եւ պատմեն՝ եթէ զօրավար ընդդէմ Պերսէոսի կացեալ և շքով 'ի Ժողովրդոցն յուղարկեալ 'ի տուն, անդ գտանէր նա զդստրիկ իւր զՏերտիա տղայ՝ զի լայր. գիրկս ածեալ նմա Եմիլիոս հարցանէր ըզ պատճառ տրտմութեանն. նա խաղապատեալ զհարբն և համբուրեալ, ասէր. "Եւ չգիտիցէ՞ս դու ո՛վ հայր, զի Պերսէոսն մեր մեռաւ". ասէր վասն ընդասուն սկնդին՝ զոր յայն անուն կոչէին։ Իսկ Եմիլիոս, "Վա՜յ, ասէր, դեղեցիկ բախտին, ո՞վ դուստր. ընդունիմ զդուշակութիւնդ"։ Եւ զայսոսիկ պատմէ մեզ Կիկերոն հռետոր 'ի գիրս դուշակութեան։

Ա՜յլ քանզի սովորութիւն էր, որք հիւպատոսն լինին՝ փոխարէն ինչ բարբառել 'ի բեմէն և շնորհս ունել ժողովրդեանն մարդասիրագոյն բանիւք, 'ի մի խմբեալ Եմիլիոս զքաղաքն՝ ասէր, յառաջնում նուագին իշխանանալ 'ի խնդրոյ անձին՝ ուրում պէտք էին աւագութեանն։ Իսկ յերկրորդումն՝ 'ի խնդրոյ նոցա որոց պէտք են զօրավարի, ուստի և ո՛չ շնորհս ունել։ Իսկ եթէ երբէք համարեացին նոքա՝ 'ի ձեռն այլոց քաջիկ ևս յարդարել մարտին, մոռադիւրագոյնս ինքնին տեղի տայ 'ի զօրավարութենէն. ապա եթէ 'ի նա վստահ իցեն՝ ո՛չ կամի 'ի զօրավարութեան գործն խառնել նոցա և բանիւք ժամանաճառ լինել, այլ անդէն լուիկ զպէտս պատերազմին ընուլ. քանզի 'ի վերայ զօրավարացն

կամելով զօրավարել, ևս ծիծաղելիք քան յայնժամ՝ եղիցին նոքա 'ի զինուորութեանն։ Զայս այսպէս խօսեցաւ Եմիլիոս, և մեծապէս պատկառ կացին նմա Ժողովուրդք. և 'ի յոյս հանդերձելոցն առհասարակ ցնծային, զի 'ի բաց զմարդելոյզն տարեալ՝ զօրավար ընտրեցին ազատաբերան և պարզախօս և քաջախորհուրդ։ Զայս օրինակ ապա առ 'ի տիրանալ գեր 'ի վերոյ ամենեցուն, առաքինութեան և լաւութեան սպաս հարկանէր Ժողովուրդ Հռոմայեցւոց։

Արդ յայն արշաւանսն չու արարեալ Եմիլիոս, այն՝ զի այնպէս յաջողակի նաւեալ անցեալ՝ արագ արագ ողջամբ եկն եհաս 'ի բանակն, քաջ խակ բախտին ընծայեմ։ Սակայն 'ի զօրավարութեան մարտին և 'ի մրցանսն, քանզի կէս մի տեսանեմ 'ի գլուխ տարեալ ժիրաժիր արութեամբ, և կէս մի գեղեցիկ խորհրդովք, կէս մի 'ի ձեռն սպասարկու և փոյթ բարեկամացն, և կէս մի դարձեալ՝ ինքնին դիմագրաւ 'ի գժնդական եղեալ, և հնարիմացութիւնս ևս ճահաւորակի 'ի վար արկեալ, ապա և ոչ զմի յառաքինի նահատակութեանց առն գրեցիս ես իւրումն գերահռչակ բախտին, որպէս 'ի նահատակութիւնս այլոց զօրավարացն. բայց թէ ումեք կամք լցեն գրել գեղեցիկ բախտին Եմիլիոսի զընչաքաղց արծաթասիրութիւն զՊերսէոսի, որ այնպէս ճղճիմ 'ի ծախսն արծաթոյ՝ առեալ տապալեաց զչքեղ և

զմեծամուր հանդերձանս մարսի զՄակեդոնացւոցն՝ յորս յուսով խնդային նոքա։ Քանզի 'ի խնդրուածոց նորա եկին հասին նմա 'ի Թիկունս Բաստարնացիք, բիւր հեծեալք և բիւր հետևակք՝ առհասարակ վարձկանք. ալք՝ որ ոչինչ գիտէին ոչ զերկիր գործել, ոչ նաւագնաց լինել, ոչ 'ի հօտից խաշանց կերակուր պատրաստել. այլ էր նոցա գործ և արուեստ միակ՝ մարտ դնել կռուել և զթշնամին պարտել։ Իբրև եկեալ խմբեցան ընդ զօրս Թագաւորին բանակ հարեալ 'ի Մեդիկա, և էին նոքա ալք վիթխարիք յաղթամարտինք և շոյտք, և պանչելիք 'ի կրթանս, և բոհմունս տային յախուռնախօսս, և հրացայտք գոռային 'ի թշնամիս անդր, յոյժ քաջալերութիւն զգեցան Մակեդոնացիք. եղին 'ի մտի եթէ ոչինչ բաւեսցեն Հռոմայեցիք հանդարտել առաջի նոցա բուռն յարձակմանն. այլ թէ առ տեսիլ նոցա միայն, և 'ի խաղալ խօլացն այնոցիկ և ահեղիցն՝ զգողանի հարեալ պակնուցուն։

Իբրև օրինակ զայս խրախուսեաց Պերսէոս զմարդիկն, և յուսով բարեացն խընդացուցանէր, այլ ապա իբրև լուաւ եթէ առ մէն մի 'ի զօրապետաց խնդրեն նոքա 'ի նմանէ հազար դահեկան ոսկի, յապուշ հարաւ՝ այլ յայլմէ լինէր Պերսէոս, զմտաւ ածեալ զյոլովութիւն ոսկւոյն. և 'ի ձղձիմ կրիցն սարտեաւ և օտարանայր 'ի նիզակակցաց անտի և առեալ 'ի բաց արձակէր զնոսա. իբրու որ տնտես գաւառապետ Հռո-

մայեցւոց կացեալ էցէ և ոչ ընդդէմ մար-
տադիր, և համարս Ճշդիւտ զծախուց մար-
տին հասանիցէ նմա 'ի ներքս բերել նոցա՝
ընդ որոց մարտ եղեալ կռուիցի. ուր և 'ի
նոցունց դարձեալ հրահանգել պարտ էր
նմա, քանզի բաց յայլոց կազմածոց մար-
տին՝ զոր տասն բիւր խմբեցին յայնժամ
Հռոմայեցիք՝ կազմ և պատրաստ յամե-
նայն 'ի պէտս։ Իսկ սա այս Պերսէոս՝ ո-
րում հասանէր զայն կռիւ կռուել ընդ
այնպիսու

հասարակ յոսկի համակեալ, վայր մի 'ի դրամոցն ջծախէր 'ի փրկութիւն անձինն. և ինդրեաց մանաւանդ անկանել դէրի 'ի միասին ընդ ամբաւ մթերիցն, և զառաջեաւ Հռոմայեցւոցն բերել դնել՝ զոր իբնայեալ պահեաց վասն նոցա։ Քանզի ոչ զԳաղատացիան միայն 'ի դերևս եհան, այլ և զԳենթիոս ինքնին զԼիւրիկեցին հրապուրեալ երեքհարիւր տաղանդաք միամտել ընդ իւր 'ի մարտն, համարեալ ըզդրամն և 'ի ձեռս տուեալ հրեշտակաց նորա և կնքեալ. ապա 'ի վստահ լինել Գենթիոսի, նա անդուստ հնարիմաց խորհրդով թակարդեաց զայրն յեղեռն՝ սադրելով նմա ձերբակալ զՀռոմայեցւոց դեսպանն առնել որ էկին առ նա և բանտել. և այսպէս յանիրաւութենէ անտի անզէրծ շաղեալ զայրն 'ի կռիւ այնուհետև ընդ նոսա՝ առանց սլիտելոյ հրապուրիչ արծաթոյն, յինքն միւսանգամ դարձուցանէր զերեքհարիւր տաղանդն և զրկէր զՀիդացեալն Գենթիոս։ Այլ և ոչ յետ այնորիկ փոյթ ինչ եղև Պերսէոսի վասն նորա, յորժամ յետ սակաւուց բարձաւ նա յսրբայութենէն՝ իբրև 'ի սեպհական բունոյն՝ հանդերձ որդւովքն և տիկնաւն 'ի ձեռն Լեւկիոսի Անիկիոսի՝ որ չու արար խաղաց զօրու 'ի վերայ նորա։

Արդ ընդդէմ սորա յայնժամ խաղաց դնաց Եմիլիոս. թէպէտ և արհամարհէր ևս զնովաւ, զարմացեալ էր ընդ պատրաստութիւն հանդերձանացն և ընդ զօրու-

թիւն նորա. քանզի և էին իսկ Պերսէոսի երիվարք չորք հազարք, և փաղանգ հետեւակազօրուն չորիւք բիւրուք չափ. և զակիշ գործեալ նատէր ընդ երկայնութիւն ծովափանցն առ լեռնոտամբ Ողիւմպիոյ, յամուրս անխաբս շուրջանակի և 'ի վայրս ամրածածուկ 'ի պատանէշս և 'ի շերտափակս. և այնպէս յանդորրու զտեղի առեալ՝ եդ 'ի մտի եթէ 'ի ժամանակէն գլխովին և 'ի մեծաց ծախուցն վատթարեալ ինքնին նըկուն եղիցի Եմիլիոս: Իսկ Եմիլիոս ոչինչ պարապորդ 'ի խորհուրդս մտաց՝ յուզէր խնդրէր և զամենայն հնարս հնարէր. և տեսեալ զի զօրականք անդստին 'ի սկզբանէն արձակերատանք՝ դժկամակեալ կային ընդ դեգերանն. և զի առհասարակ ինքնայեալք Ճոխաբար խօսէին՝ զինչ գործել պարտ էր և ոչ գործեցաւ, կշտամբէր սաստէր Եմիլիոս և հրամայէր մի տագնապիլ մի վարանել, այլ այր այր իւրաքանչիւր կազմ ունել զանձն և զսպառազինութիւնն, և իբրև այր հռոմայեցի շարժել զսուրն 'ի ժամուն՝ ազդեալ 'ի զօրավարէն: Ապա պատուէր տայր գիշերապահ զօրականին անդեղարդունք պահ ունել, զի արթունք զուարթունք առաւել՝ մի պարտեսցին 'ի քնոյ. իբրու որ անզէնք՝ ոչինչ ունիցին պաշտպանել անձանց յանկանել թշնամւոյն 'ի վերայ: Բայց առ անջրդութեան վայրացն սաստիկ տանջեալ զօրականին, (քանզի ջուր սակաւ և չար բղխէր առ ծովեզերքն), դէտ ակն կալեալ Եմիլիոս յՈ-

ղիւմպոս 'ի վերոյ նոցա՝ լեառն ահագին և անտառախիտ ծառովք, 'ի դալարագեղ մայրեաց անտի խելամուտ լինէր ականց ջրոյն և ստորերկրեայ գնացիցն. ընդ զառ 'ի վայր լերինն խորս բազումս հատանէր և փոսս, և անդէն ականակիտ վտակք փութապէս խոխոջեալք յորդ և առատ՝ լցին զփոսս, ընդ պատառուածսն 'ի դուրս բերեալք սաստկութեամբ՝ որ անդանօր պարանեալ ջուրքն։

Թէպէտև ասցեն ոմանք՝ որ ասիցեն, չէք շտեմարանք աղբերաց ջրոց ամբարեալ 'ի ներքոյ յակունսն՝ բղխեցուցանել զնոսա պատառելով զգետինն. այլ թէ անդէն 'ի ժամուն 'ի փոսսն հանդերձի կազմի ջուր առ 'ի լուծանելոյ խտացեալ նիւթոյն. և թէ՝ 'ի ջուր անշուշտ փոխին գոլորշիք գիձինք հոծեալք 'ի ցրտոյն, յորժամ 'ի խորխորին վայրս անդ արգելեալք՝ լուծանին 'ի ջուր գնայուն։ Քանզի զորօրինակ ստինքդ կանանց՝ ասեն՝ չեն արդեօք իբրև զսիկս լցեալ նախահամբար կաթամբ, այլ գործեն կաթն և անդէն բղխեն՝ 'ի նոյն փոխելով զկերակուրն 'ի ստինսն. սակայն և վայրք ցրտինք գետնոյ և աղբերահոսք չունին ջուր ընդերկրեայ, և ո՛չ ծոցս և գոգս 'ի գնացուցանել հոսանս և գետս մեծամեծս 'ի պատրաստեալ և յամբարեալ ականց. այլ ճ՛նշեալ և հոծեալ զշունչն և զօդն՝ ապա լուծեալք փոխեն 'ի ջուր։ Եւ վասն այնորիկ վայրք պեղեալք հեշտին ցայտեցուցանեն ջուր՝ 'ի հարուլ

նոցա և 'ի քրքրեալն (ըստ որում և ստինքդ կանանց գլխովին 'ի դիեալն), յորմէ և շոգիքն քնքշեալք շրջին և փոխին 'ի հոսանուտ։ Իսկ վայրք գետնոյ անգործքն և անմատոյցքն՝ ամուլք են 'ի ծնունդ ջրոյ, չունելով շարժումն ներգործական առ 'ի հոսանուտն։ Այլ որ զայսոսիկ ասեն, պատճառս տան նոքա և Կաղակարծ աղանդոյն 4, փաստս յուզել ցուցանել՝ եթէ և ոչ 'ի կենդանիս գուցէ անշուշտ արիւն, այլ թէ անդէն 'ի խոցել և 'ի հարկանել մարմնոյն ծնանիցի՝ 'ի փոփոխմանէ ինչ ոգւոցն կամ մարմնոյն, յորմէ և հոսանուտդ այդ կազմեսցի արագ արագ վիժեալ յայնժամ արտաքս։ Այլ սակայն զդոսա ամի 'ի բերան արդեաք արասցեն մարդիկն՝ որք 'ի բովս և 'ի խորափոսս մետաղաց պատահեն հոսանաց գետոց, որ ոչն արդեաք տակաւ տակաւ եկեալ ժողովին (ըստ որում 'ի դէպ էր՝ եթէ անդէն 'ի պեղել հողոյն երևեսցին դոքա), այլ խոխոջեալք յորդեն 'ի դուրս միահամուռ։ Դէպ եղև՝ զի և 'ի ճայթել պատառել լերանց և վիմաց, յորդեաց ջուր առատ, և ապա ցամաքեցաւ։ Սակայն վասն այսոցիկ այսչափ հերիքասցի։

Արդ անդանօր Եմիլիոս այնպէս եկաց մնաց յանդորրու աւուրս ինչ. և ասեն՝ թէ երբէք ուրեք ոչ տեսաւ՝ եթէ կրկին բանակք այնպէս ահագինք և մեծամեծք 'ի հանդիպոյ այնչափ մերձ ճակատեալք միմեանց՝ յայնչափ յանդորրու երբէք կա-

ցեալք իցեն։ Իսկ իբրև յուզեալ և խընդրեալ զամենայնն, լուր էառ Եմիլիոս՝ եթէ տեղի մի անպահապան լքեալ կայ 'ի Թշնամեացն, և անդուստ մարթի անկանել 'ի վերայ բանակին՝ անցեալ ընդ մէջ Պերրեբեայ մօտ 'ի Պիւթիոն և 'ի Վէմն, քաջալերեցաւ յանպահպանութենէ տեղւոյն՝ քան թէ զանգիտեաց ինչ յառապարից և 'ի դժուարիցն՝ որ աղագաւ անխնամ թողեալ էր վայրն. 'ի խորհուրդ ապա եմուտ վասն բանին այնորիկ։ Անդ 'ի խորհրդեան նոցա՝ առաջին նահատակեցաւ Նասիկաս մականուանեալն Սկիպիոն՝ փեսայ Ափրիկանոսի Սկիպիոնի, որ և ապա աւագ այր 'ի Սինկղիտոսին. սա յառաջագէմ ընծայեցաւ առաջնորդ զօրավար 'ի նոյն շրջանն հասանել անկանել 'ի վերայ Թշնամւոյն. յետ նորա նահատակեցաւ դիմագրաւ և Փաբիոս Մաքսիմոս երէց որդի Եմիլիոսի, թէպէտ և տակաւին պատանի։ Իսկ Եմիլիոս յայնժամ յանձն իւր զուարճացեալ՝ տայր նոցա 'ի ձեռս 'ի զօրականէն, ոչ որչափ ինչ պատմէ Պողիբիոս, այլ որչափ ինքնին Նասիկաս ասէ առեալ ընդ իւր՝ դրեալ վասն շահատակութեանս այսորիկ նամակ առ մի ոք 'ի Թագաւորաց 5։ Երեք հազարք թուով՝ արտաքոյ կարգին՝ էին յիտալացի զօրականէն, և հինգ հազարք դարձեալ 'ի ձախոյ թևին. ընդ սոսա առեալ Նասիկաս և երիվարս հարիւր և քսան, և երկերիւր ևս որեար որ յԱրպաղոսէն՝ խառն 'ի թրակացւոց և 'ի կրետացւ-

ւոց, խաղաց գնաց 'ի ծովակողմն կոյս. բանակ հարեալ նստէր մօտ յԵրակլեան, իբրու անդուստ շուրջանակի նաւէլ և պաշարումն 'ի վերայ բանակի թշնամւոյն ածէլ։ Իսկ իբրև ընթրեաց զօրականն և մուրթն 'ի վերայ հասանէր, 'ի վեր եհան նա զօրապետացն զկորհուրդն. և գիշերի առեալ զզօրն՝ գիմեալ գնայր ընդ հակառակս Ճանապարհի ծովուն, և եկեալ հասեալ 'ի նեղքոյ Պիւթիոնին, անդ յանձանձեալ հանգիստ տայր զօրականին։ 'Ի նոյն վայր ամբարձաձիգ կանգնի Ողիւմպոս 'ի վեր՝ ասպարիսաց առաւէլքան զտասն. զոր յայտ առնէ մեզ Վերտառութիւն առն՝ որ չափեացն զնա, այսպէս. "Ողիւմպեայ գագաթանն՝ անդուստ 'ի Պիւթեանն Ապողոնի տաճարէն՝ բարձրութիւնն ըստ կարակնածիր չափուն, տասն ասպարիսաց է, և լծաւար մի՝ չորս ոտնաչափիւ նուազեալ։ Եմիլեայ որդի Քսենագորէս եհ զչափն ուղղոյն։ Իսկ դու ոմ Ազքայ ոմք լեր, և բարօրութիւնս տուր"։ Թէպէտ և երկրաչափք ասեն, չիք բարձրութիւն լերին և ոչ խորութիւն ծովու առաւէլքան զտասն ասպարիսաց. այլ թուի թէ ոչինչ հարևանցի զնոյն չափ չափեալ ելցէ այս Քսենագորէս, արուեստ և գործիս 'ի վար արկեալ 'ի պէտս գործոյն։

Ապ Նասիկաս անգանոր զտեղի առեալ նստաւ զգիշերն ողջոյն. իսկ 'ի զօրացն ասի նորա Կրետացի ոմն ինքնին գաղտագնաց եղեալ յուղղոյն և անցեալ առ Պեր-

սէոս, որ ոչինչ խրազգած լեալ էր բանին՝ տեսեալ 'ի հանդիպոյ իւր բանակեալ զԵմիլիոս, պատմէր նմա վասն շրջանապատոյտ ուղւոյն՝ զոր հատին Հռոմայեցիք։ Զահի հարաւ Պերսէոս. սակայն զտեղի կալեալ՝ տայր 'ի ձեռս Միղոնի բիւր մի յեկաց զօրականէն և երկու հազար ևս 'ի Մակեդոնացւոց, հրաման տուեալ խաղալ ճեպով հասանել ունել զբարձունսն։ Արդ Պողիւբիոս պատմէ, եթէ 'ի քուն լինել նոցա անկան 'ի վերայ Հռոմայեցիք. այլ Նասիկաս գրէ՝ սաստիկ դոռի պատահել զբարձամէջն, և ինքնին Նասիկաս 'ի վեղ եկեալ ընդ վարձկանի ումեմն Թրակացւոյ՝ Թաւի ընդ լանջն անցուցեալ ըզտէգն՝ տապաստ յերկիր արկանել զայրն, և 'ի բուռն յարձակմանէն խուճապել Թշնամեացն և տեղի տալ. և Միղոնի ինքնին անարգաբար փախուստ խնդրել անդէն միով բաճկոնիւ. և ինքն զհետ մոռեալ վանեալ՝ ողջամբ զզօր իւր առեալ իջուցանէ 'ի գիւղն միանգամայն։

Բայց Պերսէոս յայն տագնապ զահի մեծի հարեալ, և գրեա՛ Թէ յուսակտուր՝ անդէն ժողովեալ զբանակն տեղի տայր 'ի վայրացն. սակայն և վարանեցաւ 'ի կրկին տարակոյս՝ արդեօք զտեղի առեալ յանդիման Պիւդնայ 'ի դիմի՞ հարկանել Թշնամւոյն, եթէ ընդ քաղաքս քաղաքս բաշխեալ զզօրն՝ զմարտ պատերազմին 'ի նեղքս առնուլ բերել. բայց և միանգամ յաշխարհն զկռիւն ածեալ բերեալ՝ հնար չէր

այնուհետև առանց ամբաւ կոտորածի 'ի բաց զնոյն տանել։ Ապա անդանօր բարեկամքն մերձ կացեալ խրախոյս տային նմա, զի բազմագոյն են նորա զօրք, և նորա զօրականք քաջալերութեամբ լի են և վառեալք կազմ՝ մարտ դնել կռուել 'ի վերայ որդւոց և կանանց. ուրանօր և զիւրեանց արքայն հանդիսատես ունին նահատակութեանն, և կարապետ և գիմագրաւ նահատակ։ Յայսպիսեաց ասել Պերսէոսի խրախոյս տային բարեկամք. և նա բանակ հարեալ և 'ի կռիւ պատրաստեալ, դէտակն կալեալ զնեալ զվայրն, կարգէր բաշխէր զգնդապետսն, և երկայնէր ձգէր զճակատն, արագ արագ անդէն խաղալ անկանել 'ի վերայ Հռոմայեցւոցն։ Էր անդ հովիտ յարմարաւոր 'ի դէպ վասն փաղանգին, զի և էր իսկ դաշտավայրն գիւր և գեաւինն հարթհաւասար. դարձեալ և յայսկոյս յայնկոյս 'ի վայրին գոտիք բլրոց՝ ապաւէնք թեթեւազէն զօրականին, անդուստ ասպատակ հանել սփռել շուրջանակի։ Իսկ 'ի միջոցին գնային կրկին գեղք՝ Էսոմն և Լեւկոս, թէպէտ և սակաւաջուրք յայնժամ (զի վերջ էր ամրայնոյն), սակայն և ոչինչ այնպէս դիւրանցանելի Հռոմայեցւոց։

Ապ Եմիլիոս, իբրև եկն եհաս առ նա Նասիկաս, ելեալ 'ի ճակատ զօրուն՝ կամէր անդէն մղել մարտ ընդ թշնամիսն. իբրև ետես զի այնպէս կարգեալ ճակատեալ կայր ամբաւ բազմութիւն նոցա,

յապուշ հարեալ՝ զտեղի կալաւ. այնպէս կայր և խորհէր 'ի միտս իւր։ Իսկ յայնժամ 'ի զօրտպետացն Երիտասարդք խրախուսեալք վառեալք միջամուխ 'ի մարտն լինել՝ եկեալ աղաչէին զնա մի ևս դանդաղել. առաւել ևս Նասիկաս մեծապէս քաջալերեալ 'ի գեղեցիկ մրցանն, զոր տարաւ Յողիւմպոս։ Յայնժամ Եմիլիոս ժըպտեալ ասէր. "Քաջ է, եթէ և իմ՝ քո հասակն էր. այլ զիս բաղում յաղթութիւնք խելամուտ արարին յանցանաց պարտեցեալոցն. և չուան ինձ թոյլ՝ այնպէս իբրև յուլլոյ անդէն 'ի կուիս կաքաւել ընդ փաղանգի, որ այնպէս վառեալ և գեղեցիկ ճակատեալ կայ"։

Ապա պատուէր հրամանի տայր զօրականին իւրոյ, զի որ միանգամ 'ի հանդիպոյ երևեցան թշնամեաց՝ բաշխեալք 'ի գունդս գունդս՝ կարգեսցին կացցեն իբրև 'ի ճակատամարտ. իսկ որք 'ի թևսն իցեն՝ դարձցին եկեսցեն զակիշ գործել և ամրուղի բանակին ածել. և ապա զմի մի 'ի նոցանէն և տակաւ տակաւ 'ի բաց առեալ՝ սկսեալ 'ի յետնոցն, այնպէս զանխուլ 'ի թշնամեացն՝ ելոյծ առհասարակ զճակատամարտն. և անչշունչ առեալ զիւրսն զամենայն մուծանէր 'ի զակիշն։ Իբրև դիշեր 'ի վերայ հասանէր, և հաց առին զօրականք և դարձան առհասարակ 'ի հանդիստ քնոյ, յայնժամ նսեմանայր լիապատար լուսին 'ի բարձու՝ տակաւ նուազեալ 'ի լուսոյն և 'ի գոյնս գոյնս հատանէր, մինչև իսպառ խա-

ւարեցաւ։ 'Ի նոյն տեսիլ հռոմայեցիք՝ ըստ հայրենի սովորութեանն սկսան ձայն բարձեալ՝ զլոյսն անդրէն 'ի լուսին անդր հրաւիրել՝ շաչիւն շառաչիւն արձակելով զպղնձեաց, և 'ի վեր յերկինս ձգէին բազում զամբարս բորբոքեալս և ջահս։

Իսկ Մակեդոնացիք ոչինչ յայսպիսեաց, այլ նոցա առհասարակ բանակ լի էր արհաւրօք, հծծէին շշնջէին՝ եթէ արքային խաւարելոյ նշանակ լցէ հրէշդ։ Այլ Եմիլիոս ոչինչ անլուր և անտեղեակ անհաւասարութեանն խաւարածրին, եթէ 'ի նմա պարագայեալ լուսինն և հասեալ 'ի ստուերն երկրին մերոյ՝ ծածկի, և անցեալ ընդ նոյնն՝ միւսանգամ պայծառասցի յարեգակնէ. համայն և այնպէս՝ քանզի շատ ինչ ընծայեր նա աստուածակոչմանն և զոհասէր յոյժ էր և գուշակ, անդէն 'ի պայծառանալ լուսնին՝ որթս մետասան առեալ յաղեր նմա. և ընդ այգանալ աւուրն՝ յաղեր և հերակլեայ եղենս քսանիւք ջափ, և ջերմեր ինչ նշան. յաղեալ զքսանեերորդ առաջնեերորդն գիտեր նշան, եթէ նոքա յաղթեսցեն՝ որք ոչինչ գիմագրաւք՝ միայն պաշտպանեսցեն անձանց։ Ապա ուխտս եդեալ գիւցն այնմիկ յաղել հարիւրեղեան, և նուիրական ևս կարգեալ մրցանս նմա, հրաման տայր զօրապլխացն հանդերձեալ զզօրն 'ի կարգ պատերազմի. և ինքն սպասեալ բոլորելոյ արևուն և հոլովելոյ 'ի մուտս կոյս, զի 'ի կռուին 'ի հանդիպոյ մի ինչ նեղեսցին նոքա 'ի գիմահար

արեգակնէն, այնպէս ժամավաճառ լինէր բաղմեալ 'ի վրանին յանդիման դաշտին և բանակի Թշնամեացն։

Իբրև օրն տարաժամէր, կէսք ասեն՝ հնարխնաց խորհրդով Եմիլեայ գրգռել մարտին. երիվար մի անսանձ արձակեալ 'ի Թշնամիս անդր, որում զհետ մտեալ Հռոմայեցիք, և անդուստ գրգռեցաւ դոռն։ Իսկ կէսք՝ Էթէ դունդ մի Թրակացւոց և զօրագլուխ նոցա Աղեքսանդրոս անուն, 'ի դիմի հարեալ գրաստուցն Հռոմայեցւոց համբարածուաց, որոց 'ի Թիկունս հասեալ Էօթն հարիւր Լիդիւացւոց, դարձեալ և այլոց բաղմաց յերկուց կողմանց, այնպէս միջամուխ խառնեցան երկոքին կողմանքն յայնժամ։

Ա՛յլ Եմիլիոս արդարև իբրև իմաստուն զեկավար՝ յառաջին անտի կոհակացն և ծփանաց խելամուտ եղեալ ահագին մրրկին՝ որ յառաջոյ, էլ արտաքս 'ի վրանէն. և ընդ կարգս կարգս զօրականին շուրջ էկեալ՝ խրախոյս կարգայր. և Նասիկաս ինքնին մտրակ 'ի կուշտ երիվարին՝ յառաջեալ մինչև 'ի վայրն ուր խառնեցաւ մարտն, դէտակն կալեալ տեսանէր՝ զի առհասարակ Թշնամիք խուռն և համուռ հանդերձեցան 'ի դոռն։ Յառաջ նահատակեալ խաղային դային Թրակացիք, որոց տեսիլն միայն՝ որպէս ասեն՝ ահ արկանէր. զի և էին իսկ նոքա արք վիԹխարիք անարիք՝ բարձեալք ասպարս ասպիսակս և փայլունս, պատենազէնք 'ի սռնապանս, արկեալք

զանձամբ տառատոկ սեաւ, գնային շարժէին՝ և տէգք և աշտէք ուղիղք երկաթագամբ ծանրեալք յայլոյ ուս նոցա։ Զհետ Թրակացւոց Էլանէին զօրականք վարձկանք՝ վառեալք 'ի ջէն 'ի զարդ գունակ գունակ, միահամուռ ընդ սոսա խաղային և Պէոնացիք։ Ապա գիմեալ գայր գունդ մեծ երրորդ ընտիր ընտիր նահատակացն Մակեդոնացւոց, երիտասարդք առոյգանձինք, յաղթք և կորովիք, արձակեալք ճաճանչ յոսկեպատ զինուցն և 'ի նորագործ ծիրանեացն։ Ապա զհետ կարգեալ ճակատուն սոցա՝ 'ի ղակշէն 'ի դուրս ելեալ գայր փաղանգ զօրականին պղնձասպարք. և փայլատակունք առհասարակ հատան 'ի դաշտին 'ի փայլուն երկաթի պատենիցն և 'ի շողալ պղնձեացն. անդուստ և բլուրք շուրջանակի կրկնեալք ձայն տային 'ի մեծ աղաղակ խուժանին 'ի խրախոյս քաջալերս ձայնիցն. բայց և յանդգնաբար յարձակեալ նոցա 'ի Հռոմայեցիսն՝ մեծապէս էր, զի և առաջին նահատակքն տապատ անկան անդանօր երկու ասպարիսաք հեռի 'ի ղակշէն Հռոմայեցւոց։

Իբրև այսպէս յանդուգն յարձակմամբ միսեցան նոքա, անդուստ Եմիլիոս արձանացեալ՝ տեսանէր զի 'ի Մակեդոնացւոց անտի նահատակք զսէգս գեղարդանց հարբատեալ յասպարս Հռոմայեցւոց, և նոքա ոչինչ ժամանէին վանեալ հարկանեալ զնոսա։ Եւ զայն ևս յանն արկանէր, զի և զասպարսն յուսոց անտի իւրեանց 'ի վայր ա-

ռեալ այլոց Մակեդոնացւոցն, և առհասարակ նիզակս և գեղարդունս միաբան 'ի խոնարհ կալեալ և վահանաւորացն Հռոմայեցւոց ընդեմ ձգեալ, այնպէս խիտ առ խիտ ասպար ընդ ասպար տեսիլ ահեղ 'ի նեղքս բերէին և գժոխըմբերելի տիգաց պատուար. զահի մեծի հարկանէր Եմիլիոս՝ իբրու որ ահաբեկ առաւել չէր նորա երբէք տեսեալ յայնպիսեաց անտի. զի և յետ ժամանակաց ստէպ յուշ ածէր նա զկիրսն զայն և զտեսութիւնն: Սակայն և 'ի ժամուն անվեհեր և զուարթ զինքն ցուցեալ, գնայր արշաւէր երիվարաւն ընդ երկայնութիւն ճակատուն՝ այնպէս անսաղարտ և անզրահ:

Իսկ անդուստ արքայն Մակեդոնացւոց՝ որպէս ասէ Պողիւբիոս՝ յափշութիւն պարտեալ 'ի խառնել պատերազմին, մորակեալ զերիվարն 'ի քաղաքն կոյս՝ պատճառէր գնալ զոհ յաղել Հերակլեայ դիցն, այն որ երբէք չընդունի զոհս անարիս զանարեացն, և երբէք չլսէ անիրաւ հայցուածոց. զի և արդար չէ արդեօք, եթէ որ փքին չարձակէ՝ հարցէ 'ի նպատակն, կամ թէ յաղթեսցէ՝ որ 'ի դիմի չհարկանիցի. կամ թէ յաջողեսցին իրք առն՝ որ ոչն գործիցէ, կամ թէ երջանկասցի այր՝ որ ապիրատն լիցէ: Բայց առ Եմիլիոսին մաղթանսն հեշտալուր էր աստուածն. քանզի 'ի բուին զգեղարդն առեալ՝ այնպէս պաղատէր պարտել զթշնամին, և 'ի կռուել իւրում՝ նիզակակից կարդայր զաստուածն: Այլ Պո-

սիդոնիոս ոմն՝ որ զայնու ժամանակաքն
ասէ կացեալ ինքն և յայն նահատակու-
թիւնն միջամուխ լեալ, և գրեաց ևս սա
ոճով 'ի բազում գիրս զՊերսէոսի պատ-
մութիւնն, պատմէ՝ եթէ խուսեաց ոչ 'ի
մարտէն Պերսէոս, ոչ առ վատասրտու-
թեանն և ոչ զոհից ինչ աղագաւ. նա և
յառաջնում աւուր պատերազմին կիցս ա-
ռեալ նա յերիվարէն 'ի սրունսն, և 'ի մար-
տին թէպէտ և չարաչար խոշտանգեալ և 'ի
բարեկամացն ևս արգելեալ, նա հրաման
տայր երիվար հասարակաց ածել, և աշ-
տանակեալ՝ յայսկոյս յայնկոյս խառնեցաւ
անպատեան անզրահ 'ի մէջ փաղանգին.
յորում և նեռից տարափ արձակեալ 'ի
նա, և սլաք մի ողջ երկաթագամ հասեալ
'ի նա՝ ոչ խոցեաց սայրն, այլ առ 'ի շեղ
քերեալ ընդ ահեկակողն՝ հերձոյր 'ի թա-
փոյն զբաճկոնն, և թողոյր 'ի մարմնին դուզ-
նաքեայ արած կապուտակ. և զսպին պա-
հեաց նա քաղում ժամանակ։ Արդ այսո-
քիւք Պոսիդոնիոս 'ի ջատագով մոռանէ
Պերսէոսի աղքային։

Բայց Հռոմայեցիք յայնժամ ճիգն զա-
մենայն թափեալ և ոչինչ բաւեալ խոր-
տակել զփաղանգն 'ի կռուել իւրեանց,
անդուստ Սաղլոս զօրապետ Պաղինացւոց
յափշտակեալ զդրօշակ զօրականին իւրոյ՝
առեալ ձգէր 'ի մէջ թշնամեացն։ Զայն
իբրև տեսին Պաղինացիք, (և քանզի ոչ վայ-
ել և ոչ արդոյ է Խոալացւոց լքանել թո-
ղուլ զդրօշակն), առհասարակ թափ տը-

ուեալ խոյացան նոքա 'ի վայր անդր. և այնպէս երկոքին կողմանքն վարաղաբար խառնեալք՝ ահագին դոռ այր 'ի վերայ ընկերին հասուցանէր. այն ինչ Հռոմայեցւոց գուն գործեալ հարուլ սուսերօք զնիզակս զերկայնս զՄակեդոնացւոց և 'ի բաց ասպարօքն ընկրկել, և բուռն ևս արկեալ 'ի նոսա՝ մուտ միջամուխ 'ի փաղանգն գործել. իսկ և անդուստ Մակեդոնացւոցն երկոքումբք ձեռօք պնդապէս զնիզակսն կալեալ՝ չե՛չտ թափ 'ի զրահսն անցուցեալ նոցա, իբրև ոչ ասպար և վահան և ոչ զրահ և պատեան ուժէին ինչ ընդդէմ բռնութեան նիզակացն, այնպէս տապաստ թաւալգլոր անկանէին Պաղինացիք և Հռակլինացիք, որ դիմադրաւ իբրև գաղանք մոլեգինք վարեցան ընդդէմ հարուածոյն և անխուսափելի օրհասին։ Անդանօր դիտապաստ նահատակքն անկեալ, զկնի եկեալքն բեկան լուծան. սակայն և ոչինչ թիկնադարձոյգք՝ միայն վերջոտնեալք խաղային գնային 'ի լեառն կոյս՝ զոր անուանեալ կարդան Ողոկրոս։

Իսկ անդուստ Եմիլիոս դէտակն կալեալ՝ որպէս Պոսիդոնիոս ասէ՝ ձեռն արկեալ զպատմուճանն պատառէր, զի տեղի ետուն նոքա, և այլք դարձեալ խորշէին զարհուրեալք 'ի փաղանգէն Մակեդոնացւոցն. այնպէս անմատոյց նա յամենայնէն ընդդէմ արձանացեալ ախոյենից՝ իբրև պատնէշ շերտափակ խիտ առ խիտ բազմախուռն նիզակօքն՝ անվանելի կայր մնայր։ Իսկ իբ-

րև անհարթացաւ գետինն, և ճակատ բա-
նակին ճգեցաւ երկայնեցաւ, զի և կարէին
իսկ ոչ այնուհետև մօտ առ մօտ զասպար
ընդ ասպար ունել, տեսանէր Եմիլիոս զի
բազում խրամատք և անջրպետք դործե-
ցան 'ի փաղանգին Մակեդոնացւոց (որ-
պէս և 'ի դէպ իսկ պատահեսցէ 'ի դունդս
ստուարս և 'ի բազմադէմ թափս մարտու-
ցելոցն), զի կէս մի նահանջեալ վերջոտ-
նէր, և կէս մի յառաջդ խաղայր. հապա
Եմիլիոս փութապէս բաժանեալ զդունդ-
սին՝ հրաման տայր իրախոյս կարդայր գնդի
գնդի դիմել մինչ 'ի խրամատս անդր և
յանջրպետսն փաղանգին, ոչ մի դադրեալ 'ի
վերայ միահամուռ տուեալ, այլ մարտս
բազումս և միահետ 'ի կողմանց կողմանց։

Զպատուէր զայս տուեալ Եմիլիոս զо-
բագլխացն և նոքա զօրականին, անդէն
փութապէս սպրդեալք մտին նոքա 'ի մէջ
զինուց թշնամեացն, ձեռն 'ի գործ սկսան
հարկանել խոցել զկէսս 'ի մերկապատեան
կողն, և զկէսս դարձեալ 'ի թիկանց՝ 'ի
շրջանին իւրեանց. որպէս զի և 'ի միու-
թենէն քակտեալ բաժանեցաւ փաղանգն,
և անկաւ բեկաւ 'ի մեծամուր պատրաս-
տութենէն։ Այնպէս ապա այր ընդ առն
'ի կռիւ մատուցեալ և նուազունք ընդ
նուազունս, անդանօր Մակեդոնացիք դաշ-
նակօք խոցեալ զասպարս Հռոմայեցւոց
անձնապահս և հաստահարուստս, և թե-
թև իւրեանց վահանօքն ոչինչ բաւեալք
զդէմ ունել նոցուն վաղակաւորաց, որ

ծանր և թափով իջեալք, զամենայն զէն միանգամայն վատթարեալ՝ թափ անցանէին ընդ մարմինս, 'ի վերջէ ուրեմն անկան խորտակեցան Մակեդոնացիք։ Եւ արդեօք մեծապէս էր յայնժամ նահատակութիւն Հռոմայեցւոցն, ուր և Մարկոս որդի Կատոնի և փեսայ Եմիլեայ քաջապէս արութեամբ կռուեալ 'ի ռազմին՝ անդ կորուսանէր զսուսերն. և քանզի պատանին քաջամոյն և բազմահրահանգ պարտանձին հրամարէր՝ ցոյցս զմեծի նահատակութեանն 'ի նեղքս բերել մեծի հօրն, ըզմտաւ ածէր՝ անկենդան այնուհետև վարել կեանս՝ եթէ կենդանեաւ իւրով երբէք թողցէ ինչ 'ի զենուց իւրոց 'ի թշնամեացն ձեռս. հապա շուրջանակի յածէր ընթանայր ընդ դաշտ պատերազմին, և ում ումեք պատահէր 'ի բարեկամացն և յընտանեկաց՝ պատմէր զեղեալն, և աղաչէր ձեռն տալ 'ի ժամուն։

Զայսօրինակ նա զհետ իւր գունդ մեծ ժողովեալ զքաջաց զօրականին, և յանդուգն յարձակեալք՝ ինքն յառաջոյ՝ խաղացին 'ի վերայ թշնամեացն. և ահագին մարտիւ յետս զնոսա ընկրկեալ և մահուանս գործեալ և հարուածս, հասեալ կալան զամայի և զթափուր վայրն, և յուզէին խնդրէին զսուրն. իբրև ապա ուրեմն բազում աշխատութեամբ գտանէին 'ի բազմակոյտ զենուցն և դիականցն, յոյժ ցնծացեալք և գոհացեալք առհասարակ՝ հզօրագոյն ևս յարձակեցան 'ի թշնամիսն՝ որ

տակաւին զտեղի կալեալ կռուէին. և անդ
երեքհազարեան ընտիր ընտիր նահատա-
կացն Մակեդոնացւոց արձանացեալ ցանգ
'ի կարգին իւրեանց և կռուեալք այնպէս,
տապաստ անկանէին: Իսկ փախստէիցն ամ-
բաւ կոտորած առհասարակ զդաշտն և ըզ-
զառ 'ի վայրն ընդդէմ դիակամբք. զի և յա-
ւուրն երկրորդի անցեալ Հռոմայեցիք ըզ-
գեան Լեւկոս, յարիւն և յապաժոյժ խառ-
նեալ տեսին զվտակն. քանզի և ասեն՝ ա-
ւելի քան զերկուց բիւրուց և զհինգ հա-
զարաց դիտապաստ անկանեալ 'ի Մակեդո-
նացւոց յայնժամ. իսկ 'ի Հռոմայեցւոցն՝
որպէս Պոսիդոնիոս ասէ՝ հարիւրով չափ,
կամ թէ ութանիւ՝ որպէս Ասիկաս ասէ 6:
Բայց յաղթութիւնն անդէն արագ արագ
սահմանեցաւ 'ի մեծի պատերազմին. քան-
զի յիններորդի ժամուն սկիզբն եղեալ մար-
տին, յառաջ քան զտասներորդն յաղթա-
կան ելանէին Հռոմայեցիք. իսկ զմնացեալ
ժամն զհետս փախստէիցն մոռեալ, և աս-
պարէզս հարիւր և քսան վանեալ, դառ-
նային յետս՝ մինչդեռ շատ ինչ երեկոյա-
ցեալ էր օրն. և ծառայք լապտերօք լու-
ցելովք գնային ընդառաջել յամեցելոցն,
և ածեալ բերին 'ի ձայն ցնծութեան բա-
րեկենդանութեան՝ 'ի վրանս լուսաւորս
ջահիւք վառելովք, և բոլորիւք պսակաց
զարդարեալս 'ի բաղեղն և 'ի սարդենի:

Ա յլ զօրավարն ինքնին 'ի թաղծութիւն
մեծ պաշարեալ նստէր, քանզի յերկուց
անուն որդւոցն՝ որ զինուորեալ կային ընդ

ձեռամբ նորա՝ կրսերն չև ևս երևեցաւ 'ի միջի, զոր և մանաւանդ սիրէր. զի և բոյս բարուց պատանւոյն 'ի վերջ քան զեղբարցն մեծապէս բարգաւաճ էր յառաքինութեանն։ Գիտէր և զարիութիւն ոգւոյն նորա և ըզգեղեցիկ պատուասիրութիւնն՝ թէպէտ և այն ինչ յարբունս հասեալ. եդ 'ի մոի հաստատութեամբ՝ եթէ անփորձ միջամուխ 'ի կռիւն՝ կորեաւ պատանին։ Իբրև այսպէս 'ի վարանս և յանձկութեան մաշէր Եմիլիոս, և առհասարակ ընդ բանակն զհամբաւի հարաւ բանն, մինչդեռ անդ զորականք ընթրիս առնուին, փութապէս յարուցեալք միաբան՝ և ջահիւք և զամբարաւք այսր անդր ընթանային. բազումք և 'ի վրանն հասեալք Եմիլիոսի, և շատք ևս արտաքոյ պատնշին յուզել ինդրել զպատանին 'ի մէջ գիսականց առաջին նահատակացն։ Անդ առհասարակ բանակն լուռ և անշշունջ 'ի թաղծութիւն հատեալ, և դաշտագետինն ողջոյն հնչէր յաղաղակէն՝ որ ձայն մեծաձայն բարձեալ յայս կոյս յայն կոյս յանուանէ կարդային զԱկիպիոնն. որպէս զի և աքանչացեալ իսկ էր նա առ ամենեսին, և անգամն յառաջին տիոցն յայտնի էր տեսանելեացն գեղեցիկ բոյս բարուց նորա, իբրու առաւել քան զորս առ իւրովքն ժամանակաւք՝ պատշաճեալ յառաջնորդութիւն զօրու և քաղաքի։ Ապա յոյժ անագան՝ յորժամ ամենայն յոյս ակնկալութեան բարձեալ էր, դարձաւ ելն նա երկուք և երիւք ընկերօքն 'ի հետա-

մուտ լինելոյն՝ թաթաւեալ յարիւն ջերա-
ջերմ թշնամեացն, արդարև իբրև բարակ
քաջընտիր՝ 'ի գեղեցիկ մոլութենէն ան-
սանձելի 'ի վեր վազեալ 'ի յաղթութեն։
Սա այս է Սկիպիոն՝ որ յետ ժամանակաց
հիմն 'ի վեր քանդեաց զԿարթեդոն և զՆո-
մանտիա, և քաջութեամբ զօրութեամբ
մեծապէս գերազանցեաց զամենեքումբք՝
որ զայնու ժամանակաւ Հռոմայեցիք։ Արդ
Եմիլեայ զգեղեցիկ նահատակութեանն
զայնորիկ զնանդ նախանձուն՝ այլում ժա-
մանակի թողեալ բախտն, լիապատար յայն-
ժամ զհեշտութիւն զյաղթութեանն ըն-
ծայեաց նմա։

Իսկ Պերսէոս փախստեայ 'ի Պիւդնայէ
գնայր 'ի Պելլա, ողջ 'ի մարտէն մնացեալ
նմա գոդցես այրուձին առհասարակ։ Բայց
նորա հետևակազօրք ժամանեալ հասեալ,
սկսան յիշոցս և լուտանս արձակել 'ի հե-
ծելազօրն. Կնամարդիս և մատնիչս կար-
դային, և 'ի վայր ևս յերիվարաց քարշեալ
զնոսա, գանս և հարուածս գնէին նոցա։
Ոչ ոչ աղագաւ երկուցեալ Պերսէոս 'ի շփո-
թիլց անտի, արտաքս քան զարահետն տա-
րեալ զերիվարն և զծիրանին յանձնէն հա-
նեալ՝ զի անծանօթ կացցէ՝ յառաջոյ գնէր,
և զթագն 'ի ձեռին բարձեալ բերէր. ա-
պա և յերկիր իջեալ և երասանակալ ձիոյն
եղեալ՝ այնպէս գնայր, զի հեշտին ևս խո-
սակից ընդ ընկերացն լինիցի. յորոց և մի
ոմն անգանօր կերծաւորեալ զլուծանել
կոշկին և գեգերեալ 'ի պնդել միւսանգամ,

և միւս ոմն պատրուակ ածեալ տալ ջուր
երիվարին իւրոյ, իսկ և միւսն՝ պէտս ու-
նել ջրոյ յարբուն, այնպէս տակաւ նոքա
դանդաղեալ վերջոտնեալ լքանէին զնա.
ոչ 'ի թշնամեաց ինչ զանգիտեալք՝ քան
թէ 'ի դառնութենէ առն. այն՝ որ ծփեալ
յարկածից ջարեացն՝ որ պաշարեցին զնա,
քերեալ յանձնէն՝ զայլովք խնդրէր ար-
կանել զինեաս հարուածոյն։ Իբրև մտեալ
'ի Պելլա գիշերի, ինքնին նա դաշնակաւ
խոցեալ սպան զԵւկտոս և զԵւդէոս զգան-
ձապետսն, որոմնեալ՝ զի ընդառաջեալք
յանդիմանէին զնա վասն արկածիցն և տա-
րապայման ազատութեամբ իրատ տային
նմա, ապա այնուհետև և ոչ մի ոք ճնաց առ
նմա՝ բայց Եւանդրոս Կրետացի և Ադրբե-
դամոս Եստոլացի և Բիովտացին Նէոն. իսկ
'ի զօրականէն Կրետացիք միայն զհետ չո-
քան նորա, ոչ 'ի մտերմութեան սակս, այլ
զի ակնկառոյցք տարփաւորք էին ընչաւէ-
տութեան առն, իբրու առ խորխոխս՝ մե-
ղուք. քանզի զհետ իւր աղխաղխեալ տա-
նէր Պերսէոս գանձ մեծ, յորմէ և հանեալ
դնէր յանդիման 'ի կապուտ Կրետացւոցն
բաժակս և ստոմանս և կարասիս զոսկւոյ և
զարծաթոյ՝ իբրև տաղանդաց յինանից։

Իբրև եկն եհաս նա ՅԱմֆիպոլիս և անց
ՅԱՂէպսոս, խուն մի դիւրացեալ յերկիւ-
ղէն, անդրէն միւսանգամ զառածանէր
յընչաքաղց կրկին՝ 'ի տնկակից և 'ի վաղն-
ջուց. տխրէր գանգատէր առ բարեկամն՝
որպէս անխորհրդաբար տուան 'ի կապուտ

կողոպուտ Կրետացւոցն կահք ոսկւոյ մեծին Աղեքսանդրի. յողոք անկանէր արտասուօք չափ առ որս կային իրքն՝ դարձուցանել անդրէն, և զկշիռ արծաթոյն և ոսկւոյն ողջ խոստանայր նոցա։ Որք միանգամ հաւօրէն 'ի վերայ կացեալ էին բարոյից առն, ծանեան զի խնդրէ նա հայթայթել և Կրետանալ առ Կրետացիսն։ Իսկ որք հաւատացին նմա և դարձուցին, դաւեցան՝ զի ոչ կշռեաց նոցա զկշիռն. և այնպէս տաղանդս երեսուն ժողովեալ 'ի բարեկամացն, զոր և հուպ ընդ հուպ թըշնամիք առնուլ հանդերձեալ էին, եկնաւեաց հանդերձ նոքօք 'ի Սամոթրակէ. և անդ 'ի տաճար Դիոսկուրեանցն ապաւինեալ անկանէր ողբաւոր։

Իսկ Մակեդոնացիք՝ թէպէտ և առհասարակ ժողովուրդ Արքայասէր համբաւեալք, բայց յայնժամ իբրու եթէ նոցա ամենայն նեցուկ խորտակեալ լցէ, այնպէս անձնատուրք միահամուռ 'ի ձեռս Եմիլիոսին՝ 'ի մէջ երկուց աւուրց զնա ողջոյն Մակեդոնիոյ տիրացուցին։ Եւ այս թուի թէ հաւատարմացուցէ զասողսն, եթէ գեղեցիկ բաղդին՝ զնահատակութիւնն զայն ընծայեալ արդէօք արժան լցէ։ Նա և դէպքն՝ որ 'ի զոհին նորա՝ ատուածային ուրեմն էր. քանզի 'ի զոհեալ Եմիլիոսի յԱմփիպոլիս և 'ի մատուցանեալ զնուիրականն՝ շանթ կայծական իջանէր 'ի վերայ սեղանոյն, և հրակիզէր սրբէր զզոհն։ Իսկ որ յաղագս տարածելոյ համբաւոյ իրացն, այն գեր 'ի

վերոյ կայ յաստուածայինն և 'ի բաղդին։ Քանզի յաւուրն չորրորդի յետ հարուածոյն Պերսէոսի 'ի Պիւդնա, ժողովուրդ 'ի Հռովմ քաղաքի կացեալ 'ի զնին ասպետացն մրցանաց, յանկարծակի յեղակարծումն ձայն զհամբաւի հարկանէր յառաջնում անդ մասին տեսարանին, իբրու Եմիլիոսի հարուածեալ զՊերսէոս 'ի մարտին և զՄակեդոնիա ողջոյն գրաւեալ։ Զայն այս զվայրոք ածեալ ընդ խուժանն՝ յանպատում խնդութենէն զօրն ողջոյն ընոյր քաղաքն 'ի կայթս և 'ի ծափս և 'ի ձայնս ցընծութեան։ Իսկ իբրև զակն և զսկիզբն ձայնին ճշգրիտ գտանեալ ոչ կարացին, և ընդ խաբս ինչ կարծեցին, լռեցին առհասարակ։ Բայց զկնի աւուրց լուր յայտնի առեալ զեղելոցն, յափշութիւն հատանէին վասն նախազգեցիկ ձայնին, որ ընդ կարծեալ խաբանօքն ծածկեալ ունէր զճշմարտութիւն։ Ասեն՝ եթէ և համբաւ մարտին Իտալացւոց առ Սադրա գետովն ժամանեաց 'ի Պելոպոնիսոս 'ի նմին իսկ աւուր մարտին. դարձեալ՝ և առ Պղատացիս կանխեաց լուր Միւկալեան մարտին ընդդէմ Մարաց։ Իսկ յաղագս առ 'ի Հռովմայեցւոց հարուածոյն Տարկուինեանց և Նիզակակցացն Լատինաց, ասեն՝ եթէ վայր մի զկնի երևեցան 'ի մէջ երկուք ոմանք յաղթանձինք և գեղեցիկք, և եկեալք 'ի բանակէն ինքնին պատմէին զեղեալսն (թուեցան իմն՝ եթէ Դիոսկորոսքն էին՝ որդիք Դիոսի)։ և քանզի այրն՝ որ առաջին պա-

տահեցաւ նոցա, մինչդեռ նոքա 'ի հրապարակի անդ զովացուցանէին առ աղբերն զքրոնահոծ զերիվարսն, հիացեալ սքանչանայր 'ի լուր յաղթութեանն, նոքա հեզիկ ժպտեալ և 'ի մօրուսն նորա 'ի թուխ՝ որպէս ասեն՝ հպեալ, անդէն 'ի սեռութենէն 'ի շառագոյն գառնայր մազն. ուստի և հաւատս ընծայեցին պատմութեանն, և մականուն առն կարդային Էնոպարպ, այն է՝ Պղնձամօրուս:

ԱՅԼ որ առ մեօք գէպք հաւատարմացուցանեն և զայս ամենայն զծերունեացն: Քանզի Անտոնիոս ընդվզեալ 'ի Դոմեոիանոսէ, առհասարակ հռովմ զանգիտեալ յահագին մարտէն Գերմանիոյ, անդուստ յանկարծ ինքնին խուժանն զլուր յաղթութեանն հռչակ հարկանէր ընդ քաղաքն՝ եթէ անկաւ Անտոնիոս, և ապրեցաւ և ոչ ոք 'ի նորայոցն. և առ ստոյգ և յանէրկբայս այնչափ կալան զհամբաւն՝ զի և շատք յաւագորերոյն փութացան զոհ կատարել: ԱՅԼ ապա հետախոյզ զառաջին համբաւաբերն արարեալ՝ և ոչ գտեալ, և մարդոյ 'ի մարդ գնացեալ ապաւիներալ ձայնին, և 'ի վերջէ ուրեմն 'ի սուզանել բանին՝ իբրև 'ի ծով անդնդախոր՝ յամբաւ խուժանին, չերևեալ նորա սկիզբն ճշդիւտ, այնպէս ապրագ առհասարակ լռեաց քաղաքն: ԱՅԼ իբրև Դոմեոիանոս յուղի անկեալ խաղայր գնայր ահագին բանակաւ 'ի կռիւն, յուզոջ նմա հրեշտակ հասանէր հանդերձ նամականեաւ՝ աւետաւոր յաղթութեանն.

և էր յաղթութեանն օր և համբաւոյն նո-
ցա 'ի Հռովմ նոյն՝ 'ի բացեայ գոլով վայ-
րացն առաւել քան ասպարիսաց երկուց
բիւրուց։ Եւ զայսոսիկ անդիտանայ և ոչ ոք
յարանց ժամանակիս մերոյ։

Բայց Գնէոս Հոկտաւիոս հոմիշխան Ե-
միլեայ նաւեալ 'ի Սամոթրակէ, թէպէտ
և յապաստանէն ոչ քարշեաց զՊերսէոս
արտաքս 'ի մեծարանս երեսաց դիցն, սա-
կայն և պահ ունէր՝ զի մի ծովագնաց փա-
խիցէ։ Այլ Պերսէոս գաղտաբար բանա-
գնաց լեալ ընդ Որոանդեայ Կրետացւոյ՝
որոյ էր իսկ նաւակ՝ առնուլ զնա 'ի նմա
հանդերձ գանձիւն, անդ Որոանդէս զհետ
կրթեալ կրետացի բարոյից, չոքաւ ընդ ե-
րեկս և զգանձն բարձեալ զՊերսէոսի՝ ա-
սէր նմա՝ գիշերի յառնել գալ 'ի նաւա-
հանգիստն Դեմետրիոն հանդերձ որդւովքն
և կարևոր պաշտօնէիւքն. և զայս ասաց
Որոանդէս և ինքն ընդ մուրճն կանխեալ
միայնակ զանխուլ յուղի անկանէր 'ի ծով։
Անդանօր ապա Պերսէոս յոյժ հիւքացաւ
չուառականն. իջեալ գաղտագողի 'ի պա-
տուարէն ընդ անձուկ պատուհանն հան-
դերձ որդւովքն և կնաւն, անփորձք ամե-
նևին 'ի վիշտս վաստակաբեկ փախստեանն,
անդ իբրև այր ումն պատահեալ Պերսէոսի՝
որ թափառական շրջէր առ ծովեզերքն՝
ասէր նմա տեսեալ ինքն զՈրոանդէս (և
քանզի յայդանալ էր օրն) զի խաղայր նա
'ի խորս ծովուն, յայնժամ դառնապէս
խորր յոգւոց հանէր Պերսէոս. և յուսա-

հատ գլխովին գառնայր անդրէն դէմ է-
դեալ 'ի պատուար անդր, ոչ ևս 'ի ծա-
ծուկ. սակայն աճապարէր կանուխ քան
զՀռովմայեցիսն հասանել անկանել հան-
դերձ կնաւն. քանզի զորդիս իւր յանձն
արարեալ էր 'ի ձեռս Յոնեայ, այն՝ որ 'ի
շատ ժամանակաց սիրելի լեալ էր Պեր-
սէոսի. և յայնժամ մատնատու եղեալ նմա,
հարկ անհրաժեշտ ածէր 'ի վերայ առն ար-
դարև իբրև 'ի վերայ գազանի՝ յորմէ կո-
րիւնքն առեալ բարձեալ լցեն՝ անձնատուր
'ի նոսա լինել, յորոց ձեռս մատնեցան մանկունքն նորա։

Ա՛յլ Պերսէոս մեծապէս վստահ է-
ղեալ 'ի Նասիկաս՝ հարցանէր խնդրէր զնա,
և զի մօտ չէր նա՝ աշխարէր զաղէտս իւր.
զմոտաւ ածեալ զՀարկն՝ յոր ըմբռնեցաւ,
եդ 'ի մոի անձնատուր լինել 'ի Գնէոս։
Եւ յայնժամ քան զարծաթասիրութեանն
անարգագոյն ևս կիրս ցուցանէր նա յան-
ձին՝ զանձնասիրութեանն. ինքնին անար-
ժան զինքն կացուցեալ գթութեան մա-
սին, զոր միայն չգառնայ բախտ 'ի հիւա-
ցելոցն անձանց։ Քանզի աղերս արկեալ
առաքել զինքն առ Եմիլիոս և կամագիտ
եղեալ, յարուցեալ Եմիլիոս հանդերձ բա-
րեկամօքն երթայր ախտակցաբար արտա-
սուօք ընդառաջ Պերսէոսի՝ իբրև առն ա-
ւադի որ 'ի վրէժխնդիր Քաջէն և 'ի ձա-
խողակ բաղդէն յայն աղէտան պաշարեալ
լցէ։ Ա՛յլ անդանօր Պերսէոս առակ նշա-
ւակի զանձն ցուցեալ՝ յորսայս 'ի գետին

առաջի անկեալ Եմիլիոսի և զմատուռնն տատանեալ առ նորա ծնգովքն, այնպէս ողբէր բանիւք զնա իբրև անարի վատաստիրտ. զոր և ոչ լսեալ անգամ հանդուրժեալ Եմիլիոսի, տխուր և խեթ ակամբ հայեցեալ ընդ նա, ասէր այսպէս.

"Եւ առ ի՞նչ դու ապա, ո՞վ անձն հիքացեալ, ազատ զբախտն առնես՝ ի մեծաց յանցանաց՝ զայդ գործելով. քանզի՝ ի դէմս բերես աւադիկ՝ եթէ ոչինչ յանիրաւի ուրեմն խեռացաւ նա ընդ քեզ. և յիրաւի այժմուս գանէ զքեզ, և արտաքոյ արժանեաց անդ ուրեմն Քաջն գգուեաց զքեզ: Եւ զի՞ դու նկուն զնմին առնես յաղթութիւն, և փոքրոգի զնմին նահատակութիւն, ՝ի դէմս ընծայելով զքեզ այր կնամարդի և անարժան Հռովմայեցւոց հակառակամարտ: Քանզի առաքինութիւնն պատկառելիս գործէ զհիքացեալսն և առ թշնամիսն անգամ. իսկ անարի վատապտութիւն՝ թէպէտ և յաջողութեամբ պերճ՝ համբուն արհամարհեալ է առ Հռովմայեցիս": Յայսր ամենայնի վերայ՝ ՝ի վեր զհիքացեալն կանգնեալ Եմիլիոս և կալեալ զաջոյն՝ յանձն առնէր զնա Տուբերոնէի:

Իսկ յետ այնորիկ առեալ ընդ իւր զորդիս և զփեսայսն, և զմանկագոյնս ՝ի զօրապետաց ՝ի վրանի իւրում, իբրև հարուստ մի այնպէս բազմեալ մոսխորհ լուռ կայր՝ զի և ամենեքին զարմացեալ կային, ապա ուրեմն իսուել սկսաւ վասն բախտին և վասն մարդկան իրացս, և ասէ. "Իսկ մի՞թէ ինչ

լցէ արդեօք մարդոյ 'ի յաջողութեան խայտալ և ամբարտաւանել, զի աղդ մի ընդ լծով նուաճեաց, կամ քաղաք մի, կամ թագաւորութիւն։ Ցա՛ աւանիկ այդ բաղդ յարափոխ դովին 'ի դէմս բերեալ մարտուցելոյն զհասարակաց տկարութիւն, շատ ինչ խելամուտ արասցէ զնա՝ երբև չէք ինչ յէլեցս հաստատուն և անկայուն։ Իսկ այր կանանցածին ե՞րբ արդեօք կացցէ ա-ներկեան ցնծութեամբ, յորժամ և յաղ-թութիւնն ինքնին գլխովին տայ մեզ խի-թալ 'ի բախտէն և զմեր խնդութիւնս տրտ-մեցուցանէ, զմտաւ ածեալ զի դունակ դունակ փոփոխի. է՞ զի սմա՝ է՞ զի նմա ոխ-րիմ զինքն ընծայէ։ Եւ յորժամ դուք ինք-նին 'ի վայրկեան ժամու ընդաթրեալ հա-րէք զԱղեքսանդրին զպայազատսն, որ յայն չափ աւագութեան ամբարձաւ և լայնա-սահման տիրացաւ. և յակն աւադիկ ար-կանէք զաղբայս՝ բակ 'ի բիւրուց առեալ հետևակաց և յայրուձիոյ, իսկ զարդիս զօ-բապահիկն առնուն 'ի ձեռաց իւրեանց թշնամեաց, համարիցիք թերևս եթէ գու-ցէ 'ի մեզ հաստատութիւն բախտի՝ որ 'ի վեղ գալ ընդ ժամանակին բաւական լցէ։ Ո՞չ ապա նկուն արասջիք դուք ո՞ պատա-նիք զսնապարծն գոռոզութիւնդ և զնայ-տալ ընդ յաղթութիւնդ, և պարկեշտա-ցեալ ցածնուցուք ահիւ՝ միշտ ակնկառոյց 'ի հանդերձեալն լինելով, և կաղմ յելս վախճանի՝ սահմանեալ իւրաքանչիւր ձեզ վերժինդրութեն 'ի Քրիստէն՝ փոխանակ այժ-

մու երանութեանդ "։ Յայսպիսեաց ասուի շատ ինչ խօսեալ յայնժամ Եմիլիոս, արձակեաց զպատանիսն. իբրու սանձիւք՝ հարուստ բանիւքն՝ զդուռզութիւնն սանձակոծելով զնոցա։

Յետ այսորիկ արձակէր նա և զզօրականն երթալ հանդէպ՝ ի վանս Իւրեանց, և ինքն յայց ելանէր Ելլադայ, փառս ժառանգեալ անձին և մարդասիրագոյնս ընծայեալ զանձն։ Քանզի գնացեալ անդր խրախոյս քաջալերը տայր ժողովրդոց, կարգս հաստատէր և սահմանս, տայր բաշխէր և պարգևս. կիսոցն՝ ցորեան, կիսոցն՝ իւղ՝ ի գոյից անտի ալքային. և գտանէր նա անդանօր մթերս ամբաւս, որպէս զի և կարօտեալքն ոչք առին՝ ոչ ժամանեցին սպառել ծախել՝ ի կեանս Իւրեանց։ Գնացեալ և՝ ի Դեղփիս, տեսեալ անդանօր սիւն մեծ քառակուսի կձեայ սպիտակ, յորում անդրի ոսկի հանդերձեալ էին կանգնել զՊերսէոսին, հրաման տայր զիւրն կանգնել։ Իբրև զի՝ ի դէպ արդեօք յաղթականաց տեղն տացեն յաղթեալքն։ Իսկ Յողիւմպիա զգերահռչակեալն զայն ասէր բան, ՃԸՆԳԸԻՊ ՓԻԼԻՊ ԿԷՐՊԱՐԱՆԷԱՅ ԶԱՐՄԱՊԷՍ ՀՈՄԵՐՈՍԷՆ։

Իբրև եկին հասին առ նա՝ ի Հռովմայ հրեշտակք տասն, շնորհեաց Մակեդոնացւոցն բնակել յերկրին՝ Իւրեանց իսկ օրինօք, և յաղատութիւն գրեաց զքաղաքս նոցա. այլ հրաման տայր տալանդս հարիւր ամի ամի հարկել Հռովմայեցւոց, զոր

կրկին տային իւրեանց արքայից։ Ապա և տե-
սարանս ազգի ազգի մրցանաց խաղուց կա-
տարեալ, և զոհս զոհեալ դից, պատրաս-
տէր և խնձոյս և ճաշս մեծահաց 'ի ծախս
անհնայ յընչից արքունի. և անդ 'ի դէղե-
ցիկ դասաւորութեանն և 'ի հիւրամեծա-
րութեամբ հրամայեալ առն առն բազմա-
կանս և շուք և մարդասիրութիւն ըստ ար-
ժանի աւագութեանցն, այր ճշդիւտ և քա-
ջախորհուրդ մեծապէս ընծայէր զանձն.
զի և հիացեալ պանչացան Հելլենացիք 'ի
փոյթ ինդութեան նորա 'ի փոքունան յայ-
նոսիկ. զի այր՝ որ 'ի նահատակութիւնս մե-
ծամեծս առաքինացաւ, այնպէս և 'ի դուշ-
նաքեայս՝ վայելչականին պատկառ կայր։
Իսկ որ առաւել ինդացուցանէր զնա, զի
ինքն էր բերկրալի ևս տեսարան բազմակա-
նին 'ի մէջ հրաշակերտ հանդէրձանացն. և
որք յայնժամ հիացեալ էին ընդ այնչափ
ճշդրտութիւնն, ասէր՝ եթէ նոյն մի խոհա-
կանութեան պէտք իցեն 'ի դէղեցիկ կար-
գել և զբանակ և զկոչունս. զառաջինդ՝
յահարկութիւն թշնամեացն, և զվերջինդ՝
'ի հաճոյս կոչնականացն։

Բայց և ոչինչ պակաս քան զամենայն
առաքինութիւնս նորա՝ 'ի գովութիւն ա-
ռին մարդիկ զառատութիւնն և զմեծանձ-
նութիւնն. զի մթերս ամբաւ ոսկւոյ և զար-
ծաթոյ կուտեալ զարքային՝ և ոչ յանկն
արկանել անգամ կամեցաւ, այլ 'ի գան-
ձաւորսն առնէր ապաստան ածել բերել
'ի գանձն արքունի. միայն իւրոց դրասէր

որդւոցն Թոյլ տայր առնուլ զգիրսն արքային։ Եւ բաշխեալ ևս մրցանակս նահատակելոցն 'ի մարտին, տայր Եղիոսի Տուբերոնի իւրում փեսայի ըմպանակ լտերայց հնդից։ Սա այս է Տուբերոնն՝ զորմէ կանխեցաք ասացաք բնակել 'ի միասին ընդ հնդեւասան ազգակցացն, և առհասարակ 'ի փոքրիկ կալուածոյն ունել նոցա զպարէնն. և ասեն՝ եթէ 'ի կահս արծաթոյ այն ըմպանակ առաջին մուծաւ 'ի տուն Եղիոսեանցն 'ի փառս առաքինութեանն և 'ի մեծարանս առն. և յառաջ ժամանակաւ ոսկի կամ արծաթի՝ ոչ նա և ոչ կանայքն վարեցին երբէք։

Իսկ իբրև այսպէս գեղեցիկս կարգեաց զամենայն, ողջոյն հրաժարական Հելլենացւոցն տուեալ, և յորդորակս Մակեդոնացւոցն՝ անմոռաց յուշի կապել զազատութիւնն զոր ետուն նոցա Հռովմայեցիք, և պահել գեղեցիկ օրինաց և միաբանութիւն, ինքն յԵպիռոս կոյս ելեալ խաղայր 'ի հրամանէ Սինկղիտոսին, տալ զքաղաքս դաւառին յաւար զօրականին՝ որ նիզակակիցք կռուեցան ընդ Պերսէոսի։ Ապա կամեցեալ Եմիլիոսի յեղակարծումն ժամու ըմբռնել առհասարակ, առաքէր կոչէր արս աւագս տասն թուով յիւրաքանչիւր քաղաքաց, և հրաման տայր նոցա 'ի պայմանեալ աւուրն ածել բերել զամենայն արծաթ և զոսկի որ 'ի տունս՝ որ 'ի մեհեանս. և 'ի միասին ընդ նոսա առեալ արձակէր և գունդ մի հանդերձ զօրապետաւ՝ իբրու եթէ ժողո-

վեր առնուլ զոսկին։ Իբրև պայմանեալ
օրն հասանէր, զօրականքն առհասարակ
սկսան յայս կոյս յայն կոյս ընթանալ և յա-
ւարի զքաղաքսն առնուլ. և դերի վարե-
ցին նոքա արս հնգետասան բիւր և աւերե-
ցին քաղաքս եօթանասուն։ Սակայն և
յայնչափ աւերածոյն և յանկածէն առ
մէն մի 'ի զօրականէն անկանէր ոչինչ աւե-
լի քան դրամակշիռ մետասան. զի և ամե-
նեքեան յափշտութիւն հարեալ էին ընդ
ելս պատերազմին, զի ողջոյն յաւարեալ
ազգէն՝ բաժին և տուրք դուզնաքեայ ելա-
նէր առն առն իւրաքանչիւր։

Բայց յետ այսորիկ Եմիլիոս հակառակ
իւրոյ բուսոյ բարուցն հեզութեան և ցա-
ծութեանն՝ իջեալ յՈվրիկոն և անդուստ
անցեալ յԻտալիա հանդերձ զօրու նաւ-
եալ գնայր 'ի վեր ընդ Թիւբրիս գետ, վեշ-
տասանաթի նաւաւն աղքունի՝ զարդարուն
'ի ծիրանիս և 'ի կարմիր, և 'ի կապուտ զի-
նուց անկածոյ պատերազմին։ Իսկ 'ի քա-
ղաքէն Հռովմայեցիք ելեալ արտաքս ընդ
առաջ նորա առհասարակ ցնծութեամբ՝
իբրու յաղթանակի հանդէս նախաժաման
յարդարելով, առ ափամբն գնային ուղե-
կից նաւուն՝ որ տակաւ դայր ընդդէմ հո-
սանաց գետոյն։ Այլ զօրականք ակնակա-
ռոյցք 'ի գանձս աղքային, զի ոչ առին ըզ-
տրիտուրն որում ակն ունէին, վառէին
ցասմամբ 'ի նեղքոյ և խեթիւ հայէին ընդ
Եմիլիոս. և յայտնի ևս բոլոք կալեալ ըզ-
նմանէ՝ իբրև որ խստութեամբ գնաց ընդ

նոսա և Ճոխաբար, դանդաղէին 'ի փոյթ հանդիսի յաղթանակի նորա։ Իրաղդած եղեալ Սերվիոս Գալբաս թշնամի Եմիլեայ՝ առ որով հաղարապետ լեալ էր, համարձակեցաւ ասել հրապարակաւ՝ եթէ չէ՞ արժան յաղթանակի հանդէս յարդարել նմա. և շատ ևս բանսարկութիւն ընդդէմ նորա ցանեալ 'ի զօրականին և սաստիկ ևս գրգռեալ զնոսա՝ խնդրէր 'ի ժողովրդապետացն յայլ օր սահմանել զհանդէսն. քանզի 'ի ժամս չորս մնացեալ աւուրն՝ չէր նա բաւական ընուլ զամբաստանութիւնն։ Իբրև ժողովրդապետքն հրաման տային խօսել յայնժամ՝ եթէ ունիցի ինչ, նա սկիզբն երկայնաձիգ արարեալ ճառին լի՛ դիմակ դիմակ հայհոյութեամբք, ծախեաց 'ի նոյն զժամն. ապա գիշեր 'ի վերայ հասեալ՝ արձակէին յայնժամ ժողովրդապետք զատեանն։

Բայց զօրականք գրգռեալք միաբան ընդ Գալբայի՝ վաղքաչ ընդ առաւօտն հասեալ կալան զԿապետոլիոն. քանզի անդանօր եկեղեցանալ հրամայեցին ժողովրդապետքն։ Ա՛յն ինչ 'ի ծագեալ աւուրն սկիզբն արարեալ քուէից, ցեղն առաջին խոտեաց զյաղթանակն. հռչակ հարեալ բանին՝ հասանէր լուրն և առ Սինկղիտոսն։ Անդ ամբոխ խուժանին մեծապէս սրտնէր՝ տեսեալ զայնչափ անարգութիւնն Եմիլեայ, և բարձրանայր գոչիւն խառնաձայն աղաղակին։ Իսկ աւագք Ճոխք 'ի Սինկղիտոսէն բողոք բարձեալ ընդ դժոխրմբեր

կիրան, ձայն տային միմեանց սանձել կո-
ծել զլրբենի ժպրհութիւն զօրականին, որ
բնաւ և յամենայն բռնութիւն յանդգն-
նեսցին դոքա արդեօք, եթէ երբէք թոյլ
լիցի դոցա զրկել զՊաւղոս Եմիլիոս յար-
ժանահաս փառաց յաղթութեանն։ Ապա
միջամուխ պատառեալք զամբոխն և'ի վեր
'ի Կապետոլիոն ելեալք և խմբեալք՝ աղդ
առնէին ժողովրդապետացն դադարեցու-
ցանել զքուարկութիւնն՝ մինչև խօսեսցին
նոքա առ ժողովուրդն։ Իբրև առհասարակ
արձանացան կացին և այր այր 'ի լռութիւն
դարձաւ, անդանօր Մարկոս Սերվիլիոս 'ի
հիւպատեան կարդէ, այն՝ որ 'ի ձայնատու
ախոյենից քան և երիս տապաստ արկեալ
էր 'ի մենամարտի, կացեալ 'ի բարձու՝ խօ-
սեցաւ և ասէ.

"Եթէ քանիցն էր զօրավար ինքնակալ
Պաւղոս Եմիլիոս, զարդիս աւադիկ 'ի վե-
րայ հասեալ կամ. քանզի զօրականս ունե-
լով դա ընդ իւր այդչափ ստամբակութիւ-
լի և խեռս, և այնպէս 'ի դեղեցիկ և 'ի մե-
ծամեծ նահատակութիւնսդ առաքինա-
ցաւ։ Ալ իմ յափշտութիւն հարեալ է
ընդ ժողովուրդդ, որ այդչափ ցնծացեալ
բերկրեցայք ընդ յաղթանակս Ալիւրիկե-
ցւոց և Ալիբէացւոց. իսկ զարդիս անձնա-
նախանձք՝ չկամիք տեսանել գերի կենդա-
նւոյն 'ի Հռոմայեցւոց ածեալ 'ի զինուց՝
զարքայն Մակեդոնիոյ, զնոյն և զԱղեք-
սանդրին և զՓիլիպպոսին զփառան։ Իսկ
զիարդ դժոխրմբերելի կիրք ոչ իցեն, եթէ

յորժամ համբաւ անյայտ յաղթութեանն հուչակ երթեմն հարեալ 'ի քաղաքիդ, զոհս յաղեցէք դուք աստուածոց, և պաղատանս կարդեցէք ձերովքդ իսկ աչօք ճշդրտել զհամբաւն. և զարդիս 'ի ժամանել հասանել առ ձեզ նորուն զօրավարին ստուգութեամբ յաղթութեանն, դարձջիք զլանալ աստուածոցն զփառան, և ձեզ ինքնին՝ ըզխնդութիւնդ. իբրու այն թէ խուսափիցէք դուք մի՛ կալ 'ի զնին մեծութեան ձերոյ և յաղթութեանցդ. կամ թէ արդեօք սխտակից կարեկից աղքային լինիցիք։ Եւ արդեօք լաւ իցէ յախտակցութենէ այսի, քան թէ 'ի նախանձուն մախանաց առ զօրավարդ խափանել զյաղթանակն"։

Ապա յաւելեալ 'ի բանն՝ ասէր. "Այլ աւադիկ յայդչափ իմն իշխանութիւն ձեօք ինքնին լրբեցաւ չարութիւնն, որպէս զի և յաղագս տնտեսութեան զօրավարացն յանդգնել խօսել և յաղագս յաղթանակին, այր՝ որ և ոչ վերս մի է նորա. այլ նորա անխոց և անսպի է մարմինն՝ գիրդ և հովասուն միշտ վարելով կեանս. և 'ի նոյն յանդգնի յանդիման ձեր՝ որ այնչափ վերս տարեալ ձեր 'ի մարմնի՝ գիտէք իսկ քաջ արդարութեամբ դատել վասն արութեան և վասն վատութեան զօրավարացն"։ Զայս ասաց Մարկոս, և անդէն զլանջսն մերկացեալ՝ սպիս ամբաւ ցուցանէր հրապարակին. ապա և յետ կուսէ մարմնոյն՝ զնոյն ցուցեալ անձահ խուժանին, և 'ի նոյն յայնժամ առ Գալբաս դարձուցեալ զբանն՝ ա-

սէր. "Ծիծաղիս դու 'ի վերայ այսոցիկ. այլ ես նոքիմբք Հոխանամ առաջի քաղաքայնոց, զոր տարայ ես վասն դոցա զօրհանապազ յերիվար աշտանակեալ զցայդ և զցերեկ: Այլ աղէ դու այժմիկ 'ի մի խրմբեա զդոսա արձակել քուեայս, և ես ինքնին իջեալ՝ զայր այր 'ի նոցանէ զննեցից գիտել ոյք ոմանք իցեն անզգամք 'ի դոսա և ապաշնորհք, և ոքք 'ի մարտս խնդրեսցեն առաւել զկամս անձանց՝ քան զհրամանս զօրավարացն":

Ասեն՝ եթէ 'ի բանից աստի այնչափ իմն ընկճեցան զօրականք և փոխեցան, զի և առհասարակ ցեղք յայնժամ յաղթանակի հանդէս սահմանեցին Եմիլեայ: Եւ պատմեն՝ յաղթանակեալնմա օրինակ զայս: Ժողովուրդք առհասարակ 'ի Թատերս ձիընթացիկս՝ զոր կոչեն նոքա Կրկէս, և 'ի հրապարակին դարձեալ՝ տախտակամածս հարստեալ, և զայլ ևս վայրս քաղաքին դրաւեալ՝ 'ի զնին կալ բովանդակ հանդիսին՝ որ ընդ այն անցանէր, մնային դէտ ակն կալեալք՝ զարդարեալք 'ի հանդերձս պայծառս. անդ մեհեանք առհասարակ բաց էին՝ բոլորեալք 'ի բոլորս պսակաց և լի 'ի հանդերձանս խնդոց. անդ և պաշտօնեայք բազումք և վարոցաւորք ջինջ և անշաղախ պահէին զպողոտայն, 'ի բաց 'ի միջոյ անտի քեցեալք զնառնագնացս և զսինլրքորս խուժանին: Իսկ շուք հանդիսին յերիս բաշխեցաւ աւուրս: Օրն առաջին հազիւ ուրեմն բաւեաց 'ի զնին կալ

տեսանել, այն ինչ հանդիսացեալ գայր անցանէր կապուտ կողոպուտ անդրեացն և կենդանագիր նկարուցն և վիթխարի արձանացն. և բարձեալ բերէին 'ի վերայ կառաց երկերիւր և յիսուն:

Յերկրորդումն աւուր գային անցանէին 'ի վերայ կառաց բազմաց զէնք դեղեցիկք և նոր և չքնաղ, բազմահանդերձ աւար Մակեդոնացւոցն, համակ լուսաճաճանչք 'ի պողովատիկ և 'ի պղինձ փայլուն. և Թէպէտ և Ճարտարարուեստս յոյժ և գեղեցիկս դասաւորեցան ամենայն, Թուէր իմն ինքնին ըստ դիպաց եղեալ դասակարգուԹեանն, այնպէս խառն 'ի խուռն կուտեալ 'ի վերայ միմեանց. սաղաւարտք և գլխանոցք 'ի վերայ վահանաց, լանջապանակք զրահից 'ի վերայ սռնապանաց, և ասպարք կրետացիք, և վահանք Թրակացիք, և կապարձք խառն ընդ սանձից երիվարաց. և 'ի միջոյ նոցա 'ի դուրս ցցուեալք սուսերք մերկապատեանք, և նիզակք հարստեալք. և չափակից խտրոցաւ անջրպետեալ կարգեցան զէնքն, որպէս զի և 'ի ձգեալ կառացն՝ ընդ միմեանս հարեալք շկահիւն արձակէին և շաչիւն ահաւոր. Թէպէտ և զէնք էին պարտեցելոց՝ ոչինչ այնպէս աներկիւղ էր տեսանելեացն: Զկնի զինաբարձ կառացն անցանէին արք երեք հազարք՝ բարձեալք գահեկանս արծաԹի յամանս եօԹնհարիւր և յիսուն, միոյ միոյ 'ի նոցանէն կշիռն երից տաղանդաց, բարձեալ 'ի չորից արանց: Յետ սոցա և այլ

ևս երեք հազարք, որ բարձեալ բերէին խառնարանս արծաթի, և եղջիւրս և բաժակս և նուագս, առհասարակ կարգեալք և բաշխեալք շքեղ. և էին նոքա սքանչելի մեծութեամբ, և կուռ միաձոյլ դրուագօք։

Իսկ յերրորդումն աւուր վաղ քաջ ընդառաւօտն անցեալ գնային յառաջոյ փողարքք, և հարկանէին նուագ ոչ զչուոյ զբականին կամ զհանդիսի, այլ յորժամ 'ի կռիւ դրգռեն զնոսա Հռոմայեցիք։ Յետ սոցա ածեալք բերէին եզինք պարարակք ոսկեղջիւրք՝ հարիւր և քսան, զարդարեալ պսակօք և բոլորիւք. ածէին զնոսա 'ի զոհ պատանիք գօտեւորեալք 'ի կամարս հիւակէն գեղեցիկ։ Զհետ գային մանկունք բարձեալք անօթս ոսկւոյ և արծաթոյ 'ի պէտս նուիրաց։ Եւ ապա արք բարձեալք դահեկանս ոսկւոյ յամանս, և կշիռ նոցա երից տաղանդաց, որպէս և դահեկանացն արծաթոյ. և թիւ նոցա եօթանասուն և եօթն։ Ապա զհետ գային և որք ունէին զԵմիլիոսին զնուիրական բաժակ ոսկւոյ տասն տաղանդաց՝ զարդարեալ ակամբք պատուականօք. և որք բարձեալ տանէին զԱնտիգոնեան զանօթն և զՍելեւկեանն և զԹերիկղեանն և զայլ ևս կահս ոսկի, որովք վարէր Պերսէոս յընթրել իւրում։ Զհետ գայր ապա կառքն Պերսէոսի և զէնք նորա, և թագն եդեալ 'ի վերայ զինուցն։ Յետ սակաւու ածեալ բերէին որդիք արքային գերեալք, և ընդ նոսա խումբ դայեկաց և վարժապետաց և դաստիարակաց՝

յարտասուս հարեալք առհասարակ, և ձեռս տատանէին առ հանդիսատեսն, և տղայոցն ևս զնոյն ուսուցանէին ողբել և պաղատել։ Էին նոքա ուստերք երկու և դուստր մի, որ ըստ տղայ տիոցն ոչինչ այն-պէս խելամուտք մեծութեան աղէտից իւ-րեանց, առաւել ևս ողորմելի էր տեսիլն, զի ճանաչէին իսկ ոչ նոքա զփոփոխել բաղդին իւրեանց. զի և ոչ ոք անդանօր գոգցեաս 'ի Պերսէոս դէտակն ունէր ընդ անցանելն, այնպէս իմն ակնկառոյցք էին հռոմայեցիք 'ի տղայս անդր խանդաղա-տեալք զնոքօք, զի և շատք անդանօր յար-տասուս հատան. և առհասարակ յայն տե-սիլ՝ բերկրութիւն խառնեցաւ ընդ թաղ-ծութեան, մինչև անցեալ գնացին ման-կունքն յառաջոյ։

Իսկ անդուստ Պերսէոս գայր զհետ մանկանցն իւրոց և նոցուն սպասարկուացն, արկեալ զանձամբ հանդերձ թխագոյն և սանդալս զհայրենի աշխարհին յոտս, և առ մեծի վշտին և անձկութեանն երևէր նա այր վշտատես զարհուրեալ և յափշութիւն գլխովին հատեալ։ Զհետ ընթանայր ամ-բոխ բարեկամացն և ընտանեացն վայրան-կեալ դիմաք թաղծագին յարտասուս հա-րեալք՝ ակնկառոյցք 'ի Պերսէոս և ախ-տակիցք աղէտից առն, ոչինչ հոգացեալք զիւրեանցն։ Ապ Պերսէոս յառաջագոյն յղեալ առ Եմիլիոս աղաչէր փարելի լինէր մի ածել զնա 'ի յաղթանակ անդր. իսկ Եմիլիոս զվատութիւնն այպանեալ զառն

և զանարի անձնասիրութիւն, զծաղու ե-
կեալ տայր պատասխանի. « Բա՛ էր իսկ
այն՝ ասէ՝ ընդ իշխանութեամբ նորա յա-
ռաջ քան զայս, և զարդիս դարձեալ՝ եթէ
կամեսցի »: Յայսմ առնէր՝ մահու ապրել
'ի նշաւակութեանն. յորմէ վերջացեալ ա-
նարին * և 'ի յոյս իմն ակնկալութեան
մեղկացեալ, բաժին յաղթանակին ածաւ
և ինքն ընդ իւրոց աւարաց: Յետ այսոցիկ
բարձեալ տանէին պսակք ոսկիք ջորեքհա-
րիւր, 'ի ձեռն հրեշտակաց յղեալք առ
Եմիլիոս 'ի քաղաքաց քաղաքաց 'ի մրցա-
նակ յաղթութեանն:

Զհետ ապա գայր անցանէր և ինքնին
Եմիլիոս 'ի վերայ կառաց մեծաշուք զար-
դարեալ, այն որ և արտաքոյ հանդիսին ար-
ժանաւոր էր և պանչելի. ծիրանի ոս-
կեձամուկ արկեալ զանձամբ, և յաջոյ ձե-
ռին դալինի. անդանօր և զօրականք դալի-
նաբարձք, 'ի վաշտս վաշտս և 'ի գունդս
գունդս զհետ գնային կառաց զօրավարին.
մերթ նուագս երգէին հայրենիս խառն
ընդ ծաղու, և մերթ շէրս դրուատից յաղ-
թողական նահատակութեանց 'ի Պաւղոս
Եմիլիոս, ականաւոր այր և հոյակապ յար-
դարելով զնա և բնաւից նախանձելի: Ա՛յլ
մախացաւ ընդ նմա և ոչ ոք 'ի բարեաց.
բայց 'ի քաջաց ոմն՝ որոյ է նուազել զբա-
ղրօրութիւնս զմեծամեծս և զառաւելա-
հրաշս, և այնպէս իմն խառնել զմարդկան
կենցաղս՝ զի և ոչ ոք սուրբ և անապակ
մնասցէ յարկածից. այլ նոքա քաջապէս

կենցաղավարեսցին՝ ըստ Հոմերոսենի, որոց բախտք յերկաքանչիւր ևս կողմն ածեալ բերին։

Քանզի էին Եմիլեայ ուստերք չորք. երկուքն՝ Սկիպիոն և Փաբիոս որպէս ասացաք՝ բնակէին յայլոց տունս. իսկ որք 'ի տան Նորա՝ պատանեակք երկու ծնեալ յերկրորդ կնոջէն, առաջինն՝ հինգ աւուրքք յառաջ քան զհանդէս յաղթանակին՝ մեռանէր ամաց չորեքտասանից. իսկ երկրորդն երեք աւուրքք զկնի՝ մեռանէր ամաց երկոտասանից։ Ուստի և առհասարակ ախտակիցք նմա 'ի քաղաքին՝ թախծէին ընդ անագորոյն բախտն, որ ոչն խորշեցաւ յայնչափ սուգ համակել զտունն զայն երանութեամբ լի և խնդութեամբ և սպանդիւք զոհից. և առեալ խառնեաց զկոծ և զարտասուաց առուն ընդ նուագս յաղթութեն և ընդ յաղթանակին փառս։ Յայսր ամենայնի վերայ ողջախոհ մտածութեամբ առաքինացեալ Եմիլիոս, զի արութեան պէտք են մարդկան ոչ ընդդէմ տիգաց միայն և զենուց թշնամեացն, այլ և ընդ աղգի աղգի դիմամարտութեանց բախտին, քաջապէս ժուժկալեալ 'ի խառնութեան ներհակացն կրից, և զյոռիսն քօղալեալ ընդ բարեօքն և զառտնին տուգանսն ընդ հաստարակացն շահու, ոչինչ իրթնացոյց զչուք փառաց յաղթութեանն։ Այն ինչ տուեալ հողոյ զառաջին զաւակն, դարձաւ նա 'ի հանդէս յաղթանակին իւրոյ. ապա նորա մեռեալ և երկրորդ զա-

ւակն յետ հանդիսին՝ 'ի մի վայր խմբեաց զքաղաքն. խօսեցաւ ոչ իբրև որ կարօտեալ ի՛ցէ մխիթարութեան բանից, այլ որ ինքնին մխիթար քաղաքացւոցն մատուսցէ՝ որ 'ի իսոր խոցեցան ընդ արկածն նորա. և ասէր՝ 'ի մարդկայնոց ասել երբէք ոչ զանգիտէլ, իսկ յաստուածայինն ցանգ խիթալ նմա 'ի բախտէն՝ իբրու որ անհաւատալիմ յոյժ ի՛ցէ և բազմագունակ. որ զի և 'ի մեծի պատերազմին՝ բախտն ինքնին իբրև հողմն գեղեցիկ յաջողակ՝ այնպէս նահատակեցաւ 'ի գործն, ցանգ դէտակն կալեալ դարձադարձ փոփոխութեանն։

"Քանզի զմի օր՝ ասէր Եմիլիոս՝ հատեալ զՅոնիականն 'ի Բրենդեսեայ եկի հասի 'ի Կերկիւրա. անդուստ յաւուրն հինգերորդի զոհ զոհեալ 'ի Դեղփիս, զաւուրս այլ հինգ ժամանեցի 'ի Մակեդոնիա 'ի զօրավար բանակին. անդ զսովորականն մեր կատարեալ սրբութի և ձեռնամուխ 'ի գործն եղեալ զաւուրս հնգետասան՝ քաջաբար 'ի գլուխս տարայ զմարտն։ Ապա յերկուացեալ խիթայի 'ի բախտէն, զի այնպէս գեղեցիկ ցայնվայր յաջողեաց ինձ. և քանզի և երկիւղ և վտանգ էր այլ ուստեք այնուհետև 'ի թշնամեաց, 'ի նորա փոփոխութենէն զանգիտէի. առաւել ևս յորժամ նաւագնաց գայի առ ձեզ ածեալ բանակ մեծ յաղթական 'ի փառս, և կապուտ կողոպուտ, և արքայս գերեալս։ Այլ աւադիկ ողջանդամ հասեալ այսր, և զքաղաքդ տեսեալ ցնծութեամբ լի՛ և

երանութեամբ և պաշտօնատար զոհից, հա-
մայն և այնպէս ոչ դադարեցայ խնթալ 'ի
նմանէ, որ ոչն բաշխեաց երբէք մարդկան
մեծամեծս՝ սուրբ և անխառն 'ի նախան-
ձուէն։ Իսկ զարդիս 'ի ծփանաց սրտի ընդ
հանդերձեալ արկած քաղաքիդ անդորրա-
ցայ, յանձն իմ առեալ զառտնին աղէտսն՝
մի զհետ միոյ յաւուրս նուիրականս հո-
ղոյ զիմ որդեական տալով զքաջառոյդ-
սին՝ որ զիսն ունէին պայազատել։ Արդ ես
աւադիկ անկասկած 'ի մեծաց արկածից՝
հաւատամ անդրժելի մնալ հասարակաց
մեր երանութեանս. իբրև շատ իսկ փոխա-
րինեաց նա զնահատակութիւնս մեր'ի կիրս
առ տնին աղէտից. օրինակ անտուեր մարդ-
կան տկարութեան՝ 'ի նեղքս զյաղթանա-
կողն ընծայելով և զյաղթանակեալն միան-
գամայն. բայց զի Պերսէոս պարտեալն ու-
նի տակաւին զիւր որդեական, իսկ Եմիլիոս
որ պարտեացն՝ զերկ է 'ի նոցանէն"։

Զայսօրինակ դեղեցիկ և քաջ՝ ասէն՝
խօսեալ Եմիլիոսի յայնժամ ճշգրիտ և ան-
խաբ խորհրդով։ Բայց նա թէպէտ և մե-
ծապէս ախտակցեր ընդ հիգութիւն Պեր-
սէոսի և քաջ հետամուտ օգնել նմա, ոչ-
ինչ սփոփանս բաւէր տալ նմա. այլ զի 'ի
տանէ բանտին առեալ փոխեաց զնա 'ի
յարկ վայելուչ և 'ի մարդասիրագոյն ևս
քաղաքավարութիւն կենաց. յորում վայ-
րի 'ի դիպահոլ կացեալ նա՝ ինքնին հրա-
ժարեալ 'ի կերակրոյ՝ որպէս բազմագոյնք
պատմեն՝ այնպէս անտուաղութեամբ վճա-

րեաց զկնեանսն։ Իսկ կէսք՝ Նորանշան և մասնաւոր պատմեն զմահն Նորա. քանզի գրգռեալ ընդ նմա՝ որպէս ասեն՝ պահապանք Նորա և գժգոհեալք, և չկարացեալ այլազգ չարչարել զնա, խորհուրդ խորհեցան զքունն հատանել յաչաց Նորա. 'ի ննջել Նորա՝ փոյթ 'ի մէջ առեալ զամենայն հնարէին ցանգ ընդոստուցանել զայրն 'ի քնոյն և 'ի տքնութեան զօրհանապազ պահել զնա, մինչև հուսկ ապա խոպառ վատեալ 'ի զօրութենէն՝ այնպէս մեռանէր Պերսէոս։ Մեռաւ և դուստր Նորա, և մի յորդւոցն Նորա. իսկ երրորդն՝ Աղեքսանդրոս անուն՝ որպէս ասեն՝ մեծապէս յաջողաձեռն 'ի գործս Ճախարակաց և 'ի դրուագս, վարժեալ գեղեցիկ 'ի դպրութիւնս և 'ի բարբառ Հռոմայեցւոց՝ կարգեցաւ առենադպիր աւագանւոյն, յորում պաշտաման գտաւ նա այր յաջողակ և շոյտ։

Իսկ 'ի Մակեդոնեան նահատակութիւն Եմիլեայ՝ շնորհս մարդասիրագոյն առ ժողովուրդն գրեն զնորա՝ թէ այնչափ մթերք դրամոց 'ի ձեռն Նորա կուտեցան 'ի գանձ արքունի, զի և պէտք չեղեն հարկս հարկանելոյ ժողովրդեանն մինչև 'ի ժամանակս Իրտիոսի և Պանսայ՝ որ կարգեցան հիւպատոսք յառաջին մարտի Անտոնիոսի և Կեսարու։ Առ այս՝ և ականաւոր գտաւ Եմիլիոս, զի թէպէտ և այնչափ յարգեալ և գգուեալ 'ի խուժանէն, ցանգ կուսակից գտաւ նա աւագպետութեանն. և չասաց նա ինչ և չգործեաց ինչ մի 'ի մարդահա-

ՃԵԼ զԼուժանն. որ աղագաւ յետ ժամանակաց կշտամբէր Ապպիոս զԱֆրիկանոս Սկիպիոն։ Քանզի արք աւագք գողով ոչ քա յայնժամ 'ի քաղաքին, միանգամայն հետամուտք եղեն յաւագութիւն համարակալի։ Ապպիոս 'ի Թիկունս իւր առեալ զՍինկղիտոսն և զաղատորեարն (զի այս էր հայրենի քաղաքավարութիւն Ապպեանցն). իսկ Սկիպիոն՝ Թող զաւագութիւն անձինն՝ խնդրէր նա ցանգ ՃՈխանալ և 'ի մտերմութենէ խուժանին։ Արդ 'ի հրապարակ եկեալ երկոքին նոքա, տեսեալ Ապպիոսի առընթեր Սկիպիոնի արս ոմանս վատաստոհմիկս և 'ի ծառայից կարգէն, սակայն վարժք 'ի ժողովս հրապարակաց և հզօրք 'ի խուժանին և ձեռնհասք աղաղակաւ յամենայնի յընտրութիւն աւագութեանց, մեծաձայն գոչեաց Ապպիոս. "Ո՞վ Պաւղէ Եմիլիէ, ա՛ղէ դու յոգւոց հան 'ի ներքուստ հողոյ, լուեալ զի զքոյ որդին 'ի համարակալութիւն ամբառնայ Եմիղիոս ոմն մունետիկ, և Լիկիննիոս ոմն բանակռիւ"։

Այլ Սկիպիոն 'ի մտերմութեան էր ժողովրդոց, զի յարգէր զնոսա. իսկ Եմիլիոս՝ թէպէտ և 'ի կողմն աւագանւոյն՝ սիրէր 'ի խուժանէն ոչինչ պակաս քան զմարդելոյզս նորա. և քաջայայտ է 'ի շուք աւագութեանցն՝ զոր ետուն նմա ժողովուրդք. և զի և համարակալ ևս կարգեցին զնա, իշխանութիւն սուրբ և նուիրական և աւագամեծար քան զամենայնն. և իշխան է նա՝ հանդերձ այլովք՝ և 'ի քննել գատել ըղ-

քաղաքավարութիւն կենաց մարդոյ։ Քան-
զի իշխան են համարակալքդ՝ և 'ի Սինկղի-
տոսէ անտի 'ի բաց հանել զայր խառնա-
կրօն, և գրել դասել 'ի նմա զայր առաքի-
նի. և իշխան են նոքա՝ յանժուժկալ երի-
տասարդաց զերիվարն 'ի բաց հանել և նշա-
ւակել. և ոստիկան են նոքա սակ կարգել
իրաց և աշխարհագիր առնել։ Եւ յայն-
ժամ առ համարակալութեամբն Եմիլեայ
աշխարհագիր եղև մարդկան երեսուն և ե-
րից բիւրուց և եօթն հազար և չորեքհա-
րիւր և յիսուն և երկուց. և կարգեաց նա
Սինկղիտոսին նախաթոռ զՄարկոս Եմի-
լիոս Լեպիդոս, որ և չորիցս 'ի նոյն աւա-
գութիւն ամբարձեալ իսկ էր. և 'ի բաց
հան 'ի Սինկղիտոսէն զերիս 'ի ծերոցն՝ որ
չէին յականաւորաց անտի. իսկ 'ի քննու-
թեան ասպետացն՝ ինայօրէն վարեցաւ իբ-
րու զՄարկոսն Փիլիպպոս հոմիշխան նորա։

Իսկ յետ այնորիկ իբրև յաւագութեանն
յայնմիկ գեղեցկապէս վարեաց և կարգեաց
բազում ինչ և մեծամեծս, անկաւ 'ի հի-
ւանդութիւն դժնդակ զառաջինն՝ այլ
առ յապայ անվտանգ, թէպէտ և դժուա-
րին և դժոխրմբեր։ Ուստի և 'ի բժշկացն
խորհրդոյ նաւեալ նա յԵղեսաս Խռալեոյ,
անդանօր դադարեալ նստաւ հարուստ մի
ժամանակ 'ի Ծովափնեայ և յանդորրաւէտ
ագարակն։ Բայց անդուստ հռովմայեցիք
անձուկ ունէին առն, և 'ի Թատերս բա-
զում անգամ՝ իբրու ապերս արկեալ՝ ցան-
կային միւսանգամ տեսանել զնա։ Իբրև

աւուրք զոհագործութեան 'ի վերայ հաստանէին՝ յորում հարկ էր գտանել նմա, և ինքն յուժի կայր 'ի հիւանդութեանն, դարձաւ 'ի Հռոմ և կատարէր զզոհն ընդայլոց քահանայից 'ի ցնծութիւն մեծ ժողովրդոցն խռնելոց։ Իսկ յաւուրն երկրորդի զոհեալ միւսանգամ դեպ վասն փրկութեան անձինն, և կատարեալ զզոհն և դարձ 'ի տուն իւր արարեալ և ընկողմանեալ, մինչև փոփոխութիւն զգացեալ յանձին 'ի խօթութենէն, զգայաղիրկ եղեալ և խելաղիրկ, այնպէս յաւուրն երկրորդի մեռաներ 8 . ողջ և անվթար ժառանգեալ զերանականն զամենայն։

Քանզի և դիահանք նորա սքանչելի դըստաւ և աւագամեծար, փառս յառաքինութիւն առնն յաւելեալ պերճ և երեքերանեան յուղարկաւորութեամբ . ոչ յոսկի համակեալ և ոչ 'ի փղոսկր և ոչ յայլ ինչ հանդերձանս բազմակատարս և մեծափառս, այլ 'ի մարդասիրութեան կիրս և 'ի տրիտուր պատուոյն և 'ի խորհուրդս մտերիմս և ըղձակերտս՝ զոր 'ի նեղքս բերին նմա թշնամիքն անգամ, թող զքաղաքայինսն։ Քանզի և որչափ ինչ յԻրեքրացւոց անտի և 'ի Ղիգիւացւոց և 'ի Մակեդոնացւոց ըստ դիպաց գտան յայնժամ 'ի քաղաքին, որք առաւել առոյգն էին 'ի նոսա և կորովիք՝ մտեալ և նոքա ընդ դագաղաւն այնպէս 'ի միասին բարձեալ տանէին . իսկ ծերագոյնքն 'ի նոսա յուղարկաւորք եղեալ, բարերար և փրկիչ հայրենեաց կարդային

զԵմիլիոս։ Քանզի ոչ 'ի ժամանակն մի-
այն՝ յորս տիրապետեաց, հեզագոյնս և
մարդասիրագոյնս ընծայեաց նա զանձն առ
ամենեսին, այլ և բնաւ իսկ զամենայն ժա-
մանակս կենաց իւրոց ցանգ բարեգործեալ՝
սատար եղև նոցա իբրու ընտանեաց իւրոց
և ազգակցաց։ Այլ զինչս նորա հաղիւ ա-
սեն լեալ երեսուն և եօթն բիւրուց դրա-
մակշռոց, որոց ժառանգս եթող նա զեր-
կուս որդիսն. բայց կրսերն Սկիպիոն զա-
մենայն միանգամայն շնորհեաց ունել եղ-
բօր իւրում. քանզի և բնակեալ իսկ էր նա
որդեգրութեամբ 'ի տուն բազմահարուստ
Ափրիկանոսի։

Այսպիսի ինչ ասեն լեալ զվարս և ըղ-
կենցաղն Պաւղոսի Եմիլիոսի։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՏԻՄՈՂԵՒՈՆԴԵԱՑ
ԵՒ
ԵՄԻԼԻՈՍԻ ՊԱՒՂՈՍԻ

ԱՐԴ այսպիսի ինչ գոլով սոցա ըստ պատմութեանն, քաջայայտ է՝ եթէ չեմք ընդ սոսա շատ ինչ տարբերութիւն և անանմանութիւն 'ի զուգակշռութեան ընդ միմեանս։ Քանզի մարտ պատերազմի մղէցին երկոքին նոքա ընդ մեծամեծս և ընդ փառաւորս. մին՝ ընդ Մակեդոնացիս, և միւսն՝ ընդ Կարթեգոնացիս։ Դարձեալ և յաղթութիւնք նոցա գերահռչակք. քանզի Եմիլիոս ընդ բռամբ նուաճեաց զՄակեդոնիա, և լռեալ դադարեցոյց զպայազատութիւնն Անտիգոնոսի յարքային եօթներորդ. իսկ Տիմողեւոնդ միանգամայն զամենայն բռնաւորութիւնսն եբարձ ընջեաց 'ի Սիկիլեոյ, և յազատութիւն առհասարակ փոխեաց զԿղզին։

Բայց թէ ումեք կամք լցեն արդեօք 'ի պայքար մտանել, եթէ Եմիլիոս մարտ է դեալ կռուեցաւ ընդ Պերսէոսի՝ յորժամ հզօրացեալ էր նա և Հռոմայեցւոց յաղթական։ Իսկ Տիմողեւոնդ ընդ Դիոնիսեայ՝ որ յայնժամ գլխաւորն վատեալն էր և անկեալ յուժոյ։

Դարձեալ և 'ի ջատագով Տիմողեւոնդեայ պայքարեսցի ոք, եթէ նա բռնաւորս բազումս և զմեծ զօրութիւնն զԿարքեդոնացւոց նկուն արար վայրավատին զօրականօք. ոչ իբրու զԵմիլիոսն՝ արս ընդ ձեռամբ ունելով քաջամարտիկս և վարժս և հրահանգս, այլ վարձկանս ոմանս և անհրահանգս 'ի զինուորութեան, և որք ըստ հաճոյից կամացն 'ի նոյն բնաւորեալք էին։ Քանզի զհաւասար նահատակութիւնս նահատակեալ անհաւասար հանդերձանօք, այս քաջութեան զօրավարին է։

Արդ երկոքին նոքա միանգամայն եբք և մաքուրք և արդարք կացին 'ի գործս իւրեանց։ Այլ Եմիլիոս թուի թէ յօրինաց անտի և 'ի հայրենեացն իւրոց այնպէս անդրստին 'ի սկզբանէն հրահանգեալ մխեցաւ 'ի գործն. իսկ Տիմողեւոնդ անձամբ զանձն այնպիսի 'ի նեբքս ընծայեցոյց։ Եւ վկայէ բանիս, զի Հռոմայեցիք առհասարակ 'ի ժամանակին յայնմիկ քաջապէս հրահանգեալ էին, և հպատակեալք սովորութեանց իւրեանց, և մեծապէս պատկառ կային օրինաց իւրեանց և քաղաքացեաց։ Բայց 'ի Հելլենացւոց եղև և ոչ ոք

յառաջնորդաց կամ 'ի զօրավարաց, որ ե-
կեալ հասեալ 'ի Սիկիլիա ոչ ապականեաց
զճանապարհ իւր, բայց 'ի Դիոնէ։ Թէ-
պէտ և բազումք կասկածէն, եթէ և Դիոն
ինքնին զմիապետութեան թեկն ածէր, և
արքայութի իմն Լակոնացի յերազէր հաս-
տել անդանօր։ Իսկ զՏիմէոս և զԴիւղիպ-
պոս ասեն անփառունակ և անարգաբար
յեռս յղել Սիրակուսացւոց, 'ի վերայ կա-
ցեալ արծաթսիրութեան նոցա և ընչա-
քաղցութեան 'ի զօրավարութէ իւրեանց։
Այլ թէ Փարակէս Սպարտացի և Կալիպ-
պոս Աթենացի՝ յոյս 'ի մտի եդեալք իշ-
խել Սիկիլիոյ, անիրաւեալք հարստահա-
րեցին և ուխտադրուժք դտան, զայս բա-
զումք պատմեն 'ի մատենագրաց։ Բայց սա-
կայն ոչք ոմանք էին դոքա, կամ թէ որ
այն էր տէրութիւն 'ի ձեռս նոցա, զի յոյս
այդպիսի 'ի միտս անկցի դոցա. քանզի Փա-
րակէսդ այդ սպասահարկու էր Դիոնի-
սեայ՝ յորժամ հալածեալ վտարեցին ըզ-
նա Սիրակուսացիք։ Իսկ Կալիպպոսդ առ
Դիոնի մի էր 'ի զօրապետաց անտի եկաց
զօրականին։

Այլ Տիմողեւոնդ ինքնակալ զօրավար
յղեալ Սիրակուսացւոց 'ի խնդրոյ նոցա և
'ի հայցուածոց, և որում հասանէր՝ ոչ 'ի
խնդիր երանեալ զօրաց, այլ առ ձեռն կազմ
ունեալ զնոսա և ինքնակամն և մտադիւրս,
կէտ նպատակի իւրում զօրավարութեանն
և իշխանութեան եդ առաջի զքակեալ և ըզ-
քայքայեալ զանօրէն բռնաւորացն։

Բայց այն սքանչելի է Եմիլիոսինն, զի զայնպիսի արքայութիւն հիմն 'ի վեր տապալեալ, և ոչ դրամակշռով միով չափ ածեցոյց զգոյս իւր. և ոչ յակին անգամ արկանէր, և ոչ մօտէր մերձենայր երբէք յարծաթն, թէպէտ և բազում տայր այլոց և բաշխէր պարգևս։ Այլ չասեմ՝ եթէ բամբասելի լոցէ Տիմողեւոնդ, զի տուն գեղեցիկ յանձին կալաւ և ագարակ։ Քանզի ոչ եթէ առնուլն յետ այնչափ մրցանացն առնարդ ինչ լոցէ, այլ չառնուլն լաւ ևս է. և լրումն առաքինութեան է՝ 'ի վայելչականն անգամ անկարօտ զանձն ընծայել։ Եւ զոր օրինակ՝ քան զմարմինն բաւական 'ի ժուժկալել ցրտոյն կամ ջերմին, կորովագոյն ևս է մարմինն՝ որ առ երկաքանչիւր ևս այլայլութիւնսն միանգամայն հաւասար քաջութեամբ բնաւորեալ լոցէ. սապէս և հոգւոյն անապակ քաջոզջութիւն և զօրութիւն այն է, զոր ոչ բարեբաստութիւնն ըմբոստութեամբն գրգռեալ մեղկացուցանէ, և ոչ արկած աղէտիցն երբէք նկուն առնէ։

Կատարեալ առաւել զանձն 'ի նեղքս ընծայեաց Եմիլիոս, զի 'ի գժնդակ յայն գէպսն և 'ի կիրս մեծամեծս մահու զաւակացն՝ ոչ գուշնաքեայ ոք և ոչ անփառունակ ոք երևեցաւ, քան 'ի բարեբաստութիւնս իւր։ Իսկ Տիմողեւոնդ գեղեցիկ քաջութեամբնահատակեալ առ եղբայրն, ոչ ընդդէմ եկաց կրից թաղծութեանն՝ հանճարով բանին, այլ ապաշաւանօքն և

տխրութեամբն նկուն եղէալ, զամն քսան ոչինչ հանդուրժեաց տեսանել զբեմն և ըզ-հրապարակն։ Ապաքէն 'ի վատթար բանից պարտ և արժան է փախչել և զամօթի հարբ կանել, սակայն և առ ամենայն անփառուութիւն հեշտընկալ լինել՝ պարզ և համբոյր բարոյից է, այլ ոչ մեծախորհուրդ ոգւոյ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս յառաջաբան՝ թուի ինձ՝ 'ի Պլուտարքեայ կարգեալ 'ի սկիզբն Տիմողեւոնդեայ վարուցն, որպէս յառաջ ընթացեալ 'ի բանն՝ իմաստասիրեացէ դք։

2. Քանզի Յն. Αἰμύλος նշանակէ՝ Քաղցրաբարբառ։

3. Պլուտարք 'ի Յն. դնէ Κάλτιον. քանզի և Ալփաբետն Յունաց չունի՝ Շկամ Ջ։

4. Է աղանդն Սկեպտիկեանց։

5. Շերևին այժմ 'ի միջի, ոչ այս գիրք պատմութեան Պողիւբիոսի, և ոչ այս նամակ Նասիկասայ։

6. Արդեաք հնչեսցեն ականջք ընթերցանելեացն՝ զայնչափ նուազութիւն լուեալ զանկելոցն Հռոմայեցւոց յայնպիսումն ահագին և արիւնայեղց մարտի, զոր նկարագրեաց Պլուտարք։ Թուի թէ և Պլուտարքոս վասն այնորիկ ինքն չասէ զանհաւատալի զթիւն, այլ երաշխաւոր զայլս կացուցանէ հաշուին այնորիկ։

* Տե՛ս զայսմանէ ընդդէմ Պլուտարքեայ 'ի Լիւկուրգոս. Ծան. 11. և այլուր ևս 'ի Ծանօթութիւնս։

7. Եւ գումարի այս ժամանակ իբրև հարիւր և քսան և հինգ ամաց։

8. Եւ մեռաւ Եմիլիոս 'ի հասակի ամաց վաթսուն և ութից։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՅ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՊԵՂՈՊԻԴԵԱՅ

ԵՒ

ՄԱՐԿԵՂՂՈՍԻ

ՊԵՂՈՊԻԴԷՍ

ԿԱՏՈՎՆ երէց լուեալ երբեմն 'ի գո-
վութիւն առնուլ զայր ոք՝ որ անհանճա-
րաբար դիմագրաւեալ՝ յանդուգն շահա-
տակէր 'ի մարտս, ասէր՝ եթէ "Բազմօք
տարբերեալ է՝ արժանապատիւ զքաջու-
թիւնն համարել, և ոչ արժանապատիւ՝
զկեալն": Եւ ուղղապէս բարբառեցաւ
նա: Ըստ որում և առ Անտիգոնոսիւ զօ-
րական ոմն յանդուգն շահատակ՝ այլ վը-
տիտ անձամբ և ախտակիր մարմնով, հար-
ցեալ արքային զպատճառ դեղնութեան
դիմացն, խոստովան եղև այրն՝ ախտ ինչ ու-
նել 'ի ծածուկ: Ապա մարդասիրեալ արք-
քայն պատուէր տայր բժշկացն օգնել նմա,
և զամենայն փոյթ խնամոց և զդարման 'ի
նեղքս մատուցանել նմա: Իբրև այնպէս ա-
պաքինեալ բժշկեցաւ այրն, չէր նա որ-
պէս յերեկն և յեռանդն դիմագրաւ 'ի

վանդաս և շահատակ յառաջադէմ 'ի մերց-
մունս, զի և Անախիդոնոսի ինքնին կշտամ-
բէլ զնա և զարմանալ ընդ փոփոխութիւն։
Սակայն ոչ ծածկէաց այրն զպատճառն,
այլ ասէ. "Դու ինքնին ո՞վ թագաւոր ան-
արի գործեցեր զիս, ազատեալ զիս 'ի չա-
րեաց անտի՝ որով անփոյթ առնէի ես ըզ-
կենաց իմոց"։

Եւ թուի թէ՝ առ այս և Սիսարացի ոք
այր ասասցէ վասն Սպարտացւոց՝ եթէ ոչ
'ի մեծաց ինչ չարեաց համարէին նոքա
զմեռանելն 'ի մարտի, ազատացեալք նո-
վաւ 'ի բազմադէմ քրտանց և 'ի խստամ-
բեր կենացն։ Այլ սակայն բնաւորական
լոյէ արդեօք Սիսարացւոցդ իգացելոց 'ի
գրգանս և 'ի փափկութիւնս՝ կարծել է-
թէ ոչք միանգամ յառաքինութենէն բե-
րեալք և ցանկացեալք փառս ժառան-
գել՝ 'ի մահուանէ չերկնչին, առեսցեն նո-
քա և զկեանսն գլխովին։ Սակայն Լա-
կեդեմոնացւոց սիրելի էր միանգամայն և
կեալն և մեռանելն, բայց զի միայն առա-
քինաբար նահատակեսցին յերկաքանչիւր-
սն յայնոսիկ. ըստ որում քաջայայտ կայ
'ի Դամբանականէն յայնմանէ, որ ունի
այսպէս. "Սոքա մեռան. սակայն ոչ ըզ-
կեալն համարեցան դեղեցիկ, և ոչ դար-
ձեալ զմեռանելն. բայց թէ յորժամ եր-
կաքանչիւր նոքա գեղեցիկ առաքինութիւն
պատակեսցին"։ Քանզի այսանելի չէ ար-
դեօք փախչել 'ի մահուանէ, յորժամ ոք
ցանկացեալ լոյէ առաքինաբար կենացն. և

ոչ դարձեալ գովելի է դիմագրաւ 'ի մահ
ելնել, յորժամ արդամարհ ունիցի ըզ-
կեանսն։ Վասն որոյ և Հոմերոս ինքնին
ցանգ զիւր նահատակսն զկորովիսն և զքա-
ջամարտիկս՝ յասպարէզ հանէ 'ի զէն 'ի
զարդ դեղեցիկ վառեալ։ Եւ օրէնագիրքն
Հելլենացւոց պատուհաս 'ի վերայ կապէն
առն՝ որ ասպարընկէցն լցէ, այլ ոչ՝ որ
զսուրն կամ զնիզակն լքցէ. յայտ արարեալ
զի այր այր՝ քան զինասէր թշնամւոյն՝ զան-
ձին պաշտպանութիւն նախապատիւ ա-
րասցէ. և առաւել ևս՝ որ միանգամ քա-
ղաքի կամ բանակի առաջնորդ կացեալ ի-
ցէ։ Քանզի եթէ (որպէս դեղեցիկ բա-
ժանեաց Իփիկրատէս) հեռակազմքք թե-
թևաղէնք՝ ձեռք և բազուկն են բանակին,
և այրուձին՝ ոտք նորա, և փաղանգն՝ լանջք
են նորա և իրան, իսկ զօրավարն՝ գլուխ
է նորա. որ եթէ երբէք յանդուգն դիմա-
գրաւ ելցէ 'ի վտանգն, անփոյթ ուրեմն
լցէ նա ոչ վասն անձին միայն, այլ և առ-
հասարակ վասն նոցա՝ որոց փրկութիւնն
'ի նա ինքն հաստատեալ լցէ. դարձեալ և
ներհակաբար։

Ուստի և Կալլիկրատիդէս՝ թէպէտ և ա-
ւագ այր՝ չէտ բարուք զպատասխանին առ
գուշակն որ ասէր նմա զգուշանալ 'ի մա-
հուանէն՝ զոր սպանդքն ցուցանէին. զի
պատասխանի արար. "Ձէ Սպարտիա 'ի մի
այր հաստատեալ"։ Քանզի Կալլիկրատի-
դէս՝ թէպէտ և 'ի կռուէլ խրոմ և 'ի նա-
ւէն և 'ի զինուորելն ընդ այլոց ձեռամբ՝

մի ոք էր, սակայն 'ի զօրավարութեանն՝ յիւրում անձին ամենիսեալ ունէր առ-հասարակ զայլոցն զօրութիւն. զի և չէր իսկ այնուհետև մի՝ ընդ որում 'ի մահ մի-անգամայն մատնէր և ամբաւութիւն զո-րականին։ Քաջիկ ևս երիցն Անտիգոնոս, յորժամ նաւամարտիկ հանդերձեալ էր լինել մօտ յԱնդրոս, առն՝ որ բազմագոյն ասէր զԹշնամեացն նաւս, տայր պատաս-խանի. "Իսկ դու զիմ անձն քանիօն նա-ւաց ասես արժել"։ Եւ բանիւդ մեծա-պէս յարդէր զաւագութիւն զօրավարի՝ որ զհմտութիւն և զառաքինութիւնն մերձ իւր ունիցի, առաջին գործ ունելով պահել զնա՝ որ պահէն առհասարակ զամենայնն։ Եւ վասն այնորիկ՝ յորժամ Քարեոէս ա-ռեալ ցուցանէր Աթենացւոց զսպիս վի-րացն և զասպարն ևս տիգախոց, դեղեցիկս բարբառեցաւ Տիմոթէոս. "Եւ ես ինքնին մեծապէս զամօթի հարայ, 'ի պաշարման անդ Սամոսացւոց մօտ ինձ անկանելով փքնին. քանզի դիմագրաւ եղէ իբրև երի-տասարդ յանդուգն, անարժան զօրավարի և առաջնորդի մեծի բանակին". Քանզի ուր շահ մեծ 'ի նեղքս բերցէ վտանգեալ զօ-րավարին, անդանօր պէտք են նմա անիրա-նայ դիմագրաւ 'ի գործն լինել. ոչինչ ունկն մատուցեալ որոց ասենն՝ եթէ քաջի զօ-րավարի առ 'ի ծերութենէն մեռանել 'ի դէպ իցէ, կամ թէ 'ի ծերացեալ հասա-կի։ Իսկ ուր դուշնաքեայ իցէ շահն 'ի յա-ջողել իրացն, և զեան մեծապէս՝ 'ի ջյա-

ջողէն, ոչ ոք յայնժամ 'ի զօրավարէն ըզ-
սոսկական զինաւորին պահանջեացէ զգործ
վտանգաբեր զօրավարի։

Եւ արդ մեք զայսոսիկ 'ի դէպ համարե-
ցաք կանխաբանել 'ի վարն Պեղոպիդեայ
և Մարկեղղոսի, զորոց առեալս եմք 'ի գրել.
զի երկաքանչիւր դոքա ազգ աւադք՝ անհան-
ճարաբար դիմադրաւեալք 'ի մահ վարե-
ցան։ Քանզի կորովիք յոյժ գողով սոքա 'ի
մարտի և յաղթաբաղուկք, և պսակեալ
զիւրեանց հայրենիան գեղեցիկ նահատա-
կութեամբք, և թշնամիս մեծամեծս 'ի
պարտութիւն մատնեալ, մին առաջին՝ որ-
պէս պատմեն՝ հարեալ խորտակեաց զԱն-
նիբաղ զանպարտելի. և միւսն 'ի Ճակատա-
մարտի պարտեաց զԱկեդեմոնացիս՝ որ
յայնժամ միանգամայն ծովու և ցամաքի
տիրացեալ էին։ Իսկ յետ այնորիկ ոչինչ
խնայեալ նոքա յանձինս՝ անխորհրդա-
բար 'ի կշիռ եդին զկեանս 'ի ժամանակին՝
յորում մեծապէս պէտք էին կենաց նո-
ցա և զօրավարութեանն։ Ուստի և միմեանց
նմանողութեանն զհետ գնացեալ մեր, զու-
գակշիռ կարգեցաք զվարս դոցա։

Պեղոպիդէս Իպպոկղոսի որդի՝ էր 'ի
Թեբայ 'ի հոյակապ զարմէ իբրու զԵպա-
մինոնդասն։ Սա 'ի բազմահարուստ տան
սնեալ, և պատանի տակաւին՝ ժառանգ
կացեալ մեծաշուք և ընչաւէտ ազգատոհ-
մի, նպաստ լինէր կարօտելոցն և խնամա-
կալու. յայտ արարեալ եթէ անշուշտ տէր
է ընչիցն, և ոչ ծառայ։ Քանզի բազում

այն են 'ի մարդկանէ՝ որպէս Արիստոտէլ ասէ՝ որ կամ առ ճղճիմ բարոյիցն 'ի գործ զինչն չվարեն, կամ թէ շռայլութեամբն չարաչար վարեն. վերջինքդ՝ ցանգ գերի են դրդանաց, և առաջինքդ՝ արծաթասիրութեան։ Արդ՝ թեբայեցիք առհասարակ վայելեալք 'ի մարդասէր առատաձեռնութիւնն Պեղոպիդեայ՝ շնորհս մեծապէս ունէին նմա. սակայն յամենայն բարեկամն նորա միայն Եպամինոնդաս երբէք յանձին չկալաւ առնուլ ինչ 'ի նմանէ. և ինքնին Պեղոպիդէս հանգուցեալ աղքատութեանն Եպամինոնդեայ յարդարեաց զանձրն, և մտագիւրագոյնս նմանող լինէր նմա յանպաճոյճ հանդերձն և 'ի սակաւապէս 'ի կերանն, յանխոնջելի վաստակն և յանխարդախ պարծանս 'ի զինուորութեանն մարտս։ Ըստ որում առ Եւրիպիդեայ Կապանէոսն այն՝ որ թէպէտ և ընչաւէտ յոյժ, երբէք յընչաւէտութենէն ոչ փքանայր։ Նա՝ և զամօթի հարկանէր Պեղոպիդէս, եթէ երբէք վասն անձինն աւելի ինչ ծախէր քան զայր մուրիկ թեբայեցի։ Այլ Եպամինոնդաս զաղքատութիւն իբրև հայրենի ժառանգութիւն կալեալ, 'ի ձեռն խնայասիրութեանն հեշտընկալ և փոքրոգի առագրեաց ամուրի միակեցիկ քաղաքավարութեամբ՝ զոր ընտրեաց անձին իւրում։ Բայց Պեղոպիդէս պայծառ հարստանեացն ասպնջական, և որդիս ևս ծնեալ, 'ի վերայ այսր և ոչինչ պակաս ընչատեաց էր նա. և զօրհանապազ 'ի սպասաւորու-

թեան քաղաքին Թարթափեալ, Ծախե-
ցան ինչք նորա։ Ուստի և խրատտու բարե-
կամքն եղեալ նմա, իբրու ոչ գեղեցիկս
անփոյթ առնել նմա զկարևորքն՝ զընչիւքն,
եւ պատասխանի. Օն Ն օն՝ ԿԱՐՆՈՐ ԱՐ-
ԴԵՕՔ ՆԻՒԹԻՆԵՅԴ ԱՅԴՊԻ. և մատնանիշ ցու-
ցանէր անդ զայր ոմն կաղ և կոյր։

Բայց երկաքանչիւր նոքա բոյս բարուց
ունէին տնկակից առ ամենայն առաքինու-
թիւն. այլ Պեղոպիդէս յաւէտ զբօսանէր
'ի կրթանս մարմնոյ, և Եպամինոնդաս 'ի
հրահանգս հոգւոյն. ուստի և 'ի պարա-
պել նոցա՝ մին դեգերէր յասպարէզս ըմ-
բշաց և յորաս, և միւսն՝ 'ի լսաւէր իմաս-
տասիրութեան։ Իսկ 'ի բազմագէմ և 'ի
փառաւոր նահատակութիւնս նոցա՝ ոչինչ
այնպէս արգոյ և պատուական տեսանէին
արք քաջախորհուրդք, իբրու զի անդատին
'ի սկզբանէ մինչ 'ի կատարած յայնչափ
զինուորութիւնս և 'ի մարտս և 'ի վարչու-
թիւնս քաղաքին՝ միշտ անքակ կալան նո-
քա զբարեկամութիւնն և զսէր։ Քանզի ե-
թէ ոք դէտակն կալցի 'ի քաղաքականու-
թիւնսն Արիստիդեայ և Թեմիստոկղեայ և
Կիմոնին և Պերիկղեայ և Նիկիասայն և Ալ-
կիբիադեայ, որք երկպառակք այր յընկե-
րէն լի էին նախանձու և մախանաք ընդ-
դէմ միմեանց. և ապա ակնկառոյց դարձ-
ցի 'ի սէր մտերմութեանն և մեծարանաց
Պեղոպիդեայ և Եպամինոնդեայ առ մի-
մեանս, իրաւամբք և ուղղապէս իշխանա-
կիցս և նիզակակիցս զսոսա ասասցէ քան

թէ զնոսա, որք ցանգ 'ի վէգ եկին՝ զմի-
մեանս նկուն առնել, քան թէ զթշնամիսն
'ի պարտութիւն մատնել։

Եւ էր պատճառք ճշգրիտ համաչնչու-
թեան սոցա՝ առաքինութիւնն ինքնին. զի
փառս չինդրէին նոքա 'ի գործս իւրեանց
և ոչ արծաթ, յորոց նախանձուն միշտ բը-
նաւորեցան կիրք խռովայոյզք և դժոխըմ-
բերք. այլ անդատին երկոքին նոքա աս-
տուածային իմն գոգցես վառեալք սիրով,
ոչինչ այլ՝ քան թէ զհայրենեացն սիրեցին
տեսանել զշինութիւն և զհարստութիւն 'ի
ձեռն նոցա, ուստի և միմեանց զօրավիգն 'ի
նահատակութիւնսն՝ այր զընկերինն իւր
համարէր։ Այլ բազումք ասեն՝ սեռն և
սերտ մտերմութեան դոցա սկիզբն ունել
'ի Մանտինեան զինուորութեանն. ուր նո-
քա կռուեցան մարտակիցք Լակեդեմոնա-
ցւոցն. զի յայնժամ դեռ ևս բարեկամք և
նիզակակիցք էին նոցա Թեբայեցիք, որք և
գունդ 'ի Թեբայէ 'ի Թիկունս առաքեցին
նոցա յայնժամ։ Քանզի երկոքին նոքա
կարգեալք ընդ հետևակ զինուորաց՝ մի-
մեանց առընթեր մարտ մղեալ ընդդէմ Ար-
կադացւոց, իբրև Լակեդեմոնացւոց թևն
բեկանէր՝ ուր կային նոքա, և շատք յայն-
ժամ 'ի փախուստ խուճապեցան, սոքա զգ-
դեալք զասպարս իւրեանց՝ այնպէս ընդդէմ
կային բուռն յարձակման թշնամեացն. ու-
րանօր Պեղոպիդէս վերս եօթն առեալ 'ի
մարմնին՝ նուաղեալ անկանէր 'ի դիակոյտ
բարեկամացն և թշնամեացն։ Իսկ յայն

ժամ Եպամինոնդաս՝ թէպէտ և կարծեալ
ևս մեռանել Պելոպիդեայ, եկեալ արձա-
նանայր առաջի պահպանել զդիակն նո-
րա և զվէնն. մարտ եղեալ կռուէր միայ-
նակ ընդդէմ բազմաց, կամէր մանաւանդ
անդէն 'ի մահ տարածիլ, քան թէ թո-
ղուլ լքանել զդիտապատան Պելոպիդէս:
Սակայն և Եպամինոնդեայ անդէն խու-
ճապ տագնապի 'ի վերայ հասանէր, տի-
դահար 'ի լանջն խոցեալ և սուսերահար
'ի բազուկն. մինչև անդուստ Ագեսիպոլէս
արքայն Սպարտացւոց 'ի միւս թևոյն յոգ-
նութիւն հասեալ՝ զերկոսին միանգամայն
ապրեցուցանէր արտաքոյ յուսոյ ակնկա-
լութեան նոցա:

Եւ յայնմ հետէ Լակեդեմոնացիք՝ թէ-
պէտ և բանիւ բարեկամս և նիզակակիցս
ունէին զԹեբայեցիս, այլ արդեամբք խի-
թային ընդ պերճութիւն և ընդ զօրու-
թիւն քաղաքին այնորիկ: Եւ առաւել ա-
տելութեամբ էին նոքա ընդ կողմն Իսմե-
նիոսի և Անդրոկղիդեայ, որոց և կուսակից
էր Պելոպիդէս՝ իբրու ազատասէր այր և
ռամկասէր. ուստի և Աբքիաս և Լէոնտի-
դաս և Փիլիպպոս արք աւագպետականք և
ընչաւէտք և խիզախք 'ի խորհուրդս, 'ի
հաւան ածէին զՓիլիդաս Լակոնացի հան-
դերձ բանակաւ անկանել յեղակարծումն
ժամու և ունել զԿադմիա, և 'ի բաց զհա-
կառակորդսն վանեալ՝ հնազանդել Լակե-
դեմոնացւոց զքաղաքն ընդ պետութեամբ
աւագորերոյն: Իբրև նա ունկնդիր եղեալ՝

'ի տօնան Դեմետրեան յանակնկալ ժամու անկեալ 'ի վերայ Թեբայեցւոց՝ տիրացաւ դղեկին, Իսմենիոս ձերբակալ ածեալ 'ի Լակեդեմոնիա, ոչ հարուստ մի ժամանակ 'ի վերայ անցեալ՝ սպանաւ։ Իսկ Պեղոպիդէս և Փերենիոս և Անդրոկլիդաս փախուցեալ ընդ այլոց բազմաց, դատապարտեցան յաքսորս։ Այլ Եպամինոնդաս Էկայ մնաց 'ի քաղաքին. զի և փոյթ ինչ չարաբին վասն նորա, իբրու որ յիմաստասիրութեան պարապեալ՝ միջամուխ չէր, և ալքատութեամբն՝ անձեռնհաս 'ի գործ։ Բայց Լակեդեմոնացիք 'ի բաց 'ի Փիբիդէայ առեալ զզօրավարութիւն, տան բիւր դրամակշռոյ տուգանեցին զայրն. 'ի վերայ այսր՝ և կալան նոքա զԿադմիա և կարգեցին անդ պահակերս։ Ոյր աղագաւ և առհասարակ Հելլենացիք հիացեալ էին ընդ նորանշան բանն, զի պատուհաս 'ի վերայ կապեցին նոքա գործողին, և միանգամայն հաւանեալք հաճեցան ընդ գործն։

Եւ այսպէս ապա զհայրենատուր քաղաքաւորութիւնն կորուսեալ Թեբայեցիք և ծառայք Արքիասայ եղեալք և Լէոնտիդէայ, յոյս անգամ չմնաց նոցա էլս գտանել 'ի բռնաւորութենէն, որ ամրաձաձուկ 'ի տէրութենէ Սպարտացւոցն եղեալ, նկուն առնել չէր հնար մինչև զծովուն տէրութիւն և զցամաքին բարձեալ 'ի Լակեդեմոնացւոց անտի։ Բայց Լէոնտիդէս լուր առեալ զվտարանդեացն՝ բնակել յԱթէնս և սիրելի լեալ ամբոխին և պատուեալ 'ի

լաւ որերոյն, որոգայթ 'ի ծածուկ լա-
բեալ՝ յղէր անդր արս անծանօթս. որք
Թէպէտ և զԱնդրոկղեդէս սպանին դաւով,
սակայն յայլոց անտի վրիպեցան նոքա։
Նաև Լակեդեմոնացիք նամականի տուեալ
առ Աթենացիս, պատուիրէին մի ժողո-
վել զվտարանդիսն և մի դրդռել զնոսա,
այլ իբրև հասարակաց Թշնամիս նիզակակ-
ցաց հալածել զնոսա։ Բայց Աթենացիք՝
բաց 'ի հայրենի և 'ի անկակից իւրեանց մար-
դասիրութենէն, կամեցան և վարձս փո-
խարինել Թեբայեցւոցն, որք պատճառք
եղեն վերատին ուսկապետութեանն յԱ-
Թէնս. և վճիռ ևս եառին՝ զի Թէ որք յԱթե-
նացւոցն զինու զարդու անցցէ ընդ Բիով-
տիա ընդդէմ բռնաւորաց, մի որք 'ի Բիով-
տացւոց խլրտեսցի լսել ինչ կամ տեսա-
նել ինչ. ուստի և ոչինչ անիրաւեցան նո-
քա յայնժամ առ Թեբայեցիսն։

Այլ Պեղոպիդէս՝ Թէպէտ և պատանի,
յորդորէր իրախուսէր առանձինն զմի մի
'ի վտարանդեացն. և 'ի ժողովի դարձեալ
խօսէր բարբառէր՝ եԹէ ոչ գեղեցիկ ինչ է
և ոչ բարեպաշտութիւն, անփոյթ զհայ-
րենեացն լինել՝ որ 'ի ծառայութեան կայ-
ցէ և կալեալ 'ի պահանորդաց իցէ. չէ՞
պարտ շատանալ միայն փրկութեամբ ան-
ձին, և ուշ միայն վճռոյ ունել Աթենա-
ցւոցդ, և սպասարկու լինել հրապարակա-
խօս հռետորացդ. այլ յաղագս մեծամե-
ծացն իրաց դիմադրաւ 'ի վտանգս լինել
արժան է. և յառաջ բերէր ածէր նոցա

զնկարագիր մեծ զարուեթեանն և զառաքի-
նութեանն Թրասիբուղեայ. որպէս նա մեկ-
նեալ 'ի Թեբայէ՝ խաղաց գնաց հարկանել
վանել զբռնաւորն ՅԱԹԷՆա, նոյնպէս և
նոքա եկեալք ՅԱԹԵՆայ՝ գնացեալք յան-
դորը հանցեն զԹեբա։ Իբրև այսպիսի բա-
նիւք ածեալ հաւանեցուցանէր զնոսա Պե-
ղոպիդէս, առեալ նոքա արձակեցին դաղտ
'ի Թեբա ազդ առնել բարեկամացն որ անդ՝
զխորհուրդս իւրեանց. նոքա մեծապէս գո-
վեցին զբանն, և անդ Քալոմէն այր ակա-
նաւոր զիւրական իսկ տուն յօժարութիւն
խոստանայր նոցա։ Իսկ յայնժամ Փիղի-
դաս հնարս հնարեցաւ, և լինէր առեն-
դակիր Աբքիասայ և Փիլիպպոսի զօրավա-
րաց։ Անդանօր և Եպամինոնդաս 'ի վա-
ղուց պարապեալ էր՝ արուեթեան քաջու-
թեան խորհրդովքն վառեալ բորբոքեալ ըզ-
պատանին։ Քանզի 'ի կրթարանն հրա-
ման տայր Թեբայեցւոց պատանեաց բրռ-
նամարտիկ և գօտեկռիւ ընդ Լակեդեմո-
նացին լինել. ապա տեսեալ զպատանին
զի 'ի բարձր պարանոց գնային՝ իբրու որ ա-
ւաւել կորովիք և յաղթականք, սատէր
նոցա Եպամինոնդաս՝ իբրև զի քան հպար-
տանալ՝ նոցա զամօթի հարկանել պարտ էր,
զի առ անարի վատուեթեանն 'ի ծառայու-
թեան կան նոցա՝ որոց 'ի կորովուեթեան
վեհագոյն էն նոքա։

Եւ արդ ժամանակեալ զօրն ձեռնամուխ
'ի գործն լինել, հաճոյ թուեցաւ վտարան-
դելոցն՝ զի Փերենիկոս խմբեալ 'ի մի զայլան՝

զտեղն կալցէ 'ի Թրիասիոն. իսկ որք առաջեալ քաջառոյդք 'ի նոսա՝ դիմագրաւեսցին մտանել 'ի քաղաքն. իսկ Թէ երբէք ձախողակս ինչ պատահեսցէ նոցա 'ի Թըշնամեաց անտի, ապրեալքն ինամակալուք կայցեն որդւոց և ծնողաց նոցա, զի մի 'ի կարևոր պարէնիցն զրկեալք յաղէտս պաշարեսցին նոքա։ Անդանօր նախաշաւիղ 'ի նոսա գտանէր յառաջադէմն Պեղոպիդէս, ապա Մելոնն և Դամոկլիդէս և Թէոպոմպոս արք աւագք տոհմիկք, սերտիւ ընդ միմեանս յօդեալք 'ի բարեկամութեան և 'ի հաւատս, և առաքինի նախանձաւորք փառաց և քաջութեան։ Սոքա Թուով երկոտասան՝ գիրկս ածեալ որոց անդէն ինեացին և յառաջոյ իւրեանց պատուիրակ մի արձակեալ առ Քարոնն, յուղի անկեալ գնային զգեցեալք հանդերձս հանգրիձեալս և ածեալ ձգեալ ընդ իւրեանս բարակս որսականս, և բարձեալ ձողս զպառականաց. զի յուղևոր անցաւորաց անտի որք մի ինչ զնոցանէն կասկածեսցի, հաստատութեամբ կարծեալ զնոսա իբրև Թափառականս ոմանս և որսորդս։

Հասեալ պատուիրակին առ Քարոնն և պատմեալ Եթէ յուղի անկեալ գան նոքա, նա՝ և ոչ 'ի մօտել մեծի վտանգին փոխեցաւ ինչ 'ի խորհրդոցն, քանզի և էր իսկ Քարոնն այր լաւ և բարի. պատրաստեցաւ ժողովել զնոսա 'ի տուն իւր։ Այլ մի ոմն Իպպոսթենիդաս անուն, այր ոչ չարամոյն որք, նա՝ հայրենասէր և վտարանդեացն մտե-

ելիմ, այլ անբաժ յարիւրեանէն 'ի գժուա-
ելինան արագահաս ժամուն այնորիկ, յայ-
ղոյ խելս եղեալ 'ի մոտալուտ և 'ի մեծ նա-
հատակութեանն, զմտաւ ածեալ յայն-
ժամ եթէ 'ի վէգ գան նոքա աւադիկ՝ զոտէ-
ղութիւնն սասանել զՍպարտացւոց և զոր-
ղութիւն նոցա վանել վստահացեալք 'ի
յոյսն անկայուն վտարանդելոցն այնոցիկ,
միայնիկ մնջիկ դարձ 'ի տուն արարեալ՝
զմի 'ի բարեկամացն առեալ յղէր առ Մե-
ղուէն և առ Պեղոպիդէս. ասել նոցա՝ եթէ
առ ժամն ձեռնթափ 'ի գործոյն եղեալ՝
դարձցին անդրէն յԱթէնս՝ լաւադունին
ակնկալեալք ժամուն։ Էր անուն առն
Քղեդոմէն, որում յանձն եղև հրեշտակու-
թիւնն. 'ի շտապ տագնապի հասեալ նա 'ի
տուն իւր, և ձգեալ արտաքս զերիվարն
խնդրէր զանձն. այլ կին նորա յանհնարա
մտեալ գտանել, ասէր տուեալ զայն մի-
ում ումեք 'ի դրացեաց անտի. որ աղա-
գաւ սկսան նոքա զառաջինն թշնամանել,
ապա և յիշոցնատուք լինել. մինչև յա-
նէծս և 'ի նզովս մխեցաւ կինն, զի չարեաւ
լեցի ուղին նորա և առաքչացն նորա։ Եւ
այսպէս ապա 'ի սրտմտութեան բարկու-
թեանն ծախեալ Քղեդոմէնի զմեծ ժամն
աւուրն 'ի գժտութիւնան յայն, և վատախ-
տար ևս զդէպն զայն համարեալ՝ բնաւ
իսկ 'ի բաց եկաց 'ի հրեշտակութենէն, և
գնացեալ պարապէր 'ի գործ ինչ այլ։ Եւ
այսպէս վայրիկ մի ևս անդէն 'ի սկզբանն 'ի
դերևս ելանէր դէպ ժամանակ ձեռնար-

կութեան մեծացն այնոցիկ և յոյժ գեղեցիկ նահատակութեանցն։

Այլ Պեղոպիդէս և ընկերքն նորա հանդերձս արկեալ զանձամբքն զմշակաց, և 'ի միմեանց որոշեալքն՝ մոին 'ի քաղաքն անդր. կէսքն՝ ընդ մի կողմն, և կէսքն՝ ընդ միւսն, մինչ աւուր կայր։ Անդանօր յայնժամ և օդք փոփոխեալք, հողմն շնչէր բքաբեր և ձիւնանայր. և առաւել ևս ծածկեցաւ բանն, քանզի և մարդիկն մոռեալ էին յայնժամ ընդ յարկաւ յերեսաց մրրկին։ Իսկ որք դէտակն կալեալ սպասէին նոցա, իբրև հասին նոքա՝ ժողովեալք փութապէս ածին 'ի տունն Քարոնի. և եղեն ընդ վերտարանդեացն յայնժամ ոգիք առհասարակ քառասուն և ութ։

Իսկ որ ինչ բանք յաղագս բռնաւորացն՝ այսպիսի ինչ էին յայնժամ։ Փիղիդաս ատենադպիր՝ գործակից էր և նա յամենայնին՝ որպէս ասացաք, և բանադնաց լինէր ընդ վերտարանդեալոցն։ Սա այս Փիղիդաս յառաջագոյն հրաւիրեալ 'ի գինեբբուս և 'ի կոչունս վասն աւուրն այնորիկ զԱրքիաս և զընկերս նորա, առ այս՝ և 'ի կանանց ևս արամբեաց ասէր ածել. խորհէր նա առաւել ևս խգանալ նոցա անդ առ 'ի պաղշտութենէն և գինեհարիլ, և հեշտեաւ այնպէս տալ զնոսա 'ի դարանակալացն ձեռս։ Արդ իբրև նոքա ոչ յոյժ ընդ գինի մոռեալ էին, լուր ինն ոչինչ սուտ՝ սակայն անյայտագոյնս և վեր 'ի վերոյ ազդ լինէր նոցա, իբրու այն թէ վերտարանդեալքն անդէն 'ի

քաղաքին ծածկեալ էր։ Ընդ Փիլիդաս Թէպէտ և ջանայր դարձուած զբուցացն արկանել, սակայն Ալքիաս զմի 'ի պաշտօնէիցն առեալ արձակէր առ Քարոնն՝ հրամանն տուեալ փութապէս յառնել գալ առ ինքն։ Երեկոյացեալ էր օրն, և Պեղոպիդէս և որք ընդ նմա 'ի Նեղբոս կաղմէին վառէին, և զզրահան արկեալ իսկ էին զանձամբ և զսուսերսն առեալք, այն ինչ անդուստ յանկարծակի լուեալք զբաղիսեալ դրացն, դիմեաց մի ոմն 'ի նոցանէն և լուեալ 'ի հրեշտակէն զկոչ Քարոնի 'ի զօրավարացն, լի ահիւ եկն և պատմեաց որոց 'ի Նեղբոս. Նոքա զառաջինն կարծեալք՝ եթէ խայտառակեցան ուրեմն հաղբքն, առհասարակ յուսահատ լինէին յանձանց փրկութենէն՝ մինչև գործ 'ի գլուխ տարեալ արժանի առաքինութեանն։ Յայսր ամենայնի վերայ լաւ համարեցան նոքա, անսալ Քարոնի և գնալ անվեհեր յանդիման լինել իշխանացն. իսկ Քարոնն Թէպէտ և անգաստին այր հզօր և անպարտելի 'ի գԺնդական, սակայն 'ի ժամուն սրտաբեկ լինէր քաջն 'ի վտանգ ընկերացն. 'ի խոր խոցեալ զանգիտէր՝ Թերևս խէթ մատնութեան կալցեն նոքա վասն նորա, եթէ յանկարծ 'ի կորուստ մատնեսցին այնչափ և այնպիսի որեար։ Ուստի և 'ի մեկնել անդ իւրում 'ի Նոցանէ, մտեալ 'ի կանանոցն և բարձեալ զորդեակն իւր մատաղ՝ որ քան զամենայն հասակակիցս իւր գերազանցեալ գեղոնն և առոյգութեամբն, առեալ գնէր

զնա 'ի ձեռս Պեղոպիդեանցն, զի թէ իրաղ-
դած երբէք լեցին նոքա վասն իւր խաբա-
նաց ինչ կամ մատնութեան, իբրև զթըշ-
նամի այնուհետև տեսցեն նոքա զմանուկն
և մի խնայեսցեն։ Անդանօր բազումք 'ի նո-
ցանէն՝ առ վիշտն Քարոնի և առ ազատ-
անձնեայ խորհուրդս քաջին յարտասուս
հատան. և ցաւէր առհասարակ նոցա՝ զի
կարծէր եթէ ոք 'ի նոսա վատասիրտ և ծան-
ծաղամիտ յառաջակայսն՝ կասկածեսցի ինչ
վասն նորա, կամ թէ բնաւ իսկ մեղ դիցէ
նմա. և աղաչէին մի թողուլ զմանուկն խառն
ընդ նոսա, այլ 'ի բաց տանել 'ի մօտալուտ
վտանգէն, զի անձնապուր և յանդորրու 'ի
բռնաւորաց առնեսցէ մանուկն, վրէժ եր-
բեմն խնդրել զքաղաքին և զբարեկամացն։

Այլ Քարոնի յանդորր չհանեալ զմա-
նուկն, "Եւ զի՞նչ այլ կեանս՝ ասէր, կամ
որ այն փրկութիւն գեղեցիկ ևս կայցէ դմա,
քան զմահակից լինել անպարտակիր մա-
հու 'ի միասին ընդ հօրն և ընդ այնչափ բա-
րեկամացն"։ Ապա յաղօթս առ դիսն կա-
ցեալ և գիրկս ամենեցուն ածեալ և խրա-
խուսեալ՝ մեկնեցաւ 'ի նոցանէ. մեծապէս
զգուշանայր այնպէս յարդարել զանձն և
զդէմն և զբարբառ ձայնին, զի և բնաւ
իսկ օտարացուցանել զինքն 'ի հայրթայրեալ
դաւանացն։ Իբրև եկն եհաս 'ի դուռն առ
Արքիաս, ընդառաջ ելեալ նմա Արքիաս
և Փիլիդաս, ասէն. "Ո՞վ ոմանք ո՛վ Քա-
րոնի, որպէս լուայ, ասա 'ի քաղաքդ մը-
տեալ իցեն և 'ի Թաքստեան կայցեն. և 'ի

քաղաքացեաց առուի համաշունչք ընդ նո-
սա դաշնաւորեալք լցեն "։ 'Ի լուր բանին
զառաջինն զահի հարաւ Քարոնն. այլ իբ-
րև խնդրեաց և հարցանէր, ոյք ոմանք ի-
ցեն մտեալքն և ոյք դարձեալ 'ի Թաքըս-
տեան ունիցին զդոսա. տեսեալ՝ զի ոչինչ
Ճշգրիտ պատասխանի տայր նմա Արքիաս,
իբրու որ ոչ 'ի տեղեկաց ոմանց լուեալ ի-
ցէ, ասէ Քարոնն. " Զդոյշ լերուք, գու-
ցէ որ տագնապէն զձեզ՝ չընջիւն դատարկ
լցէ։ Սակայն քա՛ջ ևս յուզեցլոց ես. քան-
զի և ինչ մի արդեօք զանց առնել չէ՛ ար-
ժան 'ի բանիդ յայդմիկ "։ Իսկ Փիղիդաս
որ անդ մերձ կայր՝ գովեաց զբանն Քա-
րոնի. և անդրէն 'ի նեղքս մուծեալ զԱր-
քիաս, միւսանգամ առեալ ընկղմէր զնա
յանապակ առատ, և յուսացուցանելով
զկոչնականն 'ի գալուստ կանանուոյն՝ ձգէր
երկայնէր զկոչունն։

Իսկ Քարոնն դարձեալ 'ի տուն իւր և
գտեալ կազմ զդաշնաւորսն, ոչ էթէ 'ի
յոյս ինչ յաղթութեան կամ փրկութեան,
այլ զմահ յանձն առնուլ փառօք 'ի հա-
րուածս մեծամեծս թշնամեացն, չոքաւ և
Պեղոպիդեայ միայն 'ի վեր հանէր զՃշմա-
րիտն. իսկ առ այլսն կեղծաւորեցաւ իբրև
զայլոց ինչ իրաց խօսեալ ընդ Արքիասայ։
Զև էր խապառ դադարեալ առաջինն, ան-
դուստ և այլ երկրորդ 'ի վերայ արանցն
յուզեցաւ մրրիկ առ 'ի բախտէն։ Պատուի-
րակ մի եկեալ հասանէր յԱթենայ յԱր-
քիասայ քահանայէ առ այս Արքիաս ան-

ուանակից իւր և հիւր և բարեկամ. մա-
տուցանէր նմա նամակ՝ յորում ոչ վայ-
բասար և վեր 'ի վերոյ ազգումն, այլ ճշգ-
դրիտ և յայտնի զամենայն 'ի վեր բերէր
նմա զդաւն, ըստ որում և ապա գիտացին.
և գրաբերն մերձ եղեալ առ Աբքիաս յար-
բեցութեան նորա և մատուցեալ զնամակն,
ասէր. "Որ զԹուղԹդ առաքէ առ քեզ
այրն, ազգ առնէ փուԹանակի ընԹեռ-
նուլ. զի գրեալ կայ 'ի դմա յաղագս յոյժ
կարևորաց": Ժպտեցաւ Աբքիաս և ասէ.
Ա՞ՀՂԻՆ ՈՐԷՆ՝ ՅՈՅԺ ԿԱՐԵՈՐՔ: Եւ ա-
ռեալ զԹուղԹն գնէր 'ի նեղքոյ բարձին,
և դարձեալ առ Փիղիդաս՝ խօսէր ընդ նմա:
Այլ զպատասխանի զայս Աբքիասայ յա-
ռակս ապա ընկալեալ, և մինչև ցայսօր ժա-
մանակի վարեն Հելլենացիք:

Բայց այնուհետև իբրև դէպ ժամանակ
համարեցան ձեռնարկութեան գործոյն,
յարուցեալ Էլանէին արտաքս դաշնաւորքն.
և յերկուս բաժանեալք՝ Պեղոպիդէս և
Դամոկղիդաս չորքան առ Լէոնտիդէս և առ
Իսպատէս՝ բնակակիցք միմեանց: Իսկ Քա-
ռոնն և Մեղոն գնացին առ Աբքիաս և առ
Փիլիպպոս արկեալ 'ի վերայ զրահիցն հան-
դերձս կանացի, և 'ի քօղ երեսացն շուր-
ջանակի բոլորս պսակաց բոլորեալք Թաւս
յեղևին ծառոյ և 'ի սարոյ: Որովք և հա-
սեալ երևեալ նոցա առ դուրս կոչնոցն,
ծափահար կոչնականքն բարձրացուցին ըզ-
ձայնս, կարծեալք՝ 'ի վերջէ ուրեմն հա-
սեալ առ նոսա կանանցն, որոց ակնկա-

լեալ մնային։ Այլ կերպարանաւոր կա-
նայքն իբրև շուրջանակի առհասարակ յա-
ծեալք զաչս՝ մանր և քաջ զննեցին զայր
այր 'ի բազմականին, ձգեալ ապա և մեր-
կեալ զսուսերս և 'ի մէջ կոչնոցն 'ի վերայ
խոյացեալք Աբքիասայ և Փիլիպպոսի, որ
ինչ էին՝ յայտնեցան յայնժամ։ Անդ Փի-
ղիդաս զսակաւս հաւանեցուցեալ 'ի կոչ-
նականացն կալ մնալ հանդարտիկ, որք մի-
անգամ 'ի վեր ոտեան 'ի նոցանէ և ընդդէմ
դառնային 'ի միասին ընդ զօրավարացն,
հեշտեաւ առ հասարակ կոտորեցան, քան-
զի և արբեալք իսկ էին։

Այլ որք ընդ Պեղոպիդեայ, մարտ դրժ-
ուարին հասանէր նոցա կռուել ընդ Լէոն-
տիդեայ. քանզի այր լուրջ հսկող էր նա
և ահարկու։ Եւ քանզի յանկողին մտեալ
էր, գտանէին նոքա փակեալ ամուր ըզ-
տունն. և 'ի բակնեալոյ դրացն՝ հարուստ մի
ժամանակ խմանայր և ոչ ոք. հուսկ ապա
մի ումն 'ի ծառայիցն լուեալ, եկեալ 'ի ներ-
քուստ՝ այն ինչ զնիգս դրացն բառնայր,
նոքա խուժեալ սաստկութեամբ՝ փեռե-
կեցին զդուրսն. 'ի ներքս վազեալ և զծա-
ռայն տապաստ արկեալ, դիմեցին յառա-
գաստ անդր Լէոնտիդեայ. իսկ նա 'ի շա-
ռաչմանէն և 'ի տրտմական թնդմանէ ո-
տիցն ճչգրիտ իրազգած բանին եղեալ, 'ի
վեր վազեալ 'ի մահճէն՝ ձգեաց առ զսու-
սերն. այլ զմոտաւ չածեալ զճրագունսն
անցուցանել և 'ի խաւարի առ խարխափ
զնոսա այր ընդ ընկերի ձգել, այնպէս բա-

զում՝ լուսով նա էկն էլ արձանացաւ առ դուրս առագաստին. և հարեալ զԿեփիսոդոտրոս՝ որ առաջին 'ի դիմի հարաւ՝ զնա անդէն տապաստ արկանէր. իբրև նա անկաւ՝ ապա երկրորդ 'ի վէգ եկեալ կռուէր ընդ Պեղոպիդեայ: Ընդանօր բուռն և դիժուարին մարտի եղելոյ յանձկուէ դրացն, և զի և Կեփիսոդորեայ դիակն անդ անկեալ քարընդոտն լինէր, հուսկ ապա յաղթական ելանէր Պեղոպիդէս. և դիտապաստ զԷոնոպիդէս արկեալ, անդէն դիմեալ գնայր առ Իւպատէս հանդերձ ընկերօքն: Մտեալ 'ի տուն նորա օրինակ ըզնոյն, իրազեկ նորա եղեալ՝ խուճապեցաւ 'ի փախուստ և գնացեալ ապաւինէր առ դրացիսն. սոքա զՀետ մտեալ նորա և ձերբակալ արարեալ՝ անդէն սպանանէին:

Իբրև այս եղև, եկին 'ի մի խմբեցան ընդ Մեղոնեանսն. և առաքեալ ազգ առնէին այլոց վտարանդելոցն՝ որ յԱտտիկէ զտեղի կալեալ էին. և հրաւէր ազատութեան կարդացեալ Թեբայեցւոցն, զորս միանգամ ընդ առաջ ելին նոցա՝ 'ի զէն 'ի զարդ վառէին առհասարակ. առեալք 'ի գաւթաց զձօնսն՝ զկապուտ կողոպուտ պատերազմացն, և խորտակեալ բացեալ՝ որ անդ զտամբն՝ զկրպակս տիգագործ և զսուսերագործ դարբնացն: Ապա գային հասանէին առ նոսա Նիզակակիցք 'ի զէն վառեալք՝ Եպամինոնդաս և Գորգիդաս, խմբեալք ոչ սակաւս յերիտասարդաց և 'ի ծերոց կորովեաց: Իսկ 'ի քաղաքին ողջոյն

արհաւիրք մեծամեծք և հծծիւն և շշնջիւն առ հասարակ. լուցեալ կային ճրագունք 'ի տունս, կէսք աստ և կէսք անդ խուճապեալք ընթանային։ Զև էր ժողովուրդն 'ի մի վայր խմբեալ, այլ մեծապէս սրտաբեկութեամբ վասն եղելոց պատահարացն՝ համօրէն ոչ կացեալք 'ի վերայ բանին՝ ապաստէին այդուն լինելոյ։ Ուստի և թուի թէ վատացան յայնժամ 'ի խորհուրդս իշխանք Լակեդեմոնացւոց, զի ոչ անդէն 'ի վերայ յարձակեալ կռուեցան. քանզի և էր իսկ ընդ նոսա գունդ մի հազար և հինգ հարիւր զօրականին, և շատք ևս 'ի քաղաքէն առ նոսա խուռն ընթացեալ էին։ Այլ 'ի ձայնէ աղաղակին և 'ի խարուկաց անտի և յամբոխից խուժանին՝ որ այսր անդր վարատէր, ահաբեկ եղեալք՝ այնպէս անշարժք փակեալ մնացին անդ 'ի Կադմիա։

Ապա յառաւօտուն պահու գային հասանէին Աստիկոյ այլք 'ի վտարանդելոցն զինու զարդու, և խմբեցաւ ժողովուրդն յատեան։ Անդանօր Եպամինոնդաս և Գորգիդաս առեալ մուծանէին 'ի նեղքս զՊեղոպիդէս հանդերձ ընկերօքն՝ պարտեալք 'ի քահանայից, զոր պատկս նուիրականս բարձեալք 'ի ձեռս, այնպէս խրախոյս քաջալերէր կարդային քաղաքին ձեռն տալ հայրենեացն և աստուածոցն։ Յայն տեսիլ առհասարակ ատեանն յարուցեալ ծափահարքք լինէին, և ձայն ցնծութեան աղաղակին բարձրանայր. և առեալ ժողովէին զորեարն զայն՝ իբրև բարեգործս և փրկիչս։

Յայնժամ Պելոպիդէս ընդ Մելոնիի և ընդ Փարոնիի կարդեալ Բիովտարքոս՝ Իշխան Բիովտիոյ, անդէն խաղայր գիմէր պաշարումն ածել գղեկին. և 'ի կողմանց կողմանց բուռն և սաստիկ հրոսակ 'ի վերայ հասուցեալ, զի այնպէս 'ի բաց զԼակեդեմոնացիան հանեալ՝ փրկեսցէ զԿադմիա մինչև զօր 'ի Թիկուն հասեալ անդր 'ի Սպարտիոյ։ Եւ արդէօք կանխեաց ածապարեաց Պելոպիդէս. քանզի յայնժամ 'ի դաշն պայմանի աղատացեալ արանցն՝ այն ինչ նոքա չուեալք հասին 'ի Մեգարա, անդուստ ընդառաջ գայր նոցա Կղէոմբրոտոս՝ գունդ ստուար ածեալ ընդ իւր 'ի Թեբա։ Իսկ Սպարտացիք ատեան դատաստանի եդեալ 'ի վերայ երից ոստիկանացն իւրեանց՝ որք 'ի Թեբա, մահու դատէին զԵրմիպպիդաս և զԱրկիսստս. իսկ զերրորդն Դիւսաւրիդաս՝ սաստիկ արծաթոյ տուգանեալ, այնպէս անձամբ անձին տարագէմ տարաշխարհիկ էլանէր յայնժամ այրն 'ի Պելոպոննիսոյ։

Աւրդ զնահատակութիւն զայս զՊելոպիդեայ՝ հանդունատիպ Թրասիբուլէայն ըստ քաջաց արանցն և ըստ մեծաց արկածիցն և ըստ մրցանաց մարտիցն և ըստ նմանօրինակ գեղեցիկ բախտին, քոյր և եղբայր նորա անուանեալ կարդացին Հելլենացիք։ Քանզի և ոչ հեշտին ինչ գոցէ ոք արդէօք որեար այնպէս սակաւաձեռն՝ ընդդէմ այնչափ բազմութեանն, և այնպէս անբաւականս՝ ընդդէմ հզօր ձեռինն, և արութիւն

քաջութեամբ յաղթականս, և պատ-
ճառք մեծամեծ բարեաց իւրեանց հայրե-
նեացն։ Այլ փոփոխութիւն հասարակացն
կրաց 'ի նահատակութենէ սասի՝ մեծ ևս
'ի նեղքս եբեր նմա փառս։ Քանզի ապա
մարտ պատերազմին՝ որ եղծեալ վատթա-
բեաց զզօրութիւնն Սպարտիոյ, և 'ի ծո-
վուն տէրութենէ և 'ի ցամաքին միանգա-
մայն վրէպ կացոյց զնա, անդատին 'ի գիշե-
րէ սասի ունի զծագումն. յորում Պեղո-
պիդէս ոչ պահակերս 'ի ձեռն առեալ, ոչ
պատուարս, ոչ գղեակ, ինքն երկոտասան-
երորդ հասեալ 'ի տուն, խղեաց եհատ՝ է-
թէ փոխաբերել զՀշմարիտն արժան ի՞ցէ՝
զկապանս և զշղթայս զՍպարտացւոց տէ-
րութեանն, որք անլուծանելիք ոմանք կար-
ծէին և անխզելիք։

Հորդան ապա Լակեդեմոնացւոցն տու-
եալ 'ի Բիովտիա զօրու ծանու, զահի մե-
ծի հարեալ Աթենացւոց՝ ոչ կացին մնա-
ցին 'ի միամտութեանն ընդ Թեբայեցւոց.
յատեան քարշեալ առհատարակ զկուսա-
կիցսն Բիովտացւոց, էր զոր մահու դատե-
ցին, և էր զոր վտարանդի առնէին, և ըզ-
կէսս դարձեալ տուգանօք տուգանեցին։
Ուստի և Թեբայեցւոցն իրք յայնժամ
թուէր մեծապէս 'ի տագնապի, զի և օգ-
նական ոք չէր ուստեք նոցա։ Իսկ էր 'ի
ժամանակին յայնմիկ Բիովտարքոս Պեղո-
պիդէս 'ի միասին ընդ Գորգիդեայ. 'ի խոր-
հուրդ մտին երկոքին նոքա հնարիւք անդ-
րէն 'ի թշնամութիւն զԱթենացիսն դըր-

գոռել ընդ Լակեդեմոնացիս, և մենքեռնայե-
ցին նոքա օրինակ զայս։ Սփոդրիաս անուն
ոմն Սպարտացի այր 'ի մրցանս մարտից նշա-
նաւոր և պայծառ, այլ ծանծաղամիտ և
երազայոյս և փառախնդիր անհանձար, էր
կացեալ 'ի Թեսպիա հանդերձ գնդաւ,
առնուլ ժողովել զփախստեայսն Թեբայե-
ցւոց և օգնել նոցա։ Առ այս Սփոդրիաս
արձակէր Պեղոպիդէս գաղտաբար վաճա-
ռական զոմն յիւրոց անտի բարեկամացն՝
տանել նմա արծաթ, և բանս եւ՝ որ առա-
ւել քան զարծաթն կաշառեցին զայրն։
Քանզի էկեալ ասէր նմա. քաջ իսկ մե-
ծամեծս նահատակեսցի նա՝ եթէ հա-
սեալ կալցէ զՊիրէոն՝ յեղակարծումն ժա-
մու անկեալ 'ի վերայ Աթենացւոցն՝ որ
յանհոգս կան. քանզի և Լակեդեմոնա-
ցւոց ոչինչ այնպէս հաճոյ իցէ՝ իբրու տի-
բանալ Աթենայ. այն զի՝ և Թեբայեցիք
ինքնին խեռացեալք ընդ Աթենացիսն իբ-
րև ընդ մատնուս, ձեռն օգնականու-
թեան ոչ տացեն նոցա։ Ապա Սփոդրիաս
'ի հաւանութիւն բերեալ բանին, առեալ
ընդ իւր դիշերի զզօրականն, էկն էմուտ
ՅԱտտիկէ, և խաղաց եհաս մինչև ՅԵլեւ-
սինէ. այլ անդանօր սրտաբեկեալ զօրա-
կանին՝ զի առակեալ նշաւակեցան իրք, և
մարտ ոչ դուշնաքեայ ինչ և փոքրոգի յու-
զեալ անդանօր 'ի վերայ Սպարտացւոց,
տեղի տուեալ անդրէն միւսանգամ դայր
մտանէր նա 'ի Թեսպիա։

Եւ յայնժամ Աթենացիք մտադիւրա-

գոյնս դաշնաւորեցան միւսանգամ ընդ Թեբայեցիս. և յարձակեցան 'ի ծով, և շուրջ յածեալք՝ յանգուցանէին առհասարակ զՀելլենացիսն՝ որ միանգամ խլրտիլն խնդրէին։ Անդուստ և Թեբայեցիք՝ առանձինն զոր ամենայն հրոսակ հանէին 'ի վերայ Լակեդեմոնացւոց 'ի Բիովտիա. Թէպէտ և մարտս դուշնաքեայս կռուէին նոքա, սակայն և մեծապէս մարզէին սովորեալք 'ի կռիւն, վարժեալք և խրախուսեալք 'ի յոգիս 'ի մրցանաց անտի, և կորովի կրթեալք 'ի մարմնիս։ Ուստի և պատմեն՝ Անտալկիդէայ Սպարտացւոյ ասելն երբեմն առ Ագեսիլայոս՝ որ վիրաւոր դարձաւ 'ի Բիովտիոյ. "Քաջ իսկ տրիտուր գեղեցիկ առեր դու զվարժիցդ 'ի Թեբայեցւոց. զի որք կռուէլ և մարտնչելն չկամէին, ուսուցեր"։ Այլ Ճշմարտութեամբ ասել՝ ոչ Ագեսիլայոս ինչ եղև Թեբայեցւոցն վարժապետ 'ի բանին յայնմիկ, այլ արքդ այդոքիկ առաքինիք. որք 'ի դէպ ժամու և իմաստութեամբ՝ առեալ զԹեբայեցիսն իբրև բարակս որսականս՝ հմտաբար արձակէին 'ի վերայ Թշնամեացն. և ապա զյաղթութեանն տուեալ նոցա Ճաշակել Ճաշակ և խրախուսեալ, այնպէս այսրէն յանդորր առնուին զնոսա. յորս և փառս մեծապէս Պեղոպիդէս ժառանգեաց անձին իւրում։ Քանզի անդուստ յառաջին ընտրութենէ անտի նորա, ապա և ամ ըստ ամէ 'ի նոյն զօրավարութիւն կարգեցին զնա. և ցորչափ էկեաց, կամ զօրավար

նուիրական գնդին լինէր, կամ Բիուլտարքոս բաղում անգամ։

Արդ յայնժամ Լակեդեմոնացիք հաբեալ խորտակեցան 'ի Պղատէա և 'ի Թեսպիա և 'ի փախուստ դարձան. անդ տապաստ անկանէր և Փիբիդաս՝ այն որ հաուեալ կալաւ զԿադմիա։ Առ այս՝ և զօր բազում զնոցա մերձ 'ի Տանագրա վանեաց Պելոպիդէս, և ինքնին նա դիտապաստ արկանէր յայնժամ զՊանթիդէս ոստիկանն։ Այլ 'ի մարտից աստի Թէպէտև յոյժ քաջալերեցան յաղթականք, ոչինչ սրտաբեկ լինէին յաղթեալքն. զի ոչ ճակատամարտք էին և ոչ մարտ յայտնի և կարգաւոր և ըստ պատերազմական օրինին, այլ ասպատակք՝ զոր ըստ ժամուն սփռէին. է զի տեղի տուեալք, է զի զհետ մոռեալք և յարձակեալք և ընդ թշնամիսն խառնեալք, այնպէս զյաղթութիւնն տանէին։

Բայց մարտ պատերազմին որ 'ի Տեգիւրա, այն՝ որ նախամարտութիւն էկաց Լեւկտրայնոյն, յոյժ 'ի վեր առեալ փառաւորեաց զՊելոպիդէս. որպէս զի և 'ի գեղեցիկ ելն ոչ ևս տեղի գտաւ այլոցն զօրավարաց նիզակակցացն մրցել ընդ փառս նորա, և ոչ թշնամեացն դարձեալ՝ բարուր կարկատել հարուածոյն այնմիկ։ Քանզի Պելոպիդէս ցանգ դարանամուտ եղեալ սպասէր դէպ ժամանակին հասանել ուներ զքաղաքն Որքոմենացւոց՝ որ կուսակիցն էր Սպարտարւոց, և գունդս ևս երկու 'ի Թիկունս առեալ էր 'ի նոցանէն։

Ադ լուր առեալ Պեղոպիդէս, զի այն գունդք չու արարին 'ի Լոկրիդէ, ակն ունէր ամայի զՈրքոմենոն գտանել. ապա խազաց գիմեաց անդր ածեալ ընդ իւր զնուիրական գունդն, ածէր 'ի նոյն և ոչ շատ ինչ յերիվարաց։

Բայց մերձ 'ի քաղաքն եղեալ և տեսեալ՝ զի այլ գունդ 'ի Սպարտիոյ փոխանակեալ էր զպահն, յետս առեալ տանէր զզօրն ընդ Տեգիւրա՝ ընդ որ միայն անցանել հնար էր, պատեալ զլեռնոտամբն. քանզի և գեան Մելաս այն ինչ հոսեալ յաղբերացն իւրոց՝ 'ի ճահիճս նաւարկելիս և 'ի լիճս ճապաղեալ՝ անանց գործէ զուղին։ Անդանօր մերձ 'ի ճահիճսն գոյ մեհեան Տեգիւրեանն Ապողոնի, և պատգամախօսութիւն լուեալ՝ ոչ 'ի բազում ինչ ժամանակաց. սակայն էր նա ծաղկեալ մինչև 'ի մարտսն Մարաց՝ յորում ժամանակի գուշակն էր Եքեկրատէս։ Եւ անդանօր առասպելաբանեն ծնեալ աստուծոյն. և լեառն մերձաւոր վայրացն անուանեալ կոչի Դեղոս, և առ նովաւ լճանան ճապաղիքն Մելեայ։ Իսկ յետոյ մեհենին կրկին բղխեն աղբերք, և վտակք սքանչելի են քաղցրութեամբ և առատութեամբ և ցրտութեամբն. յորոց զմին Ամֆաէնի, և զմիւսն Զէնենի անուանեալ կարդան մինչև ցայսօր ժամանակի. որպէս զի՝ ոչ 'ի մէջ կրկին ծառոցս, այլ 'ի մէջ աղբերացս յղանալ գիւցուհւոյն։ Եւ մերձ է անդանօր լեառն Պոռոնն, ուստի յերևեալ անդուստ

յանկարծակի վարազուն՝ ահաբեկեալ ա-
ռեն զգիլցուհին։ Իսկ որ ինչ վէպք յալագա
Պիւթոնի և Տիտիւեայ, զայնոսիկ դարձեալ այսոքիկ վայրք 'ի Ճահ յարմարեն ծննդեան ասուածոյն։ Բայց ես ասասնօր շատ ինչ 'ի հաւատեացն 'ի բաց թողում ասել. քանզի և ոչ հայրենատուր աւանդն զասասուածդ զայդ դասէ 'ի կարդս Քաջացն՝ որք կանանցածինք 'ի փոփոխութենէ անմահացան, ըստ որում Հերակլէս և Դիոնիւսոս, որք առաքինութեամբն փոփոխեալք 'ի բաց եդին զմահկանացու և զախտակիր բնութիւնն. այլ 'ի յաւերժից անսի մի է սա և յանծնիցն, որչափ ինչ մեզ արդեօք արժան իցէ յիմաստանոցն և 'ի ծերունեացն բանից իմաստասիրել քաջիկ վասն այսպիսեաց ոմանց։

Ա՛րդ մեկնեալ Թեբայեցւոց ընդ Տեգիւրաս յերկրէն Ոքոմենացւոց, 'ի նմին ժամանակի յետս դալձեալ և Լակեդեմոնացւոցն 'ի Լոկրիդեայ, պատահեցան նոքա միմեանց։ Այն ինչ Թեբայեցիք տեսեալ զնոսա անցանել ընդ անձուկն, մի ոմն դիմեալ առ Պեղոպիդէս՝ ասէր. "Ընկաք մեք 'ի ձեռս թշնամեացն". ետ պատասխանի Պեղոպիդէս. "Եւ ընդէր ոչ՝ մանաւանդ նոքա 'ի մեր ձեռս"։ Զայս ասաց և անդէն հրաման տայր այրուձիոյն փութապէս 'ի թևոյն անցեալ յառաջ 'ի Ճակատ անդր՝ անկանել 'ի վերայ թշնամւոյն. և ինքն առեալ փակեաց յանձուկ վայրի զհետևակազօրն երից հարիւրոց, ակն

ունէր 'ի յարձակէլն՝ վանել խորտակել զբազմութիւն թշնամեացն. քանզի էին նոքա Մոռայ երկու Լակեդեմոնացւոց. և զՄոռայն Եփորոս ասէ՝ գունդ արանց հինգ հարիւրոց. իսկ Կալլիսթենէս՝ եօթն հարիւրոց. և այլք ոմանք՝ որպէս և Պողիբիոս՝ ասեն լինն հարիւրոց։ Անդ Գորգոլէոն և Թէոպոմպոս զօրավարքք Սպարտացւոց մեծապէս արութեամբ յարձակեցան 'ի Թեբայեցիս. և զի էր իսկ յարձակումն 'ի կայից զօրավարացն երկոցունց կողմանց և բուռն և սաստիկ էր խազմն, յառաջ նահատակեալ զօրավարքք Սպարտացւոցն և 'ի վերայ դիմեալք Պեղոպիդեայ՝ անդէն տապաստ անկանէին. ապա հարեալք և ոչ շուրջ զնոքօք, զահի հարեալ առհասարակ զօրականին և յերկուս հատուածեալ՝ այնպէս ազատ 'ի միջոցին տային ուղի Թեբայեցւոցն խաղալ յառաջ։

Այլ Պեղոպիդէս ընդ նոյն ուղի խաղաց դիմեաց 'ի վերայ խմբին նոցա. հարուածս մեծամեծս 'ի վերայ հասուցանէր, և ապա ուրեմն առհասարակ 'ի փախուստ խուճապէր զնոսա. այլ ո՛չ շատ լինէ զհետամոեալ հալածեաց, քանզի և խիթային իսկ Թեբայեցիք յՈրքոմենացւոց անտի մերձաւորաց, և 'ի նորեկ գնդէ Լակեդեմոնացւոցն։ Այնչափ լինէ յայնժամ նահատակեալ բուռն յաղթութեամբն, և անցանէին այնուհետև ընդ մէջ խորտակեալ բանակին նոցա։ Ապա նշան յաղթութեան կանգնեալ, և դիակապուտ արարեալ ան-

կելոցն, դարձան 'ի տուն խրախամիտք և քաջալերեալք։ Քանզի և 'ի մարտս մարտս ընդ Հելլենս և ընդ խուժադուժս, երբէք յառաջ ժամանակաւ ոչ պարտեցան Սպարտացիք այնչափ բազմութեամբ յայնչափ սակաւուց ոմանց. նա և ոչ 'ի Ճակատամարտի հաւասարք ընդ հաւասարս. ուստի և յոյժ 'ի վեր վազեալ էին գոռոզութիւն, և 'ի կռուին հոյն նոցա և եթե ահաբեկ ըզգիշնամին առնէր, որք և ոչ հաւասար զօրու երբէք ժոէին 'ի վէգ ընդ Սպարտացւոցն գալ։ Ուստի և այս մարտ պատերազմի առաջին զՀելլենացին խելամուտ արար, զի ո՛չ Եւրոտաս միայն և ոչ որ ընդ Բաբիւկաս և ընդ Կնակիոնն միջնագաւառն միայն՝ արս բուսուցանէ մարտիկս և գոռս, այլ և ամենայն վայր՝ ուր միանգամ պատանիք ծնանիցին ակնածուք 'ի վատութենէ և քաջարիք 'ի նահատակութիւնս. և որ քան 'ի վոանգաց՝ առաւել ևս յանարգութենէ թիկնադարձոյցք, ուստի և առ 'ի թշնամին ահարկուք։

Ա՛րդ՝ առաջին որ կարդեաց եդ զնուիրական զայն գունդ՝ որպէս ասեն՝ եկաց Գորգիդաս, յերից հարիւրոց ընտիր ընտիր նահատակաց խմբեալ զնոսա. և պէտք կրթանաց և կենաց նոցա ընոյր 'ի քաղաքէն. և էին վանք նոցա 'ի Կադմիա, ուստի և անուանեալ կարդային զնոսա Գ.ՈՒՆԴ ԹԱՂԱԹԻՆ. քանզի և զամրոցս կոչէին յայնժամ ՔԱՂԱԹՍ։ Կէսք ասեն՝ եթէ 'ի սիրողաց և 'ի սիրելեաց խմբեալ կայր գունդն

Նուիրական. և առ այս յուշ ածէն՝ զոր ասաց Պամմենէս 'ի խաղոյ. քանզի ասէր՝ եթէ ոչ Ճարտարապետ ուրեմն էր մարմն Նեստորն Հոմերուկի, որ հրամայեաց զի ըստ ցեղս և ըստ ժողովուրդս համախումբ դասաւորեսցին Հելլենացիք. "Զի ժողովուրդ ժողովրդեան 'ի Թիկունս կայցեն, և ցեղքն՝ ցեղից". քանզի մանաւանդ զսիրողն մերձ դասաւորել արժան էր առ սիրեցեալն: Քանզի ցեղակիցք ժողովրդակիցք ոչինչ կարի փոյթ 'ի գժնդական կալցեն արդեօք վասն միմեանց. իսկ գունդ՝ որ կապանօք մտերմութեան սիրոյն զօդեալ իցէ, անլուծանելի է և անխզելի. քանզի կէսք սիրելով զսիրելին, և կէսք ակնածեալք 'ի սիրողացն, վտանգս մեծամեծս յանձն առցեն 'ի վերայ միմեանց: Եւ չէ՞ ինչ զարմանալ ընդ բանդ. քանզի նոքա և բացականք գոլով ակնածուք են առ միմեանս առաւել քան զմերձաւոր մարդիկդ. զոր և յայտնի 'ի դէմս բերէր այն այր՝ յորոյ վերայ Թշնամին կացեալ 'ի սպանանել՝ մինչդեռ յորսայս անկեալ կայր, աղաչէր 'ի լանջս անդ մտեալ զսուրն. "Զի մի Թերևս՝ ասէ՝ սիրելին իմ զամօթ կրեսցէ վասն իմ, տեսեալ զիս խոցեալ 'ի Թիկանց":

Այլ և պատմեն՝ Յոլէոսի սիրելոյն Հերակլեայ ցանդ նիզակակից և լանջակից 'ի մրցանսն նորա լինել: Իսկ և Արիստոտէլ պատմէ՝ եթէ և առ իւրովքն ժամանակօք սիրողքն և սիրեցեալքն հաւասարս կռէին 'ի վերայ շիրմին Յոլէոսին: Այսո-

րիկ աղագաւ ապա որպէս հաւանեալս եմ՝ 'Ն-ԻՐԱԿԱՆ անուն կարգային գնդին այն-միկ. ըստ որում և Պղատոն ինքնին՝ Բարէ-կամ ասպուածապգեաց կոչեաց զսիրողն։ Եւ ասեն՝ եթէ այս գունդ միշտ անպարտելի եկաց մնաց մինչև 'ի պատերազմն Քերոնիոյ. իսկ յետ մարսին ելեալ Փիլիպպոս յայց սպանելոցն՝ զտեղի առնոյր 'ի վայրն ուր դիտապաստ կային երեքհարիւր մարտիկքն. որք դիմագրաւ 'ի դիմի հարեալք Մակեդոնեան աշտէիցն, այնպէս առ հասարակ յանձուկ վայրս խռնեալ անկեալ կային. զարմացաւ Փիլիպպոս, և լուեալ եթէ գունդ այն էր սիրողացն և սիրելեացն՝ յարտասուս հարեալ ասէր. " Զարեաւ կորիցեն, որք կասկածեսցեն՝ եթէ այդ որեար արասցէ կամ կրեսցէ ինչ մի 'ի յոռեաց "։

Ա՛րդ՝ սովորութիւնդ այդ սիրողաց և սիրելեաց սկիզբն կալաւ առ Թեբայեցիս՝ ո՛չ որպէս քերթողքդ ասեն՝ 'ի կրից անոմի Լայիոսի. այլ օրինադիրքն ինքնին կամեցեալ ամրել և անուշել զանկակից վայրագութիւն և զխակութիւն նոցա անդրսոմին յառաջին տիոցն, միանգամայն յամենայն պարապմունս նոցա և 'ի զբօսանսն առեալ մուծին զտաւիղն. և շուք և նախաթոռութիւն ընծայեցին նմա. և յասպարէզս ըմբշաց առթեցին գեղեցիկ ելեն և աղնուական սէր, և նովաւ անուշեցին զբարս պատանեացն. ուստի և քաջիկ խորհրդով նոքա զիւրեանց քաղաքն ապսպարեցին ընդ հովանեաւ դիցուհւոյն (Ներդաշնա-

կութեան), զոր ասեն ծնեալ յԱրեսէ և յԱստղկանէ. քանզի ուր պատերազմականն և արիականն աշխոյժք զուգեալ ի ցեղն ընդ վայելչութեանն և ընդ շնորհաց, անդանօր ապա է տեսանել քաղաք գեղայարդար յոյժ և բարեկարգ. քանզի և ամենայնն յայնժամ գեղեցիկ ներդաշնակութեամբ կարգեալ և ուղղեալ է։

Աբդ Գորգիդաս զգունդ զայս Նուիրական բաշխեալ ընդ առաջին դասս, և կարգեալ յառաջոյ ողջոյն փաղանգի զօրականին, ոչինչ յերևան եբեր զքաջութիւն որերոյն այնորիկ 'ի նահատակութի երևելի՝ խառնելո

Բայց երբև Սպարտացիք հաշտութիւն խօսեցեալ առհասարակ ընդ Հելլենացիս, մարտ պատերազմի շարժեցին միայն ընդդէմ Թեբայեցւոց, և Կղեոմբրոտոս արքայն հորդան եւ յաշխարհն նոցա բիւր մի հետեւակօք և հազար այրուձիով, 'ի մեծ ևս վտանգ քան զառաջինն պաշարեցան նոքա ասպառապուռ հարուածոյ. ուստի և յարհաւիրս մեծամեծս տագնապեցաւ յայնժամ Բիովտիա։ Հապա Պեղոպիդէս ելեալ 'ի տանէն խաղալ գնալ 'ի մարտ պատերազմի, մինչդեռ կին նորա ուղի արկեալ նմա հեղոյր զարտասուս 'ի մեկնել նորա, և յուշ ևս առնէր ազերսէր փոյթ ունել փրկութեան անձին, ասէ Պեղոպիդէս. "Զայդ բանդ ո՛վ կին դու յուշ առնել արժան է սոսկական մարդկանդ. իսկ իշխանացն՝ զփոյթ փրկութեան այլոց"։ Իբրև եկն եհաս 'ի բանակ անդր, և զԲիովտարքոս երկպառակս տեսանէր 'ի միմեանց, նա առաջին համաշունչ գտաւ Եպամինոնդեայ՝ որ ասէր գիմագրաւ խաղալ կռուել ընդ Թէնեամին։ Ձէր Պեղոպիդէս Բիովտարքոս, սակայն իշխան էր Նուիրական գնդին, և մեծապէս ևս վստահ էին 'ի նա, իբրու որ քաջ իսկ խնամոտ էր յաղաստութիւն հայրենեացն։ Իբրև առհասարակ համաշունչ գտան յայնժամ 'ի խորհուրդն, և էին նոքա բանակեալ մօտ 'ի Լեւկտրա Ճակատ առ Ճակատ 'ի հանդիպոյ Լակեդեմոնացւոցն բանակի, տեսիլ երաղոյ 'ի քուն դիշերի երևութացեալ

Պեղոպիդեայ՝ մեծապէս ամբոխեալ խռովեցոյց զոգի նորա 'ի նմա։

Եւ ասեն զի 'ի Լեւկտրեան գաշտին մարմինք գտեալ Սկեդասոսի, որք և 'ի տեղւոյն կոչեցան նոքա Լէ-կտրէան։ Քանզի անդանօր Թաղեցան նոքա բռնաբարեալք 'ի հիւրից ոմանց Սպարտացւոց։ Իսկ իբրև յետ դժնդակ և անիրաւ գործոյն՝ հայր նոցա ոչինչ կարաց վրէժխնդիր լինել բողք կալեալ 'ի Լակեդեմոն, նզովս կարգաց ընդդէմ Սպարտացւոցն. և ապա խրոմի անդ անձին առնէր 'ի վերայ գերեզմանաց կուսիցն։ Ուստի և գուշակութիւնք և պատգամք հանապազ նախապատուեմ լինէին Սպարտացւոց անձնապահ և զգոյշ լինել առ 'ի Լեւկտրեան վրէժխնդրութենէն. այլ զբան զայս խուժանն ողջիկ չիմանայր. քանզի և զտեղւոյն յերկեայս էին, զի և 'ի Լակոնիա է աւան մերձ 'ի ծով Լեւկտրոս անուն, և յԱրկադիա դարձեալ մօտ 'ի մեծ քաղաքն գոյ տեղի համանուն։ Այլ արկած կուսիցդ այդոցիկ յոյժ վաղնջուց է քան զԼեւկտրեան մարտ պատերազմին։

Արդ Պեղոպիդեայ՝ 'ի ննջել իւրում 'ի գաշտի անդ՝ թուէր տեսանել զաղջկունսն զայն յարտասուս հարեալ շուրջ զգերեզմանօքն և անէծս կարդալ Սպարտացւոցն. տեսանէր և զԱկեդասոս ինքնին՝ զի հրամայեսցէ նմա կոյս մի խարտեաշ յաղել իւրոց դատերացն, եթէ կամեսցի յաղթել թշնամեացն։ Զարթուցեալ 'ի քնոյն Պե-

ղոպիդէս, և խիստ երևեալ նմա հրամանն և անիրաւ, պատմէր առաջի գուշակացն և ըղձից և առաջի իշխանացն. կէաք 'ի նոցա-նէն խորհուրդ տային՝ մի անիրոյթ առնել զտեսիլն և անհաւատանալ. և օրինակս ևս զվաղնջուց 'ի նեղքս բերէին զՄենեկիա Կրէոնտեան, և զՄակարիա Հերակլեան. և 'ի վերջնոց անսի՝ զՓերեկիդէս զնմա-տուն զոր սպանին Լակեդեմոնացիք, և զմորթ նորա 'ի պահ ունէին թագաւորք նոցա 'ի պատգամէ իմեմնէ. դարձեալ և զԼոքնիդաս՝ որ 'ի պատգամէ օրինակ իմն զանձն առեալ նուիրեաց 'ի փրկութիւն Եղեսդայ. առ այս՝ և որք 'ի թեմիստոկ-ղեայ յաղեցան հմակերին Դիոնիսեայ յա-ռաջ քան զՍաղամինեան նաւամարտու-թիւնն։ Եւ գործոցն ապա վկայեցին գե-ղեցիկ եղք իրացն։ Ո՛չ այսպէս և Ագեսի-ղայոս, այն որ 'ի խաղալ զօրու ընդ նոյն վայրն՝ ընդ որ չու արար Ագամեմնոն՝ ընդդէմ նոցուն թշնամեացն, մինչդեռ 'ի քուն խնդրէր 'ի նմանէ յԱվլիդէ զդուստր նորա 'ի զոհ դիցուհին, նա քանզի 'ի հայ-րենի գորովոյն ոչ շնորհեաց զինդիրն, վասն այնորիկ այնպէս անփառունակ և անկատար արձակէր զզօրն։ Իսկ կէաք ներ-հակաբար ասէին, եթէ ումեք ամենեքին 'ի դից վեհագունիցն քան զմեզ և լաւա-գունին վիճակեալոց բնութիւն՝ երբէք բերկ-րական ոչ լիցէ զոհդ դժպհի և անագորոյն. զի և ոչ իսկ իշխեն մեզ աւադիկ Տիւ-պոնեանքն, և ոչ դարձեալ Հակայքդ խո-

լաց. այլ ամենեցուն հայրն աստուծոց և մարդկան. և դժպատեհ է կարծել՝ եթէ ընդ արիւն ապաժոյժ մարդկան և ընդ մահ բերկրեսցին Փաջքդ. ապա թէ ոչ՝ իցեն ուրեմն գոքա արհամարհք՝ որպէս ապաձեռինք. իբրև 'ի վատութենէ ոգւոյն և 'ի տկարութենէ բնաւորեալք հաստեցան այդ դժպհի և դժնդակ իղձք։

Իբրև այսպէս արք աւագք 'ի պայքար մտեալ էին վասն բանին այնորիկ, և առաւել Պեղոպիդէս վարանեալ էր, անդուստ ձի մատակ մորուկ փախուցեալ 'ի կուտէն, և անցեալ ընդ մէջ զօրուն, ընթացաւ վազեաց և զտեղի կալեալ արձանացաւ 'ի հանդիպոյ։ Անդանօր առհասարակ դէտակն ունէին հիացեալք ընդ գեղեցիկ գոյն բաշին և ընդ բոցափայլ, ընդ աշխոյժ կերպարանին, և ընդ փռնչիւն իրինջիւն նորա վէս և յանձնապաստան։ Յայնժամ Թէոկրիտոս գուշակն 'ի վերայ կացեալ՝ մեծագոչ ձայնէր առ Պեղոպիդէս. "Հասեալ կայ աւագիկ քեզ զոհդ ո՞ բարեբաստիկ. մի և մեք այլում ակնկալցուք կուսի. ահա ընկալ զդա, և յաղեա՛ զոր ետ քեզ աստուած"։ Ապա առեալ զմորուկն և 'ի գերեզմանս ածեալ կուսիցն և պաղատանս կարգեալ և պսակաք զմիտրուկն բոլորեալ, անդ ցնծութեամբ յաղէին զնա. և ընդ բանակն ողջոյն հռչակ հարին զտեսիլն Պեղոպիդեայ և զզոհն։

Իբրև խառնեալ հանդերձեալ էր խաղին, առեալ Եպամինոնդ զփաղանգն ձգէր երբ

կայնէր 'ի ձախակողմն առ 'ի շէզ, զի աջոյ թևն Սպարտացւոց կարի ի մն 'ի բացեայ եղեալ յայլոցն Հելլենացւոց, հեշտեաւ ինքն յայն թև վանեալ հարցէ զԿղէոմբրոտոս բուռն և սաստիկ։ Իրազգած խորհրդոյն թշնամեացն եղեալ, փոփոխեալ և նոքա 'ի կարգին իւրեանց՝ ձգեալ երկայնէին զաջոյ թևն և ածէին պատէին 'ի մէջ առնուլ փակել զԵպամինոնդաս։ Հապա դէտակն 'ի վեր ամբառնայր Պեղոպիդէս, աճապարեալ գիմեալ անդր հանդերձ ե. րեքհարիւրովքն՝ մինչև Կղէոմբրոտեայ երկայնեալ զթևն կամ՝ անդրէն առեալ զնա և գումարեալ յառաջին կարգն, յարձակեցաւ 'ի վերայ Սպարտացւոցն՝ մինչդեռ խռով սաստիկ հարեալ էր 'ի Լակեդեմոնացիսն։ Արդ՝ Թէպէս և Սպարտացիք առաւել վարժք և հմուտք յարուեստս պատերազմի, և առաւել էր կիրթք՝ անվարատելի կալ մնալ 'ի շփոթել կարգին, և մէն մի 'ի նոցանէն միանգամայն գիտէր զօրավարել և զինուորել, և 'ի խուճապ էր տագնապին կարգել զզօրականն և մարտ դնել կռուել, յայսր ամենայնի վերայ՝ այն ինչ 'ի փաղանգէ անտի Եպամինոնդաս դիմագրաւ 'ի նոսա առանձին խոյացաւ, անդուստ և Պեղոպիդէս անհնարին արագութեամբ և ուժով գիմեալ խառնեցաւ 'ի նոսա, այնպէս ի մն նոցա աղմկեալ շփոթեցաւ ամենայն խորհուրդ և արուեստ, զի և 'ի փախուստ խուճապեալ և հարուածս էր առին մեծամեծս՝ որպիսի ո՛չ

երբէք ուրեք յառաջագոյն։ Ուստի և Պե-
ղոպիդէս Թէպէտ և փոքու գնդին իշխան
և ոչ Բիովոտարքոս՝ իբրու զԵպամինոնդաս
բոլոր զօրուն սպարապետ, հաւասար Բիով-
տարքեայ 'ի յաղթութեանն և 'ի նահատա-
կութեանն Ժառանգեաց փառս։

Ապա յետ այնորիկ երկոքին նոքա կա-
ցեալք 'ի միասին Բիովոտարքոսք, չու ա-
բարեալ էկին մոին 'ի Պեղոպոննիսոս. և
ժողովուրդ բազում յանգուցին վտարան-
ջեալ 'ի Սպարտացւոց, զԵղի և զԱրգոս,
և բնաւ իսկ զԱրկադիա, և զԼակոնիա ինք-
նին բաղմագոյն մասամբ։ Եւ Թէպէտ և
Ամերայնոյն արևադարձն էր, և 'ի լրանալ
էր վերջին ամիս աւագութեանն նոցա և
տեղի տալ հասանէր նոցա, և այլոց ոմանց
փոխանակեալ զբարձն անդէն յառաջնում
ամսեանն, և որ տեղի չտայր՝ գլխապարտ
էր. և յայնժամ այլք 'ի Բիովոտարքոսացն
առ ահի օրինացն, այլ և 'ի վշտմբերութէ
փախուցեալք Ամերայնոյն՝ 'ի տուն զզօրն
խաղացուցանէին. սակայն Պեղոպիդէս՝ ա-
ռաջին ինքն համախորհուրդ Եպամինոն-
դայ՝ խրախոյս տուեալ քաղաքայնոցն ա-
ռեալ ածէր զնոսա յառաջագէմ 'ի կողմն
Սպարտիոյ, անցանէր ընդ Եւրոդաս. քա-
ղաքս բազումս հատանէր, և աւերէր քան-
դէր առհասարակ զդաւառն մինչև 'ի ծովն։
Եւ զօրավարէր Պեղոպիդէս եօթն հազար
զօրականին Հելլենացւոց, յորոց և ոչ էր-
կոտասանեւորդն էր 'ի Թեբայեցւոց ան-
տի. քանզի և համբաւ գեղեցիկ քաջացն

այնոցիկ անսահման էր, և զնիզակակիցս առ հասարակ ինքնին անշշունչ առեալ բերէր զհետ նոցա. քանզի և օրէնք իսկ առաջին և սիրադոյն կարօտելոցն փրկութեան բնաւորապէս իշխան 'ի վերայ կարդէն զկարոյն 'ի փրկել. զոր օրինակ նաւաստիք՝ թէպէտ և 'ի պարզել օդոյն կամ թէ 'ի նաւակայսն՝ լրբադոյնս գնասցեն ընդ ղեկավարսն և զքիթն 'ի վեր տանիցեն, անդէն իբրև մրրիկ և վտանգ պաշարէ զնոսա, դառնան նոքա խոնարհին և ակնկառոյցք առ ղեկավարսն՝ զամենայն յոյս հաստատեն 'ի նոսա: Քանզի Արգոսացիք և Եղիացիք և Արկադացիք թէպէտ և 'ի ժողովս վասն նախաթոռ բարձի կռուեն ընդ Թեբայեցիս, այլ յայնժամ 'ի տագնապին իւրեանց մոռադիւրագոյնս հնազանդեալ անսային նոքա զօրավարացն Թեբայ:

Ապա 'ի զինուորութեանն յայնմիկ ողջոյն զԱրկադիա յիշխանութիւն մի առեալ դարձուցին. և զՄեսսինա հանեալ 'ի ձեռաց Սպարտացւոցն, կոչեցին և ածին անդր զհին Մեսսենացիսն, և բնակեցուցին զԻթոմէ. ապա դարձ 'ի տուն արարեալ ընդ Կենքրա, վանէին հարկանէին և զԱթենացիսն, որ յանձուկն կռուեալք արդելուին զանցս նոցա: Եւ յաղագս այսոցիկ առհասարակ մեծապէս սիրեցին ըզքաջութիւն նոցա, և զարմացան ևս ընդ դեղեցիկ բախտն նոցա: Այլ սակայն և քաղաքայնոցն և ընտանեաց նախանձ վառէր բորբոքէր ըստ չափու փառաց քա-

ջացն, և ասպնջականութիւն անբարի և դժպատեհ պատրաստէր առաջի նոցա. քանզի 'ի դարձին Իւրեանց՝ 'ի դատաստանէ մահու հազիւ ապրեցան նոքա, իբրև ողբ ընդդէմ սահմանի օրինացն՝ որ հրամայէր յառաջնում ամսեանն՝ զոր Բուկատոն կոչեն՝ տեղի տալ յիշխանութէն, նոքա ողջ և զամիսս չորս իշխանացան, յորս և գնահատակութիւնդ 'ի գլուխս տարան 'ի Մեսինա և յԱրկադիա և 'ի Լակոնիա: Ապա առաջին Պեղոպիդէս ածեալ 'ի դատաստան, մեծապէս վտանգեցաւ. այլ ապա երկոքին միանգամայն արձակեցան:

Ա՛ՐԴ Եպամինոնդաս հեզաբար տարաւ ամբաստանութեանն և մրրկին յուզելոյ. քանզի և քաջութիւն ազատանձնեայ գիտէր նա զհամբերատար ժուժկալութիւն և զանյիշաչարութիւն յիշխանութեանն: Այլ Պեղոպիդեայ բոյս բարուցն ցասմնոտ, առ այս՝ և 'ի բարեկամացն դրդեալ 'ի վրէժ թշնամեացն, պատրաստեցաւ յայսպիսի պատճառաց: Մենեկղիդաս հռետոր մի էր յարանց անսի՝ որ 'ի միասին ընդ Պեղոպիդեայ և ընդ Մեղոնի ժողովեցան 'ի տուն անդր Քարոնի. և քանզի շուք ոչ զնոյն ունէր 'ի Թեբայեցւոց, զի Թէպէտ և այր զօրաւոր յոյժ էր նա 'ի ճարտարաբանութեան, այլ անժուժկալ գոլով և չարաբարոյ, գործի 'ի ձեռն առեալ զտնկակից քաջաբանութիւնն, ամբաստան դատախազ լինէր զվերհագունիցն արանց: Եւ ոչ յետ հարցափորձի քննութեան երկոցուն

սոցա դադարեցաւ ինչ նա. զի և զԵպամինոնդաս անգամ ետ նա մերժել յիշխանութեան բարձէն, և հարուստ ևս ժամանակ 'ի բաց կացոյց զնա 'ի վարչութենէ քաղաքին. այլ իբրև ոչինչ ուժեաց նա դատափետել զՊելոպիդէս առ ժողովուրդն, գուն գործեաց կռուել ընդ նմա՝ 'ի կշիռ զնա ընդ Քարոնի ձգելով։ Քանզի և նախանձու յաչալկոտացն սիրոփանք ինն հասարակ բնաւորեցան լինել, գոնեա քան զայլն խոնարհագոյն ցուցանելով զնոսա՝ քան զորս չունին լաւագոյնս երևել։ Ապա ջանայր Մենեկղիդէս փութոյ սնդութեամբ մեծացուցանել զՔարոնի մրցանսն առ ժողովուրդն, քա՛ջ 'ի գովութիւն առեալ զզինուորութիւնս նորա և զյաղթութիւնսն. զնոյն և 'ի մարտ այրուձիոյն 'ի Պղատէա՝ ուր յաղթական ելին Թեբայեցիք առ զօրավարութեամբն Քարոնի յառաջ քան զԼեւկտրեան պատերազմ, յիշատակ 'ի ձօն Թեակոխեաց նա կանգնել նմա օրինակ զայս։ Անդրոկիւդէս Կիւզիկեցի՝ ըստ պայմանին կռեալոյ ընդ քաղաքին՝ 'ի նկարել տախտակ մի նկարագիր մարտի պատերազմի, անդանօր 'ի Թեբա նստեալ պարապէր 'ի գործն. այլ ապստամբութեն յայնժամ 'ի վեր երևեալ և մարտ գրգռեալ, Թեբայեցիք առ իւրեանս կալան զտախտակն, որում և ոչ շատ ինչ մնայր 'ի լրումն նկարուն։

Արդ Մենեկղիդէս ածեալ հաւանեցուցանէր զԹեբայեցիսն՝ զայն տախտակ

առնուլ կախել 'ի ձեռն արձանագրեալ 'ի նմա զանուն Քարոնէի, զի այսպէս ասպա ստուերածս ածցէ նա փառաց Պեղոպիդեայ և Եպամինոնդեայ։ Եւ արդէօք ծանծաղամիտ էր պատուասիրութիւնն, նա իսապատիւ քան զբազմադէմ մրցանսն առնուլ դասել զյաղթութիւն մի զայն՝ յորում միայն Գերանդաս ոմն անուն այր անաւագ 'ի մէջ Սպարտացւոց տապաստ անկաւ հանդերձ քառասուն արամբք, և ոչ այլ նահատակութիւն մեծ պատմեն 'ի նմա։ Ապա առաջարկութեանն այնմիկ Մենեկղիդեայ հակառակ ամբարձեալ Պեղոպիդէս, իբրու որ արտաքոյ օրինաց իցէ բանն, պնդէր անդրժելի զվայնջուցն սովորոյթ զԹեբայեցւոցն, մի շուք պատուոյ ումեք երբէք տալ առանձինն, այլ հասարակ հայրենեացն զանուն պահել զյաղթութեանն։ Իսկ յաղագս Քարոնէի՝ յաստենի անդ համբուն աննախանձաբար գովեր զայրն, 'ի նոյն և ամբաստանեալ ընդոտանէր զՄենեկղիդէս իբրև յաչաղկոտ այր և չար. և խնդրէր հարցանէր 'ի Թեբայեցւոց, զի՞նչ 'ի բարեաց մասին նոցա 'ի նեղքս երբէք բերեալ իցէ Մենեկղիդէս։ Ուստի ապա և սաստիկ գրամոց տուգանեալ զՄենեկղիդէս, և անբաւական 'ի հատուցանելուն գործէր նա այնուհետև վեր 'ի վայր շրջել զքաղաքականութիւնն։ Արդ այսքիկ ըստ մասանեայ տան ցոյցս զկենաց առնն։

Յետ այսորիկ յորժամ Աղեքսանդրոս բռնաւոր Փերացւոց 'ի վերին երեսս մարտ

պատերազմի շարժեաց ընդդէմ բազմաց Թեսսաղացւոց, այլ 'ի նեղքոյ խորհրդեալ էր նա առհասարակ վասն ամենեցուն. ապա հրեշտակութիւն առաքեցին քաղաքքն 'ի Թեբէ՝ խնդրէին զօր և զօրավար։ Ընդ Պելոպիդէս տեսեալ զԵպամինոնդ պատուղեալ յիւրս Պելոպոննիսոյ, յառաջադէմ զանձն ընծայէր Թեսսաղացւոց. ոչ հանդարտէր անգործ զքաջութիւն իւր լքանել և զհմտութիւնն. և ոչ ևս 'ի դէպ համարէր՝ եթէ առ կենդանութեամբն Եպամինոնդեայ այլում զօրավարի պէտք իցեն։ Ապա խաղաց գնաց զօրու Պելոպիդէս 'ի Թեսսալիա, և անդ արագ արագ հասեալ ունէր զԼարիսսա. և զԱղեքսանդրոս ինքնին՝ որ ողբաւոր ընդառաջ եկն նմա՝ ջանայր հնարէր 'ի բռնաւորութենէն փոխեալ զայրն՝ իշխան համբոյր և օրինաւոր յարդարել զնա Թեսսաղացւոցն։ Այլ քանզի դաղանաբարոյ էր այրն և ապստամբ 'ի հնարից ամոքել զնա, և զի՝ և շատ ևս բողոք կալան վասն անագորունութեան առն և զոչաքաղութեան, 'ի սրտմտութիւն բերեցաւ Պելոպիդէս և ցասնոյր ընդ նմա. և նա յայնժամ տեղի տուեալ փախչէր հանդերձ անձնապահօքն։

Իսկ Պելոպիդէս համաշունչ ընդ միմեանս զԹեսսաղացիսն միաբանեալ, և յանդորրու 'ի բռնաւորէն կացուցեալ զնոսա, անց գնաց 'ի Մակեդոնիա, ուրանօր Պրտղոմէոս մնար եդեալ կռուէր ընդ միւսում Աղեքսանդրի արքային Մակեդոնացւոց.

անդանօր յերկոցուն ևս հրաւէր դայր առ նա՝ լինել իրաւախոհ 'ի կագին նոցա, և նիզակակից և զօրավիգն լինել հարստահարելոյն։ Իբրև եկն եհաս նա առ նոսա, հանդարտեալ ամոքէր զկագն, և անդրէն միւսանգամ ետ կոչել զվոտանդեալսն. և առեալ 'ի պատանդ զՓիլիպպոս զեղբայր աղքային հանդերձ այլ ևս երեսուն մանկամբք 'ի յոյժ ականաւորացն, առեալ ածէր ընդ իւր 'ի Թեբէ. հանդէս առաջի Հելլենացւոցն առնելով զմեծապէս անուան զԹեբայեցւոց քաղաքին 'ի փառս զինուց և 'ի հաւատ արդարութեանն։ Սա այս Փիլիպպոս է, որ ապա մարտ պատերազմի յուզեաց 'ի վերայ Հելլենայց նուաճել զնոսա. և յայնժամ մինչդեռ տակաւին մանուկ էր՝ սնեալ ածէր 'ի Թեբէ 'ի տան Պամմենեայ, և Թուէր իմն նա նախանձաւոր բերիլ ընդ Եպամինոնդ՝ դէտ ակն կալեալ նահատակութեան առն 'ի մրցանն և 'ի զօրավարութեան բանակին. այլ նահատակութիւն այն՝ մասն դուշնաքեայ էր առաքինութեն Եպամինոնդեայ. իսկ 'ի ժուժկալութեանն մասին և յարդարութեանն և 'ի մեծանձնութեանն և 'ի հեզութեանն՝ որովք քաջ մեծ էր Եպամինոնդաս, ոչինչ բաժանորդ նմա գտաւ Փիլիպպոս, ոչ անդատին 'ի բնութենէն և ոչ դարձեալ նմանողութեամբն։

Յետ այսորիկ իբրև միւսանգամ բոլոր կալան Թեսաղացիք վասն փերացւոյ Ալէքսանդրոսի, եթէ խռովեալ ամբոխէ

զքաղաքս նոցա, արձակեցին անդր հրեշ-
տակ զՊելոպիդէս 'ի միասին ընդ Իսմե-
նեայ. և քանզի զոր 'ի տանէն չէառ նա
ընդ իւր, զի մարսի ինչ ակն չունէին, հարկ
եղև 'ի պէտս զթեսաղայիսն վարել։ Զայ-
սու ժամանակաւ միւսանգամ յուզեցան
շփոթք 'ի Մակեդոնիա, և Պտղոմէոս 'ի կե-
նաց զրաւեալ զարքայն և զտէրութիւն գրա-
ւեալ, բարեկամք մեռելոյն առաքեալ ան-
դրէն կոչէին զՊելոպիդէս։ Նա ձեռնա-
մուխ 'ի գործն եղեալ, այլ առ օրին չու-
նելով յիւրոց անտի զօրականս, վարձեաց
զոր 'ի վայրաց անտի, և նոքօք հանդերձ
արագ արագ խաղաց ընդդէմ Պտղոմեայ։
Իբրև մերձ եղեն, կաշառաբեկ զվարձկանսն
արարեալ Պտղոմէոս՝ յինքն յանդուցա-
նէր. սակայն և 'ի փառաց համբաւոյն Պե-
ղոպիդեայ զանգիտեալ, եկն ընդ առաջ
նորա իբրև աւագամեծար առն և կալեալ
զաջոյն ողբէր, և խոստանայր ևս նմա պա-
հել զտէրութիւնն՝ եղբարց արքային վախ-
ճանելոյ, և բարեկամ և թշնամի զթե-
բայեցւոցն՝ ունել և իւր ինքնին. և վասն
այսոցիկ առեալ տայր նմա 'ի պատանդ և
զորդին իւր զՓիլոքսենոս, և յիսուն ևս այլ
'ի դայեկորդաց նորա. զորս առեալ Պե-
ղոպիդէս՝ արձակէր 'ի Թեբէ։

Ա՛յլ Պելոպիդէս ոչինչ հանդարտեալ
յաղագս մասնութեան վարձկանացն, և
լուր առեալ զի անդ 'ի Փարսաղոս 'ի պահ
եդեալ է նոցա շատ ինչ 'ի գոյից իւրեանց
և զորդիս և զկանայս իւրեանց, եդ 'ի մտի

քաջ վրէժ առնուլ զանիրաւութեանն, է-
թէ հասեալ կալցէ զնոսա. ժողովեաց 'ի
Թէսսաղացւոց անտի և խաղաց 'ի Փարսա-
ղոս։ Իբրև անց նա անդր, երևեցաւ նոցա
առաջի Աղեքսանդրոս բռնաւոր հանդերձ
զօրու. իսկ Պեղոպիդէս և ոքք ընդ նմա՝
զմոռաւ ածեալ եթէ գայ նա 'ի չքմեղս
լինել, յարեաւ և գնայր ընդ առաջ նորա.
Թէպէտ և գիտէր ևս քանիսն էր այրն ա-
պառում և մարդախոշոշ, յանդորրու կար-
ծաց զանձն 'ի պատճառս համբաւոյն Թե-
բայ, և փառաց աւագութեան իւրոյ։ Իբ-
րև անդուստ միայնակ զնա յակն արկանէր
Աղեքսանդրոս և անդէն, ետ վաղվաղակի
ձերբակալ առնել, և հասեալ տիրացաւ 'ի
վերայ Փարսաղեայ։ Անդանօր շշուկ և աղ-
հաւիրք յուզեցան յամենայն հնազան-
դեալս նորա. իբրու որ յետ այնչափ ան-
իրաւութեանն և յանդգնութեանն ոչ ևս
նա երեսս ումեք արասցէ, և ընդ ամենայն
մարդ և յամենայն 'ի գործս այնուհետև
խժդժագոյնս վարեսցի՝ իբրև այր յուսա-
հատ 'ի կենաց իւրոց։

Իսկ Թեբայեցիք լուր առեալ զնրացն՝
սաստիկ սրտնեցան, և առեալ զօր փու-
թապէս առաքէին անդր. և քանզի ցա-
սուցեալ իմն էին յայնժամ ընդ Եպամի-
նոնդ՝ զայլս կարգեցին 'ի զօրավար։ Բայց
բռնաւորն ածեալ զՊեղոպիդէս 'ի փերա-
զառաջինն Թոյլ տայր հասարակ ամենե-
ցուն խօսել ընդ նմա. համարէր եթէ յա-
ղէտից անտի նկուն լեալ ելցէ և խոնարհ։

Ալ Պեղոպիդէս ցանգ քաջալերէր զվըշ-
տասեռ Փերացիսն և զտառապեալսն՝ որ
յայց Ելանէին առ նա, և ասէր նա՝ Եթէ
յայնժամ աւադիկ մեռաալուս առ դուրս
կայ բռնաւորին վրէժինդրութիւն. և ա-
ռաքեաց նա ասել առ Աղէքսանդրոս ինք-
նին, Եթէ դժպատահ յոյժ է և դժնդակ
ջարչարել և 'ի մահ վարել զոր ամենայն
զտառապեալ քաղաքացիսն և զանմեղսն.
իսկ իսնայէ ինքն 'ի Պեղոպիդէս՝ գիտելով
քաջ զի 'ի ձեռաց զերծեալ նորա՝ վրէժ
ասասիկ ինդրեսցէ 'ի նմանէ։ Զարմացաւ
Աղէքսանդրոս ընդ անվեհերութիւնն Պե-
ղոպիդեայ և ընդ աներկիւղութիւնն, և
ասէ. "Եւ զի՞ փութայ Պեղոպիդէս 'ի մե-
ռանել". Լուեալ Պեղոպիդէս, ասէր.
"Զի դու վաղագոյն ես կորիցես, առ-
աւել քան զայժմուդ ասասուածատեաց
եղեալ"։

Եւ յայնմանէ արգել Աղէքսանդրոս
մեռել առ նա ումեք յարտաքնոց։ Սա-
կայն Թեբի դուստր Յասոնի կին Աղէք-
սանդրի լուեալ 'ի պահապանացն Պեղո-
պիդեայ զանվկանդ հաստատութիւն և ըզ
մեծութիւն ոգւոյ զառնն, ցանկացաւ տե-
սանել զնա և խօսել ընդ նմա։ Իբրև ջո-
քաւ առ նա, իբրու այն որ կին էր՝ ոչ
ժամանեաց անդէն համօրէն 'ի վերայ կալ
մեծութեն ոգւոյ նորա յայնչափ աղէտսն.
սակայն և 'ի հերացն խուռացելոց և 'ի
տարազէ հանդերձիցն և 'ի դուշնաքեայ
պարենէն խելամուտ լինէր մեծի վշտամ-

բերութեանն անվայել յոյժ փառաց առն, և յարտասուս հատանէր. ոյր աղագաւ և Պեղոպիդէս ոչ դիտելով զառաջինն ո՞ ոք կինն էցէ, զարմանայր. ապա ծանուցեալ զնա, սկսաւ 'ի հայրենի անուանէն կոչել զնա, իբրու որ մտերիմ յոյժ էր նա Յասոնի և բարեկամ։ Ապա իբրև ասէր նմա կինն, եթէ "Ողորմիմ կնոջ քում ո՞վ Պեղոպիդէ". եւ պատասխանի. "Եւ ես քեզ ինքնին. զի անկապ և արձակ գոլով քո, համբերես Աղեքսանդրի"։ Այս բանք 'ի խոր խոցեցին զկինն. որում և 'ի վաղնջուց դժոխըմբերելի էր անագորոյն կիրք և չարութիւն բռնաւորին. այն՝ որ 'ի վերայ այլոց անառակութեանցն յաւել և ունէր առ իւր 'ի մանուկ տարփաւոր զկրսերագոյնն յեղբարց կնոջն։ Ուստի և ստէպ յայց Պեղոպիդեայ ելեալ թեբի, և աղաւորէն ընդ նմա խօսեալ յաղագս իւրոց թշնամանացն, առաւել ևս ընոյր սրտմտութեամբ և ցասմամբ և ատելութեամբ ընդդէմ Աղեքսանդրի։

Այլ իբրև զօրավարք թեբայեցւոց մըխեալք 'ի Թեսաղիա, ոչինչ 'ի գլուխս տարեալք յանհմտութենէն և 'ի ձախողակ բախտէն՝ այնպէս անարդաբար տեղի ետուն, յայնժամ զայր այր 'ի նոցանէն տուգանէր քաղաքն բիւր մի դրամակշռոյ, և առեալ արձակէր անդր զօրու զնպամինոնդաս։ Յայնժամ մեծապէս դղրդեցաւ Թեսաղիա, և քաջալերութիւն բաղում զգեցան Թեսաղայիք 'ի համբաւ մե-

ծի զօրավարին. և վայրիկ մի ևս յայնժամ 'ի բուն իրք բռնաւորին հիմն 'ի վեր տապալէին. այնչափ իմն արհաւիրք պատեալ պաշարեաց զզօրագլուխս նորա և զբարեկամսն, և այնչափ թափով յապստամբութիւն մոաբերէին նուաճեալքն՝ յոյժ խրախամիտ ցնծացեալք ընդ եղս փրկութեանն, իբրու այն եթէ առ օրին տեսանել նոցա զբեկումն բռնաւորին։

Ա՛յլ յայսր ամենայնի վերայ զիւր փառսն 'ի վերջէ դասեալ Եպամինոնդքան զփրկութիւնն Պեղոպիդեայ, զանդիտեալ եթէ Աղեքսանդրոս վեր 'ի վայր տեսեալ զիրս իւր, գուցէ յանկարծ յուսահատ իբրև գազան մարդախանձ յարձակեսցի 'ի Պեղոպիդէս, թարթափեալ դեգերէր 'ի մարան. և ժամավաճառ եղեալ իբրու 'ի պատրաստութիւն հանդերձանացն, դանդաղութեամբն յանգուցանէր զբռնաւորն, զի մի զստամբակ լրբութիւն առն՝ ապերասան թողցէ, և մի զժանտաժուտ վայրագութիւնն առաւել ևս սրեսցէ. քանզի և գիտէր իսկ քաջ Եպամինոնդէս զանազորոյն բարս նորա և զարհամարհել նորա զգէղեցիկն և զարդարն. իբրու այն՝ որ կենդանւոյն տայր թաղել բրոնաւորն զմարդիկ. և էր զոր վարազենեաք և արջենեաք շուրջ պարուրեալ, դրդռէր ընդդէմ նոցա բարակս որսականս՝ նետահար արարեալ զնոսա, և տայր կեղեքել զնոսա, և ինքն 'ի զնին խաղուն զուարճացեալ բերկրէր։

Իսկ 'ի 'ի Մելիբիա և 'ի Սկոտուստ քաղաքն՝ որք դաշնաւորքն էին նմա և բարեկամք՝ շուրջ կարգեալ սիգաւորս 'ի ժողովրդեան, կոտորած 'ի վերայ դնէր նոցա ոչինչ խնայեալ 'ի սիս հասակաց. ապա և զաշտէն լուր՝ որով հարեալ սպան նա զՊոլիփրոն զեւր քեռին՝ նուիրեալ և պսակօք զարդարեալ՝ զոհ զոհէր այնմ իբրու աստուծոյ, և անուն կարդայր այսմիկ՝ Դիոֆէ այն է՝ Բարեբաղդ։ Իսկ էր երբեմն զի 'ի զնին կացեալ ողբերգակի ուրուն դերասանի 'ի խաղ Տրովադուհեացն Եւրիպիդեայ, անդէն յարուցեալ էլանէր արտաքս 'ի Թատրոնէն. այլ 'ի նոյն առաքէր 'ի նեբքս տալ քաջալերս դերասանին՝ մի՛ ինչ վասն էլանելոյն արտաքս՝ վասանալ նմա 'ի խաղուն. զի ո՛չ արհամարհութեան են ելքն, այլ զի ամաչէ նա առաջի քաղաքացեացն յարտասուս լուծանել ընդ աղէտս վշտին Հեկաբեայ և Անդրոմաքեայ. նա՝ որ երբէք ո՛չ գորովեցաւ 'ի վերայ միոյ ուրուք 'ի սպանելոց իւրոց։

Բայց սա այս Աղէքսանդրոս զահի հարեալ 'ի փառաց համբաւոյն և 'ի մեծամեծար աւագութենէն Եպամինոնդեայ զորավարին, "Նկուն լինէր իբրև զաքաղաղ պարտեալ՝ և 'ի վայր զթեւսն առնոյր". և փութապէս առաքեալ հրեշտակս՝ խօսէր ընդ նմա 'ի չքմեղս անձին։ Այլ Եպամինոնդ յանձն չառեալ կռել Թեբայեցւոց խաղաղութիւն և բարեկամութիւն ընդ

առն ընդ այնմիկ, դուլ և դադար մարտին առնէր աւուրս երեսուն, և այնպէս փըրկեալ ապրեցուցանէր զՊեղոպիդէս և զԻսմենիաս. և ապա ինքն տեղի տուեալ մեկնէր 'ի վայրաց անտի:

Յետ այսորիկ իրաղգած եղեալ Թեբայեցւոց, եթէ Լակեդեմոնացիք և Աթենացիք հրեշտակս առաքեցին առ մեծ Թագաւորն յուխտ մտանել ընդ նմա, առեալ արձակէին և նոքա զՊեղոպիդէս՝ քաջապէս խորհեալ այնպէս վասն մեծի համբաւոյ առն: Քանզի և յառաջագոյն համբաւեալ իսկ էր նա ընդ ամենայն դաւառս արքային՝ ընդ որ անցանէր նա. զի և ո՛չ ա նագանի ինչ հոչակ հարաւ ընդ Ասիա համբաւ պատերազմին նորա ընդդէմ Լակեդեմոնացւոցն, այլ յորմէհետէ լուր եհաս անդր Լեվկտրեան մարտին, և երբէք երբէք 'ի նոյն յաւելեալ և այլ ինչ 'ի գեղեցիկ նահատակութեանց նորա, օր ըստ օրէ երթալով երթայր յառաջացեալ համբաւ նորա և մինչև 'ի հեռաւոր դաւառս: Ապա և առ դուրսն տեսեալ զնա նախարարք և զօրավարք և իշխանք արքային, հիացեալ զարմանային և առ միմեանս բարբառէին. սա այս այր է՝ որ զծովուն տերութիւն և զցամաքին առ եբարձ 'ի Լակեդեմոնացւոց, և ընդ մէջ Գեռասայ և Եւրոտայ փակեաց սահմանեաց զիշխանութիւն Սպարտիոյ, այն՝ որ վայր մի յառաջ առ Ագեսիլայոսիւ մարտ պատերազմի շարժեաց ընդդէմ մեծի Թագաւորին և ընդդէմ

Պարսից հանել 'ի ձեռաց նոցա զՇուշ և զԵկբատանս։

Ուստի և վասն այսորիկ յանձն իւր զուարճացեալ էր Արտաշէս, և ևս 'ի վեր առեալ մեծացուցանէր զշուքն Պելոպիդեայ. պատուասիրէր երևել պաշտեալ և սպասարկեալ յաւադամեծար արանցն։ Ապա իբրև և զկերպարանն Պելոպիդեայ յակն արկանէր Թագաւորն. և լուաւ ևս զխօսել նորա՝ կորովի ևս քան զԱտոիկեցւոցն, և անպաճոյճ առաւել քան զԼակոնացւոցն, առաւել ևս սիրեաց զնա, և կիրս ինն աղքունի կրեալ՝ յայտնապէս ցուցանէր զմեծապէս յարգ իւր առ նա. որպէս զի և այլք 'ի դէսպանացն խելամուտ եղեն բազում սիրոյ նորա առ Պելոպիդէս. Թէպէտ և քան զամենայն Հելլենացիսն առաւել պատուէաց նա զԱնտալկիտաս Լակեդեմոնացի. քանզի 'ի մեռն Թացեալ աղքային զպսակն զոր բարձեալ բերէր նա 'ի խնճոյսն, առեալ յղեաց զայն առ նա։ Բայց ընդ Պելոպիդեայ ոչինչ այնպէս գրգանօք վարեցաւ Թագաւորն, առաքեալ առաքեաց առ նա ընծայս շքեղ յոյժ քան զսովորեալն և արգոյս և պայծառս. և զինդրուածս նորա կատարեաց, զի ազատք կացցեն ճնասցեն Հելլենացիք Իւրեանց օրինօք. և բնակեալ եղիցի Մեսսինէ, և Թեբայեցիք բարեկամք հայրենիք համարեսցին աղքային։

Զայս հաւանութիւնս առեալ Պելոպիդէս, այլ յընծայիցն և ոչինչ, բայց որ-

չափ ինչ 'ի նշան սիրոյ և մտերմութեան
աղքային, էլ մեկնեցաւ. և այս ապա մե-
ծապէս դարձուելի առակեաց զայլսն 'ի դէս-
պանաց: Քանզի Աթենացիք մահու դա-
տեցին զՍիմագորաս. և արդեօք իրաւամբք՝
եթէ արարին զայն 'ի պատճառս մթերից
ընծայիցն: Քանզի ոչ ոսկի միայն և ար-
ծաթ ընկալաւ սա, այլ և անկողին մի ծան-
րագին, և ծառայս ևս անկողնարկս 'ի Պար-
սից, իբրու եթէ անբաւականք իցեն Հել-
լենացիք քաջապէս անկողնարկ լինել. առ
այս դարձեալ՝ էառ նա և կովս ութսուն,
և անդէորդս ևս. իբրու եթէ կաթին նո-
ցա պէտք իցեն նմա 'ի խօթութեան իւ-
րում. ապա 'ի վերջէ 'ի մեկնել իւրում 'ի
Պարսից էջ նա 'ի ծովն բարձեալ բերեալ
շալակաւ. և որք բարձեալ տարան զնա՝
առին վարձս 'ի Թագաւորէն մէն մի տա-
ղանդս չորս: Այլ թուի թէ ոչ զօշաքա-
ղութիւն առն մեծապէս սրոնեցոյց զԱ-
թենացիսն. (քանզի երբեմն և Եպիկրա-
տէս այր բեռնակիր զօրու ոչ ժխտեաց ընծայս առեալ 'ի Թագաւորէն. և յասել անդ նորա, եթէ վՃիռ տալ արժան է՝ փոխանակ լիցնունց իշխանապետացն ամի ամի դեսպանս լինի 'ի սոսկականաց և յաղքատաց առաքել առ Թագաւորն՝ զի հարստասցին, լուսալ զայս ժողովրդեանն՝ 'ի ծաղր հատանէին). այլ զի մանաւանդ դժկամակս բերին Աթենացիք, զի ամենայն ինչ շնորհեցաւ Թեբայեցւոց: Այլ զփառսն Պեղոպիդեայ չածին նոքա զմտաւ,

եթէ քանիսն առաւել քան զամենայն հռետորս և զՃարտարապետս մեծ ևս էր նա առ առն Թագաւորի՝ որ 'ի պատուել բնաւորեալն է զհզօրացեալսն 'ի զէնս։ Արդ հրեշտակութիւնն Պեղոպիդեայ 'ի դարձին նորա ոչ սակաւ ինչ յաւել նմա զսէր մտերմութեան իւրոցն, այն զի չնորհեցաւ նմա միւսանգամ բնակեցուցանել զՄեսսինէ, և այլոց Հելլենացւոցն սեպհական վարել օրինաքն։

Բայց յայնժամ Աղեքսանդրոս Փերացի անդրէն 'ի տնկակից կրիցն բերեալ, և 'ի Թեսսաղացւոց՝ քաղաքս ոչ սակաւ հատեալ և պահապան զօրս արձակեալ առ ամենայն Փթիոտիացիս և Աքայեցիս և առ ժողովուրդն Մագնեսացւոց. լուր առեալ քաղաքացն զդարձին Պեղոպիդեայ, անդէն հրեշտակս արձակէն 'ի Թեբէ. զօր 'ի Թիկուսս խնդրէին և զօրավար զՊեղոպիդէս։ Իբրև զզօրավիդ զայն անյապաղ սահմանեցին Թեբայեցիք, և կազմեցին պատրաստեցին զամենայնն, և այն ինչ 'ի քաղաքէն արտաքս ելանէր զօրավարն, խաւարէր լոյս արեգականն. որպէս զի և 'ի տունջեան աղջամուղջ առհասարակ գրաւեալ կալաւ զքաղաքն։ Անդանօր Պեղոպիդէս տեսեալ զիւրսն խռովեալ առհասարակ 'ի նշանէն, ոչ լաւ համարեցաւ բռնադատեալ ընդ իւր զզօրն զայն ահաբեկ և յուսակտուր, և 'ի վտանգ արկանել եօթն հազար այր 'ի քաղաքայնոցն. այլ զանձն միայնակ ընծայեալ Թեսսաղացւոցն և առեալ ընդ իւր երեք-

հարիւր այրուձի ինքնակամ նահատակեալ յօտարաց անտի, եւ գնաց. Թէպէտ և գուշակք և իղձք ոչ հաւանեցան, և քաղաքացիք ևս արգելուին զնա. քանզի նշան երկնառաք մեծ և ընդդէմ մեծի ուրումն առն համարեցան զայն։

Բայց նա սաստիկ վառեալ էր ընդդէմ Աղեքսանդրի վասն Թշնամանացն առ 'ի նմանէ. և ակն ունէր ևս գտանել զտուն նորա լի՛ ախտիւ և վայիւք, 'ի բանից անտի զոր խօսեալ իսկ էր նա առ Թեբի. իսկ որ առաւել ևս 'ի նոյն յանկուցանէր զնա՝ գեղեցկութիւն նահատակութեանն այնմիկ։ Քանզի և ցանկայր և պատուասիրէր՝ զի 'ի ժամանակին՝ յորում Լակեդեմոնացիք զօրավարս և ոստիկանս առեալ արձակէին առ Դիոնեսիոս բռնաւոր Սիկիլիոյ. և Աթենացիք ինքնին վարձատու ունէին զԱղեքսանդրոս, և գրոշեալ 'ի պղնձոյ կանգնեալ էին նմա իբրև բարերարի, ցուցցէ նա Հելլենացւոցն՝ եթէ Թեբայեցիք միայն 'ի զէն 'ի զարդ վառեալ են յայնժամ վասն հարստահարելոցն, և աւերեալ քանդեն նոքա յԵլլադա տէրութիւնս զանիրաւացն և զբռնաւորաց։

Հասեալ ապա 'ի Փարսաղոս Պեղոպիդէս, և անդ զբանակն խմբեալ՝ անդէն խաղայր ընդդէմ Աղեքսանդրի։ Նա տեսեալ զի նուազունք են 'ի Թեբայեցւոց ընդ Պեղոպիդեայ, և զի զօրականք իւր կրկին ևս և առաւել են քան զԹեսսաղացւոցն, խաղաց գալ 'ի դիմի հարկանել նմա առ տա-

Ճարին Թէոդիսայ։ Իբրև անդ ոմն ասէր առ Պեղոպիդէս, եթէ 'ի վերայ յարձակեալ գայ բռնաւորն բազում ամբոխիւ, եւ պատասխանի. "Քաջ է, բազմագունից ուրեմն և մեք լեցուք յաղթական"։ Արդ՝ անդանօր առ տեղեաւն՝ որ անուանեալ կոչէր ԿԷՆՈՆԷՓԱԼԷՍ, 'ի միջոցին ամբարձեալ կան բլուրք կրկին առ 'ի շեղ և բարձրակատարք 'ի հանդիպոյ միմեանց. գուն գործեցին հեռեակազօրք երկոցունց եւ կողմանց հասանել ունել զբլուրսն։ Այլ Պեղոպիդէս 'ի վերայ հեծելազօրուն Թշնամեաց արձակէր զիւր այրուձին՝ որ բազումք էին և կորովիք։ Իբրև յաղթական եւ նէին սոքա, և զհետ եւ մոռեալ փախստէիցն վանէին 'ի դաշտին, անդուստ Աղեքսանդրոս կանխեաց կալաւ զբլուրսն, և 'ի դիմի հարեալ հեռեակացն Թեսսաղացւոց՝ որ զկնի հասին անդր և գուն գործէին եւ լանել ունել զամուր վայրս զբարձանցն, հարուածս դնէր 'ի վերայ նահատակացն, և վերջ նոցա խոց և վերաւոր՝ այնպէս 'ի գլուխ տարան և ոչինչ։

Հապա դէտ ակն կալեալ Պեղոպիդէս, զիւր այրուձին յետոս ձայնեալ՝ հրաման տայր յարձակել 'ի վերայ մարտիկ գնդին. և ինքն առեալ փութապէս զվահանն, դիմեաց խառնեցաւ ընդ նոսա՝ որ առ բլրոքն մարտ եղեալ կռուէին. և անդ ընդ վերջապահն անցեալ յառաջ միջամուխ եղեալ 'ի նահատակն՝ այնչափ ինն ոյժ սնդուեթեան և քաջալերր յորդեաց առ

հասարակ, որպէս զի և Թէնամեացն կարծել էթէ այլ յայլմէ եղեալ զօրականին՝ մարտուցեալ կռուին նոքա միանգամայն և մարմնով և հոգւով։ Թէպէտ և զոհեղի կալեալ ընկրկէին հրոսակութիւնս երկուս և երիս, տեսեալ զի հզօրեղապէս նոքա 'ի գիմի հարան, և զի և այրուձին ևս դարձ արարեալ էր 'ի հետամուտն լինելոյ, տեղի ետուն և ընդ կրունկն վերջոտնէին։

Իսկ անգուստ Պեղոպիդէս 'ի բարձրաւանդակէն տեսեալ՝ զի չև էր 'ի փախուստ ամենայն բանակ Թէնամեացն դարձեալ, Թէպէտ և առհասարակ լի էին խռովութեամբ և ամբոխիւ, եկաց արձանացաւ և շուրջ հայէր գիտէր՝ խնդրէր զԱղեքսանդրոս։ Ա՛յն ինչ յակն արկանէր զնա յաջոյ Թևի անդ կարգեալ զվարձկանս զօրականին և խրախուսել, ո՛չ ևս զարտմտութիւն բարկութեանն սանձեաց բանիւն. 'ի նոյն տեսիլ վառեցաւ բորբոքեցաւ, և արտմտութեան կրիցն 'ի ձեռս զիւրականն տուեալ մարմին և զզօրավարութիւն նահատակութեանն, խուճապեցաւ վազեաց 'ի բաց հարուստ միջոցաւ յառաջագէմ քան զնիզակակիցսն, ձայն բարձեալ գոչէր և ասպարէզ բռնաւորին կարդայր։ Իսկ Աղեքսանդրոս ո՛չ եկաց մնաց բուռն յարձակմանն, չոքաւ խոյս ետ 'ի մէջ տիգաւոր անձնապահացն և ծածկեցաւ։ Բայց 'ի վարձկանաց անտի՝ որ միանգամ առաջին նահատակեցան ընդդէմ նորա, զնոսա տապաստ արկանէր Պեղոպիդէս, և զկէսս

դարձեալ խոցէր և սատակէր. սակայն և բազում այն էին 'ի նոցանէ որք բացէ 'ի բաց տիգօք գեղարդեամբք խոցեալ զզէնս քաջին, վերս մահու 'ի վերայ դնէին. մինչև անդուստ թեսսաղացիք անձուկ մեծ կալեալ և յոգիս հարեալք 'ի վայր 'ի բլրոցն խուճապեցան ձեռն տալ նմա, այլ Պեղոպիդէս դիտասպատ անկեալ կայր։ Անդ ապա այրուձին յառաջ անցեալ հարկանէր վանէր առհասարակ զփաղանգ թշնամւոյն, և զհետ ևս մոռեալ յոյժ հարուստ միջոցաւ՝ ընոյր զդաշտագետինն դիակամբք, տապատ արկեալ ոգիս աւելի քան զերիս հազարս։

Արդ եթէ թեբայեցիք յայնժամ գըտեալք 'ի մահուն Պեղոպիդեայ՝ ցաւ անհնարին ցաւեցան նոքա, կարդալով զնա հայր և փրկիչ և վարժապետ մեծամեծ և գեղեցիկ առաքինութեանց, չէր ինչ կարի զարմանալ. յորժամ անդուստ և թեսսաղացիք ևնիզակակիցք՝ իւրեանց իսկ վճռովք 'ի շնորհս Պեղոպիդեայ անցեալ զանցեալ զբնաւ իսկ պատուով՝ զոր երբէք ընծայել իցէ առաքինութիւն մարդկան, և առաւել ևս իւրեանց իսկ կրիւքն զառ նա մոռացութիւն սիրոյն իւրեանց 'ի դէմս բերէին։ Քանզի պատմեն՝ եթէ որք միանգամ 'ի մարտին յայնմիկ լուր առին զմահուն նորա, անդէն փութանակի մինչև զզրահսն մերկացեալք, մինչև ձիոց զսանձս արձակեալք, և մինչև զվերս պատեալք, զինու զարդու այնպէս ջերմեալք առ նա ընթա-

ցեալ գնային՝ իբրու որ դեռևս ոգիքն 'ի նմա իցեն. ապա շուրջ զդիակամբն նորա առեալ կուտէին կարկառ զառ և զապուր զթշնամեացն. և հատին կորեցին զվարսա զերիվարացն և զիւրեանցն. և շատք ևս տեղն տուեալ մենացեալք 'ի վրանս ոչ հուր լուցին և ոչ հաց առին. այլ անդ լռութիւն անշշունջ և թաղծութիւն մեծապէս գրաւեալ կալաւ առհասարակ զբանակն. իբրև որ ոչ յաղթութիւն տարեալ նոքա նշանաւոր և մեծ, այլ 'ի բռնաւորէ անտի 'ի պարտութիւն մատնեալ նկունք եղեալ իցեն: Այլ ապա և 'ի քաղաքաց քաղաքաց, ուր միանգամ գոյժ եհաս մահուանն, անդր դիմէր աւագանին և ընդ նոսա երիտասարդք և տղայք, և քահանայք ինքնին գլխովին, շքով առնուլ ժողովել զմարմին նորա, ածեալք ընդ իւրեանս Ախոյեանս յաղթանակս և բոլորս պսակաց և սպառազինութիւնս ոսկիս:

Իբրև 'ի դիահանսն հանդերձեցան, յառաջ մատեան արք հին աւուրց 'ի Թեսսաղացւոց անտի, խնդրէին 'ի Թեբայեցւոց թաղել զմեռեալն. և անդ մի ոմն 'ի նոցանէն եկաց խօսեցաւ այսպէս. "Շնորհս մի արք նիզակակիցք խնդրեմք մեք աւադիկ 'ի ձէնջ, որ փառս յամբաւ աղէտս մեր հանդերձեսցէ մեզ և քաջալեր: Ո՛չ ուղի՝ կենդանւոյն Պեղոպիդեայ հորդեսցեն Թեսսաղացիք, և ոչ շուք նմին քաջավայելուչ ձօնեսցեն նմա յիմանալ նորա. այլ թէ երբէք վիճակեսցի մեզ հպիլ 'ի

մեռելութիւն նորա, և զարդարել պատ-
կել և մեզէն զմարմին նորա թաղել, տա-
ցուք ապա տեսանել ձեզ, եթէ քան թե-
բայեցուցն՝ առաւել ևս թեսսաղացւոց
գժոխըմբերելի խցեն կիրք աղէտիցս այսո-
ցիկ. քանզի զրկեցայք դուք 'ի քաջէ զո-
րավարէ և եթ, իսկ մեք ինքնին 'ի նմանէ,
միանգամայն և յազատութենէ։ Քանզի
զիարդ այլ համարձակեսցուք մեք խնդրել
'ի ձէնջ այլ զօրավար, մինչև մեր դարձու-
ցեալ առ ձեզ զՊեղոպիդէս"։

Հաւանեցան թեբայեցիք։ Եւ արդեօք
յուզարկաւորութիւն այլ փառաւոր եր-
բէք ևս քան զնորայն չասասցէ ոք, որ ո՛չ 'ի
փղոսկր և ոչ յոսկի և ո՛չ 'ի ծիրանիս իմաս-
տասիրեսցէ զշուք պայծառութեանն, ըստ
որում Փիղիստոս 'ի գովութիւն առեալ
զարմանայր ընդ հանդէս թաղմանն Դիո-
նիսեայ, որ եղեալ վախճանին եղև մեծին
այնմիկ ողբերգակ տեսարանին բռնաւո-
րութեան։ Իսկ Աղեքսանդր մեծն 'ի մա-
հուն Եփեստիոնին՝ ոչ զվարսա միայն ետ
փոքրել զերիվարացն և զջորւոցն, այլ և 'ի
պատուարացն զպսակն տայր բառնալ. զի
և քաղաքք ինքնին զառաջին կերպարանն
ջերելով՝ այլ զկարեալն և զանփառու-
նակն, երևեսցին 'ի սուգ համակել։ Այլ
քանզի այդոքիկ 'ի տերանց անսի հրա-
մայեալ հարկիս գործեցան, միանգամայն
և նախանձու պատուասիրելոցն, և ատե-
լութեամբ բռնադատելոցն, ցոյցք ինչ ա-
պա չէին դոքա մտերմութեան և ո՛չ մեծա-

բանաց. իբրու որ զպերճութիւն առաւել զբարբարոսականն և զշռայլութիւն և զամբարտաւանութիւնն 'ի դէմս բերէին զնոցա՝ որ զդոյն 'ի վայրաւատինսն վարեսցեն և յումպէտսն։ Այլ թէ այր մի ժողովրդական, մեռեալ 'ի տար աշխարհի, յամուսնոյն բացական և 'ի զաւակացն և յազգականացն, ոչ ուրուք թախանձեալ ժառեալ, կամ թէ հարկ 'ի վերայ ածեալ, այնպէս մոադիւրագոյնս և այր զարամբ այնչափ ժողովուրդք և այնչափ քաղաքք սպասս հարեալ յուղարկաւորքք լինիցին նմա և բոլորիւք պսակեսցեն, արդեօք այս նմա մեծապէս իրաւամբք զանվթարն հանդերձեսցէ երանութիւն։

Քանզի և չէ իսկ արդեօք՝ ըստ որում Եսովպոսն ասաց՝ դժոխըմբերելի մահն բարեբաստիկ մարդկանն, նա և յոյժ երջանիկ է. քանզի զգեղեցիկ նահատակութիւնս զառաքինեացն յանդորր հանէ, և 'ի փոփոխութեանց բախտին անդրժելի պահէ։ Ուստի և քաջ իսկ Լակոնացին այն գիրկս ածեալ Ողոմպիայաղթն Դիագորայ, զի ետես ևս նա յՈղիմպիականն պսակեալ զորդիսն, ետես և զթոռունսն՝ որ յորդւոցն և որ 'ի դստերացն, բարբառեցաւ առ նա այսպէս. "Վախճանեաց ուրեմն ո՞վ Դիագորաս. ոչ ելցես դու 'ի վեր յՈղիմպոս"։ Այլ լինած թուի, եթէ ոք 'ի միասին զուգեալ և զբնաւ մրցանակս զՈղոմպիականացն և զՊիւթեանցն՝ արժան երբէք չհամարեսցի 'ի կշիռ ձգելընդ

միում միայն մարմին մրցանացն Պեղոպի-
դեայ, այն՝ որ 'ի բազումս մրցեալ և մրցա-
նակս տարեալ, և կեանս հարուստ կեցեալ
'ի փառս և 'ի պատուի, և ապա ուրեմն
Բիովտարքոս կացեալ երեքտասանեորդ
անգամ, և նահատակութիւն մեծապէս
նահատակեալ և նկուն զբռնաւորն արա-
բեալ, մեռաւ նա 'ի վերայ ազատութեան
Թեսաղացւոցն։

Եւ արդեօք մահ նորա կոծ և աշխար
մեծապէս առթեաց նիզակակցացն, սա-
կայն և օգուտ յոյժ գործեաց նոցա։ Քան-
զի իբրև լուր առին Թեբայեցիք եթէ ան-
կաւ Պեղոպիդէս, վրէժ անյապաղ խնդ-
րեալ՝ փութապէս արձակէին անդր բա-
նակ եօթն հազար զօրականին և եօթն հա-
րիւր այրուձիոյ, և էին զօրավարք Մաղկի-
դոս և Դիոգիտոնէ։ Եւ այնպէս սաստիկ
'ի նեղն արկեալ զԱղեքսանդրոս և 'ի զօ-
րութենէն վատեալ, հարկ 'ի վերայ եդին
նորա դարձուցանել առ Թեսաղացիս ըզ-
քաղաքս նոցա. և 'ի բաց կալ 'ի Մագնե-
սացւոց և 'ի Փթիոտիսացւոց և յԱքայե-
ցւոց, և զպահանորդ զօրն 'ի բաց տանել.
և երդումն ևս կռեալ՝ ըստ հրամանին Թե-
բայեցւոց անսալ և խաղալ 'ի կռիւ ընդդէմ
թշնամեաց։ Արդ Թեբայեցիք օրինակ զայս
շատացան յայնժամ։

Ալ մեք, զոր վայրիկ մի ապա զպա-
տուհան ելոյծ նա դիցն վասն Պեղոպի-
դեայ, պատմեացուք։ Էր իսկ անդամին
վարժեալ Պեղոպիդեայ՝ որպէս ասացաքն՝

զԹեբի զկին Աղեքսանդրի, մի ինչ ահա-
բեկ լինել 'ի շքոյ և 'ի փառաց բռնաւո-
րութեանն, որ զինուք չափ է և 'ի գունդ
եղուզակացն։ Ապա և ինքն Թեբի զանգի-
տեալ յուխտադրուժ բարոյիցն, և յա-
տելութիւն բերեալ անագորոյն կրիցն Ա-
ղեքսանդրի, համաշունչ դաշնադիր լինէր
ընդ Եղբարց իւրոց երից՝ ընդ Տիսիփոնեայ
և Պիւթողայոսի և Լիւկոփրոնեայ, դաւել
զնա օրինակ զայս։ Ողջոյն ապարանիցն բըռ-
նաւորին զգուշացեալ էին պահանորդք գի-
շերապահք, բաց 'ի բարձու սրսկապանէն՝
յոր եղեալ ննջէր նա. և էր պահապան
մոից սրսկապանին շուն կապեալ անդանօր՝
բնաւից ահարկու, բայց երկուց տեարցն
ընդեալ, և ծառային՝ որ զկերն տայր նմա։

Արդ յաւուր յորում դաւել զնա հան,
դերձեալ էր Թեբի, առեալ 'ի տուէ զեղ-
բարս իւր Թագուցանէր 'ի սենեակ մի մեր-
ձաւոր. և ապա ինքն միայնակ՝ որպէս սո-
վորն էր՝ մտեալ առ Աղեքսանդրոս որ 'ի
քուն էր, և յետ սակաւու եղեալ ար-
տաքս միւսանգամ՝ հրաման տայր ծա-
ռային 'ի բաց զշունն տանել, իբրու կամել
Աղեքսանդրու յանդորրու անշշունջ ամե-
նևին ննջել։ Բայց և խիթացեալ՝ եթէ և
դրնդիւն արձակեսցեն սանդուղք յելանել
'ի վեր պատանեացն, առեալ ասուիս պա-
տէր 'ի վերայ. ապա ածեալ զնոսա 'ի վեր
սուսերաւորս, և առ դուրսն կացուցեալ
զնոսա, ինքն մտանէր 'ի ներքս, և կորզեալ
'ի բաց զսուրն կախեալ 'ի վերայ գլխոյն

Աղեքսանդրի՝ զի և քաջ իսկ իսոր 'ի քուն ննջէր այրն, քերեալ ցուցանէր նոցա զայն։ Անդ 'ի ժամուն զահի զդողանի հարեալ պատանեացն և 'ի գործն վերջոանեալք, սրտմտեալ կիւնն Թշնամանս և յիշոցս տայր նոցա և երդնոյր ևս՝ ինքնին գնալ զարթուցանել զբռնաւորն և մատն գործոյն լինել. յորմէ նոցա զարհուրեալք և յամօթոյն ևս պարտեալք, առեալ ածէր զնոսա 'ի նեղքս և կարգէր կացուցանէր շուրջ զանկողնովքն, ինքն 'ի ձեռին զձրագն ունելով։ Անդանօր մին 'ի նոցանէ առեալ զբռնաւորին զոտիցն՝ պնդագոյնս ունէր. իսկ միւսն կալեալ զվարսիցն՝ շրջէր զդլուխն. իսկ երրորդն՝ հարեալ 'ի նա զսուրն և անդէն խողխողէր։ Եւ այնպէս արագ արագ մահու, որ 'ի դէպ իսկ Թերևս չէր, փչեաց զոգին ամբարիշտն։ Այլ քանզի սա առաջին բռնաւոր՝ որ յամուսնոյն իւրմէ 'ի մահ վարեցաւ, և զի և յետ մահուն մարմին նորա Թշնամանեալ՝ արկեալ 'ի բացի առաՀԹուր 'ի փերացուցն հարաւ, ապա Թուի Թէ զարժանին կրեաց ամբարշտութեանցն։

ՄԱՐԿԵՂԼՈՍ

Ի ՄԱՐԿՈՍ կղաւդիոս որ հնգեցս անգամ եկաց հիւպատոս Հռոմայեցւոց՝ ասեն որդի եղեալ Մարկոսի։ Իսկ առաջին՝ սա այս Մարկոս յիւրում ազգատոհմին անուանեալ կոչեցաւ Մարկելլոս, այն է՝ Ալբեսեան, որպէս ասէ Պոսիդոնիոս։ Քանզի կիրթ և հմուտ էր 'ի մարտս պատերազմաց, և մարմնով կորովի, և ձեռաքն ուժաւոր, իսկ բնութեամբն՝ պատերազմասէր։ Այլ զբոյս բարուց զայս զաշխոյժ և զբուռն և սաստիկ՝ միայն 'ի մրցանս մարտից 'ի դէմս բերէր նա. իսկ յայլն ամենայն ցած էր նա և մարդասէր, և հելլենական վարժիցն և դպրութեանց սիրող այնչափ, զի և զարմանայր և մեծապէս ևս յարգէր զյառաջադէմսն առ 'ի նոցն։ Թէպէտ և ինքն վասն մեծաց անպարապութեաց, ոչ որչափ յօժարեալն էր՝ ժամանեաց

վարժիլ և հրահանգիլ 'ի նոսա։ Քանզի զոր այլոց 'ի մարդկանէ ետ Աստուած, որպէս Հոմերոսն ասաց, "Անդամին 'ի պատանի տիոցն մինչև յալևոյթ ծերութեան՝ պատերազմունս նիւթել գոռս", զնոյն ետ որոց յայնժամ աղք աւադք 'ի Հռոմայեցիս։ Քանզի պատանիք գոլով, ընդ Կարքեդոնացիս մարտ եդեալ կռուէցան 'ի վերայ Սիկիլիոյ. իսկ երիտասարդք՝ ընդ Գաղատացիս՝ 'ի վերայ Իտալիոյ. և ապա ուրեմն ծերացեալք՝ դարձեալ միւսանգամ կռուէցան ընդ Աննիբաղայ և ընդ Կարքեդոնացւոց. չունելով նոքա՝ 'ի ծերացեալ հասակին՝ իբրու զբազումս դուլ և հանգիստ 'ի գործոց մարտին, այլ իբրև առաջնորդք և իբրև զօրավարք ածեալք 'ի մրցմունս յաղնուականութեանն կրկոյ և յառաքինութենէն։

Աւրդ Մարկեղղոս՝ թէպէտ և յամենայն տեսակս մարտից ժիր և կիրթ, այլ 'ի մենամարտի՝ վեհագոյն անձին իւրում եղեալ՝ երբէք խոյս չետ նա յախոյեանէն. և առհասարակ տապաստ արկ՝ զոք միանգամ ձայն ետուն նմա։ Իսկ և 'ի Սիկիլիա տպրեցուցանէր զեղբայր իւր Ռոտակիլիոս՝ որ 'ի մահ վտանգեցաւ, հովանի եղեալ նմա վահանաւն և սատակեալ զախոյեանս նորա։ Ուստի թէպէտ և տակաւին պատանի, տարաւ նա և պսակս մրցանակս 'ի զօրավարաց. և ևս քան զևս ականաւոր եղեալ, 'ի ժողովրդոյն ընտրեալ կարգեցաւ Ամբարապետ 'ի նշանաւոր կարգի. իսկ 'ի

քահանայիցն՝ Հաւահարց. և է այս ազգ քահանայութեան՝ յօրինացն տուչութենէ ոստիկան 'ի վերայ կալ գուշակութեանցն, առաւել ևս որ 'ի հաւուց անտի։

Բայց մինչդեռ ամբարապետն էր, բրոնադատեցաւ նա յակամայս ամբաստան լինել։ Քանզի որդի մի էր նորա անուանակից, դիմաք գեղեցիկ՝ քաջառոյգ հասակաւ, ոչինչ պակաս և պարկեշտութեամբն և դաստիարակութեամբն պքանչացեալ առ քաղաքացիսն։ 'Ի սէր մանկանն հարեալ Կապետովլինոս հոմիշխան Մարկեղղոսի այր պագշոտ և լերբ, հրապուրեաց բանիւք. զառաջինն մերժեաց մանուկն առանձին զմեղն. իբրև միւսանգամ 'ի նոյն սադրեցաւ, չոգաւ 'ի վեր հանէր հօրն զբանն։ Զչարեցաւ հայրն, և 'ի Սինկղիտոսին ամբաստան կայր զնշխանակցէն։ Ընդ Կապետովլինոս խոյս տուեալ, և հնարիմացութիւն բազումս նիւթէր 'ի դերև զամբաստանութիւնն հանել, և բողոք ևս բառնայր առ ժողովրդապետսն. իբրև նոքա բողոքոյն երեսս չարարին, ապա և բնաւ իսկ յուրասոտ լինէր վասն ինքնասուն։ Եւ քանզի վկայ 'ի միջի չգոյր բանիցն առ մանուկն, հաճոյ թուեցաւ զառաջեաւ զմանուկն ինքնին կոչել։ Իբրև եկն նա յանդիման եղև, յակն արկեալ Սինկղիտոսին զնորա շառագնեալ դիմացն և զարտասուսն, և խառն ընդ մեծապէս սրտնութեան մանկանն՝ զամօթն, ապա հաւատաց և ոչինչ այլ խնդրեալ՝ դատակնիք տային և արծա-

թոյ տուգանէին զԿապետովլինոս. և յարծաթոյ անտի Մարկեղղոս սեղան լոմայափոխից չինեալ՝ նուիրեաց դիցն։

Բայց յայնժամ 'ի զրաւ առաջին մարտին Կարքեդոնացւոց 'ի քսաներորդի երկրորդի ամին, անդրէն միւսանգամ յուզեցաւ սկիզբն պատերազմին՝ Գաղատացւոց 'ի վերայ Հռովմայ։ Խբերացիք բնակաւորք ՅԱլպատան Խոալիոյ, ազգ 'ի Կելտաց՝ զօրաւորք ինքնին, կոչեցին և յայլոց զօր 'ի թիկունս վարձուոր 'ի Գաղատացւոց անտի, որ անուանեալ կոչին Գերատացիք։ Իսկ որ պքանչելին յայնժամ 'ի գեղեցիկ բախտէն, զի այս մարտ Կելտաց ոչ շարժեցաւ՝ միախուռն 'ի վերայ Հռոմայեցւոց ընդ մարտին Լիբիոյ. այլ կացին մնացին յայնժամ Գաղատացիք 'ի մեծապէս յանդորրու՝ Խբրու 'ի զնին կացեալք մարտի նոցա. և խաղացին ապա 'ի վերայ յաղթականացն և ձայն եառն մարտի՝ մինչդեռ նոքա պարապեալքն էին։ Սակայն և այնպէս յահ մեծ ըմբռնեցան Հռոմայեցիք 'ի մերձաւորութենէն, զի 'ի սահմանակից վայրաց յուզեցաւ մարտն 'ի վերայ նոցա. միանգամայն և 'ի վաղնջուց անտի նահատակութեանցն Գաղատացւոց, յորոց՝ թուի թէ քան յայլոց, 'ի նոցանէն առաւել զահի հարեալ էին Հռոմայեցիք. Խբրու որք և զնոցա քաղաքն երբեմն 'ի նոցանէն հանեալ էին. և յայնց ժամանակաց հետէ օրէնս կարգեալ էր Հռոմայեցւոց, ազատ 'ի զինուորութենէ լինել քահա-

նայից՝ բաց 'ի Գաղատացւոց միւսանգամ պատերազմէն։ Բայց ահ երկիւղին՝ յոր յայնժամ տագնապեցան նոքա՝ յայտնի է և 'ի մեծահանդէրձ պատրաստութենէն նոցա. քանզի ասեն՝ եթէ ոչ յառաջն և ոչ դարձեալ զկնի, երբէք այնչափ բիւրաւորք 'ի զէն վառեցան 'ի Հռոմայեցւոց 1. առ այս՝ և յօտարոտի կարդէ զոհից նոցա յայնժամ յայտնի էր ահն։

Քանզի որք յառաջ ժամանակաւ ինչ մի 'ի խժդժականաց և 'ի դժպատեհից երբէք նոքա ոչ ցուցին, այլ յաստուածայինսն անդր սիրեցին նոքա վարել հելլենացի և լի հեզութեամբ. իսկ յայնժամ 'ի յուզել մարտին այնորիկ 'ի վերայ նոցա, ունկն մատուցեալ ինչ ինչ պատգամաց 'ի մատենից անտի Սիբիւլլայեցն, կենդանւոյն Թաղեցին երկուս 'ի Հելլենացւոց՝ այր և կին, նոյնպէս և երկուս 'ի Գաղատացւոց, 'ի վայրն՝ որ անուանեալ կոչի՝ Հրապարակ Էպանդ. և Թաղելոցն այնոցիկ Հելլենացւոց և Գաղատացւոց՝ մինչև ցայսօր ժամանակի յամսեանն Նոյեմբերի՝ կատարեն նուիրագործութիւնս իմն ծածուկս և աչաց դիժոխմբերս առհասարակ։

Արդ յառաջին մրցանսն մարտին, Է ուրեք զի յաղթութիւնս մեծամեծս տային Հռոմայեցիք, և Է ուրեք զի հարուածս առին մեծամեծս. այլ մարտին ելք սահմանեցան և ոչինչ։ Իսկ ապա 'ի ժամանակին՝ յորում Փլամինիոս և Փուրիոս հիւպատոսք խաղացին զօրու ծանու

'ի վերայ Ինսոմբրացւոց, տեսանէին արիւն գնալ ընդ գետն՝ որ անցանէ ընդ Պիկի-նեան դաշտն. և հոչակ ևս հարաւ՝ եթէ լուսինք երեք երևեցան առ քաղաքաւն Արիմինեայ 2. և քահանայք ինքնին՝ որ հաւահմայիցն պաշտօնատարք են, յընտրու-թեան հիւպատոսացն՝ հաստատութեամբ վկայէին՝ ձախողակի և չարահաւ լինել յայնժամ ընտրութեանն: Վասն որոյ և Սինկլիտոսն փութապէս նամականի արա-րեալ 'ի բանակն՝ յետս կոչէր զհիւպա-տոսան, գալ և հրաժեշտ յիշխանութենէն տալ. և մի հիւպատոսաբար յինչ մի ձեռ-նամուխ լինել ընդդէմ թշնամեացն: Իսկ Փլամինիոս առեալ զնամականին՝ ոչ կա-մեցաւ բանալ մինչև կռուեալ և 'ի փա-խուստ զբարբարոսն դարձուցեալ և ըզ-դաւառ նոցա աւար հարեալ: Ապա դարձ 'ի Հռոմ արարեալ բազում աւարաւ, ընդ առաջ նորա ոչ չոքան ժողովուրդք. և քանզի ոչ անդէն 'ի կոչն հնազանդեցաւ նա և ոչ անսաց գրոյն, այլ անգոսնեաց և արհամարհեաց, վայրիկ մի ևս զլանային նմա զյաղթանակն. բայց յետ յաղթանա-կին ստիպեցին զնա 'ի բաց 'ի հիւպատո-սութենէն կալ հանդերձ իշխանակցաւն, և կեանս վարել զսոսկականի: Եւ այսպէս ապա զամենայն զգործս յաստուած 'ի վեր հանէին Հռոմայեցիք. և ոչ դարձեալ 'ի յաջողութիւնս մեծամեծս անգամ՝ եր-բէք հանդարտէին նոքա զանց զդուշակու-թեամբքն առնել և զհայրենի սովորու-

թեամբքն. լաւ համարէին 'ի փրկութիւն քաղաքին բարեպաշտել իշխանաց յաստուածակոչին անդր, քան 'ի մարտի յաղթական լինել թշնամւոյն։

Ա. այս և Տիբերիոս Սեմպրոնիոս, այր՝ որ քաջութեամբ լաւութիւ սիրելի յոյժ էր Հռոմայեցւոց, 'ի հիւպատոսութեան անդ իւրում ընտրեալ իւր 'ի յաջորդ զՍկիպիոն Նասիկաս և զԳայիոս Մարկիոս. և յետ մեկնելոյ նոցա 'ի կուսակալութիւս իւրեանց՝ իբրև ըստ դիպաց առեալ 'ի ձեռս զյիշատակարանս Նումիրականացն, դտանէր 'ի նմա սովորութիւն հայրենի զոր ոչն գիտէր. և էր այսպիսի։ Զի՝ եթէ 'ի տան ուրեք կամ 'ի վրանի 'ի վարձու կալեալ, նստեալ հիւպատոսին արտաքոյ քաղաքին 'ի գիտողութիւն հաւահմայիցն, հարկ ինչ լիցէ նմա դառնալ 'ի քաղաք անդր՝ մինչև երևեալ նշան ասոյդ, պարտ է նմա յայնժամ լքանել զառաջին բնակութիւնն և ունել այլ, և անդ միւսանգամ սկիզբն առնել գիտողութեանցն։ Արդ այսմ՝ որպէս ինձ թուի՝ ոչ ուշ եղեալ Տիբերիոս, երկիցս զնոյն տեղին կալեալ՝ այնպէս ընտրեաց 'ի հիւպատոս զարան՝ զոր ասացաք. բայց ապա խելամուտ սխալանացն եղեալ՝ իրազգած զՍինկղիտոսն առնէր։ Այլ և ոչ Սինկղիտոսն ինքնին զանց արար, թէպէտ և գուշնաքեայ էր վրիպակն, այլ առեալ գրէր առ հիւպատոսան.նոցա թողեալ զկուսակալութիւնն և փութապէս դարձեալք 'ի Հռոմ, 'ի բաց դնէին զիշխանութիւնն։

Ա՛յլ այս բանք՝ զոր պատմեցաք՝ յետոյ ու-
բեմն պատահեցան։

Իսկ յայնժամ 'ի բաց հանան 'ի քահա-
նայութենէն քահանայք երկու յականա-
ւորաց անտի Կուռնելիոս Կեթեգոս, զի ոչ
մատոյց առաջի զսպանդս զոհին ըստ օրի-
նին. և Կուինտոս Սուլպիկիոս, զի 'ի զո-
հել իւրում՝ անկաւ 'ի գետին 'ի ծայրից
գլխոյն արտախուրակն՝ զոր տանին Փլամի-
նեանքն։ Նաև յորժամ Մինուկիոս 3 ի-
խանապետ կարգէր ի չխան այրուձիոյ ըզ-
Դայիոս Փլամինիոս, քանզի Ճիկ յայնժամ
լսելի եղև մկան, զոր Սօ-ֆ-ս անուանեն
Հռոմայեցիք, վասն այնորիկ 'ի բաց հա-
նեալ զնոսա յիշխանութենէն, զայլս 'ի
տեղին կացուցանէին։ Ա՛յլ նոքա 'ի դուզ-
նաքեաց յայսոսիկ փոյթ պնդութեան ու-
նելով, անապաշտութիւն և ոչ մի խառ-
նէին 'ի նոսա, անփոփոխ զհայրենի սովո-
րութիւնան պահելով և անվթար։

Ա՛րդ հանեալ յայնժամ զՓլամինիոս 'ի
հիւպատոսութենէն, ամբարձաւ 'ի նոյն
Մարկեղղոս 'ի Միջարքայից անտի. առեալ
զիշխանութիւնն՝ ապա և Գնէյոս Կուռնե-
լիոս կարգեցաւ նմա հոմիշխան։ Իբրև ան-
դուստ գաղատացիք պայմանս դաշին ա-
ռաջի առնէին, և Սինկղետոսն ինքնին յո-
ժարեցաւ 'ի հաշտութիւն, թեպետիր խու-
ժանին լինէր Մարկեղղոս 'ի մարտ պատե-
րազմի, սակայն և հաստատեցաւ հաշտու-
թիւնն։ Իսկ յետ այնորիկ մարտ պատե-
րազմին՝ որպէս թուի՝ բորբոքեցաւ 'ի գեա-

սատացւոց անտի, որք անցեալ զԱլպեաքն ամբոխիւ բիւրուց երկից, և 'ի մի ընդ Ինսոմբրացւոցն գումարեալ՝ որ բազմագոյն ևս էին քան զնոսա, անդէն խրախոյս բարձեալ չու արարին խաղացին 'ի վերայ Աքերրայ, քաղաք շինեալ 'ի վերայ գետոյն Պադոսի. և անդուստ ապա արքայն Բրիտոմարտոս բիւր մի զօրահատոյց արարեալ 'ի Գեսատատացւոց անտի, յաւարի առնոյր զգաւառն շուրջ զՊադոսիւն։

Լուր հասեալ առ Մարկեղղոս, անդէն յԱկերրա Թողոյր զիշխանակիցն հանդերձ հետևակազօրուն, ողջոյն և զսպառազէնս զօրականին և զերրորդ մասն զայրուձիոյն, և ինքն հանդերձ մնացեալովքն հեծելովք և վեց հարիւր թեթևազէն զօրականօք, խաղայր գնայր ջտայր դուլ ոչ զցայգ և ոչ զցերեկ. մինչև եկեալ հասանէր առ բիւր Գեսատատացիսն մերձ 'ի Կապիդիոն աւան Գաղատացւոց, զոր վայր մի յառաջ ունէին Հռոմայեցիք։ Անդանօր Մարկեղղոս ոչ ժամանեաց ոչ կերակուր տալ զօրականին և ոչ հանգիստ. քանզի արագ բարբարոսք իրազեկ եղեալ գալատեանն, և արհամարհեալ զսակաւաձեռն գնդաւն, և ոչ այրուձիոյն նորա երեսս ինչ արարեալ կեղտքն, իբրու որք յոյժ կորովքք 'ի հեծելամարտի. և 'ի նոյն՝ թուի թէ յոյժ նշանաւորք էն նոքա, և զի և բազմութիւն յոյժ էր նոցա յայնժամ քան զՄարկեղղոսին, մեծաւ բռնութեամբ 'ի վերայ յարձակեցան, իբրու անդէն գէշ արկանել զնա՝ սաստիկ և

ահագին սպառնալիք. և դիմագրաւ արքային նոցա նահատակէր առպաղէն յառաջոյ նոցա։ Իսկ Մարկեղղոս՝ զի մի սակաւաձեռն գնդաւն 'ի միջոցին փակեսցի, առեալ ձգէր տարածէր զթեւս այրուձիոյն՝ ցան և ցիր գործելով ընդ երիվարսն, զի և հաւասար գոգցես բանակին Թշնամեաց ձգէր երկայնէր զթեւն։

Այն ինչ հանդերձեցաւ կազմեցաւ սաստկութեամբ անկանել 'ի վերայ, դէպ լինէր երիվարին նորա 'ի ձայնէ խիզախելոյ Թշնամեացն խրտնուլ, և պակուցեալ դառնայր յետս և զնա բուռն ընդ կրունկն տանէր։ Յայնժամ Մարկեղղոս խիթացեալ՝ գուցէ 'ի անապաշտութենէ իմեմնէ խռով 'ի Հռովմայեցիսն հարցէ բանն, փութապէս ձգեալ զերասանակ սանձին և անդրէն 'ի ճակատ անդր շեշտ տարեալ զերիվարն, երկիրպագանէր արեգականն, իբրու եթէ ոչ ըստ դիպաց՝ այլ կամաք 'ի պատճառս երկրպագութեան գործել զճախրն. քանզի և սովորութիւն իսկ է Հռոմայեցւոց՝ ճախր առեալ երկրպագութիւն տալ դիցն։ Իբրև խառնուրդքն հանդերձեալ էին լինել, ուխտս դնէր նուիրել Փերեմրեանն Աբրամազդայ զդեղեցիկսն առաւել 'ի զինուց անտի Թշնամեացն։

Յայնմ պահու դէտսկն 'ի նա ամբարձեալ արքային Գաղատացւոց, և 'ի նշանաց անտի համարեցաւ՝ եթէ ինքնին զօրավարն Հռոմայեցւոց լցէ, մտրակ 'ի կուշտ երիվարին՝ հարուստ միջոցաւ յառաջ քան

զնիզակակիցն նահատակեալ արձանացաւ՝ և բարձր 'ի ձայն ասպարէզ նմա կարդայր, կայր և գոռայր և ճօճէր զնիզակն. զի և էր իսկ ինքն յաղթահասակ բարձր քան զամենայն գաղատացիսն. և յայլոց անտի ընդհատ իբրև փայլակն բոցակէզ քաջ իսկ շողէր շողշողէր նա 'ի զէն 'ի զարդ համակ յոսկի և յարծաթ, և 'ի նկարս խայտաճամուկ պէսպէս նարօտից։ Անդուստ Մարկեղլոս շուրջ զակն զփաղանգաւն յաւեալ, զզէնսն զայն արքային տեսանէր գեղեցիկ ևս քան զայլոցն ամենեցուն. զմտաւ ածեալ՝ եթէ ուխտք իւր ուրեմն առ աստուած 'ի զէնսն անդր կատարեսցին, խոյացաւ ընդդէմ արքային և շեշտ թափ ընդ զրահս նորա անցուցանէր զաշտէն. իսկ 'ի հարուածին և մլօն սաստիկ տուեալ յերիվարէն, զնա ողջ թաւալգլոր յերկիր կործանէր, և կրկնեալ և երեքկնեալ զհարուածն, անդէն դիտապաստ սատակէր։ 'Ի վայր ապա յերիվարէն վազեալ, և բուռն զզինուցն հարեալ արքային, ասէր հայեցեալ ընդ երկինս. "Ո՛վ, որ մեծաց նահատակութեանց 'ի զնին կաս զօրավարաց և ամենայն մարտից մրցանաց զօրագլխաց, Արամա՛զդ փերեստրիէ, վկայեմ քեզ. զի երրորդ ես Հռոմայեցւոց իշխան՝ զիշխանն, և զզօրավար՝ զարքայն զթշնամեացն պարտեալ և խմով իսկ ձեռամբ սպանեալ, քեզ զերեխայրիս և զդեղեցիկն աւարաց նուիրեալ սրբեցի։ Դու մեզ զնոյն օրինակ շնորհեսցես բաղդ և 'ի մնացուած մար-

տիս՝ յորում նահատակեալ կամք աւա-
գիկ "։

Բայց անդուստ և այրուձին միջամուխ
'ի կռիւն եղեալ ոչ ընդ այրուձիոյն միայն,
այլ և ընդ հեծեակազօրուն որ խառն 'ի
միասին մարտ եղեալ կռուէին, այնպէս
յաղթութիւն մեծ 'ի գլուխս տարան յայն-
ժամ մասնաւոր և նորանշան և անկարծ.
քանզի ասեն՝ ոչ յառաջ ժամանակաւ էր
բէք և ոչ զկնի դարձեալ՝ այնչափ այրուձի
'ի պարսուԹի մատնեաց զայնչափ ստուար
գունդ զայրուձիոյ և զհեծեակաց։ Ապա
շատ զոք 'ի նոցանէ տապաստ արկեալ
Մարկեղղոս և զառ և զապուր ժողովեալ
զզինուց և զարծաԹոյ, դառնայր առ իշ-
խանակիցն. որ 'ի մարտ պատերազմի տագ-
նապէր ընդդէմ կեղտացն շուրջ զքաղա-
քաւն՝ ընդարձակատարր և բազմաժողով
յոյժ քան զամենայն քաղաքս Դաղատացւոց.
և անուն կարդային քաղաքին Մե-
դիոլան. և կեղտք որ անդ՝ ունին զայն իւ-
լեանց Մայրաքաղաք. ուստի և 'ի վերայ
նորա մարտ եղեալ կռուէին նոքա մեծա-
պէս զօրութեամբ և քաջութեամբ. և քան
Թէ ինքեանք պաշարեալք՝ պատեալ պա-
շարէին նոքա զԿուռնելիոս։ Իբրև 'ի վայր
անդր գայր հասանէր Մարկեղղոս, և 'ի
լուր հարուածոյն և մահու արքային տեղի
տային Դեսսատացիքն, առնոյր յայնժամ
Մեդիոլան. ապա և զայլս 'ի քաղաքաց և
զամենայն գոյս ինքնին կեղտք 'ի ձեռս
տային Հռոմայեցւոց. և անդանօր հաշ-

տութիւն խաղաղութեան յայնժամ գե-
ղեցիկ շնորհեցաւ նոցա։

Յետ այսորիկ՝ յաղթանակի հանդէս
հրամայեաց 'ի Սինկղիտոսէն Մարկեղղոսի
միայն, մեծ և պանչելի էր հանդէսն 'ի
շուք փառացն և 'ի ճոխութիւն աւարացն
և 'ի տեսիլ հարստի և անարդիլ մարմնոց
գերեացն։ Իսկ որ քան զբնաւն՝ նոր և
չքնաղ տեսարան էր ինքնին Մարկեղղոս,
որ բարձեալ բերէր աստուծոյն զսպառա-
զինութիւն զբարբարոսին. քանզի ոստ մի
յաղթ և ուղղորդ կարեալ 'ի դիւրահերձ
կաղնւոյ, և 'ի ձև Ախոյենի ճշգրտեալ
զնա, առեալ 'ի նա կապէր հանդուցէր և
կախէր զաւարն զամենայն, և յարեալ յար-
մարէր զայն 'ի ճահ և գեղեցիկ կարգաւ։
Ապա իբրև հանդէսն յուղի անկաւ, էլ նա
'ի քառաձիսն, և ինքնին բարձեալ զբունն՝
'ի տիպ ախոյանաբերը, գեղեցիկ ևս տեսա-
նելով քան զամենայն փառս յաղթանա-
կին, այնպէս մեծաւ շքով անցանէր ընդ
քաղաքն։ Նորա զհետ գային զօրականք
վառեալք զարդարեալք 'ի զէնս գեղեցիկս,
նուագս առեալք մեղեդեաց, և դրուա-
տիս յաղթական աստուծոյն և զօրավա-
րին։ Զայս օրինակ ապա յառաջ խաղա-
ցեալ, և հասեալ 'ի տաճար անդր Փերե-
տրեանն Արամազդայ, անդ անկէր և նուի-
րեալ արբէր զախոյեանն. եղեալ նա եր-
րորդ և վերջին զօրավար մինչև առ մեզ՝
որ օրինակ զայս նահատակեալ իցէ։

Քանզի առաջին եկաց Հռոմուլոս, որ

բարձեալ Եբեր զաւարն զԱկրոմելի կե-
նինացւոյ. Երկրորդ՝ Կոսսոս Կուռնելիոս,
որ զՏողումնիոսին Տիւրրենացւոյ. և ա-
պա յետ սոցա Մարկեղղոս այս՝ զԲրիտո-
մարտոսի զարքային Գաղատացւոց. բայց
զկնի Մարկեղղոսին՝ ոչ ոք այլ։ Իսկ ո-
րոմ ածեալ բերան աւարքն, անուն կար-
գան՝Ֆէ՛ռէդռիոս՝Արամազդ,որպէս կէսք ա-
սեն՝ քանզի ածեալ բերէր յաղթանակն 'ի
Ֆէ՛ռէդռօն՝ 'ի Կառս, ըստ Հելլեն լեզուին՝
որ ցայնժամ տակաւին շատ ինչ խառնեալ
էր ընդ Լատինացն։ Իսկ որպէս այլք՝ այդ
անուն մականուն գոյ Արամազդայ՝ իբրու
ասել՝ Շանթահար. քանզի զհարուլն՝ Հռո-
մայեցիք Ֆէռիռ ասեն։ Իսկ կէսք դար-
ձեալ՝ զանուն զայն առնուն 'ի հարուածոց
անտի 'ի մարտս. քանզի և մինչև ցայսօր
ժամանակի 'ի հալածել զթշնամին՝ մի-
մեանց խրախոյս կարդան նոքա ասելով
ստէպ, Ֆէ՛ռի Ֆէ՛ռի, այս է՝ Հա՛ր և խո-
ցեա՛ց։ Իսկ զամենայն աւար՝ հասարակ կո-
չեն նոքա Սէօկլէռ. և մասնաւոր զայսոսիկ
կոչեն՝ Օէրմ։ Եւ թէպէտ և ասեն՝ Ղու-
մասայ Պոմպիլեայ 'ի յիշատակագիրս իւր
յիշատակ առնել առաջին և Երկրորդ և
Երրորդ Օվիմայիցն. զառաջնաւարն արբել
Արամազդայ Փերեարիոսի, և զերկրորդն
Արէսի, և զերրորդն Կուիրինեայ. և 'ի
վարձ առաջնոյն առնուլ ասասարիոն երեք-
հարիւր. և Երկրորդին՝ երկերիւր, և եր-
րորդին՝ հարիւր. այլ ըստ հասարակ համ-
բաւոյն՝ այն են արդոյ և պատուական Օ-

փիմայքն, զոր 'ի Ճակատամարտի առաջին աւարէ զօրավարն 'ի զօրավարէ անտի Թշնամեացն՝ ինքնին ապանեալ զնա։ ԱՅԼ յաղագս այսոցիկ այսչափ։

Բայց ընդ յաղթութիւն ընդ այս և ընդ գեղեցիկ եղս մարտին յոյժ խրախուցեալք ինդացին Հռոմայեցիք, զի և 'ի փրկանաց անտի գերեալն նոքա ըմպանակ ոսկի առեալ յղեցին 'ի Դեղփիս 'ի շնորհակալութեան ձօն Պիւթեայ. և լիաբաշխ հանին բաժին յաւարացն՝ նիզակակից քաղաքաց. և շատ ինչ ևս եռուն տանել նոքա Հերոմնի արքային Սիրակուսայ՝ որ բարեկամ և նիզակակից էր նոցա։

ԱՅԼ յետ այսորիկ հորդան տուեալ Աննիբաղ յԻտալիա, առաքեցին զՄարկեղղոս նաւաց հանդիսիւ 'ի Սիկիլիա։ Բայց յետ հարուածոյն Կաննեայ, յորում բիւրաւորք բազում 'ի Հռոմայեցւոց տապաստանկեալ, նուազունք ապրեցան փախստեայ անկեալք 'ի Կանուսիոն, և խիթային ևս այնուհետև դէպ ուղիղ 'ի Հռոմ խաղալ Աննիբաղայ՝ մեծապէս վատթարեալ նորա զզօրութիւն նոցա. անդուստ յայնժամ Մարկեղղոս՝ զառաջինն հազար և հինգ հարիւր այր առաքէր 'ի յերիտասարդաց 'ի պահպանութիւն քաղաքին, և ինքն 'ի հրամանէ Սինկղիտոսին եղեալ անցանէր 'ի Կանուսիոն. անդանօր առեալ նա ընդ իւր զամենայն փախստեայսն և արտաքոյ պատուարացն հանէր զնոսա. ոչ կամէր ամայի թողուլ զդաւառն։ ԱՅԼ սակայն արք

աւագք զորավարք և կորովք 'ի Հռոմայեցւոց տապաստ անկեալ էին 'ի մարտս. իսկ Փաբիոս Մաքսիմոս Թէպէտ և արդոյ և պատուական յայնժամ 'ի քաղաքին իբրև այր հաւատարիմ և հանճարեղ, սակայն և նորա մեծապէս զգուշաւորութիւն դիմադրաւել 'ի վտանգս՝ 'ի յուլացելոց իմն կարգի դնէր զայրն և անարի 'ի շահատակութիւնս մրցանաց։

Այս զմտաւ ածեալ, զի ըստ չափու քաջութեանն իւրոյ յաներկեւանութիւն անդր, այնչափ և վերջոտնեալ էր նա քան զՄարկեղղոս յարձակել 'ի Թշնամիսն և վանել, ուստի և 'ի միասին խառնեալ և ներդաշնակեալ զարիութիւն շահատակութեանն Մարկեղղոսի ընդ նախահայեաց զգուշաւորութեանն Փաբեայ, է ուրեք զի միանգամայն զնոսա կարգէին հիւպատոս, և է զի զմին առեալ արձակէին հիւպատոսութեամբ, և զմիւսն 'ի փոխանակ հիւպատոսի։ Եւ Պոսիդոնիոս պատմէ, եթէ Փաբեայ՝ անուն կարդային Վահան, և Մարկեղղոսի՝ Սուրբ. և ինքնին Աննիբաղ ասէր, 'ի Փաբեայ զանգիտել՝ իբրև 'ի դասալարակէ, և 'ի Մարկեղղոսէ՝ իբրև 'ի հակառակամարտէ. քանզի 'ի նմանէ խափանէր 'ի ելեսելոյ, և 'ի սմանէն՝ ելեսէր։

Բայց յետ յաղթութեանն Աննիբաղայ, իբրև ասա և անդ ցան և ցիր նորա զորականք յանդուգն գնային և արձակերասան, անդուստ Մարկեղղոս դիմէր անկանէր 'ի վերայ երամակարձակ վարատելոցն 'ի բա-

նակէն և ասպատակաւորաց 'ի դաշտին. հարկանէր սատակէր 'ի նոցանէ, և նուազ առնէր զզօրութիւնն Անդիբաղայ։ Ապա խաղայր գնայր յօգնութիւն Նէապօլսոյ և Նովզայի, և առաւել յանգուցանէր զնէապօլսեցիս, որք և անքակք իսկ էին նոքա յուխտէն Հռոմայեցւոց։ Բայց 'ի Նովզա գտանէր նա հերձեալ զծերակոյտն 'ի ժողովրդոց՝ որ թիկունս տային Անդիբաղայ, և ձեռնհաս չէր ծերակոյտն սանձակոծել զնոսա։ Քանզի և էր իսկ անդանօր այր ոմն 'ի զարմէ աւագաց քաղաքին և ուժով անհնարին, Բանդիոս անուն նորա. սա այս Բանդիոս մարտ եղեալ մեծապէս քաջութեամբ 'ի Կաննայ և զբաղումս տապաստ արկեալ 'ի Կարքեդոնացւոց, ապա 'ի խռան բազմակոյտ դիականցն գտանէին զնա, ողջ ծածկեալ զմարմինն նետիւք և վէքնոք. որպէս զի և զարմացեալ հիացեալ էր ինքնին Անդիբաղ ընդ այնչափ քաջութիւն առն. ուստի և առեալ ոչ միայն յազատութիւն արձակէր զնա առանց փրկանաց, այլ և ընծայաւոր եղեալ նմա՝ մտերմութեան դաշն կռէր ընդ նմա։ Իսկ Բանդիոս 'ի վոխարէն երախտեացն մեծապէս հակամիտեալ յԱնդիբաղ՝ ամենապէս ոյժ տուեալ յայնժամ խուժանին յապստամբութիւն դրդէր զնոսա։

Յայսր ամենայնի վերայ ոչինչ արժան համարեցաւ Մարկեղլոս 'ի մահ մատնել զայնպիսի ականաւոր այր, որ մարտս մեծամեծս դիմադրաւ ընդ Հռոմայեցւոց

մղեալ իսկ էր նա. այլ քանզի բնութեամբ մարդասէր էր նա և 'ի քաղաքավարութեան իւրում հնարիմաց էր յանգուցանել և ըզպատուասէրս, իբրև յաւուր միում ողջունեաց զնա Բանդիոս, հարցանէր Մարկեղղոս՝ ո՞ ոք իցէ այրն. նա 'ի վաղնջուց իսկ քաջ ճանաչէր զայրն, սակայն զի ժամ խնդրէր և պատճառս զբանիւք անկանել ընդ նմա. իբրև ասաց՝ եթէ ինքնին Լուկիոս Բանդիոսն եմ, խնդաց Մարկեղղոս, և զարմացմամբ ևս ասէր. "Թերևս դու ինքնին Բանդիոսն իցես, զորմէ բազում զրոյցք էն 'ի Հռոմ քաղաքի վասն նահատակութեանցն նորա 'ի Կաննեան մրցանսն. և զի միայնակ դու ոչ լքեր թողեր զՊաղոս զԵմիլիոսն՝ իշխան անձնապահպետն նմին արձանացեալ, և շատ ինչ որ ընդդէմ նորա 'ի նեռիցն առեր 'ի քոյին մարմին": Իբրև նա կրկնեաց՝ եթէ քաջ նոյն ինքն Բանդիոսն եմ, և բանայր ևս ցուցանէր նմա զսպիս վերացն, ասէ Մարկեղղոս. "Եւ առ ինչ ապա, հաւատոիս այնչափ զառ մեզ քոյին բարեկամութեան տարեալ քո, ոչ վաղվաղակի առաջի մեր ընծայեցար դու: Թերևս կարծեացուք մեք քեզ չարակնեայք ոմանք. և չգիտիցեմք մեք փոխարինել առաքինութեան բարեկամացն, որոց և թշնամիք ինքնին շուք ընծայեցին": Զայս ինչ մտերիմ սիրով խօսեալ և կալեալ զաջոյն, ընծայ նմին 'ի նեղքս մատուցանէր երիվար մի մարտիկ, և հինգ հարիւր ևս դրամակշիռ արծաթոյ: Եւ յայն-

մանէ ապա ցանդ առընթեր Մարկեղղոսի կայր Բանդիոս նիզակակից նմա, և մասն և գուշակ անաչառ լինէր հակառակ կողմանն։

Յորոց շատք ոմանք խորհուրդ հաստատեցին յայնժամ՝ 'ի գումարել Հռոմայեցւոց ընդդէմ Թշնամեացն՝ յաւարի առնուլ զաղխամաղս նոցա. վասն որոյ և Մարկեղղոս 'ի նեղքս 'ի քաղաքին զզօրականն դասաւորեալ, զաղխն առեալ կուտէր առ դուրսն, և պատուէր ևս տայր 'ի ձեռն քարոզին առ քաղաքացիսն Նովղայի՝ մի հուպ լինել ամենևին 'ի պատուարսն։ Ապա իբրև զէն և ոչ մի յակն ուրեք արկանէր անդուստ Աննիբաղ, խրախուսեաց մերձ խաղալ անկարդ հրոսակաւն. համարեցաւ՝ եթէ զաղմկաւ և զխռովութեամբ գայցէ քաղաքն։

Աւրադ արադ յայնժամ Մարկեղղոս բացեալ զդուռն՝ կազմութեամբ դիմէր արտաքս հանդերձ կորովի այրուձիովն, և յարձակեալ 'ի Թշնամիսն՝ մարտ եդեալ կռուէր։ Զկնի և հետևակազօրն հորդան տայր ընդդուռն երկրորդ. մինչդեռ անդ Աննիբաղ խուճապեցաւ և բաշխէր զատանէր զբանակն 'ի դիմի հարկանել կրկնակի հրոսակին, բանայր և դուռն երրորդ և մեծացուած զօրականին խուժեալ արտաքս, այնպէս յամենայն կողմանց 'ի վերայ անկանէին Թշնամեացն. նոքա շրջուցեալք ընդ անկարծ դէպսն, տագնապեցան զդէմ ունել կուռ զհետ միմեանց յարձակմանցն. և այնպէս այս առաջին նուագ տեղի ետուն Հռոմայեցւոց՝ զոլք Աննիբաղայ, և ահաբեկք և

խոցք և վերաւորք ընկրկեցան 'ի բանակեալ իւրեանց։ Եւ ասէն՝ արանց աւելի քան զչինգ հազարաց տապաստ անկեալ 'ի նոցանէ. իսկ 'ի Հռոմայեցւոց ոչինչ աւելի քան զչինգ հարիւր։ Այլ Լիվիոս ոչինչ այնպէս մեծ ասէ զհարուածն և զթիւ սպանելոցն. սակայն և վկայէ եթէ քաջ փառս մեծապէս այնուհետև ժառանգեաց Մարկեղղոս. և Հռոմայեցիք ինքնին յետ մարտին այնորիկ՝ 'ի սրտաբեկ աղէտիցն ողն առեալ քաջալերեցան, իբրու որ ոչ անվանելի ուրեմն խցէ և անասանելի թշնամին՝ ընդ որում մարտ եղեալ կռուին։

Զայնու ժամանակաւ 'ի մեռանել միոյ 'ի հիւպատոսացն, շուք տուեալ Մարկեղեայ ժողովուրդք՝ կոչեցին զբացականն փոխանորդել զմեռեալն, և յակամայ կամս աւագանւոյն յերկարեցին զընտրութիւնն, մինչև դարձաւ նա 'ի բանակէն. և առհասարակ ապա քուեայս արկեալ ընտրեցաւ 'ի հիւպատոս։ Այլ 'ի ժամուն որոտ հանեալ աստուծոյ՝ ձախողակի զբանն համարեցան քահանայք. այլ յահէ ժողովրդեանն ոչինչ յայտնի զդէմ կալան ընտրութեանն, բայց Մարկեղղոս անձամբ անձին հրաժեշտ տայր 'ի հիւպատոսութենէն։ Սակայն յինքն զզօրավարութիւնն առեալ և փոխանակ հիւպատոսի անուանեալ՝ անդրէն 'ի Նովզա դարձ առնէր 'ի բանակն, և անդ հարկանէր վանէր զկուսակիցսն Փունիկեցւոյն։ Զօրավիգն նոցա կացեալ Աննիբաղ՝ ձայն տայր Մարկեղղոսի 'ի

Ճակատամարտ պատերազմի. իբրև հրաժարեցաւ Մարկեղղոս, և Ընդիբաղ որեար բազում 'ի բանակէն արձակէր 'ի պէտս համբարոյ պաշարոց անեբկեան 'ի մարտէն, եւ ապա արտաքս Մարկեղղոս և անկանէր 'ի վերայ իւրովք հեռեակօքն՝ զորս և վառեալ իսկ էր և վարժեալ 'ի տեգս երկայնատեգս նաւամարտից՝ շէշտ 'ի նպատակն հարկանել խոցել 'ի բացուստ զԿարքեդոնացիսն, որք տեգընկէցքն չէին՝ այլ սուինս իմն վարէին նոքա կարճս հարկանել միայն 'ի մօտոյ. ուստի և որք միանգամ յայնժամ 'ի վեգ եկին ընդ Հռոմայեցիսն՝ Թիկնադարձոյցք եղեն և 'ի փախուստ խուճապեցան. և գիտապատ անկանէին յայնժամ ոգիք հինգ հազար. արկին տապատ և ըզչորս 'ի փղաց, և զերկուս ևս այլ 'ի նոցանէ կալան կենդանի։

Իսկ որ մեծապէս էր յայնժամ, զի և յաւուրն երրորդի յետ մարտին՝ այրուձի Լիբերաց և 'ի Նումադացւոց աւելի քան երեք հարիւր մարդիկ լքեալ զԿարքեդոնացիսն, ինքնակամ անցանէին առ Հռոմայեցիսն. և երբէք այնպիսի ինչ ցայնվայր չէր տեսեալ Ընդիբաղայ. որ Թէպէտ և յայլակրօնից ազգաց խմբեալ զիսուժադուժ բանակն, սակայն և հարուստ ժամանակ այնպէս ցանգ համաշունչ և միակրօն պահեաց զնոսա։ Եւ ապա նոքա ցանգ հաւատարիմ կացին մնացին առ Մարկեղղոսի, և որ զկնի զօրավարացն։

Բայց Մարկեղղոս կարգեալ 'ի հիւսպա-

տոս երրորդ անգամ, նաւեաց 'ի Սիկիլիա. քանզի 'ի յաջողութեանց մարտիցն Աննիբաղայ դարձեալ միւսանգամ քաջալերեցան Կարքեդոնացիք նուաճել զկղզին. քանզի և Սիրակուսացիք յայնժամ զաղմկաւ գային յետ մահուն Հերոնիմոսի բռնաւորին. ուստի և Հռոմայեցիք յառաջագոյն արձակեալ իսկ էին անդանօր զօր և զօրավար զԱպպիոս։ Արդ զօրուն այնմիկ առաջնորդ կացեալ Մարկեղղոս, եկին յայնժամ անկան յոտս նորա բազումք 'ի Հռոմայեցւոց անտի ազգ վշտատեսք. ոգք 'ի Կաննեան մարտին ընդ Աննիբաղայ՝ կէսք փախստեայք և կէսք դարձեալ 'ի գերութիւն մատնեալ բազումք յոյժ, զի և թըուէր ոչ ինչ բաւել յայնժամ Հռոմայեցւոց 'ի պահակերութիւն պատուարացն. 'ի վերայ այսր և մեծախորհուրդք Հռոմայեցիք և մեծանձինք՝ յանձին չկալան փրկանաւորել զգերիսն՝ զոր դիւրագնի տայր նոցա Աննիբաղ. և փոյթ չարարին՝ եթէ 'ի մահ վարեսցին կամ թէ արտաքոյ Իտալիոյ վաճառակուր լինիցին. իսկ զմաղապուր զերծեալսն 'ի նոցանէ արձակեցին 'ի Սիկիլիա՝ հրաման տուեալ երբէք մի դառնալ յԻտալիա՝ 'ի մղել մարտի պատերազմի ընդ Աննիբաղայ։

Արդ ոգքա վշտատեսք խուռն դիմեալք յոտս Մարկեղեայ և'ի գուշս անկեալ պաղատէին արտասուօք, զի շքով միւսանգամ կալցեն նոքա տեղի 'ի զինուորութեանն. խոստումն կուէին ցուցանել արդեամբք,

եթէ քան յանարի վատութենէ՝ առաւել 'ի ձախողակ բախտէն թիկնադարձոյցք ելեն նոքա յայնժամ։ Ախտակից Մարկեղլոս հիւքացելոցն եղեալ՝ գրէր առ Սինկղիտոսն, խնդրէր 'ի սոցանէն ընուլ միշտ զպաւկասութիւն զօրականին իւրոյ։ Իսկ Սինկղիտոսն իբրև շատ 'ի խորհուրդ եմուտ վասն խնդրոյն Մարկեղեայ, ետ վճիռ՝ եթէ հռոմայեցւոց չեն ինչ պէտք արանցդ այդոցիկ անարեաց՝ 'ի գործս քաղաքին. իսկ թէ Մարկեղեայ կամք իցեն 'ի գործ զնոսա վարել, ոչ տարցին դոքա 'ի զօրավարէն ոչ պսակ, ոչ մրցանակ ինչ դքաջութեանն ըստ պատերազմական օրինին։ Բայց Մարկեղլոս 'ի խոր խոցեալ ընդ վճիռն, 'ի դարձին յետ Սիկիլեան մարտին բողոք բառնայր ընդդէմ Սինկղիտոսին՝ զի չետ նմա զինդիրն 'ի շնորհս իւրոց մեծամեծ և բազմադէմ նահատակութեացն՝ դիւր առնել աղէտից այնչափ բազմաւոր քաղաքայնոցն հիւքացելոց։

Իսկ յայնժամ նա 'ի Սիկիլիա հարստահարութիւն կրեալ յԻպպոկրատեայ զօրավարէն Սիրակուսացւոց, որ կուսակից Կարքեդոնացւոց՝ թեկն ածէր գրաւել զկիղղին, և բազում հռոմայեցիս սպանեալ էր 'ի սահմանս Լէոնտացւոց, պաշարումն ածեալ բուռն զօրութեամբ առնոյր զԼէոնտացւոց քաղաքն. ինչաս և ոչ մի հասուցանէր Լէոնտացւոց, միայն 'ի հարուածս գանից և 'ի մահ մատնեաց զդասալիսն 'ի զօրականէն։ Այլ Իպպոկրատէս հուչակ

հարեալ 'ի Սիրակուսա՝ եթէ 'ի սուր սուսերի մաշէ Մարկեղլոս զԼէոնտացւոց ղերիտասարդս, ինքն աճապարեաց խաղաց 'ի վերայ Սիրակուսացւոցն՝ մինչ դեռ նոքա ահաբեկ էին 'ի համբաւոյն, և տիրեաց. և ապա Մարկեղլոս չու արար հանդերձ ամենայն բանակաւն 'ի Սիրակուսա, և վայր մի 'ի բացեայ բանակ հարեալ՝ հրեշտակս արձակէր 'ի նեղքս՝ տալ նոցա ծանօթս հաւաստի վասն իրացն Լէոնտացւոց: Սակայն օգտոեալ և ոչինչ, և հաւատս նմա չընծայեալ Սիրակուսացւոցն, (քանզի հզօրացեալ էր անդ Իպպոկրատէս), եդ 'ի մտի հրոսակ ընդ ծով և ընդ ցամաք ածել 'ի վերայ քաղաքին. հրաման տայր Ապպիոսի խաղալ յառաջ հանդերձ հետևակազօրուն, և ինքն առեալ ընդ իւր նաւս վաթսուն հնգաթիոց, յորս ամենայն ազդ գունակ գունակ զինուց և անբաւութիւն նետից. առեալ ընդ իւր և հաստահարուստ Բաբան կառուցեալ 'ի վերայ ութ նաւուց աղնաղնեալոց, այնպէս խաղայր մատչէր 'ի պատուար անդր. խրախուսեալ 'ի մթերս ամբաւ կահուց կարասեաց, 'ի մեծ կազմած պատրաստութեանն, և 'ի գեղեցիկ համբաւ անձինն:

Բայց մեծապէս պատրաստութեանն յայնժամ երեւ ինչ չառնէր ոչ Ադիմիդէս և ոչ Ադիմիդեայ մենքենաւոր հնարիմացութիւնքն. յորս և պարապէր այրն ոչ իբրև 'ի գործ արժանի գեղեցիկ ջանիցն, այլ բազմագոյն մասամբ իբրև 'ի զբօսանս

իմն Երկրաչափականին իւրոյ։ Քանզի և անդուստ 'ի վերուստ պատուասիրեալ Հերոմելի ոլքայի և հաւանեցուցեալ իսկ էր զնա, զի զարուեստն զիւր զայն և զհանճար յիմանալեաց անտի դիտողութեանցն՝ 'ի մարմնականն դարձուցեալ, պէտս ինչ ըզգալիս կենցաղոգուստս առեալ երևեցուցէ աշխարհի։ Քանզի առաջին գտակք գեղեցիկ այսմ և համբաւատենչ Մենքենականին կացին Եւդոքսոս և Արքիտաս՝ զարդ 'ի ներքս բերելով Երկրաչափականին, և գործարանաւոր և զգալի օրինակաք հաստատելով զառաջարկութիւնսն գժուարիմացսն 'ի ձեռն բանական և գործնական ապացուցուէն. ըստ որում և զոր յաղագս երկուց միջնոցն զառաջարկութիւնն խոր, և զտարր կարևոր վասն այլոց բազմաց երկոքին գոքա լուսաբանեցին 'ի ձեռն գործարանաւոր կազմածոց՝ գործիս իմն միջնագիծս յարմարելով 'ի կոր գծից և 'ի հատածոց։ Այլ յետ այնորիկ իբրև Պղատոն սրտմտեալ հակառակ ամբարձաւ նոցա՝ իբրու ոլք տապալեալ եղծանէին զլաւն Երկրաչափականին, որ յանմարմնականաց անտի և յիմանալեացն 'ի վայր խոնարհեալ յզգալիսս, 'ի գործ վարէր զմարմին բազմաքիրտն և վաստակաբեկ տաժանմամբ, յայնժամ ապա անաւագ գտեալ Մենքենականն և որոշեալ Երկրաչափականէն և ընդ զինուորական արուեստսն դասեալ՝ հարուստ մի ժամանակ այնպէս խոտեցան յիմաստասիրականէն։

Ա՛ՐԴ ԱՐՔԻՄԻԴԷՍ առեալ երբեմն գրեաց առ Հերոնէն արքայ իւր ազգակից և բարեկամ, եթէ՝ Զոսի մի ուժով մարթի նա շարժել զծանրութիւն որ և իցէ. և խընդայր Արքիմիդէս (որպէս ասեն) ընդ հաւատս մեծ բանին իւրոյ. և համարձակէր և ասել նմա, զի եթէ էր 'ի միջի այլ աշխարհ, ինքն անցեալ 'ի նմա, ձեռն 'ի գործ՝ դրդուեցուցանէր զայս աշխարհ։ Հիացեալ Հերոնէի՝ աղաչէր արդեամբք երևեցուցանել զբանն, և 'ի գուշնաքեայ ուժոյ շարժել մարմին մեծ։ Յայնժամ Արքիմիդէս գնեալ նաւ մի բեռնաբարձ յաղթ յարքունեաց անտի՝ զոր 'ի ցամաք քարշել էր հնար մեծաւ աշխատութեամբ և բազմաց ձեռօք, և լցեալ զայն մարդկամբք և սովորական ծանրութեամբն, ինքն նըստաւ 'ի բացէ. և շարժեալ ոչ բռնութեամբ՝ այլ մեղմով իւրովք խակ ձեռօք ծայր մի զբազմառասան մենքենայի, այնպէս ձգէր գնացուցանէր զնաւն հանդարտիկ և անընդոստ, իբրու եթէ ընդ ջուր անցեալ գնասցէ։ Ընդ յապուշ հարեալ արքային՝ մոսխորհ լինէր ընդ զօրութիւն արուեստին, և թախանձէր զԱրքիմիդէս մենքենայս կազմել նմա 'ի պէտս յարձակման մարտից և պաշտպանութեան յամենայն ազգ պաշարմանց։ Այլ մենքենայից այնոցիկ չէղեն պէտք Հերոնէի՝ որ անպատերազմ և 'ի մեծապէս յանդորրու անցոյց նա զկեանսն. իսկ յայնժամ պիտանացուք յոյժ եղեն Սիրակուսացւոցն այն կազմածք,

և 'ի միասին ընդ այնոսիկ ինքնին և Ճար-
սարապետն գլխովին ։

Աղդ իբրև հռոմայեցիք ընդ ծով ընդ
ցամաք այնպէս գոռոյթ եռուն 'ի վերայ
քաղաքին, անկան բեկան Սիրակուսացիք՝
և յափշտութիւն հարեալք վերջոտնեցան 'ի
գիմի հարկանել սաստիկ հրոսակին ։ Բայց
անդանօր իբրև զիւր մենքենայսն յառաջ
ձգեալ Արքիմիդէս կարդեաց դասեաց,
անդ էր ապա տեսանել զաղդ ազդ տարա-
փոց նետից տեղալ 'ի վերայ հետևակաց զօ-
րուն, և անարի վիմաց որձաքարաց հոսել
'ի վայր բռնութեամբ յահագին բոմբիւն,
որպէս զի և բաւական չէր մարդ բերել
սաստիկ թափոյն և կշռոյն, և անձին պաշտ-
պանել. այլ տապալ յերկիր առհասա-
րակ կործանէին հարեալքն, և Ճակատուն
կարգք խառնակեալ շփոթէին ։ Ապա և
'ի նաւաց վերայ յական թօթափել ձգէ-
ին երկայնէին 'ի պատուարացն գերանք
յաղթք. զկէս 'ի նաւացն ջրասոյզ առ-
նէին 'ի սաստիկ բռնութենէն ճնշելոյ զնո-
սա 'ի բարձանց անտի. և զկէս՝ յառաջա-
կողմանէ նաւացն առեալ 'ի վեր ամբար-
ձեալ երկաթի կարթիւք կամ ցուկք ո-
մանքք 'ի ձև կտուցաց խորդից, ծովասոյզ
առնէին 'ի խելաց կողմանէն ։ Դարձեալ և
հանդիպաձիգ մենքենայք կարթեալքք 'ի
մէջ անդր նաւացն և պտոյտակեալ բռնու-
թեամբ՝ եկեալ խորտակէին նաւքն ընդ
ժայռսն և ընդ պարեխսն՝ որ ընդ պատուա-
րօքն. 'ի միասին և նաւաստիքն սաստկապէս

հարեալք ջաղխէին։ Անդանօր ստէպ և 'ի նաւաց անտի նաւ մի յանկարծ, տեսիլ ա-հաւոր, 'ի վեր առեալ 'ի ծովէն ասա անդ երերեալ տատանէր ընդ օդն 'ի գիլ և 'ի գիլ, մինչև 'ի բաց զմարդիկն արկեալ բբռ-նութեամբ և պարսպաբարեալ 'ի մեծ հե-ռաստան, ինքն ապա թափուր գայր ընդ-հարկանէր խորտակեալ ընդ պատուարս պարապացն. կամ թէ 'ի բաց զերծեալ 'ի Ճիրանացն՝ այնպէս 'ի ծոփն ամայր։

Իսկ և ընդդէմ հաստահարուստ Բաբա-նէին, (զոր յառաջ խաղացուցանէր Մարկեղ-ղոս 'ի վերայ նաւացն աղխաղխելոց, և ա-նուն կարգային մենքենային՝ Սամպուքի, այն է՝ Սրինգ, զնմանութիւն բերեալ զձևոյ զերաժշտական գործուոյն) մինչդեռ 'ի բա-ցեայ ևս էր 'ի պատուարէն, անդուստ վէմ մի բաբանաքար տասն տաղանդաց կշռոյ արձակեցաւ ընդդէմ. ապա և միւս ևս, ա-պա և երրորդ վէմ. և հոսեալք 'ի վերայ բռնութեամբ 'ի մեծ բոմբիւն և 'ի սաստիկ դղորդիւն մենքենային՝ հարեալ փշրէին ըզ-խարխսին. և այնպէս սասանեալք քայ-քայեցան աղեալք նաւացն, որպէս զի 'ի խու-Ճապ տագնապի յայնժամ վարանեալ Մար-կեղղոս փութապէս տեղի տայր, և հետևա-կազօրուն ևս հրաման արձակէր չուել 'ի բաց 4։ Ապա խորհուրդ հաստատեցին Հռո-մայեցիք՝ գիշերի եթէ հնար լցէ՝ յառաջ խաղալ մտանել ընդ պատուարօքն. և քան-զի զօրութիւնքն Արքիմիդեայ ուժեալք բռնութեամբ 'ի հեռաստան անդր, ար-

դեօք անգործք նանրասցին հարուածքն՝ չունելով զձիգ անկրպեան։

Սակայն 'ի վաղնջուց իսկ՝ որպէս հաւանեալս եմ՝ կազմեալ էր Արքիմիդէս և մենքեենայս այլ համաչափս առ ամենայն բացական վայր. այլ և վիքինս կարճս, և գերանս ոչինչ յաղթս. և 'ի կուռ և 'ի խուռն ծերպս կարգեալ էր և Կարիճս իմն անուանեալ՝ մօտաձիգս, որ հարեալ խոցէին ըզմերձեցեալսն՝ աներևակք 'ի թշնամեաց։ Ապա իբրև մերձեցան նոքա 'ի պարիսպ անդր և քաջ յապահովի կարծեցին զանձինս, անդանօր 'ի ներքոյ և յայնժամ հարան նոքա 'ի տեղատարափ ամբաւից նետից և 'ի վիմաց հոսելոց 'ի վերայ գլխոց. իբրու եթէ առհասարակ 'ի կողմանց կողմանց պարապին մրրիկ նետահար յուզեալ շեշտ կշիռ 'ի վերայ նոցա. իբրև խուճապեցան ընդ կրունկն՝ դարձեալ մրրիկ այլ նետից և վիքնաց արձակեալ 'ի հեռաստանէ ունէր զնոսա. և բազումք յոյժ 'ի նոցանէն անդանօր տապաստ անկանէին, և շատք ևս 'ի նաւաց ջաղխեալ խորտակեցան. և Սիրակուսացւոցն զեան և ոչ մի կարացին հասուցանել նոքա. քանզի Արքիմիդէս շատ ինչ 'ի մենքեենայից անտի իւրոց կարգեալ կազմեալ էր 'ի վայրս ամրածածուկս պատուարին։ Եւ քանզի 'ի ծածուկ յաներևոյթս հարեալք՝ 'ի բիւրուց աղէտից պաշարեցան, թուէր իմն այնպէս հռոմայեցւոց՝ եթէ համբուն այնուհետև աստուածամարտք կռուեսցին։ Յայսր ամ-

նայնի վերայ ողջանդամ զերծեալ Մարկեղլոս, յերդ առեալ զՃարտարապետան իւր և զմենքենայագործն, ասէր այսպէս. "Իսկ ոչ ապա տեղի տացուք մեք մարտ դնել կռուել ընդ Բրիարեան Երկրաչափիդ ընդ այդմիկ, որ ծովամոյն զմեր նաւն սուզեալ այնպէս խաղ առնելով կորանոք ընկրկեաց զմեզ։ Եւ արդեօք դա 'ի վերոյ կայ և քան զառանցիկ Հարիւրաձեռինան, միահետ ընդդէմ մեր այնչափ տարափս արձակելով նեռից"։

Քանզի և արդարև 'ի ժամանակին Սիրակուսացիք առհասարակ՝ իբրև մարմին մի կարգեցան կացին՝ կազմածոցն Արքիմիդեայ, իսկ որ ողջոյն կենդանութիւն և շարժումն տայր ամենայնին, էր ինքն հոգի միակ. քանզի յայնժամ նոքա անդործ 'ի բաց զայլն ամենայն եդեալ զզէնսն, զնորայսն և եթ վարեցին 'ի գործ 'ի պաշտպանել և 'ի հարկանել։ 'Ի վերջէ ապա տեսեալ Մարկեղլոս ահաբեկ յոյժ զՀռոմայեցիսն, զի և 'ի տեսիլ միայն գուզնաքեայ առասանի կամ փոքրիկ շերտի կարկառելոյ ընդ պարիսպն՝ անդէն աղաղակ բարձեալ, եթէ մենքենայ ինչ արդեօք անդանօր շարժեսցէ Արքիմիդէս ընդդէմ նոցա, թիկնադարձոյցք 'ի փախուստ խուճապէին. խորհուրդ խորհեցաւ բնաւ իսկ այնուհետև 'ի բաց կալ 'ի մարտից և յարձակմանց, և մնայր ժամանակեայ պաշարմամբ ունել զքաղաքն։

Բայց Արքիմիդէս այնչափ ինն աղնուա-

կան 'ի միտս և 'ի հանճար, և բազմահա-
բուստ 'ի նկատողութիւնս, զի և համբաւ
փառաց գեղեցիկ ժառանգեաց նա՝ ոչ
զմարդկայնոյն, այլ զաստուածայնոյն գոգ-
ցես հանճարոյ. և ինչ մի արժան չհամա-
րեցաւ թողուլ արձանագրութեամբ վասն
ձեռակերտացն. առ ծառայականս ունե-
լով զՄենքենականին ճարտարմտութիւն
և զամենայն զարուեստ զպիտոյիցն, բնաւ
իսկ պատուասիրեալ պատկառ եկաց նա
այնոցիկ՝ որոց գեղն և շուք փառացն ան-
խառն է 'ի կարեաց, և որոց և ոչ մի ինչ
հանգիստակշիռ ոչ է նոցա. և յորս եալ և եալս
առնեն նիւթն և ապացուցութիւնն, մին
վասն մեծութեանն և գեղոյն, և միւսն՝
վասն հաւաստեացն և անխաբ խելամտու-
թեանն։ Քանզի և չիք գտանել յԵրկրա-
չափականին խնդիրս գժուարընկալս և խո-
րինս՝ պարզագոյն ևս և հեշտընկալ սկզ-
բամբք արձանագրեալ և լուսաբանեալ՝
իբրու զԱրքիմիդէսինն. զոր կէսք ընծայեն
գեղեցիկ բուսոյ բարուց հանճարոյն նորա,
և կէսք դարձեալ՝ առաւելահրաշ նորայն
ջանիցն՝ 'ի դէմս ընծայել զամենայնն իբ-
րու եթէ անվաստակ գործեալ և հեշտին։
Քանզի և հեռամուտ ոք ապացուցութեան
ինչ խնդրոյ, զառաջինն ոչինչ արդեօք ան-
ձամբ անձին գտանիցէ. այլ ապա միան-
գամ ուսեալ զնորայն, անդէն և զանձն
այնուհետև բաւական կարծեսցէ առ 'ի
նոյն. այսչափ նա ընդ արահետ և ընդ դիւր
ուղի առեալ ածէ յապացուցութիւնս իւր։

Ուստի և ոչինչ անհաւատալի էն, զոր զնմանէն պատմեն՝ եթէ ցանգ նա 'ի մեր-ելիմն և 'ի բնականունդ Սիրէնայէ խմեմնէ յանկուցեալ և զմայլեալ, և հաց ուտել անգամ մոռանայր, դարձեալ և խնամ ինչ չածէր մարմնոյն. ուստի և բռնի բա-զում անգամ ածեալ նա օծանել իւղով և լուանալ 'ի բաղանիս, ձևս իմն երկրաչա-փականս հովանագրեր 'ի վառարանն. և առեալ մատամբն գիծս ևս գծէր ընդ օ-ծութիւն մարմնոյն. այնչափ իմն ածեալ ձգէր նա 'ի մեծէ հեշտութենէն, և ար-դարև զՄուսայիցն մոլեալ զմոլութիւն: Եւ թէպէտ և բազմաց և գեղեցիկ հնարի-մացութեանց գտակ, ասեն՝ եթէ աղա-չեաց նա զբարեկամն և զաղգականն 'ի մահուն կանգնել 'ի վերայ շիրմին ոչինչ այլ՝ բայց գլան մի և 'ի վերայ գունտ, ար-ձանագրեալ զհամեմատութիւն առաւե-լութեանն ընդ հաստատուն պարունակողն և ընդ պարունակեալն: Արդ այսպիսի ոք գոլով Արքիմիդէս, իւրովանն անպարտելի պահեաց զանձն և զքաղաքն իւր:

Իսկ մինչդեռ 'ի պաշարման կայր Սիրա-կուսա, խաղաց գնաց Մարկեղղոս և բուռն զօրութեամբ առնոյր զՄեգարա քաղաք վաղնջուց զՍիկիլիացւոց. հասեալ կալաւ յԱկիլա և զբանակեալ զԻպպոկրատեայ, և տապաստ արկանէր զնորա աւելի քան զութ հարիւր զօրական՝ անկեալ 'ի վերայ մինչդեռ նոքա պատնշափակ լինէին. դի-մեաց ապա և յաւարի առնոյր սահմանս

բազում զՍիկիլիացւոց, և շատ ևս 'ի քա-
ղաքաց ապստամբեցոյց 'ի Կարքեդոնաց-
ւոց. և յաղթական լինէր յամենայն 'ի
մարտս պատերազմի։

Ապա յետ ժամանակաց իբրև ձերբա-
կալ 'ի գերութիւն մատնեաց նա զԴա-
միպպոս Սպարտացի նաւեալ 'ի Սիրակու-
սոյ, զհետ եղեն Սիրակուսացիք փրկանա-
տրեալ զայրն։ Մինչդեռ ստէպ ստէպ վասն
սոցին իրաց զբանիւք անկանէին նոքա ընդ
միմեանս, դէտ ակն կալեալ Մարկեղղոս
տեսանէր աշտարակ մի թողեալ յանհոգս,
ուր և ընդ հեշտին պատուարն գաղտաբար
մարթէր 'ի վեր տալ զօրականս։ Արդ իբ-
րև բազում անգամ մերձեալ յայն աշ-
տարակ խօսեալ վասն բանին այնորիկ ընդ
պաշարեալսն՝ մանր զննեաց նա զվայրն և
խելամուտ լինէր բարձրութեանն, հան-
դերձեաց կազմեաց սանդուղս յարմարա-
ւորս, և ժամ գտեալ՝ յորում Սիրակու-
սացիք ոչն կատարէին զԱրտեմեայ, և առ
հասարակ ընդ գիներբուս մոռեալ էին և
խրախացեալք, նա ոչ միայն զաշտարակն
հասեալ կալաւ գաղտ յամենեցուն, այլ և
մինչև ծագեալ աւուրն՝ զինու զարդու
ընոյր շուրջանակի և զպարիսպն, և խրա-
մատէր ևս դուռն մի զԵքսապիւղեայ։ Իբ-
րև իրազգած քաղաքացիքն լինէին՝ խռո-
վեալք անհնարին աղմկաւ, նա անդէն յա-
մենայն կողմանց միանգամայն հնչէցու-
ցեալ զփողն, այնպէս ահաբեկ արար՝ զի
և յայսկոյս յայնկոյս 'ի փախուստ խուճա-

պէտք նոքա, համարեցան եթէ և բնաւ զամենայն կողմն քաղաքին թշնամիք կա-
լեալ իցեն։ Սակայն յակատամանի կայր տակաւին կողմն քաղաքին՝ մեծ առաւել
և գեղեցիկ և քաջամուր, որում անուն կարգան Աւրոդինա. կայր նա անառիկ՝
քանզի և էր իսկ պարապատատ զատեալ 'ի քաղաքէն. զկէս նորա կոչեն՝ Նոր Քաղաք,
և զկէսն՝ Տիրէն։

Իբրև այս եղև, 'ի ծագել առաւօտուն մտանէր Մարկեղղոս ընդ Եքսապիւղն 'ի
ձայն ցնծութեան առհասարակ զօրապետացն։ Այլ ասեն՝ 'ի բարձրաւանդակէ
շուրջ զակն յածեալ Մարկեղղոսի ընդ մեծութիւն քաղաքին և ընդ գեղն՝ շատ
ինչ արտասուել ախտակցաբար վասն հանդերձելոցն, զի վայրիկ մի ևս կերպարանա-
փոխ հասանէր նմա լինել յաւարառու զօրականէն. քանզի և ոչ 'ի զօրապետացդ
յայնժամ ժողեցաւ ընդդէմ կալ զօրակա-
նին, որ ձայն բարձեալ խնդրէին աւարել
զքաղաքն. էին էին և ողբ հրոյ ևս ճարակ
տալ խնդրէին զնա և հիմն 'ի վերս տապա-
լել։ Բայց Մարկեղղոս ոչինչ յանձն ա-
ռեալ, յակամայս և բռնի թոյլ տայր նո-
ցա աւարել միայն զինչս և զգերիսն, պա-
տուէր սաստիկ 'ի վերայ ածեալ մի ինչ ա-
մենևին մերձենալ յազատ մարդիկ, մի սպա-
նանել, մի հարստահարել, և մի զոք գե-
րել 'ի Սիրակուսացւոց անտի։ Այլ թէ-
պէտ և այնպէս գեղեցիկ չափաւորութիւն
գնաց Մարկեղղոս, 'ի վերայ այսր և ա-

ղէտս անհնարին համարեցաւ զկիրս քա-
ղաքին. և յայնչափ մեծի խնդութեանն
քաջ 'ի դէմս բերէր նա զդորով սրտին և
զցաւն՝ զի այնպէս 'ի սուղ ժամու անշքա-
ցեալ խրթնացաւ Սիրակուսա 'ի գեղեցիկ
փառաց երանութեան իւրոյ: Քանզի ա-
սեն՝ եթէ փարթամութիւնք՝ զոր յայն-
ժամ աւարեցին, չէին պակաս քան զառ
և զապուր՝ զոր ապա ժողովեցին նոքա 'ի
Կարքեդոն. քանզի և յետ ո՛չ բազմաց ինչ
առին նոքա մատնութեամբ և զմնացորդս
քաղաքին և աւար հարին. և միայն գանձ
թագաւորին առաւ յարքունիս:

Իսկ որ առաւել քան զամենայն մե-
ծապէս ցաւեաց Մարկեղղեայ, աղէտք
կրեցն Արքիմիդեայ: Կայր յայնժամ Ար-
քիմիդէս ըստ դիպաց պարապեալ մտա-
խորհ 'ի ծրագրութեան. և այնչափ ուշով
'ի նոյն պատաղեալ խորհրդոյն և անքթիթ
ակամբն, զի և ո՛չ զվազվազել Հռոմայեց-
ւոցն լսէր նա, և ո՛չ դարձեալ՝ եթէ առաւ
քաղաքն՝ զդաց ինչ նա: Անդանօր յան-
կարծ 'ի զօրականէն ոմն 'ի վերայ հասեալ
նորա, հրամայէր յառնել գալ ընդ իւր
առ Մարկեղղոս. իբրև յանձն չառնոյր
յառնել մինչև կատարեալ զառաջարկու-
թիւնն և 'ի վերայ ածեալ զապացուցու-
թիւնն, 'ի սրտմտութիւն բրդեցաւ զօրա-
կանն, և ձգեալ զսուրն սպանանէր զնա:
Իսկ կէսք ասեն՝ եթէ զսուրն մերկացեալ
զենաւորին և դէպ ուղիղ դիմեալ 'ի վերայ
նորա, զայն տեսեալ Արքիմիդէս յողոք

անկեալ պաղատէր վայրիկ մի թոյլ առ-
նել նմա, մի անկատար և անիմանալի թո-
ղուլ զառաջարկեալ զինդիրն. իսկ զօրա-
կանն ոչինչ միտ եդեալ՝ հարեալ սպանա-
նէ զնա։ Այլ պատմեն զայս և երրորդ օ-
րինակ զայս, եթէ մինչդեռ առեալ տա-
նէր Աբքիմիդէս առ Մարկեղղոս գործիս
ինն երկրաչափականս՝ Ստուերափակս և
գունտս և անկիւնս, որովք զարևուն մե-
ծութիւն յարեալ յարմարէր նա մերոցս
աչաց, պատահեցան նմա 'ի զօրականէն և
կարծեալք եթէ յանօթ գործեացն բար-
ձեալ տանի ոսկի, հարեալ սպանանեն
զնա։ Այլ զինչ օրինակ և ի՞նչ արկած մա-
հուն Աբքամիդեայ, զայս միաբան առհա-
սարակ ասեն մատենագիրք, եթէ կարի
յոյժ 'ի խոր խոցեցաւ Մարկեղղոս, և
զսպանողն երբեք չկամեցաւ յակն արկա-
նել իբրև զմի 'ի նզովելոց. և զի՝ ինդիր
արարեալ ազգականացն Աբքիմիդեայ՝ ա-
ռատութեամբ մեծարեաց զնոսա։

Արդ թէպէտ և ցայնժամ իբրև քա-
ջակորով և քաջամարտիկ և գոռս այլք
յազգաց համարէին զՀռոմայեցիսն, այլ չև
նոքա հաւատոխս 'ի ներքս բերեալ զարդա-
րութեան, զմարդասիրութեան և զքաղա-
քականին առաքինութեան, թուի թէ
յայնժամ առաջին Մարկեղղոս եցոյց Հել-
լենացւոց զՀռոմայեցիս իբրու արդարս ա-
ռաւել։ Քանզի օրինակ զայն վարեցաւ նա
առ ապաւինեալսն իւր, և այնչափ քաղա-
քաց բարեգործեաց նա, և շատից ևս 'ի

սոսկականաց. զի եթէ երբէք Եսնացիք և Մեդարացիք և Սիրակուսացիք ինչ մի կրեցին 'ի դժնդակաց, թուի թէ քան չարչարողքն՝ չարակրեալքն մանաւանդ կացին պատճառք բանին։

'Ի բազմադէմ հաւատեաց մարդասիրութեան առն զմի զայն յուշ արասցուք 'ի ժամուս։ Է՛ 'ի Սիկիլիա քաղաք Ենգունիոն անուն ոչինչ մեծ, այլ վաղնջուց յոյժ, դարձեալ և փառաւոր 'ի պատճառս յայտնելոյ անդանօր դիցուհեացն՝ որոց անուն կարդան Մարդ. և զմեհեան նոցա ասեն շինեալ Կրետացւոց. և ցուցանեն անդանօր և տէգս և գլխանոցս պղնձի. և վերտառութիւնքն են կէս մի Մերիոնին, և կէս մի՝ Ուլիքսեայ, այս է՝ Ոդիսեայ, զոր կախեցին նոքա անդ 'ի ձօն դիցուհեացն։ Եւ զի այս քաղաք բնաւ իսկ հակամիտեալ էր 'ի Կարքեդոնացիս, Նիկիաս ոմն այր աւագ 'ի քաղաքացիսն գուն գործէր յորդորէր յանկչել 'ի Հռոմայեցիսն. խօսէր համարձակաձայն յատեանս ժողովոց և յայտ յանդիմանութեամբ նըշաւակէր զհակառակ կողմն։ Ապա զանգիտեալ նոքա 'ի զօրութենէ և 'ի փառաց աւագ առն, խորհուրդ խորհեցան ձերբակալ առնել զայրն և 'ի ձեռս փիւնիկեցւոցն տալ։

Իրազեկ Նիկիաս եղեալ, և ծածուկ հնարիմացութեամբ կամեցեալ ապրեցուցանել զանձն, սկսաւ 'ի հրապարակի բանդագուշել ընդդէմ Մարցն, և շատ

ևս խոտէր զհաւատացեալ կարծիս զյայտ-
նութեան զդիցուհեացն զայնոցիկ, իբրու
որ անհաւատ իցէ բանին և ունչս ևս ա-
բասցէ զնովաւ։ Իսկ անդուստ թշնամիքն
մեծապէս խնդային, զի ինքնին նա պատ-
ճառս շատ տայր նոցա կուռել 'ի նա զնիւ-
թեալ չարին։ Իբրև ձերբակալ հանդեր-
ձեալ էին առնել զայրն, յեկեղեցանալ
քաղաքացեացն մինչդեռ ինքնին Նիկիաս
հրապարակախօս լինէր վասն իրաց ինչ
խնդրոյ, անդէն յեղակարծումն առեալ
զմարմինն՝ ձգէր 'ի գետին. և այնպէս վայր
մի անշշունչ կացեալ եկեղեցին, (քանզի և
'ի միասին բնաւորեալ էն՝ ապշութիւն և
լռութիւն), նա ապա 'ի վեր զդլուխն ամ-
բարձեալ և շրջշրջեալ, մինչիւն արձակէր
ահաբեկ և բամբ, և տակաւ առեալ սաստ-
կացուցանէր զձայնն. իսկ իբրև ետես զի
ոչինչ տեսարանն զարհուրեալ էր և լուռ
կայր, 'ի բաց զվերարկուն ձգեալ և զպատ-
մուճանն պատառեալ՝ վազեաց 'ի վեր այն-
պէս կիսամերկ և ընթանայր 'ի դուրս տե-
սարանին, ձայն բարձեալ եթէ լլկեալ
այսահարի 'ի Մարց անտի։ Իսկ անդանօր
լիլեալ և ոչ ոք հուպ լինել 'ի նա կամ
զդէմ ունել առ անապաշտութեանն և
տեղն տուեալ առհասարակ, ինքն անցեալ
դիմէր 'ի դուրս քաղաքին. ոչ ձայն արձա-
կէաց այնուհետև և ոչ կիրս ինչ եբեր
յանձին զդիւաբախից և զմոլեգնելոց։

Իսկ կին նորա՝ որ իրագէտն էր հնարի-
մացութեան առնն և գործակից, առեալ

զմանկունն՝ նախ յողոք անկեալ պաղատէր առաջի մեհենի գիցուհեացն, ապա կեղծաւորեալ յառնել 'ի խնդիր թափառական ամուսնոյն, ամենայն աներկնանութեամբ ելանէր արտաքս 'ի քաղաքէն, և արգելոյր զնա և ոչ ոք. և ապա օրինակ զայս անկեալ ապրեցան նոքա 'ի Սիրակուսա առ Մարկեղղոս։ Ա՛յլ յորժամ Մարկեղղոս խաղացեալ անդր՝ 'ի պատուհաս բազում հարստահարութեանց և անօրէնութեանց Ենգիւռնացւոց՝ կապեաց զամենեսեան 'ի խոշտանգել, անդանօր Նիկիաս յարտասուս հարեալ եկաց առաջի Մարկեղղոսի և զաջոյն և զծնգացն բուռն հարեալ՝ աղերսէր վասն քաղաքացեացն՝ սկսեալ 'ի թշնամեացն։ 'Ի գութ շարժեցաւ Մարկեղղոս և յաղաղութիւն արձակէր զամենեսեան, և զեան և ոչ մի հասուցանէր քաղաքին. առ այս՝ տայր և Նիկիասայ դաստակերտ մեծ և պարգևս բազումս։ Զայսոսիկ մեզ պատմագրէ Պոսիդոնիոս իմաստասէր։

Բայց յետ այնորիկ 'ի Հռոմայեցւոց հրաւէր առ Մարկեղղոս եկեալ 'ի մարտ պատերազմի քնաշխարհիկ և ընտանի, առեալ ածէր նա 'ի Սիրակուսացւոց անտի բազում և գեղեցիկ յոյժ ձօնս և կահս 'ի տեսիլ շքեղ իւրում յաղթանակին և 'ի զարդ իւրոց հայրենեացն. այն՝ որ ցայն վայր չունէր և չէր երբէք տեսեալ զարդս այնպէս գեղանիս և քերուբս, և չգոյր ինչ նորա 'ի չքնաղից անտի և 'ի բազմաքանդակն

նազելեաց. այլ խուժդուժ զինուք լի էր և արիւնաշաղախ աւարօք, և յաղթանակացն շուրջ պսակեալ յիշատակարանօք և սիրոյենիւք. ոչ զուարթ ինչ և ոչ անահ էր տեսիլն՝ վատաց և գիրդ հանդիսատեսացն. այլ ըստ որում Եպամինոնդաս կոչեաց զԲիովտեան դաշտն՝ Որդոսոպայ Արէոյ, և Քսենոփոն զԵփեսացւոց քաղաքն Հանուռ պոպէրաղմի, սակէս և ինձ թուի՝ 'ի ժամանակին յայնմիկ զՀռոմ 'ի դէպ կոչել ընդ Պինդարոսի. Գոռ պոպէրաղմողին ՌՀէան Արէոյ:

Ասի և մեծապէս 'ի գովութիւն առին ժողովուրդք զՄարկեղղոս, իբրու որ այնպէս զարդարեաց զքաղաքն Նոցա 'ի բերկրականաց անտի և 'ի Հելլենական գերբուն արուեստիցն և 'ի գունակ գունակ նազելեացն: Այլ սակայն և որ արք հինաւուրց 'ի նոսա՝ առաւել ևս գովէին զՓաբիոս Մաքսիմոս. քանզի առեալ զքաղաքն Տարանտացւոց՝ ինչ մի յայնպիսեաց անտի ոչ դրդուեցոյց 'ի նմա և եբեր. և 'ի բաց զդրամն հանեալ և զինչն՝ զդրօշեալսն եթող անդէն, ասելով զհամբաւեալն բան, եթէ Թողցո՛ Տարանտացոցն զբրմպէալ ապուսածս դոցա: Առ այս՝ և մեղ ևս գնէին Մարկեղղեայ, առաջին՝ զի ատելի էգ նա զՀռոմ. զի 'ի հանդէս յաղթանակին ոչ մարդիկ միայն ածեալք բերէին, այլ և աստուածքն գլխովին 'ի գերութիւն վարեալք. և երկրորդ անգամ՝ զի զժողովուրդն սովորեալ 'ի մարտ կամ յերկրագործութիւն,

և որ անփորձն էր գրգանաց և վատուքթ, և որ արդարև էր Իբրև զԵւրիսկիդեանն Հերակլէս "Խոշոր անպաճոյճ, այլ 'ի մեծամեծս՝ քաջ և արի", զնա յայնժամ Մարկեղղոս առեալ ձգէր 'ի դատարկութիւն և 'ի շատխօսութիւն. զի և զմեծ ժամն աւուրն ծախէին նոքա 'ի շաղակրատել վասն արուեստիցն և արուեստաւորացն։ Այլ սակայն և քաջ իսկ պանծալի եկաց նա առ Հելլենացիս, Իբրու որ ուստից Հռոմայեցւոց շուք տալ և հիանալ ընդ գեղեցիկ և պանչելի ձեռակերտան Եղեգայ, զոր ոչն գիտէին։

Այլ Իբրև ընդդէմ Մարկեղղոսի յարեան յայնժամ թշնամիք արգելուլ զհանդէս յաղթանակին, և քանզի և ինչ ինչ յերացն Սիկիլեոյ չև էր յամբոկ գործոյն ժամանեալ, և յերրորդ յաղթանակէն մախանք նախանձուն յուզէին, ապա և ինքն գլխովին զինչեալ տեղն տայր. շատ համարեցաւ անձին զկատարեալն յաղթանակ և զմեծն ածել յԱլեքսանդրեան լերին, իսկ ըզփոքրն ածել 'ի Հռոմ, զոր Հելլենք Էվան կոչեն, և Հռոմայեցիք Օվան։ Որ միանգամ օրինակ զայս յաղթանակէ, 'ի քառաձիս ջերեալակէ, և պսակ 'ի գագինեայ չտանի, և ջունի փողարս շուրջանակի. այլ գնայ հետի սանդալ յոտս, և արնգահալքք շուրջ են զնովաւ, և պսակ տանի 'ի մրտենեայ. որպէս զի և յոյժ անպատերազմ և հեզ է հանդէսն, և բերկրալի՝ քան եթէ ահարկու։ Բայց 'ի բանէս մեծապէս խելամուտ

լինիմ ես, եթէ 'ի նախնուն՝ յօրինակէ գործոյն և ոչ 'ի մեծութենէ հանդիսին որոշէին այս յաղթանակք։ Քանզի որք միանգամ յետ մարտին և կոտորածին յաղթականք եղանէին, ածէին զԱրեսեանն զայն յաղթանակ և զահաբեկն՝ պատկեալ միանգամայն և զզէնս և զարս 'ի թաւ դաշնուոյ. զոր և 'ի սրբեալ անդ զզօրն՝ այնպէս սովորեալ էին։ Իսկ որք միանգամ 'ի զօրավարաց ոչ մարտիւ, այլ դաշնակուս բանիւ և խելամտութեամբ կամ թէ ճարտարապետութեամբ՝ այնպէս գեղեցիկ 'ի գլուխ տանէին զկրան, այնպիսեացն շնորհէին օրէնք զանպատերազմն զայն յաղթանակ և զոճնախմբականն։ Քանզի սրինդդ խաղաղութեան հրաւիրակ է, և մրտենի՝ տունկ է Աստղկանն, այն՝ որ առաւել քան զամենայն դիան ատեայ զբռնութիւն և զպատերազմ։

Ա՛յլ Օ՛ն, ոչ 'ի Հելլենականէն Էվ՛ոս, անուանի յաղթանակդ այդ՝ որպէս կարծեն բազումք, իբրև զի նոյն օրինակ աղաղակք և դայլայլիկք լինին և 'ի Դիոնիսեանն. այլ Հելլենացիք ծէքեցին զանուանդ 'ի բնակաւորն իւրեանց հնչումն. կարծեալք եթէ այդ հանդէս 'ի ճահ դայցէ միանգամայն և Դիոնիսեայ ոճնախմբութեանն՝ զոր մէք Էվ՛ոս և Թրէ՛ոս կարդամք։ Ապա չէ այդ ճշմարտութիւնն. այլ քանզի սովորութեամբ հայրենի յազգն զօրավարքն նոցա էին .Ի 'ի մեծի յաղթանակին, և ոչխար մի՝ 'ի փոքուն. և զի Օ՛ն

կոչեն նոքա զնաչն, վասն որոյ և յաղթա-
նակդ կոչեցաւ Օձ։։ Այլ արժան է և
Լակոնեան օրինադրին միտ դնել, որ զոհ
առ այս սահմանեաց ներհակաբար Հռով-
մայեցւոցն. քանզի 'ի Սպարտիա որ խո-
րագիտութեամբ կամ համոզակեր բանիւք
զգործն 'ի գլուխ տարեալ ելցէ զօրավարն,
յաղէ եզն մի. իսկ որ մարտիւ պատերազ-
մի 'ի նոյն նահատակեալ ելցէ, պքաղաղ մի։
Քանզի թէպէտ և են գոռ պատերազմողք
Սպարտացիք, համայն և այնպէս՝ մեծ ևս
նահատակութիւն մարդոյ Ճահաւորակի
զիսելամտութեանն համարէին գործ և ըզ-
հանձարոյն, քան զքաջութեանն և զբռ-
նութեանն։ Եւ այսպէս 'ի դէպ ելցէ ար-
դեաք ումեք խորհել՝ եթէ ո՞ր այն յերկուց
անսի առաւել արդոյ և պատուական ելցէ։

Արդ մինչդեռ հիւպատոս կայր Մար-
կեղղոս ջորրորդ անգամ, անդուստ թշնա-
միք նորա թեւադիր լինէին Սիրակուսացւոցն
գալ 'ի Հռոմ և ամբաստան զնմանէն
լինել, բողոք բարձեալ առ Սինկղիտոսին՝
եթէ հակառակ ընդ Հռոմայեցւոց դաշին
նոցա՝ չարաչար վարեցաւ ընդ նոսա Մար-
կեղղոս։ Իսկ Մարկեղղոս ըստ դիպաց զոհ
կատարէր 'ի Կապետոլիոն 'ի ժամուն,
յորում յատեան ծերակուտին յառաջ մա-
տեան Սիրակուսացիք. յողոք անկեալք
խնդրէին ունկնդրութիւն և արդարութի-
'ի բաց մերժեաց զնոսա հիւպատոսն իշխա-
նակից Մարկեղղեայ, 'ի սրտմտութիւն
բրդեալ՝ զի բողոք կարդային մինչդեռ մերձ

ոչ կայր Մարկեղղոս։ Իսկ Մարկեղղոս
լուր առեալ, փութանակի երթեալ անդր՝
և առաջին բազմեալ յաթոռակն՝ պարա-
պէր յիւր պաշտման հիւպատոսութեն.
իբրև վճարեաց, ելեալ յաթոռակէն իբ-
րու զմի ոք 'ի սոսկականաց եկեալ եկաց 'ի
վայրն՝ ուրանօր սովորութիւն էր խօսել
դատախազեալ մարդկանն, և թոյլ տայր
յայնժամ Սիրակուսացւոցն առաջի առ-
նել զամբաստանութիւնսն։

Յայնժամ նոքա մեծապէս յոգիս ա-
պաստան 'ի տեսիլ աւադամեծար փառաց
նորա և աներկեան վստահութեանն, և զի՝
և շուք զինուն զարդուն նորա յոյժ ահին-
կէց տեսաւ նոցա 'ի ծիրանի պատմուճա-
նէն նորա, որպէս զի և ոչինչ հանդարտէին
կալ առաջի։ Յայսր ամենայնի վերայ քա-
ջալեր առեալ 'ի հակառակորդացն Մար-
կեղղեայ, սկիզբն արարին ամբաստանու-
թեանն, իրաւաբանեցին և 'ի նոյն խառ-
նեցին դանգատանս և հեծութիւնս. և
գլուխ բանին, զի նիզակակիցք գոլով նո-
քա Հռոմայեցւոց և բարեկամք, ետ նոցա
Մարկեղղոս կրեալ աղէտս՝ յորոց այլք 'ի
զօրավարաց մարդասիրապէս ազատ առնեն
և զբազումն 'ի թշնամեաց իւրեանց։ Իսկ
Մարկեղղոս տայր պատասխանի ամբաս-
տանութեանն, եթէ փոխանակ բազում
անիրաւութեանց նոցա ընդդէմ Հռո-
մայեցւոց, ոչինչ այլ 'ի չարեաց մասին
կրեցին նոքա՝ բայց զանհրաժեշտան նկուն
եղելոց մարտիւ պատերազմի. և նոքա օրի-

նակ զայս ըմբռնեցան անձամբ անձին, զի ոչինչ կամեցան ունկն մատուցանել հրաւիրանաց բանից նորա. զի ոչ եթէ բռնի քարշեցան 'ի բռնաւորացն մարտ դնել կռուել, այլ անձամբ զանձինս ընդ լծով արկին բռնաւորաց՝ 'ի կռուել։

Իբրև այնպէս ամենայն բանք եղան առաջի, ելին արտաքս յատենէն Սիրակուսացիք ըստ սովորութեան կարգին. ել և Մարկեղլոս՝ իշխանակցին յանձն զՍինկղիտոն արարեալ, և եկեալ եկաց առ դուրսն խորհրդարանին. ոչինչ ամենևին 'ի բնաւորեալ պերճութենէն փոխեալ՝ ոչ առ ահի վճռոյն և ոչ դարձեալ առ սրտմտութեանն ընդդէմ Սիրակուսացւոցն, այլ համբուն հեզ և պարկեշտ այնպէս կայր ինայր անդ ելից դատաստանին։ Իբրև վճար լինէր խորհրդոյն, յաղթական ելանէր Մարկեղլոս։ Անդ ապա յոտս նորա արասուալից Սիրակուսացիքն անկեալ պաղատէին 'ի բաց դնել զամենայն սրտմտութիւն բարկութեանն ընդդէմ նոցա, և կարեկից լինել ճնացորդաց քաղաքին իւրեանց, որ անմեռացք նորայն բարութեանն ցանգ շնորհակալութք ելեցին նմա։ 'Ի գութ շարժեցաւ Մարկեղլոս, և հաշտ և համբոյր ընծայեցաւ նոցա, և երբէք ոչինչ դադարեցաւ բարեգործել ճնացորդացն Սիրակուսացւոց. զնոյն և Սինկղիտոն անդրդժելի պահեաց նոցա զաղատութիւնն՝ զոր Մարկեղլեայ շնորհեալ իսկ էր նոցա. առ այս՝ և զկարգ սովորութեան օրինաց

նոցա, և զժառանգութիւն գոյիցն՝ զոր յայնժամ ունէին նոքա։ Վասն այսոցիկ ամենայնի՝ Սիրակուսացիք բաց 'ի մեծաց փառացն զոր ձօնեցին նմա, օրէնս ևս հաստատեալ կարդեցին, զի 'ի գալ հասանել Մարկեղղեայ 'ի Սիկիլիա կամ թէ ումեք այլ 'ի սերնդոց նորա, հանդիսացեալ Սիրակուսացիք պսակօք պսակեսցին և զոհ զոհեսցեն դմա։

Իսկ յետ այնորիկ խաղաց գնաց Մարկեղղոս ընդդէմ Աննիբաղայ. և քանզի այլք 'ի հիւպատոսաց և 'ի զօրավարաց յետ Կաննեան հարուածոյն միայն հնարիմացութեամբք խոյս տուեալ 'ի թշնամւոյն՝ ոչինչ ճակատէին ընդդէմ, սա այս Մարկեղղոս ներհակաբար կալեալ խորհուրդ՝ եթէ այնպէս ժամավաճառն լինելով, քան թէ Աննիբաղ վատեալ յուժոյն՝ Իտալիա հիմն 'ի վեր տապալեսցի 'ի նմանէ, եդ 'ի մտի եթէ Փաբիոս այնպէս ցանգ անճնապահ լինելով ոչինչ յաջողեսցի աւաքել զիսօթութիւն հայրենեացն, այն՝ որ 'ի կորովութենէն վատեալ շինցի 'ի միասին ընդ մարտի պատերազմին. զորօրինակ եթէ 'ի բժշկաց ոմանք անարիք և վատասիրտք՝ դանդաղագոյնս բերիցին 'ի բուժումն ախտին՝ յորժամ ախտացեալքն ինքնին այնուհետև յուժոյն վատեալք լցեն։

Ապա անդէն զառաջինն հասեալ կալաւ նա քաղաքս մեծամեծս զՍամնիսացւոց զվոտարանչեալսն. անդանօր գտանէր նա ամբար բազում զցորենոյ և զարծաթոյ, և

գերի վարէր երիս հազար զօրականս զԱն-
նիբաղայ 'ի պահանորդաց անտի։ Իսկ Ան-
նիբաղ տասպատս արկեալ յԱպուլիա ըզ-
Փուլբիոս Գնէյոս զփոխանակ հիւպատոսին
հանդերձ մետասան հազարապետօք, և 'ի
սուր սուսերի մաշեալ զբազումս 'ի զօ-
րուէն, անդէն Մարկեղղոս նամականի
տայր 'ի Հռոմ՝ քաջալերէր կարդայր մի վճա-
տիլ, զի ինքնին չու արարեալ խաղայ վա-
նել հանել զԱննիբաղ 'ի գաւառաց ան-
տի։ Այլ Լիվիոս պատմէ, եթէ 'ի նամա-
կանուոյ անտի Մարկեղղեայ ոչինչ հան-
դարտեցին Հռոմայեցիք 'ի Թաղծութէն,
և ահ երկիւղին աճեաց 'ի նոսա. և զաղէտս
վտանգին մեծ ևս համարեցան քան զան-
ցեալսն, որչափ քաջ ևս քան զՓուլբիոս էր
զօրավար Մարկեղղոս։

Բայց Մարկեղղոս զհետ մտեալ վանել
զԱննիբաղ՝ ըստ իւրում բանին, եկն եմուտ
'ի Լեւկանիա. անդ գտանէր զնա յակաս-
տանի առ Նոմիստրոնն քաղաքաւ 'ի վերայ
անխաբ բարձանց, և ինքն զբանակ իւր հար-
կանէր 'ի դիւրի։ Ապա յաւուրն երրորդի
առաջին նա կարգ տուեալ պատերազմին,
և 'ի վայր Աննիբաղ 'ի բարձանցն իջեալ,
անդանօր ահագին գոռ մարտին խառնե-
ցաւ և սաստիկ յոյժ, այլ վճարեցաւ և
ոչինչ. քանզի յերրորդ ժամէ աւուրն խառ-
նեցան և հազիւ ուրեմն 'ի մութն գիշերոյն
զատան 'ի միմեանց։ Իսկ 'ի ծագել առաւօ-
տուն միւսանգամ Մարկեղղոս 'ի Թանձ-
րութեան գիսկանցն դասաւորեալ զզօրն,

ձայն տայր Աննիբաղայ 'ի կռիւ մաքուի սահմանել զյաղթութիւն. իբրև Աննիբաղ տեղի տայր, Մարկեղղոս կապուտ կողոպուտ զդիակունս թշնամեաց արարեալ և զիւրսն թաղեալ, զհետ պնդէր նորա. և ցանգ անձնապահ 'ի բազմադէմ հաղթիցն նորա, և յոյժ յաղթական յամենայն նախամարտութիւնսն, մեծապէս փառաք յայնժամ պքանչացաւ Մարկեղղոս։ Ուստի և յաւուրս ընտրութեան նորոց հիւպատոսացն հաճոյ թուեցաւ Սինկղիտոսին կոչել 'ի Սիկիլիոյ զիշխանակիցն նորա, քան եթէ զՄարկեղղոս դրդուեցուցանել՝ որ 'ի նեղն լծեաց զԱննիբաղ։

Իբրև եկն նա 'ի Սիկիլիոյ, հրաման տայր նմա անուանել յիշխանապետ՝ զՊուբլիոս Փաբիոս։ Քանզի չէ ժողովրդեան ընտրել զնա և ոչ Սինկղիտոսին. այլ 'ի հիւպատոսացն անտի ոմն կամ 'ի զօրավարացն 'ի մէջ եկեալ ասէ և անուանէ զնա ըստ կամի. և անուանեալն վասն այնորիկ կոչի Տիւդատօ. քանզի զասելն՝ Տիւ՝ Դ՝ կոչեն Հռոմայեցիք։ Իսկ կէսք ասեն՝ եթէ կոչի այնպէս, զի այլոցն վճռոյ կամ ընտրութեն նա 'ի նեղքոյ չէ, այլ ինքն անձամբ անձին ըստ կամի տանի քերէ զամենայնն. քանզի զկարգ և զհրաման զաւագանւոյն Հելլենք կոչեն՝ Տիւատղմատա, և Հռովմայեցիք՝ Դիւդատա։

Այլ իշխանակիցն Մարկեղղեայ իբրև զայլ ոք խնդրէր անուանել, և յանձն չառեալ բռնութիւն կրել 'ի բանին, ելեալ

դիշերի եմուտ 'ի նաւ և դարձաւ անդրէն 'ի Սիկիլիա։ Իսկ ժողովուրդք անուանեալ Իշխանապետ զԿուինտոս Փաբիոս, դրէր և Ծերակոյսն առ Մարկեղլոս՝ զնա ասել. հնազանդեալ միաբանեցաւ նա 'ի կամս ժողովրդեանն. և հաստատեցաւ ինքն 'ի փոխանակ հիւպատոսի վասն ամին երկրորդի։ Ապա խորհուրդ կալեալ ընդ Փաբիոսի Մաքսիմոսի, խաղալ նմա 'ի վերայ Տարանտացւոց, և ինքն 'ի դիմի հարեալ ընկալեալ Աննիբաղայ մի տալ նոցա ձեռն օգնականութեան, չու արար դիմեաց 'ի վերայ նորա մօտ առ Կանիւսիոն. և ցանգ ամենայն ուրեք ընդ առաջ ելանէր նմա, մինչդեռ նա ստէպ ստէպ փոխէր զբանակէտսն, և խոյս տայր 'ի կռուոյն։ Հուսկ ապա 'ի վերայ յարձակեալ նորա՝ ուր ամրացեալ կայր, և նահատակութիւնք դրդէր զնա 'ի կռիւ մարտի. այլ 'ի սաստիկ խառնել պատերազմին, 'ի վերայ հասեալ գիշերոյն՝ լուծանէր զկռիւն։

'Ի ծագել առաւօտուն կայր անդրէն Մարկեղլոս վառեալ 'ի զէն՝ կազմ ճակատեալ զլոյսն. 'ի խոր խոցեցաւ Աննիբաղ, և 'ի մի վայր զԿարքեդոնացիսն խրմբեալ՝ աղաչէր զմարտն զայն մղել 'ի վերայ առաջնոց մարտիցն առհասարակ. "Քանզի քաջ իսկ աւադիկ տեսանէք դուք, ասէր, զի յետ այնչափ յաղթութեանցն ոչինչ աւասիկ մեք ոգի առաք՝ թէպէտ և յաղթեցաք. եթէ ոչ և զայրդ զայդ մեք 'ի միջոյ բարձցուք"։ Իբրև մարտն խառնե-

ցաւ, յելից անտի իրացն թուի թէ վրիպակ գործեաց յայնժամ Մարկեղղոս՝ հնարիմացութիւն տարաժամ 'ի գործ արկեալ։ Քանզի հարեալ և նկուն զաջոյ թեն արարեալ, հրաման տայր վերջապահ գնդին յառաջ խաղալ. և ապա այն փոփոխութեն խառով հարեալ 'ի մարտիկ զօրականին, յաղթութիւն 'ի ձեռս տայր թշնամեացն. տապաստ արկեալ յայնժամ 'ի Հռոմայեցւոց ոգիք երկու հազար և եօթն հարիւր։

Տեղի տուեալ յայնժամ Մարկեղղոս 'ի ղակիշ անդր և ժողովեալ զզօրն, ասէր՝ շատ զէնս Հռովմայեցւոց տեսանել և մարմինս, այլ 'ի նոսա Հռովմայեցի և ո՛չ ղոք։ Իբրև նա զայս ասաց, առհասարակ նեղութեն խնդրեալ նոցա, կրկնեաց Մարկեղղոս՝ ոչ ներել 'ի պարտիլ նոցա, այլ 'ի պարտեալն. և առ վաղիւն պատրաստ լինին նոքա անդրէն մարտ մղել, զի մինչև զվախճանն՝ զյաղթութեանն լուր առցեն 'ի Հռոմ։ Զայս ասաց, և թիկնադարձոյց գնդացն հրաման տայր փոխանակ ցորենոյն՝ տալ գարի։ Իսկ 'ի բազմաթիւ զօրականին՝ որ վերս առեալ էին 'ի մարտին ազգոյ, ասեն՝ եթէ չէ՛կաց ոք զոր ո՛չ կարէ վերքան զվերսն ցաւեցուցին բանք Մարկեղղոսին։

Իբրև առաւօտն մերկանայր, հանին եղին ակներև զպատմութեանն ծիրանի ըստ սովորութեանն՝ նշան մօտալուտ պատերազմին. յայնժամ գունդքն ակնկորեալք՝

գիմագրաւք խնդրեցին և կարգեցան կա-
ցին 'ի նահատակս զօրուն. զհետ նոցա և
հազարապետք յառաջ մատուցեալ՝ Ճակատ
յարդարէին մնացորդաց բանակին։ Զայն
իբրև լուաւ Անիբաղ, ձայն բարձեալ
գոչէր. "Բա՜ռնէ հերակլէս, և զիա՜ղդ ապա
բերցէ ոք առնդ այդմիկ, որ ո՛չ ձախողակ
բաղդին և ո՛չ գեղեցկին երեսս ինչ դա ո՛չ
առնէ։ Քանզի դա միայն չտայ գիւր՝ եթէ
յաղթէ. և չառնու՝ եթէ յաղթի։ Ան-
գուլ ուրեմն հասանէ կռուել ընդ դմա-
այր՝ որ 'ի յաջողելն՝ անդրէն դրդի և քա-
ջալերի 'ի խնդութենէն. և 'ի վրիպելն՝ 'ի
յամօթոյն"։ Իբրև բանակք երկոքին խառ-
նեցան 'ի մարտ, և քաջ քաջի պատսահեալ՝
մնային անպարտելիք, հրաման տայր Ան-
նիբաղ յառաջ զփիղսն խաղացուցանել 'ի
Ճակատն Հռոմայեցւոց։ Իբրև այնպէս
թափ անհնարին և խռով սաստիկ 'ի գա-
զանաց անտի հարկանէր յառաջին կարգ
զօրուն, յայնժամ 'ի հազարապետացն ա-
նուն Փլաբիոս դրօշակ մի յափշտակեալ
խաղայր ընդդէմ գազանացն. հարեալ
սաստկութեամբ զառաջին փիղն 'ի տայր
նիզակին՝ յետս զնա ընկրկէր, ուստի և
այնպէս անհնարին աղմկեցան գազանքն՝ որ
աղխաղխեալ դային զհետ։

Ապա դէտակն 'ի վեր ամբառնայր Մար-
կեղղոս՝ հրաման տայր այրուձիոյն փու-
թալ 'ի Ճեպ տագնապի հասանել յաղմուկ
անդր, և առաւել 'ի վեր 'ի վայր խառնել
զդունդս թշնամեացն։ Ներքս բուռն և սաս-

տիկ 'ի վերայ յարձակեալ՝ վանեալք ընկրկէին զԿարքեդոնացիսն, և հարուածս 'ի վերայ հասուցանէին մինչև 'ի զակիշ անդր նոցա. սակայն և շատք ևս էին սպանեալքն 'ի գազանացն՝ այն ինչ խոցք և վերաւոր նոքա թաւալգլոր խաղային։ Եւ ասեն յայնժամ մեռեալ աւելի քան զուրթ հազար. իսկ 'ի Հռոմայեցւոց՝ երեք հազար. և գոգցեա առհասարակ վերաւորք։ Ապա ժամ դառեալ Աննիբաղ՝ անշշունչ գիշերային ժողովեալ զբանակն գնայր տարագէմ 'ի Մարկեղղոսէ. որում ոչ կարացեալ նա զհետ լինել 'ի բազմութենէ վերաւորացն, դէմ եդեալ և ինքն յուշիկ գնայր 'ի Կամպանիա. և անդանօր 'ի Սինուէսսա զաւուրս ջերմինս անցուցանէր և յանձանձէր զզօրականն։

Բայց Աննիբաղ 'ի բացեայ աղատացեալ 'ի Մարկեղղոսէ, առեալ զմոլեգին զիւր ամբոխն և զարձակերասան՝ 'ի հուր և 'ի սուր դատէր առհասարակ շուրջ զԻտալիա. ուսոյ և ամբաստանութիւնք 'ի Հռոմ յուզեցան ընդդէմ Մարկեղղոսի։ Դատախազ թշնամիք նորա յարուցին 'ի վերայ նորա զՊուբլիկիոս Բիբլոս զժողովրդապետ, զայր բանիւք զօրաւոր և բուռն։ Սա այս Բիբլոս յաճախ 'ի մի վայր զխուժանն խմբեալ, գուն գործէր այլուսմ ուսմք տալ 'ի ձեռս զզօրավարութիւն բանակին. քանզի Մարկեղղոս՝ ասէր՝ վայր մի ձեռն 'ի գործ արարեալ և կռուեալ, իսկ զարդիս ելբու լրմբշարանէ խմեմնէ ան-

ցեալ ջրաւ նստաւ 'ի բաղանիս Ջերմինս՝ սպասս առնուլ անձին։

Իբրև այսմ իրազգած լինէր Մարկեղղոս, անդէն թողեալ 'ի բանակին եռեղակալս՝ դառնայր 'ի Հռոմ պատասխանի առնել ամբաստանութեանն, այն ինչ հանդերձեալ էին տալ դատակնիք ընդդէմ նորա։ Ապա 'ի ժամանակեալ աւուրն իրմէ բեալ խուժանին 'ի Փլամինեան ձիրանթացան, Բիբլոս 'ի բեմէն առաջի առնէր զամբաստանութիւնն. իսկ Մարկեղղոս բանս անդանօր դուշնաքեայս անպաճոյճս խօսէր վասն անձին. սակայն 'ի քաղաքացեսց անտի յայնժամ աբք աւագք և ականաւորք ազատագէմ բարբառեցան վասն նորա, և յորդորէին մի քան զթշնամին՝ եւ չարաշուք նստել դատաւոր, և իբրև անարի և վատ զՄարկեղղոս դատել, յորմէ միայն ցանգ զանգիտեալ խոյս տայ Աննիբաղ. և որչափ նա հեռամուտ է կռուել ընդ այլոց, այնչափ և անձնապահ է 'ի վէգ գալ ընդ Մարկեղղեայ։

Իբրև զայն բանս ասացին, և յայնժամ ամբաստանն յամօթ լինէր գլխովին. զի և ոչ 'ի դատակնքոյն միայն, այլ և ողջոյն յամբաստանութեանցն արձակեալ՝ ընտրեցաւ հիւպատոս այս հնգեցս անգամ։ Առեալ զիշխանութիւնն՝ նախ քան զամենայն գնացեալ 'ի Տիւրրենիա, հանդարտեր զաղմուկ մեծ զապստամբութեանն։ Ապա կամեցեալ սրբել նուիրել զտաճարն զՓառաց և զԱռաքինութեանն, զոր նա ինքնին կա-

ռուցեալ իսկ էր յաւարաց անտի Սիկիլիացւոց, իբրև յանձն չառին քահանայք՝ եթէ անձահս դիք կրկին 'ի միում փակեսցին տաճարի, սկիզբն առնէր նա շինուիթեն և երկրորդ տաճարի. սակայն գժկամակս եբեր զհակառակութիւնն, և վատաիստար ևս վարկաւ զբանն: Եւ քա՛ջ իսկ և այլ ևս շատ նշանք միջաբեկ առնէին զնա. քանզի և մեհեանք ինչ շանթահարք եղեն. դարձեալ և մկունք կրծեցին զոսկին 'ի մեհենին Արամազդայ: Այլ և պատմեցին յայնժամ, արձակեալ եղին ձայն զմարդոյ, և մանկան միոյ ծնանել և ասրել՝ գլուխ ունելոյ զփղի: Նա և 'ի Նուէրան և 'ի քաւութիւնան էին ձախողակի գուշակութիւնք. ուստի և իղձք և գուշակք արդելեալ պահէին զայրն 'ի Հռոմ. Թէպէտ և Նորա անհնարին 'ի տոկ անկեալ էր Ջանն և վառեալ 'ի չու անդր. զի և ո՛չ ոք այնպէս յիր ինչ զակատեցաւ տարփմամբ, իբրու Մարկեղղոս 'ի վեգ ընդ Աննիբալայ կաքաւեալ սահմանաբար մարտիւ:

Զայս նա յերազանայր գիշերի, և վասն սորին 'ի խորհուրդ մտանէր ընդ բարեկամս և ընդ իշխանակիցս իւր. և այս միայն էր Նորա ձայն աղօթից առ գին՝ 'ի Հակառամարտ պատերազմի հասանել ունել զԱննիբալ: Եւ ինձ թուի՝ եթէ երկաքանչիւր ևս զօրաց փակեալ 'ի պատնէշն կամ 'ի զակիշ, մոադիւրագոյնս ևս էր գոռն: Այլ եթէ չէր Մարկեղղոսի այնպէս 'ի ծայրն հասեալ փառաց և պատուոյ, և թէ չէր նո-

րա հաւատոիս բազում 'ի նեղքս բերեալ զքաջութիւն և զհանճարոյն առաւել քան զամենայն զօրավարս, անշուշտ էր ասել զնա յերիտասարդական բերեալ աշխուժից և 'ի պատուասիրութեան՝ անձահ բազմամեայ առն. քանզի և 'ի հինգերորդ ընտրութեանն զվաթանամենիւք ուրեմն անցեալ էր։ Յայսր ամենայնի վերայ կատարեալ զղոհսն և զպրբութիւնսն ըստ գուշակացն հրամանի, եւ արտաքս 'ի մարտ պատերազմի հանդերձ իշխանակցաւն և բանակ հարեալ ընդ մէջ Բանդիոյ քաղաքին և Բենիսեայ՝ ոտէպ ձայն տայր Աննիբաղայ. իսկ նա երբէք չիջանէր 'ի կռիւն. սակայն լուր առեալ եթէ գունդ հատաւ 'ի Հռոմայեցւոց 'ի վերայ արևմտեան Լոկրացւոց, ինքն դարան գործեալ ընդ Պետինեան բլրոնն, սպան 'ի նոցանէ ոգիս երկու հազար և հինգ հարիւր։ Յայսմանէ մեծապէս դրդեալ Մարկեղղոս 'ի կռիւն, ժողովեալ զբանակն եկն մօտ բանակեցաւ ընդդէմ Աննիբաղայ։

Էր անդանօր ընդ մէջ երկուց բանակացն բլուր քաջամուր անտառախիտ, և դիտարանք 'ի բլրին ասոի և անոի, և աղբիւրք ջրոյ հոսէին 'ի նմա։ Զարմացան Հռոմայեցիք, զի Աննիբաղ կանուխ հասեալ՝ ոչ կալաւ զդիպան վայրն, թողեալ 'ի թշնամեացն ձեռս։ Այլ Աննիբաղ քան վասն բանակին՝ լաւ ևս 'ի դարան զվայրն համարեալ, ելից անդանօր զանտառն և զանձաւն բազում աղեղնաւորօք և տիգաւոր-

րոք. եդ 'ի մոի եթէ վայրացն քաջադի-
պութիւն յինքն ձգեալ յանկուցէ ըզ-
Հռոմայեցիսն, և չվրիպեցաւ 'ի յուսոյն։
Քանզի անդէն վաղվաղակի ողջոյն ընդ-
բանակն Հռոմայեցւոց այս ձայն ընթա-
նայր, հասանել ունել զվայրն. և առհա-
սարակ նոքա յայնժամ իբրու զօրավարք
ոմանք սահմանեալ խօսէին, մեծապէս
ստնանել թշնամեաց եթէ ողջոյն զբանակն
հարցեն անդանօր, կամ թէ ամրաւ պա-
տեսցեն զբլուրն։

Ապա հաճոյ թուեցաւ Մարկեղղոսի
գնալ անդր սակաւ այրուձիով և զննել
զվայրն. կոչեաց զիղձն և զոհեաց։ Իբրև
փողոտեաց զառաջին սպանդն՝ անդ իղձն
ցուցանէր զնեարդն անգլուխ. ապա փողո-
տեալ և զերկրորդն՝ տեսանէին զգլուխն
մեծ յոյժ անհնարին. դարձեալ և այլն ա-
մենայն ցուցաւ յայնժամ կարի բերկրա-
կան, զի և համարեցան 'ի գեղեցիկ նշա-
նաց անտի խսպառ նանրանալ երկիւղին՝ որ
յառաջնոց ձախողակացն. այլ իղձքն 'ի
վերջնոց աստի առաւել ևս զարհուրեալ
ասէին զանձինս, պնդեալ եթէ 'ի բարե-
նշան զոհից յետ ձախողակացն՝ կասկածե-
լի է օտարոտի այլայլութիւնդ։ Այլ սա-
կայն. "Զկարգ սահմանին ոչ հուր արդե-
լու և ոչ պատուար երկաթի", որպէս
Պինդարոս ասաց։ Ուստի և Մարկեղղոս
առեալ ընդ իւր զՎրիսպինոս զիշխանա-
կիցն, և զորդին իւր զՀազարապետ, էլ ար-
տաքս 'ի ղակէն և այրուձի ընդ նմա երկե-

րիւր և յիսուն միայն, յորոց և ոչ մի ոք 'ի նոցանէն Հռոմայեցի, այլ առհասարակ Տիւրրենացիք. քառասունք միայն Փրեգաղացիք՝ քաջք և հաւատարիմք ցանգ կացեալք առ Մարկեղղոսի։

Եւ քանզի անտառախիտ էր բլուրն և թաւամուր, դէտ մի 'ի Կարքեդոնացւոց անտի կայր 'ի ծայրին և լրտեսէր. ինքն ա- ներևակ 'ի Հռոմայեցւոց՝ տեսանէր ողջոյն զբանակ նոցա. իրազգած սա զդարանամուտն արարեալ վասն բանին, նոքա թոյլ տուեալ մտեալ Մարկեղղոսի, անդէն յեղակարծումն յարուցեալ և շուրջ 'ի մէջ փակեալ զգունդն՝ նետաձիգ լինէին և հարկանէին, և հետամուտք զհետ փախստէիցն լինէին, 'ի նոյն՝ 'ի վեգ եղեալ կռուէին և ընդ դիմամարտան. և էին քառասունք այն Փրեգաղացիք՝ որ 'ի փախուստ խուճապեալ Տիւրրենացւոցն յառաջին կռուին՝ սոքա եկեալք նեղեալք ընդ միմեանս մարտ եդեալ կռուէին 'ի վերայ հիւպատոսացն. մինչև Կրիսպինոս նետահար 'ի կրկին նետից՝ 'ի փախուստ դառնայր երիվարաւն։ Իսկ Մարկեղղոս անդէն տիգահար եղեալ՝ շեշտ թափ ընդ կողս նորա եղանէր տէգն լայնատէգ, զոր Լանդէա կոչեն 5։ Յայնժամ Փրեգաղացիք ողջանդամք 'ի մարտին թողեալ անդանօր զՄարկեղղոս դիտապատ՝ առին յափշտակեցին զորդին նորա վերաւոր և փախստեայ անկանէին 'ի բանակն իւրեանց։ Եւ անկան տասպատ անդէն քառասնիւ չափ. և դաւազանակիրք

հինգ թուով և հեծեալք ութ և տասն վարեցան 'ի գերութիւն։ Բայց և Կրիսպինոս ոչ շատ ինչ աւուրս կեցեալ՝ մեռաներ 'ի վերայ անտի։ Եւ եղև այս առաջին նուագ՝ անհնարին աղէտք Հռոմայեցւոց, 'ի միում մարտի կորուսանել միանգամայն զերկոսին հիւպատոսսն։

Իսկ Աննիբաղ յայնժամ զայլն ամենայն առ գուշնաքեայ գրեալ, այն ինչ լուաւ եթէ և ինքնին Մարկեղղոս դիտապատ անկեալ կայ, յարուցեալ փութապէս ընթանայր 'ի վայր անդր. և մերձ կացեալ մեռելոյն՝ այնպէս հարուստ մի ժամ դիտեալ զկորովութիւն մարմնոյն և զկերպարանն, ոչ յոխորտս արձակեաց բարբառ, և ոչ ուրախութեան ժպիտ ծնաւ 'ի դէմս նորա, ըստ որում և 'ի դէպ արդեօք մարդոյ՝ զմեծն զնուր թշնամին և զբուռն դիտապատ տեսեալ. այլ կացեալ հիացեալ ընդ անկարծ մահն և ընդ դրժապատեհ առնն աւագի՝ առնոյր 'ի բաց ըզմատանին, և գեղեցիկս զարդարեալ ըզդիակն և շուք եդեալ այնպէս այրեր ըզմարմինն, և 'ի սափոր արծաթի արկեալ զաճիւնն և 'ի վերայ պսակ մի եդեալ ոսկի առաքէր առ որդի նորա։ Այլ 'ի Հռոմադացւոց անտի պատահեալ արանցն որ տանէին զայն, 'ի վերայ դիմեալ յափշտակել զսափորն, իբրև նոքա զդէմ դարձեալ հակառակէին՝ հեղեալ ցնդէր աճիւնն ընդ երկիր։ Լուեալ Աննիբաղայ ասէր՝ որք զնուրևն կային. Ինչ մի չմարթի լինել ար-

տաքոյ կամացն աստուծոյ։ Եւ թէպէտ զԵՈՒՍԱԳԱՅԻՍ զայն պատուհասեաց, ոչինչ փոյթ կալաւ այնուհետև ժողովել զաշխիւնն և տալ տանել. իբրու որ 'ի դից անտի միում ումեք կամք իցեն՝ այնպէս դրժպատեհ և մեռանել Մարկեղղեայ և անթաղ մնալ։ Օրինակ զայս պատմեն մեզ Կուռնելիոս Նեպոս և Վալերիոս Մաքսիմոս։ Այլ Լիվիոս և Կեսար Սեբաստոս պատմեն, եթէ սափորն տարեալ ողջ առորդին թաղեցաւ շքով։

Իսկ Զօնք նուիրացն Մարկեղղոսի՝ թո՛ղ զորս միանգամ նորա 'ի Հռոմ՝ էն ըմբշարան մի 'ի Կատանիա Սիկիլիոյ, անդրիք և պնակք սիրակուսացիք 'ի Սամոթրակէ 'ի մեհենին դիցն՝ որոց անուն կարդան Կաբիրք. և 'ի Լինդոն 'ի մեհենին Աթենասայ. ուրանօր ըստ Պոսիդոնիոսի էր և արձան նորա, և վերտառութիւն այսպիսի. "Ահա քեզ ո՞վ հիւրդ, Ատոլն մեծ Հռովմայ հայրենեացն, Մարկեղղոս Կղաւդիոս 'ի հոյակապ նախնեաց։ Նա՝ Եօթնիցս անդամ զաւագութիւնն հիւպատեան տարաւ, 'ի մոլեալ անդ Արէսի, և ախոյենիցն մահունս եդ ամբաւ"։ Այլ որ զվերտառութիւնն գրեաց, ընդ հնգեակ հիւպատոսութեանն լծորդեաց և զկրկին նորա կալ փոխանակ բդեշխի։

Բայց սերունդ նորա հոյակապ եկաց մնաց մինչև ցՄարկեղղոսն քեռորդի Կեսարու. զի էր նա որդի քեռն Կեսարու Հռովմայեայ 'ի Գայիոսէ Մարկեղղոսէ. և վե-

սայացեալ մեռաւ՝ մինչդեռ էր ինքն ամբարապետ Հռոմայեցւոց, ոչ բազում ժամանակ կեցեալ ընդ դստերն Կեսարու։ Եւ ապա Հոկտաւիա մայր նորա նուիրէր 'ի պատիւ և 'ի յիշատակ նորա՝ Մատենադարան մի, և Կեսար՝ Տ֊ապարան մի մակագրեալ 'ի յայս Մարկեղլոս։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՊԵՂՈՊԻԴԵԱՅ
ԵՒ
ՄԱՐԿԵՂՂՈՍԻ

Եւ արդ՝ որչափ ինչ արժանապատում թուեցաւ մեզ 'ի գրել 'ի բանից անտի Մարկեղղոսի և Պեղոպիդեայ, այդոքիկ են։ Բայց ըստ բուսոյ բարուցն և վարուցն զուգահաւասարք գոլով սոքա, իբրու եթէ այր զարամբ ելևէլս առնիցեն. և քանզի երկոքին դոքա քաջք էին և կորովք և վաստակասէրք և արիասիրտք և մեծանձինք, յայս ինչ միայն երևին զանազանեալք, զի Մարկեղղոս 'ի քաղաքս բազումն՝ զոր ընդ ձեռամբ գրաւեաց՝ հաբուածս 'ի վերայ եդ. իսկ Եպամինոնդաս և Պեղոպիդաս ո՛չ զոք 'ի պարտեալոցն 'ի մահ վարեցին, և ո՛չ զքաղաքս 'ի գերութեան կացուցին։ Այլ և Թեբայեցիք ինքնին ասեն, եթէ և ո՛չ Ոքքոմենացիք գալ

խովին զնոյն անցս կրէին, եթէ սոքա երկոքին անդանօր մերձ կային։

Իսկ 'ի գործս նահատակութեանց սոցա՝ արդարև հրաշալիք են և մեծամեծք Մարկեղլոսին՝ որ առ Կեղոսն. զի եհար վանեաց զայնչափ բազմութիւն զայրուձիոյն և զհեռեակացն սակաւաձեռն այրուձիով. զոր և հեշտին կատարեալ առ այլովք զօրավարօք չէք գտանել 'ի պատմութիւնս։ Առ այս՝ զի և զզօրավար նոցուն գիտապատ կացուցանէր. յորում կարդի և ինքնին Պեղոպիդէս կամելով նահատակել, ինքն առաջին տապատ անկաւ 'ի բռնաւորէն. և մինչև գործեալ՝ ինքն կրեաց։ Այլ սակայն այդոցիկ զուգակշիռ 'ի դէպ է գործել՝ և զՊեղոպիդեայն նահատակութիւնս որ 'ի Լեւկտրա և 'ի Տեգիւրա՝ զմեծամեծսն և զականաւորսն։

Բայց զծածուկ ինչ և զդարանամուտ գործ նահատակութեան չունիմք 'ի ներքս բերել զՄարկեղեայ և կշռել ընդ Պեղոպիդեայն, որչափ միանգամ գործեաց նա յետ դարձին յաքսորանաց. և զմահուանն զբռնաւորացն 'ի Թեբա, զի և Թուի թէ այն նահատակութիւն յոյժ գերազանցեալ կայցէ քան զամենայն գործ զդաւանաց և զդաղանեաց։

Այլ անշուշտ Աննիբալ ահարկու էր թշնամի և բուռն և սաստիկ, ըստ որում և Լակեդեմոնացիք յայնժամ՝ Թեբայեցւոց։ Բայց անաղարտելի է պատմութիւնն՝ եթէ Պեղոպիդաս 'ի պարտութիւն մատ-

նեաց զնոսա 'ի Տեգիւրա և 'ի Լեւկտրա։ Իսկ Մարկեղղոս զԱննիբաղ, ըստ որում Պողիւբիոս ասէ, և ոչ միանգամ 'ի պարտութիւն մատնեաց. այլ թուի թէ անպարտելի եկաց մնաց նա մինչև ցաւուրս Սկիպիոնի։ Այլ մեք Լիվիոսին ընծայեմք հաւատս և Կեսարուն և Նեպոսին, և 'ի Հելլենացիս՝ արքային Յոբայ, եթէ երբէք 'ի պարտութիւն մատնեցան Աննիբաղեանք և 'ի փախուստ դարձան 'ի Մարկեղղոսէ. բայց այդոքիկ կշիռ ինչ մեծ չգործեցին. նա մանաւանդ թուի թէ կեղծաւորեցաւ իմն այնպէս Լիբէացին 'ի մարտան յայնոսիկ։

Իսկ որ իրաւապէս և արժանապէս սքանչելին՝ այն է զի այնչափ 'ի փախուստ խուճապեալ զօրուն և սպանեալ զօրավարացն և 'ի վեր 'ի վայր շարժեալ ողջոյն Հռոմայեցւոց տէրութեանն, սա այս Մարկեղղոս քաջալերեաց իրախուսեաց զնոսա կալ 'ի դիմի հարկանել թշնամւոյն։ Քանզի որ 'ի վաղնջուցն և 'ի հին ահաբեկութենէն և յարհաւրացն՝ միւսանգամ 'ի վեր կանգնեալ իրախուսեաց վառեաց 'ի զօրն զգեղեցիկ նախանձ և զմրցանն ընդդէմ թշնամեաց, և զայն ևս՝ զի մի այնպէս հեշտեաւ զյաղթութիւն 'ի ձեռս թողցեն թշնամւոյն, այլ զի եւևեալս առնելով մրցեսցին պատուասիրաբար, սա այս Մարկեղղոս եկաց միայն։ Քանզի որք առ վշտամբերութեան աղէտիցն սովորեցան Հռոմայեցիք սիրել փախստեամբ անձնապուր լինելյե-

ըեսաց Աննիբաղայ, սա այս Մարկեղլոս ուսոյց նոցա զամօթի հարկանել 'ի ճողոպ-
րել իւրեանց յետ պարտութեանն. և կորանալ՝ եթէ վայր մի տեղի տացեն թըշ-
նամւոյն. և սրանիլ՝ եթէ 'ի պարտութիւն չմատնեսցեն:

Այլ քանզի Պեղոպիդէս յամենայն իսկ 'ի մարտս անպարտելի մնաց 'ի զօրավարու-
թեան իւրում, իսկ Մարկեղլոս յաղթութիւնս բազումս 'ի դլուխս տարաւ առաւել
քան զամենայն Հռոմայեցիս որ առ իւ-
րովքն ժամանակաք, թուի թէ զուգահա-
ւասար կայցէ գԺուարապարտելիս այս ընդ
անպարտելւոյն ընդ այնմիկ 'ի պատճառս
բազմագէմ նահատակութեանց իւրոց:

Իսկ թէ Մարկեղլոս հասեալ կալաւ
գրաւեաց զՍիրակուսա, իսկ Պեղոպիդէս
վրէպ եկաց 'ի Լակեդեմոնացւոց քաղա-
քէն. սակայն ես այնպէս համարիմ՝ եթէ
մեծ ևս քան զգրաւել Սիկիլիոյ էցէ մե-
տիլ 'ի Սպարտիա, և առաջին քան զամե-
նայն մարդ՝ մարտիւ պատերազմի անցանել
ընդ Եւրոտաս: Թէ ոչ՝ օն և օն Արա-
մազդ՝ ասասցէ ոք արդեաք, եթէ քան Պե-
ղոպիդեայ՝ մանաւանդ Եպամինոնդեայ 'ի
ձեռն վճարեցաւ գործն, ըստ որում և
Լեւկտրեան նահատակութիւնքն: Իսկ Մար-
կեղլոսին նահատակութեանցն անհաղոր-
դական է փառքն. քանզի ինքնին միայնակ
առ կալաւ զՍիրակուսա, և զԿեղտան դար-
ձեալ՝ զատ յիշխանակցէն 'ի փախուստ
դարձոյց. և ընդդէմ Աննիբաղայ՝ ոչ զոք

ունելով 'ի նիզակակից, նա և յորժամ առհասարակ ամենեքին զնա յայնմանէն 'ի բաց քեցէին, ինքն ճակատեցաւ ընդդէմ նորա, և փոփոխեալ զդէմն կերպարանաց մարտին, ինքն առաջին հորդեաց ճանապարհ արիութեան։

Բայց զմահ վախճանին գովեմ և ոչ զմիոյ ուրուք քաջացդ այդոցիկ. այլ ցաւ է ինձ և աշխարեմ ես զտարադէպն զայն և զտարաժամ արկածն։ Բայց և հիացեալ եմ՝ զի յայնչափ մարտս պատերազմաց՝ որչափ ինչ ոք վաստակեացի 'ի հաշիւ նոցա, և ոչ վերս անգամ ընկալաւ Անկիբաղ։

Եւ զարմացեալ է իմ ընդ Քրիսանդէն ընդ այն 'ի Դասախարակութեան գիրն 6 (Քսենոփոնեան), որ մերկացեալ զսուրն և 'ի վեր առեալ հարկանել զթշնամին, իբրև ձայն փողոյն նշան տայր տեղի տալ 'ի մարտէն, եթող անդէն զայրն՝ և ինքն մեծապէս հեզութեամբ և պարկեշտութեամբ մեկնէր 'ի վայրացն։ Այլ սակայն զՊեղոպիդէան ներելի գործէր 'ի պահու մարտին՝ աշխոյժ եռանդանն և արտմբտութիւն նորա 'ի վրէժխնդրութիւն ոչինչ անարի. "Քանզի լաւ է յաղթական գոլով ապրել զօրավարին. դարձեալ և մեռանել, յառաքինութեան վճարելով ըզկեանն". որպէս ասաց Եւրիպիդէս։ Քանզի այսպէս ուրեմն մահ վախճանելոյն, ոչ կիրք են, այլ գործ։ Նա և բաց 'ի արտմբտութենէն Պեղոպիդեայ, և նոյն ինքն վախճան յաղթութեանն զոր նկարէր նա 'ի

գիտապատ անկանել բռնաւորին, ոչինչ գլխովին անբանաբար դրդեաց զնա 'ի թափն յայն։ Քանզի և դժուարին ի՞նչ արդեօք նահատակութիւն այլ 'ի ներքս բերել՝ որ այնպիսի գեղեցիկ և փառաւոր ունիցի պատճառս։

Իսկ Մարկեղլոս՝ ոչ 'ի տիպել ինչ կարևոր պիտոյից, և ոչ յորժամ 'ի խուճապ տագնապին բազում անգամ գեղեցիկ մոլութիւնն մերձ կացեալ՝ այլ յայլմէ առնէ, այնպէս անխորհրդաբար դիմագրաւ 'ի վտանգն եղեալ՝ ոչ զզօրավարի անկանի անկումն, այլ զյառաջընթաց ուրուք կապրապետի կամ զլրտեսի. և զհնդեակ զիւր հիւպատոսութիւնս և զերրեակ յաղթանակսն, և զառն և զապուր, և զտանել յաղթութեան ախոյենից 'ի թագաւորաց, առաթուր եդ ընդ ոտիւք Կարքեդոնացւոցն վարձկանաց, Իբերացւոց, և Նումադացւոց. որպէս զի և նոցուն թշնամեացն դժկամակս բերել ընդ նահատակութիւնս իւրեանց, զի այր այնպիսի 'ի Հռոմայեցիս քաջութեամբ առաքինութեամբ գեր 'ի վերոյ, և աւագութեամբ զօրութեամբ վեհագոյն, և փառօք և պատուով ականաւոր յոյժ, 'ի խուան անդ յառաջընթաց լրտեսաց Փրեգաղացւոց այնպէս դիտապատ անկեալ կայցէ։

Այլ սակայն պարտ է զայսոսիկ ոչ եթէ ամբաստանութիւն ինչ համարել վասն արանցդ այդոցիկ, այլ արտցաւութեամբ դանդատանս և համարձակութիւն

'ի շնորհս անձանց նոցա և 'ի շնորհս քա-
ջութեան արութեան նոցա՝ որ աղագաւ
առեալ ծախեցին նոքա զայլ ինչ առաքի-
նութիւնս իւրեանց, ոչինչ խնայեալ 'ի
կեանս և 'ի հոգիս իւրեանց. իբրու ան-
ձանց մեռեալք՝ և ոչ մանաւանդ հայրե-
նեացն և բարեկամացն և նիզակակցացն։

Բայց յետ մահու վախճանին՝ Պեղոպի-
դէս Թաղուսն առնու 'ի նիզակակցացն
վասն որոց 'ի մահ մատնեցաւ. իսկ Մար-
կեղլոս 'ի նոցուն իսկ 'ի Թշնամեացն՝ յո-
րոց 'ի մահ վարեցաւ։ Եւ արդեօք Պեղո-
պիդայն նախանձելի է և երանելի. սակայն
քան զշնորհապարտ փոխարէնս երախ-
տեացն՝ վեհագոյն ևս է և մեծ հիանալ
պատուել նոցուն իսկ Թշնամեացն զառա-
քինութիւնն ստանիչ նոցա։ Քանզի 'ի
վերջնումդ լոկ առաքինութիւնն անխառն
ունի զպատիւն. իսկ յառաջնումն՝ պա-
տուասիրութիւն է և 'ի շահ օգտի և 'ի
պէտս առաքինութեանն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Որպէս Պողիւբիոս գրէ, ոչինչ պակաս էին նոքա քան զԵօթն հարիւր հազար հետեւակաց, և Եօթանասուն հազար այրուձիոյ։

2. Այսպիսի հրեշք՝ որ կոչին Արեւատիպք և Լուսնատիպք, բազմագոյնք յոյժ են Թուով 'ի մերում Բնաշնուութեան։ Թէպէտ և Պլինիոս գրեաց չերեւեալ առաւել քան զերիս, բայց Գասսենտոս պատմէ յամին 1625, երեւեալ վեց Թուով 'ի Պողոնիա. և Շէմնէր 'ի 1629, երեւեալ 'ի Հռովմ հինգ Թուով. և 'ի յաջորդ ամի 'ի 26. Յունվ. երեւեալ Եօթն Թուով. և ասէ եա՝ չինք հակառակել եԹէ երեւեցին և երկոտասանք Թուով Արեւատիպք և Լուսնատիպք։

3. Պլուտարք. Մինուկիոս ասէ. այլ ըստ պատմ. Հռովմ. պարսի լինել Կ. Փաբիոս Մաքսիմոս։

4. 'Ի կարգի նորահրաշ մենքենայիցն Ալքիմիդեայ, է լսել 'ի համբաւոյ՝ է տե-

սանել և 'ի նկարս՝ նա և զդերահռչակեալ զայն Հայելիս կիզանոզականս զնորա, ո-
րովք ասեն այրեալ նորա զնաւահանդէսն Հռոմայեցւոց։ Սակայն Թուի անհիմն
համբաւն. քանզի և ո՛չ մի ոք 'ի նախնի մատենագրաց յիշատակ չարար Հայելեացն
այնոցիկ. մանաւանդ որ մանրամասն պատ-
մեցին զկրան՝ Պողիբիոս, Լիվիոս, և ա-
ռաւել՝ մերս Պլուտարքոս։

5. Պլուտարք՝ յունացուցեալ Λαγχεα
կոչէ զլտ. այն է՝ Lancea, որ է՝ Տէգ։

6. Էր այս Քրիւանդէ մի 'ի զօրագլ-
խացն Կիւրոսի 'ի մեծ արշաւանսն Քսե-
նոփոնտեայ. և նա ինքն Քսենոփոն պատ-
մէ զայս 'ի սկիզբն Դ գրոցն, որ անուա-
նեալ կոչի Քէՙօէէՙ, այն է՝ Դասոխա-
բակութիւն Կիւրոսի։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ

ԶՈՒԳԱԿՇԻՌՔ

ՓԻԼՈՊԻՄԵՆԵԱՑ

ԵՒ

ՏԻՏՈՍԻ ԿՈՒԻՆՏՈՍԻ ՓԼԱՄԻՆԻՈՍԻ

ՓԻԼՈՊԻՄԷՆ

ԼՍՐ Կասանդրոս 'ի Մանաֆինիա 'ի նախապատիւ զարմէ, և ճոխ առաւէլ քան զամենայն քաղաքացիսն։ Սա ճախողակի պատահէալ բաղդի, և փախստեայ յիւրոց հայրենեաց գնացեալ՝ եկն եհաս 'ի Մեգաղէպօլիս, յաւէտ իմն 'ի պատճառս Կրասսեայ հօրն Փիլոպիմենեայ. զի էր Կրասսիս այր հոյակապ գլխովին և մեծիմ բարեկամ նորա։ Արդ մինչդեռ կենդանի էր Կրասսիս՝ յամենայնին բաժանորդ էր Կասանդրոս. այլ ապա 'ի մեռանելն, որքան նա զՀիւրընկալուԹէն հատուցեալ Կրասսեայ՝ առեալ սնուցանէր զորբացեալ նորա զորդին, ըստ որում 'ի Փիւնիկեայ ասէ Հոմերոս սնուցեալ զԱ.քիլլէս։

Ապա անդատին յառաջին տիոցն Փիլոպիմէն աճէր և զարգանայր ազնուական և ալքենի բարոյիւք։ Իսկ յարբունս հա-

սեալ՝ խնամակալուք նմա լինէին Եկդեմոս և Դեմոփանէս Մեգալէպոլսեցիք, արք մոերիմք կենակիցք յԱկադեմիա ընդ Արգեսիլայոսի. և առաւել քան զամենայն իմաստասէրս ժամանակին նոքա զիմաստասիրականն առեալ պատշաճէին քաղաքականին. 'ի նոյն՝ յանդորր 'ի բռնաւորութենէն հանին նոքա զՀայրենիան, թելադիր եղեալ 'ի ծածուկ՝ սպանանել զԱրիստոդիմոս. նոքա գործակից լինէին և Արատոսի վանել զՆիկոկղէս բռնաւոր զՍիկիոնացի. առ այս՝ և սոքա 'ի թախանձանաց Կիրենացւոց՝ որոց խռովութեամբք լի էր քաղաքն և խօթ էր, անդր եղեալ նաւեցին՝ օրէնս դեղեցիկս հաստատելով նոցա, և յարդարեցին զքաղաքն։ Եւ սոքա դարձեալ՝ յամենայնի խնամով պարապեցան 'ի դաստիարակութիւն Փիլոպիմենեայ՝ վարժելով յիմաստասիրականն՝ 'ի պէտս առհասարակ Եղլադայ։ Եւ որպէս զայս զաւակ անագանի ծնեալ յիւրում ծերութեանն՝ 'ի լոյս վերբերեաց Եղլադա յետ նախնի իւրոց զօրավարացն քաջաց, սակայն և զսա մանաւոր հոն սիրեաց, և փառաւոր ևս արար. իսկ 'ի Հռոմայեցւոց ոմն 'ի գովութիւն առեալ զսա, կոչեաց՝ Վէրլինն Հելլենացւոյ. իբրու որ յետ նորա այլ ոչ ծնաւ Եղլադա զայր աւագ և իւր արժանի։

Այլ ոչ՝ որպէս կարծեն ոմանք՝ անդեղեայ էր նա. քանզի և մինչև ցայսօր ցուցանեն 'ի Դեղփիս զպատկեր նորա։ Իսկ

պատճառք ոչ ճանաչելոյն զնա հիւրընկալու ուրու

յամառութենէ և 'ի ցասմանէ. այլ թէ-
պէտ և առաւել Եպամինոնդեայ զուգա-
հեռ թեւակոխէր նա և նմանատիպ նմա
յաշխոյժս և 'ի զգօնութեան և յանշահա-
սէր 'ի բարն, սակայն և 'ի քաղաքականն
ոչինչ հանդարտէր նա կալ 'ի հեղութեան
և 'ի ծանրութեան և 'ի քաղցրութեան՝ 'ի
պատճառս ցասմնոտ և խազմասէր բա-
րուցն, և քան 'ի քաղաքականն՝ դիպողա-
գոյն ևս 'ի զինուորականն երևէր նա։ Զի
և յառաջին տիոցն սիրեաց նա զզինուո-
րութիւն. և մոտադիր ևս վարժէր 'ի հրա-
հանգս նորա՝ զինու զարդու վառեալ և
յերիվար աշտանակեալ։ Եւ քանզի ան-
դրստին նա քաջագէպ երևէր և 'ի գօտե-
կռիւս, 'ի նոյն յորդորեալ և 'ի բարեկա-
մացն և 'ի խնամածուացն, նա հարցու�
առնէր՝ եթէ արդեօք գօտեկռուութիւնն
ինչասեսցէ՞ ինչ զինուորականին. իբրև նո-
քա ասացին զճշմարիտն, եթէ բնաւ իսկ
տարբերեալ է ըմբիշն 'ի զինուորէն. և
կեանք և կերակուր և կրթանք միոյն՝ օտար
է 'ի միւսմէն. քանզի ըմբիշք յերկարեն 'ի
քուն և յոլիանան 'ի կերակուր, և պայ-
ման մի ունելով զշարժման և զհանգստեան,
այնպէս յաղթ գործեն նոքա զմարմինն.
յորում և 'ի խուն մի բռնութենէ և 'ի
վրիպակէ սովորութեանն հեշտեաւ ինա-
սին. իսկ զինուորաց պէտք են սովորիլ յա-
մենայնի միանգամայն, և առաւել յան-
սուաղութիւն և 'ի տքնութիւնս բաղում։
Զայսոսիկ լուեալ Փիլոպիմէն, ոչ միայն 'ի

բաց այնուհետև կայր 'ի կրթանաց գօտէ-
կռուութեանն և յընչաց ևս քերէր զնա,
այլ և ապա 'ի զօրավարութեանն՝ զըմբշաց
արուեստն յանարգաց սակի գնէր և ան-
փառունակ գործ, իբրու որ զմարմինս առ-
կարևոր մրցանան անպիտանս յարդարեսցէ։

Իսկ յետ այնորիկ 'ի վարժապետաց ա-
զատացեալ նա և 'ի դասատուարակաց, իբրև
քաղաքացիք հրոսակս արձակէին յաւարի
առնուլ զԼակոնիա, ինքն յասպատակին
ցանգ առաջին էր 'ի խաղալ, և վերջին՝ 'ի
դառնալ։ Բայց պարապեալ՝ կրթէր նա
զանձն կամ 'ի յորս՝ կորովի գործել ըզ-
մարմինն և թեթևընթաց, և կամ 'ի մշա-
կութիւն։ Քանզի և էր իսկ նորա կալուած
գեղեցիկ քան ասպարիսաք հեռի 'ի քա-
ղաքէն. ուր գնայր նա զօր ամենայն յետ
ճաշուն կամ ընթրեացն, և անդանօր 'ի
դուշնաքեայ խշտի ընկողմանեալ 'ի քուն
լինէր ընդ մշակացն. և յարուցեալ վաղ
քաջ՝ գործէր ընդ այգորդան և ընդ ան-
դէորդան. և դառնայր ապա 'ի քաղաքն՝
պարապեալ յիրս հասարակաց ընդ բարե-
կամացն և ընդ իշխանաց։ Իսկ 'ի շահից
զինուորութեանն գնէր նա զէնս և երի-
վարս և փրկանաւորէր զդերին. բայց զտուն
իւր լիացուցանէր 'ի հասից մշակութեանն,
շահավաճառութիւն անարատ քան զայլն
ամենայն. և խնամով պարապէր 'ի նոյն,
քանզի և համարէր իսկ արժանապէս զիւրան
ժառանգել մարդոյ՝ որ անձնապահն լցէ
յօտարին գոյից։

Բայց էր Փիլոպիմէն և լասէր, և գե-
գերէր մտադիր 'ի Ճառս խմաստասիրաց՝
ոչ ամենեցուն, այլ յորոց միանգամ շա-
հէր յառաքինութեան. և սիրով ևս թար-
թափէր 'ի Հոմերոս՝ ուր ուրեք զաշխոյժն
վառէր և զքաջութիւնն: Իսկ յայլսն՝
նուիրեալ էր նա առաւել 'ի Ճառսն Եւան-
գելոսի յաղագս կարգելոյ դասաւորելոյ
զմարտս պատերազմաց. և գեգերէր ևս 'ի
պատմութիւնս Աղեքսանդրի. և խելամուտ
լինէր՝ եթէ ընթերցողին պարտէ արդիւ-
նացուցանել զբանն, եթէ չընթեռնու-
ցու 'ի զբօսանաց սակս և յանպտուղ շատ-
խօսութեան: Քանզի որ ինչ յաղագս տե-
սականին դասաւորութեան արուեստին,
թողեալ նա զհովանագրութիւնն զսնա-
կացն՝ փորձ փորձէր զայնոցիկ արդեամբք
'ի նոսին իսկ 'ի վայրսն, և խնամով զննէր
զդարափոսս զվայրացն և զառապարսն ըզ-
գետնոցն, և զկիրս և զպէսպէս զձևսն զփա-
ղանգացն. մերթ ձգեալ տարածեալ և
մերթ նեղեալ ամփոփեալ, որ ըստ գե-
տոցն, որ ըստ խրամոցն, որ ըստ անձուկ
վայրացն, և խելամուտ լինէր այսոցիկ յու-
ղևորութեան իւրում, և խելամուտ ևս
առնէր զիւրսն: Սակայն թուէր խմն այն-
պէս՝ տարապայման պարապել նորա 'ի զի-
նուորականին, և տարփալ սիրել զմարտն՝
իբրև նիւթ ընդարձակատարը և բազմագի-
մակ առաքինութեան. և գլուխ բանին,
իբրև որեար պարապորդ՝ խոտել զանհը-
մուտսն յայնոսիկ:

Եւ էր Փիլոպիմէն ամաց երեսնից, յորժամ Կղէոմենէս արքայ Լակեդեմոնացւոց յեղակարծումն՝ գիշերի անկեալ 'ի վերայ Մեգալէպոլսեայ և վանեալ զպահանորդսն, եմուտ 'ի նեղբս և կալաւ զհրապարակն։ Յայնժամ Փիլոպիմէն գուն գործեալ 'ի Թիկունս հայրենեացն, և ո՛չ ինչ յաջողեալ վանել զթշնամին, Թէպէտ և քաջաբար մարտ եդեալ կռուեցաւ նահատակեալ, սակայն և գաղտ գողացաւ զքաղաքացիսն 'ի քաղաքէն՝ տեղի և ժամ տուեալ նոցա ելանել արտաքս, ինքնին արձանացեալ ընդդէմ հետամտիցն և քար ընդ ոտն եղեալ Կղէոմենեայ. մինչև յետ ամենեցուն հազիւ ուրեմն ելանէր և ինքն խոց և վիրաւոր՝ տապաստ անկեալ իւրոյ երիվարին։ Իսկ իբրև Մեգալէպոլսեցիք ապաստան կալան զՄեսսենէ, առաքէր առ նոսա Կղէոմենէս և ասէր դարձուցանել առ նոսա զքաղաքն և զկալուածսն։ Յայնժամ տեսեալ Փիլոպիմէն զիւրսն մոգիւրագոյնս բերեալ 'ի բանսն Կղէոմենեայ և փոյթ անդրէն 'ի դարձն, յոտն եկաց՝ խօսէր և խելամուտ առնէր՝ եթէ Կղէոմենէս ո՛չ եթէ զքաղաքն խնդրէ դարձուցանել առ նոսա, այլ մանաւանդ և զքաղաքացիսն ընդ ձեռամբ ունել, զի այնպէս աներկեան ևս տիրասցի նմա. զի և օգուտ ինչ նմա չէ անդէն կալ մնալ 'ի պահպանութիւն Թափուր տանցն և պատուաբացն. այլ հարկ է և զայնոսիկ Թողուլ լքանել առ ամայութեանն։ Այսոքիւք

բանիւք նա սարտուցեալ զնոսա 'ի Կղէոմենեայ, սակայն և պատճառս էտ նմա քանդել աւերել շատ ինչ զքաղաքն, և չուել գնալ՝ բարձեալ անտի աւար բազում։

Իսկ յորժամ արքայն Անտիգոնոս նիզակակից ընդ Աքայեցւոց ընդդէմ Կղէոմենեայ, որ կալաւ զբարձունսն և զանցս առ Սելլասեաւ, ճակատեցոյց զզօրն մօտ առ նա պատել պաշարել և վանել զնա, անդ էր յայնժամ և Փիլոպիմէն ընդ իւրոց քաղաքայնոցն 'ի մէջ այրուձիոյն. և առ երկ ունէր նիզակակից զԼիւրիկեցիսն՝ ամբոխ բազում մարտիկ որոյ խմբեալ 'ի վերջս ճակատամարտին։ Եւ էր նոցա հրաման առեալ մի շարժիլ՝ մինչև 'ի միւս թեւոյն ամբարձցէ արքայն 'ի ծայր գայիսոնին հանդերձ ծիրանի՝ 'ի նշան մարտի։ Այլ ապա դուն գործեալ զօրավարացն վանել հարկանել զԼակեդեմոնացիսն 'ի ձեռն Լիւրիկեցւոցն, մինչդեռ անդ Աքայեցիք զտեղն կալեալ կային 'ի կարգին ըստ հրամանին, անդուստ Եւկլիդաս եղբայր Կղէոմենեայ իրազգած եղեալ հատուածոյն թշնամեաց, փութապէս զթեթեւազէնսն հետեւակաց խաղացուցանէր 'ի թիկանց կուսէ Լիւրիկեցւոցն՝ անկանել 'ի վերայ և վարատել զնոսա՝ զղատուցեալսն յայրուձիոյն։ Իբրև անդ խռովեալք ցիր և ցան լինէին Լիւրիկեցիք, դէտակն կալեալ Փիլոպիմէն՝ զի ոչ գժուարին ինչ էր 'ի պահուն փակել 'ի նեղեալս զթեթեւազէնսն Լակեդեմոնացւոց, 'ի վեր հանէր զխորհուրդն իւր զօրավարաց

արքային. իբրև նոքա ոչինչ հաւանեցան նմա, և ունչս ևս արարին իբրև ցնորելոյ, զի և չև էր ծանուցեալ նահատակութիւն առն, նա անդէն զկուր քաղաքացիսն 'ի բաց առեալ՝ նոքաք հանդերձ խաղայր անկանէր 'ի վերայ հեռևակացն. և անդէն խուռվ սաստիկ հարեալ 'ի նոսա՝ 'ի փախուստ ևս խուճապեցուցանէր, և հարուածս անհնարին 'ի վերայ հասուցանէր։

Ապա խրախոյս առաւել տուեալ զբաց ալքունի՝ անդէն խաղալ 'ի գիմի հարկանել խռովելոց Թշնամեացն, Թողոյր զերիվարն և այնպէս հետի 'ի դժուարս անդ ուղիսալնցս և անդնդախորս՝ մինչդեռ մարտ եդեալ կռուէր վաստակեալ մեծաքիրտն այրուձի սպառազինութեամբն, անդուստ Թափ երկոքին բարձք նորա նեստահար լինէին միջամուխ սլաքաւն, ոչինչ մահացու՝ սակայն կարեվէր։ Իբրև ոչինչ զոտն յոտանէ փոխել կարէր Փիլոպիմէն՝ այնպէս ոտնակապեալ, անհնարին տագնապեցաւ այրն. քանզի և Ճարմանդ փքնոյն դժնդակ դորձէր զէլն՝ 'ի բաց 'ի վերայն քարշել զնեան։ Իսկ իբրև որ առ նովաւն կային՝ ոչինչ իշխեցին մերձենալ 'ի նա, և խաղմն սաստկացեալ յոյժ էր, դուայր Փիլոպիմէն մղձկեալ առ զայրուց ցասմանն և 'ի պատուասիրութենէն մրցանաց. Ճիգն ուժգին Թափեալ շարժել քայլել և ըզսրունսն ոտնափոխեալ՝ այնպէս միջաբեկ խորտակէր 'ի մարմնին զնեան, ապա տայր զնեաբեկան զերկոսին 'ի բաց քարշել. և

ինքն ազատացեալ՝ մերկեալ զպողովատիկն վարազաբար յարձակէր 'ի մէջ նահատակացն, և խրախոյս սատանիկ յայնժամ և նախանձ քաջութեան յորդէր զօրականին։

Ապա զյաղթութիւնն տարեալ Անտիգոնոս, փորձ փորձեալ զՄակեդոնացւոցն՝ հարցանէր, առ ի՞նչ նոքա զայրուձին շարժեցին առանց հրամանին. իբրև նոքա 'ի չքմեղս լինէին՝ իբրու ստիպեալք 'ի խառնիլ 'ի Մեգալէպօլսեցւոյ յերիտասարդէ, որ դիմադրաւ նահատակեցաւ 'ի վերայ թշնամեացն, ժպտեալ Անտիգոնոս՝ ասէր. "Երիտասարդդ այդ ուրեմն գործ նահատակեցաւ զմեծի զօրավարի"։ Եւ ապա յետ այնորիկ յոյժ զհամբաւի հարաւ Փիլոպիմէն. և Անտիգոնոս ինքնին խնամով պահեալ զնա ընդ ձեռամբն՝ արծաթ և զոր 'ի ներքս մատուցանէր նմա. այլ նա չհաւանեցաւ. գիտէր իսկ քաջ զբոյս բարուց անձինն՝ իբրու դժուարընտել ընդ ձեռամբ լինել այլոց։

Բայց և չկամեցեալ կալ անգործ 'ի կրթանս զինուորականին, չոքաւ 'ի Կրետէ և անդանօր 'ի զինուորութեան հարուստ ժամանակ վարժեալ ընդ արս մարտիկս յամենայն ազգ կռուոյ, և ժուժկալ սովորեալ և սակաւապէտ, դառնայր միւսանգամ առ Աքայեցիս մեծաւ շքով. զի և անդէն կարգեցին զնա զօրավար այրուձիոյն։ Զայրուձին զայն առեալ զանձամբ Փիլոպիմէն, և տեսեալ երիվարս վարել նոցա փոքունս և վատեալս ըստ բերման

յարշաւանս զինուորութեանն. և զի՝ և բազում անգամ նոքա խոյս տուեալք, զայլս 'ի տեղին փոխանակէին՝ և անփորձ և անարիք էին առհասարակ. զի և այլք 'ի զօրավարացն ցանգ այնպէս անհոգացեալք էին 'ի բանին՝ զանգիտեալք 'ի մեծ զօրութենէ այրուձիոյն Աքայեցւոց, որ իշխանք դատաւորք էն պսակաց և պատուհասից: Զայս ամենայն տեսեալ Փիլոպիմէն՝ ոչինչ թուլացաւ, քաղաքէ 'ի քաղաք ընթացեալ դեղեցիկ նախանձու զոգիս վառէր զերիտասարդաց. և որոց պէտք էին՝ պատուհաս ևս 'ի վերայ կապէր, և առեալ կրթէր զնոսա 'ի հանդէս փառաց և 'ի մրցանս առաջի բազմութեան հանդիսատեսացն: Եւ այնպէս 'ի սուղ ժամանակի առհասարակ զամենեսեան կորովիս գործեաց և քաջարիս, և որ մեծ ևս 'ի զինուորական կարգին՝ շոյտս և թեթևս. զի և 'ի դարձուածսն և 'ի շրջանսն և 'ի քայլսն միոյ միոյ, դարձեալ և միահամուռ այրուձիոյն՝ այնպէս քաջիկ վարժեաց, զի առ շոյտութեանն փոխելոյ 'ի կայից 'ի կայս և 'ի ձևոց 'ի ձևս առհասարակ գնդին՝ թուէր իմն միոյ մարմնոյ գործն:

Իսկ երբեմն 'ի գոռ պատերազմի շահատակեալ նորա առ Լարիսան գետոնէն ընդդէմ Եսովղացւոց և Եղիացւոց, Դամոփանտոս զօրավար այրուձիոյն Եղիացւոց մտրակ 'ի կուշտ երիվարին յարձակէր սաստկութեամբ 'ի վերայ Փիլոպիմենեայ. իսկ սա 'ի դիմի արձանացեալ քաջութեամբ և

զառաջս առեալ հարուածոյն՝ մինդահար զՊամոփանտոս դիաթաւալ յերկիր կոր-
ծանէր։ Զայն տեսեալ 'ի փախուստ դառ-
նային թշնամիք. և բարձրանայր այնուհե-
տև յոյժ Փիլոպիմէն, իբրու 'ի կորովու-
թեան ձեռին՝ ամենայն երիտասարդաց
վեհագոյն, և յիմաստութեան՝ ամենայն
ծերունեաց գերբ 'ի վերոյ, լի՛ ամենայն
քաջութեամբ 'ի կռուել և 'ի զօրավարել։

Սակայն առաջին Արատոս առեալ բարձ-
րացոյց զժողովուրդ Աքայեցւոց յաւա-
գութիւն և 'ի զօրութիւն յանաւագ վի-
ճակէն նոցա. քանզի և բնակեալ իսկ էին
Աքայեցիք ցիրուցան 'ի քաղաքս, և նա ա-
ռեալ միացոյց՝ կարգեալ նոցա քաղաքա-
կանութիւն՝ արդարև Հելլենացի և լի՛
մարդասիրութեամբ։ Եւ զոր օրինակ է
տեսանել 'ի հոսանս ջուրց՝ կառեալ դուզ-
նաքեայ ինչ նիւթոց զառաջինն, և զհետ
եկեալոցն դարձեալ կռուել յառաջինսն,
և առկայացեալ զանգուած հաստել կուռ,
սա՛պէս դէպ եղև և յԵլլադա. զառաջինն
քաղաքք ցիրուցան դիւրըմբռնելիք էին,
և միացեալ Աքայեցւոցն և յանգուցեալ
զշրջակայ քաղաքսն յիւրեանս, կիսոցն
ձեռն տալով փրկութեան 'ի լծոյ բրու-
նաւորացն, և զկէսս միաբանական սիրով և
քաղաքականութեամբ ամոքելով, խոր-
հուրդ խորհեցան՝ մարմին մի և տէրու-
թիւն մի զՊելոպոննիսոս գործել։ Այլ
առ կենդանութեամբ Արատոսի, նոքա
բազում մասամբ նուաճեալ կային ընդ

զօրութեամբ Մակեդոնացւոցն. և իշխէր նոցա Պտղոմէոս, ապա Անտիգոնոս, ապա Փիլիպպոս, որ ցանգ միջամուխ էին յիրս Հելլենացւոց։

Իսկ իբրև Փիլոպիմէն իշխանացաւ, ինքնին այնուհետև նոքա բաւականք 'ի մարտ, օտար զօրավարաց չէղեն նոցա պէտք։ Քանզի Արատոս՝ որպէս երևի՝ այր վատամարտիկ, զիւր գործն բազմագոյն մասամբ յառաջ վարեաց ամոքք բարոյիւքն և բարեկամութեամբ ընդ ազգայից՝ որպէս գրեալ կայ 'ի վարս նորա։ Իսկ Փիլոպիմէն այր մարտիկ հզօր և աշխոյժ, առ այս՝ և յաջողեալ յառաջին 'ի մարտսն, ընդ զօրութեանն և խրախոյս մեծ յորդեաց յԱքայեցիս՝ որ ընդ նորա ձեռամբն յաղթեցին 'ի բազում պատերազմունս։ Ապա առաջին առեալ փոխեաց Փիլոպիմէն զձախողակ կարգ զինուց զԱքայեցւոցն և զդասաւորութեանն. զի վարէին նոքա ասպարս փոքրագիս, զի և առ անձկութեանն՝ մարմինքն չէին ամրածածուկ. և գեղարդունս ունէին փոքրկունս քան զդայլսոնս մակեդոնացիս. և թեթևազէնք այնպէս՝ հարեալ խոցէին նոքա 'ի բացուստ, բայց 'ի խառնեալ գոռին՝ վերջոտնէին։

Իսկ կարգ դասաւորութեան նոցա չէր ոլորտացեալ ։, այլ կարգեալ 'ի փաղանգ, որոյ և ոչ ճակատ գոյր ձգեալ երկայնեալ զգեղարդունս. և ոչ դարձեալ կուռ վահանափակ որմել՝ ըստ որում Մակեդոնացւոցն. ուստի և հեշտին վանեալք ցիր ու

ցան լինէին։ Այլ Փիլոպիմէն կարգ է-
դեալ՝ փոխեաց զասպարան զայն 'ի վա-
հանս, և զգեղարդունսն զայն 'ի գայիսոնս.
և վառեալ զնոսա գլխանոցօք և լանջապա-
նակօք զրահից և սռնապանօք, փոխանակ
ասպարամարտ վազելոյն և արշաւանացն՝
վարժեաց զնոսա 'ի մեծամուր մարտ ար-
ձանանալ և կռուել։ Եւ այնպէս զինուո-
րեալ զպատանիսն՝ յայնչափ քաջալեր
խրախուսեաց զնոսա, զի և անպարտելիք
ոմանք կարծէին։ Ապա փոխեաց 'ի գեղե-
ցիկ ևս պէտս զնոցա գրգանսն և զբազմա-
հանդերձ զծախսն։ Քանզի գոլով նոքա
սիրողք պճնապաճոյճ հանդերձից և ծի-
բանանելոյ գորգոց և պատուասէրք 'ի մե-
ծամեծար ընթրիս և 'ի խնջոյս, հնար չէր
իսպառ զնոսա 'ի բաց քեցել 'ի սնոտի և 'ի
գժպատեհ ցանկութեանցն, յորոց խբրև
'ի կրից ախտից նոքա 'ի վաղնջուց իսկ էին
գրաւեալք. բայց Փիլոպիմէն զպճնասէր
բարոյսն յաւելորդաց անտի 'ի պիտանիսն
շրջեալ և 'ի պարկեշտսն, սանձեալ զնոցա
զծանրագին գրգանս զմարմնոցն, տայր նո-
ցա զարդարել և վայելչանալ յանօթս պա-
տերազմի և 'ի հանդերձանս նորա։ Եւ
անդ էր ապա տեսանել հանուրթս զեղեալ՝
հարուլ խորտակել բաժակս և ըմպանակս
զսպաս ոսկւոյ և զարծաթոյ, և առնու-
պատել յարծաթ և յոսկի զրահս և վա-
հանս և սանձս. դարձեալ՝ և յասպարէզս
իւնեալ զմտրուկս երիվարաց՝ 'ի կրթանս,
և զամբոխս պատանեացն՝ 'ի վարժս ապա-

ռազէն մարտից։ Անդ և 'ի կանանց ձեռս թարթափէին սաղաւարտք գունագոյն նաւրտուք գեղեցիկ պճնել զցցունսն ըզպատմուճանս այրուձիոյն, և զքղամիդս զօրականին ծաղկանկար յօրինել։

Եւ ապա այս տեսիլ ինքնին խրախոյս յորդէր և զաշխոյժսն վառէր զերիտասարդաց դաց դիմագրաւ նահատակել 'ի վտանգս։ Քանզի այլք 'ի բազմահանդերձ սպասուց գիտեն գրգացուցանել, և 'ի վարել նոցա մեղկանայ բնութիւնս, իբրու 'ի հաղթից ոմանց և 'ի հրապուրից զգայութեանցն՝ վարակեալ միանգամայն միտք և ոգի. սակայն որ յանօթս պատերազմին զարդք և գրգանք՝ ոյժ տալ բնաւորեցան նահատակութեան ոգւոյն. ըստ որում և ինքնին Հոմերոս 'ի զնին տեսլեան նորակերտ զինուցն յանդիման աչաց Ա.քիլլեայ, զոգին արծարծէր զդիւցազնին՝ վառել ցանկութեամբ 'ի պէտս զինուցն այնոցիկ։ Եւ իբրև այսպէս առեալ զարդարեաց նա զպատանին, կրթէին մարզէին նոքա այնուհետև կամակար յօժարութեամբ և այր զարամբ յամենայն իսկ 'ի մրցանս զոր հրամայէր նոցա. զի և յոյժ սիրեցին նոքա զայն կարգ դասաւորութեան զՓիլոպիմենեայ՝ իբրև մեծամուր իմն պատուարափակ. և եղեն զէնքն 'ի ձեռս նոցա՝ փոքրոգիք առաւել և հեշտինք, զի և 'ի փայլուն զինուցն և 'ի շուքն և 'ի գեղն խնդամտեալք առհասարակ՝ հեշտաբար շարժէին ճօճէին և տանէին բերէին. ցանկային փութապէս

մարտ դնել կռուել նոքօք ընդ Թշնամին։

Բայց էր յայնժամ մարտ պատերազմի Աքայեցւոց ընդ Մաքանիդասայ բըռնաւորի Լակեդեմոնացւոց. այն որ բանակ հարեալ զօրու ծանու խնդրէր տիրանալ համօրէն 'ի վերայ Պելոպոննիսոյ։ Իբրև լուր հասանէր գալստեան նորա 'ի Մանտինէա, փուԹանակի և Փիլոպիմէն զիւր բանակն խաղացուցանէր ընդդէմ։ Եկին և ճակատեցան մօտ 'ի քաղաքն. և էր նոցա երկոցուն ամբոխ բազում եկաց զօրականին, և զօրք ևս ամենայն քաղաքացն էին ընդ նոսա։ Իբրև մարտն խառնեցաւ, և Մաքանիդաս եկօքն իւրովք 'ի փախուստ դարձուցեալ զարդընկէցսն և զՏարանտացիսն՝ որ ճակատեալ կային յառաջոյ Աքայեցւոցն 'ի ձախոյ Թևն, ոչինչ փոյԹ կալաւ պատել պաշարել զմնացեալսն և վանել միանգամայն, այլ հետամուտ զկնի պնդեալ փախստէից՝ զատչէր յիւրմէ փաղանգէն և Թողոյր այնպէս զԱքայեցիսն առկայացեալ յիւրեանց կարգին։ Իսկ յայնժամ Փիլոպիմէն այնպէս կանուխ ձախողակի պատահեալ էլից, Թէպէտ և Թուէր իմն 'ի վատԹարուԹիւն դարձեալ իւրոց իրացն, 'ի վերայ այսր՝ և ցուցանէր զանձն իբրև 'ի դուշնաքէից սակի դնել զբանն։ Ապա տեսեալ զմեծապէս վրիպակ զԹշնամեացն, զի հետամուտ պնդեալք զատեան 'ի փաղանգէն և վայր արձակ 'ի միջոցին Թողին, եԹող զնոսա այնպէս արձակ արձակ հարուստ մի տարագէմ գնալ.

և անդէն փուԹանակի յարձակեցաւ 'ի վերայ մենացեալ փաղանգին Սպարտացւոց՝ շուրջանակի պատեալ պաշարեալ, մինչդեռ 'ի բացեայ կայր զօրավարն և փաղանգն ակն հրոսակին չունէր, այլ և զյաղԹուԹիւնն ինքնին կարծեաց տանել և խապառ զԹշնամին վանել՝ որոց հետամուտ իսկ էր Մաքանիդաս։

Անդանօր ապա Փիլոպիմէն ընկրկեալ զԼակեմոնացիսն, հարուածս մեծամեծս ածէր 'ի վերայ նոցա. քանզի և ասէն՝ աւելի քան չորից հազարաց յայնժամ տապաստ անկեալ. ապա խաղայր ընդդէմ Մաքանիդասայ՝ որ դարձ արարեալ գայր հանդերձ իւրովքն 'ի հետամուտ լինելոյն։ Իսկ էր անդանօր խրամ մեծ և խոր ընդ մէջ նոցա, և խաղային գնային կողմանք երկոքին առ ափամբն 'ի հանդիպոյ միմեանց. հնարս հնարէր Մաքանիդաս անցանել զխրամն և փախչել, և Փիլոպիմէն անդուստ խոչ ընդ ոտն լինէր նմա։ Եւ անդ էր ապա տեսանել զնոսա ո՛չ որպէս զօրավարս 'ի կռիւ մատուցեալ, այլ գազանաց նմանեալ վայրենեաց՝ ոլոր 'ի խուճապ տագնապին հզօրագոյնս կռուէսցին. յորժամ անդուստ Փիլոպիմէն՝ որպէս որսորդ քաջ 'ի վերայ կացեալ առն՝ գուն սաստիկ գործէր։ Յայնժամ երիվար բերեալ նաւորին յաղԹահարուստ և գոռ, ընդ քիրան և ընդ ապաժոյժ եկեալ 'ի կուշտսն 'ի մորակաց ասի և անոի, խրախուսեաց անցանել Ը հունն և քաջալանջ վազեալ ըզ

խրամուն՝ բուռն առնէր որ յառաջոյ սմբա-
կացն կռուէլոյ յամն 'ի Հանդիպոյ։ Իսկ
անդուստ Սիմմիաս և Պողիւէնոս անձնա-
պահապետք Փիլոպիմէնեայ և վահանա-
փակք նորա, այն ինչ 'ի վայր զգեղար-
դունսն առեալ 'ի հարկանել՝ միաբան յար-
ձակեցան, աճապարեալ Փիլոպիմէն ընդ-
դէմ Մաքանիդեայ՝ մինչդեռ երիվար նո-
րա գլուխ 'ի վեր ամբարձեալ էր 'ի հան-
դիպոյ նորա, ինքն վայրիկ մի զիւրն թե-
քեալ՝ ձօձեալ զնիզակն արձակեր սատ-
կութեամբ և թափ հարեալ զվիրաւոն ան-
դէն յերկիր թաւալէր։ Եւ յաղագս այ-
սորիկ ապա նմա պատկեր պղնձի 'ի Դելֆիս կանգնէին Ապայեցիք՝ 'ի տիպ նմա-
նութեան շահատակութեան այնմիկ, մե-
ծապէս հրաշացեալք ընդ ահագին գործ
քաջութեանն, և ընդ գեղեցիկ զօրավա-
րութիւն առն 'ի մարտին։

Եւ ասեն՝ եթէ 'ի հանդիպի Նեմեան
մրցանացն, և երկրորդ զայն նուագ զօրա-
վար բանակին կացեալ Փիլոպիմէն՝ ոչ շատ
ինչ զկնի Մանտինեան յաղթութեանն, 'ի
ոմնի անդ հանդէս առնէր նա առաջի
Հելլենաց զփառաց զիւրոյ փաղանգին 'ի
զէն և 'ի զարդ վառեալ. և տայր զօրակա-
նին անդանօր շուտափոյթս և յաղթս չա-
փաբերեալ զքայլսն գործել զկրթանացն
նոցա՝ ըստ իւրում դասաւորութեանն.
ապա 'ի հանդէս նուագաց քնարահարացն
մտեալ նա 'ի թատրոն անդր և ընդ իւր
պատանիք արկեալք զղինուորական քլա-

միգան և զծիրանի բաձկոնան, առհասարակ քաջառոյգք և ծաղկահասակք՝ պատկառ կացեալք իւրեանց զօրավարին, և զերիտասարդական աշխուժիցն զդէմսն բերեալք ձոիս և պերճ 'ի բաղմագէմ նահատակութեանց անսի իւրեանց, և մոեալ նոցա անդր՝ յորժամ ըստ գիպեաց Պիւղադէս քնարերգակ երգէր զՊարսան զՏիմոթէայ, սկիզբն առնելով եթէ "'Ի հոյակապն աստուածութեան զարդարեմ ես 'ի զարդ զմեծն Ելլադա". ասէն՝ եթէ յորժամ Պիւղադէս քաղցրութեամբ ձայնին տպաւորագոյնս ձշգրտէր զքերթուածոյն ազնուութիւն, անդանօր առհասարակ տեսարանն դարձաւ ակնկառոյց 'ի Փիլոպիմէն՝ ծափս նմա հարկանելով հրճուանօք. մեծապէս յուսային Հելլենացիք 'ի նորա ձեռն միւսանգամ վայելել 'ի վաղնջուցն իւրեանց աւագութիւն, և վայրիկ մի ևս զնոյն նահատակութիւն նահատակել իբրու զառաջինն:

Բայց 'ի մարտս և 'ի վտանգս՝ զոր օրինակ երիվարք տրմուղք սիրեն զբնակաւոր զիւրեանց վերելեակսն ունել, և թէ երբէք յօտարաց ոք 'ի նոսա աշտանակեալ լցէ, նոքա սրտառուչք 'ի վեր վազեն և ընդվզեալք հեստեն, սակայն և բանակ Ն.քայեցւոց առ այլովք զօրավարօքն անկանէր բեկանէր. այլ ապա ակնկառոյցք 'ի Փիլոպիմէն՝ տեսանելով միայն չափ զնա սրտապնդեալ քաջանայր, զօրավար զնա միայն դիտելով անկուուելն 'ի թշնամեաց,

յորոյ և 'ի փառաց և 'ի համբաւոյն սաբ-
սէին նոքա, որպէս և յայտնանգիմանու-
թեամբ ցուցին։ Քանզի Փիլիպպոս արքայ
Մակեդոնացւոց 'ի մոլի եդեալ՝ զի եթէ
զՓիլոպիմէն միայն 'ի միջոյ բարձցէ, ահրն-
կէց այնուհետև յԱքայեցիսն լինիցի,
առաքեաց գաղտաբար յԱրգոս արս
դաւել 'ի կենաց զՓիլոպիմէն. սակայն խայ-
տառակեալ հաղթիցն՝ վատ անուն առե-
լութեամբ ժառանգեաց Փիլիպպոս առ
ամենայն Հելլենացիս։ Իսկ յորժամ և
Բիովտացիք պաշարեալ նատէին զՄեգա-
բեաւ՝ ակնկալեալք անդէն տիրանալ քա-
ղաքին, անդանօր լուր յանկարծ զհամ-
բաւի հարեալ՝ թէպէտ և սուտ՝ եթէ Փիլո-
պիմէն առ դուրս հասեալ կայ զօրավիգն
քաղաքին, խուճապեցան և արագ արագ
թողեալ զանդուղսն՝ զոր ածեալ իսկ
էին 'ի պատուարսն, զոտս արձակեալ փախ-
էին տարադէմ։

Առ այս՝ և Նաբիդոս բռնաւոր Լակե-
դեմոնացւոց յետ Մաքանիդեայ՝ յեղա-
կարծումն կալեալ զՄեսսինէ, մինչդեռ 'ի
սոսկականաց ոք էր Փիլոպիմէն և չէր նորա
իշխանութիւն 'ի ձեռս, իբրև ոչինչ կարաց
սա հաւանեցուցանել զԱքայեցւոց զօրա-
վարն զԼիւսիպպոս յօգնութիւն Մեսսե-
նացւոց, իբրև ողջոյն քաղաքն առեալ էր
և թշնամեացն 'ի նեղս խուժեալ իսկ էր,
չոքաւ լինքնին Փիլոպիմէն 'ի Թիկունս նոցա՝
առեալ ընդ իւր զքաղաքացիսն միայն. որք
ոչ օրինաց մնացին և ոչ քուարկութեան

և ինքնահրամանք իշխանացուցին զՓիլոպի-
մէն, 'ի նոյն բերեալք 'ի բնութենէն՝ որ
ցանգ զհետ քաջի երթալ զօրավարի սա-
դրել բնաւորեալ է։ Արդ լուր զՓիլոպի-
մենեայ առեալ Նաբիդոս, ոչ հանդար-
տեաց զտեղն ունել՝ թէպէտ և զօրուն 'ի
նելքս 'ի քաղաքն հորդան տուեալ էր.
անձնապուր ընդ այլ դրունս քաղաքին ե-
լեալ արտաքս՝ չու վաղվաղակի հրամայէր
բանակին. մեծ համարէր զփախուստն, որ-
պէս և եղեն իսկ, և յաղաստութեան թո-
ղուր զՄեսենէ։

Եւ արդեօք են այդոքիկ գեղեցիկք
վասն Փիլոպիմենեայ. այլ ոչ նոյնպէս և
երթն նորա երկրորդ 'ի Գրետէ, հրաւի-
րեալ անդր 'ի Գորտինայեաց 'ի զօրավա-
րութիւն. քանզի սագիւտ զնովաւ արկա-
նէին յայնժամ, զի եթող ելնք նա զՀայ-
րենիսն՝ մինչդեռ Նաբիդոս մարտիւ առ
դուրս հասեալ էր՝ խոյս տուեալ ինքն
մարտ դնել կռուել 'ի վերայ հայրենեացն,
կամ թէ 'ի դժպատեհ ցանկութենէ փա-
ռաց և համբաւոյ բերեալ 'ի մէջ օտա-
րաց։ Եւ արդեօք նեղեալ յոյժ էին յայն-
ժամ Մեգալէպոլսեցիք, զի և ըստ պա-
տուարն իւրեանց ելանել իշխան չէին նո-
քա. և ստիպեցան ևս նոքա վարել սերմա-
նել և զանձուկս փողոցայ քաղաքին՝ գտա-
նել հաց. զի յաղարտ վարեալ էին անդք
նոցա 'ի թշնամեացն՝ որ բանակ հարեալ
նստէին առ դուրս նոցա. ուստի և յայն-
պիսում ժամանակի մարտ եղեալ Փիլո-

պիմէն ընդ Կրետացիս՝ զօրավար կացեալ օտար բանակի որ յայնկոյս ծովուն, տեղի ետ ամբաստանութեան անձինն՝ իբրու խոյս տուեալ 'ի մարտէ իւրոյ դաւառին։

Սակայն և կէսք ասեն, եթէ այլք յայնժամ յԱքայեցւոց ընտրեալք 'ի զօրավար և Փիլոպիմէն կացեալ ընդ սոսկականս, ոչինչ կամեցեալ կալ դատարկ, ելեալ դընայր 'ի զօրավարութիւն Գորտինացւոց 'ի հրաւիրմանէ նոցա։ Քանզի և բնաւ իսկ օտար էր այրն 'ի դատարկ կենաց, և իբն դրէր որպէս զայլն ամենայն որ 'ի պէտս, սակպէս և զզինուորականն և զզօրավարութեանն ցանդ 'ի գործ արկանել. ըստ որ ոչ ում և յայտ առնէր բանիւն վասն Պտղոմեայ արքայի։ Քանզի 'ի գովութիւն առեալ զսա կիսոցն երբեմն վասն հանապազորդեայ կրթանաց զօրականին նորա. և զի՝ և զիւր մարմինն ինքնին արքայն փոյթ վարժէր աշխատասիրաբար 'ի զէնս, ետ պատասխանի Փիլոպիմէն և ասէ. "Իսկ ո՞ զք զարմացի երբէք ընդ այր թագաւոր, որ յայնպիսու

րա։ Իսկ անդուստ Փիլոպիմէն տեսեալ զլքանելլ իւր 'ի քաղաքացեացն, աւանս բազում զշրջակայս դրդեաց 'ի վտարանջուելիւն. սադրէր նոցա՝ եթէ անդ 'ի նախնու

կարգեալ Փիլոպիմէն և միջամուխ 'ի նաւամարտութիւն եղեալ, գրեա՛ եթէ իբրու զԵպամինոնդասն ձախողակին և ինքն հանդիպէր բաղդի, նուազեալ յոյժ 'ի փառաց և 'ի համբաւոյ քաջութեանն. քանզի նկուն եղեալ կորանայր 'ի ծովամարտին։ Թէպէտ և կէսք ասեն՝ եթէ խիթացեալ Եպամինոնդեայ՝ գուցէ Ճաշակս առեալ իւրոց քաղաքացեացն զշահուց ծովուն՝ փոխանակ սպառազինացն եռեղակալաց՝ ըստ Պղատոնին, դարձցին և էղիցին նոքա ծածուկ 'ի նմանէն նաւասոիք և սխտակիրք. վասն որոյ և ինքնակամ առանց ինչ գործս վճարելոյ դարձ առնէր նա յԱխոյ և 'ի կղզեաց անտի։ Այլ Փիլոպիմէն այնպէս ինն կարծեալ եթէ զինուորութիւն իւր 'ի ցամաքին՝ շատ և առ ծովականն իցէ նմա՝ կռուել քաջութեամբ, քա՛ջ իսկ խելամուտ եղև եթէ կրթութիւնն և փորձ քանիսն իցէ նպաստ առ առաքինութիւնն, և քանիսն իցէ զօրութիւն նորա յամենայն իսկ իրս։

Քանզի և ո՛չ միայն նկուն եղեալ պարտեցաւ նա 'ի նաւականին, այլ և մեծապէս յանցեաւ՝ քարշեալ 'ի ծով նաւ մի յաղթահարուստ, սակայն հնացեալ և զամն քառասուն այնպէս լքեալ ամայի, և 'ի նմա ամբարձեալ զքաղաքացիսն. որ և ո՛չ հանդարտեալ կալ յակաստանի՝ 'ի վերանդս մեծամեծս այնուհետև արկանէր զնաւամուտ քաղաքացիսն։ Իբրև գիտաց Փիլոպիմէն՝ եթէ այնպէս ծանակեալ ար-

համարհեցաւ նա 'ի Թշնամեացն, զի և համբուն 'ի ծովէն այնուհետև 'ի բաց խուսեսցէ, և լուր էառ զի նոքա Ճոխաբար զտեղի կալեալ՝ կան 'ի պաշարման Գիւթիոյ 2, ամբարձեալ վուրթանակի 'ի նաւ՝ դէմ եդեալ խաղայր 'ի վերայ նոցա յանակնկալ ժամու՝ որք յանհոգս ասա անդ վարատեալ կային՝ խբրու զյաղթութիւնն տարեալք. իսկ նա գիշերի թափեալ 'ի ցամաք զզօրականն, հրձիգ լինէր 'ի վրանս Թշնամեացն և հրդեհակէզ առնէր ողջոյն զբանակն, և հարուածս ևս 'ի վերայ հասուցանէր նոցա:

Ա՛ՅԼ յետ սակաւ աւուրց յեղակարծումն ընդառաջ նմա ելեալ յուզլոջ Նաբիդոս 'ի գժուարս լինչ վայրաց, և ահաբեկ զԱ.քայեցիսն արարեալ և յուսակտուր՝ ապրել 'ի գժուարիցս անտի զոր կալեալ իսկ էին Թշնամիքն, անդանօր վայրիկ մի զտեղի կալեալ Փիլոպիմէն զակն յածեալ և մանր զվայրսն զննեալ, յայտ արար՝ եթէ հմտութիւն դասաւորութեան զօրու՝ ծայր և պսակ է արուեստի զինուորականին: Քանզի անդէն սուղ լինչ դարձուածով զձև փոխեալ զփալանգին, այնպէս իմն յարեաց յարմարեաց զնա վայրացն, զի և անչափոթ դիւրեաց ողջոյն տագնապին՝ յոր պաշարեցաւ զօրականն. ապա և 'ի վերայ յարձակեալ Թշնամեացն 'ի խուճապ տագնապի արկանէր զնոսա: Իբրև ետես զի ոչ դէպ ուղիղ 'ի քաղաք անդր փախուցեալ գնային, այլ ցան և ցիր

ատ անդ ընդ գաւառն անտառախիտ և լեռնուտ, որ անկոխ ևս էր յայրուձիոյն առ 'ի գետոց հոսանացն և 'ի ձորոցն, արգել զիւրսն լինել հետամուտ, և բանակ հարեալ նստաւ նախ քան զերեկոյն։ Անդանօր մոսախորհ եղեալ՝ գուցէ գիշերի փախստեայքն մի մի և երկու երկու ապաւինեսցին 'ի քաղաքն, առեալ դարանամուտս առնէր առ վտակօքն և առ բլրօքն շուրջ զքաղաքաւն արս բազումս յԱքայեցւոց վառեալս 'ի դաշոյն. և յաջողէր նոցա շատ զոք 'ի Նաբիդեանցն կոտորել, որք ո՛չ 'ի միասին՝ այլ օձտեալք այնպէս և ցանեալք մի զմիոյ կնի անկան Թակարդեցան 'ի Թշնամեացն ձեռս իբրև Թըռչունք 'ի վարսն ըմբռնեալք շուրջ զքաղաքաւն։ Ապա վասն այսոցիկ ըղձակաԹ առ Փիլոպիմէն Հելլենացւոցն եղեալ, և 'ի Թատերսն շուք առանձինն տուեալ նմա, անդուստ Տիտոս 'ի պատուասիրուԹենէն վայր մի սրանէր. քանզի և ինդրէր իսկ՝ իբրև հիւպատոս էր Հռոմայեցւոց՝ շուք յԱքայեցւոց առնուլ առաւել քան զայր մի Արկադացի, որում ո՛չ փոքու ինչ վեհադոյն գնէր զանձն՝ զի և բարեգործ լեալ էր ինքն առ նոսա. քանզի և միով հրովարտակաւն յանդորր ազատուԹեան եհան նա ողջոյն զմասն զայն Ելլադայ՝ զոր գրաւեալ ունէին Փիլիպպոս և Մակեդոնացիք։

Իսկ յետ այնորիկ վճար եղեալ մարտին՝ խաղաղուԹիւն առնէր Տիտոս ընդ

Նաբիդեայ, զոր և ապա մատնութեամբ սպանանէին Եւողացիք։ Յայսմանէ աղմուկ շփոթից յուզեալ 'ի Սպարտիա, դէպ ժամանակ գտեալ Փիլոպիմէն գիմեաց անդր հանդերձ զօրու, և զկէսս 'ի քաղաքացեացն բռնի, և զկէսս՝ հաւանական բանիւք ածէր 'ի միաբանութիւն Աքայեցւոց։ Այսորիկ այսպէս եղելոյ՝ սքանչելապէս ապա համբաւ Փիլոպիմենեայ յորդեաց յԱքայիա, զի զայնպիսի քաղաք աւագ և հարուստ յաւել 'ի նոսա. և արդեօք ո՛չ դուշնաքեայ ինչ էր՝ զի Լակեդեմոնիա համարեսցի մասն Աքայիոյ։ Առ այս՝ և զլաւ և զաւագ որեալ զԼակեդեմոնացւոցն յինքն յանդուցանէր Փիլոպիմէն. զոր և պահապան իւրեանց ազատութեանն կալեալ, զտուն և զդոյս զամենայն զնաբիդեայ 'ի վաճառ հանեալ և քանքար հարիւր և քսան կուտեալ անտի՝ վճիռ տային ձօն պարգևաց առնել Փիլոպիմենեայ՝ առաքեալ առ նա հրեշտակս։ Յորում և յայտնի ցուցաւ՝ զի անարատ այն այր ո՛չ կարծեալ միայն, այլ և էր խակ արդարև աւագ այր և անկաշառ. քանզի զառաջինն 'ի Լակեդեմոնացւոց և ո՛չ ոք կամեցաւ երթալ խօսել ընդ նմա վասն պարգևացն, այլ առհասարակ զանդիտեալք տեղի տային 'ի բանէն, մինչև ապա սահմանեցին արձակել առ նա զՏիմոդայոս 'ի հիւրոց անտի նորա։

Այլ սա հասեալ 'ի Մեգաղէպոլիս և մեծապէս հիւրընկալեալ 'ի Փիլոպիմենեայ,

դէտ ակն կալեալ զնոսէր զպերճ քաղաքավարութիւն զառն, զպարկեշտութիւն կերակրոցն, և զբոյս բարուցն, որով և հպիլ անգամ յարծաթ նա չառնոյր յանձն՝ թող թէ կաշառաբեկ լինել. ուստի և համբաւն լուեաց վասն բանի պարգևին, և կեղծաւորութեամբ յայլ պատճառս հանեալ ըզհրեշտակութիւնն, դարձաւ՝ որպէս էկն։ Բայց և երկրորդ անգամ արձակեալ առ նա, նոյն պատասխեցաւ. հուսկ ապա յերիր նուագին ժամեցաւ խօսել, և 'ի նեղքս նմա ընծայէր զըղձակաթ զկիրս քաղաքին առ նա։ Իսկ Փիլոպիմէն լուեալ քաղցրութեամբ զբանն, ինքնին յարուցեալ ջղբաւ 'ի Լակեդեմոնիա, և պարապեալ՝ խորհուրդ տայր քաղաքացեացն, մի 'ի պարգևս երբէք ընդրել յանգուցանել զոգիս բարեկամաց բարեաց, յորոց և յարգասիս առաքինութեանն նոցա ձրի իսկ վայելել պարտ է նոցա. այլ վարել զնոյն զպարգևսն 'ի խայծ և յորս արանց չարաց և խաղմարարաց քաղաքին, և կաշառաբեկ խնուլ զբերանս նոցա և հանգարտել 'ի կրիցն. քանզի և լաւ ևս արդեաք քան զբարեկամացն՝ առաւել զթշնամեացն սանձել զաղատաբերան զնոսան։ Այսչափ մեծանձն էր նա առ արծաթով։

Այլ յետ այնորիկ լուր առեալ Դիոփանէս զօրավար Աքայեցւոց, զի միւսանգամ խլրտիլ մտաբերէին Լակեդեմոնացիք, խնդրեաց պատուհաս 'ի վերայ ածել նոցա, մինչդեռ նոքա 'ի մարտս պատրաս-

տեալք՝ վեր 'ի վայր առնէին զՊեղոպոննեսոս։ Բայց Փիլոպիմէն ողոքեաց զԴիոփանէս ուշ ունել 'ի ժամուն՝ զի Անտիոքոս և Հռոմայեցիք առ դուրս Եղեդայ զօրու ծանու հասեալ կան, և մի յընտանիս անդր աղմուկ յուզել, և թէ և ինչ մի վրիպակ գործեալ իցեն՝ անգիտութիւն կեղծաւորել։ Իբրև ունկն նմա չմատոյց Դիոփանէս և միամտեալ ընդ Տիտոսի մեկեցաւ թշնամութեամբ 'ի Լակոնիա, և յառաջագէմ ևս խաղայր 'ի Նէրքս, 'ի ցասումն բրդեալ Փիլոպիմէն և ձեռն արկեալ 'ի գործ մի՝ ոչինչ օրինաւոր եթէ քաջ զննեացես՝ և ոչ արդար արդեօք, սակայն մեծ և արիական յոյժ, անց չոքաւ 'ի Լակեդեմոնիա, իբրև 'ի սոսկականաց ոք էր նա. և արդել կնքեաց անդանօր զմուտ զօրավարին Աքայեցւոց և զՀիւպատոսին Հռոմայեցւոց. զիջոյց հանդարտեաց ողջոյն զաղմուկ քաղաքին, և անդրէն զԼակեդեմոնացիսն առեալ յանգուցանէր 'ի հաստարակ միաբանութիւնն իբրու զառաջինն։

Բայց յետ այսորիկ կացեալ Փիլոպիմէն զօրավար, և պատճառս ինչ առեալ զսրտմտութեան ընդդէմ Լակեդեմոնացւոց, դարձուցանէր 'ի Սպարտիա զվտարանդեալսն. և տայր 'ի մահ վարել՝ ըստ Պոլիբիոսի՝ ոգիս ութսուն 'ի Սպարտացւոց. իսկ ըստ Արիստոկրատեայ՝ երեքհարիւր և յիսուն. և քակէր տապալէր զպատուարս նոցա, և հատեալ շատ ինչ 'ի նոցա գեանոյն, առեալ յաւէլսր 'ի Մեգաղէպոլսէ

ցիս անդր. առ այս՝ և զորս միանգամ 'ի քաղաքացիս Սպարտիոյ գրեալ իսկ էին բռնաւորք՝ չուոյ հրաման տայր նոցա յԱ-քայիա, բաց յերիից հազարացն՝ որոց ոչ կամեցեալ անսալ, հանէր զնոսա 'ի վաճառ. և 'ի գնոյն՝ երբու ոսնհար եղեալ նոցա՝ կանգնէր սրահ մի 'ի Մեգաղէպոլիս. ապա և 'ի լրումն ատելութեանն ընդդէմ Լակեդեմոնացւոց և բնաւ իսկ յառաթուր կոխեալ զնոսա՝ Թէպէտ և նոքա նկունք վաղմբերք եղեն արտաքոյ արժանեաց, գործ մի գործեաց անագորոյն յոյժ և անիրաւ ընդդէմ քաղաքաւորութեան նոցա։ Քանզի եղծանէր աղաղտեր զորէնս կարգին զԼիկուրգեայ, և հարկ 'ի վերայ ածէր մանկանց և պատանեացն փոխան հայրենականին՝ առնուլ դաստիարակութիւն Ա-քայեցի՝ երբու ոչք ցորչափ յօրէնսն յայն կայցեն Լիկուրգոսին, երբէք նոքա խոնարհագոյնս ինչ չխորհեացին զանձանց։ Եւ այնպէս յաղէտս անհնարինս յայնժամ պաշարեալ Սպարտացիք 'ի հարկէ անտի Փիլոպիմենեայ՝ երբու որ զՔղեն գովին զքաղաքին Իւրեանց հարեալ վատթարեր, հեզացեալք ընկճէին. այլ ապա ժամ գտեալ և թախանձ արկեալ Հռոմայեցւոց՝ թողին լքին զԱքայեանն քաղաքականութիւն, և միւսանգամ 'ի բուռն արկեալ հաստատէին զհայրենատուր կարգսն ըստ բաւականին՝ ոգի առեալ յամբաւ աղէտից անտի Իւրեանց և 'ի կրից։

Բայց 'ի ժամանակի մարտի պատերազմի

Հռոմայեցւոց ընդ Անտիոքոսի յԵլլադա, էր Փիլոպիմէն 'ի սոսկականաց անտի. և տեսեալ նորա՝ զի Անտիոքոս զտեղի կալեալ 'ի Քալկիդէ պարապորդ դէգերէր 'ի տօնս հարսանեաց և 'ի սէր կուսից 'ի տարաժամ հասակին, անդուստ և Սիւրացիք խառնակեցիկք և զատեալք 'ի զօրավարէն Թափառեալ գնային ընդ քաղաքս և ստահակէին, յոյժ ցաւէր առն՝ զի չէր 'ի ժամուն Աքայեցւոց զօրավար, և ասէր խանտալ զյաղթութիւնն Հռոմայեցւոց. "Զի թէ իմ կացեալ էր՝ ասէր՝ այժմ զօրավար, զդոսա առհասարակ ընդ սուր հանէի 'ի Կապելայս իւրեանց": Իսկ յորժամ 'ի պարտութիւն մատնեցին Հռոմայեցիք զԱնտիոքոս, և զօրացան յԵլլադա և պաշարումն ածէին Աքայեցւոց և յանգուցին ևս զՀռեթորս խուժանին, և յաստուածակողմանէն ձգէր տարածէր յայնժամ զօրութիւն նոցա 'ի ծայր անդր աւագութեան՝ յոր ածեալ ձգէր բաղդն հոսանուտ, յայնժամ Փիլոպիմէն իբրև ղեկավար ճարտար կռուեալ ընդդէմ ամենի ալեացն՝ թէպէտ և ուրեք տեղի տուեալ խոնարհէր ժամանակին, սակայն և բազում ինչ իրաց ընդդէմ դարձեալ՝ գուն գործէր յաղաստութիւն հանել՝ զորս աւաւել վեհք էին 'ի բանս և 'ի գործս: Իսկ իբրև անդանօր Արիստենետոս Մեգալոպոլսեցի՝ այր աւագամեծար ԱՔայեցիս՝ ցանգ կուսակից Հռոմայեցւոց խօսէր յատենի մի ինչ Աքայեցւոցն ընդ-

դէմ դառնալ Հռոմայեցւոց անշնորհ-
կալու մոռք, պատմեն՝ եթէ լուեալ զայն
Փիլոպիմէն զառաջինն լուռ կայր՝ թէպէտ
և զայրագին ոգւով. այլ հուսկ ապա չհան-
դուրժեալ և լի ցասմամբ ասէր առ նա.
"Եւ զի՞ է քո այր դու՝ այդչափ շտապել
տեսանել զօրահան զԵլլադայ":

Այլ յորժամ Մանիոս հիւպատոս
Հռոմայեցւոց պարտեալ զԱնտիգոնոս՝
խնդրէր յԱքայեցւոց զդարձ վտարան-
դեացն Լակեդեմոնացւոց, զնոյն ժողէր և
Տիտոս. ընդդէմ եկաց Փիլոպիմէն ոչ առ
թշնամութեան ինչ տարագրելոցն, այլ զի
յիւր ձեռն և յԱքայեցւոց կամէր վճա-
րել բանին, և ոչ 'ի Տիտոսին և 'ի Հռո-
մայեցւոցն. ուստի և 'ի գալ տարւոյն կա-
ցեալ ինքն զօրավար, ինքնին զվտարան-
դեալսն դարձուցանէր: Եւ զայս վարէր
նա օրինակ առ հպարտութեան ոգւոյն՝
ընդդէմ դառնալ իշխանութեանց և 'ի վէգ
դալ:

Այլ ամաց եղեալ նա եօթանասնից և
կարդեալ զօրավար Աքայեցւոց զայս ու-
թերորդ անգամ, ակն ունէր ոչ անկուիս
միայն զժամանակն զայն անցուցանել, այլ
և բնաւ խակ յանդորրու և 'ի խաղաղու-
թիւն կալ այնուհետև զնշխարեալ կեանն:
Քանզի զորօրինակ 'ի վատել մարմնոյն բնա-
ւորեցան և ախտքն վատել, սակայն 'ի քա-
ղաքն Եղլադայ 'ի նուազել ուժոյն՝ նուա-
զեր և ցանկութիւնն կռուոյ պատերազմի:
Այլ սակայն և 'ի Քաջաց ոմն խեթացե-

ԼՈՅ՝ հար կործանեաց զՓիլոպիմէն իբրու զըմբիշ քաջընթաց՝ 'ի ծիր սահմանի կենացն նորա։

Քանզի պատմէն եթէ ուրեք յակմբի 'ի գովել բաղմականին զայր ոք իբրև զօրավար քաջ և առաքինի, կրկնեաց Փիլոպիմէն և ասէ. "Եւ զիա՞րդ ապա գովութեան ինչ այրդ, որ կենդանւոյն ձերբակալ 'ի Թշնամեացն եղև 3։ Եւ եղև յետ աւուրց՝ գուժկան հասանէր եթէ Դինոկրատէս Մեսսենացի այր ոխերիմ Փիլոպիմենեայ, և առելի ամենեցուն վասն չար և զեղխ կենացն, ապստամբեցոյց զՄեսսենէ յԱքայեցւոց, և առ գուրս կայ հասանել ունել զաւանն Կոդոնիդա անուն։ Էր յայնժամ ըստ գիպաց Փիլոպիմէն յԱրգոս խօթացեալ ջերմամբ. 'ի լուր գուժին շտապաւ ջոքաւ 'ի Մեգալէպոլիս՝ ասպարէզս առելի քան զչորեքհարիւր ընթացեալ 'ի միում աւուր. առեալ անտի զայրուձին իւր հոյակապ 'ի պատանեաց անտի քաղաքացեաց՝ 'ի փառս և 'ի սէր Փիլոպիմենեայ ինքնակամ նահատակեալք ընդ ձեռամբ նորա, անդէն չու առնէր խաղայր ընդդէմ ապստամբացն դէպ ուղիղ 'ի Մեսսենէ։ Անդ պատահեալ Դինոկրատեայ մերձ 'ի բլուրն Եվանդրոն, 'ի դիմի հարեալ միմեանց՝ 'ի փախուստ դառնայր Դինոկրատէս։ Այլ անդէն իբրև 'ի վերայ խուժեցին զօրականք հինգ հարիւր՝ պահանորդք երկրին, և 'ի նոյն յայնժամ և փախստականքն միւսանգամ խմբեցան 'ի բլուր

անդր, երկեաւ Փիլոպիմէն եթէ 'ի նեղքս փակեսցի. խնդրէր ապրեցուցանել զայրուձին իւր և տեղի տայր ընկրկէր ընդ դժուարս և ընդ առուպարս վայրաց՝ յանձանձեալ զկաց և զմնաց զօրականին. և դառնայր ինքն ստէպ և դիմէր 'ի Թշնամին՝ խնդրէր ախոյեան ընդդէմ իւր առնուլ զնոսա. որք և վատացեալք 'ի դիմի հարկանել նմա, բացէ 'ի բաց շուրջանակի զնովաւ վազս առեալ ընթանային բարձեալ աղաղակ մեծ։

Իբրև այսպէս ստէպ ստէպ որոշեալ նա յիւրոց պատանեացն, զնոսա մի առ մի յառաջ արձակեալ և յանդորր հանէր, մնայր ապա ինքն միայնակ՝ ոչինչ միտ եդեալ՝ փակեալ 'ի խռան Թշնամեացն. սակայն և նահատակեցաւ և ոչ ոք 'ի վեգ գալ ընդ քաջին. այլ 'ի բացուստ հարուած մի առեալ Փիլոպիմէն, տագնապեցաւ գնալ ընդ ափափայս մեծ և ընդ անկոխս, և դըժոխըմբերս վարէր նա յայնժամ զերիվարն և զոգին քաղէր և հարեալ վիրաւորէր։ Եւ արդեօք նմա ոչ ծերութիւն հասակին ստնանէր առ գեղեցիկ կրթութեամբ մրցանացն և ոչ խոչընդոտն լինէր փրկութեան նորա, սակայն նորա վատեալ էր մարմինն առ խօթութեանն և խոնջ և պարտասեալ էր յուզոյն, զի և ծանրաքայլ յոյժ և դանդաղ զոտն յոտանէն փոխել դժուարէր. և երիվարին ևս յայնժամ գթեալ՝ անկանէր յերկիր Փիլոպիմէն զանկուսն դժուարին, զի և հարեալ ջաղխե-

ցաւ գլուխն. և այնպէս հարուստ ժամանակ տապատ կայր լուռ անշշունչ, մինչև թշնամեացն կարծեալ եթէ մեռաւ Փիլոպիմէն՝ եկեալ թաւալգլոր զմարմինն առնէին կողոպտել զնա։ Իբրև նա զգլուխն ամբարձեալ եբաց զաչսն, նոքա միախուռն 'ի վերայ անկեալ՝ յետս կոյս առեալ կապէին զձեռսն և այնպէս ածէին զքաջն լուսանոք և թշնամանոք, զի և ոչ յերազի անգամ մնայր նա արդեօք այնչափ ոտնհարութեանն 'ի Դինոկրատեայ։

Բայց իրազգածք բանին 'ի քաղաքաց քաղաքաց բնակիչք մեծապէս զուարթացեալք և հպարտացեալք՝ խուռն ընթանային առ դուրսն. և տեսեալ զՓիլոպիմէն յայն կերպարան ածեալ՝ դժպատեհ իւրոց փառացն և գեղեցիկ նահատակութեանցն և յաղթական ախոյենիցն, անդանօր բազումք ախտակիցք կարեկիցք գոբռվեցան, զի և յարտասուս հատանէին. և անգոնեալ խոտէին այնուհետև զմարդկեղէն զօրութիւնն իբրու դաւաճան անհաւատարիմ և պիտակ անուն։ Եւ էր անդ լսել առհասարակ զնմանէ բանս բարեաց և մարդասիրութեան և գորովոյ, անմոռաց զնորա բարին առ նոսա յուշի կապեալք և զաղատութեանն զնորս՝ զոր ինքնին Փիլոպիմէն ազատեաց զնոսա՝ վանեալ ըզՆաբիդոս բռնաւոր։ Էին էին անդ և նուազուն ոմանք, որ 'ի շնորհս Դինոկրատեայ ինդրէին 'ի խոշտանգանս տալ զՓիլոպիմէն և 'ի մահ վարել՝ իբրու անհաշտ թշնամի.

որ անձնապուր երբէք եղեալ՝ արհաւիրս այնուհետև 'ի վերայ ածցէ Դիոնոկրատեայ մեծամեծս վասն այնչափ ոտնհարութեան։ Բայց առ ժամն ածեալ զնա 'ի տեղի մի զոր Թէոսուրոն կոչէին՝ վայր ստորերկրեայ անբաժ յօդոց և բնաւ իսկ անլոյս, որոյ և դուռն չէր, այլ վէմ մի մեծ թաւալեալ՝ խնուվին զմուտն. անդ ածին զՓիլոպիմէն, և զվէմն 'ի վերայ բերեալ փակեցին, և արս սպառազէնս առ տեղեաւն 'ի պահ կացուցանէին։

Իսկ այրուձին Փիլոպիմենեայ յանդորր եղեալ, և ոչ ուրեք զնուրեանց զօրավարն տեսեալ, համարեցան անշուշտ եթէ մեռեալ իցէ. սակայն և հարուստ ժամանակ զտեղն կալեալք այնպէս 'ի ձայն բարձր կոչէին կարդային զՓիլոպիմէն, և առ միմեանս դարձեալ բարբառեալք ասէին, ընդ վայր ուրեմն այնուհետև և անարգաբար իցէ փրկութիւն նոցա՝ այնպէս զնուրեանց զօրավարն 'ի ձեռս թողեալք թշնամւոյն, որ զանձն 'ի կշիռ եդ նահատակեալ 'ի վերայ նոցա։ Եւ ապա յառաջ ևս ընթացեալք և տարփմամբ հետախոյզ մանրայոյզ եղեալք, 'ի վերջէ ուրեմն լուր առեալք զձերբակալ լինելոյն, յայսկոյս յայնկոյս ընթացեալք հռչակ հարկանէին զբանն ընդ քաղաքս քաղաքս Աքայեցւոց։ Նոքա անհնարին համարեցան զաղէտսն, և խմբեցան կարգեցին 'ի խորհրդեան առաքել հրեշտակս և խնդրել զՓիլոպիմէն 'ի Մեսսենացւոց անտի, 'ի նոյն և 'ի մարա

պատերազմի կազմեցան վառեցան։ Զայս ինչ արարին Աքայեցիք. իսկ անդուստ Դիոնկրատէս մեծապէս զանգիտեալ՝ եթէ երբէք ժամանակին դեգերանք փրկութիւն առնեսցեն Փիլոպիմենեայ, ածապարեաց կանխեաց քան զենդիր և զհաղալ Աքայեցւոց։ Իբրև գիշերն 'ի վերայ հասանէր և ամբոխ Մեսսինացւոցն 'ի բաց փարատէր, ետ բանալ զաղջամղջեան զբանտն. յղեաց 'ի նեղքս զպաշտօնեայ քաղաքին՝ 'ի ձեռս բարձեալ զթոյնն. հրաման տայր նմա մատրուակել Փիլոպիմենեայ, և անդէն պահ ունել մինչև ցարբու

ժամ տուեալ գեղոյն բռնութեան, իսկ և իսկ անչնչանայր յայնժամ Փիլոպիմէն առ մեծի տկարութեանն։

Իբրև լուր մահուն գուժեալ տարածեցաւ առ Աքայեցիս, 'ի թաղծութիւն մեծ և յողբ և յաշխար պաշարեալ նստան քաղաքք առհասարակ։ Յայնժամ ամենայն մարդ յարբունս հասեալ՝ միահամուռ ընդ աւագ խորհրդականացն եկեալ ժողովեցան առհասարակ 'ի Մեգաղէպոլիս, և անդէն արագ արագ խնդրէին հանել զվրէժ քինուն. կարգեալ Իւրեանց զօրավար զԼիւկորտաս՝ հորդան եառուն 'ի Մեսսինէ. քանդէին աւերէին զգաւառն, մինչև խորհուրդ գեղեցիկ 'ի մէջ առեալ քաղաքացիք՝ հաստատեցին առնուլ ժողովել զնոսա 'ի նեղքս, և յայնժամ աճապարեալ Դիոնկրատէս գնայր զիւրովին։ Իսկ որք միանգամ խորհուրդ եառուն մահուն Փիլոպիմենեայ, սպանան նոքա յԱքայեցւոց անտի. և որք 'ի խոշտանգանս տալ խնդրեցին զնա, ձերբակալք 'ի հրամանէն Լիւկորտասայ՝ կոտանոք չարչարեցան։

Ապա զմարմինն այրեալ զՓիլոպիմենեայ և զնշխարսն հանգուցեալ 'ի սափորի, յարեան Աքայեցիք և 'ի չու անկանէին՝ ոչ անկարգս և խառն 'ի խուռն, այլ միահետք միաքայլք իբրև 'ի յաղթանակի հանդէս և 'ի յուղարկաւորութեան։ Քանզի էր իսկ տեսանել զնոսա յայնժամ բոլորեալս պսակաւ, միանգամայն և արտասուալից. անդ և զթշնամին կորաքամակ

ածեալս ձգեալս 'ի շղթայս. անդ և զսա-
փոր մոխրոյն 'ի խիտ վարսակալաց և 'ի
պսակաց ծածկեալ, զոր բարձեալ բերէր
պատանին Պողիւբիոս 4 որդի զօրավարին,
և զնովաւ շուրջ աւագք Ա.քայեցւոց, և
զկնի զօրականք 'ի զէն 'ի զարդ վառեալք՝
յերիվարս զարդարեալս, ոչ գլխովին թաղ-
ծեալք սրտառուչք 'ի կոծ մեծ, և ոչ ա-
մենևին զուարթք և բարձրապարանոցք 'ի
յաղթութիւն գեղեցիկ։ Իսկ 'ի քաղաքաց
քաղաքաց և յաւանաց որ 'ի միջոցին՝ ե-
լանէին գունդ գունդ ընդառաջ նշխա-
ռացն Փիլոպիմենեայ, ըստ որում և բնա-
ւորեալ իսկ էին նոքա յառաջագոյն ընդ
առաջ գալ ժողովել զնա՝ յորժամ 'ի
մարտից նահատակութեան դարձ արարեալ
գայր Փիլոպիմէն. և եկեալ հուպ շուշա-
փէին զսափորն, և յուղարկաւորք լինէին
մինչև 'ի Մեգաղէպոլիս։ Իսկ իբրև անդա-
նօր եկեալ խմբեցան և ծերունեաց դաս և
մանկանց երամ և կանանց ժողով, ձայն
կոծոյն բարձրանայր ողջոյն 'ի բանակին և
ողբ և աշխար մեծ, և երթայր յառաջա-
ցեալ ձայնն մինչև 'ի քաղաք անդր. ան-
դուստ և քաղաքն դառնապէս հեղոյր զգեր-
արտօսրն ընդ մահ քաջին՝ ոչինչ հան-
դուրժեալ անհնարին վշտին. տեսանէր
միանգամայն 'ի մահուն նորա և զինքն
խրթնացեալ 'ի բարձերէց փառացն Ա-
քայիոյ։ Ապա առեալ շքով թաղէին զնա,
և անդ շուրջ զշիրմաւն նորա քարկոծ առ-
նէին զգերին 'ի Մէսսինացւոց անտի։

Բայց քանզի և պատկերք բազում կանգնեցան նմա, և բազում շուք պատուոյ քաղաքն սահմանեաց նմա, անդուստ այր ոք Հռոմայեցի գուն գործէր 'ի ժամանակի ընդ աղէտիցն Ելլադայ որ 'ի Կորնթոս՝ 'ի միջոյ 'ի բաց բառնալ զայն ամենայն, և հալածել զՓիլոպիմէն ամբաստան կացեալ իբրև զչարարուեստ Թշնամւոյ Հռոմայեցւոց, որպէս եթէ տակաւին կենդանի լցէ այրն։ Սակայն ամբաստան չարախօսին ընդդէմ դարձեալ Պոլիբիոս յաղթահարէր. որպէս զի և ոչ Մոմմիոս և ոչ պատուիրակքն երբեք յանձն առին այնուհետև աղարտել ինչ 'ի փառաց քաջի առն, թէպէտ և ոչ սակաւ նա ընկիճեալ իսկ էր ընթացիցն Տիտոսի և Մանիոսի. սակայն նոքա յայնժամ խաւիր արկանէին ընդ պէտան և ընդ առաքինութիւնն, ընդ գեղեցիկն և ընդ օգտակարն՝ ուղղապէս և վայելուչս. քաջապէս զմտաւ ածեալք՝ եթէ ցանգ փոխարինի և շնորհակալու մտաց պէտք ի ցեն բարերարելոցն առ երախտաւորսն, և զի ցանգ պատիւ առցեն լաւք 'ի լաւաց։

Ա յաչափ ինչ յաղագս Փիլոպիմենեայ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Պլուտարքոս կոչէ զայս կարգ դասաւորութեան Σπύρα. այս է՝ Ոլորտաձև, պարոյրաձև։ Այլ մեկնիչք ոչ ունին համոզէն 'ի վերայ կալ այսօրինակ դասաւորութեան զինուորականին։

2. Գիւրիա, էր Զինարան և նաւահանգիստ Սպարտիոյ, ոչինչ հեռի 'ի քաղաքէն։

3. Որ զայս ասաց՝ և նմա գլխովին նոյն պատահեցան դէպք յետ սակաւուց։

4. Սա այս է երևելին Պողիբիոս պատմագիր. լեալ յայնժամ իբրև ամաց քսան և երկուց։

ՏԻՏՈՍ ԿՈՒԻՆՏԻՈՍ ՓԼԱՄԻՆԻՈՍ

ԻՍԿ զոր 'ի կշիռ համեմատութեան ձգեմք այժմիկ ընդ Փիլոպիմենեայ, այն է՝ Տիտոս Կուինտիոս Փլամինիոս։ Եթէ որ՝ սկսի ինչ արդեօք դէմք կերպարանաց ի՝ ցեն առն, գոյ աւագիկ կամեցողացն զնա տեսանել 'ի պինձի անդ պատկերի՝ որ 'ի Հռոմ կանգնեալ կայ առընթեր մեծին Ապողոնի՝ որ 'ի Կարքեդոնէն՝ 'ի հանդի՝ պոյ ձիրնթացիցն՝ հանդերձ հելլենական արձանագրութեամբք։ Բայց ըստ բուսոյ բարուցն ասեն զՏիտոս զայս՝ վառ և բոր՝ բոք, ոչ 'ի սրամտութիւն միայն, այլ և 'ի շնորհաբաշխութեան. սակայն ոչ զնոյն օ՝ րինակ յերկոսեանն. այլ 'ի պատուհա՝ սելն՝ համբոյր և յեղյեղուկ, իսկ 'ի շնոր՝ հաբաշխելն հաստատուն. և էր նա առ բարերարեալն ցանգ հեշտ և բաղձալի, Իբրու որք անձին Իւրում գլխովին բարե՝

բարք իցեն. զի և գեղեցիկ յոյժ համարէր միշտ երախտագէտ պահել զնոսա։ Առ այս՝ և պատուասէր յոյժ գոլով այրն և յոյժ փառասէր, գուն գործէր առաջնորդ մեծամեծ լինել ուղղութեանց, և քան ընդ կարողն 'ի բարերարել՝ առաւել սիրէր կենակից կենցաղակից լինել կարօտելոցն բարերարութեան. համարէր զառաջինն՝ իբրև նախանձաւորք իւրոց փառացն, և զվերջինն՝ իբրև նիւթ առաքինութեան արդասեաց։

Արդ վարժեալ կրթեցաւ Տիտոս 'ի զինուորականն. և քանզի էին Հռովմայ 'ի ժամանակին պատերազմունք բազում և մեծամեծք, դիմէին խաղային անդր պատանիք՝ անդատին յառաջին հասակէն ճշգրիտ 'ի վերայ կալ արուեստի զօրավարութեան բանակաց. չոքաւ և նա առաջին 'ի մարտ պատերազմի ընդդէմ Աննիբաղայ առ հիւպատոսութեամբն Մարկեղղոսի՝ իբրև հազարապետ։ Իսկ 'ի թակարդել Մարկեղղեայ 'ի վարմն թշնամւոյն և 'ի մեռանելն, կարգեցաւ Տիտոս կուսակալ գաւառին Տարանտեայ և նորուն իսկ Տարանտեայ, զոր յայնժամ կալան նոքա այս երկիցս անգամ. և զհամբաւն հարկանէր Տիտոս յիշխանութեան անդ իւրում ոչ վասն արդարութեանն միայն, այլ և վասն քաջութեանն 'ի զօրավարութեան։ Ուստի և 'ի տալ անդ Հռոմայեցւոց դաղթականս յերկուս քաղաքսն՝ յԱրնեաս և 'ի Կոնսան, սա այս Տիտոս կարգեցաւ յայնժամ ա-

ռաջնորդ նոցա. և ապա այս աւագութիւն այնչափ իմն հռչակ եհար զնմանէ, զի և անցեալ զանցեալ նա զայլովք աւագութեամբք զպատանեացն՝ յորոց սակի ժողովրդապետութիւնն և զօրապետութիւնն և ամբարապետութիւնն, դէտակն կշիռ կալաւ նա 'ի հիւպատոսութիւն անդր և հեռամուտ լինէր, և նպաստ զօրավիգն էր նմա որեար կրկին դաղթականին։

Իսկ Ներրև նորա ընդդէմ դարձան Փուլվիոս և Մալլեոս ժողովրդապետք, և ասէին իրս իմն օտարս՝ եթէ պատանի չև նուիրեալ յառաջին նուիրականան և 'ի խորհուրդս քաղաքին՝ այնպէս արտաքոյ օրինաց ճոխաբար ինդրեացէ զծագ աւագութեանն, յայնժամ Սինկղիտոսն 'ի քուեայս ժողովրդեան ապատան զբանն արարեալ կարդէին զնա ժողովուրդք՝ Թէպէտ և ոչ երեսնամեայ տակաւին՝ հիւպատոս 'ի միասին ընդ Քսեստոսի Եղիոսի։ Բայց արկեալ վիճակս, պատահէր Տիտոսի խաղալ գնալ 'ի մարտ պատերազմի ընդդէմ Փիլիպպոսի և Մակեդոնացւոց. և արդեօք 'ի գեղեցիկ բաղդէն վիճակեցաւ այս հռոմայեցւոց. քանզի ընդ որերոյն ընդ այնմիկ 'ի դէպ չէր իշխանին զէնս յամենայնի վարել և բռնութիւն, պարտ էր մանաւանդ համոզակեր բանիւք և մարդասիրագոյնս յանդուցանել զնոսա։

Քանզի և էր իսկ Փիլիպպոսի զօրավիգն Մակեդոնիա մարտիկ որերով, առ այս՝ և հելլենացիք Թիկունս տային նմա՝ զդէմ

կալ երկարաժամանակեայ մարտից՝ պա-
շարօք և ամրութեամբ, և զօրավիգն ածե-
լով փաղանգին նորա. ուստի եթէ չէր նո-
ցա սարտուցեալ 'ի Փիլիպպոսէ, չէր ար-
դեօք յայնժամ վճարեալ մարտին միով
պատերազմաւ: Եւ քանզի Եղեադա չև էր
այնչափ իմն 'ի Հռոմայեցիս անդր հակա-
միտեալ, և այն ինչ նա ձեռնամուխ ընդ
նոսա 'ի գործն լինէր յայնժամ. արդ՝ ե-
թէ յանկարծ զօրավար Հռոմայեցւոց մար-
դասէր չէր հանդիպեալ և համբոյր, և չէր
քաջախոհութեամբ գործի 'ի ձեռն ա-
ռեալ քան զկռուէլն՝ առաւել զխօսելն,
և եթէ համոզակեր չէր ընդ այլս և հեղ
առ ապաւինեալսն, և թէ չէր նորա ճշգրը-
տագոյնս 'ի վերայ կացեալ դէտ և պահա-
պան արդարութեան, արդեօք ոչինչ այն-
պէս հեշտին Եղեադա թողեալ յայնժամ
զկուրն սեպհական՝ յանձն առնոյր զօտարին
տերութիւն. և քաջայայտ կայ այս 'ի նոյն
իսկ յարդեանցն Տիտոսի:

Արդ տեսեալ Տիտոսի, զի որ յառաջ
քան զինքն զօրավարք Սուլպիկիոս և Պոպ-
զիոս՝ անագան ուրեմն միտեցան 'ի Մակե-
դոնիա, և յուշիկ յամրընթաց մարտ ե-
դեալ կռուեցան՝ ժամավաճառ 'ի պահ-
պանութիւն բանակատեղն լինելով, և մեկ
նակաղէնք միայն ընդ Փիլիպպոսի լինելով
'ի պատճառս անցից և ամբարոց. նա 'ի
դէպ չհամարեցաւ նմանեալ նոցա՝ ոչք զհիւ-
պատոսութեան տարին անցուցեալ նախ
'ի Հայրենիսն 'ի շուք պատուոյն և յառաջ-

նորդութեան քաղաքին, ապա խաղային գնային 'ի մարտ պատերազմի. ոչինչ հանդարտեաց նա տարի մի վատնել 'ի շուքն և 'ի քաղաքին դործս, և տարի մի այլ 'ի զօրավարութեան. զառաջինն հիւպատոսութեան տալով, և զերկրորդն՝ մարտից պատերազմաց. այլ պատուասիրեալ բուռն և սաստիկ անդէն 'ի մարան միսել, թողոյր լքանէր զշուքն և զաւագութիւնն 'ի քաղաքին, և աղերս արկեալ Սինկղիտոսին տանել ընդ իւր զԼեւկիոս զեղբայր իւր զօրավար նաւաց, և առեալ ևս ընդ իւր յամրութիւն բանակին երիս ևս հազարս 'ի քաջաց և յառոյգ զօրականէն այրընտիրս՝ որք առ Սկիպիոնիւ 'ի պարտութիւն մատնեցին յԻբերիա զԱդրոբան և 'ի Լիբիա զԱնիբաղ, անց գնաց յաջողութեամբ յԵպիւռոս: Անդ գտանէր նա զՊոբղիոս բանակ հարեալ 'ի հանդիպոյ Փիլիպպոսի, որ անդ հարուստ ժամանակ կացեալ պահէր զանձուկն և զբերան դետոյն Ապոնի. այլ չէր Պոբղիոսի յառաջ խաղացեալ և ինչ մի վճարեալ առ դժուարութեան վայրացն. առնոյր ապա յինքն զզօրավարութիւնն և գնա 'ի բաց արձակեալ, կայր և զննէր զդիրս վայրացն, որ ոչինչ պակաս անխաբէք էին սոքա քան զՏեմպեայն վայրն. սակայն և անբաժք 'ի վայելից ծառոցն և 'ի դալարեաց մայրեաց և 'ի զբօսաանաց և 'ի մարդաց նոցա, այլ էին անդ աստի և անտի լերինք երկայնանիստք և բարձրաբերձք. և առ լեռնոտամբն ձոր մեծ և

խոր, ուր գնայ Ապոն՝ ձեռնէն և սրընթաց ուղեթեամբն նմանեալ Պենեայ. և ձգեալ ողջոյն զլեռնոտամբն՝ թողու մի միայն պողոտայ անկոխ առապար և անձուկ առ ափամբն. ընդ որ՝ և ազատ վայրացն գոլով դժնդակ էն անցք բանակի. իսկ 'ի պահ կալեալ՝ և բնաւ իսկ անհնարին։ Արդ յայնժամ կէսք խնդրէին առնուլ ածել զՏիտոս շրջանաւ ընդ Դասասարացիս առ Լիկոս գետոնն՝ ցուցեալ նմա զպողոտայն զայն կուռ և լայն. այլ նա զանգիտեալ՝ դուցէ տարագէմ ձգեալ 'ի ծովէն և միջամուխ 'ի վայրսն եղեալ անբերս և ամուլս, և յանկուիս մնալ Փիլիպպոսին, ինքն 'ի նուազելոյ ամբարոցն միւսանգամ ատիպեացի վերջոանիլ 'ի ծով անդր՝ իբրու զնախորդ իւր զօրավարն, եդ 'ի մոի դիմագրաւ զօրութեամբ յառաջ խաղալ 'ի կատարսն լերանց, և ուժգին անդուստ բանալ իւր անցս։

Արդ յորժամ Փիլիպպոս իւրով փաղանգաւ հասեալ կալաւ զլերինսն, և 'ի կողմանց առհասարակ տարափք տեղային նեռից և վիքնաց 'ի վերայ Հռոմայեցւոց, և մարտ պատերազմին սաստկանայր և դիտապատ անկանէին ասոի և անոի, և վճար մարտին չերևէր 'ի միջի, յայնժամ էկին կացին առաջի Տիտոսի արք խաշնագարմանք 'ի մերձակայ վայրացն. դուշակ նմա լինէին շրջանաւոր ելմն անցից՝ ամայի 'ի թշնամեացն լքեալ, և խոստանային ածել ընդ այն զզօրն իբրև գնացս երից աւուրց

'ի կատարան անդր, և 'ի հաւատս մատուցանէին ևս նմա 'ի պատանդ զԿարոպ զորդի Մաքսիմէայ զառն աւագի 'ի մէջ Եպիռոսացւոց, այր բարեկամ Հռոմայեցւոց և կուսակից 'ի ծածուկ վասն ահին Փիլիպպոսի։ Ապա վստահ յայրն եղեալ Տիտոս, առեալ հազարապետս մի արձակէր հանդերձ չորիւք հազարօք հետևակաց և այրուձի չորեքհարիւր, և յառաջոյ ընթանային նոցա հովիւքն ձեռնակապեալք։ Զչերեկ հանդուցեալք դադարէին 'ի դարբոտոս և 'ի մացառուտս, և զցայգ խաղային գնային 'ի լուսնակի՝ քանզի լիապատար էր։ Իսկ յաւուրսն յայնոսիկ յետ արձակելոյ զնոսա՝ ինքն հանդիստ տայր զօրականին, և մեկնակազէնս միայն հանեալ՝ ժամավաճառ առնէր զթշնամին։ Բայց 'ի պայմանեալ աւուր ժամանելոյ հատուածի զօրուն 'ի կատարան, վաղ քաջ ընդ առաւօտն հորդան տայր Տիտոս առ հասարակ թեթևազէն զօրուն և կուսպատազինացն, և յառաջս երիս բաժանեալ զնոսա՝ ինքն ընդ անձուկ պողոտայն առ ափամբն յառաջադէմ զիւր գունդն տանէր ուղիղ 'ի վեր անդր՝ 'ի տարափել նեալից Մակեդոնացւոցն, մարտ եղեալ կռուեալ ոչք 'ի դժուարան զդէմ ունէին նմա։ Իսկ այլ առաջքն զմիմեանսքեալ և եղս առնելով ընդ ափափայսն 'ի վեր խաղային քաջութեամբ։

Իբրև արևածայրք արձակէին, և անդուստ 'ի բացուստ ծուխ ամբառնայր ոչ

ինչ ստոյգ, այլ իբրև մեգ երևէր և մառա-
խուղ 'ի լերանց անտի. որում և ոչինչ
իրազգած եղէն Թշնամիք, զի ոչք զկա-
տարան կալան՝ 'ի Թիկանց կային նոցա:
Այլ Հռոմայեցիք 'ի բազմաքիրան մրցանն՝
'ի միաս կասկածուս էին վասն այնորիկ,
սակայն և ըստ ըղձին յուսով խնդային:
Իսկ անդ իբրև ծուխն յորդ և Թանձր
մրրկեալ բարդէր և մռայլ օդոցն արկա-
նէր, և վերանայր բարձրանայր, քաջ իսկ
յայնժամ 'ի վերայ կացին խարուկածին
նշանի բարեկամացն: Հապա աղաղակ մեծ
բարձեալ՝ բռնագոյն ևս 'ի վեր կոյս խա-
ղային հասանել պաշարել զԹշնամին և
վարել վանել 'ի վայրս իմն անկոխս և գը-
ժուարինս. յայնժամ և զօրականին հա-
տուած 'ի կատարից անտի 'ի Թիկանց կու-
սէ Թշնամեացն՝ աղաղակին նոցա կրկնեալ
տային արձագանգ: Մինչև տագնապեցան
Մակեդոնացիք և անդէն 'ի փախուստ
խուճապէին. և քանզի 'ի գժուարից վայ-
րացն վերջոանեցան հետամուտ նոցա լի-
նել, ոչինչ աւելի քան զերկուս հազարս
տապաստ անկան 'ի նոցանէ յայնժամ:
Բայց Հռոմայեցիք տիրացեալք 'ի վերայ
խորանաց և մԹերից դանձուն և գերուոյն,
հասեալ կալան զանձուկն, և անցեալ
գնային ընդ Եպիրոս մեծապէս պարկեշ-
տացեալք. որպէս զի՝ Թէպէտ և 'ի բացեայ
էին 'ի նաւաց իւրեանց և 'ի ծովէն, և
չգոյր ևս նոցա ամենևին պարէն և հեշտին
ևս չէր պատրաստեալ զայն, համայն և այն-

պէս ժուժկալեցին նոքա մերձենալ յինչ մի. Թէպէտ և աշխարհն լի էր բարեօք 'ի դարման նոցա։ Քանզի լուր առեալ Տիտոս, զի Փիլիպպոս 'ի փախչել իւրում ընդ Թեոտաղացիս՝ հրաման տայր չուոյ մարդկան 'ի քաղաքաց 'ի լերինս, և 'ի հուր զքաղաքսն դառնէր, և յաւար տայր՝ զոր միանգամ չկարացին 'ի բաց տանել առ ամբաւութեանն կամ առ ծանրութեանն, և այնպէս իբրու 'ի Հռոմայեցւոց ձեռս տայր զաշխարհն. վասն այնորիկ Տիտոս պատուասիրեալ ներհակաբար, հրաման տայր զօրականին ակն ածել աշխարհին յանցանել իւրեանց՝ իբրև սեպհական և անձնատուր գաւառի։ Զոր և զկնի դէպք՝ քաջ իսկ ցուցին Հռոմայեցւոց, զի օգուտ մեծապէս գործեաց նոցա արդեօք պարկեշտութիւն նոցա։

Քանզի անդէն 'ի միսել նոցա 'ի Թեոտաղիա, անձնատուր նոցա լինէին քաղաքք. և Հելլենացիք որ 'ի Պիւղոս՝ անձկացեալ մնային Տիտոսի, և ըղձակամք յոյժ էին առ նա. և Ադայեցիք ինքնին ուծացեալք 'ի նիզակակցութենէն Փիլիպպոսի՝ վճիռ տային դաշնաւոր Հռոմայեցւոց լինել ընդդէմ Փիլիպպոսի։ և Ոպունտացիք ոչինչ հաճեալ ընդ Եստողացիս նիզակակիցս Հռոմայեցւոց՝ 'ի կամել նոցա զպահպանութիւն քաղաքին իւրեանց, Տիտոսի հրաւէր յղեալ՝ նմա անեղկեան անձնատուրք լինէին։ Եւ պատմեն՝ եթէ Պիւռռոս զառաջինն 'ի դիտանոցէն տեսեալ

զՀռոմայեցւոց զօրն խաղալ գնալ գեղեցիկ գասաւորութեամբ, ասաց յանդիման. Ոչ բարբարոսական ինչ երևի բարբարոսացդ Ճակատամարտ։ Նա և առհասարակ որ զառաջինն տեսանէին զՏիտոս, զնոյն ասէին։ Քանզի լուր առեալ Մակեդոնացւոց, եթէ գոյթս տալ հասեալ գայ զօրավարն ոմն բարբարոսաց բանակին, և զինուց բրնութեամբ քանդէ աւերէ զամենայն և 'ի գերութիւն մատնէ առհասարակ, եկեալ ապա տեսեալ զՏիտոս զայր երիտասարդ հեշտ և համբոյր 'ի գէմն, և 'ի ձայն և 'ի բարբառ Հելլենացի, և Ճշմարիտ պատուոյն տարփաւոր, ըղձակաթք յոյժ լինէին առ նա և ընթացեալք ընդ քաղաքս քաղաքս՝ մոերիմս առ նա յարդարէին. խելամուտ առնէին 'ի նորա ձեռն յաղատութիւն 'ի վերս ելանել։

Իսկ յետ այսորիկ Տիտոսի բանագնաց ընդ Փիլիպպոսի եղեալ՝ որ 'ի խնդիր էր գաշին, յանձն առնոյր Տիտոս և պայման դնէր նմա թողուլ զՀելլենացիս 'ի կամն ազատութեան նոցա և 'ի բաց առնուլ 'ի նոցանէ զպահանորդսն. այլ Փիլիպպոս յանձն չառեալ զպայմանն, առհասարակ ապա հոչակ հարաւ և առ կուսակիցսն անդամ Փիլիպպոսի, եթէ ոչ 'ի մարս ընդ Հելլենացւոց հասեալ գան Հռոմայեցիք, այլ ընդ Մակեդոնացիս՝ 'ի վերայ Հելլենացւոց. վասն որոյ և մոագիւրագոյնս 'ի նորա կողմն տային զանձինս առհասարակ։ Եւ անցեալ Տիտոս խաղաղու-

թեամբ ընդ Բիսոլիա՝ ընդ առաջ նմա գային արք աւագք 'ի Թեբայեցւոց անտի. Թէպէտ և կուսակիցք էին նոքա Մակեդոնացւոց 'ի պատճառս Բրաքիլլեղեայ 1, սակայն և Տիտոսի պատկառ կային՝ իբրև բարեկամք հասարակաց։ Անդ Տիտոս առեալ զաջոյն նոցա, և համբոյր բանիւք յուշիկ և տակաւ ընդ նոսա հատանէր զուղին. Է զի հարցանելով ինչ 'ի նոցանէ և լսելով, և Է զի ինքնին պատմելով ինչ մի նոցա, և այնպէս գեգերեալ զբօսեցուցանէր, մինչև յուղղոյ անտի ոգի առնուլ զօրականին. մինչև եկեալ մոտանէր 'ի քաղաք անդր 'ի միասին ընդ Թեբայեցւոցն. Թէպէտ և նոքա ոչինչ հաւանեալք, սակայն և ո՛չ իշխեցին արգելուլ նմա զմուտն՝ տեսեալ զբազմութիւն զօրականին նորա։ Իսկ 'ի նեղքս 'ի քաղաքի անդ Տիտոս՝ իբրու չէ տիրացեալ քաղաքին, կայր և հաւանեցուցանէր զԹեբայեցիսն զկողմն ունել զՀռոմայեցւոց, յորում և նպաստ լինէր ինքնին արքայն Աստաղոս 'ի նոյն զԹեբայեցիսն յորդորելով։ Բայց անդանօր սա այս Աստաղոս պատուասիրեալ Ճարտասան քաջ երևեալ առաջի Տիտոսի, և ուժգնակի յոյժ բարբառեալ գժպատեհ ծերութեան հասակին, անդէն 'ի խօսելն տագնապեալ 'ի պտուտից կամ 'ի հոսելոյ ինչ, և զդայազկրկ յեղակարծումն եղեալ անկանէր յերկիր. և ապա յետ սակաւուց տարեալ նաւու յԱսիա, անդ մեռանէր։ Բայց և Բիսոլասցիք յայնժամ անձնատուր լինէին Տիտոսի։

Իսկ Փիլիպպոսի արձակեալ դեսպանս 'ի Հռոմ, առեալ և Տիտոս արձակէր անդ արս խօսել վասն իւր և տալ Սինկլիտոսին կարգել դարձեալ զՏիտոս 'ի զօրավար 'ի յաւերժանալ մարտին. և 'ի վճարելն՝ 'ի նա անդրէն յանձն առնել զպայմանս խաղաղութեանն։ Քանզի և յոյժ իսկ վառեալ էր 'ի պատիւն. զանգիտէր 'ի գալուստ այլում զօրավարի՝ վրիպել 'ի փառացն։ Ապա գուն գործեալ բարեկամացն նորա 'ի Հռոմ 'ի դերևս զՓիլիպպոս հանել 'ի խնդրոյն և զՏիտոս դարձեալ հաստատել 'ի զօրավար, իբրև զայս սահման Սինկլիտոսին առնոյր Տիտոս, մեծապէս ցնծացեալ՝ խաղայր 'ի Թեսաղիա ընդդէմ Փիլիպպոսի ածեալ ընդ իւր զօր աւելի քան բիւրս երկու և վեց հազար. այլ զորեքհարիւր այրուձիոյ և վեց հազար հեռակաց՝ էին յԵտոլացւոց անտի. 'ի նոյն չափ գոդցես էր և բանակ զօրուն Փիլիպպոսի։ Զու արարին բանակք երկոքին և հասեալք մօտ 'ի Սկոտուսա՝ ուր և խառնելոց իսկ էին նոքա, ոչինչ զանգիտեցին զօրավարք՝ այնչափ մօտ ճակատեալք առ միմեանս. նա և մեծապէս քաջացեալք՝ զմիմեանսք ելանէին. զմնաւ ածէին Հռոմայեցիք շուք մեծ ժառանգել անձանց 'ի պարտութեան Մակեդոնացւոց, արք՝ որք առ Աղեքսանդրիս այնչափ զհամբաւի հաւան քաջութեամբ. անդուստ և Մակեդոնացիք ակն ունէին՝ եթէ 'ի պարտութեան Հռոմայեցւոցն՝ զորս քան զպարսիկս ա-

ռաւել դրէին, քան զԱղեքսանդրոս պայծառ ևս յարդարեսցէն զՓիլիպպոս։

Ապա Տիտոս յորդորակ խօսեալ առ զօրականն քաջանալ 'ի հանդիսին, իբրու որք մարտ եղեալ կռուեսցին 'ի գեղեցիկ տեսարանին Եղլադայ և ընդդէմ քաջազօր Թշնամեաց. անդուստ և Փիլիպպոս կամ ըստ դիպաց կամ Թէ առ խուճապին ոչ միտ եդեալ՝ ելեալ 'ի բարձրաւանդակ մի շերմի արտաքոյ զակշին՝ հրապարակախօս լինէր զայն ինչ՝ զոր նախ քան զկռիւն ասվորեցան զօրավարք 'ի խրախոյս զօրականին. բայց նոքա մեծապէս սրտաբեկ սրտառուչ կային ընդ վատահատար շերմին դէպան. ինքնին և Փիլիպպոս խռովեալ յոգին, զայն օր յոչինչ լինէր ձեռնամուխ։

Իսկ յաւուրն երկրորդի վաղ քաջ ընդ այգն, առ գինին և Թանուտ դիշերոյն՝ 'ի մռայլ և 'ի մառախուղ շքեալ ամբոցն, առհասարակ դաշտագեղոնն պատէր 'ի մէգ աղջամղջին. և անդէն ընդ լուսանալ աւուրն 'ի բարձանց անտի օդ Թանձրամած ինչանէր ծաւալէր ընդ մէջ երկուց բանակացն և զվայրն առհասարակ ծածկէր։ Իսկ որք միանգամ յերկոցունց ևս կողմանց արձակեցան յայնժամ զօրականք 'ի լրտեսել զվայրն և դարանամուտ լինել, անդէն պատահեալք միմեանց խառնեցան 'ի կռիւ՝ 'ի տեղեան՝ զոր անուանեալ կոչենԲԻՆՈՍ ԷՔՓՈՍ, այն է՝ Շանագլուխք. և են նոքա կատարք սեպացեալք գօտեաց բլրոցն՝ ամբարձեալք հանդէպ միմեանց, և անուն զայն

կարգան նոցա առ 'ի ձևոյն նմանութենէ։
Անդ ապա 'ի կռուին բազմօրինակ փոփո-
խեալք 'ի դժուարսն վայրաց, փախստեայք
և հեռամուռք միանգամայն յերկոցունց
ևս լինելով կողմանց, և անդուլ յերկուց
ևս բանակաց թիկունս առաքելով առ մէն-
մի 'ի նոցանէն 'ի վաստակել նոցա և 'ի տե-
ղի տալ, մինչ այս մինչ այն՝ ելից իրացն
գէտ ակն կալեալք, զի և օդն ինքնին մա-
քրեալ պարզեր, ապա և ողջոյն բանակք
նոցա յայնժամ խառնեցան 'ի մարտ։ Ան-
դանօր Փիլիպպոս առաւել բռնանայր 'ի
թևն աջոյ՝ 'ի վայր 'ի դարաւանդից իջեալ և
թափ 'ի վերայ Հռոմայեցւոց անկեալ միա-
համուռ փաղանգաւն՝ ասպար առ ասպար
անվանելի և դժոխրմբեր տիգաց Ճակատ,
որպէս զի և կորովիքն անկռուելիք ոչինչ
հանդարտեցին բռնութեանն։ Սակայն և
'ի կայից բլրոցն հերձեալ ձախոյ թևոյն
Ճակատ նոցա, թողեր Տիտոս զկողմն պար-
տեալ զիւրոյ զօրուն և շտապաւ դիմեալ 'ի
միւս այլ՝ պատեր պաշարէր զՄակեդոնա-
ցին. որք և 'ի վայրացն յանհարթութենէ
ոչինչ բաւեալք կարգել Ճակատել 'ի փա-
ղանգին անանջրպետ խիտ և հոծ (որ բնաւ
իսկ ամրութիւն այն է զօրուն նոցա), և
ոչ ևս զօրեալք միայն ընդ միայն 'ի վէգ
գալ առ ծանր և կուռ սպառազինութեն,
այնպէս կառեալք արդելեալ մնային։
Քանզի փաղանգդ՝ անվանելի և անկռուե-
լի գազանի նման է, յորժամ ասպարա-
վակ 'ի մի մարմին զօգեալ լցէ. ապա է-

թէ երբէք հերձցի՝ այր քակեալ յընկերէն, անկանի 'ի զօրութենէն առ դժպատեհութեան զինուցն. և զի՝ առաւել ալիտանացու է 'ի միութեան ողջոյն մարմնոյն, քան անձին առանձին։

Ապա յայնմ կողմանէ նկուն Մակեդոնացիքն եղեալք, կէսք 'ի Հռոմայեցւոցն հետամուտք փախստէիցն լինէին, և կէսք դարձեալ առ 'ի կողմանէ 'ի վերայ անկեալ՝ որոց մարտ եղեալ կռուէին, հարուած առ 'ի կողմն 'ի վերայ ածէին նոցա, զի և յաղթականքն՝ զենաթափք զոտս արձակեալ փախչէին։ Եւ անկանէին յայնժամ դիտապաստ ոչինչ պակաս քան զութ հազար՝ 'ի գերութիւն վարեալ ոդիս իբրև հինգ հազար, իսկ Փիլիպպոս մազապուր ղերծանէր. և պատճառք եղեն Եւոդացիքն, քանզի 'ի հետամուտ վանեալ Հռոմայեցւոցն, սոքա դիմեցին յաւար և 'ի կապուտ կողոպուտ բանակին. դարձ արարեալ Հռոմայեցւոցն և դառեալ և ոչինչ, յիշոցնատուք միմեանց լինէին և կագէին ընդ միմեանս։

Բայց որ վիշտ հանապազօրեայ առթեաց Տիտոսի, զի զյաղթութիւնն զայն անձանց դրեցին Եւոդացիք, և այնպէս հռչակ հարեալ կանխեցին կալան զՀելլենացիս. որպէս զի և քերթողք նոցա զԵւոդացիսն նախատատիւ երգեցին, զնոյն և ռամիկն 'ի նուագել զմրցանսն զայն. յորոց 'ի բերանսն առ հասարակ էր մեծապէս վերատառութիւն այսպիսի.

Մեզ ո՛չ ջայլք, ո՛չ գիահանք,
Ո՞վ անցաւոր մեզ չեղեն.
Բիւրք երեք թեռաղացիք
Տապաստ ահա կամք աստէն :
Մեք նրկունք յԵռողացւոց
Լեալ 'ի խոշիւն Արեսեան,
Երբ շրջուկն և Լատինաց
Հարաւ գաշտիս 'ի գամբան.
Զոր Տիտոս՝ լայնասահմանն
Յիտալիոյ աստ էած,
Եմաթեայ Մակեդոնեայ
Բաբէ անշուշտ մեծ հարուած :
Իսկ յայնժամ Փիլիպպոսին
Ոգին խրրոխտ փրքուռոյց,
Խուճապեալ փախեաւ արագ
Քան ըզթեթիւ եղջերուս :

Զայս ինչ քերթեաց Աղկէոս, և այնչափ ինն ստեաց զթիւ անկելոցն 'ի Թշնամանս Փիլիպպոսի: Եւ ապա այս վերտառութիւն 'ի բազմաց ոմանց և 'ի բազում տեղիս 'ի նուագ առեալ, քան Փիլիպպոսի՝ վիշտ աւելել հասուցանէր Տիտոսի : Քանզի և Փիլիպպոս կատակերգեալ զԱղկէոս, ողբ առընթեր արձանագրեալ եդ այսպիսի.

Անցաւո՛ր, այս անսաղարթ
Շէրտ տաշեալ յայս արտեան,
Խաչ է սա Աղկէոսին՝
Երկնաբերձ 'ի բազմարան :

Ա՜յլ Տիտոս՝ որ փառաց զհետ կրթէր

առ Հելլենացիս, դրդռեալ զչարքեր վասն այսոցիկ։ Ուստի ապա ինքնին միայնակ կատարէր զնահատակութիւնն՝ առ ոչինչ զԵտողացիսն գրեալ. յորմէ և մեծապէս սրտմտեալ Ետողացւոց, և հրեշտակութիւն ևս առեալ Տիտոս 'ի Մակեդոնացւոց վասն կռելոյ դաշինս, նոքա ընդ քաղաքս քաղաքս ընթացեալք բոլոր բառնային, եթէ վաճառականք խաղաղութեան լինին Փիլիպպոսի, մինչդեռ առ դուրս հասեալ կայ վճար մարտին և եղծումն տերութեանն՝ որ առաջին ընդ լծով արկ զԵլլադա։ Մինչդեռ այս բանք հռչակ հարեալ յԵտողացւոց՝ աղմուկ ևս շփոթից յուզէր առ նիզակակիցս Հռոմայեցւոց, ինքնին Փիլիպպոս եկեալ 'ի համոզել զկագն՝ 'ի դերևս հանէր զամենայն կասկած, և 'ի կամս Տիտոսի և Հռոմայեցւոց զամենայնն ապաստան առնէր, և ապա օրինակ զայս վճարէր Տիտոս զմարտն։ Զ Մակեդոնիոյ զաղքայութիւնն եթող 'ի Փիլիպպոս, այլ պատուէր տուեալ նմա 'ի բաց չուել յԵլլադայ. առ այս՝ և տուգանէր զնա հազար քանքարաց. բառնայր 'ի նմանէ զամենայն զնաւսն՝ բայց 'ի տասանց. և առեալ 'ի պատանդի զԴեմետրիոս՝ զմի յերկուց որդւոցն Փիլիպպոսի արձակէր 'ի Հռոմ, քաջապէս խորհրդով վարեալ ըստ ժամուն պիտոյից և նախահայեաց հանդերձելոցն եղեալ։

Քանզի Անիբալ Լիբէացի այր ոխերիմ Հռոմայեցւոց և վտարանդի յիւրոց հայրենեացն՝ անկեալ յայնժամ առ Անտիոքոս՝

սադրէր նմա զքաջադիպութիւն ժամանակին. զի և ինքնին Անտիոքոս 'ի մեծամեծ նահատակութեանց անտի խլոց՝ յորոց և մականուանեցաւ նա Ծ, ակնկառոյց էր 'ի համաշխարհական տէրութիւն, նա՛ և պատրաստ և կազմ էր նա եղջիւր ածել ընդդէմ Հռոմայեցւոց։ Ուստի եթէ և Տիտոս քաջիկ խորհրդոփն չէր հակամիտեալ 'ի հաշտութիւն անդր, և թոյլ տայր Անտիոքոսի և Փիլիպպոսի արքայից երկուց հզօրաց նիզակակից յառնել ընդդէմ Հռովմայեցւոց, անշուշտ 'ի մարտից վտանգս միւսանգամ պաշարէր Հռոմ՝ ոչինչ պակաս քան զԱննիբաղայն։ Արդ Տիտոս կրճնին գեղեցիկ զհաշտութիւն 'ի մէջ արկեալ երկուց պատերազմացն, և կարձեալ զառաջիկայն՝ մինչև գրգռեալ հանդերձելոյն, 'ի վերջին յուսոյն պակաս առնէր զՓիլիպպոս, և յառաջնոյն՝ զԱնտիոքոս։

Իսկ յետ այնորիկ լրբև հրեշտակք տան Թուով արձակեալք 'ի Սինկղիտոսէն առ Տիտոս, պատգամ բերէին յաղաղութիւն յանդորր հանել զՀելլենացիս և պահպանութիւն ամուր կարդել 'ի Կորնթոս և 'ի Քաղկիդէ և 'ի Դեմետրիադէ ընդդէմ Անտիոքոսի, անդուստ Եւոդացիք բանարկուք մեծք՝ մեծապէս գրգռեալ զքաղաքն զայնոսիկ, հրաման տային Տիտոսի լուծանել արձակել զոտան Եղլեադայ (քանզի այնպէս իսկ սովոր էր Փիլիպպոս կոչել զքաղաքն զայնոսիկ)։ առ այս և հարցանէին Եւոդացիք զՀելլենացիսն, եթէ ա-

նուր այժմ ունելով նոքա ծանրագոյն և՝ թէպէտ և ողորկագոյն ևս քան զառաջինն՝ արդեաք ինդասցէ՞ն ինչ. և ընդ Տիտոս իբրև ընդ բարեգործ հիացեալք հայեացին, զի յոտից ելոյծ զԵլլադա՝ և ընդ պարանոցն առեալ կապեաց զնա։ Ի բանից ասասի առ մեծապէս վշտին չհանդուրժեալ Տիտոս, խօսէր ամոքէր և հաւանեցուցանէր զնորհրդականն՝ թողուլ զքաղաքն զայն առանց պահանորդաց. զի այնպէս ապա յիւր ձեռն ոչՔ զչնորհսն կալցեն հելլենացիք։

Արդ յայնժամ 'ի կատարել Խթմեան մրցանացն, բազմութիւն յոյժ մարդկան յասպարիսին 'ի զնին նստէր ըմբշացն. քանզի 'ի ժամանակաց հետէ Եղլադա պարապեալ 'ի մարտից՝ ակն ունելով վայելից ազատութեանն, և յայնժամ 'ի յայտնի խաղաղութեանն՝ աշխարհաժողով կատարէր տօն։ Ապա անդանօր լուութեան հրամանն եղեալ 'ի ձայն փողոյ՝ և 'ի մէջ եկեալ արձանացեալ Քարոզին, բարձր բարբառով աւետէր, եթէ Սինկղիտոս Հռոմայեցւոց և Տիտոս Կուինտիոս զօրավար հիւպատոս 'ի պարտութիւն զարքայն մատնեալ Փիլիպպոս և զՄակեդոնացիսն, անպահանորդս այնուհետև թողուն և ազատս և անհարկս և հայրենատուր օրինաՔ վարեալս զԿորնթացիս և զԼոկրացիս և զՓոկէացիս և զԵւբէացիս և զԱքայեցիս և զՓթիոտիացիս և զՄագնեսացիս և զԹեսալացիս և զՊերրեբացիս։ Այլ զբար բառ զայս ոչինչ յայտնի զառաջինն խնացան ամենեքին. և

ուսիւն խառնաձայն և շնչիւն անյօդ ընթանայր յայնժամ յասպարիսին, յորժամ կէսք հրաշացեալք զարմանային, և կէսք զմիմեանս հարցանէին ուսանել, իսկ և կիսոցն թախանձ արկեալ միւսանգամ բարբառոյ քարոզին։ Իբրև երկրորդ անգամ 'ի լռութիւն դարձան, և քարոզն բարձրագոչ ևս կարգաց զաւետիսն 'ի լուր ամենեցուն, ապա ձայն ամբառնայր ուժգին և աղաղակ ցնծութեան, զի և 'ի ծով անդր լսելի լինէր. յարուցեալ առհասարակ հանդիսատեսք՝ ոչինչ զըմբշաց մարտէն փոյթ արարեալ, խուճապեցան ընդառաջ վազել Տիտոսի. առեալ զաջոյն ունէին զնա, և ողջունեալք՝ փրկիչ Եկեղեայ և ազատիչ կարգային զնա։

Իսկ յայնժամ դէպք եղեն իրացն, զոր շատ իսկ պատմեն վասն ուժգնահնչակ և բազմաշառաչ ձայնի. քանզի ագռաւք ոմանք՝ ոգք ըստ դիպաց անդանօր պարայածեալք թռչէին՝ 'ի վայր յասպարէզ անդր թօթափեալք անկան։ Եւ պատճառք բանին՝ հերձուլ օդոցդ է. քանզի ձայն սաստիկ և ջուռն հարեալ ընդ օդոյդ, ցեղու զնա՝ ոչինչ բաւական այնուհետև 'ի վեր զթեւաւորսդ ունել. ուստի և նոքա իբրու ոգք 'ի թափուր միջոցին թռիչս արձակեալք՝ վայրաբերին. եթէ ոչ՝ օ՞ն և օն հարուածս ինն ևս առցեն դոքա արդէօք 'ի շառաչմանէդ՝ իբրև 'ի փքնէ իմեմնէ. և այնորիկ աղաղաւ անշնչացեալք անկանին։ Ա՛ռ այս՝ թերևս և մրրիկ փոթորկեալ

յայնժամ յարիցէ յօդսդ, իբրև յորձանուտ 'ի ծովուն, և 'ի լայնատարդ իւրում սահմանին՝ անհնարին յուզմամբ ծփասցի։ 2

Արդ եթէ 'ի պահուն 'ի խուռն յառնել հանդիսատեսացն՝ նախահայեաց Տիտոս Թափոյ խուժանին՝ չէր տեղի տուեալ 'ի վայրացն, անշուշտ հնար չէր նմա զդէմ կալ բռնութեանն. այնչափ ինն 'ի կողմանց կողմանց խառնեալք պնդէին նեղէին զայրն։ Իբրև վաստակեցան յաղաղակէն շուրջ զնոսրանաւն նորա, ապա 'ի գալ գիշերոյն դառնային յեւոս ողջագուրեալք զորս և գտանէին՝ 'ի բարեկամաց և 'ի քաղաքակցացն. և 'ի կոչունս և 'ի գինեբրուս խրախացեալք ընդ միմեանս, և մեծապէս հրճուեալք ըստ ժամանակին, ոչինչ այլ բայց զԵլլադայ զբոյց առնէին. այն՝ զի 'ի մարտս բազումս և յառաջագոյն երբէք նմա ոչ յաջողեցաւ ունել զազատութիւն մեծապէս աներկեւանութեամբ և ցնծութեամբ. տարեալ յայնժամ անարիւն և անկոծ մրցանակ՝ գեղեցիկ յոյժ և քաջամարտիկ։ Եւ զայն ինչ դարձեալ զմտաւ ածէին, եթէ արութիւն և հանճար՝ առաքինութիւնք արդոյք են 'ի մարդիկ. իսկ արդարոք այր՝ յոյժ արդոյ և պատուական է քան զամենայն բարիս. քանզի Ագեսիլայոսք և Լիւսանդրոսք և Նիկիասք և Աղկիբիադէսք՝ Թէպէտ և քաջապէս նահատակեալք ընդ ծով և ընդ ցամաք, սակայն երբէք զնահատակութիւնն ոչինչ վարեցին 'ի գեղեցիկ կէտ նպատակի։ Եւ թէ՝ 'ի բաց զՄա-

բաթոնեան առեալ մրցանան և զնաւա-
մարան զՍաղամինայ և զՊղատեայն և
զԹերմոպիւղեան՝ և զոր յԵրիմեդոն և 'ի
Կիւպրոս զԿիմոնին նահատակութիւնն,
զայլ մարտն առհասարակ մղեաց Ելլադա
ընդդէմ իւր 'ի ծառայութիւն. և ամե-
նայն յաղթանակք նորա աղէտք էին և նա-
խատինք. քանզի և շատ ինչ 'ի գործոց նո-
րա եղծեալ խաթարէր առ անբարութեան
և ամբարտաւանութեան զօրավարացն: Իսկ
այս ամք այլալեզուք կայծս ունելով առ-
կայծեալ և զոդ գուզնաքեայ զվաղնջուց
ազգակցութեանն ընդ Հելլենացիս, որոց
և բանիւք չափ միայն և խորհրդովք օգնելն
Ելլադայ՝ արդեօք սքանչելի էր, սոքա այ-
սոքիկ մեծապէս վտանգաք 'ի փրկութիւն
Ելլադայ՝ 'ի ձեռաց աննուէր տէրանց և
բռնաւորաց այսպէս յանդորր ազատու-
թեան հանին զնա:

Զայսոսիկ Հելլենացիք յայնժամ զբ-
ռուցեին. բայց և եկեն այն և օտարք՝ առ
'ի նոցանէն գովութեանցն քաջ իսկ զու-
գակշիռ գային արդեամբք իւրեանց: Քան-
զի անդէն միանգամայն առեալ Տիտոս
զԼէնտղոս արձակէր յԱսիա, յազատու-
թիւն հանել անդանօր զԲարդիւղեացիս.
և զՏիտեղիոս 3 'ի Թրակիա՝ վտարել զպա-
հանորդսն զՓիլիպպոսի 'ի քաղաքաց անտի
և 'ի կղզեաց նորա. զնոյն և Պոպղիոս Վիլ-
լիոս նաւէր առ Անտիոքոս խոսել ընդ նմա
վասն ազատութեան Հելլենացւոցն՝ որ ընդ
ձեռամբ նորա. նա և ինքնին Տիտոս ան-

ցեալ 'ի Քաղկիդէ և անտի 'ի Մադնեսիա, 'ի բաց արձակէր անտի զպահապան զօրսն, և անդրէն թոյլ առնէր Ժողովրդոցն վարել զօրէնսն հայրենի։

Իսկ յետ այսորիկ եղեալ Տիտոսի յԱրգոս հանդիսադիր Նեմեան մրցանաց, գեղեցիկ յոյժ կարգեաց զսոնն. և անդ դարձեալ տայր հռչակ հարկանել 'ի ձեռն քարոզին զազատութիւնն առ ամենայն [Հելլենացիս. ապա և քաղաքացն յայց եղեալ՝ կարգս հանձարեղս սահմանէր. հաստատեաց զարդարութիւն. արար միաբանութիւն. յորդեաց սէր քաղաքացեաց. համոզեաց հերձուածս, և դարձոյց զվտարանդիսն 'ի հայրենիսն։ Յանձն իւր զուարճացեալ բերկրէր Տիտոս՝ զի 'ի խաղաղութիւն կրթեաց զՀելլենացիսն, ոչինչ պակաս՝ զի 'ի պարտութիւն զՄակեդոնացիսն մատնեաց. որպէս զի և Հելլենացիքն առ այլովք երախտեաւքն՝ 'ի դուշնաքէից սակի զազատութեան շնորհսն գրեցին։ Է՛ր երբեմն՝ զի Լիւկուրգոս հռետոր ապրեցուցեալ զԲսենոկրատէս իմաստասէր 'ի ձեռաց մաքսաւորաց՝ որ բանտարգել առնէին զիմաստասէրն վասն հատուցման սակին, և մաքսաւորացն ևս ընդ կառաւին հանէր զիսեռութիւնն նոցա, պատմեն՝ եթէ յետ այնորիկ հանդիպեալ իմաստասիրին՝ որդւոցն Լիկուրգոսի, ասէր առ նոսա. „ Գեղեցիկ գարձ փոխարինի, ով մանկունք, հատուցանեմ ես հօր ձերում՝ զի ամենեքին աւագիկ դովեն զնա վասն որոց յինն գործեաց "։

Ա՛յլ դարձ փոխարինի առ Տիտոս 'ի Հելլենացւոց անտի՝ ո՛չ գովութեամբ չափ միայն էր, այլ և զի առհասարակ այնուհետև մեծապէս վստահացան 'ի Հռոմայեցիսն. և նոցուն տերութիւն յամենեսեան ձգեալ տարածեցաւ։ Քանզի այնուհետև ո՛չ մտադիւրս միայն առեալ ժողովէին զոստիկանս և զզօրավարս Հռոմայեցւոց, այլ և 'ի խնդիր ևս ելեալ հրաւէր կարդային նոցա, և ինքնակամ անձնատուրք լինէին. ո՛չ ժողովուրդք միայն և քաղաքք նոցա, այլ և թագաւորք ինքնին դլխովին՝ հարստահարեալ երբէք յայլոց արքայից՝ երթեալ ապաւինէին առ նոսա. զի և վայրիկ մի ևս՝ ոչինչ թերևս առանց աստուածակողմանն՝ և յընդհանուրս ամենայնն նուաճեցաւ ընդ ձեռամբ նոցա։

Եւ ապա ինքնին յոյժ ցնծացաւ Տիտոս 'ի վերայ ազատութեանն Եղլադայ. քանզի և 'ի Դեղփիս 'ի ձօն կախեալ ասպարս արծաթի 'ի միասին ընդ իւրումն վահանի, զայս ինչ 'ի վերայ արձանագրեաց.

,, Բա՛ռք դո՛ւք՝ Որմըզդայ
Ճետ Քաջին՝ սերընդեան,
Խայտացեալք՝ յարագոտն
'Ի վարժից՝ ձիական,
Պանծալի՝ Սպարտիոյ
Ո՞վ Արքայք՝ Տիւնդարեան։
Զեզ Տիտոս՝ Էնէեան
Դերաշուք՝ ձիր ձօնեաց,
Կեանս ազատ՝ քաջ մանկանց
Ընծայեալ՝ Հելլենաց։

Ա՛ւ այս՝ և 'ի ձօն կախեաց նա պսակ ոսկի Ապողոնի, և 'ի վերայ արձանագրեաց այսպէս.

,, Ըղվարսիւք՝ քո անմահ
Ղէտուիսին՝ դու՛ Ջաւակ,
Էնէեան՝ մեծ Բըդեաշխ
Ջոսկեփայլն՝ եդ Պրսակ։
Ա՛յլ ո՞վ դու՝ Քաջաղէ՛ն
Հաստաձիգ՝ 'ի բազկի,
Կորովն՝ տո՛ւր ըզշուք
Քաջաղին՝ Տիտոսի։

Արդ դէպ եղև քաղաքին Կորնթացւոց երկիցս անգամ լսել զնոյն հրատարակ բանին 'ի շնորհս Եղլադայ։ Քանզի յայնժամ Տիտոս, և ապա միւսանգամ Ներոն յաւուրս մեր նոյնպէս յԻսթմեան հանդիսի՝ յաղաւութիւն կարգեաց զՀելլենացիս, և թոյլ ետ վարել իւրեանց օրինաց։ Ա՛յլ Տիտոս 'ի ձեռն քարոզին՝ որպէս ասացաք. իսկ Ներոն անձամբ անձին հրապարակախօս եղեալ 'ի բեմէն։ Ա՛յլ այս յետոյ է ժամանակաւ։

Բայց յետ այսորիկ մնեցաւ Տիտոս մարտ մղել գեղեցիկ և իրաւացի ընդդէմ Նաբիսայ մարդախոշոշ և եղեռնաւոր բռնաւորի Լակեդեմոնացւոց. այլ 'ի վախճանի 'ի դերևս հանէր զայս ակնկալութեանն զԵլլադայ. քանզի ձեռնհաս գոլով 'ի բուռն զբռնաւորն արկանել, զանց արար. և խաղաղութիւն ընդ նմա արարեալ՝ թողոյր

զՍպարտիա ընդ լծովբռնաւորն։ Կամ՝ զի զանգիտեաց եթէ յերկարագոյնս ձգեալ մարտին՝ այլ զօրաւոր՝ի Հռովմայ եկեալ առցէ զփառս նորա, կամ թէ զչարեալ խանտայր նա զշուք փառացն Փիլոսիմենեայ՝ որ ականաւոր յամենայնի և արութեամբ վեհագոյն Հելլենացւոց՝ յաւէտ ինն՝ի մարտին յայնմիկ ահագին քաջութեամբ շահատակեալ, զհամբաւի հարեալ առ Աքայեցիս և շուք ևս՝ի Թատերս առեալ էր հաւասար Տիտոսի. և արտնէր Տիտոս՝ զի Հռոմայեցւոց հիւպատոսքն մարտ մղեալ՝ի վերայ ողջոյն Եղլադայ՝ հանգիտապատիւ նմա այր մի կացցէ Արկադացի՝ զօրաւոր՝ի մարտս փոքունս և՝ի սահմանակիցս։ Այլ ինքնին Տիտոս վասն խաղաղութեանն այնմիկ՝ի չքմեղս լինէր՝ իբրու անձեռնհաս նկուն զբռնաւորին առնել առանց մեծապէս տուգանաց այլոցն Սպարտացւոց։

Բայց յամենայն շուք պատուոյն Տիտոսի առ՝ի ՅԱքայեցւոց անտի՝ ոչինչ այլ զուգահաւասար արդեօք երախտեացն նորա գտաւ, բայց պարգև մի ընծայից՝ զոր յոյժ սիրեաց նա, և էր այսպիսի. Հռոմայեցւոց գերին՝ի մարտին Աննիբաղայ՝ վաճառեալք ցան և ցիր կային՝ի ստրկութեան՝ի տեղիս տեղիս. էր՝ի նոցանէն և ՅԵլլադա թիւ հազարաց երկերիւրոց. և էին նոքա հիւսացեալք յոյժ, մանաւանդ՝ի ժամանակի անդ առ Տիտոսիւ՝ յորժամ պատահէին նոքա միմեանց ՅԵլլադա, որդիք՝ հարց, և եղբարք՝ եղբարց, և բարե-

կամք՝ բարեկամաց. կէսք՝ աղատք, և կէսք՝ ստրուկք, կէսք՝ յաղթեալք, և կէսք՝ յաղ-թողք։ Թէպէտ և մեծապէս վշտրմբեր վասն նոցա Տիտոս, ոչինչ կամեցաւ հա-նել զգերին զայն 'ի ձեռաց տեարց իւ-րեանց։ Այլ Աբայեցիք փրկանաւորեալ զնոսա հնգից ճնասից առ մէն մի 'ի գեր-ւոյն, և 'ի մի վայր խմբեալ զնոսա առաջի ընծայեցին Տիտոսի՝ մինչդեռ նա ամբառ-նայր 'ի նաւս. և այնպէս մեծապէս զուար-թուութեամբ դարձ առնէր Տիտոս, զգեղե-ցիկ նահատակութեանցն առեալ գեղեցիկ դարձ փոխարինի ըստ արժանի աւագու-թեանն և սիրոյն առ իւրն քաղաքացիս։

Եւ յայսմանէ ապա պայծառ ևս յար-գարէր հանդէս յաղթանակի նորա. քան-զի այն գերի՝ ըստ որում ծառայք ազա-տացեալք բնաւորեցան գերծուլ զգլուխս և տանել արտախուրակ՝ զնոյն արարին և նոքա, և այնպէս ուղեկից լինէին Տիտոսի 'ի յաղթանակին։ Առ այս և շուք եռուն հանդիսին նորա՝ և կապուտ կողոպուտ թշնամեացն, սաղաւարտք հելլենացիք, և վահանք մակեդոնացիք, և գայիսոնք նոցա. ոչ նուազ էին և մթերք ընչից. քանզի գրէ Խոանոս՝ եթէ ձոյլ ոսկի 'ի յաղթանակին էր լտերաց երեք հազար և եօթն հարիւր և երեքտասան, և արծաթ՝ քառասուն և երեք հազար՝ երկերիւր և եօթանասուն. իսկ ոսկի դրամահատ Փիլիպպեանք՝ էին անդ բիւր մի և չորեք հազար հինգհարիւր և չորեքտասան. արտաքոյ այսոցիկ՝ և հազար

ևս քանքարաց տուգանացն Փիլիպպոսի. զոր և ըստ միջնորդելոյն Տիտոսի շնորհեցին նմա Հռոմայեցիք. ետուն ևս վճիռ՝ և իբրեանց նիզակակից գրեցին զՓիլիպպոս, և դարձուցին 'ի նա զորդին՝ որ կայր 'ի պատանդի։

Իսկ յետ այսորիկ հրոս հանեալ Անտիոքոս յԵլլադա բազում նաւուք և զօրու ծանուս՝ խռով հարկանէր 'ի քաղաքս քաղաքս, և յապստամբութիւն դրդէր. և էին նմա սատարք 'ի նոյն՝ Եւողացիք, այն որ անդստին խեթիւ հայէին ընդ Հռոմայեցիս և յօժարեալ ևս էին 'ի մարտ, պատճառս առեալք յումպէտս զաղատութիւն Հելլենացւոց՝ քանզի և ազատք իսկ էին նոքա յայնժամ. այլ քանզի 'ի պատշաճից ինչ չէր 'ի միջի՝ զնոյն բարուր գեղեցիկ սադրեցին նոքա Անտիոքոսի։ Իսկ անդուստ Հռոմայեցիք կարի զանգիտեալք ընդ կիրս ապստամբութեանն և 'ի համբաւոյ զօրութեանն Անտիոքոսի շրտուցեալք՝ առեալ արձակէին անդր 'ի զօրավար զՄանիոս Ակիլիոս հիւպատոս, և զՏիտոս դարձեալ՝ իբրև գեսպան վասն գեղեցիկ համբաւոյ աւն առ Հելլենացիս, որոց յերևան միայն եկեալ առաջի՝ զկիսս որ տակաւին միամտեալ կային առ նոսա՝ առաւել ևս սնդէր. և զկիսս՝ որ յերերի կային, միւսանգամ արծարծէր 'ի սէրն. իբրև ճարտար՝ որ 'ի ժամու զդեղն խօթացելոցն տացէ, այնպէս զախան կարձէր և զկիրսն սանձէր։ Սակայն և նուազունք ոմանք կացին ան-

բուժելիք, որ գրաւեալ իսկ էին 'ի հրապոյրս Եւոողացւոցն. զորս ապա ինքնին Տիտոս՝ թէպէտ և սրտմտեալ էր՝ յետ մարտին յանձանձեալ պաշտպանէր։ Քանզի Անտիոքոս 'ի պարտութիւն մատնեալ 'ի խուճապ տագնապին և փախստեայ նաւեալ յԱսիա, Մանիոս հիւպատոս ինքնին դիմեալ հասանել ունէր զԵւոողացիս, զկէսս ինքն պաշարեալ պահէր, և զկէսս թողոյր Փիլիպպոսի եղծանել աւերել։ Իբրև Մակեդոնացին յաւարի առեալ կապուտ կողպուտ թողոյր զԴողոպացիս և զՄագնեսացիս և զԱթամանացիս և զԱպերանթացիս, և անդուստ ևս Մանիոս հիմն 'ի վեր տապալեալ զԵրակլէա՝ պաշարէր զնաւպակտոն կալուած զԵւոողացւոցն, 'ի գութ շարժեցաւ Տիտոս վասն հելլենացւոցն այնոցիկ, և ամբարձեալ 'ի Պեղոպոննիսեայ՝ դէմ եդեալ չոքաւ առ հիւպատոսն։ Անդ զառաջինն կացեալ կշտամբէր զնա, զի յաղթական ինքն գոլով զմրցանակն եթող տանել Փիլիպպոսի. և զի՝ 'ի ընուլ զորտմտութիւն բարկութեանն անդէն կայ մնայ ժամուաճառ՝ պաշարումն միոյ ածեալ քաղաքի, յորժամ անդ Մակեդոնացիք յառաջադէմք՝ ժողովուրդ ոչ սակաւ և արքայս ընդ ձեռամբ նուաճեն։

Իսկ Իբրև անդուստ պաշարեալքն 'ի պատուարացանոի զՏիտոս յակն արկեալք՝ սկսան կարդալ զնա և ձեռս տատանեալ առ նա՝ պաղատէին, նա առ ժամն ոչինչ խօսեալ, այլ զդէմն դարձուցեալ և ար-

տասուս հեղեալ, մեկնէր 'ի վայրացն։ Եւ յետ այնորիկ զբանիւք ընդ Մանիոսի անկեալ, ամոքէր զցասումն և ժամանակ պարապոյ տայր տալ Եւոդացւոցն՝ առաքել հրեշտակս 'ի Հռոմ և խնդրել պայմանս հաշտութեան չափաւորս։ Այլ քիրան մեծապէս այն էր Տիտոսի ողոքել զՄանիոս վասն Քաղկիդացւոցն. քանզի 'ի սրտմտութիւն մեծ բերդեալ էր Մանիոս վասն հարսանեացն Անտիոքոսի՝ զոր ածէր 'ի Քաղկիդացւոց անտի 'ի ժամանակի անդ պատերազմին՝ 'ի տարաժամ հասակին. քանզի անցեալ ուրեմն նա զաւուրքք՝ հարաւ 'ի սէր օրիորդի դստերն Կղէոպատրայ՝ չքնաղագեղ յոյժ՝ որպէս ասեն յամենայն օրիորդս. և ապա այս տուփանք եառն Քաղկիդացւոցն բնաւ իսկ 'ի թագաւոր անդր հակամիտել. և 'ի ձեռս ևս տալ նմա զիւրեանց քաղաքն 'ի նստոց մարտի պատերազմին։ Իսկ իբրև հարաւ Անտիոքոս, ձեռով վախստեայ 'ի Քաղկիդէ եղեալ և առեալ յինքն զօրիորդ հարսն և զընչիցն մթերս և զբարեկամս իւր, նաև ետաց անց յԱսիա։ Այլ Մանիոս մրմռեալ 'ի սրտմտութիւն բարկութեան՝ վաղվաղակի գիմեալ խաղայր 'ի վերայ Քաղկիդացւոց։ Իսկ Տիտոս զհետ գնացեալ նորա՝ գոն գործեալ բարեխօսէր վասն հելլենացւոցն այնոցիկ և ամոքէր զՄանիոս. և 'ի վերջէ ապա յողոք անկեալ ածէր հաւանեցուցանէր զնա և զայլս ևս յաւագացն հռոմայեցւոց։

Եւ այնպէս ապա փրկեալ Քաղկիդացւոցն՝ առեալ ձօնէին Տիտոսի զդեղեցիկան և զհոյակապան 'ի ձօնից քաղաքին Իւրեանց, յորոց և 'ի միումն մինչև ցայսօր ժամանակի է տեսանել արձանագրութիւն զայս. ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՏԻՏՈՍԻ Ի ՀԵՐԱԿԼԵԱՅ ՂԱՅՈ ԱՊՈՐԷՆ: Եւ 'ի միւսում այլ դարձեալ՝ այսպէս. ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՏԻՏՈՍԻ Ի ԱՊՈՂՈՆԻ ՂԻԵՂԷԻՆԻՈՆ: Եւ աստ ևս յաւուրս մեր կարգեն ընտրութեամբ Քաղկիդացիք քուրմ Տիտոսի. և զոհ յաղեալ նոքա նմա յետ նուիրաց ձօնիցն, Տաղ 'ի նուագ՝ առնուն 'ի դրուատ նորա. զոր 'ի բաց զայլն թողեալ մեր՝ զի երկայն է յոյժ, ասասցուք զվերջն նուագին՝ զոր երգէն նոքա այսպէս.

Մէք անխառն՝ հաւատոյն՝ Հոռոմոց,
Մեծապէս՝ շուք պաշտօն՝ հարկանեմք.
Մէք 'ի նոյն՝ և երդումն՝
Յուշ ունել՝ արդ կրեմք:
Երդ առէք՝ Օրիորդք
Ըզմեծին՝ Որմըզդայ.
Տուք նրուագ՝ և Հռովմայ
Եւ 'ի նոյն՝ Տիտոսի.
Երգեցէք՝ միաբան
Եւ զհաւատ՝ Հոռոմոց:
Քեզ Պէյան՝ ոլ Փեբէ,
Քեզ Տիտոս՝ ոլ փրկիչ:

Շուք գեղեցիկ էառ նա և յայլոց ևս Հելլենացւոց, և բնաւ իսկ՝ էր Ճշմարիտ և յանկեղծաւոր սիրոյ մտերմութեան նոցա առ

նա վասն հեշտ և հանդարտ բուսոյ բարուց առն. որով եթէ և երբէք 'ի վեգ դայր նա կամ վասն ինչ գործոյ կամ թէ 'ի կրից ինչ նախանձաւորութեան (ըստ որում ընդ Փիլոպիմենեայ և ընդ Դիոփանեայ զօրավարացն Աքայեցւոց), ոչ աննուէրս ինչ վարէր, և ոչ զցասումն արդիւնացուցանէր. այլ փաստս բանականս շատ էր նմա ասել ազատօրէն և գեղեցիկ յանդգնութեամբ: Երբէք նա խստութեամբ ոչ դնայր. սակայն և թուէր ինն բազմաց ցասկոտ այր և թեթևաբարոյ: Այլ էր նա հեշտ և բաղձալի առաւել քան զամենեսեան 'ի վարսն և զուարթամիտ, միանգամայն և 'ի խօսան՝ պերճ:

Քանզի էր երբեմն զի 'ի բաց զԱքայեցին կամելով քեցել 'ի տիրանալոյ կղզւոյն Զակինթացւոց, ասէր՝ եթէ 'ի մեծապէս վտանգ արդեաք պաշարեսցին նոքա՝ թէ երբէք ըստ Պելոպոննիսոս արտաքս կարկառեսցեն զգլուխս իւրեանց՝ իբրու զկրիայս ոմանս: Իսկ և զառաջին նուագն յորժամ վասն բանի պայմանացն երեսեցան միմեանց Տիտոս և Փիլիպպոս, յասել անդ Փիլիպպոսի վասն իւր զի միայնակ եկն, և ընդ Տիտոսի բազումք են, էառ պատասխանի Տիտոս. Դու ինքնին զքեզ միայնակ կացուցեր՝ 'ի մահ զբարեկամդ և զազգականդ մատնելով: Իսկ և երբեմն գինեհարեալ Դինոկրատէս Սեսաենացի 'ի կոչունս ուրեք 'ի Հռոմ՝ յարեաւ կաքաւել 'ի բազմականին 'ի հանդերձ կանայի. և

ապա յեկրորդումն աւուր եկեալ աղաչէր զՏիտոս օգնել 'ի խորհրդեան նորա՝ զի կամէր նա զՄեսինէ սարսռուցանել յԱքայեցւոց անտի. եւ պատասխանի Տիտոս՝ խորհել վասն բանին այնորիկ. սակայն և զարմացեալ ինն ասէր զանձն՝ զիարդ այր այնպիսի 'ի մեծամեծս ձեռնամուխ՝ 'ի կաքաւս գիներբուաց տացէ զանձն և 'ի ցուցս։ Առ այս՝ և յորժամ դեսպանք Անտիոքոսի պատմեալ Աքայեցւոց զբազմութիւն մեծ զօրաց արքային, յանուանս ինն բազմադիմակս ընդ համար արկանէին զնոսա, ասէր Տիտոս. եթէ էր երբեմն յընթրել իւրում առ ումեմն կոչնատեառն և 'ի զարմանալն և 'ի յանդիմանելն՝ զի այնչափ բազմամթեր մնովք լցեալ էր սեղանն, և պատրաստեալ գունակ գունակ կերակրովք, եւ պատասխանի կոչնատէրն՝ եթէ առհասարակ կերակուրքդ զմի միայն ունին զհոգենին. և բազմադիմակք են՝ զի բազմօրինակ խահարարութեամբք ամոքեալ են. " Մի ուրեմն և դուք ինքնին, ասէր Տիտոս, մի զարմասջիք ո՞ արք Աքայեցիք ընդ բազմաձեռն զօրութիւն Անտիոքոսին՝ 'ի լսել անդ ձեր զնիզակաւորաց, զոհդաւորաց, և զհետեւակաց. քանզի Ասորիք են դոքա առ հասարակ, և զինուք չափ և եթ զանազանեալք են "։

Բայց Տիտոս յետ նահատակութեանց իւրոց յԵլլադա և յետ մարտին ընդդէմ Անտիոքոսի ընտրեալ կարգեցաւ համարակալ. աւագութիւն՝ բնաւինն այլ վեհա-

դոյն, և ծայրալիր կատար քաղաքականու-
թեանն. և կալաւ իւր իշխանակից զորդին
Մարկեղլոսի՝ այն որ հնգիցս եկաց հիւպա-
տոս։ Որք և՝ ի բաց՝ ի Սինկղիտոսէն հանին
նոքա յայնժամ խորհրդականս շորս՝ ոչ
յոյժ յականաւորաց անտի. առ այս և՝ ի
քաղաքացիս ընկալան զամենայն աղատա-
ծին մարդիկ որ միանգամ խնդրեցինն. և
՝ի նոյն ատիպեցան նոքա՝ ի Տերենտիոսէ
ժողովրդապետէ՝ որ զնոյն վճիռ տայր
ժողովրդեանն տալ՝ ի ներքս ընդ հակա-
ռակս շքոյ աւագանւոյն։ Իսկ յերկուց
անտի արանց ականաւորաց և աւագաց
յայնժամ՝ ի քաղաքին, որ՝ ի կագի էին ընդ
միմեանս, այն էն Սկիպիոն Ափրիկանոս և
Մարկոս Կատոնն, զառաջինն նախաթոռ
Սինկղիտոսին բազմեցոյց Տիտոս՝ իբրև այր
քաջալաւ և աւագ. իսկ ընդ Կատոնին դէպ
եղև նմա խեթանալ՝ ի դիպուածոյ իմաքէ,
որ էր այսպիսի։ Լեւկիոս Փլամինիոս եղ-
բայր Տիտոսի՝ ոչինչ՝ ի գեղեցիկ բոյս բա-
ղուցն նմանեալ նմա՝ գրգռաւեր և անպատ-
կառ, ունէր իւր՝ ի տարփածու պատա-
նեակ մի. զոր և ընդ իւր շրջեցուցանէր՝ ի
զօրավարութեանն և՝ ի կուսակալութեան։
Դէպ եղև՝ ի կոչունս ուրեք յաղուաբանել
պատանեկին առ նա, ասէր ըղձակաթ յոյժ
առ նա լինել՝ որպէս զի և վասն նորա թող-
ուլ լքանել զմենամարտակաց տեսարանն,
թէպէտ և երբէք՝ ի զնին ապանութեան
չէր կացեալ. և այնպէս նախապատիւ զնա
քան զբերկրանս սրաբ տեսարանին։ Առ

այս Լեւկիոս խնդագին ասէր ցպատա-
նեակն. «Մի ինչ քեզ այդ ծանր թուեսցի. գոյ ինձ գարման ըղձին քում տանել». ապա հրամանս տայր Լեւկիոս զառաջեաւ ածել 'ի կապարանէն զմի ոք 'ի մահապարտայ. և կոչեալ զպաշտօնեային 'ի նոյն վայր կոչնոցն հրամայէր գլխատել զնա։ Այլ Վաղերիոս Անտիաս ասէ՝ գործել զայն Լեւկիոսի ոչ 'ի շնորհս պատանւոյ, այլ երիտասարդուհւոյ՝ զոր սիրէր։ Իսկ Լիվիոս պատմէ՝ արձանագրեալ 'ի Կատոնէ յիւրում գպրութեանն, եթէ Գաղատացի ոմն փախստեայ եկեալ հանդերձ որդւովք և կնաւն 'ի դուրս անդ կոչնոցն՝ ժողովի 'ի Լեւկիոսէ, ապա 'ի նորուն ձեռացն սպանանի 'ի շնորհս տարփածուին։ Այլ թուի զայս այսպէս ասացեալ Կատոնէի յաճեցուցանել զամբաստանութիւնն. իսկ թէ ոչ Գաղատացի ոք էր փախստեայ՝ սպանեալն յայնժամ, այլ մի ոք 'ի մահապարտաց անտի, զայս մեզ վկայէ բաց յայլոց բազմաց և ինքնին Կիկերոն հռետոր 'ի բանն յաղագս Ծերութեանն, տալով զնոյն պատմել Կատոնէի։

Եւ ապա յայս պատճառաց՝ կարգեալ Կատոնէի համարակալ և սրբեալ զՍինկղիտոսն, 'ի բաց 'ի ծերակուտէն մերժէր ըզ-Լեւկիոս՝ թէպէտ և այր աւագ հիւպատեան, և գործն՝ անփառունակ գտաւ և նմին իսկ Տիտոսի էղբօրն. ուստի և յանդիմանեալք ժողովրդեան Տիտոս և Լեւկիոս պրտաբեկք և պտաւուչք՝ արտասուօք թա-

խանձարկանէին քաղաքացեաց իրաւացի՝ ըզ-
հաւատոխս զանշքութեն զայնորիկ զհոյս-
կապ զարմին առաջի առնել Կատոնի։ Ան-
դանօր Կատոնն պարզերես արձանացեալ
հանդերձ իշխանակցաւն, հարցանէր զՏի-
տոս՝ եթէ իրաւդաձ ինչ ինքն լեալ ի՞նչ
բանի կոչնոցն. իբրև պատասխանի ետ Տի-
տոս՝ եթէ ո՛չ, եկաց Կատոնն և ոձով պատ-
մէր զամենայնն. և ձայն ևս տայր Լեվկիոսի
յերդումն՝ եթէ սուտ կայցէ 'ի բանն.
իբրև Լեվկիոս պապանձեցաւ, տուաւ դա-
տակնիքն 'ի վերայ առն, և Կատոնի շքով
ուղեկից լինէին 'ի տուն յատենէ անտի։
Այլ Տիտոս 'ի խոր յոյժ խոցեալ ընդ ա-
ղէտս եղբօրն, չոքաւ միաբանեցաւ ընդ վաղն-
ջուց ոխերիմն Կատոնի, և զօրացեալ 'ի
Սինկղիտոսին՝ ետ անվաւեր առնել և 'ի
բաց ջնջել զամենայն իսկ զնորա վասն քա-
ղաքին զծախսն՝ և զ'ի վարձու տանն և
զդնելն, և ամբաստանութիւնս ևս մեծ յու-
զեաց ընդդէմ առն. այլ չդիտեմ իսկ
եթէ ողջախոհ քաղաքականութեամբ այն-
պէս 'ի թշնամութիւն անհաշտ բերեալ
ընդ օրինապահ իշխանին և ընդ առաքինի
քաղաքացւոյ մարդասիրելոյ առ եղբայրն՝
անարժան աղդատոհմին և պատուհասին
արժանի։ Այլ սակայն 'ի թատերական տե-
սարանի երբեմն 'ի խմբել ժողովրդոցն, և
Սինկղիտոսին 'ի բազմել 'ի կայանի իւրում
շքեղ և երևելի ըստ սովորութեանն, այն-
ինչ զ Լեվկիոս յակն արկին ժողովուրդք
նատեալ անփառունակ 'ի յետին տեղւոջ,

'ի գուլթ շարժեալ աղաղակաւ տեղի այլ հրամայէին նմա, մինչև նա անցեալ գայր բազմէր 'ի մէջ հիւպատեան աւագանւոյն։

Արդ Տիտոսին անկակից պատուասիրութիւն՝ ցոր վայր շատ իսկ ունէր նիւթ ըզմարտան՝ զոր պատմեցաք, շուք հանդէրձեաց նմա. (քանզի և հաղարապետ միւսանգամ յետ հիւպատոսութեանն խնդրեաց ինքնին կալ անհրաւէր և անկոչ)։ Սակայն զաւուրքք անցեալ նա և գժպատեհ այնուհետև յառաջնորդութիւն, անշքանայր 'ի պատուասիրութեան անդ իւրում, ոչ սանձակոծելով զանձն 'ի փառան. և տակաւին զհետ երիտասարդական լինելով աշխուժից, յորժամ պարտ և արժան էր նմա զնշխարեալ աւուրսն անզբօս անցուցանել։ Եւ Թուի յայնպիսի իմն կրից բերեալ նորա գործել զբանն զայն առ Անննիբաղ, որով և գժպհի գտաւ նա բազմաց։

Քանզի Աննիբաղ գաղտ փախստեայ 'ի Կարքեդոնէ՝ եկեալ ապաւինեալ էր առ Անտիոքոսի. իսկ իբրև Անտիոքոս անկաւ բեկաւ 'ի Փռիւգիա, և 'ի հաշտութիւն եկեալ մոսգիւր յանձն առնոյր զդաշինսն, միւսանգամ Աննիբաղ փախստեայ յայս կոյս յայն կոյս Թափառական՝ հուսկ ապա եկեալ դադարէր 'ի Բիթիւնիա՝ և անդ ապաս հարկանէր Պրուսիասայ արքայի, և գիտէին զայն Հռոմայեցիք առհասարակ, այլ զանց առնէին զնովաւ. զի և 'ի ծերութիւն յեցեալ իսկ էր այրն և յուժոյն վատեալ. իբրու որ համբուն ոտնհար առ

'ի բաղդէն եղեալ ի՞նչ։ Արդ դեսպան Տի-
տոս 'ի Սինկղիտոսէն առաքեալ առ Պրու-
սիաս վասն ինչ գործոյ, անդ առ արքայի
տեսեալ նորա զԱննիբաղ՝ 'ի մեծ բարկու-
թիւն բրդէր զի տակաւին կենդանի կայր
Աննիբաղ. իսկ Պրուսիաս թէպէտ և յոյժ
յաղերս անկեալ պաղատէր վասն ողոքա-
ւոր առն և իւրում ընտանւոյ՝ ոչինչ կա-
րաց վճարել։ Էր իսկ վաղնջուց պատգամ
զհամբաւի հարեալ վասն մահուն Աննի-
բաղայ՝ օրինակ այսպիսի. եթէ՝ Լիբիւսսա
ծածկեսցէ գետին՝ զԱննիբաղայ զմարմին։
Այլ Աննիբաղ կարծեալ Լիբիւսա զայն
երկիր, մնայր թաղումն առնուլ 'ի Կար-
քեդոն՝ անդանօր զկեանսն վճարելով։
Բայց է 'ի Բիթիւնիա վայր աւազուտ առ
ծովուն, և մօտ անդ է շէն ոչինչ մեծ՝ ո-
րում անուն կարդան Լիբիւսսա՝ յորում
և դադարեալ իսկ էր Աննիբաղ. ուր և
ցանգ 'ի կասկածի առ 'ի տկարութենէն
Պրուսիասայ և յահէն Հռոմայեցւոց՝ ուղիս
եօթն ստորերկրեայ հատեալ էր, որ 'ի
տանէ բնակութեանն հանէին 'ի վայրս իմն
այլ և այլս և բացաձիգս։

Արդ լուր առեալ յայնժամ Աննիբաղ
զհրամանին Տիտոսի՝ 'ի փախուստ խուճա-
պեցաւ ընդ գողուղի անցն. այլ անկեալ
'ի ձեռս զօրականաց արքային, խորհեցաւ
երթալ զնուրովն։ Կէսք ասեն՝ եթէ զվե-
ղարկուն իւր տարեալ զպարանոցաւն, հրա-
ման տայր միում 'ի ծառայիցն պնդել զայն
ընդ ծունկն և յետս ընդ կրունկն սատակ

և բուռն քարշեալ կործանել զնա, մինչև հեղձամղձուկ եղեալ մեռանէր։ Իսկ և կէսք ասեն՝ եթէ Թեմիստոկղեայ զնմա-նուիթիւնն բերեալ և զՄիդեայ, ըմպէր ցլու արիւն։ Իսկ Լիվիոս պատմէ՝ եթէ դեղ մահու ունելով նա առ իւր՝ խառնեաց զայն յարբու�և բաժակ 'ի ձեռին՝ ասէր այսպէս. "Ա՛ղէ հանգուցուք մեք միանգամ զՀռոմայեցիսդ 'ի բազմագէմ հոգոցդ, որոց երկարաձիգ և դժոխրմբեր թուի՝ մնալ օրահասին առն ծերունւոյ՝ զոր ատեան դոքա։ Սակայն ինքնին Տիտոս ո՛չ տարցի յիմ վերայ յաղթանակ նախանձելի, և ո՛չ իւրոցն նախնեաց արժանի. որք անդ 'ի կուռեալ Պիւռռոսի ընդ նոսա և 'ի յաղթեալ, գաղտ առաքեցին իրազեկ առնել զնա վասն դեղոյն՝ զոր խառնէին նմա"։ Եւ օրինակ զայս ասեն մեռանել Աննիբաղայ յայնժամ։

Իսկ իբրև լուր բանին հասանէր առ Սինկղիտոսն, շատից ատելութեան արժանի երևէր Տիտոս, և ծայրայեղ յոյժ և անագորոյն. զի սպան զայրն՝ որ արդէն իսկ հնքացեալ կէսայր իբրու հաւ լքեալ 'ի ծերութենէն անփեսուր և անձեռ. և զի՝ և ոչ ինչ բռնադատեալ՝ առ 'ի փառացն ձգեալ պատուասիրեաց Տիտոս 'ի մահն Աննիբաղայ։ Առ այս դարձեալ՝ 'ի յուշ բերեալ նոցա և զհեղութիւն և զմեծանձնութիւն զՍկիպիոնի Աֆրիկանոսի՝ առ Տիտոսիւ յոյժ առաւել հրաշացեալ կային նոքա ընդ աւադ այրն, որ 'ի պարտութիւն զԱննիբաղ

մատնեալ 'ի Լիբիա՝ զահաբեկ Թշնամին և զանկուսելին, ոչինչ 'ի հայրենեացն տա-
ղագիր հանէր նա զայրն, և կամ խնդրէր ինչ զնա 'ի քաղաքացեացն. այլ զբանիւք
անկեալ ընդ նմա մինչև կուսեալ, մար-
դասիրապէս հիւրընկալէր զնա. և ապա
յետ կուսոյն՝ 'ի հաստել ընդ նմա խաղա-
ղութիւն՝ ոչինչ հարստահարեաց զնա կամ
ոտնհար ինչ լինէր ձախողակ բաղդին նո-
րա։ Եւ ասեն՝ եթէ և յԵփեսոս է զի
գտան 'ի միասին Աննիբաղ և Սկիպիոն. և
զառաջինն 'ի ձեմել անդ ուրեք նոցա, ըզ-
բարձերէց կողմն այնպէս անձին կալեալ
Աննիբաղայ՝ հեզաբար տարաւ զայն Ափրի-
կանոս և այնպէս ձեմ առեալ ջրջէր ընդ
նմա. ապա զբանիւք անկեալ նոցա վասն
զօրավարաց, իբրև Աննիբաղ զԱղեքսանդր
նախաթոռ ասէր իբրև քաջարի քան զա-
մենայն զօրավարս, և երկրորդ կարգէր զՊիւ-
ռոս, և երրորդ դասէր զանձն իւր, անդ
Սկիպիոն մանր ժպտեալ՝ ասէր. "Եւ
զի՞նչ ապա, եթէ չէր իմ պարտեալ զքեզ".
Եւ պատասխանի Աննիբաղ և ասէ. "Իսկ
յայնժամ ո՛վ Սկիպիոն, ո՛չ երրորդ, այլ
առաջին զիս դասէի զօրավարաց"։ Ապա
ընդ քաղաքավարութիւն ընդ այս Սկիպիո-
նի զարմացեալ Հռոմայեցւոց, անարգեալ
լինէր Տիտոս՝ զի ձեռն մխեաց 'ի դիակն
օտարական։

Այլ յայսր ամենայնի վերայ էին էին
և ոչք 'ի գովութիւն առնուին զՏիտոսի
գործն. և համարէին զԱննիբաղ՝ ցորվայր

կենդանի էր՝ իբրև հուր որում արծարծող միայն պէտք լցեն. և ասէին եւ՝ եթէ և ո՛չ յորժամ 'ի ծաղկի էր Աննիբաղ և յուժի, նորա ինչ մարմինն և ձեռք ահ ընկէց Հռոմայեցւոցն էին, այլ մեծապէս ուշիմութիւն առն և հմտութիւնն զոյգ ընդ տնկակից խելթին և ատելութեանն՝ որ ո՛չ վատեացին արդեաք 'ի ծերութենէն, իբրև բնութիւնն յաւերժացեալ կայ մնայ 'ի բարոյս իւր. և զի և բախտն ինքնին չկայ միշտ 'ի նմին կայի, այլ 'ի հնգանալն՝ դրդէ վառէ յուսով ակնկալութեանն՝ փորձ զնորոց փորձել մրցանաց, զորս միանգամ առ ատելութեանն անդուլք 'ի կռուել լցեն ընդ այլս։

Եւ արդեաք որ յետ այնորիկ դէպք իրացն՝ մեծ եւ վկայութիւն 'ի նեղբս բերին 'ի կողմն Տիտոսի. քանզի և Արիստոնիկոս որդի Կիթառերգակի ուրումն ողջոյն զԱսիա վեր 'ի վայր արար յաղմուկս շփոթից և 'ի մարտս պատերազմաց վասն փառացն Եւմենեայ։ Առ այս և Միհրդատ ինքնին գլխովին յետ հարուածոյն 'ի Սիզայէ և 'ի Փիմբրեայ և յետ մահուց ամբաւից իւրոյ զօրականին և զօրապետաց, դարձեալ միւսանգամ խաղաց դիմեաց զօրու ծանու ընդ ծով և ընդ ցամաք ընդդէմ Լուկուղլեայ։ Դարձեալ առ այս՝ չէր ինչ Աննիբաղ առաւել հնգացեալքան զԳայիոս Մարիոս. քանզի էր իսկ նորա բարեկամութիւն ընդ արքայի ումեմն, էին նորա զօրավիդն և ընտանեակք, և խնամակալ

և 'ի վերայ կարգեալ էր նաւաց և այրուձիոյ և զօրականի. իսկ անդ Մարիոս Թափառական և մուրիկ ընդ Ափրիկէ՝ զոր և Հռոմայեցիք ինքնին յընչաց քէրէին ըզբախտն նորա, սակայն և յետ ոչ բազմաց ինչ եկեալ մտեալ նոյն այր 'ի Հռոմ քաղաք՝ մահուանս և ջարչարանս ածէր 'ի վերայ նոցա, և նոքա այնպէս ընկճեալ սպասաւորութիւն հարկանէին առաջի նորա։ Եւ այսպէս ապա չէք ինչ յառաջիկայիցդ՝ որ մեծ և կամ փոքր լցէ առ հանդերձելոն։ Իբրև չէք վախճան փոփոխութեան նոցա, բայց թէ յորժամ վախճան լցի գոյութեան նոցա։ Եւ վասն այսորիկ կէաք ասէն եթէ ոչ անձամբ անձին գործեաց զայն Տիտոս, այլ դեսպան առաքեալ նա ընդ Լեւկիոսի Սկիպիոնի միայն 'ի պատճառս մահուն Ընննիբալայ։

Եւ արդ քանզի յետ այսոցիկ՝ ոչինչ այլ պատմութիւն գիտեմք մեք զգործոց Տիտոսի քաղաքական կամ զինուորական, այլ թէ խաղաղականին վիճակեցաւ նա մահու, ժամ է այսուհետև բուռն զզուդակչռութենէն հարկանել։

ԶՈՒԳԱԿՇՌՈՒԹԻՒՆ

ՓԻԼՈՊԻՄԵՆԵԱՑ
ԵՒ
ՏԻՏՈՍԻ ՓԼԱՄԻՆԻՈՍԻ

Լ՚Ի արդ՝ ըստ բազմագէմ երախտեացն առ Հելլենացիս՝ զուգակշիռ Տիտոսի երբէք ոչ գայ Փիլոպիմէն. նա և ոչ բազումք այլ յաւագաց անտի՝ լաւագոյնք քան զՓիլոպիմէն։ Քանզի այլք ոմանք Հելլենացիք գոլով՝ մարտ եղեալ կռուէցան ընդ Հելլենացիս. իսկ սա՝ որ Հելլենացի չէր՝ մարտեաւ 'ի վերայ Հելլենացւոց։ Եւ յորժամ Փիլոպիմէն ոչինչ յաջողեալ օգնել 'ի կռուին իւրոց հայրենեացն՝ անց չղքաւ 'ի Կրետէ, Տիտոս 'ի պարտութիւն զՓիլիպոս մատնեալ անդէն յԵլլադա, յաղատութեն 'ի վեր հանէր յայնժամ զաղգս և զքաղաքս։

Այլ ապա 'ի քնին առեալ զմարտս պատերազմաց երկոցուն դոցա, տեսանեմք՝ հարուածս մեծ ևս Փիլոպիմենեայ 'ի վերայ Հելլենացւոցն ածեալ 'ի զօրավարու-

թեանն Աքայեցւոց, քան զՏիտոս 'ի վերայ Մակեդոնացւոց՝ յօգնականութեանն Հելլենացւոց։

Իսկ ըստ խակութեան նոցա՝ Տիտոս 'ի պատուասիրութենէն դրդէր և վառէր. և Փիլոպիմէն 'ի կռուայոյզ բարոյից. ուսաի և 'ի սրտմտութեան բարկութեանն՝ առաջինն հեշտին տեղի տայր. և եկրորդն յամառ՝ հազիւ ուրեմն զնչանէր։ Քանզի Տիտոս զաղքունի զբարձն պահեաց եթող Փիլիպպոսի և մարդասիրապէս ներումն տայր Եռողացւոց։ Իսկ Փիլոպիմէն առ սրտմտութեան ցասմանն՝ զրկէր զհայրենի աշխարհն 'ի հարկաց անտի արուարձանեայցն նորա։

Առ այս դարձեալ՝ առաջինդ ցանդանյեզլի եկաց բարեկամ Իւրոց բարերարելոցն. իսկ վերջինդ՝ ցանդ պատրաստ առ ցասմանն աղարտել զիւրն երախտիս։ Քանզի զառաջինն երախտաւոր Լակեդեմոնացւոցն գոլով Փիլոպիմէն, ապա հիմն 'ի վեր առնէր և զպատուարս պարսպաց նոցա և յաւարի առնոյր զերկիրն, և հուսկ ապա փոխէր խաթարէր և զքաղաքականութեան կարգ նոցա։ Եւ թուի թէ՝ և առ թափ ցասմանն և կռուայոյզ կրկին դիմադրաւէցաւ նա 'ի մահն, 'ի տարագէպ ժամու դիմեալ 'ի Մեսինէ և յեռանդն գժպատեհ՝ ոչ 'ի ճահ զդուշացեալ զբարկանին։

Այլ սակայն ըստ բազմադէմ պատերազմացն և յաղթանակացն քաջ խակ 'ի

դէմս էբէր Փիլոպիմէն զգէղեցիկ վարժան. քանզի ընդ Տիտոս և ընդ Փիլիպպոս կռիւք՝ 'ի մարտս յերկուս սահմանեցան. իսկ Փիլոպիմէն նահատակեալ քաջութեամբ յամբաւութեան բիւրուց մարտից, չեթող սեղի յերկուանաց՝ արդեօք 'ի բախտէն մանաւանդ այնպէս գեղեցիկս յաջողեցան նմա իրք, եթէ առ 'ի վարժից հմտութեանն։ Ա՛ռ այս դարձեալ՝ մին փառս անձին ժառանգեաց 'ի զօրութենէ անտի իւրոցն Հռոմայեցւոց՝ որ հզօրացեալք իսկ էին 'ի ժամուն. իսկ միւսն ծաղկէր՝ յորժամ ինքնին Եղեազա խամրեալ իսկ էր. որպէս զի և միոյն գեղեցիկ նահատակութիւնք ողջ նորա առանձին գտան. իսկ միւսոյն՝ հասարակաց. քանզի մին՝ լաւ և քաջորերոյն զօրավար եկաց. իսկ միւսն՝ այնպիսիս ոմանս առադրեաց զնոսա 'ի զօրավարել իւրում։

Բայց քանզի ընդդէմ իւրոցն Հելլենացւոց յարդարեցան մարտքն Փիլոպիմենեայ, անշուշտ ապա 'ի բանին յայնմիկ ոչինչ երջանկացաւ նա. այլ սակայն և հաւասարք գեղեցիկ կացին նոքա առաքինութեան նորա. քանզի որք միանգամ յամենայնին զուգահաւասարք իցեն, միայն առաքինութեամբն արդեօք բաւական իցեն այնպիսիքն ականաւոր լինել. ուստի և նա մարտ ընդ քաջամարտիկան մղեալ Հելլենացւոց՝ որպիսիք ոմանք Կրետացիքն էին և Լակեդեմոնացիք, խորամանկութեամբ պարտեաց զառաջինն՝ որ խորամանկա-

գոյնք ևս էին քան զամենայն մարդիկ. և արուեստեամբն՝ նկուն արար զվերջինսն՝ որք կորովեք յոյժ էին։

Դարձեալ առ այս՝ վանէր պարտէր Տիտոս առ ձեռն պատրաստութեամբն, զէնս 'ի գործ առեալ և զօրինակ դասաւորութեան՝ զնուրոցն նախնեաց. իսկ Փիլոպիմէն՝ ինքնագիւտ հանդերձանօքն, նորս 'ի ներքս բերելով, և զձևն փոխելով զդասաւորութեան զնուրոյ ժամանակին. ուստի միումն պէտք եղեն ճարտարեալ զորս էին՝ գործիս առ 'ի յաղթութիւն. իսկ միւսումն 'ի վար միայն արկանել՝ զորս էին 'ի միջի։

Իսկ ըստ շահատակութեան ձեռին նոցա՝ բազում ինչ և մեծամեծք պատմին յաղագս Փիլոպիմենեայ. և յաղագս Տիտոսի՝ ոչինչ այնպիսի. նա՛ զի և Աղբիդեմոս ոմն Եստողացի ծանակէր զՏիտոս, զի ինքն 'ի խաղալ գոռալ սուսերամերկ 'ի խումբ անդր Մակեդոնացւոցն մարտկաց, անգուստ Տիտոս ձեռս յերկինս 'ի վեր ամբարձեալ կայր և աղօթս մատուցանէր։

Առ այսոսիկ՝ և դեղեցիկ զամենայնն գործեաց Տիտոս 'ի զօրավարութեան իւրում և 'ի դեսպանութեանն. իսկ Փիլոպիմէն զոյգ առաքինացաւ և քաջացաւ միանգամայն և 'ի սոսկականութեանն իւրում և 'ի զօրավարութեանն Աքայեցւոց. քանզի զօրավար կացեալ՝ 'ի բաց 'ի Մեսսենեայ վանեաց զՆաբիս և զքաղաքն յազատութիւն հանէր. և ապա սոսկական՝ փակեաց զՍպարտիա ընդդէմ Դիոփանեայ

զօրավարին և նորուն իսկ Տիտոսի՝ որ դիմեալ դային և փրկեաց զԼակեդեմոնացիսն։ Եւ այսպէս ապա անդստին 'ի բնութենէն նա կիրթ և յաջողակ՝ ոչ միայն առաջնորդեալ գիտէր ըստ օրինացն, այլ և օրինացն ինքնին գլխովին՝ 'ի դէպ և 'ի պէտս ժամանակին. ոչինչ սպասեալ առնուլ զանձամբ զիշխանութիւնն յիշխեցելոց անտի, այլ զնոյն 'ի վերայ նոցա վարելով յորժամ դէպն պահանջէր. զի և համարէր՝ եթէ մանաւանդ պիտանացուն նոցա՝ զօրավար իցէ նոցա, քան զընտրեալն նոցա։

Իսկ անշուշտ ազատանձնեայ ոգւոյն էին՝ մարդասիրութիւն և քաղցրութիւնն Տիտոսի առ Հելլենացիս. այլ և՛ ազատանձնեայ արդեօք կացին նահատակութիւնք Փիլոպիմենեայ ընդդէմ Հռոմայեցւոց և ազատասիրութիւնքն. քանզի և հեշտին յոյժ իցէ արդեօք մարդասէր առ կարօտեալսն լինել, քան դիմամարտութեամբ զզօրաւոր մարդիկն աշխատ առնել։

Այլ քանզի՝ զայսօրինակ մեր 'ի քնին զոսսա առեալ՝ դժուարագնին իցէ նոցա առ 'ի միմեանց տարբերութիւնն, քա՛ջ միտ դիր՝ զի եթէ Հելլենացւոյն զպատերազմական վարժիցն և զզօրավարութեանն տացուք մեք զսպակ, և Հռոմայեցւոյն՝ զարդարութեանն և զլաւութեանն, ոչինչ ձախողակս արդեօք դատատան 'ի նեղքս բերցուք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս այր աւագ, զոր Պողիբիոս կոչէ Բրաքիլլաս, էր 'ի հոյակապից անտի արանց Բիովտիոյ՝ սերտ կուսակից Փիլիպպոսի։ Եկաց սա և զօրավար մեծ Բիովոտացւոց. և ապա դաւաճանեալ՝ սպանաւ։

2. Այս օրինակ բնաշնական խմաստասիրութեան առ ժամանակաւքն Պլուտարքեայ՝ ասէ ոմն յարդի հեղինակաց՝ շուք մեծապէս ընծայէ նմա, և յերևան ևս կացուցանէ մեզ զընդարձակութիւն հմտութեանց զառնն։

3. Զայս Տիտիզլիոս, Պողիբիոս և Լիվիոս կոչեն՝ Ստերտինիոս։

ՑՈՒՑԱԿ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑՍ

ՊԵՐԻԿՂԷՍ 7
ՓԱԲԻՈՍ ՄԱՔՍԻՄՈՍ 87
Զ-գաղտնիք 143
ԱՂԿԻԲԻԱԴԷՍ 153
ԿՈՐԻՈՂԱՆՈՍ 227
Զ-գաղտնիք 293
ՏԻՄՈՂԵԻՈՆԴ 305
ԵՄԻԼԻՈՍ ՊԱՒՂՈՍ 369
Զ-գաղտնիք 437
ՊԵՂՈՊԻԴԷՍ 445
ՄԱՐԿԵՂՂՈՍ 511
Զ-գաղտնիք 571
ՓԻԼՈՊԻՄԷՆ 583
ՑԻՏՈՍ ՓԼԱՄԻՆԻՈՍ 625
Զ-գաղտնիք 667